

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

ՀԵՏՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ
ԻՐԱԴԱՐՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ»
ԷՊՈՍԸ



դինակի մյուս
ռապարակումներից են.

Թարգմանչի խոհեր. – Սովետական
ռականություն, 1955, թիվ 11:

Բառարան Վանի բարբառի (ավելի
ան 200 էջ), 1959, անտիպ:

XI և XII դարերի եգիպտահայ գա-
ղթի պատմությունից. – Արևելագի-
ական ժողովածու, II, Երևան, 1964:

Հահ-ի-Արմեններ. – Պատմաբանա-
հրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ),
1964, թիվ 4:

Սարդարապատի հերոսամարտը,
Երևան, «Հայաստան», 1965, 1969
թվերով լրացված հրատարակու-
թյուն):

Ջրօգտագործման սիստեմը Վաս-
տուրականում. – ՊԲՀ, 1967, թիվ 2-3:

Պահլավունիների վերելքն ու ան-
ումը XI-XIII դարերում. – ՊԲՀ, 1974,
թիվ 1:

Սուրհանդակային սպասարկությու-
ն միջնադարյան Արևելքում. – ՊԲՀ,
1978, թիվ 1:

Սարդարապատի թիկունքը (Սար-
արապատի հաղթանակի 60-
ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1978, թիվ 2:

Հուշեր և խոհեր. – Բանբեր Հայաստա-
նի արխիվների, 1990, թիվ 2 և թիվ 3:

9(47.925)
p-98

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

ՀԵՏՍԵԼՁՈՒԿՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԸ

4947

Գիրքը տպագրվել է Հարություն Թուրջյանի քրոշորդի Երվանդ Մապունջյանի
ֆինանսական օժանդակությամբ

ՀՏԴ 941 (479.25) : 398 = 919.81
ԳՄԴ 63.3 (2Հ) + 82.3 (2Հ)
Թ 986

Թուրջյան Հարություն
Թ 986 Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ»
էպոսը / Կազմեց և պատրաստեց հրատարակության՝ Հ. Տ. Մարության. –
Եր.: Հեղ. հրատ., 2013. – 292 էջ:

Աշխատությունը նվիրված է «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության
հարցերին: Էպոսի պատումների, հայ և օտար պատմիչների տեղեկությունների ման-
րամասն քննարկմամբ հեղինակը վեր է հանում այն պատմական իրադարձություն-
ները, որոնք իրենց արտացոլումն են գտել էպոսում:

ՀՏԴ 941 (479.25) : 398 = 919.81
ԳՄԴ 63.3 (2Հ) + 82.3 (2Հ)

ISBN 978-9939-0-0906-3

© Թուրջյան Գենյա, 2013
© Թուրջյան Իրինա, 2013



Հարություն Թուրջյան
(1900 – 1978)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարություն Մարության Առաջաբան	7
Հարություն Թուրջյան Հետսելցուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը	19
Ներածություն	20
1. XI և XII դարերի եգիպտահայ գաղութը և նրա սերտ կապը Սասունի հետ	23
2. Մարա էլ Մելիք Էն Նասիր Սալահեդդին (Յուսուֆ Բին Էյուր)	57
3. Պահլավունիները	64
4. «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության հարցի շուրջ	81
5. Ինչ են ասում «Սասունցի Դավիթ» էպոսի պատումները	97
6. Եզրակացություններ	152
Ա. Բաղդասար ու Սանասար	152
Բ. Մարա Մելիք	165
Գ. Կուզբաղին	177
Դ. «Պողվըտն սուն»	181
Ե. Այսպես կոչված «Չմշկիկ Սուլթանը»	186
Զ. «Հալարա քաղաք»	191
Է. «Խաչ Պատրազին»	204
Ը. «Վաքիլ»	208
Թ. Քեռիների կոտորածը	209
Ժ. Ազնանցորդիները	213
ԺԱ. Քեռին	221
ԺԲ. Ներսես Շնորհալի	223
ԺԳ. Հեթում	236
ԺԴ. «Քուռկիկ Ջալալին»	240
7. «Կռապաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությունը»	249
8. Խանդութի պատմությունը	252
Հավելված	281

ԱՌԱՋԱԲԱՆ

Հարություն Գևորգի Թուրջյանը ծնվել է 1900 թ. սեպտեմբերի 29-ին Վանում¹ 1915 թ. ինքնապաշտպանության օրերին նա եղել է կապավոր՝ Այգեատանի դիրքերից լուրեր տանելով շտաբ և հակառակը։ Թուրջյանների ընտանիքը 1915 թ. հուլիսին գաղթել է Արևելյան Հայաստան՝ Էջմիածին, ապա Թիֆլիս։ Այստեղ նա ուսումը շարունակել է Ներսիսյան դպրոցում։ 1918 թ., լինելով ավարտական դասարանի աշակերտ, պատանի Հարությունն ընդունվում է սպայական դպրոց, ապա մեկնում է ռազմաճակատ՝ պաշտպանելու Հայրենիքը։ Նա զինվորական ծառայությունն իրականացրել է Արարատի հարավային և հարավարևմտյան լանջերին։ Այստեղ նա վիրավորվում է ոտքից ու տեղափոխվում Երևան, աշխատում է շտաբում՝ որպես գրագիր։ 1920 թ. Հ. Թուրջյանն ավարտում է Ներսիսյան դպրոցը գերազանց գնահատականներով։ 1921 թ. մայիսի կեսերից (մինչև դեկտեմբեր) Թուրջյանն աշխատանքի է անցնում Հայաստանի արտգործոժողկոմատի ինֆորմացիոն բաժնում (վարիչի տեղակալ),² միաժամանակ աշխատում է արևմտահայերի համար լույս տեսնող «Կարմիր օրեր» թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար, ապա և խմբագիր։ Կարսի պայմանագրի կնքումից հետո դուրս է գալիս Հայկոմկուսի շարքերից, ապա հեռանում է Երևանից և երկու-երեք տարի հայոց լեզու է դասավանդում Սև ծովի ափերին ծվարած համշենահայկական գյուղերում։ Թիֆլիս վերադառնալուց հետո կոմկուսի Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Մյասնիկյանից առաջարկ է ստանում աշխատանքի անցնել նոր հիմնադրված Անդրկովկասի և Մերձա-

1 Կենսագրական տվյալները տես *Գառնիկ Ստեփանյան*, Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ). Երեք հատորով, հ. Ա, Երևան, 1973, էջ 382: *Հայկ խաչատրյան* (կազմող), Գրական տեղեկատու: Հայաստանի սովետական գրողների միության անդամներ. 1934-1974, Երևան, 1975, էջ 253-254: «Գրական թերթ», 9 հունիսի 1978 թ., թիվ 23 (1962), էջ 3: *Հարություն Թուրջյան*, Գուշեր և խոհեր. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 2, էջ 153-198, թիվ 3, էջ 159-203:

2 Տես նաև *Համո Սուքիասյան*, ՀԱԽՅ արտգործոժողկոմատի տեղեկատու բաժնի գործունեությունը (1921-1922 թթ.). – Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Երևան, 2010, էջ 299:

վոր Արևելքի ուսումնասիրության գիտական ասոցիացիայում և շարադրել քեմալական շարժման պատմությունը: Մինչ Հարությունը մտնում էր առաջարկի շուրջ, գոհվում է Ալ. Մյասնիկյանը: Թուրքյանը մեկնում է Բաքու և ուսումը շարունակում Ադրբեջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ միաժամանակ հայոց լեզու և գրականություն դասավանդելով Հովհ. Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում: Այստեղ նրան աշակերտել են ապագա գրող Գարեգին Սևունցը, հետագայում ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դերենիկ Ալավերդյանը, Հայկ. ԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Սուրեն Մովսիսյանը, ասմունքող Թամարա Դեմուրյանը և այլք: 1931-1954 թթ. Հ. Թուրքյանն աշխատում է Երևանում՝ «Խորհրդային/Սովետական Հայաստան» օրաթերթում՝ որպես ռճաբան և թարգմանիչ:

1940-60-ական թվականներին Հարություն Թուրքյանը ձեռնարկում է ռուս դասական մի քանի հեղինակների երկերի թարգմանությունը: Նրա հեղինակությամբ թարգմանաբար լույս են տեսել Վ. Բելինսկու «Ընտիր երկերը» (1948 թ., 480 էջ), Ա. Գերցենի «Եղելություններ և խոհերը» (մասն Ա, 1952, 630 էջ, մաս Բ, 1953, 390 էջ, մեկ հատորով՝ 1954, 710 էջ), Մ. Գորկու «Գրականագիտական և հրապարակախոսական հոդվածները» (1950 թ., 478 էջ), այլ աշխատանքներ:³ Հ. Թուրքյանի թարգմանչական արվեստը բարձր է գնահատել Ավետիք Իսահակյանը: 1954 թ. սեպտեմբերին Թուրքյանին ուղղված նամակում նա գրում է. «Միրելի Հարություն: Այս քանի օր է, մեր տանը լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի քո թարգմանած «Եղելություններ և խոհեր» անկրկնելի գործը: Գերցենը դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի շունչ կա թարգմանությանդ մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու: Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը: Ցանկանում եմ ավելի հաջողություն և եռանդ: Ջերմագին բարևներով՝ Ավետ. Իսահակյան»:⁴

3 Մանրամասն տե՛ս Զայկ Խաչատրյան (կազմող), Գրական տեղեկատու, էջ 254: Զմմտ. Զարություն Թուրքյան, Թարգմանչի խոհեր. - «Սովետական գրականություն», 1955, թիվ 11, էջ 128-135:

4 Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր վեցերորդ, Երևան, 1979, էջ 387: Տե՛ս նաև Զարություն Թուրքյան, Վարպետը. - «Սովետական Զայաստան» (ամսագիր), 1975, թիվ 6, էջ 11:

Հարություն Թուրքյանը երկար տարիներ ջանասիրությամբ զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ:⁵ 1947 թ. «Հայ-հարեշական առնչությունները VII դարից մինչև XX դարը» թեմայով ատենախոսություն է պաշտպանել, ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Պատմագիտական պրպտումների արդյունքներից է 1965 թ. լույս տեսած «Սարդարապատի հերոսամարտը» արժեքավոր աշխատությունը,⁶ որն իր ժամանակին ըստ ամենայնի գնահատվեց ընթերցող հասարակայնության և մասնագետների կողմից: 1969 թ. ընդառաջելով ընթերցողների մեծ պահանջարկին՝ «Հայաստան» հրատարակչությունն իրականացրեց գրքի երկրորդ տպագրությունը՝ այս անգամ արդեն 10.000-ի փոխարեն 30.000 տպաքանակով: Երկու հրատարակություններն էլ շատ արագ սպառվեցին:⁷ Ինչպես նկատում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը. «Մի կարևոր վերապահում. 1960-ական թվականներին տակավին հնարավոր չէր Սարդարապատի հերոսամարտի մասին (և առհասարակ ազգային թեմաներով) գիրք հրատարակել՝ ունահարելով ժամանակի գաղափարական և քաղաքական պահանջները: Անկախ հեղինակի համոզմունքներից՝ նման գրքի լույս աշխարհ գալը հարկադրում էր տուրք տալ այդ պահանջներին: Դա այն ժամանակ նորմ էր, և Թուրքյանը չէր կարող բացառություն կազմել: Հ. Թուրքյանը, հարկավ, չէր կարող 36 տարի առաջ գիրք հրատարակել ժամանակակից դավանանքով: Բայց, բարեբախտաբար, գրքում գլխավորը գաղափարական սայթաքումները չեն, այլ հերոսամարտի այն լայնակտավ և ըստ ամենայնի լուսաբանումը, որի շնորհիվ ցայսօր պահպանվել է մենագրության պատմագիտական կարևորության

5 Տե՛ս, օրինակ. Զ. Թուրքյան, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից. - Արևելագիտական ժողովածու, II, Երևան, 1964, էջ 301-317: Լույսի՝ Շահ-ի-Արմեններ. - «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1964, թիվ 4, էջ 117-134: Լույսի՝ Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում. - ՊԲՀ, 1967, թիվ 2-3, էջ 246-253: Լույսի՝ Պաղատունների վերելքն ու անկումը XI-XIII դարերում. - ՊԲՀ, 1974, թիվ 1, էջ 147-161: Լույսի՝ Սուրհանդակային սպասարկությունը միջնադարյան Արևելքում. - ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 105-114: Լույսի՝ Սարդարապատի թիկունքը (Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ). - ՊԲՀ, 1978, թիվ 2, էջ 67-73:

6 Ինչպես մի առիթով նկատել է հեղինակը. «Ավելի քան չորս տասնամյակ մտադրացել էի գրել Սարդարապատի բախտորոշ ճակատամարտի պատմությունը: Այդ տասնամյակների ընթացքում ինձ չի խանգարել ինչ-որ ընդհանուր տրամադրության բացակայությունը սովետական իրականության մեջ, որի առկայությունը որոշ ժամանակաշրջանում չի ժխտվում այսօր: Ինձ խանգարել է ժամանակի հեռավորության պակասը՝ կարևոր անկարևորից ավելի ճիշտ որոշելու, պատմական դեպքերն ու դեմքերն ավելի ճշգրիտ գնահատելու համար»:

7 Վ. Միքայելյան, Սարդարապատի հերոսամարտի առաջին մեկնաբանը. - «Երկիր», 26 մայիսի 1998 թ.:

թարմությունը»⁸ Հ. Թորջյանը հայ պատմաբանների մեջ թերևս առաջինն էր, որ մատնանշեց հերոսամարտի ժողովրդաագատագրական բնույթը: Ինչպես գրքի առաջաբանում նկատում է խմբագիր, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը. «Գրքի հեղինակը արձանագրում է այն իրողությունը, որ ըստ էության այդ ճակատամարտը 1918 թվականի թուրք-անդրկովկասյան «պատերազմի» դրվագներից մեկը չէր, այլ ժողովրդա-ագատագրական իսկական պատերազմ, որի շարժիչ ուժը թուրք ջարդարարների դեմ տարերայնորեն ուրիշ ելած հայ ժողովուրդն էր»:⁹

Գրքի տպագրությունից անմիջապես հետո, ինչպես վերհիշում է Հ. Թորջյանի կրտսեր դուստրը՝ Գենյան. «Հոկտեմբերյանի շրջանի մշակութային տանը կազմակերպվեց գրքի շնորհանդեսը: Դահլիճը լեւի-լեցուն էր, մարդիկ [ճակատամարտի մասնակիցները] մոտենում էին հորս, համբուրում ձեռքը: Ներկա էին Նաիրի Զարյանը, գրող Հարություն Մկրտչյանը, որը հետագայում վեպ գրեց Սարդարապատի ճակատամարտի մասին, այլ մտավորականներ»:¹⁰

Գենյայի վկայությամբ, Հարություն Թորջյանը հաճախ էր երեկոները գնում Աշոտ Հովհաննիսյանի տուն: Այստեղ էին գալիս նաև Սարիկ Սարյանը (Մարտիրոս Սարյանի որդին), Հրաչյա Քոչարը, Նաիրի Զարյանը, երբեմն նաև Ջոն Կիրակոսյանը: Այդ հանդիպումներից մեկի ժամանակ խոսք գնաց այն մասին, որ ձեռնարկվել է Սարդարապատի հուշահամալիրի կառուցման գործը, և նախաձեռնողների մեջ է հայրենասեր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Հարություն Թորջյանը, ուշադրություն չդարձնելով վատառողջ լինելու հանգամանքին, Ռ. Իսրայելյանի հետ մի քանի անգամ մեկնեց Հոկտեմբերյանի շրջան՝ հանդիպելու համար Սարդարապատի ճակատամարտի դեռևս կենդանի մնացած մասնակիցներին՝ ռազմական գործողությունների տեղանքը հստակեցնելու նպատակով: Սակայն այնպես ստացվեց, որ հուշահամալիրի բացման հանդիսությանը նրան անգամ չհրավիրեցին...

8 Նույն տեղում:

9 Աշոտ Հովհաննիսյան, Առաջաբան. - Հարություն Թորջյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 6:

10 Ելույթ «Վասպուրական» հայրենակցական միության կազմակերպած Հարություն Թորջյանի ծննդյան 105-ամյակին նվիրված հուշ-հանդիսությանը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի դահլիճ, 2 դեկտեմբերի 2005 թ.:

Հարություն Թորջյանը դեռևս 1959 թ. ավարտին է հասցրել «Բառարան Վանի բարբառի» աշխատությունը (ավելի քան 200 էջ ծավալով): Ձեռագրի առաջաբանում նա գրում է. «Կազմելով սույն բառարանը՝ ես ունեցել եմ միայն մեկ նպատակ: Իմ ծննդավայրը, որ հազարամյակներ շարունակ շողշողացել է ոչ միայն հայոց պատմության մեջ, այլև դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ երազ ու հուշ է դարձել նրա հարազատ զավակների համար: Նրա լավագույն գրական գոհարները, որոնք ուրույն տեղ են գրավում հայ բանահյուսության մեջ, վանեցու ներկա սերնդին հասկանալի դարձնելու համար լրացուցիչ բացատրության կարիք ունի: Վանեցին այսօր կա ու բազմանում է, և այս բառարանը Վանի հուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզվի հուշարձանը»: Հարություն Թորջյանի կազմած բառարանը հարուստ է բնագրային հետաքրքիր օրինակներով, առածներով ու ասացվածքներով և առանձնակի արժեք կարող է ներկայացնել բարբառագետների, ազգագրագետների, պատմաբանների, Վանով ու վանեցիներով հետաքրքրվողների համար: Այս տակավին անտիպ աշխատությունը խմբագրել ու հրատարակության է պատրաստել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Հայկանուշ Մեսրոպյանը»:¹¹



«Մասունցի Դավիթ» էպոսին իր գրանցման ժամանակներից ի վեր անցած շուրջ մեկուկես հարյուրամյակում անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ, հրատարակվել ու հրատարակվում են հարյուրավոր հոդվածներ ու աշխատություններ, գումարվում են հանրապետական ու միջազգային գիտաժողովներ:¹² Մեր նպատակը չէ դրանց հանգամանակից ներ-

11 Մանրամասն տես Հայկանուշ Մեսրոպյան, Վանի բարբառային բառազանձի երախտավոր գրառողները. - Հայաստանի մայրաքաղաքները: Գիրք I. Վան: Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի 2010 թ.) նյութերի ժողովածու: Երևան, 2013, էջ 293-297:

12 XXI հարյուրամյակում հայկական էպոսին նվիրված չորս գիտաժողովներից երեքի նյութերն ամփոփող ժողովածուներն են. Հայկական «Մասնա ծոեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը (4-6 նոյեմբերի, 2004, Ծաղկաձոր), Երևան, 2004: Հայկական ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը: Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր, Երևան, «Վան Արյան», 2006: Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, «Գիտություն», 2012: Վերջերս լույս է տեսել ևս մի ժողովածու՝ ԱՄՆ-ում: Տես David of Sassoun: Critical Studies on the Armenian Epic. Edited by Dickran Kouymjian and Barlow Der Mugrdchian. Fresno: The Press at California State University, 2013.

կայացումը կամ վերլուծությունը, ինչը նաև մեր ուժերից վեր գործ է: Մեր նպատակը շատ ավելի համեմատ է. մասնագիտական հանրությանը և ընթերցողների լայն շրջանակին ներկայացնել Հարություն Թուրշյանի՝ հայոց ազգային էպոսի պատմականության հարցերին նվիրված աշխատությունը, նրա գնահատականի ու արժևորման հարցը թողնելով ասպագային:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող՝ իր բնույթով եզակի այս հետազոտությունը հեղինակն ավարտել է դեռևս 1958 թ.: Մենագրության ներածության մեջ նա գրում է. «...այս աշխատությամբ ես փորձել եմ զբաղվել միմիայն «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականությունը որոշելու դժվարին հարցով, և եթե մեր այս պրպտումները գեթ որոշ չափով հեշտացնեն մյուս հետազոտողների աշխատանքը, ապա մենք մեզ լիովին բավարարված կհամարենք»: Այսինքն, սկզբից և եթե Հ. Թուրշյանն իր առջև դրել է մեկ որոշակի խնդիր՝ էպոսի պատմաբանասիրական քննարկմամբ անդրադառնալ էպոսի պատմականության հարցին:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, ութ գլուխներից և հավելվածից: Ներածության հենց սկզբում հեղինակը նկատում է. «Գրառման հարցում բախտը չի ժպտացել «Սասունցի Դավիթ» էպոսին. 1939 թվականին մենք նշեցինք էպոսի 1000-ամյակը, սակայն առաջին գրառումը, այն էլ, դժբախտաբար, ոչ պրոֆեսիոնալ ասացողի պատմածով, կատարվել էր միայն 66 տարի առաջ՝ 1873 թվականին»: Եթե, օրինակ, ֆրանսիական ազգային էպոսի՝ «Ռուանդի երգի» առաջին գրառումը եղել է իր առաջին շարժառիթ դեպքից 392 տարի հետո, և այդ իսկ պատճառով «...հայտնի է, թե այդ երգի մեջ ինչն է պատմականորեն ճշգրիտը, փաստականը, և ինչը՝ պատմականորեն ընդհանրականը», ապա «Սասունցի Դավիթ» պարագայում վիճակն այլ է: Հեղինակի գնահատմամբ, «Եթե ընդունենք «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի թեզը, ապա հայկական էպոսը գրի է առնվել իր ծննդից 934 տարի, ուրեմն 10 դար հետո: Այս հանգամանքն ունի իր ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմը: Բացասականն այն է, որ այսօր ինչպիսի ճիգ ու ջանք էլ որ գործ դնենք (այդ թվում նաև, ինչպես կտեսնենք, այս աշխատության մեջ իմ գործադրած ճիգն ու ջանքը), մեզ դժվար թե հաջողվի «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության մասին ամենքի համար համոզիչ, անառարկելի խոսք ասել: Դրականն այն է, որ մեր էպոսը մեզ չի հասել, ասենք XIII կամ XIV դարի մեռած տեքստով՝ միայն իր դարի հանրածանոթ նեղ մտածողության ու աշխարհըմբռնման

խիստ սահմանափակ դրոշմը կրող անձանց երկի ձևով, այլ որպես հարատևորեն կենդանի ստեղծագործություն»:

Առաջին գլխում Հ. Թուրշյանն անդրադառնում է XI-XII դարերի եգիպտահայ գաղութին ու նրա սերտ կապին Սասունի հետ: Նա նկատում է, որ «Մելջուկյան արշավանքների ճնշման տակ Հարավային Հայաստանից հայ ժողովուրդը դեպի Սիրիա ու Կիլիկիա գաղթեց կամ, ավելի ճիշտը, շարժվեց, կազմակերպված, հոծ զանգվածներով: Տեղահանությունը գլխավորող մեծ ու փոքր նախարարների զինվորական ուժը դեպի հարավ-արևմուտք շարժվելու ընթացքում *գնալով ավելի էր մեծանում*: Եթե Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների պայմաններում կենտրոնախոսության և նստակյաց համեմատաբար բարեկեցիկ կյանքի պատճառով հայ նախարարներին դժվար էր լինում զորական շոշափելի ուժեր հավաքագրել իրենց շուրջը, ապա տարագրության այդ ժամանակաշրջանում տնից-տեղից, նստակյաց բարեկեցիկ կյանքից կտրված հայ թե՛ ազատը, թե՛ շինականը և թե՛ արհեստավորը կամա-ակամա պետք է բոլորեին նույնպես տարագիր հայ նախարարների շուրջը՝ շոշափելի զինվորական ուժ ստեղծելով նրանց ձեռքի տակ»: Այդպիսի մի զորավար էր առերևույթ կրոնավոյս Բադրը (այդպես են նրան կոչել արաբ պատմագիրները), որը շուրջ յոթ հազար հայ քրիստոնյա զինական ուժով ծառայության է մտնում Սիրիայում՝ Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ: Երկրում ծայր առած ներքին խռովությունների ժամանակ Բադրը օժանդակում է Էլ Մուսթանսիր խալիֆին և իր Շահնշահ որդու հետ 1073 թ. արշավում է Կահիրեի վրա՝ օրինական խալիֆի իրավունքները վերականգնելու համար: Հաջողությունն ուղեկցում է Բադրին, խալիֆը վերադառնում է մայրաքաղաք և Բադրին կարգում է մեծ վեզիր, գլխավոր սպարապետ ու գերագույն դատավոր: Բադրը, ապա և նրա Շահնշահ որդին կառավարում են երկիրը շուրջ կես դար, որի ընթացքում ուժեղանում են հայ տարրի դիրքերը: Իրավիճակն աստիճանաբար փոխվում է ի վնաս եգիպտահայ գաղութի, բայց և այնպես երկրի հայոց հոգևոր առաջնորդ Վահրամ Պահլավունուն հաջողվում է երկու անգամ գրավել Կահիրեն, վերականգնել հայերի բոլոր իրավունքները ու ստեղծել «պետությունից ռոճիկ ստացող հայկական մշտական հատուկ զորք», որն իր գոյությունը պահպանում է ավելի քան երեք տասնամյակ և վերանում միայն Սալահեդդինի ձեռքով 1172 թվականին: Վերջինիս կյանքի և գործունեության մանրամասներին Հ. Թուրշյանը մանրամասնորեն անդրադառնում է աշխատու-

թյան երկրորդ գլխում՝ «Մարա էլ Մելիք էն Նասիր Սալահեդդին (Յուսուֆ Բին Էյուբ)»: Այստեղ հեղինակը, հենվելով օտար և հայ պատմագիրների հաղորդած տեղեկությունների վրա, մասնավորապես շեշտում է այն պատմական իրողությունները, որոնք հետագայում, նրա համոզմամբ, իրենց արտացոլումն են գտել «Սասունցի Դավիթ» էպոսում:

Երրորդ գլխից նվիրված է Բագրատունիների օրոք որպես անվանի տոհմ հռչակված Պառիկապետներից Գրիգոր Մագիստրոս Պառիկապետ ճյուղին, նրանց գործունեությանը Եգիպտոսում և Կիլիկիայում XI-XII դարերում, կապը Սասունի հետ: Այստեղ ևս, նախորդ գլխի նմանողությամբ, հեղինակը հանգամանորեն անդրադառնում է պատմության այն դրվագներին, որոնք հետագայում տարբեր ձևերով դրսևորվել են հայոց էպոսում:

Հաջորդ գլխում հանգամանորեն քննարկվում է «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության հարցը: Սկզբից նեթ հեղինակը նշում է, որ «Էպոսները սովորաբար հյուսվում են ժողովրդի կյանքում տեղի ունեցած վիպային, այսինքն՝ տվյալ ժողովրդի համար վեպի նյութ ծառայող, վիպային երանգ ունեցող որևէ կոնկրետ իրադարձության կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձությունների շղթայի շուրջը, և սկզբում լինում են սոսկ այդ մեկ իրադարձությունը կամ իրադարձությունների շաղկապված շղթան պատմող վեպ: Բայց, այնուհետև, դարեր շարունակ բերնեբերան պատմվելով և սերնդեսերունդ ավանդվելով, հաճախ միահյուսվելով հնուց եկող կամ նոր կազմվող այլ վեպերի հետ, երբեմն էլ բաժանվելով ու ճյուղավորվելով, հաճախ շատ հեռանալով սկզբնական վեպից, դառնում են էպոս: Այլ վեպերի հետ չմիահյուսվելու դեպքում անգամ, սոսկ միայն դարեր շարունակ ավանդվելու հետևանքով, դրանք անընդհատ փոփոխվում են, լրացվում, այսպես ասած «խմբագրվում են» ժողովրդի ծոցից ելած և բոլոր կողմերով ժողովրդի հետ հարազատորեն կապված հազարավոր տաղանդավոր ու անտաղանդ պատմողների կողմից, որոնք իրենց ժամանակի դգուն և տրամադրություններին համապատասխան նորանոր տարեր են մտցնում ավանդականի մեջ: Այսպես, դարեր շարունակ պատմվելով, վեպերը հեռանում են սոսկ մեկ իրադարձություն կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձություններ պատմող սկզբնական ձևից և, շարունակական ընկալումների շնորհիվ հարստանալով, արտահայտում են ժողովրդի մտածողությունը, հոգեբանությունը, աշխարհայացքը, բարոյա-

կան հասկացությունները, ակնկալությունները երկար ժամանակամիջոցի ընթացքում ու համար, և դառնում են նրա ազգային բնավորությունը կամ այդ բնավորության որոշ գծերը դրսևորող ժողովրդական էպոս»: Ապա Հ. Թորջանն անդրադառնում է էպոսի ձևավորման ժամանակաշրջանի վերաբերյալ Մանուկ Աբեղյանի և Գրիգոր Խալաթյանի հայտնած կարծիքներին և, բավական հանգամանորեն ու քննադատաբար, էպոսի գլխավոր հերոս Սասունցի Դավթի պատմականության հարցի շուրջ արտահայտված Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի տեսակետներին: Նա նաև հիմնավորում է, թե ինչու հենց սելջուկյան տիրապետության և դրան հաջորդող ժամանակաշրջանում էր, որ «համապատասխան նպաստավոր հող էր ստեղծվում հայ ազգային, համաժողովրդական էպոսի կերտման համար», որի «...վերջնական ձևավորումը իրոք տեղի է ունեցել XIII դարում և սերտորեն առնչված է հետսելջուկյան շրջանի վայրիվերումների, տեղահանությունների և այլ քաղաքական իրադարձությունների հետ: Էպոսի մեջ Մարը Մըսր է, Եգիպտոսը՝ Նեղոսի ափերին, և էպոսի մեջ իր արտացոլությունը գտած ազատագրական պայքարն ուղղված է ոչ թե արաբների դեմ, այլ քրդերի և դուգի թուրքերի դեմ, որոնք Մարա մելիք Սալահեդդինի և նրա հաջորդների իշխանության տակ գերիշխում էին Սիրիայում ու Եգիպտոսում և ուզում էին իրենց գերիշխանությունը հաստատել նաև Խլաթի թագավորության տարածքի վրա»: Թորջանը մանրամասնորեն անդրադառնում է XI-XIII դարերի հայոց իրականության մեջ տեղ գտած այն երևույթներին, որոնք «կապված էին Պառիկապետների ճյուղավորված ու ծավալուն տան հետ ... և կազմել են Պառիկապետների տան պատմությունը, որ գրի է առնվել մեկից ավելի պատմագիրների կողմից»:

Հինգերորդ գլխում՝ «Ինչ են ասում «Սասունցի Դավիթ» էպոսի պատումները», Հ. Թորջանն անդրադառնում է էպոսի պատումների գրառման պատմությանը, խիստ համառոտ ներկայացնում առաջին պրոֆեսիոնալ ասացողից (Խապոյենց Զատիկ, 1898 թ.) Բագրատ Խալաթյանցի գրանցած պատումի բովանդակությունը, հանգամանորեն համեմատում այն Մանուկ Աբեղյանի ոչպրոֆեսիոնալ ասացողից (Մոկացի Նախտ, 1886 թ.) գրանցածի հետ և շեշտելով, որ «Մեզ հետաքրքրում է միմիայն էպոսի պատմականությունը որոշելու հարցը, և մենք պատումների գնահատությանը մոտենում ենք միայն այդ տեսանկյունով», փորձ է անում դասակարգել

հորելյանական հրատարակությամբ լույս տեսած 48 պատումները: Գլխի հետագա էջերում հեղինակը, էպոսի պատմականությունը որոշելու խնդրին հետամուտ, պատմաբանասիրական մանրակրկիտ քննարկման է ենթարկում տարբեր պատումները, ցույց տալիս դրանց տարբեր դրվագների ու XI-XIII դարերի պատմական մի շարք իրադարձությունների միջև եղած կապը:

Աշխատության վեցերորդ գլուխը վերնագրված է «Եզրակացություններ»: Այստեղ տասնչորս ենթագլուխներում Հ. Թորջանն առկա պատումների և տարբեր աղբյուրների հանգամանալից պատմաբանասիրական քննարկմամբ ներկայացնում է, թե պատմական անցյալում, իր համոզմամբ, ում էին մարմնավորում Սանասարն ու Բաղդասարը, Մսրա Մելիքը, Կուգրադինը, Չմշկիկ Սուլթանը, Քեռին, Ագնանցորդիները, ինչպես հասկանալ «Պողվրտն սուն», «Հալաբա քաղաք», «Խաչ Պատրազին», «Վաքիլ», «Հեթում» ձևակերպումները, ու՛մ ձին է դարձել «Քուտկիկ Ջալալիի» նախատիպը և այլն:

Հաջորդ գլխում հեղինակը, անդրադառնալով էպոսի բաղկացուցիչ վեպերից մեկին՝ «Կուսապաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությանը» (որը հորինվել է մոնղոլական արշավանքների դարաշրջանում՝ XIII դարի վերջին տասնամյակում), նկատում է, որ «էպոսի ընդարձակ պատումների առաջին ցիկլի մեջ, որոշ տարբերակներում, նկատելի են այս պատմության որոշակի անդրադարձումներ»:

Աշխատության վերջին գլուխը նվիրված է էպոսի հերոսուհիներից մեկին՝ Խանդութի կերպարի պատմականության որոշմանը, ինչին Հ. Թորջանը հասնում է հայ, արաբ, ասորի և վրացի ժամանակագիրների ու աշխարհագիրների տված տեղեկությունների մանրակրկիտ վերլուծության, ինչպես նաև էպոսի պատումների բանասիրական քննության շնորհիվ:

Ինչպես վերը նշվել էր, Հարություն Թորջանն իր մենագրությունն ավարտել էր դեռևս 1958 թ.: Սակայն ինչ-ինչ պատճառներով այն այդպես էլ չտպագրվեց: Ահա այդ հարցին է անդրադառնում հեղինակն իր կյանքի մայրամուտին, աշխատության ավարտից երկու տասնամյակ անց շարադրված մի տեքստում, որը հարմար նկատեցինք առաջարկել ընթերցողների ուշադրությանը «Հավելված» բաժնում:



Հարություն Թորջանի աշխատությունը հրատարակության պատրաստելիս մենք խուսափել ենք տեքստում խմբագրական փոփոխություններ կատարելուց, որոշ դեպքերում արվել են լոկ սրբագրական միջամտություններ: Մասնավորապես հեղինակի՝ ավելի քան կես դար առաջ օգտագործած տերմիններն արդիականացրել ենք՝ համապատասխանեցնելով ժամանակակից եզրերին, որոնք տրվում են փակագծերի մեջ: Հեղինակը ծանոթագրությունները համառոտ շարադրել է հենց տեքստի մեջ, մենք դրանք իջեցրել ենք տողատակ և պատրաստել դրանց հնարավորինս ամբողջական մատենագիտական նկարագրությունը: Որոշ դեպքերում արվել են էջերի և հղվող աշխատությունների անվանումների ճշգրտումներ, ոչ քիչ դեպքերում մեջքերվող նյութերի համար ավելացվել են տողատակեր, ճշտվել է մեջքերումների ուղղագրությունը, դրանք ամբողջությամբ համապատասխանեցվել են իրենց բնագրերին:

Հարություն Մարության

Ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող

սեպտեմբեր 2013 թ.



4947

Գրառման հարցում բախտը չի ժպտացել «Սասունցի Դավիթ» էպոսին. 1939 թվականին մենք նշեցինք էպոսի 1000-ամյակը, սակայն առաջին գրառումը, այն էլ, դժբախտաբար, ոչ պրոֆեսիոնալ ասացողի պատմածով, կատարվել էր միայն 66 տարի առաջ՝ 1873 թվականին:

Զխոսելով հունական և այլ էպոսների մասին, որոնց ծնունդը և առաջին գրառումը մշտված է ժամանակի մեծ հեռավորությամբ, պատմությունն ու բանասիրությունը, օրինակ, որոշակի պարզել են «Սասունցի Դավիթ» էպոսին գրեթե հասակակից ֆրանսիական ազգային էպոսի («Ռուանդի երգի») թե՛ պատմականությունը և թե՛ առաջին գրառումը: Երբ Կարլոս Մեծը վերադառնում էր իսպանական արշավանքից, Պիրենեյան լեռներում քրիստոնյա բասկերը 778 թվականին հարձակում են գործում նրա հետնապահ զորքի վրա: Այդ արյունահեղ ճակատամարտում ոչնչացվեցին Կարլոս Մեծի լավագույն զնդերը և նրանց հրամանատարները, որոնց թվում՝ Բրիտանիայի մարկգրաֆ քաջ Հրոտուլանդը (Ռուանդը): Շուտով ֆրանսիացիների մի քանի սերունդ հարկադրված եղավ արյունահեղ մարտեր մղելու հարավից ֆրանսիային սպառնացող մահմեդական սարակինոսների դեմ, որից հետո մահմեդականների դեմ մղվող կռիվը մի քանի դար շարունակ դոմինանտ (գերիշխող) դարձավ ֆրանսիացիների կյանքում: Նրանք կռվում էին թե՛ Իսպանիայի կողմից սպառնացող մահմեդականների դեմ և թե՛ Խաչակրաց արշավանքներին ակտիվորեն մասնակցելով՝ գնում էին Արևելք՝ միևնույն մահմեդականների ձեռքից ազատելու Երուսաղեմը: Մի քանի դար տևած այդ շարունակական կռիվներում ֆրանսիացին մոռացավ, որ քաջ մարկգրաֆ Ռուանդին սպանել էին իր հավատակից քրիստոնյա բասկերը: Նա սպանվել էր հարավում, այն Իսպանիայում, որտեղից նրան այժմ սպառնում էին սարակինոսները: Ուրեմն այդ քաջ մարկգրաֆը հանուն հայրենիքի պաշտպանության կռվել էր սարակինոսների դեմ: Խաչակրաց արշավանքների կրոնահայրենասիրական մտայնության դրոշմի տակ վերափոխվում ու վերախմբագրվում է «Ռուանդի երգը»: Այդ նոր վերափո-

խությամբ «Ռուանդի երգի» առաջին հիշատակությունը մենք գտնում ենք անգլիացի տարեգիր Վիլիելմ Մալմորեթիի մոտ, ոչ ուշ, քան 1125 թվականին, իսկ առաջին ամբողջական գրառումը, որով այդ երկն այժմ հայտնի է մեզ, կատարվել է 1170 թվականին Ֆրանսիայի հյուսիսում՝ ամենայն հավանականությամբ հոգևորականի ձեռքով: Այսպիսով, «Ռուանդի երգը» գրի է առնվել իր առաջին շարժառիթ դեպքից 392 տարի հետո՝ իր նոր վերախմբագրման առաջին իսկ դարում: Դրա համար էլ այժմ մեզ հայտնի է, թե այդ երգի մեջ ինչն է պատմականորեն ճշգրիտը, փաստականը, և ինչը՝ պատմականորեն ընդհանրականը:

Եթե ընդունենք «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի թեզը, ապա հայկական էպոսը գրի է առնվել իր ծննդից 934 տարի, ուրեմն 10 դար հետո: Այս հանգամանքն ունի իր ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմը: Բացասականն այն է, որ այսօր ինչպիսի ճիգ ու ջանք էլ գործ դնենք (այդ թվում նաև, ինչպես կտեսնենք, այս աշխատության մեջ իմ գործադրած ճիգն ու ջանքը), մեզ դժվար թե հաջողվի «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականության մասին ամենքի համար համոզիչ, անառարկելի խոսք ասել: Դրականն այն է, որ մեր էպոսը մեզ չի հասել, ասենք, XIII կամ XIV դարի մեռած տեքստով՝ միայն իր դարի հանրածանոթ նեղ մտածողության ու աշխարհըմբռնման խիստ սահմանափակ դրոշմը կրող անձանց երկի ձևով, այլ որպես հարատևորեն կենդանի ստեղծագործություն: Այսպիսով, «Սասունցի Դավիթ» էպոսն իր կերտման առաջին իսկ դարերից իբրև սերմ պահ է տրվել մայրենի հողին՝ հայ ժողովրդին, որի ծոցում՝ նրա մշտամոռմոռ ու ջերմորեն բաբախուն սրտի տակ, բազում դարեր շարունակ բյուրավոր սննդատու մազանոթներով կապված է եղել հայ ժողովրդի կենսագործունեության հետ: Վեպը որևէ վանականի ասած ձևով մի ամբողջ հազարամյակ չի փոշոտվել ու չի դեղնել-բորբոսնել վանքերի մութ խցերում ու նկուղներում, այլ այդ ամբողջ ժամանակամիջոցում որպես կենդանի պտուղ սնվել, աճել ու ձևավորվել է իր մոր՝ հայ ժողովրդի արգանդում՝ նրա ցավատանջ ու հուսավատ կրծքի տակ: Եվ ճիշտ այնպես, ինչպես սաղմը դեռ վերջնական ձևավորմամբ լույս աշխարհ չեկած, իր սաղմնային զարգացման մեջ կրկնում ու ֆիքսում (ամրագրում) է իր տեսակի բովանդակ բնապատմությունը սկզբից մինչև վերջ, այնպես էլ մեր էպոսն իր սաղմնային զարգացման ընթացքում կրկնել ու ֆիքսել (ամրագրել) է հայ ժողովրդի բովանդակ հին պատմությունը ի սկզբանե մինչև XIX դարը: Այդ տեսակետից սխալ է նրա հասակը չափել միայն մեկ հազարամյակով: Մեր էպոսն այ-

սօր բազմադարյան հայ ժողովրդի բազմերանգ պատմության կենդանի ու ճոխ հանրագիտարանն է՝ նրա սկզբնավորման մանուկ օրերից մինչև նրա կատարյալ առնականացումը և արտացոլում է այդ երկար ուղու բոլոր հետաքրքիր էջերը: Եվ իր այս հանրագիտարանային արժանիքներով մեր էպոսն անսպառ նյութ է տալիս և դեռ կտա հումանիտար բոլոր գիտություններին: Մեր կարծիքով «Մասունցի Դավիթ» բազմաբովանդակ էպոսի բոլոր արժանիքների ուսումնասիրությունը ոչ միայն վեր է մեկ մարդու ուժից, այլև խորապես սխալ կլիներ այդպիսի բազմակողմանի ուսումնասիրությա- նը ձեռնամուխ լինելու համարձակությունը մեկ մարդու կողմից: Այդ հա- մարձակությունը, կարծում եմ, ակամայից կնսեմացնի էպոսի արժեքը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությամբ ես փորձել եմ զբաղվել միմիայն «Մասունցի Դավիթ» էպոսի պատմականու- թյունը որոշելու դժվարին հարցով, և եթե մեր այս պրպտումները գեթ որոշ չափով հեշտացնեն մյուս հետազոտողների աշխատանքը, ապա մենք մեզ լիովին բավարարված կհամարենք:

Երևան, 1958 թ.

1. XI ԵՎ XII ԴԱՐԵՐԻ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ՆՐԱ ՍԵՐՏ ԿԱՊԸ ՍԱՍՈՒՆԻ ՀԵՏ

Հայ ժողովրդի պատմության մեջ թուրքերն իրենց ավերիչ գործու- նեությանը հանդես են եկել IX դարի կեսերից՝ որպես Բաղդադի թուլացած խալիֆայության վարձկան զորքեր: Ինչ-որ մի Ավշինի կամ թե Յուսուֆի հրամանատարությամբ նրանք եկել են, զարկել, ավերել, բայց եկել են որ- պես Բաղդադի զորք և հետ են դարձել: Սակայն XI դարի սկզբից թուրքե- րը պատմական Հայաստանի տարածքում երևան են գալիս արդեն որպես Բաղդադի խալիֆայությանը բոլորովին չենթարկվող, նրա գոյությունը և նոմինալ (անվանական) իշխանությունը բոլորովին անտեսող ինքնուրույն ուժեր, որոնք ալիք առ ալիք գալիս էին իրենց առանձին մեծ ու փոքր հրո- սակախմբերով, իրենց տուն ու տեղով, որ իրենց հետևից եկող վաչերն էին, իրենց կանանցով ու երեխաներով, որ շարժվում էին իրենց վաչ-գումակնե- րի հետ: Նրանք սկզբում գալիս էին սելջուկներ ընդհանուր անունը կրող թուրքական ավելի զորեղ ու ավելի կազմակերպված զորական միավորում- ների առաջխաղացման ալիքից դեպի Արևմուտք շարտված, իսկ այնուհետև սելջուկների հետ միասին ու նրանց հետևից՝ միշտ պատրաստ կողոպուտի ու սպանության: Հյուսիսային Պարսկաստանից դեռ 1011 թվականին Վաս- պուրական ներխուժեցին դելիմների խառնիճաղանջ ցեղերը: Արծրունինե- րի Սենեբերիմ թագավորը, «նետողներից» սարսափահար, ինչպես հայտնի է, իր հողերը հանձնեց հունաց Բագիլետս II Բուլղարասպան կայսրին և իր հետևորդներով գնաց Սեբաստիա:

XI դարի կեսերին (1047 և 1048 թթ.), երբ Հայաստան հասան բուն սել- ջուկները, Բագրատունիները նույնպես արդեն մինչ այդ Անին հանձնել էին հույներին և գաղթել Փոքր Ասիա: Հունական ծառայության մտել և Տարոն էր գնացել Պահլավունիների մեծ մասը:

Մելչունները Հայաստան ներխուժեցին Վասպուրականի հյուսիսային սահմաններով, մտան Բագրևանդ և հասան մինչև Արծն (Թեոդոսուպոլիս-Կարին բերդաքաղաքի մոտ), որը գրավեցին ու հիմնովին ավերեցին: Նրանց հետագա արշավանքները մինչև 1063-1064 թվականները նույնպես ընթացան մոտավորապես այդ գծով, որով Հայաստանը կիսվեց երկու մասի՝ հարավայինի ու հյուսիսայինի: Դեռևս Անիի անկումից առաջ սկսվեց հայ ժողովրդի առաջին մեծ արտագաղթը, որն ավելի ևս ուժեղացավ Անիի անկումից (1064 թ.) հետո: Նախարարական մեծ տները վաղուց էին գաղթել Փոքր Ասիա և այլուր. շուտով նրանց հետևեցին ավելի փոքր նախարարություններն իրենց զորքով ու մարդկանցով: Մելչունների կիսած Հայաստանի հյուսիսային մասից հավանաբար առավելապես քաղաքային բնակչությունը Սև ծովի արևելյան ափով շարժվեց դեպի Լեհաստան, որի Թեոդոր իշխանից ապաստանի հրավեր էր ստացել: Հայության այդ հատվածն անցավ Ղրիմ, ապա Մոլդավիա, Բեսարաբիա, մի մասը գնաց Տրանսիլվանիա, հասավ մինչև Տրիեստ, մյուս մասը գնաց Լեհաստան: Ոմանք անգամ հասան մինչև Իսլանդիա կղզին:

Հարավային Հայաստանի հայության մի մասը, համեմատաբար ավելի կազմակերպված ձևով, զորական ուժով անցավ դեպի Արևմուտք և հարավարևմուտք: Այդ երկու ուղղություններն էլ նորություն չէին հայության համար: Արաբական տիրապետության շրջանում հայ նախարարները հաճախ էին լքել երկիրը և, առանց կրոնական խտրություն դնելու, ծառայության էին մտել ինչպես քրիստոնյա բյուզանդացիների, այնպես էլ Արևմտյան Միջագետքի և Սիրիայի հարուստ քաղաքների մահմեդական ամիրաների մոտ: Քաղաքային բնակչությունն էլ, ինչպես առևտրական հարաբերությունների բերումով, այնպես էլ իր արհեստը բանեցնելու համար, գնում էր դեպի Արևմտյան Միջագետք ու Սիրիա: Հայ եկեղեցին, նշանավոր վանքեր ունենալով և աչքի ընկնող դիրք ու հեղինակություն նվաճելով Երուսաղեմում, հայ ժողովրդին սովորեցնում էր դեպի հարավ տանող ճանապարհները: Հայ ժողովրդի առաջին մեծ արտագաղթից մեկ դար հետո, երբ Սալահեդդինը, գրավելով Երուսաղեմը, հատուկ հրամանագրով այնտեղ մեծ արտոնություններ էր տալիս հայ եկեղեցուն, իր հրամանագրի մեջ հայ ժողովրդի համար ասում էր. «որք սփռեալ են ի սահմանս Տէրութեան իմոյ, ի նահանգաց ցնահանգս»: Պատմությունից հայտնի է, որ ո՛չ Երուսաղեմի գրավման ժամանակ (1187 թ.) և ո՛չ էլ Սալահեդդինի կենդանության օրոք (+1193 թ.) նրա իշխանությունը չէր տարածվում Հայաստանի վրա: Նրա տերության

մեջ մտնում էին Եգիպտոսը, Պաղեստինն ու Անդրհորդանանը, Սիրիան ու Արևմտյան Միջագետքը, նոմինալ (անվանական) կերպով Իրաքի մեծ մասը և Հեջազն ու Եմենն Արաբական թերակղզում: Ուրեմն նրա տերության մեջ հայ ժողովրդի «ի նահանգաց ցնահանգս սփռեալ» լինելը պետք է հասկանալ Սիրիայից մինչև Եգիպտոս:

Մելչունյան արշավանքների ճնշման տակ Հարավային Հայաստանից հայ ժողովուրդը դեպի Սիրիա ու Կիլիկիա գաղթեց կամ, ավելի ճիշտ, շարժվեց կազմակերպված, հոծ զանգվածներով: Տեղահանությունը գլխավորող մեծ ու փոքր նախարարների զինվորական ուժը դեպի հարավարևմուտք շարժվելու ընթացքում *գնալով ավելի էր մեծանում*: Եթե Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների պայմաններում կենտրոնախոսության և նստակյաց համեմատաբար բարեկեցիկ կյանքի պատճառով հայ նախարարներին դժվար էր լինում զորական շոշափելի ուժեր հավաքագրել իրենց շուրջը, ապա տարագրության այդ ժամանակաշրջանում տնից-տեղից, նստակյաց բարեկեցիկ կյանքից կտրված հայ թե՛ ազատը, թե՛ շինականը և թե՛ արհեստավորը կամա-ակամա պետք է բոլորեին նույնպես տարագիր հայ նախարարների շուրջը՝ շոշափելի զինվորական ուժ ստեղծելով նրանց ձեռքի տակ: XI դարի երկրորդ կեսում, նախքան Ռուբինյանները կբարձրանային Կիլիկիայում, գաղթի, նահանջի, տարագրության այդ պայմաններում Պահլավունիները տեղ դարձան Անտիոք մեծ քաղաքին, ինչ-որ Բարսեղ Վասիլ դարձած իշխեց Եդեսիայում (Ուռհա), իսկ հունական ծառայության մտած վասպուրականցի քաղաքագետ Փիլաոտոս Վարաժնունին, երբ հունաց կայսրը գերի էր ընկնում Մանազկերտում (1070 թ.), մեծ թագավորություն կազմակերպեց Մարաշում (Կիլիկիա), որի սահմանները տարածվում էին Կապադովկիա-Կիլիկիայից մինչև Միջագետքի արևմուտքը՝ ընդգրկելով Հյուսիսային Սիրիան: Երբ սելջուկների հիմնական ուժերն անցան Հայաստանով ու կանգ առան համարյա Էգեյան ծովի ափերին, Փիլաոտոսն անգամ փորձեց հետ նվաճել Հարավային Հայաստանը, և նրա զորքը հասավ մինչև Տարոն: Այդ հեղհեղուկ ժամանակաշրջանում Փիլաոտոսը, հանուն իր գործի հաջողության, նախ ընդունեց քաղկեդոնականություն, ապա գնաց Բաղդադի խալիֆի մոտ, ընդունեց մահմեդականություն, անցավ Պարսկաստան, ներկայացավ Մելիք-Շահին, բայց ո՛չ դավանափոխությունը, ո՛չ էլ կրոնափոխությունը չօգնեցին նրան: Վերադարձին (1090 թ.) նա խորտակված տեսավ իր նորաստեղծ թագավորությունը: Ոչ մի կենտրոնական իշխանություն և ոչ մի հեղինակություն չճանաչող խուժաղուժ հորդանները զավթել էին

նրա բոլոր հողերը և հարուստ քաղաքները: Հուսահատված Փիլառոտոս Վարաժնունին, ինչպես հաղորդում է Միխայել Ասորին. «զղջացաւ և դարձաւ ՚ի հաւատն իւր, և գնաց յապաշխարութիւն ՚ի վանս»:¹³

Այդ նույն ժամանակ Փիլառոտոսի նման չի վարվում Սիրիա հասած նույնպես առերևույթ կրոնավիդս մի ուրիշ հայ գորավար, որին արար պատմագիրները *Բադր* են անվանում: Օտարության մեջ զինվորական ծառայությունից բացի ապրուստի այլ միջոց չունեցող կամ թե այդ խառն ժամանակներում օտար դռներին ինքնապահովության համար գորել ու ճարպիկ տեր որոնող մոտ 7 հազար քրիստոնյա հայեր էին բոլորվել առերևույթ մահմեդականություն ընդունած այդ գորավարի շուրջը: Եվ նա այդ զինվորական ուժով պահակային ծառայության է մտնում հարուստ Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ:

Սեփական հայրենիքը կորցնելու այդ հեղհեղուկ դարաշրջանում Հայաստանից դուրս (դեպի արևմուտք ու հարավ) հայկական իշխանությունների կազմակերպման փաստը հաճախ միակողմանի բացատրություն է գտել մեր պատմագրության մեջ: Այդ առթիվ ընդգծում են միայն Բյուզանդիոնի նոր քաղաքականությունը, երբ նա իր կրած խորտակիչ պարտություններից հետո իբրև թե բարյացակամ դիրք պետք է բռներ հայ նախարարներին որոշ ինքնուրույնություն տալու հարցում: Բայց այդ տեսակետի հետ չի համընկնում Բյուզանդիոնի հարատև պայքարը Ռուբիկյանների դեմ, ինչպես նաև հայ թագավորական տների զարմերի հետ դաժան հաշվեհարդար տեսնելը Կապադովկիայում, Վասակ Պառլավունու դավադիր սպանությունը Անտիոքում հույների ձեռքով և այլն: Այս հարցում *շատ ավելի զորեղ ազդակ պիտի համարել հայ և նսրակյաց դարձած արար իշխանական քրեական պրակտիկան* *բարեկամությունը Սիրիայում*, որ հաստատվել էր դեռևս IX դարից, Բաղդադի խալիֆայության թուլության և ֆեոդալական կենտրոնախույս ուժերի զարգացման և ուժեղացման դարաշրջանում, երբ հայ ազատները զինվորական ծառայության էին մտնում Հյուսիսային Սիրիայի և Արևմտյան Միջագետքի ինքնուրույն դարձած արար հարուստ էմիրների մոտ: Այս բարեկամությունը շատ ավելի շոշափելի պիտի դառնար սելջուկյան արշավանքների դարաշրջանում, երբ Մերձավոր Արևելքում նորից քաղաքական դրության տեր էին դառնում նոմադական անհանգիստ ուժերը: *Արդեն վաղուց նսրակյաց ու կուլտուրական դարձած իշխանավոր հարուստ արարներն այդ նոր վրանգի դեմահանդիման բնական դաշնակից*

13 Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորաց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 399:

ներ պիտի դիտելին իրենց երկրին ապավինած ցարազիր հայ իշխաններին: Ի դեպ, ասենք, որ կրոնական մոլեռանդությունը նոր ուժ ու թափ ստացավ միայն քիչ հետո՝ Խաչակրաց արշավանքների դարաշրջանում, մինչ այդ կարող էր լինել միայն հարուստ քաղաքների տեր նստակյացների դաշինքը այլ, անգամ այլակրոն նստակյացների հետ ընդդեմ նոմադական ուժերի, որոնք կործանում էին բերում այդ հարուստ քաղաքներին և վերջ դնում նստակյացների բարեկեցիկ ու խաղաղ կյանքին:

Դժբախտաբար, հայ հին պատմագրությունն այդ տեսանկյունից չի նայել հարցին և շարունակ տուրք է տվել ժողովուրդների լոկ կրոնական հակամարտության՝ ոչ միշտ ճիշտ տեսակետին: Ավանդական դարձած այդ տեսակետից հետագայում արդեն դժվար է եղել հրաժարվել: Այնինչ, մասնավորապես XI դարի փաստերը միանգամայն հակառակն են վկայում: Այդ դարաշրջանի համար միանգամայն հակառակն է վկայում նաև բուն արար պատմագրությունը, ավելի ճիշտ՝ գրականությունը:

Պահպանվել է սելջուկյան արշավանքների առաջ բերած վայրիվերումների հետևանքով իր հայրենիքից զրկված և այդ պատճառով վարձկան ասպետի վիճակի հասած ու թափառական կյանքի դատապարտված սիրիացի արար Էմիրզադե Ուսամա բին Մունքիզիի «Գիրք խրատոցը»: Օտարների դռներին երկար տարիներ զինվորական ծառայություն կատարած այդ մահմեդական ասպետը, որ բարձր կրթություն ու կուլտուրա ուներ, ծերության հասակում արևելյան տիպիկ անվրդովությամբ գրի է առնում իր կյանքի ուղին: Բարեպաշտության արտաքին ձևերի անթերի պահպանման հետ միասին զարմանալի կրոնական համբերատարություն կա նրա գրքում: Ահա թե ինչ է գրում նա առաջին Ռուբիկյանների մասին, որոնց շատ մոտ գտնվող հարևան քաղաքից էր ինքը. «Հորս և Ռուբենի որդի Թորոսի և Լևոն-հայի միջև, որոնք Մասիսի, Անտարտուսի, Ադանայի ու կիրճերի տերերն էին, մեծ բարեկամություն էր հաստատվել, և նրանք իրար հետ նամակագրություն ունեին: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ հայրս տարված էր բազեներով: Հայերն ամեն տարի մոտ 10 հատ բազե էին ուղարկում հորս, որ ձեռքի վրա պահած բերում էին հայ հետիոտն բազեպանները. բացի դրանից, հայերն ուղարկում էին բյուզանդական շներ: Իսկ հայրս նրանց ուղարկում էր ձիեր, խունկ ու կնդրուկ և եգիպտական գործվածքներ»:¹⁴

Նման փոխհարաբերությունների առկայության պայմաններում ար-

14 Усама Ибн Мункыз, Книга назидания. М., 1958, с. 297-298.

տասովոր երևույթ չպիտի համարել Եգիպտոսի (Մարի) Ֆաթիմյանների մոտ Բաղրի ծառայության մտնելը Սիրիայում, երբ Բյուզանդիոնի պարտության, Բաղդադի ընդհանուր թուլության և սելջուկների համառ ագրեսիվության այդ դարաշրջանում հարուստ Եգիպտոսը, տիրելով Սիրիային, ճգնում էր այն ֆորպոստ դարձնել թուրքական նոմադական ցեղերի հորձանքի դեմ:

Յոթ հազար հայ զորքով Եգիպտոսում ծառայության մտած Բաղրին Ֆաթիմյանները 1063 թվականին նշանակում են Դամասկոսի կայազորի պետ, ապա փոխադրում են Աքքա նավահանգիստը և նրան են հանձնում նաև ծովակալության պաշտոնը: Այստեղ բախտը ժպտում է Բաղրին:

Օմարը՝ արաբների աշխարհակալական մեծ արշավանքների տաղանդավոր կազմակերպիչը, անապատից դուրս գալու ժամանակ մուսուլմաններին պատվիրել էր *անշարժ գույքի տեր չդառնալ նվաճվող երկրներում*: Մեծ զորավարը վախենում էր, որ աղքատ բեդուինը, նորանվաճ հարուստ երկրներում անշարժ գույքի տեր դառնալով և նստակեցության անցնելով, կկորցնեի իր մարտունակությունը: Նրա երկյուղն անհիմն չէր: Նվաճված երկրների անհամար հարստությունները վայելելու համար բեդուինն իրոք ձիուց ցած իջավ և շուտով կորցրեց իր մարտունակությունը: Թե՛ Բաղդադի և թե՛ Եգիպտոսի խալիֆներն իրենց տիրապետության երկրորդ դարում իսկ հարկադրված էին դիմելու վարձկան զորքի օգնությանը: Այդ վարձկան զորքերն ինչպես Բաղդադում, այնպես էլ Գահիրեում՝ հաճախ դրության տեր էին դառնում ու իրենց կամքն էին թելադրում խալիֆներին: Առաջին Ֆաթիմյանները, Լիբիայի անապատից գալով (969 թ.), երբ դեռ մաքրակրոն էին, անգամ նպատակահարմար գտան հրաժարվել հարուստ ու բազմազգ Ալեքսանդրիայից և որպես իրենց մայրաքաղաք՝ միանգամայն նոր քաղաք կառուցեցին Ֆուսթատ բերդի մոտ (ներկայիս Գահիրեն, հիմնված 969 թ.): Սակայն նոր մայրաքաղաքն էլ արագորեն աճեց ու հարստացավ և իր զեխ կյանքի մեջ հալեցրեց Լիբիայի բեդուինների մաքրակրոնությունը և մարտունակությունը: Եգիպտոսը նվաճելուց հարյուր տարի չանցած՝ Ֆաթիմյաններն էլ հարկադրված էին դիմելու վարձկան զորքի օգնությանը: Ճարպիկ խալիֆները կարողանում էին օգտվել խայտաբղետ վարձկան զորքերի էմիրների հակամարտություններից և մի կերպ մնալ իրենց գահի վրա: Սակայն Էլ Մուսթանսիրի (1036-1094) նման հեզահամբույր և կուլտուրական (բարեկիրթ) խալիֆը խաղալիք էր դարձել վարձկան զորքերի էմիրների ձեռքին, որոնք բռնանում էին նրա վրա, կոչում իրար դեմ

և քարուքանդ անում երկիրը: 1072 և 1073 թվականներին ներքին անվերջ կռիվների հետևանքով սով տիրեց այդ արգավանդ ու հարուստ երկրում: Էլ Մուսթանսիրը հարկադրված եղավ իր մեծ ընտանիքով ապաստանելու Ասկալոնում, որը գտնվում էր Բաղրի հայկական զորքի ձեռքին: *Բաղրը իր ավագ որդու՝ Շահնշահի հետ միասին ժամանակը պարեհ համարեց իր հայկական զորքով արշավելու Գահիրեի վրա՝* օրինական խալիֆի իրավունքները վերականգնելու համար: Հարմար առիթը ձեռքից բաց չթողնելու համար նա, հակառակ վատ եղանակին և արված նախագզուշացումներին, 100 առաջաստանավով նավարկում է դեպի Գահիրե: Թինիսի և Թամիեթի վաճառականները, կարգի վերականգնմանը նախանձախնդիր, օգնում են նրան դրամով և արմտիքով: Քառասուն օր հաջող նավարկելուց հետո նա իր զորքով հասնում է Գահիրե: Վարձկան զորքերի էմիրները, ըստ արար պատմագիրների վկայության, իբրև թե լավ ընդունելություն են ցույց տալիս նրան: Բաղրը փոխադարձաբար պատվում է նրանց: Սակայն իր հավատարիմ հայ սպաների միջոցով մի գիշերվա մեջ ոչնչացնում է բոլոր անհնազանդ էմիրներին և դրության տեր է դառնում մայրաքաղաքում: Այնուհետև նա անցնում է գավառները և երկրի մյուս քաղաքները, որտեղ անխնա կոտորում է բոլոր անհնազանդ և կենտրոնախույս տարրերին, անգամ ամբողջ ցեղախմբերի: Խստագույն միջոցներով երկրում կարգ վերահաստատելուց հետո խալիֆ Էլ Մուսթանսիրը վերադառնում է Գահիրե և Բաղրին կարգում է մեծ վեզիր, գլխավոր սպարապետ և գերագույն դատավոր:

Դաժան միջոցներով երկիրը խաղաղեցնելուց հետո Բաղրն անմիջապես ձեռնամուխ է լինում երկրի տնտեսական վերաշինության գործին: Ամենից առաջ նա երկրագործ գյուղացիությանը երեք տարով ազատում է հարկից, որպեսզի նրանք ազատ վար ու ցանք անեն և շենացնեն երկիրը: Կենտրոնախույս ուժերին և ավազակաբարո տարրերին արմատախիլ անելով՝ Բաղրն ստեղծում է ճանապարհների ապահովություն: Այս հանգամանքը դրականորեն է անդրադառնում առևտրի զարգացման վրա: Երկրի վաճառականները նրան արդեն օգնել էին Գահիրեն վարձկան զորքերի խժոժություններից ազատելու գործում: Այժմ նրանք անվախ լծվում են երկրի տնտեսական կյանքը բարձրացնելու գործին: Բաղրը Գահիրեն վերաշինելու համար ձրի շինանյութ է տրամադրում *հայ ժողովրդի մեծ զառթի ալիքով արդեն այնպեղ հասած հայերին*, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր կցանկանային վերաշինել Գահիրեն: Մայրաքաղաքն ավելի ապահով դարձնելու համար նա Եդեսիայից բերում է հայ վարպետներ, որոնցից ճարտարապետ Հովհան

* Յեղիսակն իր խոսքում գերադասում է օգտագործել «Գահիրե», այլ ոչ «Կահիրե» գրելածը — Յ.Ս.

կրոնավորը ղեկավարում է Գահիրեի պարսպի շինարարությունը: Հովանավորելով տեղացի խաղաղ բնակչությանը՝ ղպտիներին, արաբներին, մելքիդներին, նա միաժամանակ երկրի դռները լայն բաց է անում այդ ժամանակ խաղաղ անկյուն որոնող հայ գաղթականների առաջ:

Բաղրը շարունակ մտածում էր լրացուցիչ հավատարիմ զորք և հենարան ունենալու մասին: Այս նպատակով նա կապվում է հարավից Եգիպտոսին սահմանակից Նուբիայի հետ, որտեղ քրիստոնեությունը վաղուց մուտք էր գործել, և որի Սողոմոն թագավորը քրիստոնյա էր: Նա Սողոմոնին իր մոտ է հրավիրում և փառավոր ընդունելություն է ցույց տալիս Նուբիայի քրիստոնյա թագավորին: Հավատարիմ նեցուկի հարցը շարունակ լրջորեն ծառանում էր նրա առաջ. չէ որ իր քրիստոնյա զորքը ծերանում էր: Հարկավոր էին փոխարինողներ, հարկավոր էր նոր համալրում: Բաղրը հղանում էր իր դարավոր հայրենիքը լքող և լքելու տրամադիր հայ ժողովրդին ամբողջությամբ Նեղոսի ափերը փոխադրելու միտքը: Այդ ժամանակ՝ հայության առաջին մեծ արտագաղթի այդ դարաշրջանում, հյուսիսում հայ գաղթականները հասել էին մինչև անգամ Իսլանդիա կղզի՝ զանգվածաբար կանգ առնելով հունգարական Տրանսիլվանիայում և Լեհաստանում, իսկ Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը, հակառակ իր «վկայասեր» կոչմանը, զուտ աշխարհիկ մի մարդ, Գևորգ Լոռեցուն կաթողիկոս տիտղոսով իրեն աթոռակից թողնելով Տավրոսյան լեռներում (հայրապետական աթոռը դեռևս հաստատուն վայր չունեի և նախքան Հռոմկայում հաստատվելը ապավինում էր մեկ Շուրը, մեկ Ծովք, մեկ Թավրուր դղյակներին), 1069 թվականին գնում է Անի, ապա անցնում է Բյուզանդիոն, Հռոմ՝ իր ցրված հոտին սպասարկելու համար, և, ամենայն հավանականությամբ, հրավեր ստանալով Բաղրից, հետևորդների մեծաթիվ շքախմբով Հռոմից նավարկում է Եգիպտոս: Կաթողիկոսին ուղեկցողները զգեստավորված ափ են իջնում ու ներկայանում խալիֆին: Խաղաղասեր խալիֆը, որն արդեն գտնվում էր հայազգի մեծ վեզիրի ազդեցության տակ, փառավոր ընդունելություն է կազմակերպում ի պատիվ Հայոց կաթողիկոսի և անձամբ նավամատույց գնալով, շնորհավորում է Գրիգոր Վկայասերի գալուստը (1082 թվականին): Խալիֆը մի քանի տարի Հայոց կաթողիկոսին հյուր է պահում Գահիրեում և «յոզակի խոսակցութեամբ» նրան համոզում է առհասարակ մնալ Եգիպտոսում և իր աթոռը հաստատել այնտեղ: Գրիգոր Վկայասերը մերժում է խալիֆի խնդիրը՝ պատճառաբանելով, որ չի կարող անտեր թողնել իր հոտը երկրում և մնալ Եգիպտոսում, որտեղ ինքը հոտ

չունի («դներ և այլ պատճառս բանի յաղագս ոչ լինելոյ անդ յազգէս Հայոց՝ ունայն զհովուելն իւր»),¹⁵ իսկ խալիֆը, հար և նման լեհական Թեոդոր դքսին, խոստանում է իր երկրի դռները լայնորեն բացել հայության առաջ և երկիրը լցնել հայերով, միայն թե Ամենայն հայոց կաթողիկոսը մնար իր երկրում («իսկ նա բառնայր զպատճառանս և երդմամբ հաստատել լնուլ զաշխարհն՝ Հայաստանեայց ազգօք, զոր և արար իսկ, և բազմացոյց անդ բազմութիւն յոյժ»):¹⁶ Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը տեսնելով, որ հայ ժողովրդի համար այդ «դառն և դժնեայ» օրերին, երբ արդեն շուրջ 30 հազար հայ (կամ հայ զորք) կար Եգիպտոսում, նպատակահարմար չէ խալաթ մերժել պանդխտող հայերի նկատմամբ բարյացակամություն ցուցաբերող օտար իշխանավորին, որոշում է ընդառաջել խալիֆի խնդրանքին, և իր քրոջ որդուն՝ նույնպես Գրիգորին, որ շրջագայում էր նրա հետ, ձեռնադրում է եպիսկոպոս և եգիպտահայության հովիվ է կարգում կաթողիկոս տիտղոսով (1084 թվականին): Իսկ ինքը՝ Գրիգոր Վկայասերը, որի աշխարհիկ անունը Վահրամ էր, վերադարձին հավաքում է իրենց տոհմի աշխարհիկ անդամներին, իր կրտսեր քեռորդուն վերանվանում է Վահրամ և, Պահլավունիների տան նահապետ կարգելով, մատնացույց է անում Եգիպտոսի ուղին, մանավանդ նրա հարավը, որը սահմանակից էր այդ ժամանակ դեռևս քրիստոնեական Նուբիային: Վահրամ ու Վասակ Պահլավունիները, ըստ արաբ պատմագիրների, 20 հազար հոգով գնում են Եգիպտոս, որտեղ Վահրամը կարգվում է Գուսի նահանգապետ երկրի հարավային մասում:

Բաղրը քսանմեկ տարի (1074-1094) Եգիպտոսում իշխում է որպես միապետ մեծ վեզիր և գլխավոր սպարապետ: Նրա մահվանից հետո մեծ վեզիրության և սպարապետության պաշտոնն անցնում է նրա որդուն՝ Շահնշահին, որն անսահման է դարձնում իր միապետությունը և իրեն անվանում է «Էլ Մելիք» (թագավոր): Շահնշահը խալիֆի մահվանից հետո օրինական ժառանգին զրկում է գահից և խալիֆ է հռչակում մի հնգամյա մանուկի, որպեսզի էլ ավելի բացարձակ դարձնի իր միապետությունը: Շահնշահը երկիրը կառավարում է քսանյոթ տարի (1094-1121 թթ.)՝ միշտ հովանավորելով հայ ժողովրդին և հայ եկեղեցուն: Եգիպտոսում աստիճանաբար ավելանում է հայերի թիվը: Հայերը կառուցում են բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, որոնք Շահնշահի օրոք ազատված էին ամեն տեսակ

15 Հայապատում. պատմիչը եւ պատմութիւնք Հայոց յօրինեալ եւ հաաքեալ ի Զ. Ղեւոնդայ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ – ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 351:

16 Նույն տեղում, էջ 351:

հարկերից և տնտեսական մեծ գործունեություն էին ծավալել: Զորեղացած հայ վանականները կարողանում են գրավել քրիստոնեության համար ամենանվիրական ավանդական վայրերը՝ անապատականության շարժման հիմնադիրներ Պաթնուտիոսի և Սանուտիոսի (Շնուդիի) և մյուսների գերեզմանները և հայկական վանքեր կառուցել այդ սուրբ համարվող վայրերում:

Բաղրը և Շահնշահը թեև մահմեդականություն էին ընդունել, բայց ամենասերտ կապերով կապված էին հայոց եկեղեցու հետ: Բաղաքագետ Բաղրը հայկական մի փառահեղ եկեղեցի է շինել տալիս, բայց չի թողնում այն օծել քրիստոնեական կարգով, իսկ երբ մեռնում է, կտակի համաձայն նրան թաղում են այդ եկեղեցու բակում: Ուժեղացած հայ գաղութն այդ եկեղեցին դարձնում է իր կաթողիկոսանիստ մայր եկեղեցին: Բաղրի որդի Շահնշահը սիրում էր իր օրն անցկացնել հայոց Զուհրայի մեծ վանքին հատկացրած այգում:

Ալ-ամիրը (1101-1130 թթ.), որին հնգամյա հասակում իր գոգը նստեցրած խալիֆ էր հռչակել Շահնշահը, 1121 թվականին արդեն 25 տարեկան դարձած՝ վարձկան մարդասպանների ձեռքով դավադրաբար սպանում է Շահնշահին: Նա այդ քայլը կատարում է ոչ թե հայազգի միահեծան վեզիրի և արդեն ավելի ստվարացած եգիպտահայության գերուժությունից դժգոհ տարրերի ցանկությանն ընդառաջելով, այլ միայն նրա համար, որ իրեն՝ շվայտ կյանք վարող այդ խալիֆին, ձանձրացրել էին հեռատես և քաղաքագետ Շահնշահի անվերջ խրատ-կշտամբանքները: Բանն այն է, որ ցոփ կյանքի անձնատուր եղած և հյուծված երիտասարդ խալիֆը չէր մտածում ժառանգ ունենալու մասին: Նրա մահից հետո գահը կանգներ Մուսթանսիրի այն թոռանը, որի հորը ժամանակին պատժել էր Շահնշահը՝ գրկելով գահից: Սակայն հիվանդոտ խալիֆի այդ անմիջապես շարժման մեջ է դնում եգիպտահայության արագ բարգավաճմանը նախանձողներին: Մի պահ հայահալած քաղաքականություն է սկիզբ առնում: Բայց հայոց ազդեցիկ Անաստաս պատրիարքը և հարավում ուժեղացող Պաղլավունիները բնում խեղդում են սկսված թշնամական քաղաքականությունը և անմիջապես վերականգնում են հայերի բոլոր իրավունքները: Տեղի է ունենում մահմեդական երկրներում չտեսնված երևույթ. այնքան ուժեղ էր Պաղլավունիների ազդեցությունը Եգիպտոսում, որ 1121 թվականի խժդժությունների ժամանակ իրենց գլուխն ազատելու համար մահմեդականություն ընդունած առանձին հայերի ազատ իրավունք է տրվում վերադառնալու իրենց նախկին կրոնին:

1130 թվականին մեռնում է Ալ-ամիր խալիֆը: Իրեն խալիֆ է հռչակում Շահնշահի համար անցանկալի թեկնածուն՝ Հաֆիզը: Շահնշահի որդին, նույնպես Շահնշահ, մի ամբողջ տարի թույլ չի տալիս, որ Հաֆիզը գրավի իր գահը: 1131 թվականին Հաֆիզը, որ Ֆաթիմյան դինաստիայի ամենանշանավոր խալիֆներից մեկը պիտի դառնար, վերջապես հաստատվում է գահի վրա: Նա գիտակցում էր առևտրաարդյունաբերական և արհեստագործական խաղաղ գործունեություն ծավալող հայերի ներկայության անհրաժեշտությունն իր երկրում, սակայն նոր խալիֆի հետ իշխանության գլուխ անցած պաշտոնատար անձանց կողմից սառը վերաբերմունք է նկատվում հայերի նկատմամբ: Բայց երկրի հարավում՝ քրիստոնեական Նուբիային սահմանակից Գուս նահանգում, իր հայկական զորքով ուժեղացել էր Վահրամ Պաղլավունին, որը համառորեն հավատարիմ էր մնում իր քրիստոնեական կրոնին և պահպանում էր եգիպտահայության շահերը: Տեսնելով հայերի նկատմամբ մայրաքաղաքում վերստին ստեղծված անբարյացակամ մթնոլորտը՝ Վահրամ Պաղլավունին, չնայած իր ծեր հասակին, 1134 կամ 1135 թվականին իր զորքով շարժվում է Գահիրեի վրա, գրավում է մայրաքաղաքը, սպանում ու փախուստի է մատնում իր հակառակորդներին: Հաֆիզ խալիֆը հարկադրված մեծ վեզիրի խիլան (շքազգեստը) հագնում է Վահրամ Պաղլավունուն, որն անմիջապես երկրի բոլոր հրամանատարական իրավունքները հանձնում է մոտ երկու հազար հայ պաշտոնյաների: Ավելի քան երեք տարի տևած հայկական այս գերուժությունն ընդհանուր դժգոհություն է առաջացնում Եգիպտոսում: Խալիֆը՝ մարգարեի հաջորդը, աղոթքի պահին անտեսանելի պետք է մնար հավատացյալների աչքից: Ըստ ընդունված կարգի՝ մզկիթում խալիֆին ծածկող վարագույրը քաշում էր մեծ վեզիրը: Քրիստոնյա վեզիրն այդ բանն անել չէր կարող: Ավանդական կարգի խախտումը վրդովեցնում է մահմեդականներին: Իրադրությունից օգտվում է Ռ-յուլվան Վալախշի անունով գավառական մի էմիր, որն ապստամբություն է բարձրացնում մահմեդական կրոնի ոտնահարված իրավունքները վերականգնելու դրոշմով և մաքրակրոն բեղունների գլուխ անցած՝ հարձակում է գործում «պղծված» Գահիրեի վրա. կառավարական զորքի մահմեդական զորաբաժինները վճռական ճակատամարտի պահին անցնում են Վալախշիի կողմը: Վահրամն իր հայկական

* 1094 թ. Պաղլավունիների տան նահապետը, որը պետք է գլխավորեր 20 հազար հայերի տեղափոխությունը Եգիպտոս, չէր կարող առնվազն 30 տարեկան չլինել: Այդ հաշվով 1134-1135 թթ. նա 75-ամյա ծերունի կլիներ:

գործով հարկադրված նահանջում է (1137 թ.) և գնում երկրի հարավ, որտեղ մահմեդականներին հաջողվել էր սպանել նրա եղբորը՝ Վասակին (Բասակին): Այստեղ, եղբոր սպանության վրեժն առնելով, Վահրամը գնում է *դեպի ավելի հարավ*:

Վալախշիի բեդուիները բռնություններ են սկսում հայերի նկատմամբ, և հայերի՝ ասպարեզից հեռանալը բացասաբար է անդրադառնում երկրի տնտեսական կյանքի վրա. նորից սկսվում է խառը շրջան: Եգիպտոսը կորցնում է իր կարևոր դիրքերը համաշխարհային առևտրի մեջ: Առաջինը, ըստ արաբ պատմագիրների վկայության, բողոքում են Հարավային Իտալիայի քաղաքները, որոնց առաջ ճգնում է արդարանալ Հաֆիզ խալիֆան: Եգիպտահայ գաղութի ճակատագրի վերաբերյալ ներկայիս տերմինով ասած, նոտաների փոխանակություն է սկսվում Սիցիլիայի թագավորի և Եգիպտոսի խալիֆի միջև: Մինչ այդ երկրի հարավում նորից ուժեղանում է Վահրամ Պահլավունին և նորից իր հայկական գործով շարժվում է Գահիրեի վրա: 1140 թվականին նա կրկին գրավում է մայրաքաղաքը, պատժում Վալախշիին, վերականգնում հայերի բոլոր իրավունքները և, որպես խաղաղության և ապահովության երաշխիք, երկրի մայրաքաղաքում ստեղծում պետությունից ռոճիկ (աշխատավարձ) ստացող *հայկական մշտական հալուկ զորք*: Այդ հայկական զորքը, շարունակ համալրվելով, իր գոյությունը պահպանեց ամբողջ 32 տարի և ոչնչացվեց միայն Սալահեդդինի ձեռքով, երբ նա Ֆաթիմյանների՝ վեզիր դառնալուց (1169 թ.) հետո պետական հեղաշրջում կատարեց և իր հոր անունով Էյուբյան քրդական դինաստիա հիմնեց Եգիպտոսում (1172 թ.):

Ժամանակակից արաբագիտությունն արձանագրել և ըստ արժանվույն գնահատել է XI դարի սկզբում Եգիպտոսում գործող հայազգի երկու մեծ վեզիրների տնտեսաքաղաքական և կուլտուր-շինարարական մեծ գործունեությունը:

Իսլամի հմուտ պատմաբան Ավգուստ Մյուլլերը Բադրի և նրա որդու՝ Շահնշահի մասին գրում է. «Խալիֆի գլխում խելացի միտք ծագեց և նա 466 (1073-74) թ. Աքքայից օգնության կանչեց հայ Բադր էլ Ջամալին՝ (վարձկան) թուրքերի և նեգրերի դեմ: Բադր էլ Ջամալին այդ բերդը Ֆաթիմյանների համար պահպանում էր մի քանի գնդով, որոնք կազմված էին բացառապես նրա հայրենակից հայերից: Թեև Բադրն արդեն 60 տարեկան էր, բայց այդ եռանդուն մարդն ամենևին չմտահոգվեց որևէ դատարկ բանով: Այդ նույն թվականին նա իրեն ենթակա սպաներին հանձնարա-

րեց մեկ-մեկ մտերմանալ Գահիրեի ամենաանհնազանդ էմիրների հետ և աշխատել միանգամից կոտորել այդ բոլոր կռվարարներին: Վերջ տալով նրանց՝ Բադր էլ Ջամալին ընդունեց միրգուշի (ավելի ճիշտ՝ Էլ Ջույուշի), այսինքն՝ սպարապետի տիտղոսը և սկսեց երկիրը կառավարել համարյա ինքնուրույն կերպով... Նրան հաջողվեց, վախճանվելով Մուսթանսիրից շատ առաջ, խաղաղեցված և նորից ծաղկել սկսող Եգիպտոսը հանձնել իր որդուն՝ Շահնշահին, որի իշխանությունը երկրի վրա դարձավ էլ ավելի անսահմանափակ, քան իր հանգուցյալ հոր իշխանությունը: Եվ գուր չէր, որ նա Մուսթանսիրի միանգամայն աննշան որդու՝ Մուսթալիի օրոք (487-494 / 1095-1101) ընդունեց Էլ-Մելիք Էլ-Աֆդալ՝ «Ամենակատարյալ թագավոր» տիտղոսը: Նա հենց այդպիսին էլ էր երկիրը կառավարելիս»:¹⁷

Նույն այդ Բադր էլ Ջամալիի մասին Ֆիլիպ Հիթթին, որը ներկայումս մեծագույն արաբագետի հոչակ է վայելում անգլո-ամերիկյան արևելագետների մեջ, իր «History of the Arabs» աշխատության մեջ գրում է. «1073 թվականին տատանվող խալիֆը (խոսքը վերաբերում է խայտաբղետ գործի ձեռքին շատ նեղություններ քաշող Էլ Մուսթանսիրին – Հ.Թ.) Աքքայի իր զինվորական ծովակալությունից կանչեց հայ Բադր էլ Ջամալին... գործելու որպես վեզիր և գլխավոր հրամանատար: Նոր Էմիր Էլ Ջույուշը (այսինքն՝ գլխավոր հրամանատարը – Հ.Թ.) սկսեց կառավարել այնպիսի եռանդով, որ քառսից դուրս բերեց ու կարգավորեց ապարատը և կյանքի նոր շունչ տվեց Ֆաթիմյան ռեժիմին: Բայց վերածնունդը կարճատև էր... Էլ Մուսթանսիրի մահից հետո Էլ Մելիք Էլ Աֆդալը (Բադրի որդու՝ Շահնշահի մականունները – Հ.Թ.) խալիֆայական գահ բարձրացրեց նրա ամենակրտսեր որդուն՝ Էլ Մուսթալի անունով, հույս ունենալով նրան պահել իր ազդեցության տակ: Էլ Մուսթալիից հետո Էլ Աֆդալը (Շահնշահը) խալիֆ հռչակեց նրա հնգամյա որդուն (1101-1130), որը նրան շնորհեց էլ Ամիր պատվավոր տիտղոսը»:¹⁸

Ռուս ականավոր եգիպտագետ ակադեմիկոս Բ. Ա. Տուրանը իր «Հայ-հաբեշական առնչություններ» աշխատության մեջ գրում է. «...Սակայն Եգիպտոսն էլ էր գրավում հայերին, որոնք, ինչպես հայտնի է, XI դարի վերջերին այդտեղ հայտնի գաղութ էին կազմել, վայելելով Էլ-Մուսթանսիր խալիֆի հայազգի վեզիր Բադր-Էլ-Ջամալիի հովանավորությունը: Տասնմեկերորդ Ֆաթիմյանի՝ Ալ-Հաֆիզ Աբուլ-Մայմուն Աբդ-ալ-Մաջիդի ժամանակ

17 А. Мюллер, История ислама с основания до новейших времен. Перевод с немецкого. Под ред. Н. А. Медникова. Том II, СПб., 1895, с. 345.

18 Philip Khuri Hitti. History of the Arabs. Macmillan and Co., Limited. London, 1937, pp. 622-623.

նրանք ունեին նույնիսկ իրենց պատրիարքը, որն ազդեցություն ուներ արքունիքում: Այդ գաղութը խիստ տուժեց քրդական արշավանքների ժամանակ, և այդ գաղութի կրած աղետներին ականատես է եղել հայտնի հայ Աբու Սալիհը (Ալիշանի տառադարձությամբ՝ «Աբուսահլ-հայը» – Հ.Թ.), որը մեզ արաբերեն լեզվով թողել է XII դարի վերջի Եգիպտոսի ինչպես ղալտիական, այնպես էլ հայկական և ուղղափառ եկեղեցիների ու վանքերի արժեքավոր նկարագրությունը»:¹⁹

Արաբ հին պատմագիրները, վարպետորեն կոծկելով հավատացյալների պետ խալիֆի ապավինումն իր հայ գորավարին, այնուամենայնիվ, բավական գովելի անաչառությամբ են խոսում մանավանդ Բադրի ու Նրա որդու՝ Շահնշահի կառավարման մասին: Այսպես Իբն Խալլիքանը՝ արաբական աշխարհի Պլուտարքոսը, որը ժամանակի տեսակետից ամենից ավելի մոտ է տվյալ դարաշրջանին (ապրել է XIII դարում), իր նշանավոր «Վեֆայաթ էլ Աաեան» («Անհետացած երեւելիներ») գրքում Շահնշահին նվիրված գլխում նրա հոր՝ Բադրի մասին հաղորդում է. «Յիշեալ Պէտր [Բադր] հայազգի մըն էր... հմտալից, կորովի և հաստատակամ մարդկանց շարքին մէջ հազուագիւտներէն մէկն էր... զոր Եգիպտոսի տէրը (գահակալը)՝ Էլ Մուսթանսըր [Մուսթանսիր] իրեն տեղակալ կարգած էր Սուր քաղաքին կամ՝ ըստ ոմանց Աքքէյի [Աքքա] մէջ: Երբոր Մուսթանսըրի իշխանութիւնը տկարացաւ և իր տէրութիւնը անկարգութեան մատնուեցաւ... լսեց յիշեալ Պէտր Էլ Ճամալիի [Ջամալի] մասին և գայն կանչել տուաւ: Ան նաւ նստաւ ձմրան այնպիսի մէկ պահուն, ուր սովորութիւն չէր ծովային ճամփորդութիւն կատարել և Գահիրէ հասավ 466 (Ք. 1074) թականին... Մուսթանսըր պետական գործերու վարիչ կարգեց գայն: Անոր ժամանումով իշխանութեան վարկը բարձրացաւ և վարչութիւնը բարեկարգուեցաւ: Սուրի և գրչի վեզիր՝ ան Մեծ Գատիութիւնը և կրօնական քարոզչութեան նախագահութիւնը ստանձնեց և ամենալաւ քաղաքականութեամբ մը վարեց պետական գործերը: Կ'ըստի թէ իր գալուստը Մուսթանսըրի համար յաջողութեան սկիզբը և անկումի վախճանը եղաւ: Ան Էմիր էլ Ճիւյուշ (բանակներու հրամանատար) տիտղոսը կը կրէր»:²⁰

19 Б. А. Тураев. Из армяно-абиссинских сношений. — Записки Восточного отделения Императорского Русского Археологического общества. Том 21, вып. 1, 1912. СПб., 1913, с. 03.

20 Իսկ Խալլիքան, Վեֆայաթ էլ Աաեան (Անհետացած երեւելիներ), արաբերէն բնագրէն թարգմանեց Գէորգ Մըսրիւեան, Գահիրէ, 1935, էջ 148:

Այստեղ և այսուհետև մեջբերումների մեջ արված ընդգծումները, բացի հատուկ նշված դեպքերից, Յ. Թուրյանին են – Յ.Ս.

Այս նույն Իբն Խալլիքանը Հաֆիզ (1131-1149 թթ.) խալիֆին նվիրված գլխում հաղորդում է. «Հաֆիզ ծնած է Ասգալանի մէջ 467 (Ք. 1074) թականին... Ասգալանի մէջ ծնած ըլլալուն պատճառը այն է, որ երբ իր պապուն՝ Մուսթանսըրի օրով նեղութիւն և արտակարգ սղութիւն պատահեցաւ Եգիպտոսի մէջ, հայրը Ասգալան գացած էր»:²¹ Ուրեմն եթե անգամ պապն էլ չէր գնացել Ասկալոն, ապա պետք է ենթադրել, որ խառնակության օրերին պապը՝ Էլ Մուսթանսիր խալիֆը, բարվոք էր համարել խալիֆայական ընտանիքը փախցնել վարձկան զորքերի խժոժություններից և ուղարկել հայկական զորքի հովանավորությունը վայելող խաղաղ Ասկալոնը, որը գտնվում էր Աքքայի մոտ:

Արաբ նշանավոր պատմաբան Մաքրիզին (XIV-XV դդ.) ավելի մանրամասն է խոսում Բադրի ու Շահնշահի մասին. «...Պէտր էլ Ճէմալի... շարունակ ետանդով փարեցաւ իր ձեռնարկներուն, վճռականութեան վարժուեցաւ և պաշտօնէ պաշտօն փոխադրուեցաւ մինչեւ որ Հիճ. 455 (Ք. 1063) թականին... Մուսթանսըրի կողմէ Դամասկոսի էմիրութեան պաշտօնը ստանձնեց: ...Ապա Աքքէյի փոխանորդութիւնը ստանձնեց, և երբոր սաստիկ սղութեան և յաճախաբէյ խռովութիւններու հետեւանքով սուլ պարտահեցաւ Եգիպտոսի մէջ, երբոր կացութիւնը խանգարուեցաւ քաղաքներու մէջ, գործերը փոփոխութեան ենթարկուեցան, զօրագուններ խռովութիւն հանեցին, վեզիրները, որոնց հրամանն ու արգիլումը չէին գործադրուիր, պաշտօնի անունով միայն կը գոհանային, երբոր բարօրութիւնը անյուսալի դարձաւ և առաքինութիւնը անբաղձալի եղաւ, երբոր – կըսեմ – լավաթիւներ (ափրիկեցի ցեղ մը) տիրացան բարեբեր գիւղերուն և սևամորթներու ձեռքը անցաւ Վերին Եգիպտոս, երբոր, վերջապէս, ցամաքային ու ծովային ճամբաները ծանր պահպանութիւններով միայն անցանելի դարձան... այն ատեն Մուսթանսըր (խալիֆան) նամակով կանչեց գայն (Պէտր էլ Ճէմալին), որպէսզի իր պետութիւնը կարգի դնելու պաշտօնը ստանձնէ: Այս վերջինը (այսինքն՝ Բադրը – Հ.Թ.) պայման դրաւ, որ իր ընտրած զինուորները հեղը բերէ և Եգիպտոսի զօրքերէն մէկը չձգէ: Մուսթանսըր ընդունեց այս պայմանը: Պէտր իր մօտ ծառայութեան կօչեց զօրաբանակ մը, Աքքէյէ ծով նստաւ Դեկտեմբերին և հարիւր առագաստանաւերով ճամբայ ելաւ, մինչդեռ իրեն դիտել տրուած էր, որ պեկոծութեան և նաւաբեկութեան վախի բերումով սովորութիւն չէր եղած ծով (նաւ) նստիլ ձմրան մէջ: Ան մերժեց այս խորհուրդը և նավարկեց: Մեղմ հովի հետ այնպէս պայծառ և հանդարտ օդ մը

21 Նույն տեղում, էջ 165:

ըրաւ 40 օր շարունակ, որ մեծ զարմանք պատճառեց և իր բարեբախտութեան վերագրուեցաւ:

Պէտքը հասաւ Թինիս և Տամիթ, որոնց *վաճառականներէն և հարուստներէն դրամ փոխ առաւ*: Պոռնիքայի մեծամեծներէն Սիւլեյման Էլ Լէվաթի անոր հիւրընկալութիւնը և պէտք եղած արմատիքին մատակարարումը կատարեց: Ապա դէպի Գալիուպ առաջանալով հոն իջեւանեցաւ և լուր դրկելով Մուսթանսըրի՝ ըսաւ հետեւեալը. – ‘Մըսը չեմ մտներ, մինչեւ որ ձերբակալես Պալտաքուշը՝ որ էմիր մըն էր և Իպն Համտանի սպանութենէն ետք բռնացած էր Մուսթանսըրի վրայ:’ Մուսթանսըր ձերբակալեց զայն անմիջապէս և *Խազանէթ Էլ Պինուրի* մէջ արգելափակեց:

Հիմերթի 465 (Ք. 1073) թուականին Հումադա Ուլայէ 2 գիշեր մնացած, Զորեքշաքթի երեկոյ եկաւ Պէտքը և յաջողեցաւ ձերբակալել պետութեան բոլոր էմիրները: Խնդիրն այն է, որ երբոր ան եկաւ, էմիրները անոր կանչուած ըլլալու մասին տեղեկութիւն չունէին: Ուստի անոնցմէ ոմանք հիւրասիրեցին զինքը և իրեն ներկայացան: Եւ երբոր ասոնց հիւրասիրութեան կարգը լրացաւ, ինքն ալ իր տանը մէջ կազմակերպուած խնճոյքի մը հրաւիրեց զանոնք, և իր հետետորդներուն հետ գիշերանց կարգադրութիւն ընելով մտածեցին, որ այս մարդիկը (հրաւիրեալները) երբոր գիշերը կոխէ, անհրաժեշտօրէն պէտք պիտի ունենան ճեմիշի, ուստի ո՛վ որ ճեմիշ երթայ, հոն թող սպաննուի: Իւրաքանչիւր հրաւիրեալին վրայ իր հետևորդներէն մէկը կարգեց և անոր նուիրեց այդ էմիրին ձգելիք պալատը, դրամը, աւատական հողերը և այլն: Էմիրները եկան իր մօտ, մնացին ցերեկը և հանգիստ սրտով գիշերեցին: Հազիւ առտուան լոյսը ծագած՝ անոր հետետորդները գրաւած էին արդէն էմիրներուն բոլոր պալատները և անոնց կառափներն ալ իրեն յանձնուած էին:

Անոր ազդեցութիւնը զօրացաւ այս կերպով և հեղինակութիւնը մեծացաւ: Լանջատուած վերարկու նուիրեց Մուսթանսըր և անոր յանձնեց սուրի և գրչի վեզիրութիւնը: Գատիներ, քարոզիչներ և այլ պաշտօնատարներ անոր ձեռքին տակ դրուեցան և անոր պատուանուններուն վրայ բարդուեցաւ «*Բանակներու Հրամանատար, Մահմեդական Գալիներու Խնամատար և Հասարակեալներու Քարոզիչներուն Առաջնորդ*» տիտղոսը:

Ան *չարագործները հեղապնդեց և մէկ հար իսկ չձգելով սպաննեց: Մըսըրի մեծամեծներէն, գալիներէն և վեզիրներէն շարերը մեղցուց: Ապա*

* Ուրեմն բռնութեան ենթարկվածը պետք է ձերբակալել բռնութեան գործ դնողին: Եթե այդ քայլը Մուսթանսիրի համար այդքան հեշտ լինէր առանց Բադր Էլ Ջամալու, էլ ինչու պիտի Մուսթանսիր խալիֆը դիմէր Բադր Էլ Ջամալի օգնութեանը – Զ.Թ.:

զնաց Սիրորին Եգիպտոս, հոն գլխնուող Լավաթիները անխնայ ջարդեց, անոնց ինչքերը գրավեց, խոռվարարները հալածեց և այլազան սպանութիւններով ոչնչացուց: Ապա անցաւ արեւելեան ցամաքը, մեղցուց բազմաթիւ չարագործներ, յետոյ իջաւ Աղեքսանդրիա, երբ հոն խմբակ մը սպասարմբած էր իր Ավհար որդւոյն հետ: 477 (Ք. 1084) թուականի Մուսթանսըր ամսուն քանի մը օր պաշարեց քաղաքը, մինչեւ որ բռնի գրաւեց զայն, բնակիչներէն շարերը սպաննեց և բռնագրաւուած դրամով Աթթարիի մզկիթը շինեց, որուն շինութիւնը աւարտեց Հիճ. 479 թուականի Բապի Էվվէլ ամսուն: Ապա քալեց դէպի Վերին Եգիպտոս, պատերազմեցաւ Հուհէնա և Սաալպա կոչուած արաբ ցեղերուն դէմ, որոնց մեծ մասը սպանութեամբ փնացուց, անգնահատելիօրէն առատ հարստութիւն մը ձեռք ձգեց իբրև աւար, որով քարելաւց շրջանին խանգարուած վիճակը... Իրեն փոխանորդ կարգեց իր Շահնշահ որդին, զոր իր պաշտօնին ժառանգորդը ըրաւ:

Պէտքը Էլ Հէմալի մեռաւ Հիճ. 487 (Ք. 1194) թուականին, Բապի Ախար կամ ըստ ոմանց Հումատա Ուլա ամսուն մեջ: *Թագաւորներու իշխանութիւնը ունեցաւ ան Եգիպտոսի մէջ, այնպէս որ անոր առջեւ Մուսթանսըր (խալիֆան) հեղինակութիւն չունէր:* Ան ինքնիշխան վարեց գործերը և ամենալաւ կերպով կանոնաւորեց: Խիստ պատկառազոր, մեծապէս յարգուած և ահարկու՝ ան Եգիպտոսէն այնքան մարդ սպաննեց, որուն համարները Արաբիչը միայն կրնայ կատարել: Արդարեւ, Տամիթի, Աղեքսանդրիոյ, Ղարալիյէի, Շարգիյէի, Վերին Եգիպտոսի քաղաքներուն, Ասուանի, Գահիրէի և Մըսրի մէջ սպաննուածներէն դուրս, ան Պոռնիքայի ժողովուրդէն մօտավորապէս 20 հազար հոգի մահացուց: *Այսուհանդերձ, շէնցուց և քարեկարգեց երկիրը, որ սարուած և քանդուած էր փեղացի չարագործներուն սաւերումին երեսէն: Մեռած օրը մօրատրապէս 80 տարեկան էր:*

Ունեցած է երախտիքներ: Այսպէս *երեք տարի հողը շնորհ ըրաւ երկրագործներուն*, որով հողագործները վիճակի բարութեամբ ունեցան անոր օրով և հարստացան: *Նոյնպէս իր մեծ արդարասիրութեան հետեւանքով Մըսր վերադարձան վաճառականներ, որոնք հեռացած էին սովի օրերուն:* Մեծապէս առատաձեռն էր: Ան Եգիպտոս մնաց 21 տարի: Սուրի վեզիրներէն ինք առաջինն է, որ արգելքի տակ առաւ խալիֆաները Եգիպտոսի մէջ: Գահիրէի մէջ ցարդ մնացած իր յիշատակարաններուն մաս կը կազմեն Պապ Զավիլա, Պապ Էլ Ֆիթուհ և Պապ Էն Նասր դուռները:

իշխանութեան վրայ իրեն յաջորդեց իր որդին Շահնշահ, որ էլ Աֆտալ Պին Էմիր իլ Ճիւլուշ կը մականուանուի: Պետր էլ Ճեմալիի և իր զակին՝ Աֆտալի շնորհիւ վերաբարձուեցաւ Ֆաթիմի խալիֆաներուն մարած փայլը և եգիպտական երկիրը՝ քանդումէն և ժողովրդային վիճակի քայքայումէն ետք վերաշինուեցաւ...»: ²²

XI և XII դարերի եգիպտահայ ստվարաթիվ ու բարգաւաճ գաղութը, ինչպէս նաև եգիպտական ընդհանուր կյանքում հայ վեզիրների և այլ մեծամեծների գրաված կարևոր դիրքերը և խաղացած էական դերն այնպիսի նշանավոր երևույթ էին արդեն օտար հորիզոնների տակ նոր հայրենիքի որոնման դատապարտված հայ ժողովրդի համար, որ ժամանակի հայ մատենագրությունը չէր կարող չանդրադառնալ եգիպտահայ գաղութին:

Ժամանակի տեսակետից առաջին հայ պատմագիրը, որը խոսում է եգիպտահայ գաղութի մասին, Մատթեոս Ուռհայեցին է, որն իր ժամանակագրությունը հասցրել է մինչև 1134 թվականը. ուրիշ խոսքով, նրա կենդանության օրոք են Եգիպտոսի մեծ վեզիր դարձել Բադրը (1074-1094) և Շահնշահը (1097-1121), որոնք առերևույթ մահմեդականություն էին ընդունել: Ուռհայեցին երիտասարդ քահանա էր հայկական Եդեսիա (Ուռհա) քաղաքում, երբ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն ուղևորվեց Եգիպտոս (1082-1084): Բարեպաշտ հայ քահանան հականե-հանվանե խոսում է միայն Վկայասեր կաթողիկոսի հիշյալ ուղևորության և այնտեղ հայկական ուրույն կաթողիկոսություն հիմնելու մասին:

«Եւ էր ի թուականութեանս Հայոց ՇԻԳ, – հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, – և ապա զկնի այսորիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ. և եկեալ յԵգիպտոս՝ շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափագումն սրտին իւրոյ. և հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցոյ. և բազում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առաւել քան ի թագաւորէն Հռոմոնց: Եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթողիկոս զՏէր Գրիգոր՝ զբարոքորդին իւր՝ և ինքն ելեալ գայր յաշխարհն Հայոց, վասն զի դէռ ևս կենդանի կայր մայրն նորա»»: ²³

²² Գէորգ Մըսրիւն, Ականատր հայեր Եգիպտոսի մէջ արաբական գրաւումէն մինչեւ Չէրքէզ մէմլուքներու իշխանութեան միջին շրջանը 640-1441, Գահիրէ, 1947, էջ 23-26:

²³ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

Այս հատվածի մեջ կարևոր է ընդգծել, որ Գրիգոր Վկայասեր Պաղատի կաթողիկոսը բավական երկար ժամանակ է մնացել Գահիրեում, որոշ ժամանակ իր աթոռն է հաստատել այնտեղ և «կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցոյ», իսկ իր քրոջորդուն եգիպտահայության կաթողիկոս է ձեռնադրել «զկնի ժամանակաց»:

Հավանական չէ, որ Մատթեոս Ուռհայեցուն հայտնի եղած չինեին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին Եգիպտոս հրավիրող հայազգի վեզիր Բադրի ու նրա որդու՝ Շահնշահի անունները, ինչպէս նաև եգիպտահայ գաղութի արագ ստվարացումն ու բարգաւաճումը, որ տեղի էր ունեցել նրա կենդանության օրոք, մանավանդ որ նրա քաղաքից՝ Եդեսիայից էր Բադրը հայ արհեստավորներ և ճարտարապետ Հովհան կրոնավորին տարել Գահիրէ՝ երկրորդ պարիսպը և այլ շինություններ կառուցելու համար: Բայց իբրև բարեպաշտ հայ քահանա, բարվոք համարելով չխոսել հայ եկեղեցին ուրացողների մասին, ինչպիսի դիրքի էլ հասած լինեին նրանք օտար միջավայրում, այնուամենայնիվ, Մատթեոս Ուռհայեցին ունի մի շատ ուշագրավ, ես կասեմ՝ հանճարեղ պատկերավոր վկայություն, որն առաջին հերթին վերաբերում է եգիպտահայ գաղութին, իսկ հետագա բոլոր ժամանակներում՝ նաև բովանդակ տարագիր հայությանը՝ որ հորիզոնի տակ էլ նա հաստատած լինի իր բնակությունը:

Ահա Մատթեոս Ուռհայեցու այդ անգուգական վկայությունը. «Որպէս և այն թեթև թռչունն, թեպէտ և ձայնովն ընդդիմանայ բազմաց, այլ մարմնովն տկարանայ, այն որ կոչի ծիծառն. սակայն նա զմերս ունի նմանութիւն առ զարմանալի գործ բնութեանն իւրոյ, թէ զհարդ յոչնչոյ բնակութիւնս կազմէ և ի բարձունս առանց հիման կառուցանէ, շաղախաբեր և շիղաբեր վաստակս հնարով հնարէ և ամբութիւնս պնդագոյնս հաստատէ և որդոց իւրոց զնա տացէ ժառանգութիւնս, գոր և այլ յաղթանդամ թռչնոց անհնար է զայն գործել, արծուոյ ասեմ և նմանեաց նորա, վասն զի զայլ քաջութիւնս մեծաւ կարողութեամբ առնեն հաւքն քաջաթոխչքն, բայց զայն, գոր գործեաց թեթև թռչունն՝ զայն ոչ կարեն առնել»»: ²⁴

Ժամանակի տեսակետից եգիպտահայ գաղութի մասին խոսող երկրորդ հայ հեղինակը մեծատաղանդ Ներսես Շնորհալին է (1101-1173):

Մատթեոս Ուռհայեցու կենդանության օրոք Եգիպտոսի հայ վեզիրներն առերևույթ իսլամ ընդունած Բադրն ու Շահնշահն էին. Ուռհայեցին քրիստոնեությանը հավատարիմ մնացած Վահրամ Պաղատիումու բարձրա-

²⁴ Նույն տեղում, էջ 279:

ցումը չտեսավ (Ուռհայեցին վախճանվել է հավանաբար 1134 կամ 1135 թվականին, այնինչ Վահրամ Պահլավունու վերելքն սկսվում է 1135 թվականից): Իսկ Շնորհալին ոչ միայն տեսել է Վահրամ Պահլավունու վերելքը, այլև որպես տոհմակից, ապրել ու ոգևորվել է իր հարազատ հորեղբոր այդ հեքիաթային վերելքով և երգել է այն: Նրա «Յիշատակարաններում» Վկայասեր կաթողիկոսի և Պահլավունի գորավարների մասին կարդում ենք.

«Ժառանգութիւն ոչ ըստացեալ,

Ու ի միում վայրի բնակեալ.

Պանտըխտաբար յերկրի շրջեալ,

Յեզիպուականսն փոփոխեալ,

Յայլասեռիցն մեծարեալ,

Եւ յարքայէ նոցունց պատուեալ: ...

Որ Յովսէփայ մեծին նմանեալ,

Ըզհամազգիս ըզկնի ձրգեալ,

Զարի եղբարս իւր քաջացեալ,

Ըստ Յետվայ զօրապետեալ.

Որոյ Վահրամ վերաձայնեալ,

Միսոյն Վասակ անուանադրեալ.

Որք վեհագոյն փառս ընկալեալ,

Եւ մեծարգի պատուոյ հասեալ,

Ըզպատերազմ ազանց վանեալ,

Հակառակաց յաղթող զըտեալ:

Վասն այսորիկ շրքեղացեալ,

Եւ աշխարհի նոցունց տիրեալ»:²⁵

Եզիպտահայ գաղութի եղերական անկումից (1172 թ.) հետո այդ աղետի մասին տարբեր ձևերով գրել են նաև ուրիշ հայ հեղինակներ, որոնց երկերը, դժբախտաբար, կամ բոլորովին մեզ չեն հասել, կամ թե հասել են միայն առանձին ֆրագմենտներով (հատվածներով): Այսպես, պահպանվել է Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսի՝ Եզիպտոս կատարած ուղևորությունը նկարագրող և այնտեղ վարած հույժ կարևոր բանակցությունները պատմող մի ֆրագմենտ (հատված), որ Ալիշանն անգամ բարվոք է համարել անստորագիր գետեղել իր «Հայապատումի» մեջ:²⁶

25 Վիպասանութիւն նախնի ըստ Զոմերի սկսեալ ի վերուստ. — Տն. Ներսէսի Շնորհալոյ Զայոց կաթողիկոսի Բանք չափաւ: Բ. Տպագրութիւն, ի Վենետիկ, ի սուրբն Ղազար, 1928, էջ 594-595: Զմմտ. Դետոնդ Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 163:

26 Դետոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 350-351:

Ինչպես այդ ուշագրավ դրվագն առհասարակ և այլ պատմագիրների վկայությունները հաստատ ասում են, որ եզիպտահայ գաղութի և նրա նշանավոր անձանց մասին իր ժամանակին գրել են նաև այլ պատմագիրներ, որոնց երկերը, դժբախտաբար, չեն պահպանվել ու չեն հասել մեզ: Բայց եթե նրանց երկերը գրավոր չեն հասել մեզ, ապա բանավոր պահպանվել են ամբողջ «Սասունցի Դավիթ» էպոսի մեջ, իսկ նրա առանձին պատումների մեջ՝ երբեմն այնպիսի զարմանալի անաղարտությամբ, որ գրեթե բառացի համընկնում են միևնույն իրադարձությունները պատմող արաբ հին պատմագիրների հաղորդումներին:

Ինչպես տեսանք, արաբ պատմագիրներն են Բադրի և նրա որդու ու աջակցի՝ Շահնշահի եզիպտական գործունեության մասին մանրամասն գրում՝ «Անոր ժամանումով իշխանութեան վարկը բարձրացաւ և վարչութիւնը բարեկարգուեցաւ», «իր գալուստը Մուսթանսըրի համար յաջողութեան սկիզբը և անկումի վախճանը եղաւ», «թագաւորներու իշխանութիւնը ունեցաւ ան Եզիպտոսի մէջ, այնպես որ անոր առջեւ Մուսթանսըր (խալիֆան) հեղինակութիւն չունէր», «Ան Եզիպտոսէն այնքան մարդ սպաննէց, որուն համրանքը Արարիչը միայն կրնայ կատարել... Այստեղանդերձ, շէնցուց և բարեկարգեց երկիրը, որ արուած ու քանդուած էր տեղացի չարագործներուն աւերումին երեսէն», «Պէտք էլ ճէմալիի և իր զաւկին՝ Աֆտալի (Շահնշահի տիտղոսը) շնորհիւ վերարծարծուեցաւ Ֆաթիմի խալիֆաներուն մարած փայլը և եզիպտական երկիրը... վերաշինուեցաւ»:

Այստեղ բնորոշն այն է, որ հայազգի գորապետները խալիֆին փրկում են խոտվություն բարձրացրած էմիրների՝ վարձկան զորքի պետերի ձեռքից, բայց իշխանությունը նորից հանձնում են խալիֆին, դինաստիական հեղաշրջում չեն կատարում:

Սակայն եզիպտահայ բարգավաճ և զարմանալի գաղութի մասին չէին կարող չգրել նաև բուն այդ գաղութի ծոցում սնված ու դաստիարակված հայ պատմագիրները: Պատմությունը պահել է դրանցից միայն մեկի՝ Աբու Սալիհ էլ Էրմենիի անունը, որն ապրել է XII դարի երկրորդ կեսում և XIII դարի առաջին քառորդում: Այդ պատմագրի «Պատմութիւն վանորէից և եկեղեցեաց Եզիպտոսի» աշխատությունը, դժբախտաբար ոչ-ամբողջովին, գտնվեց միայն անցյալ դարի վերջերին: Եզիպտոսի հայկական վանքերի, եկեղեցիների և եզիպտահայ գաղութի առանձին նշանավոր անձանց մասին պատմող հատվածներն Ալիշանը ծաղկաքաղ թարգմանությամբ

(թարգմանությունն արված է ֆրանսերենից) ներկայացրել է հայ հասարակությանը:²⁷

Ստորև բերում ենք առանձին հատվածներ Աբու Սալիհ էլ Էրմենիի այդ նշանավոր աշխատությունից:

Բաղդ էլ Ջամալու (1074-1094) անգամ մահմեդական ծնված որդին՝ էլ Մելիք էլ Աֆդալը (Շահնշահը՝ 1094-1121), որը, ինչպես տեսանք, անսահմանափակ իշխանության հասավ Եգիպտոսում, իր օրոք խալիֆայական գահ բարձրացնելով մի հնգամյա մանուկի՝ խալիֆներին խաղալիք դարձրեց իր ձեռքում, նույնպես չէր խզում իր կապը հայկական վանքերի ու եկեղեցիների հետ. նա հայկական վանքերն ազատում էր հարկից, զարդարում շքեղ պարտեզներով և սիրում էր իր ժամանակն անցկացնել այդ վանքերի հեթաթային պարտեզներում:

Ինչպես Երուսաղեմում հայերը կարողացել էին գրավել Սիոնի նշանավոր բարձունքը, այնպես էլ Եգիպտոսում նրանք կարողացել էին վանք կառուցել անաբրոքետական շարժման նշանավոր սյուներից մեկի՝ քրիստոնեական բոլոր եկեղեցիներում սուրբ հռչակված Պափնուտիոսի գերեզմանի վրա: Աբու Սալիհն այդ հայկական վանքի մասին գրում է. «Շահնշահ շատ հեղ կ'իջեվաներ այս վանքիս մեջ, և ատեն կ'անցըներ խառնափնդոր ու վայրապար. վանքին բով այլ պարտեզ մի յարդարեց, ամեն տեսակ ծառ և արմատենիներ տնկելով. աղբիւրներ այլ փազցուց, վրանին ջրադարձ անիւներով. թանձր ցանկով մ'այլ շրջապատեց պարտեզը: Վանացս տարեկան հարկն առ գանձարան տէրութեան՝ 11 դենար էր. յետոյ այս հարկս դադրեցաւ, և անոր ստակով ձիթահանք շինեցին վանաց պարսպին մեջ, ամենայն մասամբք կատարեալ: Վանքն 47 ֆէրզան (իբր 200 հազարչափ քառակուսի) երկիր կալուած ուներ, զոր գրաւեցին Ղուզք և Քուրդք՝ Նասր Եուսուֆ (Սալահատինի) թագաւորութեան ատեն: Այս վանացս մեջ հանգչէր մարմին (Ս.) Պափնուտիոսի, որ վանացս առաջնորդ եղած էր, և տօնն կատարուի ի 15 Ամշիր ամսոյ. պատկեր մ'այլ կար այս տեղ՝ Տիրամօր անարատ Կուսին Մարիամու: – Ալ-Աֆտալ (Շահնշահ) այն տեղ՝ շինուածքին վերնաշարկին մեջ՝ նստած կու գուարճանար»:²⁸

Ինչքան էլ Շահնշահը կարողանում է հասնել էլ ամիր տիտղոսին և բացարձակ դարձնել իր իշխանությունը, բայց և այնպես հիմնական գործը կատարել էր նրա հայրը՝ Բաղդ էլ Ջամալին, որն ապահովել էր վեզիրության

ժառանգությունն իր տոհմի համար: Իսկ Բաղդ էլ Ջամալին դրա համար պետք է մտածեր իր քրիստոնյա զորքը շարունակաբար համալրելու հնարավորությունների մասին: Քրիստոնեությունը մինչ այդ մեծ հաջողություններ էր ունեցել ներկայիս Սուդանի ընդարձակ տարածքի հեթանոսների մեջ: Այդ երկրամասում, որ ձգված էր Եգիպտոսից դեպի հարավ մինչև քրիստոնեական Մերոյե-Նաբաթ (Նուբիա)-Սենաար-Հաբեշտան, Աբու Սալիհի օրոք 400 քրիստոնեական եկեղեցի ու վանք կար, իսկ Աբու Սալիհի աշխատության ֆրանսերեն հրատարակության խմբագիրը նշում է, թե դեռ XVI դարում մի ճամփորդ իր աչքերով Նուբիայում տեսել է քրիստոնեական 150 եկեղեցի, որոնք թեև կանգուն էին, բայց արդեն ամայի:²⁹ Արաբ պատմագիր Մաքրիզին (+1441) հաշվում է քրիստոնեական 72 եկեղեցի և 86 վանք:

Եվ Բաղդ էլ Ջամալին չէր կարող անտեսել քրիստոնեական Նուբիան, որի թագավորն այդ ժամանակ անապատականություն սիրող Սողոմոնն էր:

Բաղդ էլ Ջամալին մարդ է ուղարկում և, ինչպես հաղորդում է Աբու Սալիհը, «բերել տուաւ զնա (Սողոմոնին – Հ.Թ.) ի Գահիրէ. և երբ հասաւ քաղքին դրան, մեծ հանդիսիս և պատուով և երաժշտաց գունդով մի ընդունուեցաւ, ընտիր հեծնելու ձի մ'այլ դրկուեցաւ իրեն. հրամանց (վզուրկն) տէրութեան պատուաւոր անձանց՝ որ աղէկ հոգան զնա. և յետոյ բնակեցուց վայելուչ տան մեջ, ճոխաբար զարդարած մարմար քարամբք, քանդակագործ տալստակներով, գոյնագոյն և ոսկեթել հիստած դիպակներով: Տարի մի ապրեցաւ նա այս տեղ. և վզուրկն ստէպ կ'երթար զինքը տեսնելու, այլևայլ իրաց վրայօր խօսելով հեպը, և ուշ դներ անոր ըսածներուն. և կու տեսնէր որ նա միայն փափագէր Աստուծոյ, – որում փառք և գովութիւն, – բոլոր սրտով և մտօք հրաժարելով ամեն մարդկային բաղձանքներէ: Այսպէս տարի մի ապրելով թագաւորն՝ մեռաւ. և թաղուեցաւ ի վանս Ս. Գէորգայ յ'Ինանտաք (յարուարձանս Գահիրէի) ի պատրիարքութեան Կիւրդի ԿԶ պատրիարքի. գերեզմանն եկեղեցոյ պարսպին մեջ է, մօտ ի դռուն եկեղեցոյն, մտնողին աջակողմը: ...Եւ կոչուեցաւ Սուրբ թագաւոր»:³⁰

Բայց Բաղդ էլ Ջամալիի հիմնական նեցուկը Եգիպտոսի շարունակաբար ստվարացող հայ բնակչությունն էր: Թեև Գրիգոր Պահլավունի Վկայասեր կաթողիկոսը Եգիպտոս մնալու համաձայնություն չտվեց, բայց իր հայրենիքից փախչող հայության թիվը շարունակ ավելանում էր Նեղոսի հյուրընկալ ափերին: Աբու Սալիհի հաղորդած տեղեկությունները վերաբե-

29 Նույն տեղում, էջ 13:

* Վեզիրը:

30 Նույն տեղում, էջ 39-40:

27 Ղեւոնդ Ալիշան, Աբուսահլ հայ. պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի, Վենետիկ-ի Սուրբ Ղազար, 1895:

28 Նույն տեղում, էջ 42:

րում են միայն վանքերին ու եկեղեցիներին: Իսկ դրանց առատությունը և հարստությունը վկայում է հայերի շարունակաբար ստվարացող թիվը: Ըստ նրա հաղորդումների՝ հայկական վանքերը չէին խորշում տնտեսական գործունեությունից, նրանք ունեին ձիթհանք, աղորիք, բրուտարան, ինչպես նաև ճոխ պարտեզներ:

Թուրա թաղամասի վանքը, որ հայտնի էր Բրուտի վանք անունով, թեև նվիրված էր ինչ-որ ոչ հայկական սրբի, գտնվում էր «Տուրային վիճակին մեջ, (Նեղոս) գետոյն (այ) եզերքը (Այգեստանէն հագիւ երկու մղոն հեռի, ի հարաւակողմն): Եկեղեցին փոքր էր քանի որ յակոբիկ Ղփտեաց ձեռքն էր. բայց երբ Գրիգոր պատրիարքն (կաթողիկոսն) Հայոց եկաւ յԵգիպտոս, և Հայք (իրենց ազգակից վեզիր) Ամիր ալ-ճիյիշ Պապրի չորս կողմ ժողովեցան, Յակոբկաց Անպա (Հայր) Կիրեղ պատրիարքի ատեն, և Տուրայի վիճակն տրուեցաւ Հայոց, ասոնք առին զեկեղեցին և փլուցին, և անոր տեղ մեծ ընդարձակ եկեղեցի մի շինեցին՝ շատ գմբեթներով, և կոչեցին յանուն Ս. Գեորգայ. վրան այլ աշտարակ մի կանգնեցին (իրը զանգակատուն), որոյ դուռն եկեղեցոյն միջէն էր. եկեղեցոյն չորս դին այլ պատ քաշեցին. այն շրջապատին մեջ կար աղբիւր մի և ջրաղացք մի եւս: Եկեղեցոյն չորս կողմն այլ կար տեղ նարնջենի ծառոց և երկու *յուվայրէ*, որ են պտղատու արմատենիք, և ուրիշ ծառեր: Երբոր Հայոց վրայ փորձանքներ եկան, – վերջացնում է Աբու Սալիհը, – եկեղեցին նորէն դարձաւ Յակոբկաց (այսինքն՝ ղպտիական – Հ.Թ.):»³¹

«Շինարա(ր) վիճակին մեջ, – հաղորդում է Աբու Սալիհը, – Հայոց քրիստոնէից գաղթական մի հաստատուած էր, որք եօթն եկեղեցի ունէին, շատ բարեկարգ, քահանաներով և միաբաններով. եկեղեցեաց մէկն էր յանուն Տիրուհոյ անարատ Կուսին Մարիամու. մէկն յանուն փառաւորեալ Միքայէլ (հրեշտակապետի), միւս՝ երկու եկեղեցիք Ս. Մաքսիմոս (?), երկու եկեղեցիք յանուն Գաբրիէլ հրեշտակի, եկեղեցի մի Բաստիդար (?) կոչուած, եկեղեցի մ'այլ յանուն փառաւոր վկային Գեորգեայ»:»³²

«Երբ և ոչ մէկ գլխաւոր Հայու մի թողուցին մնալ յԵգիպտոս, – գրում է Աբու Սալիհը, – Ղպտիք ստացան այս (Այգեստանի և Չուիրեայի մեջ եղած – Հ.Թ.) այս ընդարձակ և հին եկեղեցին... Յետոյ Հայոց (համբարապետն կամ պաշտպանն) Վահրամ Սայիտ ատ-տաւլա նորոգեց այս իրաց յարմարութիւնը (հայերու իրավունքները)»:»³³

31 Լույն տեղում, էջ 36-37:

32 Լույն տեղում, էջ 55:

33 Լույն տեղում, էջ 29-30:

Հայերն ապրում էին ոչ միայն մեծ քաղաքներում՝ Ալեքսանդրիայում, Գահիրեում, Սայիդում, որի դռներից մեկը կոչվում էր Հայկական դուռ («Բար էլ Երմանի»), այլև գյուղաքաղաքներում:

Մի փոքրիկ քաղաքում, որ կոչվում էր Խուսուս, ղպտիներն ունեին մեկ եկեղեցի, իսկ հայերն ունեին մեկ վանք և երկու եկեղեցի և երկու եկեղեցի էլ քաղաքից դուրս:³⁴

Հայերն ապրում էին ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում: Ջիզէ գավառի Չաիէ վիճակի Մեյդում կամ Սաֆդ Մայդուն կոչվող գյուղում երեք սեղան ունեցող մի ընդհանուր եկեղեցի կար. «...մէջտեղին՝ Ղփտեաց է, յանուն քաջ նահատակին Թեոդորոսի, երկրորդն՝ Հայոցն է, յանուն փառաւորեալ վկային Ս. Գեորգայ, երրորդն նուիրեալ Տիրուհոյ Կուսին Մարիամու՝ Մելքիտաց՝ է»:»³⁵

Այս վկայությունները հնարավորություն են տալիս մոտավոր ճշտությամբ որոշելու եգիպտահայության թիվը XII դարի երկրորդ կեսում, երբ մեծ աղետի ենթարկվեց այդ գաղութը:

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի այցելության ժամանակ, այսինքն Բաղրի վեզիրության մոտավորապես տասներորդ տարում, երբ հայկական ուրույն կաթողիկոսություն հիմնվեց Եգիպտոսում, թե՛ արաբ և թե՛ հայ պատմագրության (Մատթեոս Ուռհայեցի) վկայությամբ, Եգիպտոսում կար շուրջ 30 հազար հայություն: Այդ թիվը շարունակաբար աճում էր: Պահլավունիներն իրենց հետ բերեցին շուրջ 20 հազար զորք ու մարդ: Շահնշահը, շարունակելով հոր քաղաքականությունը, հովանավորում էր հայերին, ուստի նրա օրոք ևս պիտի ավելանար եգիպտահայության թիվը: Վահրամ Պահլավունու երկրորդ հաղթանակից հետո հիմնված հայկական զորքի թիվը հաշվվում է մոտ 7 հազար, որոնք հավաքագրվում էին Հայաստանում՝ Պահլավունիների այլ զարմերի ձեռքին մնացած կիսանկախ Սասունից: Աղքատիկ Սասունից զորքի հետ միասին Եգիպտոս էին գնում նաև արհեստավորներ (ջուլիակներ): Գումարելով նաև ինչպես բնական աճը, այնպես էլ անհատական կարգով շարունակվող գաղթը, հաստատ կարող ենք ասել, որ XII դարի կեսերին եգիպտահայության թիվը կլիներ շուրջ 100 հազար:

34 Լույն տեղում, էջ 54:

* Այժմ արդեն լիով արաբախոս, բայց հունադավան հին ժողովուրդ, որի մնացորդները, թվով մի քանի տասնյակ հազար, ապրում են Միջերկրական ծովի արևելյան ափին:

35 Լույն տեղում, էջ 52:

Եզիպտոսի հայկական պատրիարքությունը, որ Մուսթանսիր խալիֆին ընդառաջելու կարգով հիմնվեց կաթողիկոսություն անունով, տևել է 88 տարի (1034-1172 թթ.) և ունեցել է երեք հովվապետ.

Գրիգոր Պահլավունի կաթողիկոս – 1084-1095 թթ.

Անաստաս պատրիարք – 1095-1140 թթ.

Անանիա պատրիարք – 1140-1172 թթ.

Աբու Սալիհը հաղորդում է մի ուշագրավ մանրամասնություն, որը ցույց է տալիս հայ կղերականության մշակութային բարձր մակարդակը:

«Այս պատրիարքս, – գրում է նա Անանիայի մասին, – նախ եպիսկոպոս էր Իթֆիհի (որ հիմայ Աթֆիհ կոչուի, և փոքր քաղաք մ'է ի հարաւակողմն Գահիրէի, իբր 2800 բնակչօք). յետոյ Ալ-Հաֆիզի խալիֆայութեան ատեն՝ (1130-49) մտածեց պատրիարք ըլլալ, կաշառք տալով: Դաշինք դրաւ ամիրապետին հետ, անոր պատմական գիտութիւններ հաղորդելու. և սա՝ հաճելով՝ թոյլ տալ անոր՝ որ շաբաթն երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի, գայ ի պալատ, էմիրներու և պաշտօնէից հետ, նաև տօնական օրեր, զինքը բարեւելու, և նոր գտած տեղեկութիւնները տալու: Այս կերպով երբ պատրիարքն այցելության գար ի Զմրխտեայ պալատն, կու հաղորդէր ինչ որ գտեր էր ի կենսագրութիւնս, ի պատմութիւնս պատերազմաց, ի ժամանակագրութիւնս և ի տարեգիրս առաջին տիրապետաց. և այս կերպով գրուցակից կ'ըլլար Ալ-Հաֆիզի հետ, ինչուան ասոր մահը, որ հանդիպեցաւ երկրորդ Ճումահա ամսոյն 544 տարւոյ» (հիճր. որ է Փրկչին 1149):³⁶

Հայկական պատրիարքարանը Եզիպտոսում փակվեց 1172 թվականին, երբ Սալահեդդինը ոչնչացրել էր Ֆաթիմյանների դինաստիան և հաստատել էր Էյուբյան դինաստիան՝ իր Յուսուֆ համեստ անվան փոխարեն իրեն անվանելով Մելիք էն Նասիր Սալահեդդին: Արտաքսված հայ «պատրիարքն, – գրում է Աբու Սալիհը, – իրեն փոխանորդ քահանայ մի թողուց ի Գահիրէ, անոր որդւոյն հետ, որ ժամասացութիւն և պատարագ կատարեն ըստ պատշաճ ժամանակի, Յովհ. Մկրտիչի եկեղեցւոյն մէջ, որ ի Հարա Զաիլա՝ անարատ Տիրամօր մատրան (եկեղեցւոյ) վրայ շինուած է, ինչպէս առաջ ըսինք. այս եկեղեցւոյ մէջ ժողովէին ընկերութիւն մի Հայոց՝ արանց և կանանց: Իսկ ասոնց ունեցած վանքն եկեղեցիներով մէկտեղ՝ ամայի թողուեցան, և դռներն այլ փակուեցան: – Երբ լուր եղաւ, որ պատրիարքն յերուսաղէմ եկաւ հասաւ անվտանգ, բոլոր քրիստոնեայք ընդ առաջ գնացին իրեն ուրախութեամբ և խնդութեամբ, հանդերձ սաղմոսերգութեամբ, և առ-

36 Նույն տեղում, էջ 21-22:

ջննէն խաչեր և վառած ջահեր տանելով և բուրվառներով խնկելով: – Ասկէ վերջը պատրիարքն հանգիստ ապրեցաւ քիչ մ'ատեն, և ապա հանգեաւ ի շնորհս Աստուծոյ, որ գովեալ ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ համեմատի դեկտ. 27 - յանու. 25), ի նոյն վերոյիշեալ տարին, և թաղուեցաւ ի վանս Ս. Յակովբայ Զերեդեան յերուսաղէմ: – Սա ազնուաբարոյ անձ մի էր, գեղեցիկ տեսքով, վայելուչ հասակաւ. երեսն մօրուօք և մոռուօք պատած, որ ալետրած էին, և տարուօքն այլ իբրեւ ութսունամեայ էր»:³⁷

Այդ դարաշրջանի արաբներն գրող ամենանշանավոր բանաստեղծի՝ Թալայի Բին Ռուզբիկի (որն, ի դեպ, նաև միահեծան մեծ վեզիր եղավ 1154-1164 թթ.) բաղադրյալ երկար անունը վերջանում էր «Էլ Էրմենի» (հայ) մականունով: Հայերն այդ շրջանում Եզիպտոսում տվել են արաբներն գրող կրոնական խոշոր գործիչներ, ինչպես Սադամանթին, որի մեկնությունները թարգմանվել են հաբեշերեն, տվել են այնպիսի պատմաբան, ինչպիսին հենց ինքը՝ Աբու Սալիհն է: Հավանաբար, Եզիպտոսում և այդ ժամանակաշրջանում է հորինվել Ազաթանգեղոսի պատմության արաբներեն տարբերակը, որն այնքան հետաքրքրություն առաջ բերեց հայագետների շրջանում:

Արաբ պատմագիր Շիհաբեդդին Գալզաշանտին (XV դ.) խոսելով Պահլավունիների մասին, բերում է վեց փաստաթուղթ, որոնք Հաֆիզի պաշտոնական գրություններն են: Այդ փաստաթղթերից երկուսն է, որ Պահլավունիների զարմերը 1137 թ. պարտությունից հետո ցանկացել են մեկնել Եզիպտոսից և այդ առիթով դիմել են խալիֆ Հաֆիզին: Դժբախտաբար, Շիհաբեդդին Գալզաշանտին չի բերում Պահլավունիների զարմերի նամակները: Սակայն նրա բերած Հաֆիզի պատասխան գրությունները և Իտալիա ուղարկած պատճառաբանությունները մեծ լույս են սփռում ինչպես այդ անցքերի, այնպես էլ Պահլավունիների ու նախորդ հայ վեզիրների՝ Եզիպտոսում խաղացած հույժ կարևոր դերի վրա: Ինչպես վկայում են արաբ հին պատմագիրները, երբ Բադր էլ Ջամիլին սկսում է իր արշավանքը Գահիրէի վրա, ապա նա *փոխառություն* է կնքում եզիպտական մյուս քաղաքների վաճառականների հետ, իսկ մի այլ մեծահարուստ արմտիք է տալիս նրա բանակին: Արդ, երբ Պահլավունիներն ընկնում են 1137 թվականին, ապա, ինչպես երևում է, իտալական քաղաքները բողոքում են, և Էլ Հաֆիզը հարկադրված է լինում այդ առթիվ բացատրություն տալու նրանց: Բանն այն է, որ Եզիպտոսը դարեր շարունակ հունա-հռոմեական աշխարհի շտեմարանն էր եղել և հացահատիկ ու այլ գյուղատնտեսական մթերք-

37 Նույն տեղում, էջ 25-26:

ներ էր մատակարարել Իտալիային: Մաքրակրոն բեդուինների հաճախակի գրոհները եզիպտական արագորեն հարստացող քաղաքների վրա, ինչպես նաև խայտաբղետ վարձկան զորքերի գորապետների կամայականությունները, երբ «կացութիւնը խանգարուեցաւ քաղաքներու մէջ», երբ վեզիրների «հրամանն ու արգիլումը չէին գործադրուիր», երբ «վերջապէս, ցամաքային ու ծովային ճամփաները ծանր պահպանութիւններով միայն անցանելի դարձան» (Մաքրիզի), անհնարին էին դարձնում արտաքին առևտուրը: Նույն Մաքրիզին Բադր էլ Ջամալիի մասին, ինչպես տեսանք, պարզ ու որոշակի ասում է՝ «նոյնպէս իր մեծ արդարասիրութեան հետեւանքով Մըսր վերադարձան վաճառականներ, որոնք հեռացած էին սովի օրերուն»:

Ուրեմն հայ վեզիրները կարգ հաստատելով ապահովում էին անխափան առևտուրը Սիցիլիայի և Հարավային Իտալիայի քաղաքների հետ: Այստեղ անհրաժեշտ է հիշեցնել, որ XI դարում արդեն շոշափելի թվով հայեր կային Իտալիայում: Գրիգոր Վկայասեր Պահլավունի կաթողիկոսը Եզիպտոս էր ժամանել Հռոմից, որտեղ, ըստ Ծնորհալու վկայության, «Ազգն հայոց բազում իջեալ» էր:³⁸ Անկախ այն հանգամանքից, թե Իտալիա «իջեալ» հայերը մասնակցում էին արդյոք Եզիպտոս-Իտալիա առևտրին, թե ոչ, իտալական քաղաքները և Սիցիլիան շահագրգռված էին, որ Եզիպտոսում լինել արտաքին առևտուրը հովանավորող կառավարություն, այնպիսի տարրեր իշխեն այնտեղ, որ ապահովություն ստեղծվեր առևտրական հարաբերություններն անխափան զարգացնելու համար:

Ահա Շիհաբեդդին Գալգաշանտիի բերած չորրորդ փաստաթուղթը, որ Եզիպտոսի Ֆաթիմյան Հաֆիզ խալիֆի նամակն է Սիցիլիա՝ կղզու և Հարավային Իտալիայի քաղաքների թագավորին:

«Դ. ՊԱՇՏՕՆԱԳԻՐ

«Աստուծոյ ծառայ ու սիրելի եւ հաւատացեալներու հրամանատար Ապտէլ Մէհիտ Ապուլ Մէմուն էլ Հաֆիզ Լիտինիլահ Իմամին (խալիֆային) կողմէ:

Առ արքան Սիկիլիոյ կղզոյն, Անքորիայի, Անթալիայի, Քըլլավրիայի (Քալապը), Մէթերոյի, Մուլֆի եւ յարակից երկիրներուն...

...Իմացած եւ Պէհրամի [Վահրամի] պարագան եւ անոր իբր թափառական եւ հալածական ժամանումը Ֆաթիմեան պետութեան մէջ. (Աս-

38 Վիպասանութիւն նախնի ըստ Զոմերի սկսեալ ի վերուստ. – Տն. Ներսեսի Ծնորհալոյ Դայոց կաթողիկոսի Բանք չափաւ, էջ 594:

* Սիցիլիան նորմանների օգնությամբ 1061 թ. թողափել էր սարակինոսների մուսուլմանական լուծը, իսկ 1130 թվականից ուներ Նեապոլի հետ միացած քրիստոնեական թագավորություն: Զաֆիզի նամակը գրվել է 1137 թ. հետո և 1140 թ. առաջ, ուրեմն այն ժամանակ, երբ Սիցիլիան ու Նեապոլն արդեն միացած էին քրիստոնեական թագավորությամբ:

տուած յաւերժացել այս պետութեան իշխանութիւնը): Իր հայրենիքը արտաքսած եւ իր երկիրը դուրս նետած էր զինքը, երբ ոչ դրամ ուներ եւ ոչ կարողութիւն, ոչ ազգական եւ ոչ ալ մարդ: Պետութիւնը ամենալաւ ընդունելութիւնը ըրավ իրեն եւ խնդրուածը գերազանցող չափու մը հասցուց անոր հանդէպ երախտագործութիւնը: Ան (պետութիւնը) ողողեց զինք այնպիսի շնորհներով, զորս խնդրելու անգոր կը մնայ ամէն ակնկալութիւն եւ իր բարիքներով թոյլ տուաւ, որ ան ակնարկ պտտցնէ ձիաորներու եւ գերիներու մէջտեղ: Իր գործերը ամէն օր կաճէին ու կը բարգաւաճէին եւ իր կարողութիւնները ցանկացուածը և ուզուածը կը գլէին կանցնէին, *մինչեւ որ տեղի ունեցաւ դժբախտութիւն մը, երբ վարչական տնօրինութեան պահանջին տակ* այդ պահուն իրեն յանձնուեցաւ վեզիրութիւնը եւ իրեն տրուեցաւ վարչական սանձը: Այն ատեն անպատկառութեան կողմէ պաճուճուած ու զարդարուած եւ սատանայի կողմէ յորինուած եւ գեղեցկացուած խորհուրդ մը յղացաւ: Ան ցոյց տուաւ բան մը, որու նշանները երեսն ելան եւ ապացոյցներն ու հետքերը պարզուեցան: Իր կողմէ (ղրկուած) գաղտնի թղթակցութիւններով եւ յայտնաբերուած հայերէն գիրերով ան կանչել տուաւ իր ընտանիքն ու ազգականները, իր ազգակիցներն ու ցեղակիցները: Ասոնք կուգային հետզհետէ, մինչեւ որ ձիաոր եւ հետեւակ 20 հազար հոգի հաւաքուեցան, մէջն ըլլալով իր երկու եղբորորդիները եւ իր գերդաստանէն ուրիշներ: Ասոնք մոլորեցուցին զինքը, իրեն հանդէպ խորշանք եւ ատելութիւն առթող արարքի մղեցին եւ դէպի կացութեան խանգարում եւ գործերու խառնակութիւն առաջնորդող ձեռնարկներու մէջ քաջալերեցին զինքը: Ուստի յաղթական զինուորները անոր յոռի վարչութեան դէմ զայրացան եւ իրենց օրէնքին ու սովորութեան այլափոխումին առջեւ մերժեցին համբերել» (փաստաթուղթը բերված է Գ. Մըսրլյանի թարգմանությամբ):³⁹

Գալգաշանտին Սիցիլիայի թագավորի գրությունը նույնպես չի բերել, սակայն Հաֆիզի այս պատասխանից պարզ է, որ առևտրական հարաբերությունների խաթարումը կամ թե խաթարման սպառնալիքն է Սիցիլիայի թագավորին մղել հետաքրքրվելու Պահլավունիների ճակատագրով:

Պահլավունիների դերի սրանից ավելի պերճախոս արժևորում չէր կարող լինել: Սակայն Շիհաբեդդին Գալգաշանտիի բերած երրորդ փաստաթուղթը վկայում է, որ ինքը՝ Հաֆիզ խալիֆան էլ, չնայած վերոհիշյալ ամբողջ մեղադրանքին, որ շարունակում է Վահրամի հասցեին, չէր ուզում զրկվել Պահլավունիներից: Վալախշիի հաղթանակով ստեղծված անբարենպաստ

39 Գրորգ Մըսրլեան, նշվ. աշխ., էջ 81-82:

իրադրության հետևանքով Պահլավունիների մարդիկ ուզում են հեռանալ Եգիպտոսից, սակայն Հաֆիզն ամեն ջանք գործադրում է, որ նրանց համոզի հրաժարվել իրենց մտադրությունից:

Ահա Հաֆիզ խալիֆի նամակը Պահլավունիներին. «Առ Վասիլ (Պասիլ)⁴⁰ ու Շահան (Չարգա)⁴¹ եւ անոնց քեռորդի Պէիրամ [Վահրամ]⁴², առ անոնց զարմերն ու ազգականները, անոնց հոգածութեան ենթակայ ստորադաս անձերն ու հետևորդները:⁴³

... Դուք կատարեալ յարգանքով եւ մասնայատուկ, այլ ոչ սովորական հոգածութեամբ պարուրուեցաք եւ առատ բաժին ունեցաք ձեզի ի նպաստ կապուած թոշակներէն եւ յատկացուած աւատներէն: Այսուհանդերձ փափաք կը յայտնէիք ձեր երկիրը հետ երթալու...»: Կարող եք գնալ, ասում է Հաֆիզը, ձեր գործն է, բայց լավ կանեք, որ չգնաք, որովհետեւ «Հարստահարութեան երկիւղ պիտի չունենաք, – շարունակում է Հաֆիզն իր նամակում, – չարականութիւն պիտի չգործուի ձեզի դէմ, ոչ այլ ձեր կանոններէն մէկը պիտի այլափոխուի կամ սովորոյթներէն մէկը պիտի ջնջուի: Դուք պիտի շարունակէք ըստ սովորականին պահել ձեր թոշակներն ու աւատները, որոնց վերաբերմամբ զեղչ եւ զրկանք պիտի չըլլայ ձեզի: Այսպէս պիտի ըլլայ, եթե փափաքիք բնակիլ պետութեան հովանիին տակ: Իսկ եթէ գերընտիր համարէք ծովի բացման պահուն ձեր երկիրը վերադառնալ, ինչպէս որ փափաք կը յայտնէիք, այդ պարագային ներկայ ապահովութիւնը (ի զօրոյ) պիտի ըլլայ ձեզի, մինչեւ որ երթաք յարգանքով պարփակուած եւ հոգածութեամբ ուշադրուած»:⁴⁴

Մեր ձեռքի տակ փաստական նյութ չկա, որ կարողանանք ասել, թե Պահլավունիների կարճատև բացակայությունը որքան բացասաբար է անդրադարձել Եգիպտոսի արտաքին առևտրի վրա, սակայն պարզ է, որ Հաֆիզ խալիֆը Պահլավունիների սիրուն աչքերի համար չէր, որ նրանց այսքան հոգատար վերաբերմունք էր ցույց տալիս անգամ նրանց պարտության ժամանակահատվածում: Արաբ պատմագիրներից ոմանք պարտված Վահրամ Պահլավունուն տանում են իր հայրենիքը՝ Հոռմկլա, ոմանք էլ՝

40 Վասիլ՝ Մեծ վեզիր Վահրամի և Գուսի նահանգապետ Վասակի Ապիրատ եղբորորդին, Գրիգորիս Դ. և Ներսես Շնորհալի կաթողիկոսների եղբայրը, Գրիգոր Դ Տղա մականվանյալ կաթողիկոսի հայրը:

41 Շահան՝ նույն Վահրամի և Վասակի Ապիրատ եղբորորդին, որի գծով շարունակվեց Ապիրատ-Պահլավունիների տունը:

42 Վահրամ՝ վերոհիշյալ Ապիրատի թոռը՝ Մարիամ դստեր գծով:

43 Տառացիորեն՝ անոնց չվան բռնողները:

44 Շիրաբերդին Գալգաշանտի, Սոքի էլ Աաշա, հ. ԺԳ, էջ 326: Զաղվածքը բերված է Գ. Մըսրյանի թարգմանությունից: Տե՛ս Գէորգ Մըսրյան, նշվ. աշխ., էջ 79-80:

Հարավային Եգիպտոս՝ քրիստոնեական Նուբիային սահմանակից հայկական Ճերմակ վանքը: Բայց բոլորն էլ նրան անարյուն, առանց կռվի հետ են բերում Գահիրե և երկրորդ անգամ կարգում են ոչ թե վեզիր, այլ խալիֆի գլխավոր խորհրդական, այսինքն՝ վեզիրից ավելի բարձր: Բայց այն ազդեցիկ դիրքը, որ Վահրամ Պահլավունին վերստին ապահովում է իր համար, ինչպես նաև Ռյուդվան Վալախշիի պատժվելը, վկայում են, որ Վահրամ Պահլավունին հաղթանակով է վերադարձել, իսկ հաղթանակն առանց ուժի գործադրման և արյան չէր լինում:

Վերադարձից հետո Վահրամ Պահլավունին, ինչպես տեսանք, կարողանում է վերականգնել եգիպտահայության իրավունքները: Ավելին, նա նորից կազմակերպում է հայկական ուրույն և մնայուն զորք, որը ռոճիկ (աշխատավարձ) էր ստանում պետությունից:

Շերունագարդ Պահլավունին վախճանվում է հաղթության առաջին իսկ տարում: Նրա փառավոր թաղման նկարագրությունը, որ Գ. Մըսրյանը քաղվածաբար բերում է Հասան Իբն Հասանի «Էլ Ֆաթըմիունէ Ֆի Մըսր» գրքից, ինքնին մի պերճախոս ապացույց է Պահլավունու գրաված շատ բարձր դիրքի և պետության համար ունեցած հույժ կարևորության: «Պէիրամի և Բուտվանի միջեւ ծագած երկարատեւ վեճը վերջ գտաւ Հիճ. 535 (Ք. 1140) թուականին, երբ Պէիրամի կեանքն ալ վերջացաւ: Իսկ Միսլէսէր կը պատմէ մեզի, թէ Բէիրամ պալատին մէջ ապրեցաւ խալիֆային հետ, որ անոր խորհուրդը կառնէր պետական գործերու մասին առանց սակայն *խիլա* (շքազգեստ) շնորհելու անոր և կամ պաշտօնական գործի մը վարիչ կարգելու զայն:

Մեր նկարագրած կացութիւնը տեւեց մինչեւ որ Պէիրամ մեռաւ Հիճ. 535 (Ք. 1140) թուականին, 24 Բապի էս Սանի: Այս առթիւ սաստիկ ցաւ զգալով՝ խալիֆան հրամայեց, որ պաշտօնատուները գոցուին երեք օր: Ապա կանչել տուաւ հայոց պատրիարքը և յուղարկաւորութեան պատրաստութիւններ տեսաւ: Կէս օրուան աղօթածամբ հասած էր, երբ պալատէն դուրս հանուեցաւ նկարագել մետաքսով (տիպահ լիպակ) զարդարուն դագաղը, որ շրջապատուած էր բուրվառակիր քրիստոնեաներով: Յուղարկաւոր եղան Շէրիֆներ (մարգարէէն սերած ազնուականներ) և այլ բարձրաստիճան անձնատրութիւններ հետիոտն: Ջորի հեծած՝ մեռելական թափորին հետեւեցաւ նաև Հաֆիզ խալիֆան, որ կը կրէր կանաչ փաթոց և կանաչ զգեստ: Բազմութիւնը շարունակեց իր գնացքը և քահանաներ Աւետարանական երգեր երգեցին, մինչեւ որ հասան *Տէր էլ Խանյուս* (Խրամատի Վանք), ուր վար իջաւ խալիֆան, նստաւ գերեզմանին եզերքը և սաստիկ լացաւ»:⁴⁵

45 Նույն տեղում, էջ 73-74:

Վահրամ Պահլավունու՝ որպես մեծ վեզիր կամ որպես Հաֆիզ խալիֆի գլխավոր խորհրդական, հիմնած հայկական հատուկ զորքը, որը պետությունից ռոճիկ (աշխատավարձ) էր ստանում և մտնում էր պետական ընդհանուր զորքի մեջ ու գտնվում էր մայրաքաղաքում և ոչ թե կապված էր որևէ ֆեոդալական տան հետ, իր գոյությունը պահպանեց անգամ Սալահեդդինի՝ Եգիպտոս մտնելուց հետո էլ։ Հայկական զորքը վերացվեց միայն այն ժամանակ, երբ Սալահեդդինը վերջին Ֆաթիմյանի՝ Ադիդի մահվանից հետո պետական հեղաշրջում կատարեց և հիմնեց իր Էյուբյան դինաստիան (1172 թ.)՝ ուրեմն 32 տարի շարունակ։

«Էսաա Պին Մեմաթիի ձեռագրին մեջ կարդացի, – գրում է Մաքրիզին, – թե Ռուզբիք Պին Սալիհ Թալայը՝ (վերջին հայ վեզիր) օրով Ֆաթիմիներու իշխանության անկման շրջանին եգիպտական բանակի թիւն էր 40 հազար ձիաւոր և 36 հազար հետեւակ։ Ուրիշ մը այս թիւին վրայ կաւելցնէ 10 հազար ռազմիկ պարունակող 10 ցոկանաւեր։ Երբոր վերոյիշեալ իշխանութիւնը անհետացաւ Սուլթան Սալահէտտինի ձեռքով, այս վերջինը հեռացուց սեւամորթ զերիներէ, եգիպտացի էմիրներէ, պէտվիներէ, հայերէ և ուրիշ տարրերէ բաղկացած եգիպտական բանակը և նոր զօրաբանակ մը կազմեց մասնաւորաբար քուրդերէ և թուրքերէ, և Եգիպտոսի մէջ անոր զինուորներուն թիւը հասաւ 12 հազար ձիաւորի միայն»։⁴⁶

Նեղոս գետի հարուստ հովտում կարգը պահպանելու և միջազգային առևտրի համար նորմալ պայմաններ ապահովելու նպատակով Պահլավունիների ստեղծած հայկական զորքը շարունակական համալրման կարիք ուներ։ Ի դեպ, Մատթեոս Ուտայեցին, ինչպես տեսանք, խոսելով Եգիպտոսում հայոց կաթողիկոսություն հիմնելու անհրաժեշտության մասին, բերում է Եգիպտոսի ոչ թե հայ բնակչության, այլ հայ զորքի թիվը («Եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»)։ Ուրեմն Բանդին էլ իշխանությունը գրավելուց հետո նոր հայկական զորք էր հավաքագրել։ Առկախ թողնելով այս հարցի պատասխանը՝ չենք կարող չարձանագրել, որ 1140 թվականին հավաքագրված հայկական զորքը չէր կարող 1172 թվականին՝ 32 տարի հետո, արաբ ու նուբիական զորքի հետ միասին օրինականության պաշտպան կանգնել Նեղոսի հովիտը հասած քրդերի և դուզի թուրքերի դեմ։ Այն կարիք ուներ շարունակական համալրման։ Միջին դարերում մարդկության նվաճման դժվարին պայմաններում արաբները (թե՛ Օմայանները և թե՛ Աբբասյանները) սովորություն էին դարձրել օգտագործելու նվաճված ժողո-

46 Շիհաբեդդին Գալաշանտի, Սոքի էլ Աաշա, հ. ԺԳ, էջ 81։ Զաղվածքը բերված է Գ. Աբսուլանի թարգմանությունից։ Տե՛ս Գէորգ Աբսուլան, Նշվ. աշխ., էջ 109-110։

վուրդների զինվորական ուժերը։ Թե՛ Օմայաններից և թե՛ Աբբասյաններից ռոճիկ (աշխատավարձ) ստացող հայկական զորք էր պահվում անգամ Հալապտանում։ Ավելին, արաբները չէին ոչնչացնում նույնիսկ ապստամբած գավառների զինվորական ուժերը։ Սասունի ապստամբությունը ճնշելուց հետո նրանք Բաղդադ տարան խութեցի Հովսանին և մյուս ղեկավարներին, որտեղ կրոնափոխություն պահանջեցին նրանցից և սպանեցին միայն կրոնափոխ չեղածներին, իսկ նրանց զորքը տարան Թիֆլիս և դարձրին տեղական արաբ Էմիրի բերդապահներ։ Խութեցիները սովոր էին բերդապահ վարձվելու։ Վասպուրականի մանր նախարարներն ու ազատներն ինքնակամ զինվորական ծառայության էին մտնում Սիրիայի մահմեդական էմիրների մոտ։ Բացառված չէ, որ Հարավային Հայաստանը կարող էր զորական համալրում տալ Եգիպտոսին, մանավանդ որ եգիպտահայության բարգավաճման համար նպաստավոր միջավայր էր ստեղծվել այնտեղ։

Ուսամա Իբն Մունքիզին, որի՝ Եգիպտոսում, Ֆաթիմյանների մոտ, անցկացրած տասը տարիները (1144-1154) զուգադիպում են Գահիրեում կենտրոնական կառավարության անմիջական տրամադրության տակ գտնվող հայկական զորքի գոյության (1140-1172) ժամանակաշրջանին, Եգիպտոսի զինված ուժերի մասին խոսելիս տալիս է նրանց էմիրների անունները՝ այսինչ էմիրի զորքը կամ մարդիկ։ Սակայն նա տեղ-տեղ հիշատակում է նաև «Մարա զորք»՝ առանց էմիրի անունը տալու։ Այսպես, 1154 թվականի պալատական դավերի ու սպանությունների ժամանակ, երբ վերջիվերջո դրության տեր և մեծ վեզիր դարձավ Թալայր բին Ռուզիկ էլ Էրմենին, քաջ ու խիզախ զինվորականի համբավ ունեցող Մունքիզին բարվոք է համարում թաքստոցից դուրս չգալ և իրադարձությունների ընթացքի մասին տեղեկություններ ստանալ մի հայի միջոցով։ Ահա թե ինչ է գրում նա. «Պալատում ավելի քան հազար մարդ կար *Սարա զորքից*, և հանկարծ, մեզ համար միանգամայն անսպասելի, մարդկանց մի մեծ խումբ դուրս եկավ դահլիճից, և լսվեց մեկ մարդու դեմ ուղղված սուրերի շայուն։ Ես իմ հայ ծառաներից մեկին ասացի. «Տես, թե ո՞ւմ սպանեցին»։ Նա գնաց և վերադառնալով ասաց. «Նրանք մուսուլմաններ չեն»։⁴⁷

Ավելի խաղաղ տարիների մասին, երբ Հաֆիզ խալիֆի մերձավոր անձինք սիրով առյուծի որսի էին գնում, Մունքիզին, նկարագրելով այդպիսի մի առյուծորս, գրում է. «Մեզ հետ կար մոտ քսան աղեղնավոր հայ։ Առյուծը, որը երեք առյուծներից ամենավիթխարին էր, դուրս եկավ որջից։ Նա

47 Усама Ибн Мункыз, Книга назидания, с. 65.

եկավ մեզ վրա, և հայերը նետահարեցին նրան: Ես կանգնել էի հայերի կողքին՝ սպասելով, որ երբ առյուծը հարձակվի հայերի վրա և բռնի նրանցից մեկին, ես նիզակով զարկեմ նրան»:⁴⁸

Սրանք Վահրամ Պաշկապատուն կազմակերպած՝ Եգիպտոսի հայկական զորքի գոյության հարատևության վկայություններ են:

Խաչակրաց արշավանքների դարաշրջանում, երբ արագորեն ընդարձակված Մելջոնյան թագավորությունը նույնքան արագորեն մասնատվել էր ու վերածվել փոքրիկ սուլթանությունների և էմիրությունների, երբ Միջերկրական ծովի արևելյան ափերին կազմվել էին խաչակիրների փոքրիկ թագավորություններ, և Երուսաղեմը գտնվում էր խաչակիրների ձեռքին (1099-1187), մուսուլմանական Մերձավոր Արևելքից քրիստոնեական թագավորություններով անջատված Եգիպտոսում բարենպաստ հող էր ստեղծվել հայկական գերությունների համար: Իհարկե, այդ տիրապետությունն այնպիսին չէր, ինչպիսին Միջերկրականի հանդիպակաց ափին՝ Կիլիկիայում, որտեղ օրըստօրե արագորեն ստվարանում էր հայ բնակչության թիվը՝ Ռուբինյաններին հաջորդող Հերոմյաններին հնարավորություն տալով հենվելու միայն հայերի վրա և վարելու (վերելքի շրջանում) հայկական քաղաքականություն: Եգիպտոսի հայ վեզիրները, իրենց ձեռքում կենտրոնացնելով հանդերձ երկրի քաղաքական, ռազմական ու ֆինանսական ղեկավարությունը, այնուամենայնիվ, ի վիճակի չէին հայկական քաղաքականություն վարելու, որովհետև թվական գերակշռությունը նրանց կողմը չէր: Հենակետի հարցը ծառացած էր ինչպես առաջին շրջանի առերևույթ իսլամ ընդունած վեզիրների, այնպես էլ երկրորդ շրջանի Պաշկապատունի վեզիրի առաջ: Թեև նրանց չհաջողվեց դրականորեն լուծել այդ հարցը և ապահովել իրենց համեմատաբար ավելի երկարատև տիրապետությունը, սակայն Եգիպտահայության վրա հենվող հայ վեզիրները մեծ ծաղկման հասցրին երկրի տնտեսական ու կուլտուրական (մշակութային) կյանքը:

Անդրադառնալով այդ նույն շրջանին՝ Ֆիլիպ Հիթթին գրում է. «Չնայած գիտության և գրականության զարգացման համար ստեղծված *անբարենպաստ* իրադրությանը, Ֆաթիմյանների դարաշրջանը բնորոշվում է արվեստի ու ճարտարապետության առաջնակարգ նշանակություն ունեցող գործերով: Այն բարգավաճումը, որ երկիրը վայելում էր Գահիրեի առաջին երկու խալիֆների և հետագայում *երկու հայազգի վեզիրների օրոք, փարավոնների կամ Ալեքսանդրյան դարաշրջանին վայել մի բարգավաճում էր*, որ արտացոլվեց արվեստի բնագավառում»:⁴⁹

2. ՄԱՐԱ ԷԼ ՄԵԼԻՔ ԷՆ ՆԱՍԻՐ ՍԱԼԱՀԷԴԻՆ

(Յուսուֆ Բին Էյուբ)

Յուսուֆ Սալահեդդինը, որին իսլամի գրեթե բոլոր հին պատմագիրները համարում են բախտի սիրելին, Դվինի քուրդ բերդապահի որդի էր, քրդական Ռավադին ցեղից, որն իր աչքը բաց էր արել ու մեծացել էր բերդերում, բերդապահ զորքի մեջ և մանկուց շարունակ տեսել ու հասկացել էր, թե որքան բախտավոր է լինում այն զորավարը, որին հասարակ զինվորները սիրում էին զինվորական կարգապահության թուլության այդ հեղինելուկ դարերում: Նրա հայրը՝ Էյուբը, սիրային անհաջող արկածից հետո հարկադրված էր եղել հեռանալ Դվինից: Եղբայրը՝ Շիրքուհը, միանում է նրան, և երկու եղբայր միասին գնում են Իրաք, որտեղ նույնպես բերդապահ ծառայության են մտնում Թիքրիթ բերդում: Այստեղ էլ մյուս եղբոր՝ Շիրքուհի հետ է դժբախտություն պատահում, և նա հարկադրված է լինում հեռանալ Իրաքից: Այս անգամ էլ Էյուբն է միանում նրան, և երկու եղբայր միասին փախչում են Սիրիա ու ներկայանում Նուրեդդինին, որին մի անգամ լուրջ ծառայություն էին մատուցել Թիքրիթում՝ միօրյա ապաստան տալով նրան: Նուրեդդինը սիրով է ընդունում երկու եղբայրներին և անմիջապես բարձր պաշտոններ է տալիս նրանց իր բանակում, որը կազմված էր քրդերից և ղուզի թուրքերից:

1164 թվականին Նուրեդդինը, շատ լավ տեսնելով, որ Եգիպտոսում «երկու հայերի (Բադրի և Շահնշահի – Հ.Թ.) կողմից որոշ ժամանակ պահպանվող դինաստիան արագորեն կործանվում է»,⁵⁰ ցանկացավ միջամտել հարուստ, բայց սեփական զորք չունեցող և միայն վարձկան զորքով իր ինքնուրույնությունը պահպանող Եգիպտոսի ներքին գործերին: Նա այնտեղ ուղարկեց Շիրքուհին, որի բանակի հետ, իր կամքին հակառակ, Եգիպտոս ուղարկվեց նրա եղբոր որդին՝ 29-ամյա Յուսուֆը (ծնված

50 А. Мюллер, История ислама с основания до новейших времен. Том II, с. 347.

48 Նույն տեղում, էջ 180:

49 Philip Khuri Hitti. History of the Arabs, p. 630.

1138 թ.): Շիրքուհի եգիպտական արշավանքները կրկնվում են երկու անգամ (1167 և 1168 թթ.): Ֆաթիմյանների մեծ վեզիր Շավարը փախչում է, և Ֆաթիմյանների վերջին խալիֆը՝ Ադդիդը, բարվոք է համարում վեզիրության *խիլան* (շքազգեստը) հագցնել Շիրքուհին: Սակայն Շիրքուհը շուտով մեռնում է (1169 թ.), և Ադդիդը վեզիրության *խիլան* հագցնում է Յուսուֆին, որն այդ պաշտոնի համար բազմաթիվ մրցակիցների մեջ ամենից երիտասարդն էր (31 տարեկան), բայց առասպելական դարձած իր անշահասիրության, համեստ կյանքի և խիզախության համար զորքի կողմից ամենից ավելի սիրվածը: Երբ 1171 թվականին մեռնում է Ֆաթիմյան վերջին խալիֆ Ադդիդը, մեծ վեզիր Յուսուֆը, ընդունված կարգով սուգը պահելուց հետո, որոշում է պետական հեղաշրջում կատարել և դառնալ երկրի բացարձակ տերը: Սակայն Ֆաթիմյանների արաբական, նուբիական և հայկական զորաբանակները միասնական ճակատով հանդես են գալիս ի պաշտպանություն խալիֆայական գահի օրինական ժառանգի: Յուսուֆ բին Էյուբն իր քրդական և դուգի թուրքական զորքով ջախջախում է այդ միացյալ ուժերը և ապահովում է իր հաղթանակը: Մեծ վեզիր Յուսուֆն իրեն հայտարարում է Եգիպտոսի (Մսրի) թագավոր՝ էլ Մելիք էն Նասիր Սալահեդդին (հավատի մաքրության պահապան թագավոր) քաղաքայալ անունով (1172 թ.) և իր հիմնած դինաստիան իր հոր անունով կոչում է *Էյուբյան*:

Երբ Նուբեդդինը Դամասկոսում լսում է իր զորապետներից մեկի որդու այդ սեպարատ քաղաքականությունը Եգիպտոսում, ապա մեծ զորք է հավաքում և պատրաստվում է արշավելու անհնազանդ Յուսուֆի վրա (1173 թ.), բայց մահը շուտով վրա է հասնում և խորտակում նրա ծրագրերը: Ընդհակառակը, հետևյալ՝ 1174 թվականին, զորքի կողմից սիրված Սալահեդդինն է հայտնվում Սիրիայում և հեշտությամբ իրեն ենթարկում Նուբեդդինի բոլոր հողերը՝ ոչնչացնելով ու փախուստի մատնելով նրա ժառանգներին: Եգիպտոսից հետո Անդրհորդանանի, Սիրիայի, Արևմտյան Իրաքի փաստական տերը և Հեջազ-Եմենի նոմինալ (անվանական) տերը դառնալով՝ Սալահեդդինը մնում է Դամասկոսում և այլևս երբեք Եգիպտոս չի գնում: Այնտեղ շարունակում էին իրենց խժոժությունները գործել նրա նշանակած փոխանորդները: Այս հանգամանքը մի պերճախոս ապացույց է, թե Եգիպտոսի համար որքան կործանարար եղավ Էյուբյան դինաստիայի ութսունամյա տիրապետությունը (1172-1250), որովհետև հետագայում էլ այդ դինաստիայի և ոչ մեկ ներկայացուցիչ, իր առաջատարությունն ապահովելուց հետո, այլևս երբեք Եգիպտոսում չէր նստում, այլ այն Օմայանների և

Աբասյանների ժամանակվանից ավանդական դարձած կարգով կառավարում էր փոխանորդների-վեքիլների միջոցով, մինչև որ մամլուքները տեր դարձան երկրին:

Ըստ արաբ հին պատմագիրների վկայության՝ Սալահեդդինը Եգիպտոսի հայկական զորքը ջարդել է Բեյն էլ Գասրեյնի մոտ, այսպես կոչված «Հայոց տան» մեջ, դեպի ուր նահանջել էին նուբիական զորքերը՝ «Հայոց տան» պաշտպանությունը վայելելու համար: Հայկական զորքի ջախջախումը եգիպտահայության աղետի սկիզբն է դառնում: Բարբարոս քրդերը և դուգի թուրքերը, որոնց չէր սանձահարում Սալահեդդինը, ջարդում, կոդոպտում ու ավերում են ամեն ինչ: Կոդոպտվում ու փակվում են հայկական հարուստ եկեղեցիներն ու վանքերը, փակվում է հայոց պատրիարքարանը: Ահաբեկվում է ամբողջ հայ գաղութը: Արաբներն էլ են տուժում հայերի հետ: Կրկնվում է հարյուր տարի առաջվա համար Մաքրիզիի նկարագրած իրադրությունը, երբ իսպառ վերանում են նորմալ կյանքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները, և երկիրը մատնվում է հրոսակախմբերի կամայականությանը: Այդ ընդհանուր ավերածությունն ու անկումը Էյուբյաններին հարկադրեց Սիրիան գերադասել Եգիպտոսից: Սալահեդդինն ինքն անձամբ լավ հասկանում էր, որ իր զորքերն ավերում են երկիրը, որ չի կարելի շարունակել սկսված հայահալած քաղաքականությունը, որն ընդհանուր էր դառնում հայերի արագ հարստացմանը մեկ ամբողջ դար նախանձող ոչ միայն մահմեդականների, այլև քրիստոնյա դպտիկների, մեքիդների կողմից: Հայկական զորքի ջարդից ու կոտորածից մի քանի տարի հետո, երբ Սալահեդդինը Դամասկոսում էր, իր կրտսեր եղբորը կարգադրում է փոխել հայահալած քաղաքականությունը և վերականգնել հայերի իրավունքները Եգիպտոսում, սակայն արդեն, ինչպես ժողովրդական խոսքն է ասում, բանը բանից անցել էր, ծավալվել էր կոտորածից ողջ մնացած հայերի փախուստը դեպի ուրիշ երկրներ: Ռուբինյաններն էլ, որոնք այդ ժամանակ արդեն բավական ուժեղացել էին, մի կողմից, առիթը հարմար համարելով ոչնչացնելու Պաղավունիներին Հռոմկլայում, մյուս կողմից՝ դիմում են Սալահեդդինին ու նրա եղբորը՝ պաշտպան կանգնելու եգիպտահայ գաղութի մնացորդներին:

Եգիպտահայ «գաղութի կրած աղետներին ականատես հայտնի հայ Աբու Սալիհը» Ռուբինյանների մասին հաղորդում է. «Այս ատեններս եկալ ի Հայոց եպիսկոպոս մի, հետն այլ երեք քահանայ, Հայոց թագավորն և պատրիարքն ղրկուած. երկուքն այլ մէկ մէկ պատգամ, և երկու այլ թուղթ

բերելով. որոնց մեկը գրած էր Մելիք Սալահատտին, միսը՝ անոր եղբայրն Մելիք Սայֆատտին Ապուպեքը, առ Մելիք Թաքիատտին, որը պատուիրէին այսոր՝ իրենց թղթերովը, պատուով ընդունիլ գեպիսկոպոսը. և Հայոց երկու եկեղեցիները՝ որ յԱյգեատանն և ի Զուիրի՝ դարձընել տալ անոնց: Եպիսկոպոսն իջաւ յեկեղեցի Ս. Յովհաննու Մկրտչի՝ որ ի Հարա-Չափլա. բայց Ֆաքիհ՝ ատ-Թուսի չհաւանեցաւ այս բանիս. եպիսկոպոսն այլ հակառակելով անոր դէմ՝ ամիսներով կեցաւ հօն, մինչեւ հիւանդանալով մեռաւ, առանց իր նպատակին հասնելու. թաղուեցաւ Հայոց Զուիրի եկեղեցոյն մէջ. Աստուած ողորմի հոգոյն».⁵¹

1185 թվականին գալիս է նաև մի ուրիշ հայ՝ Վահրամ Պահլավունու անձնական գանձը փրկելու համար, որին նույնպես սառն ու թշնամական վերաբերմունք է ցույց տրվում. «Այս ատեն, – գրում է Աբու Սալիհը, – Հայ մի եկաւ, որ կ'ըսէր թէ բարեկամ էր Թաճ ատ-տաւլա (թագ պետութեան մականուննեալ) Վահրամայ Հայոց (Շնորհալոյ հօրեղբօր) որ Ալ-իմամ Հաֆըզ (խալիֆայի) վզրուկն էր. և կ'ըսէր, թէ այս վզրուկին ստակները թաղած էր մեծ եկեղեցոյն մէջ, և հիմայ եկած էր զանոնք հանելու: Բայց իր ըսածին մտադրութիւն չըրին. սակայն ինքն, կ'ըսուի, թէ այնքան պնդեց իր երևակայածը, որ եկեղեցին բացին իրեն, և սկսաւ տեղ-տեղ փորել. յետոյ ըսաւ. Ստակն աներեւոյթ եղեր է այս տեղէս. եկեղեցին կողոպտողներն առած են. և սկսաւ գանգատիլ, թէ անիրաւութիւն մ'եղած է: Եկեղեցին իրեն համար բաց մնաց, և քանի որ այս երեւակայութեան մէջ էր, կեցաւ հօն. և երկրորդ կնիք մ'այլ դրաւ Մելիք ալ-Մուգաֆֆարի (վերոյիշեալ Թաքիատտին) դրածին վրայ: Բայց նոր նորոգութիւն մի չեղաւ հօն: Երբ Թաքիատտին յԱսորիս գնաց, հիճր. 582 Շապան ամսուն (1186 Քր.) և եկաւ Ալ մելիք ապու-Պէքր (Սալահատտինի եղբայրն, իբրեւ խնամակալ անոր որդոյն), հրամայեց՝ որ այդ երկու եկեղեցիները զատեն իրարմէ, նոյն տարին՝ Ռամազանի 10-ին, և Ղփտիք և Հայք տիրացան եկեղեցեաց և սկսան գործածել. յետ տարի մի և 15 օր գոց մնալու: Ղփտիք մեծ եկեղեցոյն մէջ պաշտօն կատարէին, Քուիխաք (կամ Խոյաք ըստ Ղփտեաց) օրինեալ ամսոյ առաջին օր (նոյնմ.-դեկտ.), ամբիժ Մարտիրոսաց 903 թուին (1187 Քր.). և անկէ ետեւ Ղփտիք թող չտուին Հայոց՝ մեծ եկեղեցոյն մէջ պաշտել: Այս բանիս համար ժողովք ըրին գլխաւոր անձինք. և երկու եկեղեցիքն այլ նորէն Հայոց ստացուած եղան».⁵²

51 Ղեւոնդ Ալիշան, Աբուսաիլ հայ, էջ 31:

52 Նոյն տեղում, էջ 33-34:

Այս մասնակի փորձերը, ինչպես երևում է շատ զգույշ Աբու Սալիհի հաղորդումներից, ցավին դարձան չեն անում: Շուրջ հարյուրամյա բարգավաճումից հետո խորտակվում ու անէանում է կուլտուրական (մշակութային) մի բարձր կյանք, որ իրենց հայրենիքից տեղահան արված հայերը կարողացել էին ստեղծել Նեղոսի միառժամանակ համեմատաբար հյուրընկալ ավերին:

Սալահեդդինը, ինչպես արդեն ասացինք, այլևս երբեք Եգիպտոս չվերադարձավ: Նա մնաց Սիրիայում և նվիրվեց իր հողերի ընդարձակման գործին: Նախքան Երուսաղեմի վրա արշավելը և խաչակրաց դեմ վճռական հաղթական ճակատամարտ մղելը, որ տեղի ունեցավ 1187 թվականին, նա ցանկացավ իրեն ենթարկել նաև Իրաքը, որտեղ ապավինել էին Նուբեդդինի (Զանգյանների) ջախջախված ժառանգորդները: Այս նպատակով նա երեք արշավանք գործեց Մոսուլի վրա, որի երիտասարդ տերը համառ դիմադրություն ցույց տվեց նրան:

Մոսուլի երկրորդ պաշարման ժամանակ տեղի է ունենում մի միջադեպ, որը մեծ վնաս է հասցնում Սալահեդդինի հեղինակությանը: Մոսուլի երիտասարդ տիրոջ մայրը, որը մի քանի տարի առաջ Դամասկոսում Սալահեդդինի տիրուհին էր եղել, այլ ազնվական կանանց հետ գնում է Սալահեդդինի բանակը և, ներկայանալով նրան, աղերսում է հետ քաշել իր գորքերը և չկովել իր որդու հետ: Սալահեդդինը մերժում է նրա խնդիրը: Ազնվական կնոջ պաղատանքին ունկն չդնելը մի կողմից վնասում է Մարամեղիք Սալահեդդինի հեղինակությանն իր շրջապատում, իսկ՝ մյուս կողմից՝ ավելի եռանդ է տալիս հակառակորդի կողմնակիցներին, որոնք կատաղի դիմադրություն են ցույց տալիս Մարա մելիքին: Մոսուլի երկրորդ պաշարումն էլ անհաջող է անցնում Սալահեդդինի համար: 1185 թվականին, երբ նա վերջին, երրորդ անգամ պաշարել էր Մոսուլը, լուր է ստանում, որ մեռել է Խլաթում նստող վերջին Շահ-ի-Արմենը՝ Սոկմանների տնից, և դրության տեր դարձած նրա վարձկան գորավար Բեկթեմուրը պատրաստ է երկիրը հանձնել Սալահեդդինին, եթե վերջինս որպես փոխհատուցում մի ուրիշ քաղաքի իշխան կարգի իրեն՝ Բեկթեմուրին: Մոսուլի պաշարումը թողնելով՝ Մարա մելիք Սալահեդդինը արշավում է Խլաթի վրա: Նրա գորքի առջևից ընթանում էին Իրբիլի տէր Մուգաֆարեդդինի և Սալահեդդինի հորեղբոր որդու՝ Շիրքուհի առաջապահ զորքերը, որոնց մեջ էր գտնվում Դիարբեքի Եթթուկյանների էմիր Քութբադդինը: Միաժամանակ հյուսիս-արևելքից Խլաթի վրա էին արշավում Գանձակում ուժեղացած Փեիկիների պարսկական

դինաստիայի հիմնադիր Եղբուզի որդու՝ Շեմսէդդինի գորքերը: Այսպիսով, Շահ-Արմենների երկիրը կոչվախնձոր է դառնում Գանձակից և Դամասկոսից (Սիրիայից) եկած գորքերի միջև: Ճարպիկ Շեմսէդդին Փեհլևին կարողանում է իր աղջկան կնության տալ Բեկթեմուրին և փեսայի հետ միասին այնպիսի անպարտելի ուժ դառնալ, որ Մսրա մելիք Սալահէդդինը հարկադրված է լինում խայտառակված հետ նահանջել:

Բայց լսենք արաբ պատմագրին. «Սալահէտտին մնաց Մուսուլի առջև, մինչեւ որ լուր եկաւ թէ հայերու իշխանը (*շահ էրմէն*) և Խլաթի տէրը՝ Նասիրէտտին Մուհամմէտ Պին Իպրահիմ Պին Սոքման էլ Գոթայի մեռած է և թէ գերին (*մէմլուք*) Պէկթիմուր յաջորդած է անոր:

Տեսնելով որ *հարեան իշխաններ աչք ունին Խլաթի վրայ* և մտադրած են այդ քաղաքին վրայ քալելու, Պէկթիմուր մարդ ղրկելով Սուլթանին ցանկութիւնը գրգռեց Խլաթի վրայ եւ համաձայնեցաւ անոր յանձնելու երկիրը՝ գոհացուցիչ փոխարինութիւնով մը: Շահ Էրմէն մեռած էր նոյն տարին, 9 Բապի էլ Ալսըր, Հինգշաբթի օրը: Այս պատճառով Մուսուլէն հեռանալով՝ Սուլթան Սալահէտտին դէպի Խլաթ ուղղուեցաւ նոյն ամսու 20ին, իրեն առաջապահ ունենալով Իրպիլի տէրը՝ Մուզաֆֆարէտտինը, որ այդ պահուն Հարրանի կ'իշխէր, և Նասիրէտտին Մուհամմէտ Պին Էսէտէտտին Շիրքուիը, որ Սալահէտտինի հօրեղբորորդին էր: Անոնք իջեանեցին Խլաթի մօտ Էթ Թազապա կոչուած գիւղը և Սալահէտտին պատգամաւորներ ղրկեց Պէկթիմուրի՝ համաձայնութեան պայմանները որոշելու համար: Այս պատգամաւորները Պէկթիմուրի քով հասան այն պահուն, երբ Ագրապաճանի, Արրանի և Պարսկական Իրաքի տէրը Շեմսէտտին Բեհլվան Պին Իլտիքիւզ Խլաթի մօտեցած էր քաղաքը պաշարելու նպատակով: Մարդ ղրկելով՝ Պէկթիմուր ազդարարեց անոր, որ եթէ իրմէ չհեռանայ, ինք Սուլթան Սալահէտտինի պիտի յանձնէ երկիրը: Ասոր վրայ Շեմսէտտին հաշտուեցաւ Պէկթիմուրի հետ, իր աղջիկը կնութեան տուաւ անոր և հեռացաւ: Ապա մարդ ղրկելով Սալահէտտինի՝ Պէկթիմուր ետ առաւ Խլաթը յանձնելու մասին տրուած խոստումը»:⁵³

Հայաստանի սահմաններից ամոթահար նահանջելով՝ Սալահէդդինը լուրջ հիվանդանում է: Ապաքինվելուց հետո շտապ հաշտություն է կնքում Մոսուլի տիրոջ հետ և իր արատավորված անունը վերականգնելու նպատակով լծվում է մեծ սխրագործություն կատարելու գործի: Նա սրբազան պատերազմ է հայտարարում խաչակիրների դեմ և օգտվելով նրանց միջև

53 Իպն Խալլիքան, Վեֆայաթ էլ Աաեան, էջ 237:

եղած պառակտումներից ու ազգամիջյան կռիվներից՝ 1187 թվականին գրավում է Երուսաղեմը: Այս հաղթանակից հետո նա շարունակ զբաղվում է Խաչակրաց երրորդ արշավանքը (1189-1193 թթ.) հետ մղելու գործով: Ճարպիկ քաղաքականությամբ կարգավորելով իր գործերը՝ նա երկիրը բաժանում է իր երեք անդրանիկ զավակների ու եղբոր՝ Ավիլի միջև, իսկ ինքը, շարունակ հիվանդ, իր մահկանացուն է կնքում Դամասկոսում 1193 թվականին: Նրա մահից հետո դաժան կռիվ է սկսվում նրա որդիների և եղբոր միջև: Հաղթանակը տանում է Սալահէդդինի եղբայրը՝ Ադիլը, որը կարողանում է ընդարձակ տերությունը՝ բացառությամբ միայն Հալեբ՝ քաղաքի, որը մնաց Սալահէդդինի Ջաֆիր որդու ձեռքը՝ ժառանգություն թողնել իր որդիներին: Ադիլի նստավայրը Դամասկոսն էր: Հայ հին պատմագրության մեջ Սալահէդդինի հիմնած Էյուբյան դինաստիան (1172-1250) Ադիլի անունով կոչվում է Ադիլյան («Էտլեանք»):

* Հեղինակն իր խոսքում գերադասում է օգտագործել «Հալեբ», այլ ոչ «Հալեպ» գրելածնը – Յ. Մ.

3. ՊԱՀԼԱՎՈՒՆԻՆԵՐԸ

Պահլավունիները մեծ, մշակութային և անվանի տոհմ էին Բագրատունիների օրոք: Նրանց ծագման և առանձին ճյուղերի պատմությունն արժանի է հատուկ ուսումնասիրության: Այստեղ մեզ հետաքրքրում է միայն Մագիստրոս տիտղոսով հայտնի Գրիգոր Պահլավունու ճյուղը: Հայոց պատմությունից հայտնի է, որ հունական մշակույթին սիրահարված այդ նախարարը հունասիրական քաղաքականություն էր վարում ամեն բանում: Նրա լեզուն, որ նոր հունարան հայերեն էր, ամենայն հավանականությամբ իր ժամանակին կողմնակից հասկացողներ է ունեցել, որոնք շատ բարձր են գնահատել նրա իմաստասիրական երկերը:

Դեռ Անիի անկումից առաջ Գրիգոր Պահլավունին՝ մագիստրոս զինվորական տիտղոսով, Բյուզանդիոնի կողմից կարգվում է Վասպուրականի, Տարոն-Տուրուբերանի և Աղձնիքի բղեշխ: XI դարի կեսերին նա հարավային Հայաստանում դաժան պայքար էր մղում թոնդրակեցիների դեմ: Նրա որդին՝ Վահրամը, հոր կենդանության օրոք և մահվանից (+1059 թ.) հետո, հոր օգնականն էր և ապա հաջորդը: Ինչպիսի հաջողությամբ որ հայր ու որդի կռվում էին թոնդրակեցիների դեմ, նույնպիսի հաջողությամբ նրանք չկարողացան կռվել թուրքերի դեմ, որոնք արդեն մտել էին Հայաստան:

1065 թվականին, Կապադովկիայում մահվան դատապարտված Բագրատունիների և Արծրունիների փոխադարձ համաձայնությամբ, Գրիգոր Մագիստրոսի վերոհիշյալ որդին՝ Վահրամը, Գրիգոր անունով հայոց կաթողիկոս է կարգվում: Պահլավունի կաթողիկոսը, որ հայոց պատմության մեջ մտել է «Վկայասեր» անունով, հակառակ իր այդ մականվան, ինչպես աշխարհիկ ու զինվորական մարդ էր նախքան կաթողիկոս դառնալը, այնպես էլ աշխարհիկ մարդ մնաց իր նոր հոգևոր պաշտոնում: Այդ խառը, հեղինակ ժամանակաշրջանում նրա աթոռը գաղթում էր դրյակից դրյակ (Ծովք, Թավրուր, Շուրդ), մինչև որ հաստատվեց Հռոմկլայում (Կալա ի Ռում)՝ Հայաստանի սահմաններից դուրս: Կաթողիկոս դառնալով՝ Վահրամ Գրիգոր Պահլավունին շատ մեծ գործունեություն ծավալեց: Այդ ժա-

մանակ մի քանի հայ կաթողիկոսություն կար: Նա իր և իր տոհմի հեղինակությամբ կարողացավ թե՛ հայ բնօրրանից և թե՛ այդ ժամանակ վերընթաց կյանք ապրող հայկական Կիլիկիայից դուրս գտնվող Հռոմկլան դարձնել Ամենայն հայոց կաթողիկոսարան և հայ մշակույթի ու քաղաքական կյանքի մի նոր կենտրոն: Նա կարողացավ Ամենայն հայոց կաթողիկոսությունը շուրջ մեկ և կես դար (1065-1203 թթ.) դարձնել իրենց տոհմի անկապտելի սեփականությունը: Պահլավունիների տոհմն այդ ժամանակամիջոցում տվեց 7 նշանավոր կաթողիկոս, որոնք «երկայնաձիգ գաւազանաւ» կառավարում էին Իսլանդիայից մինչև Հաբեշտան ցրված իրենց հոտը: Այդ 138 տարիների ընթացքում այնքան մեծ հեղինակություն ձեռք բերեց Պահլավունի անունը, որ նրանց տոհմի հետ խնամիացող անգամ հին անվանի տոհմերի զարմերն սկսեցին Պահլավունի համարել իրենց: Այնքան, որքան հայոց կաթողիկոսներն ընտրվում էին կուսակրոն հոգևորականությունից, այդ տոհմն իր գոյությունը պահպանեց միայն վերոհիշյալ խնամիական կապերով ճյուղավորվելու շնորհիվ: Եգիպտահայության առաջին կաթողիկոս Գրիգորը, նրա եղբայրներ Վահրամն ու Վասակը Պահլավունիներ էին Ապիրատների տոհմից: Ներսես Շնորհալի մեծ բանաստեղծը, որ կաթողիկոս դարձավ, նույնպես Պահլավունի էր Ապիրատների գծով: Իրենց Պահլավունի էին համարում նաև այդ տանը փեսայացած այն հայ իշխանների զարմերը, որոնք մնացել էին անառիկ Սասունում և սերում էին Չորտուանելից, որին ընդունված է Մամիկոնյան համարել:

Դեռ Գրիգոր Մագիստրոսի հոր զորամասում կար Չորտուանել անունով մի զինվորական: Այս զինվորականը կռվում էր նաև Մագիստրոսի բանակում և այդ բանակի հետ անցել էր Տարոն: Ընդհանուր նահանջի տարիներին նա մտնում է անառիկ Սասունում, և նրա սերունդները, պարբերաբար կրկնելով Չորտուանել անունը, նաև պարբերաբար խնամիություն են հաստատում Պահլավունիների Հռոմկլայի տան հետ: XII դարի վերջին երկու տասնամյակներում Սասունում կային երկու տարբեր Չորտուանելների որդիներ, որոնք Գրիգոր Գ. և Գրիգոր Տղա Պահլավունի կաթողիկոսների քույրերի որդիներն էին: Այս երկու Չորտուանելների մասին Հր. Աճառյանի «Անձնանունների բառարանում» կարդում ենք.

«Չորտուանել Գ. որդի Վիգէն իշխանի Սասնոյ, թոռն Չորտուանել Բ-ի. ամուսնացավ Գրիգորիս Գ կաթողիկոսի Վասիլ եղբոր Վանենի անուն աղջկա հետ. իր որդիքն են Վասիլ, Շահինշահ և Թոռնիկ. մեռավ

երիտասարդ հասակում 1165 թ. և թաղվեց Վանդիր վանքում. – Թորոս Աղբար. Բ. 311-4, Հայաս. [ատում] 391-4: Հնութ. Ակնայ. 77:

Ճորպուսանեղ, իշխան Սասնոյ, որի որդիքը՝ Հերթում և Շահնշահ գաղթեցին Կիլիկիա 1189 թվին և խնամացան Լևոն Բ-ի հետ. ամուսնացած էր Գրիգոր (Տղայ – Հ.Թ.) կաթողիկոսի քրոջ հետ. – Սմբ. [ատ] պտմ. 105»: ⁵⁴

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսի սերնդի Պաիվափունիները պարբերաբար խնամհանալով Սասունում մնացած Չորտուանեղների և Կիլիկիայի սահմանները հասած Ապիրատների հետ, կազմում են աշխարհիկ ու կրոնական գործիչներ տվող մի տոհմակցություն, որը թեև անվանի էր դարձել իր տված իրոք մեծ կաթողիկոսների մեծ հեղինակության ու հռչակի շնորհիվ, բայց բավականաչափ հող ու գործունեության հնարավորություններ չէր կարողանում ընձեռել այդ ծավալուն տան աշխարհիկ անդամներին, որոնք նույնպես աչքի ընկնող դեմքեր էին:

XI դարի վերջերին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մատնացույց արած ճանապարհով Պաիվափունիների մի զգալի հատված հետևորդների սովոր բազմությամբ անցնում է Եգիպտոս և լավ ընդունելություն գտնելով հայազգի մեծ վեզիր Բադրի կողմից՝ հաստատվում է Եգիպտոսի հարավում, որտեղ Գուսի նահանգապետությունը հանձնվում է Պաիվափունիների նահապետ Վահրամ Պաիվափունին:

1137-1140 թվականներին, երբ Վահրամ Պաիվափունին, ինչպես տեսանք, հարկադրվում է նորից անցնել Եգիպտոսի հարավ, ապա, ինչպես անհերքելիորեն ապացուցում են Հաֆիզ խալիֆի պաշտոնական գրությունները, ոչ քիչ թվով Պաիվափունիներ ու նրանց այսպես ասած «չվանը բռնողներ» կային հյուսիսային Եգիպտոսում, որոնց Հաֆիզ խալիֆը համոզում էր մնալ իրենց երկրում՝ խոստանալով ապահովել նրանց ֆեոդալական բազմաթիվ արտոնությունները: Պաշտոնական գրության մեջ հիշատակված Պաիվափունիներից մի քանիսը Սասունում մնացած Պաիվափունիներից էին, իսկ նրանց «չվանը բռնողները» կարող էին հավաքագրվել միայն Սասունում, աղքատիկ Սասունում, որի բնակչությունը դեռևս պահպանել էր ինչպես իր մարտունակությունը, այնպես էլ իր կապը Պաիվափունիների հետ:

Հռոմկլայի Պաիվափունի կաթողիկոսների և Սասունում մնացած Պաիվափունիների մասին արաբ հին պատմագիր Յակուտին (XIII դ.) հետևյալն է հաղորդում.

54 Գ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 215-216:

«Գալաաթ էր Ռում (Յունաբերդ կամ Հռոմկլայ). – Եփրատի արևմտեան կողմը Պիրա և Սոմէյսաթ քաղաքներուն մէջտեղը անառիկ բերդ մըն է, որ հայոց պատրիարքին պաշտօնավայրը կը կազմէ: Այս պատրիարքը Մեսիայի փոխանորդն է և հայերէն լեզուով կաթողիկոս կը կոչուի: Կաթողիկոսը հինէն ի վեր ընտրուած է *Դաիթ մարգարէի սերունդէն և այս պաշարօնին համար նշան նկատուած է բազուկի երկայնութիւնը*, այնպէս որ երբ կաթողիկոսը ոտքի վրայ կանգնէր, պէտք էր որ ձեռքերը ծունկերէն վար հասնէին: ♦

Գալաաթ էր Բում ցարդ կը մնայ հայոց ձեռքը՝ հակառակ այն իրողութեան, որ ամբողջ շրջապատը իսլամներու կողմէ գրաւուած է: Այս կացութեան հաւանական պատճառ պէտք է նկատել այն պարագան, որ քաղաքը (բերդը – Հ.Թ.) աննշան եկամուտ միայն ունի, իսկ երկրորդ այն՝ թէ սովորութիւն եղած է կրօնապետի մը պաշտօնավայրը ազատ ձգել, ինչպէս որ ազատ կը ձգուին իսլամական երկիրներու մէջ աղօթատեղիներն և եկեղեցիները:

Մօտաւորապէս 610 (Բ. 1213-4) թուականին Հայոց Լայոն (Լեոն) Պին Լայոն թագաւորը, որ սիրիական հողամասերէն Միսիսի, Թարսուսի և Ատանայի կողմերը կը գտնուի, ատելի սովորութիւն մը որդեգրած էր: Երբ գիւղ մը կամ քաղաք մը իջևանէր, հայ աղջիկ մը բերել տալով անոր հետ կը գիշերէր...» ⁵⁵ (հայերը բողոքում են կաթողիկոսին, կաթողիկոսը այդ սովորության համար կշտամբում է նրան, կշտամբանքն օգուտ չի բերում, կաթողիկոսը հարկադրված բանադրում է թագավորին, որից հետո թագավորը շատ է տանջվում մենակությունից, որովհետև կինն անգամ լքում է նրան: Մենակությունից ձանձրացած թագավորը զղջում է և դիմելով կաթողիկոսին՝ խնդրում է վերացնել բանադրանքը – Հ.Թ.):

«Կաթողիկոսը, – շարունակում է Յակուտին, – խաբուեցաւ, եկաւ Լայոնի մօտ և հաւաքուած բազմութեան առջեւ արձակեց զայն բանադրանքէ: Երբոր հաւաքոյթը վերջացաւ, Լեոն բռնեց ձեռքէն և բերդը հանեց կաթողիկոսը, որու վերջին երեսմը եղաւ: Իր ազգականներէն կրօնական մը բերել տալով, որ կարծեմ իր մօրեղբորորդին էր, Լայոն բերդը դրկեց և կաթողիկոս ըրաւ զայն, որ ցարդ հոն կը մնայ: *Եւ այս կերպով վերջացաւ Դաիթի գերդասարանին կաթողիկոսութիւնը: Կը լսեմ, թէ յիշեալ ընտանիքէն մարդ չէ մնացած հիմա այդ կողմերը խնդրոյ առարկայ պաշարօնը սրանձնելու համար: Այդ գերդասարանին պարկանող անհաւաններ կան Խլաթի կողմերը միայն*» ⁵⁶

55 Իսկն իսպիբան, Վէֆայաթ էլ Ասեան, էջ 323:

56 Նույն տեղում, էջ 324:

Այստեղ մի փոքր հեքիաթային երանգ է տրված Հռոմկլայի Պաիլավունի կաթողիկոսների և Կիլիկիայի Ռուբինյանների հակամարտություններին, հեքիաթային ձևով է հաղորդված նաև Պաիլավունիների կապը Դավիթ մարգարեի սերնդի հետ: Այս ամենի համար չի կարելի մեղադրել արաբ պատմագրին, որովհետև նա հաղորդում է միայն իր լսածը, իսկ այդ դարերում պատմական իրողությունը հեքիաթի էր վերածվում ոչ միայն որոշ ժամանակ անց, այլև հաճախ հաղորդման իսկ պահին՝ հաղորդողների և լսողների մտածողության և շատ այլ հանգամանքների բերումով: Մենք շուտով կանդրադառնանք ինչպես Պաիլավունիների և Ռուբինյանների հակամարտություններին, այնպես էլ Պաիլավունիների՝ Դավթի սերնդից սկիզբ առնելու վերաբերյալ այս հաղորդմանը:

Արաբ պատմագիրն այստեղ նշում է նաև, որ ներկայումս, այսինքն՝ XIII դարում «այդ գերդաստանին պատկանող անհատներ կան Խլաթի կողմերը միայն», այսինքն՝ Սասունում, Առաքելոց վանքում և այլն:

Այնքան, որքան անվիճելի փաստ է, որ Վահրամ Պաիլավունին XI դարի վերջին տասնամյակին Եգիպտոս անցավ ստվարաթիվ գործով ու հետևորդներով, իսկ կես դար հետո՝ 1140 թվականին, հայկական մշտական գործ հիմնեց այնտեղ, որն իր գոյությունը պահպանեց ամբողջ 32 տարի (մինչև 1172 թ.), ապա մնում է եզրակացնել, որ նա այդ գործը կարող էր հավաքագրել և հավաքագրում էր առավելապես Սասունում, որտեղ Պաիլավունիներն ամուր հենակետ ունեին, և որտեղ, սա շատ կարևոր հանգամանք է, ռազմիկ ժողովուրդը լեռնային երկրի աղքատության պատճառով դարեր շարունակ վարժվել էր բերդապահ գործ վարժվելու այլ, հեռավոր, անգամ ոչ քրիստոնյա տերերի մոտ. բնականաբար, նրանք բնիկ տերերի զորապետությամբ այդ միևնույն ծառայությունը սիրով կկատարեին հեռավոր, բայց հարուստ Եգիպտոսում: Սասունում այդ ժամանակ, ինչպես տեսանք, կային երկու տարբեր Չորտուանեների սերունդներ՝ Գրիգոր Գ-ի քրոջ որդիները 1165 թ. ընդունել էին Խլաթի թագավորի սյուզերենությունը և համակերպվել վասալի իրենց դրությամբ: Մյուս Չորտուանեներ և նրա որդիներ Հեթումն ու Շահնշահը, որոնք Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջ որդիներն էին, ինչ որ մի Շահ-ի-Արմենի վասալ դառնալու տրամադրություն չունեին: Նրանք դեռ չէին համակերպվել հայկական անկախությունը կորցնելու մտքին, և սեփական հայրենիքում հայկական անկախությունը պահպանելու համար այդ խիստ անսպաստ իրադրության մեջ նրանք գերադասել էին ծառայել օտար երկրում, քան թե գլուխ խոնարհել Խլաթի թագավորների առաջ: Սա-

սունում մենք այդ երկու եղբայրների անունը լսում ենք այն ժամանակ, երբ մեռնում էր (1185 թ.) Սուլթան II Երկարակյացը: Երկու եղբայրներն իրենց զորքով գնում են Խլաթ, ավագ եղբայրը նպատակահարմար չի համարում քաղաք մտնել. նա կրտսեր եղբորն է ուղարկում քաղաք, որը արքունիքում ներկա է լինում Սուլթանի մահվան պահին: Ինչպես տեսանք վերևում, թագավորի մահից հետո դրության տեղ է դառնում նրա զորավար Բեկթեմուրը, որը, փեսայանալով Փեղևիկներին, ամրապնդում է իր դիրքերը: Սակայն մինչ այդ Հեթում և Շահնշահ Սասունցիներին հաջողվում է անգամ գերի վերցնել Բեկթեմուրին և նրան բաց թողնել միայն Թառձեան բերդը հետ վերցնելուց և բարեկամության ուխտ կապելուց հետո: Պարզ է, որ Հեթում ու Շահնշահ Սասունցիները զինվորական շոշափելի ուժ էին ունեցել: Հայ պատմագրության մեջ այս երկու եղբայրների անվան հիշատակումներ պահպանվել են միայն այն եղերական մահվան կապակցությամբ, որ նրանք գտան Կիլիկիայում: Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն հին կիլիկյան թարգմանության մեջ էլ հասկանալի պատճառներով ոչինչ չի պահպանվել նրանց մասին: Սակայն Շաբոյի ֆրանսերեն թարգմանության մեջ պարզ ու որոշակի ասված է, որ անտուն մնացած այդ իշխաններից Շահնշահը Խլաթ ժամանելուց (1185 թ.) առաջ անգամ փորձել էր իր քեռուց՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսից խլել Հռոմկլան: Այդ բախտախնդրությունը քիչ էր մնացել շատ թանկ նստեր Հռոմկլային, և հայոց կաթողիկոսարանն ընկներ թուրքերի ձեռքը: Միխայել Ասորու մոտ կարդում ենք. «Հայոց կաթողիկոս Գրիգորը (Տղան)...դուրս եկավ Հռոմկլայից և գնաց Տարսուն: Նրա քրոջ որդին, որի անունը Շահնշահ էր, ապստամբեց նրա դեմ. նրան աջակից հանդիսացան թուրքերը և քիչ մնաց, որ քաղաքն ընկներ թուրքերի ձեռքը: Սակայն կաթողիկոսը լուրն առնելով շտապ հետ վերադարձավ, զորաժողով կատարեց և պաշարեց բերդը: Սպանվածների թիվն ավելացավ, և կաթողիկոսի մարդկանցից մի քանիսը մեռան մարտում...Այնուհետև նրա քրոջ որդին (որ որդին - Հ.Թ.) վրա հասավ իր երկրից և բազմաթիվ խոստումներից, հանդիսավոր երդումներից ու պարտավորություններից հետո, որ ստանձնեց պատրիարքը, ինչպես նաև երաշխիքներ տալուց հետո, նրանք, վերջապես, տեսնվեցին ու հաշտվեցին»:⁵⁷

Այս ամենը Միխայել Ասորին, տուրք տալով իր բարեպաշտությանը, պատմում է որպես պատիժ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին այն բանի հա-

57 Chronique de Michel le Syrien, Patriarche Jacobite d'Antioche (1166-1199). Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot. Tome III, Paris, 1910, p. 395.

մար, որ նա ունեցություններ էր կատարել ասորական մի հայտնի վանքի նկատմամբ: Այս հանգամանքը որոշ չափով նսեմացնում է Միխայել Ասորու հաղորդումը, բայց բոլորովին չի արժեզրկում այն:

Սասունցի եղբայրների այս բախտախնդրությունը կասկած չի թողնում, որ նրանք Եգիպտոսի հայկական գործի մեջ ծառայություն կատարող սասունցի զորավարներից էին եղել, որոնք 1169-1172 թվականների պարտությունից հետո մեծագույն դժվարությամբ վերադարձել էին Սասուն, բայց անտուն էին մնացել, որովհետև նրանց մյուս ազգականները, Խլաթի թագավորության վասալներ դառնալով, ապահովել էին իրենց վասալական տիրակալությունը նաև բացակա ազգականների հողերի վրա:

Ինչպես տեսանք, արաբ պատմագիրը Սալահեդդինի 1185 թ. արշավանքը Խլաթի վրա և նահանջը նկարագրում է որպես անարյուն գործողություն: Մահմեդական պատմագիրները սովորաբար խուսափում են իսլամի համար սուրբ հոչակված այդ զորավարի որևէ պարտություն արձանագրելուց: Սակայն հայ պատմագիրը պարզ ու որոշակի ասում է, որ այդ արշավանքի ժամանակ մեծ ավեր ու կոտորած է եղել, և տալիս է Թառձեան կարևոր բերդի անունը, որը համընկնում է Սալահեդդինի բանակատեղի Էթ-Թագաբա անվանը: Մենք հիմք չունենք հավատ չընծայելու հայ պատմագրի վկայությանը, որովհետև նա թե՛ ժամանակի և թե՛ տարածության տեսակետից ավելի մոտ է կանգնած եղել վերոհիշյալ իրադարձություններին:

Այդ կռվի մասին Վարդան Արևելցին գրում է. «Եւ ՚ի գալ միսոյ ամին մեռաւ Շահի-արմէնն անորդի, և ասեր և սուր և գերութիւն բազմացաւ ՚ի վերայ աշխարհի նորա ՚ի շրջակայ ազգացն: Եւ զի թոռն Վիգենայ՝ Շահնշահ քեռորդի տեսաւ Գրիգորի կաթողիկոսի առընթեր կայր մահուան շահին, առեալ զիւրսն անկանի ՚ի Սասունս. և անդ անկաւ ՚ի ձեռս նորա Բէկդամուրն՝ որ էր իշխան ամենայն տան շահին. առնու ՚ի նմանէ զբերդն որ Թառձեան կոչի, և ուխտիւ արձակեաց զնա, որ և ստեաց ուխտին ՚ի տիրելս իւրում աթոռոյ շահին. և զայն իս և զամենայն Սասունք՝ եհան ՚ի նմանէ, և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս»:⁵⁸

Խլաթի դուռը հասած Սալահեդդինի բազմամարդ և բազմացեղ բանակը, անտարակույս, չէր կարող ամփոփվել մեկ բերդի կամ գյուղի տարածքում: Սասունի ամառային արոտավայրերի վրա աչք ունեցող Օրթոկյանները, ցանկանալով օգտվել հանգամանքից, անտարակույս, արշավել

են նաև Սասունի վրա, բայց Սասունցի եղբայրներին հաջողվել է պարտության մատնել Օրթոկյաններին և ապա հարվածել Մսրա Մելիքի նահանջող զորքին՝ այդպիսով լուծելով 13 տարի առաջ Եգիպտոսում իրենց կրած պարտության վրեժը:

Սակայն Պաիլավունիների ղեկավարությամբ սասունցիների տարած այս հաղթանակը, երբ նրանք, մի կողմից, ամրապնդելով իրենց կիսանկախ դրությունը, մի նոր բերդ են ստանում Բեկթեմուրից, իսկ մյուս կողմից վրեժխնդիր են լինում Սասնո ստորոտներով անցնող ու նահանջող Մսրա Մելիքի զորքից, երկար չտևեց: Շուտով Բեկթեմուրը «ստեաց ուխտին» և Շահնշահ ու Հեթում եղբայրներից ոչ միայն առավ Թառձյան բերդը, այլև նրանց մյուս բոլոր ամրությունները և հողերը:

Սասունում պարտված Պաիլավունի եղբայրներին ուրիշ ելք չէր մնում, քան թշնամական տարածքով՝ Մսրա Մելիք Սալահեդդինին իսկ ենթակա հողերով, անօրինակ անցում կատարել դեպի Կիլիկիա: 1189 թվականին մենք նրանց արդեն տեսնում ենք Կիլիկիայում՝ Լևոն II-ի կողմից գրկաբաց ընդունված և մեծարված:

1189 և հետագա մի քանի տարիները շրջադարձային, բեկումնային հույժ կարևոր ժամանակաշրջան էին ոչ միայն Կիլիկիայի հայկական թագավորության, այլև բովանդակ Մերձավոր Արևելքի և քրիստոնեական Արևմուտքի համար: Երկու տարի առաջ՝ 1187 թվականին, Սալահեդդինին հաջողվել էր գրավել Երուսաղեմը՝ Արևմուտքի և Արևելքի բոլոր քրիստոնյա ժողովուրդների գլխավոր սրբավայրը: Երուսաղեմի անկման բոթը շարժման մեջ էր դրել իր ժամանակի հզորագույն քրիստոնեական եկեղեցուն: Երուսաղեմը հետ գրավելու համար սկսված Խաչակրաց երրորդ արշավանքը (1189-1192 թթ.) նախորդ և հետագա Խաչակրաց բոլոր արշավանքներից տարբերվում է այն բանով, որ երրորդ արշավանքին մասնակցողների թվում չէին գերակշռում առանձին քարոզիչների կոչով ոտքի ելած հասարակ մարդիկ ու ասպետներ, ինչպես նաև այդ ասպետների կազմակերպած առանձին միաբանություններ, այլ Արևմտյան Եվրոպայի երեք խոշորագույն միապետները (Անգլիայի Ռիչարդ Առյուծասիրտ թագավորը, Ֆրանսիայի Ֆիլիպ Օգյուստ թագավորը և Հռոմեական սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ Բարբարոսան): Միջերկրականի արևելյան ափին խաչակիրների նախընթաց հարյուրամյա (1099-1187 թթ.) տիրապետությունը գրգռել էր նոր Եվրոպայի առաջին աշխարհակալների ախորժակը, և եթե վեճ կարող է լինել առաջին երկու արշավանքների բնույթի մասին,

58 Հաաբումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 133:

ապա երրորդ արշավանքը բացահայտորեն նվաճողական էր, և Ֆրիդրիխ Բարբարոսան, որի ճանապարհը պետք է անցներ Հայկական Կիլիկիայի վրայով, ամենևին չէր թաքցնում, որ ինքը հռոմեական նախկին կայսրերի ժառանգն է և իրավունքներ ունի մինչև Եփրատ և ավելի հեռուներն ընկած հողերի նկատմամբ:

Խաչակրաց երրորդ արշավանքի դեմ հանդիման Սալահեդդինին հաջողվում է կոնսուլիդացնել Սիրիայի, Անտիոքի, Եգիպտոսի, Հիջազ-Եմենի և Արևմտյան Միջագետքի մահմեդական ժողովուրդներին և, հաղթական հաշտություն կնքելով Երուսաղեմին սպառնացող Ռիչարդ Առյուծասիրտի հետ, իր ուժերը կենտրոնացնել Անտիոքի քրիստոնեական դքսության և Կիլիկիայի սահմանագլխին: Հայկական Կիլիկիայի տեր Լևոնին վիճակված էր թագավոր օծվելու (1198 թ.) նախօրյակին (1189-1192 թթ.) մեծ փորձության ենթարկվելու: Նրա թշնամիներն այլևս թուլացած Բյուզանդիոնը, հեղհեղուկ Իկոնիան և հարևան անհանգիստ խաչակիր ասպետները չէին, այլ Ֆրիդրիխ Բարբարոսան և Սալահեդդինը, որոնցից յուրաքանչյուրի հաղթանակն էլ մահ էր նրա անկախության համար: Կիլիկիայի անառիկ լեռներին ապավինած Ռուբինյանները մինչ այդ մեծ մասամբ ճարպիկ խուսանավումով էին կարողացել այս կամ այն չափով պահպանել իրենց անկախությունը: Այժմ հարկավոր էր ավելի մեծ չափով լարել իրենց բոլոր ուժերը: Բայց Ռուբինյանները, որպես տոհմ, հյուծվել և ուժասպառ էին եղել: Թեև Անտիոքի քրիստոնեական դքսությանը թշնամի, նրանք սերտաճել էին այլ խաչակիրների հետ, որոնք առանձին օրդեններ, բերդեր ու հողեր ունեին նրանց հողերում: Այդ հանգամանքը և առանձին խաչակիրների հետ ունեցած երկարատև շփումները բացասաբար էին անդրադարձել Ռուբինյանների ազգային դիմագծի վրա:

Այդ մեծ փորձության ժամին, երբ ազգային դեմքը չկորցրած հայ ֆեոդալները դժգոհ էին ֆրանկների առաջ տեղի տվող Ռուբինյաններից, դրությունը փրկելու համար հարկավոր էր դիմել նոր կուրսի: Եվ 1187 թ. իշխանությունն իր ձեռքը վերցրած Լևոնը դիմում է այդ նոր կուրսին: Ամենից առաջ նա բարեկամանում է Ամենայն հայոց կաթողիկոսության հետ, որն ավելի քան մեկ դար թեև դարձել էր Պաղատանիների տան ֆեոդալական սեփականությունը, բայց ինչպես այդ տան հետևյալ և անվանիության, այնպես էլ նրա տված իրոք մեծ կաթողիկոսների հեղինակության շնորհիվ, համահայկական անուն էր վաստակել: Հայկական Կիլիկիայի համար այդ օրհասական փորձության տարիներին Տղա մականվանյալ Գրիգոր Պաղ-

լատանի կաթողիկոսը (1173-1193 թթ.) իր՝ Հռոմկայում նստած ժամանակ (որ Սալահեդդինի հողն էր) դառնում է Լևոնի, մեր օրերի տերմինով ասած, արտաքին գործերի միևնույն ժամանակահատվածում: Գրիգոր Տղա կաթողիկոսը կապվում է ինչպես Ֆրիդրիխ Բարբարոսայի, այնպես էլ Սալահեդդինի հետ: Եվ առայժմ անլուծելի մնացած այն վեճը, թե որի կողմն էր նրա «համակրանքը», ապացուցում է, թե Պաղատանի կաթողիկոսը որքան շրջահայաց էր և ինչպիսի վարպետությամբ էր վարում Լևոնի արտաքին գործերը: Փաստ է, որ ոչ Ֆրիդրիխը և ոչ էլ Սալահեդդինը էական վնաս չհասցրին հայկական փոքրիկ Կիլիկիային:

Այդ հակամարտությունների, այդ իմաստուն և ճկուն խուսանավման տարիներին (1189-1192 թթ.) Պաղատանի կաթողիկոսին հաջողվում է նաև լուծել Ռուբինյանների մահացող տոհմը վերակենդանացնելու հարցը: Սասունից Կիլիկիա ապավինած Հեթում և Շահնշահ Սասունցիները, որոնք Պաղատանի կաթողիկոսի քրոջ որդիներն էին, իսկ հայրական գծով համարվում էին Մամիկոնյանների շառավիղներ, միակ հարմարագույն փեսացուներն էին արու գավակ չունեցող Ռուբինյան տան համար, որոնք կարող էին գահաժառանգին օժտել միաժամանակ Ռուբինյաններից, Պաղատանիներից ու Մամիկոնյաններից սերված լինելու հմայքով: Լևոնն ինքն այդ ժամանակ դեռևս սերունդ չունեղ (նա իր առաջին կնոջը վանք էր քշել կամ մեռցրել և դեռևս չէր փեսայացել Կիպրոսի Լուսինյաններին): Սասունից եկած անվանի հերոսներին Լևոնը սիրով ամուսնացնում է իր եղբոր՝ Ռուբենի դուստրերի հետ: 12-ամյա Ալիծին կնության է տալիս Հեթումին, իսկ 5-ամյա Փիլիպին՝ նշանում է Շահնշահի հետ: Երկու եղբայրներին տալիս է կարևոր բերդեր:

Բայց շուտով իրադրությունը փոխվում է: Ֆրիդրիխ Բարբարոսան մեռնում է 1190 թվականին, իսկ Սալահեդդինը՝ 1193 թվականին: Այս երկու ահարկու թշնամիների մահը քայքայում է նաև նրանց բանակները: Սալահեդդինի որդիների և եղբոր միջև պայքար է սկսվում ժառանգության համար, իսկ Բարբարոսայի կազմալուծված բանակը հետ է գնում: Կիլիկիայի համար վերականգնվում է նախկին իրադրությունը: Եթե երեկ Լևոնը վախենում էր, որ գերմանացիները կարող էին գրավել իր ամբողջ երկիրը և իրեն զրկել բոլոր հողերից, ապա այսօր այդ վախն այլևս չկար: Նրա սահմանների մոտ մնում էին միայն «ֆրանկները»՝ Կիպրոսի Լուսինյանները (որոնց փեսան էր դառնալու ինքը) և Անտիոքի դքսությունը, որի հետ պետք էր լեզու գտնել՝ Սալահեդդինի արդեն իրար թշնամացած ժառանգորդնե-

րի դեմ միասնական ճակատ կազմելու համար: Լևոնին այլևս պետք չէին ո՛չ Պահլավունի Գրիգոր Տղա կաթողիկոսը՝ իր համահայկական մեծ հեղինակությամբ, ո՛չ էլ նրա քրոջ որդիները՝ իր տան ժառանգորդին հայկական հին նախարարական անունով զարդարելու համար: Նրա մեջ նորից հառնում էր ֆրանկների հետ սերտաճած և ազգային դեմք չունեցող ֆեոդալը: Այս նոր իրադրության մեջ Լևոնն ամենից ավելի նպատակահարմար է համարում խնամիական կապերով կապվել իր վաղեմի թշնամու՝ Անտիոքի դքսի հետ, որպեսզի այդ երկու տների ապագա ժառանգորդին հաջողվեր Անտիոքի դքսությունը միաձուլել Կիլիկիային: Այս որոշումը կայացնելուց հետո Լևոնը 1193 թվականին ձերբակալում ու բանտարկում է թագավորական տան Պահլավունի-Մամիկոնյան փեսաներ Հեթում և Շահնշահ եղբայրներին: Պետք է ենթադրել, որ Լևոնի այս նոր կուրսն անհայտ չէր մնացել ո՛չ սասունցի եղբայրներին, ո՛չ էլ Կիլիկիայի հայ ֆեոդալներին, որոնց համակրանքը երկու եղբայրների կողմն էր, և որ նրանք իրենց դժգոհությունը որևէ կերպ արտահայտել են:

Գրիգոր Տղա կաթողիկոսը Հռոմկլայից անձամբ ժամանում է Կիլիկիա՝ իր բարձր հեղինակությամբ ինչպես իր քրոջ որդիներին փրկելու, այնպես էլ, հավանաբար, Լևոնի ոչ ազգային գծի վրա ազդելու համար: Սակայն Լևոնը ձերբակալում է նաև կաթողիկոսին և մեկ ամսում երեքին էլ միասին սպանում (1193 թ.): Դրության տեր դարձած Լևոնի գիտությամբ, թե՛ նրա կամքին հակառակ, հայրապետական աթոռին նստում է մի իսկական տղա՝ պատանի Վահրամը, որն օծվում է Գրիգոր Ե անունով (1193-1194 թթ.): Լևոնը փորձում էր իրեն ենթարկել ու հլու գործիք դարձնել պատանի կաթողիկոսին, սակայն երբ տեսնում է, որ պատանին թագավորին ենթարկվելու նշաններ ցույց չի տալիս, ապա նա անմիջապես, կղերականների հագուստով ծախված զինվորների մեծ խմբով Հովհաննես եպիսկոպոսին ուղարկում է Հռոմկլա: Կաթողիկոսարանի դռները լայնորեն բաց էին բոլորի, մանավանդ հայ հոգևորականների առաջ: Բայց երբ պատանի կաթողիկոսը նկատում է, որ դավ է նյութվում իր դեմ, «զարմացաւ և ասէ. «տէր Յոհաննէս, այս ինչ իրք է»: Եւ նա ասէ «բռնած ես»: Յայնժամ անօրէնքն բռնեցին զնա, և եղին 'ի զնտան և ամրացուցին»: Երբ այս լուրը հասնում է «'ի ներքին շէնս, հասին ամէնն 'ի վերայ Կոյին (Հռոմկլային) 'ի յօդն հայրապետին իւրեանց. և երեք օր նետելով մարտեան, և ոչ ինչ կարացին առնել»:⁵⁹ Լևոնը գերում է իրեն

59 Սմբատայ Սպարապետի եղբոր Յեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմություն յունաց ի Կոստանդնուպոլիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց: Մոսկուա, 1856, էջ 95-96:

չենթարկվող կաթողիկոսին և գահավեժ բարձունքից ցած նետելով՝ սպանում է նրան, որից հետո անհեղեթ առասպել է հնարում, թե իբր կաթողիկոսի կողմնակիցները նրան գրել ու խորհուրդ էին տվել կտավով կախվել ու ցած իջնել բանտ-բերդից, և իբրև թե կտավը կտրվել է, ու կաթողիկոսը «քարավեժ» է եղել: Այսպիսով, Լևոնն սպանում է նաև նորընտիր պատանի կաթողիկոսին (1194 թ.), որն իր եղերական մահվան կապակցությամբ հայոց պատմության մեջ հայտնի է «Քարավեժ» անունով:

Սակայն Պահլավունիների տան հոգևորական ու աշխարհիկ անդամների հետ այս դաժան հաշվեհարդարը դեռ չավարտած՝ Լևոնը Հեթումի կնոջը՝ արդեն 16-ամյա Ալիծին, կնության է տալիս իր նախկին թշնամու՝ Անտիոքի Բոյեմունդ իշխանի որդուն՝ պայման կապելով, որ այդ ամուսնությունից ծնված Ռայմունդ-Ռուբենը միաժամանակ լինի նաև իր՝ Լևոնի գահի ժառանգորդը:

Կիլիկիայի պատմագիրը բարվոք է համարում լուրջորեն պահպանել այդ սպանությունների դրդապատճառների մասին: Նա սուկ արձանագրում է փաստը. «Մեռան և մեծ իշխանքն՝ քոյրորդիքն կաթողիկոսին՝ պարոն Հեթում և պարոն Շահնշահն. 'ի մէկ ամիս՝ քեռին և քոյրորդիքն: Եւ գոր լուաք վասն մահուանն չկարեն ասար գրել. զի ասեն թէ պարոն Լևոն եղև պարսառ. այլ զճշմարիտն Աստուած գիտէ»:⁶⁰

Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը թեև, ըստ երևույթին, որոշ բան կրկնել և գուցե խառնել է, սակայն նա որոշակի գիտե, որ Գրիգորիս Ե կաթողիկոսը բռնվել-տարվել է Կիլիկիա և Կիլիկիայում է ինքնասպանություն գործել. «Տէր Գրիգորիս միւս այլ եղբորորդի նորին տեառն Ներսիսի ամս Բ. և քարավեժ լեալ ի Դղեկէն Կօպիտառոյ՝ և կայ ի Դրազարկն հանգուցեալ»:⁶¹

Այստեղ միջանկյալ ասենք, որ վերևում դիտված արար պատմագրի իրազեկությունն աներկբա է: Եթե հայ պատմագրությունը Լևոնին թագավոր դառնալուց հետո (1198 թ.) թեև մեծարել է «Մեծն» և «Մեծագործ» բառերով, բայց չի մոռացել անվանելու «իգասէր»⁶² (Կ. Գանձակեցի), իսկ նրա ավագ եղբոր՝ Ռուբենի մասին ասում է. «...կայր պարապեալ վավաշոտ ցանկութեանց և պոռնկական խորհրդոց, և վասն այնր գնաց յԱնտաք ուտել և ըմպել ընդ պոռնիկ կանայս»:⁶³

60 Նույն տեղում, էջ 94-95:

61 Սամուելի քահանայի Անեցոյ հաաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 143:

62 Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1909, էջ 151:

63 Սմբատայ Սպարապետի եղբոր Յեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմություն յունաց ի

Պաշտոնականների տան երկու հոգևորական և երկու աշխարհիկ ակա-
նավոր ներկայացուցիչների այդքան եղերական վախճանը, հավանաբար
իրենց այլ չհիշատակված հետևորդների հետ միասին, մեծագույն աղետ
էր այդ տան ողջ մնացած մյուս ներկայացուցիչների համար, որոնք, ըստ
արար պատմագրի վկայության, «կային Խլաթի կողմերը միայն»: Նրանք
չէին կարող հայոց թագավորի ձեռքով կատարված այդ ոճիրը «որդեսպա-
նություն» չորակել, ինչպես նաև չէին կարող այդ ոճրագործությանը մաս-
նակից չհամարել խաչակիրներին, քանի որ իրենց մեծ իշխանի կնոջն ան-
միջապես ամուսնացրել էին «պապի ֆրենկի» գորապետի որդու հետ: Ան-
կախ այլ, թեկուզ շատ ավելի զորեղ դրդապատճառներից, սոսկ այս մեկ՝
իրենց իշխանին սպանելու և նրա կնոջն անհապաղ խաչակրի հետ ամուս-
նացնելու փաստը, ողջ մնացած Պաշտոնականներին, որտեղ էլ որ նրանք
գտնվելիս լինեին, անհուն ատելությամբ պիտի լցներ խաչակիրների դեմ,
որովհետև նրանք չէին կարող կապ չտեսնել այդ սպանությունների և այդ
ամուսնության միջև:

Այս եղեռնագործությունը չէր կարող գրի չառնվել Պաշտոնականներին
համակրող պատմագիրների կամ ուղղակի Պաշտոնականների ողջ մնացած
զարմերի կողմից: Խոսելով Գրիգոր Տղա Պաշտոնականի կաթողիկոսի վախ-
ճանի մասին՝ Սամուել Անեցին (կամ նրա «Ժամանակագրությունը» շարու-
նակողը) պարզ ու որոշակի ասում է. «Իսկ այլը ի պատմագրաց ասեն թե սա
գնաց ի Հռոմկլայէն ի Սիս առ ի թափել զքուերորդի իւր զՀեթում, զոր կա-
պեալ էր թագաւորն Լևոն, և մեռանի անդէն ի Սիս ի սուրբ Խըճկտոր, զոր
ուխտ Արքակաղնիս ասեն»:⁶⁴

Այս վկայությունն անվիճելի է դարձնում, որ Պաշտոնականների եղերական
վախճանը, այս որդեսպանությունը, ոչ միայն գրի է առնվել, այլև գրի է առնվել
անմիջապես, դեպքերի թարմ տպավորության տակ, այն էլ մի քանի հեղինակ-
ների կողմից, դեռ XII դարի վերջին տասնամյակում, երբ դեռ «Խլաթը թուրքի
քաղաք էր», և Բեկթեմուրի որդին ողջ էր (+1198), ուրեմն 1194-1198 թվական-
ներին, և անհրաժեշտ էր Շահ-ի-Արմենների անունը հականե-հանվանե չտալ,
այլ դիմել այլաբանության (Բեկթեմուրին վերանվանել Ջանփոլադ):

Այս «այլը ի պատմագրաց» երկերը մեզ չեն հասել,⁶⁵ սակայն էպոսի

⁶⁴ Կոստանդնուպոլիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, էջ 92:

⁶⁵ Սամուելի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 144:

* «Հայապատումի» մեջ (էջ 351) Ալիշանի բերած հատվածը հավանաբար այդ երկերի մեզ
հասած դրվագներից մեկն է: Վարդան Արևելցու և Վարդան Բարձրբերդցու շփոթություն առաջ
բերած նույնանման հատվածները նույնպես հավանաբար այդ երկերի դրվագներից են, որոնք
մտել են հիշյալ հեղինակների երկերի մեջ:

մեզ հասած տարբերակների հետագա վերլուծությունը մեզ հիմք է տալիս
ասելու, որ այդ երկերը եղել են Պաշտոնականների տան կործանման պատ-
մություններ:

Ռուբինյանների պատմագիր Սմբատ Սպարապետը ծնվել է 1208 թվա-
կանին, այսինքն՝ վերոհիշյալ եղեռնից 14-15 տարի հետո, իսկ իր Պատմու-
թյունը գրել է, հավանաբար, 1250-1260-ական թվականներին, այսինքն՝ այդ
եղեռնից ավելի քան կես դար հետո. նա չի հիշատակում այդ եղեռնի պատ-
մության գրված լինելը և չի տալիս այդ «այլը ի պատմագրաց» անուննե-
րը, սակայն նա նույնպես գիտե ամեն բան, գիտե Ռուբինյանների մեղա-
վորությունը, բայց նույնպես հարկ է համարում լռություն պահպանել: Նրա
օրոք «այլը ի պատմագրաց» պատմություններն արդեն պատմվում էին որ-
պես անգիր բանահյուսություն, «զոր լուսք վասն մահուան (ինչ-որ լսեցինք
մահվան մասին) չկարեւ ասար գրեք»: Կարևորն այստեղ նրա «ինչ-որ լսե-
ցինք»-ը չէ, որովհետև այժմ դժվար չէ կռահել, թե նա ինչ է լսել, այլ այն, որ
կես դար հետո նա արդեն չի կարդացել, այլ միայն լսել է: Պաշտոնականների
տան կործանման վեպն արդեն հյուսվել էր:

Սամուել Անեցու հիշատակած «այլը ի պատմագրաց», այս եղեռնից
բացի, ամենայն հավանականությամբ խոսել են Եգիպտոսի մասին, որ-
տեղ այնպես բարձրացան Պաշտոնականների տան աշխարհիկ անդամնե-
րի և նրանց հետ սերտանած այլ տոհմերի ներկայացուցիչները, այնուհետև
եգիպտահայ գաղութի անկման, ինչպես նաև Խլաթ-Սասունի վրա Սալա-
հեդդինի կատարած արշավանքի և Պաշտոնականների ղեկավարությամբ
սասունցիների վրեժխնդրության մասին. նրանք, թերևս, խոսել են Սասուն-
ցի եղբայրների՝ Կիլիկիա կատարած անցման և խաչակիրների մասին,
որոնք Պաշտոնականների տան խորտակման հիմնական պատճառներն էին:

Այստեղ մենք չենք կարող կանգ չառնել երկու հանգամանքի վրա,
որոնք մեր բանասիրությունը դեռևս փորձ չի կատարել հաշվի առնելու:

Առաջին: Հայ հին պատմագիրները, լինելով հանդերձ մեծ մա-
սամբ մեկ հասարակական խավի՝ հոգևորականության ներկայացուցիչ-
ներ, հաճախ արտահայտել են հասարակական տարբեր, հակոտնյա շա-
հեր ու տրամադրություններ: Նրանք հաճախ տարբեր մոտեցում են ունե-
ցել միևնույն երևույթների և հատկապես միևնույն պատմական անձանց
նկատմամբ: Այս հանգամանքը հայտնի է: Բայց սրա հետ միասին եղել է
մի շրջան, մասնավորապես կիլիկյան շրջանը, երբ միտումնավոր վերա-
խմբագրվել ու փոփոխվել են ոչ միայն հայրենի, այլև անգամ օտար պատ-

մագրության այն երկերը, որոնք խոսել են նաև հայ իրականության մասին: Միննույն Ռուբենի մասին Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողն ասում է. «Ի ՈԼԴ. թվին Բրինժն Անտաքու Պեմունտն... ի սադրելոյ իշխողի Լամբրոսին նենգի ոքսաց զՌուբենս՝ գորդին Ստեֆանէի՝ գտերն Կիլիկոյ, զի յղեաց առ նա և խաբանօք ի սէր և ի ճաշ կոչեաց. և իբրև եկն ըմբռնեաց և ի բանտ եղ յԱնտաք»:⁶⁵

Իսկ նրա վախճանի մասին գրում է. «Ի ՈԼԷ. թվին պարոն Ռուբեն ի վախճան կենաց հասեալ՝ նախ կրօնաւոր եղև օրինեալ՝ և զԼևոն գեղքայրն իւր բազում բանիւ խրատեալ՝ և ի յաթոռ իւրոցն նախնեաց եղեալ՝ և պատուէր ետ նմա՝ ոչ յօտարուստ փեսայ ածել և ոչ հարսն, զի մի տիրեացեն Հայոց»:⁶⁶

Այսքան բարեպաշտ և ավանդապահ հայ-հայրենասեր ներկայացված այս նույն Ռուբենի մասին, ինչպես տեսանք, Սմբատ Սպարապետն առանց այլևայլության հաղորդում է. «...պարոն Ռուբեն կայր պարապեալ վավաշոտ ցանկութեանց և պոռնկական խորհրդոց, և վասն այնր գնաց յԱնտաք ուտել և ըմպել ընդ պոռնիկ կանայս»:⁶⁷

Այս տեսակետից հույժ հատկանշական է Միխայել Ասորու «Ժամանակագրության» միտումնավոր աղավաղումը հայերեն թարգմանության մեջ, որ կատարվել է կիլիկյան շրջանում: Եվ ցավոք սրտի, ոչ ոք մինչև այժմ չի զբաղվել հայոց միջնադարյան շրջանի պատմության համար այնքան կարևոր աղբյուր հանդիսացող այդ երկի ոչ թարգմանության աղավաղումները և ոչ էլ այդ քայլի դրդապատճառները պարզելու հարցով:

Երկրորդ. հին դարերում ինչպես մարդկանց մտածողության և անչափ դյուրահավատության, այնպես էլ հաղորդման ձևերի ու հնարավորությունների պարզունակության և պատահականության պատճառով անգամ մոտակա վայրում տեղի ունեցած իրադարձության լուրը միայն հեքիաթային երանգ ստացած կարող էր տեղ հասնել, էլ չենք խոսում, օրինակ, այնպիսի հեռավոր վայրի մասին, ինչպիսին, ասենք, Ասիուշ բերդն էր Պարսկաստանի հարավում: Արշակի վախճանի լուրը Հայաստան կարող էր բերել ժամանակին Պարսկաստան թշված և հրաշքով հետ փախած մի Մանաճիհր Խուժիկ, Պարսկաստանում իր զինվորական ծառայությունն ավարտելուց տարիներ հետո հայրենիք վերադարձող մի զինվորական: Սրանք չէին կա-

65 Սամուելի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 140:

66 Նոյն տեղում, էջ 142:

67 Սմբատայ Սպարապետի եղբոր Զեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմություն յունաց ի Կոստանդնուպոլիս եւ հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, էջ 92:

րող էպիկական երանգ չտալ իրենց հաղորդմանը: Տիգրանակերտի դաշտում Սյունիքի գորքի ջախջախման լուրը Սյունյաց տիկնոջը կհասցներ ոչ թե հեռագրական գործակալությունը, այլ մի ճողոպրած զինվոր: Այդ զինվորը հենց միմիայն իր ողջ մնացած լինելը մի կերպ արդարացնելու համար չէր կարող էպիկական գույներով չնկարագրել դեպքը: Հեռագրի և ուղիղի մեր դարում անգամ բացառված չէ ռեալ իրադարձության վիպականացումը, էլ ուր մնաց հին դարերում, երբ լուրը, նախքան տեղ հասնելը, ճանապարհին քառասուն անգամ պատմվում էր տարբեր տեսակի ունկնդրողների առաջ և ըստ այնմ էլ շարունակ վերախմբագրվում: Այս տեսակետից հայ բանասիրությունը չպատճառաբանված, սխալ պահանջկոտություն է ցուցաբերել հայ հին աղբյուրների նկատմամբ:

Այս բոլորից հետո պետք է ընդունել, որ Պահլավունիների տան կործանման պատմությունը, որ գրել են «այլք ի պատմագրաց», չէր կարող հենց սկզբից օժտված չլինել վիպային տարրերով, մանավանդ որ այդ տան շուրջ մեկ դար տևած իրոք զարմանալի, իրոք հեքիաթային գործունեությունը Նեղոսի ափերից մինչև Սասուն և Հոռմկլայից մինչև Նուբիայի սահմանագլխին գտնվող հայկական ճերմակ վանքերը, ուրիշ կերպ էլ չէր կարող ընկալվել այդ «այլք ի պատմագրաց» կողմից, քան վիպային երանգով: Այս թեզի ճշտությունն ընդունելու համար պետք է մի պահ փոխադրվել ամենայն հավանականությամբ ոչ թե մենավոր Հոռմկլան, որտեղ Գրիգոր Ե Քարավեժից հետո չէին կարող մնալ Պահլավունիների տան անդավաճան զարմերն՝ ու կողմնակիցները, այլ Շահ-ի-Արմենների երկրի Ս. Առաքելոց (Ղազարի) վանքը, որտեղ միայն կարող էին ապավինել նրանք, և որտեղ իրոք ապավինել էին նրանք ըստ իրազեկ Յակոտիի վկայության: *Հեղինակների տարբեր անձ և տարբեր մտքեցում ունենալը, ինչպես նաև նրանց մտածողությունը, հարյուրամյա ծավալուն պատմության նյութերը հավաքելու աղքատիկ հնարավորությունները, ուժեղների զայրույթը չգրգռելու համար այլաբանությունների դիմելու անհրաժեշտությունը, կենդանի մնացած ձերունիների պատմաձևերին ակամա հավատ ընծայելու անխուսափե-*

* Բնորոշ է, որ այս եղեռնագործությունից հետո Լևոն Բ-ն առերևույթ չխախտեց ավանդույթը և կաթողիկոսական աթոռը չխլեց Պահլավունիներից, սակայն այդ աթոռի վրա նստեցրեց իրեն համար շատ հարմար թեկնածուի՝ նույն Պահլավունի տնից մի մարդու, որը երիտասարդ հասակում իր կյանքը Պոլսում անառակության մեջ մաշեցնելուց հետո հայրենի տուն՝ Հոռմկլա էր վերադարձել ու կրոնավոր դարձել միայն իր հորեղբոր որդուց՝ Գրիգոր Տղա կաթողիկոսից հարուստ թեմեր (Տարոն, Լամբրոն, Անտիոք, Կեսարիա) ստանալու պայմանով: Այս զվարճասեր կրոնավորի հետ Լևոն Բ-ն կարող էր լեզու գտնել և գտավ: Գրիգոր Զ անունով հայտնի այս կաթողիկոսը (1194-1203) ամեն քայլում համակերպվում և ընդառաջում էր Լևոն Բ-ին:

լիությունը, անտարակոյս հենց սկզբից պատմավեպ են դարձրել նրանց գրած պատմությունները: Ինչպես պետք էր ենթադրել, և, ինչպես վկայում են Սմբատի «գոր լուսք»ը և Միխայել Ասորու «Ժամանակագրության» միտումնավոր աղավաղումները, այդ կրճատումներն ու աղավաղումները մտցնելու նոր իրադրությունն ու պահանջը, «այլը ի պատմագրաց» երկերը չէին կարող երկար ժամանակ գրավոր պահպանել իրենց գոյությունը, դրանք կարող էին պատմվել միայն բերանացի: Իսկ բերանացի պատմվելու դեպքում արդեն վիպային երանգներով գրված իրական պատմությունը հեշտությամբ կարող էր վերածվել վեպի և վերածվել է:

4. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Էպոսները սովորաբար հյուսվում են ժողովրդի կյանքում տեղի ունեցած վիպային, այսինքն՝ տվյալ ժողովրդի համար վեպի նյութ ծառայող, վիպային երանգ ունեցող որևէ կոնկրետ իրադարձության կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձությունների շղթայի շուրջը, և սկզբում լինում են սոսկ այդ մեկ իրադարձությունը կամ իրադարձությունների շաղկապված շղթան պատմող վեպ: Բայց, այնուհետև, դարեր շարունակ բերնեբերան պատմվելով և սերնդեսերունդ ավանդվելով, հաճախ միահյուսվելով հնուց եկող կամ նոր կազմվող այլ վեպերի հետ, երբեմն էլ բաժանվելով ու ճյուղավորվելով, հաճախ շատ հեռանալով սկզբնական վեպից, դառնում են էպոս: Այլ վեպերի հետ չմիահյուսվելու դեպքում անգամ, սոսկ միայն դարեր շարունակ ավանդվելու հետևանքով, դրանք անընդհատ փոփոխվում են, լրացվում, այսպես ասած «խմբագրվում են» ժողովրդի ծոցից ելած և բոլոր կողմերով ժողովրդի հետ հարազատորեն կապված հազարավոր տաղանդավոր ու անտաղանդ պատմողների կողմից, որոնք իրենց ժամանակի ոգուն և տրամադրություններին համապատասխան նորանոր տարրեր են մտցնում ավանդականի մեջ: Այսպես, դարեր շարունակ պատմվելով, վեպերը հեռանում են սոսկ մեկ իրադարձություն կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձություններ պատմող սկզբնական ձևից և, շարունակական ընկալումների շնորհիվ հարստանալով, արտահայտում են ժողովրդի մտածողությունը, հոգեբանությունը, աշխարհայացքը, բարոյական հասկացությունները, ակնկալությունները երկար ժամանակամիջոցի ընթացքում ու համար, և դառնում են նրա ազգային բնավորությունը կամ այդ բնավորության որոշ գծերը դրսևորող ժողովրդական էպոս:

Խոսելով մեր էպոսի ծննդավայրի և պատմականության մասին, Մ. Արևելյանը գրում է. «Յեթե մեր յերկրում կա մի գավառ, վոր սակավ գաղթականություն է ունեցել, գոնե պատմության մեջ չի հիշվում, այդ Տորոսյան լեռների ճյուղերն են, իրանց անմատչելի դիրքով, Սասուն, Շատախ,

Մոկաց յերկիր: Յերթ Հայաստանում կա մի տեղ, ուր ավերմունքն այնքան մուտք չէ գործել, և ուր ազգային անկախության կտրիճ վոզին կենդանի յե մնացել քիչ ու շատ, – մեր պատմության մեջ հիշվում են Սասունը և Տորոսի լեռները՝ Վանա լճի հարավային կողմերում... ազգային ժողովրդական բանաստեղծության կենտրոն են հանդիսանում այդ կողմերը, վորոնց հայ բնակիչների մեջ պատում են թե նոր հորինված և թե հնուց ավանդված շատ յերգեր և վեպեր: *Սասունցիք ունեցել են իրանց վեպերի համար նյութ, վորովհետև նրանք հերոսական կոիվներ են Կովել թուրքերի ու թաթարների դեմ:* Սասունցիք և Մոկացիք պահել են իրանց բանաստեղծական լեզուն, վորովհետև, թուրքի ազդեցությանը շատ չեն յենթարկվել, նրանք պահել են իրանց հին վեպերը, վորովհետև իրանց հայրենիքումն են մնացել և շնորհիվ իրանց յերկրի ամուր դրության, առանձնացած կյանք են վարել և պահպանել են ազգային առանձնությունները» (ընդգծումը՝ Մ. Արեղյանի):⁶⁸

Էպոսի ծննդավայրի, բնօրրանի այս հիմնականում ճիշտ բնորոշումից հետո Մ. Արեղյանը, անցնելով ժամանակի հարցին, արձանագրում է, որ «Թոռնիկի մահից հետո (XI դարի վերջին քառորդում – Հ.Թ.) Սասունը շարունակում է իր անկախության պաշտպանությունն և քաղաքական հարաբերությունները հարևան երկրների հետ մինչև XIII դարի կեսերը: Ճիշտ է, այդ մասին ընդարձակ պատմական տեղեկություններ չունենք, բայց այն հանգամանքը, որ «Սասնա ծռերի» մեջ հաճախ հիշատակվում են հարևան պետությունները, օրինակ՝ Հաղորեջանի, Խլաթի, Մուսուլի, Ջզիրա և այլ թագավորություններն ու քաղաքները՝ Օրդուկյանք (1101-1312), Չանգյանք (1127-1250), Շահի Արմեններ (1100-1207) և Ատրպատականի Աթաբեկությունը (1136-1225), այդ պարզ ցույց է տալիս, որ Սասունը նման հարաբերություններ ունեցել է իր հարևանների հետ»:⁶⁹

Էպոսի տարբեր պատումներում հաճախակի հիշատակվող ու կրկնվող տեղանունների, անձնանունների, փոխհարաբերությունների հիման վրա Մ. Արեղյանը հանգում է այն տեսակետին, որ «վեպն իսկապես իր հաստատուն կերպարանքն ստացել է մինչև XIII դարի կեսը և այնուհետև խոշոր և ելական փոփոխության չի յենթարկվել»,⁷⁰ կամ թե «...վեպի մեջ հիշված

68 Մանուկ Արեղյան, Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին. – Սասունցի Դավիթ. հոբելյանական ժողովածու, նվիրված եպոսի 1000-ամյակին, Յերևան, 1939, էջ 21:

69 Մ. Արեղյան, Կ. Մելիք-Ոհանջանյան, Ներածություն. – Սասնա Ծռեր. խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Արեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մ.-Ոհանջանյանի, Ա. հատոր, Յերեվան, 1936, էջ ԻԱ-21:

70 Մանուկ Արեղյան, Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին, էջ 50:

իշխանություններն ու հատուկ անուններն ապացուցում են այն, որ մեր ժողովրդական վեպը հիմնականում կազմվել է մինչև XIII դարի կեսերը»:⁷¹

Մեր էպոսի առաջին ուսումնասիրողներից ուսանող Գր. Խալաթյանը, որը խանդավառությամբ ձեռնամուխ է լինում Տարոնցի Կրպոյի պատումի ուսերեն թարգմանությանը դեռևս Գարեգին Սրվանձոյանի կենդանության օրոք և կապվում է վերջինիս հետ՝ իրեն համար անհասկանալի գավառական բառերի բացատրությունը խնդրելով Սրվանձոյանից, սկզբում կարծում էր, որ «վեպի սկզբնական խմբագրությունը» կատարվել է «քրիստոնեության առաջին դարերում», բայց հետագայում ճշտում է իրեն և գրում է, թե «վեպը, գոնե իր հիմքով, վերաբերում է, ինչպես յենթադրում եմ, հազիվ XI–XII դարերի ուշ ժամանակին, այսինքն՝ այն դարաշրջանին, յերբ գործողության տեղում, Սասունում, իշխում էին դեռ հայ իշխաններ, իբրև բնիկ տերեր, ինչպիսին են նրանք մեր պատմվածքի մեջ»:⁷² Բերելով Գր. Խալաթյանի այս տողերը՝ Մ. Արեղյանը գոհունակությամբ նշել է, որ «...ուրեմն, Գ. Խալաթյանը յուրացրել է հողավածիս հեղինակի տեսակետը, վոր նա արտահայտել էր 1889 և 1892 թվականներին»:⁷³

Այս բոլորից հետո, երբ հարցը հասնում է էպոսի գլխավոր հերոսի, հայ ժողովրդի բոլոր դրական գծերի մարմնավորումը հանդիսացող, իսկապես ազգային-ժողովրդական հերոսի՝ Դավթի պատմականությանը, ապա Մ. Արեղյանը, հակառակ իր իսկ հետազոտություններից բխած այն եզրակացությանը, «որ մեր ժողովրդական վեպը հիմնականում կազմվել է մինչև XIII դարի կեսերը», ամբողջ չորս դար հետ է գնում և մատը տանում ու դնում է ապերախտ, ուխտադրուժ, հավատափոխ, դավաճան, զորեղների ձեռքին խաղալիք մի ողորմելի հայ ֆեոդալի վրա, ինչպիսին Բագարատ Բագրատունու կրտսեր որդի Դավիթ Բագրատունին է:

Եվ այստեղ ցավալին այն է, որ Մ. Արեղյանը շատ լավ գիտե էպոսների ծագման մասին հանրահայտ թեզը և մեզնից շատ ավելի հակիրճ և շատ ավելի համոզված ասել է, թե «Դիցազնական և պատմական վեպերի համար հարկավոր է իրական կյանքից վերցրած սխրագործական նյութ, հարկավոր են ժողովրդական հերոսներ, ...վորոնք արժանի լինեյին ժողովրդի ընդհանուր սրանչացմանը և ժողովուրդին իր հափշտակության բռնություններում հիանալով պատմեր և յերգեր նրանց արարքների մասին» (ընդգծումը՝ Մ. Արեղյանի):⁷⁴

71 Մ. Արեղյան, Կ. Մելիք-Ոհանջանյան, Ներածություն. – Սասնա Ծռեր, հ. Ա, էջ ԻԲ-22, ԻԳ-23:

72 Մանուկ Արեղյան, Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին, էջ 30:

73 Նույն տեղում:

74 Նույն տեղում, էջ 20-21:

Այս բանն իմանալուց և հայտնելուց հետո Մ. Արեղյանն իրեն դնում է շատ անհարմար կացության մեջ: Նրան ուրիշ ոչինչ չի մնում անելու, բացի միայն աղավաղելուց պատմական իրողությունները, որպեսզի հայոց պատմության ամենաանփառունակ, ամենատխուր դեմքերից մեկի՝ հավատափոխ և դավաճան Բագարատ Բագրատունու հավատափոխ և ուրացող որդուն՝ արաբական օրինտացիա (կողմնորոշում) ունեցող Դերենիկ Արծրունու ձեռքի խաղալիք փեսային՝ Դավիթ Բագրատունուն, մատուցի որպես էպոսի հերոս: Նա խոսում է IX դարի երրորդ քառորդի իրադարձությունների մասին, երբ Բաղդադը քանիցս արշավում է անհնազանդ Տարոն-Խույթի վրա: Այդ իրադարձությունները հայտնի են հայոց պատմության մեջ և կապված են Խուրեցի Հովնանի անվան հետ, որն այդ պայքարի ամենահերոսական դեմքն է և ամենից ավելի անսկուն պահեց իրեն գերության մեջ ու հերոսաբար զոհվեց՝ մահը գերադասելով հավատափոխությունից, որ նշանակում էր դառնալ Բաղդադի հավատարիմ գործակալը խռովահույզ Խույթում: Այս ամենը քաջ հայտնի է Մ. Արեղյանին, բայց այնքան, որքան նա մատը մի անգամ արդեն դրել է Դավիթ Բագրատունու վրա, ապա հարկադրված է որևէ ստվեր գցելու Հովնանի վրա և առաջնության դափնին տալու իր գտած Դավթին: Մ. Արեղյանն այս առթիվ գրում է. «Այս գործին գլուխ եյին կանգնել Բագարատի յերիտասարդ վորդիները, Աշոտ և Դավիթ և ավելի ևս Խուրեցի Հովնանը, վոր նրանց հորեղբոր վորդին էր, *ինչպես 1936 թ. պարզվեց արաբական աղբյուրներից*»:⁷⁵

Մ. Արեղյանը շատ լավ գիտե, որ Խուրեցի Հովնանը Բաղդադում մահապատժի ենթարկվեց հավատափոխությունից կտրականապես հրաժարվելու համար, իսկ Աշոտն ու Դավիթը ոչ միայն մահապատժի չենթարկվեցին, այլև ազատ արձակվեցին ու իրենց հայրենական կալվածքներն ուղարկվեցին միմիայն նրա համար, որ հետևելով իրենց հոր օրինակին, ուրացել էին քրիստոնեությունն ու ընդունել էին մահմեդականություն: Այս ամենը գիտենալով հանդերձ, Մ. Արեղյանը գրում է. «Հովնանն իր լեռնականներով դիմադրում է, աշխատում է ազատել գերիներին, բայց վերջը նա էլ բռնվում է և շղթայված ուղարկվում Բաղդադ: Այստեղ նրան սպանում են, իսկ Աշոտն ու Դավիթը տարիներ հետո վերադառնում են. մեծ յեղբայրը դառնում է «իշխան Տարոնյ»»:⁷⁶ Իսկ կրտսեր եղբոր՝ Դավթի մասին «Թովմայ Արծրունին, – շարունակում է Մ. Արեղյանը, – ...պա-

տահաբար միայն, մի քանի անգամ հիշում է նրան՝ անվանելով *Դավիթ արքա*, կամ լոկ՝ *Արքա*: Նա կին է առնում Գրիգոր Դերենիկ Արծրունու քույր Մարիամին: Դավիթ Արքան իր յեղբոր տեղ դառնում է Տարոնի և Սասունի իշխան (887-894 թ.)» («Դավիթ արքա» և «Արքա» բառերի ընդգծումը՝ Մ. Արեղյանի):⁷⁷

Մ. Արեղյանն ամբողջ կես դար մեր ուսուցիչն է եղել, և մենք նրանից պիտի իմանայինք, որ Թովմա Արծրունին ամենևին էլ *պատահաբար* չի խոսել Բագարատ Բագրատունու և նրա որդիների մասին, այլ մի ամբողջ գլուխ է նվիրել դավաճան և ուրացող Բագարատ Բագրատունուն՝ նշավակելով նրա օրինակը և հերքելով հավատափոխության նրա հորդորը (գլուխ է. «Վասն հերձուածոյն Բագարատայ Բագրատունոյ, որ ի վերայ ուրացութեանն գ-Քրիստոս յաւել եւ գայս ի կործանումն բազմաց: Ընդդիմադրութիւն սակաւոր»⁷⁸): Թովմա Արծրունին, որքան այդ անհրաժեշտ է, խոսել է նաև Դավիթ Բագրատունու մասին. նրա մեղքը միայն այն է, որ նա չի իմացել, թե մի հազարամյակ հետո Մ. Արեղյանը և, նրա օրինակին հետևելով նաև ուրիշներ, հարկ կունենան ազգային հերոս հռչակելու այդ փուլ ֆեոդալին, որից ընդամենը մեկ դար հետո ապրելով՝ Թովմա Արծրունին ամենևին չի լսել, որ հայ «ժողովուրդն իր հափշտակության րոպեներում հիանալով պատմեր և երգեր» նրա արարքների մասին: Թովմա Արծրունին այն է միայն արձանագրել, որ թշնամություն կար Տարոնի տեր Աշոտ Բագրատունու և Արծրունյաց տան տեր Գրիգոր Դերենիկ Արծրունու միջև, և որ վերջինս իր քրոջը՝ Մարիամին կնության տալով Աշոտի կրտսեր եղբորը՝ հավատափոխ Դավթին, զորքով օգնում է, որ իր փեսան, այսինքն՝ փաստորեն իր ձեռքի խաղալիքը, Բաղդադի պաշտպանությամբ և հովանավորությամբ Տարոնի իշխանապետությունը խլի ավագ եղբորից, որի պաշտոնի «կյուրապաղատ» անունը ցույց է տալիս, որ նա արդեն հունական օրինտացիայի մարդ էր դարձել: Հիշենք, որ այդ նույն ժամանակներում արաբական փոքրիկ ամիրայություն կար Տարոնին սահմանակից Խլաթում՝ Կայսիկների ձեռքին: Այդ նույն ժամանակներում քրդերը հարավից շարժվում էին դեպի հյուսիս, դեպի Հայաստան, և Բաղդադի գիտությամբ ու հովանավորությամբ Մրվանյան քրդերը գրավեցին թուլացած Կայսիկների Խլաթը ու ձգտում էին իրենց ազդեցությունը տարածել ամբողջ հայաբնակ

77 Նույն տեղում, էջ 52:

78 Թովմայի վարդապետի Արծրունոյ պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 267-273:

75 Նույն տեղում, էջ 51:

76 Նույն տեղում:

Տարոն-Սասունի վրա, այնինչ Բյուզանդիոնը Մրվանյան քրդերին հետ էր մղել Դիարբեքի շրջանը և իր տիրապետությունն էր հաստատել Խլաթի վրա:

IX և X դարերում Բաղդադի և Բյուզանդիոնի միջև տևական պայքար էր մղվում նաև Տարոն-Տուրուքերանի վրա իրենց գերիշխանությունը հաստատելու համար, և Դերենիկ Արծրունու ու Աշոտ Բագրատունու վերոհիշյալ կռիվը ամբողջ երկու և կես դար տևած այդ պայքարի էպիզոդներից (դրվագներից) մեկն է, իսկ Աշոտի կրտսեր եղբայր Դավիթը ավագ եղբորից իշխանապետությունը խլելու համար նրա նենգ հակառակորդի հետ դաշնակցած մի սովորական, շարքային ֆեոդալ էր, որը երբեք չէր կարող ժողովրդական էպոսի հերոսի թեկնածու դառնալ:

Ահա թե ինչ է գրում Լեոն այդ Դավթի մասին. «Վերադառնալով գերությունից, երկու եղբայրները վերստացան իրենց հայրենի ժառանգությունը, և Աշոտը, իբրև ավագագույնը, դարձավ Տարոնի իշխանապետ՝ կյուրապաղատի տիտղոսով: Դավիթն ամուսնացավ Դերենիկի քույր Մարիամի հետ, և ահա այս հանգամանքն առիթ դարձավ, որ կռվարար և կամակոր Դերենիկը բռնի ջանքեր անի՝ Տարոնի իշխանապետությունն Աշոտից խլելու և իր փեսային տալու համար: Այս բանը հաջողվեց նրան, բայց, իհարկե, թշնամական հարաբերություններ ստեղծեց նրա և Աշոտ կյուրապաղատի միջև»:⁷⁹

Այստեղ Դավիթը սոսկ խաղալիք է իր եռանդուն աներոջ՝ Դերենիկ Արծրունու ձեռքին, բոլորովին գուրկ ինքնուրույնությունից, տոհմի պատիվը պահելու՝ ֆեոդալներին հատուկ ինքնասիրությունից:

Դառնանք սկզբնաղբյուրին: Թովմա Արծրունին սույն այս Դավթի մասին. «Վասն ունելոյն Դերանկին գկորապաղատն իշխան Տարունոյ, եւ գԴավիթ, որ արքայն ճանաչէր՝ իշխանացուցանելոյ» գլխում, պատմելով, որ Դերենիկ Արծրունին արաբների առաջ կյուրապաղատ Աշոտին վատաբանելուց հետո, ազատագրուող զորքով Աշոտի կրտսեր եղբորը, այսինքն՝ իր փեսա Դավթին դարձնում է Տարոնի իշխան, հաղորդում է՝ «Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն գնա գայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ գԴավիթ գեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. վասն նորին իրաց ասեն կալաւ, գնա հաճոյանայր կացուցանել իշխան Տարունոյ, որ ասի Հայոց իշխան, որ և եղև իսկ»:⁸⁰

79 Լեոն, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1947, էջ 519:

80 Թովմայի վարդապետի Արծրունոյ պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 356:

Ուրացող հոր արժանավոր զավակ, նույնպես ուրացող Դավիթ Բագրատունին իր ավագ եղբորից Տարոնի իշխանապետությունը խլելուց հետո թեև յոթ տարի իշխում է այնտեղ, բայց անգամ Արծրունիների տան աչառու ճանաչված պատմագիր Թովմա Արծրունու կողմից հիշատակության արժանի ոչ մի գործ չի կատարում այդ յոթ տարիների ընթացքում («որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս Է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն»⁸¹):

Հակառակ այս ամենին, այնուամենայնիվ, ըստ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի. «վեպի կենտրոնական դեմքը, գլխավոր հերոսը դարձել է Դավիթ Բագրատունին»:⁸² Բայց ինչու՞, ինչպե՞ս, որ արժանիքի համար: Չէ՞ որ նա պարսավանքի արժանացած ուրացողի որդի էր, և ինքն էլ՝ ուրացող: Ինչու՞ պիտի վեպի հերոս չդառնար Խուրեցի Հովսանը, որն իրոք արժանի էր այդպիսի պատվի: Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը, որոնց քաջ ծանոթ են հայերեն սկզբնաղբյուրները, ոմն անարժան ֆեոդալի այդ պատվին արժանացնելուց հետո, հարկադրված են դիմելու միայն անգոր «անշուշտի» օգնության: Նրանք գրում են. «...նա, *անշուշտ*, իր *անձնական սխրագործությունների* շնորհիվ դեռ կենդանության օրով, երբ Բագրատունիները դեռ թագավորական գահ չէին բարձրացել, *ժողովրդական զանգվածների* կողմից արժանացել էր «արքա» կոչմանը»:⁸³

Ինչպես տեսանք, «անշուշտ» բառի գործածությունը հիմնավորված չէ պատմագրական որևէ, թեկուզ և անստույգ կամ կողմնակի, տեղեկությամբ, իսկ ինչ վերաբերում է վերոհիշյալ Դավիթ Բագրատունու «արքա» տիտղոսին (1. «Վասն ունելոյն Դերանկին գկորապաղատն իշխան Տարունոյ, և գԴավիթ, որ արքայն ճանաչէր՝ իշխանացուցանելոյ»,⁸⁴ և 2. «հրամայեաց Դերանկին ազատագրուող զորացն իւրոցն դառնալ գկնի *արքային* տիրել բոլոր աշխարհին հանդերձ ամրոցօքն»⁸⁵), ապա այս երկու վկայությունները ոչ մի հիմք չեն տալիս հայտարարելու, որ Դավիթ Բագրատունին «իր անձնական սխրագործությունների» համար «ժողովրդական զանգվածների կողմից» «արժանացել էր» «արքա կոչմանը»:

Հարկ չկա հիշեցնելու, որ «արքա» տիտղոսն առհասարակ ժողովուրդը չէ, որ տալիս է: Մ. Աբեղյանին և Կ. Մելիք-Օհանջանյանին շատ լավ

81 Նույն տեղում, էջ 356:

82 Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ներածություն. — Սասնա Շուեր, հ. Ա, էջ ԻԳ-23:

83 Նույն տեղում:

84 Թովմայի վարդապետի Արծրունոյ պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 354:

85 Նույն տեղում, էջ 356:

հայտնի է, որ մանավանդ հետսելչուկյան ժամանակաշրջանում «արքա», «թագավոր» տիտղոսները շատ էին էթանացել, որ մի չնչին հողապատանի տեր մնացած որևէ հայ ֆեոդալ իրեն մեծարում էր այդ տիտղոսներով: Հայտնի է, որ XII դարում Վանից քիչ հյուսիս ընկած միայն մեկ բերդի՝ Ամիլի տեր Խեղենիկն իրեն մեծարում էր «արքաուն» տիտղոսով: փույթ չէ, թե չկարողացավ իր ձեռքին պահել այդ մեկ բերդն իսկ և 1165 թվականին կամովին ընդունեց Խլաթի Շահ-ի-Արմենների հովանավորությունը՝ դառնալով նրանց վասալը: «Արքաուն» տիտղոսը շոյում էր նրա ինքնասիրությունը՝ հիշեցնելով, որ նա Արծրունիների գարմերից է:

Կրկնում ենք, Արծրունիների տան աչառու պատմագիր ճանաչված Թովմա Արծրունին ոչ մի դրական խոսք անգամ չի ասում Արծրունիների տան այս փեսայի ո՛չ ներկայի և ո՛չ էլ անցյալի մասին, թեև ժամանակի տեսակետից նա այնքան էլ հեռու չէ նրանից: Իսկ եթե Արծրունիների այդ փեսան վեպի գործող անձ, առավել ևս՝ հերոս դարձած լիներ, ապա Թովմա Արծրունուն դժվար թե անհայտ մնացած լիներ այդ կարևոր հանգամանքը:

Պրոֆ. Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը գտնում են, որ ««Սասնա ծռերի» պատմական միջուկը IX դարի պատմական խոշորագույն դեպքերն են և հարկահանության պատճառով արաբների դեմ մղած երկարատև կռիվը... Բաղդադի խալիֆան, որին պատումների մեծ մասում փոխանակել է Մսրա Մելիքը, վեպի մեջ էլ վիպական ձևով կատարում է նույն դերը, ինչ որ տեսանք իրական պատմության մեջ»⁸⁶:

Եթե պատումների մեծ մասի մեջ ամեն կերպ հոլովվում ու կրկնվում է Մսրա Մելիք, այլ ոչ թե Բաղդադի խալիֆա անունը, ուրեմն չի կարելի հաստատել կերպով անսրենել Մսրա Մելիքը: Իսկ ինչ վերաբերում է «հարկահանության պատճառով արաբների դեմ մղած երկարատև կռիվը» փաստարկմանը, ապա թույլ տվեք հիշեցնել, որ էպոսի մեջ Սասունից, այն էլ յոթ տարվա ուշացումով, գանձվող հարկի մասին միայն մեկ հիշատակություն կա, որը գրեթե նույնությամբ կրկնվում է գրեթե բոլոր պատումների մեջ, սակայն քանիցս հիշատակություն կա, որ հերոսի հայրը իշխում էր Մսրա վրա, որ Մսրա Մելիքի զորքերը ժամանակին Դավթի հորն էին ծառայել, քանիցս հիշատակություն կա Մսրից հարկը հավաքելու մասին, որ Մսրա մեծամեծները ժողովի են նստում ու մտածում, թե ինչպես անեն, որ ազատվեն Սասունին տրվող հարկից: Պատմության մեջ Սասունը երբեք հարկապու չի եղել Մսրին, այլ ընդհակառակը, Մսրը երեսուններկու տարի շարունակ (1140-

1172 թթ.) հարկ է վճարել սասունցիներին, այսինքն՝ ռոմիկ է վճարել Եգիպտոսում ծառայող սասունցի հայ զորքին, իսկ դրանից առաջ շուրջ կես դար (1074-1121 թթ.) գտնվել է առերևույթ մահմեդականություն ընդունած հայագրի վեզիրների միահեծան իշխանության տակ, որոնց զորքը կազմված է եղել քրիստոնեությանը հավատարիմ մնացած հայերից, իսկ 1135-1137 թթ. և 1139-1140 թթ. Մսրում իշխել է բացառապես հայ զորքի վրա հենվող քրիստոնյա վեզիր Վահրամ Պահլավունին:



X դարում Բաղդադի խալիֆայության գերիշխանության թուլացման ժամանակաշրջանում, երբ Բագրատունիները զորեղանում էին ու աստիճանաբար կիսանկախություն էին նվաճում, ազնվականության դեմ հայ գյուղացիության սոցիալական պայքարը, որքան մեզ հայտնի է, դեռևս պարփակվում էր կրոնական գաղափարախոսության շրջանակներում և չէր կարող հասնել ու չէր հասնում ազգային-ազատագրության աշխարհիկ գաղափարախոսությանը: Գրականության մեջ ևս թեև արդեն մուտք էին գործում աշխարհիկ թեմաներ, բայց դրանք էլ դեռևս արծարծվում էին կրոնական շղարշով: Ժողովրդական, գերազանցապես աշխարհիկ էպոսի կերտման համար IX-X դարերում դեռևս համապատասխան մտայնություն (умонастроение) չէր գոյացել պատմականորեն, և դրա համար էլ Խուրեցի Հովնաթը չարժանացավ այդ փառքին: Այդպիսի մտայնություն գոյացավ միայն սելջուկյան արշավանքներից հետո՝ մոնղոլների արշավանքների առաջին ժամանակաշրջանում, երբ, մի կողմից, ահավոր ցնցումների ու մեծ տեղաշարժերի հետևանքով ընդարձակվեցին հայ ժողովրդի շփումները մոտիկ ու հեռավոր երկրների ու ժողովուրդների հետ, իսկ, մյուս կողմից, նոր ուժով վերսկսվեց X դարում սկիզբ առած, բայց ընդհատված վերածննդի շարժումը մանավանդ գրականության մեջ: Միաժամանակ շրջադարձային մեծ փոփոխություն տեղի ունեցավ հայոց պատմության մեջ: Մինչ այդ օտարը բուֆերային Հայաստանի վրա իր գերիշխանությունը հաստատում էր հեռվից. նվաճում էր երկիրը, զորք էր թողնում որոշ կետերում, իսկ երբեմն զորք էլ չէր թողնում, այլ միայն ստեղծում էր կողմնակից հայ նախարարների տեղական խմբավորում: Հայ նախարարների տեղահանման կամ նրանց հողերի գրավման դեպքեր համարյա չէին եղել: Արաբների համար Հայաստանը շատ ցուրտ երկիր էր, և նրանք հրաժարվեցին հայ նախարարությանը ոչնչացնելու իրենց նախնական փորձից: Այսինչ թուրքերը ոչ միայն տե-

86 Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ներածություն. — Սասնա ծռեր, հ. Ա, էջ ԻԳ-23:

դահան արին հայ ժողովրդի ստվար հատվածները, քեցին հայ նախարարությունները, այլև հոծ զանգվածներով նստեցին երկրի առավել բարեբեր հարթավայրերում: Ոչ միայն իրենք նստեցին, այլև հնարավոր դարձրին, որ քրդերն էլ հարավից բարձրանան հայկական լեռնաստան: Սակայն սելջուկները, խորտակելով Բյուզանդիոնի քաղաքական ուժը, վերացրին նաև նրա մշակութային գերուժությունը Հայաստանում, նրա կլանող, ասիմիլացնող ազդեցությունը հայ ժողովրդի վրա: Այսպիսով, քանի գոյություն ունեին հայ հին նախարարական տները, այսինքն՝ *քանի Հայաստան երկրում իշխում էր հայկական ֆեոդալիզմը*, այնքան ժամանակ ժողովրդական շարժումները *չէին կարող համազգային բնույթ ստանալ*, որքան էլ երկարատև և ծավալուն լինեին այդ շարժումները, որքան էլ բուն ժողովուրդը, անգամ ֆեոդալներից անկախ, ոտքի ելներ արաբական գերիշխանության հարկային քաղաքականության դեմ: Այդ շարժումները ազգային ինքնագիտակցությամբ տոգորվելուց առաջ դեռ պետք է որոշ ժամանակ հանդես գային կրոնական բարեփոխությունների դրոշի տակ: Համազգային դառնալու, ազգային-ազատագրության գիտակցությամբ տոգորվելու համար պետք է որ վերանար հայ ժողովրդին մասնատող հայկական ֆեոդալիզմը: Պատմականորեն այդ դերը կատարեցին սելջուկները, այն էլ ինչպես: Սելջուկները արյան մեջ հեղեղելով հայ երկիրը:

1. Վերացրին հայ հին նախարարական տները հայկական բնօրրանում:
2. Ընդհանուր անբարենպաստ իրադրություն ստեղծեցին ամբողջ հայ ժողովրդի համար նրա դարավոր հայրենիքում:
3. Բայց և վերացրին բյուզանդական ասիմիլյացիայի արդեն ռեալ (իրական) դարձած վտանգը:
4. Հայ ժողովրդի համար ստեղծեցին իր ազգային ընդհանրական շահերն ու նպատակները, իր ազգային լեզվին, գրականությանը, կուլտուրային (մշակույթին) ու կրոնին ապավինելու միջոցով ազգայնորեն համախմբվելու և արդեն իր երկրի ներսում նստած թշնամուն համախումբ հակադրվելու պատմական նոր իրողությունը:

Միայն այս նոր պայմաններում, երբ հայրենի ֆեոդալիզմը գրկվել էր քաղաքական անկախությունից, երբ վերացել էր հունական կլանող ու դիմազրկող ուժացման վտանգը, հնարավոր էր ազգային-ազատագրական, այսինքն՝ համաժողովրդական մտայնության քարոզումը: Դրա համար էլ սելջուկյան արշավանքներից հետո հայ ժողովրդի ազատագրական պայ-

քարն ստացավ ոչ միայն նոր բովանդակություն և նոր ձև, այլև այդ նոր բովանդակության համապատասխան տոգորվեց նաև նոր, համաժողովրդական, ազգային բնույթով: Նման պայմաններում, երբ կրոնամիստիկական մտայնությունն արդեն սկսում էր պարտության մատնվել, երբ հայ պետականության դարավոր կրողներն (նախարարները) ասպարեզից գրեթե իսպառ վերացել էին, և բուն երկրում արդեն նստած օտար իշխողներից հայրենիքն ազատագրելու համար պետք է կազմավորվեին նոր ուժեր, որոնք արդեն չէին կարող ոչ թե չհենվել, այլ անգամ չսերվել ժողովրդից՝ համաժողովրդական, ազգային բնույթ չտալով իրենց նախաձեռնությանը, արդեն համապատասխան նպաստավոր հող էր ստեղծվում հայ ազգային, համաժողովրդական էպոսի կերտման համար:



Հայ ժողովրդի մեծ էպոսի վերջնական ձևավորումը իրոք տեղի է ունեցել XIII դարում և սերտորեն առնչված է հետսելջուկյան շրջանի վայրիվերումների, տեղահանությունների և այլ քաղաքական իրադարձությունների հետ: Էպոսի մեջ Մարը Մըսը է, Եգիպտոսը՝ Նեղոսի ափերին, և էպոսի մեջ արտացոլված ազատագրական պայքարն ուղղված է ոչ թե արաբների դեմ, այլ քրդերի և ղուզի թուրքերի դեմ, որոնք Մարա մելիք Սալահեդդինի և նրա հաջորդների իշխանության տակ գերիշխում էին Սիրիայում ու Եգիպտոսում և ուզում էին իրենց գերիշխանությունը հաստատել նաև Խլաթի թագավորության տարածքի վրա: Այսպիսով, հայ ժողովրդի ազգային էպոսը հենց սկզբից ուղղված է եղել հայ ժողովրդին դարեր շարունակ այնքան չարիք գործած քրդերի և ղուզի թուրքերի դեմ:

Սելջուկյան արշավանքներից հետո մինչև մոնղոլական արշավանքներն ընկած ժամանակամիջոցում, մոտավորապես XI դարի կեսերից մինչև XIII դարի կեսերը, երբ հիմնովին փոխվեց Մերձավոր Արևելքի ոչ միայն քաղաքական, այլև ազգագրական քարտեզը, երբ հայ ժողովուրդն իր բազմադարյան բնօրրանում իսպառ կորցրեց իր քաղաքական անկախությունը և ծայր առավ ու հարատևեց նրա մասսայական (զանգվածային) արտագաղթը, երբ նրա ստվար զանգվածները դարձան օտար հորիզոններում ապահով անկյուն ու բախտ որոնող տարագիրներ, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան մի շարք ուշագրավ երևույթներ, որոնք մերթ *ուղղակի*, մերթ *անուղղակի*, կապված էին Պահլավունիների ճյուղավորված ու ծավալուն տան հետ:

Այսպես.

1. Եգիպտոսի Ֆաթիմյան Մուսթանսիր խալիֆը հարկադրված էր դիմելու առերևույթ խալամ ընդունած հայ գորապետների (սրանց քրիստոնյա մնացած զորքի հետ միասին)՝ եգիպտական ծառայության վերցնելու քայլին: Բաղրը և նրա որդի ու աջ բազուկ Շահնշահը 1063 թվականին մտան եգիպտական ծառայության:

2. Եգիպտական վարձկան զորքի էմիրների խոռվության հետևանքով Մուսթանսիր խալիֆն այնպիսի օրի հասավ, որ հարկադրված էր տասը տարի հետո՝ 1073-1074 թվականներին, ամբողջ հույսը դնել միայն ու միայն հայազգի Բաղրի ու Շահնշահի և նրանց հայ զորքի վրա:

3. Բաղրն ու Շահնշահը հեքիաթային արագությամբ ոչնչացրին խոռվություն բարձրացրած էմիրներին և Մուսթանսիրին վերահաստատեցին իր գահի վրա: Բաղրն ու Շահնշահը դարձան երկրի փաստական տերերը, բայց *պեյրական հեղաշրջում չկատարեցին, այլ էլ* ավելի ամրապնդեցին Ֆաթիմյան խալիֆների տիրապետությունը Մսրում:

4. Բաղրը, հենակետ որոնելու շահից ելնելով, մեծ հովանավորություն ցույց տվեց Եգիպտոս հասած հայ գաղթականներին և, սերտ կապ պահպանելով Պահլավունիների հետ, Պահլավունի կաթողիկոսին Եգիպտոս հրավիրեց: Նա ցանկանում էր հայ ժողովրդի կրոնական կենտրոնը փոխադրել Գահիրե, որպեսզի հայերը ավելի մեծ խմբերով գաղթեին ու մնային Եգիպտոսում:

5. XI դարի վերջին տասնամյակում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի վերադարձից հետո Պահլավունիների մեծ, ծավալուն, բայց անհող տան աշխարհիկ անդամները, Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, շուրջ քսան հազար հետևորդներով անցան Եգիպտոս և հաստատվեցին քրիստոնեական Նուբիայի սահմանագլխին:

6. Եգիպտահայության հարստացմանը նախանձող տարատեսակ տարրերը 1121 և ապա 1131 թվականներին փորձեցին սեղմել եգիպտահայության նորանվաճ իրավունքները Նեղոսի ափերին:

7. 1135-1137 թվականներին, եգիպտահայության դեմ սկսված հալածանքներին վերջ դնելու համար, Վահրամ Պահլավունին իր հայկական զորքով Նուբիայի սահմանագլխից եկավ, գրավեց Գահիրեն և քրիստոնյա մեծ վեզիր դարձավ մահմեդական երկրում:

8. 1137 թվականին Վահրամ Պահլավունին, չկարողանալով ընդդիմադրել Ռյուդվան Վալախշի էմիրի գերազանց ուժերին, քաշվեց Եգիպտոս

սի հարավ՝ քրիստոնեական Նուբիային սահմանակից հայկական Ճերմակ վանքերը, որտեղ ուղիղ երեք և կես տարվա ընթացքում հայկական նոր զորք կազմակերպեց և նորից արշավեց Գահիրեի վրա:

9. 1140 թվականին վերստին գրավելով Գահիրեն և դրության փաստական տերը դառնալով՝ Վահրամ Պահլավունին, հետևելով Բաղրի օրինակին, *պեյրական հեղաշրջում չկատարեց*, ավելին, անգամ մեծ վեզիր չդարձավ, իշխանությունը նորից թողեց օրինական խալիֆին, բավարարվեց միայն գլխավոր խորհրդականի պաշտոնով, բայց հիմնեց կենտրոնական կառավարությունից ոռճիկ ստացող հայկական հատուկ զորք, որն իր գոյությունը պահպանեց ամբողջ 32 տարի (1140-1172):

10. Եթե չխոսենք Բաղրի և Շահնշահի հետ Եգիպտոս ժամանած հայ զորքի (Մատթեոս Ուռհայեցու՝ 1084 թվականի համար հիշատակած 30 հազար հայ զորքի) մասին, որ կարող է չափազանցություն կամ վրիպում լինել, ապա Ֆաթիմյանները 1140 թվականից սկսած ամբողջ 32 տարի շարունակ ոռճիկ են վճարել Վահրամ Պահլավունու հիմնած զորքին, որը շարունակաբար հավաքագրվում էր սասունցիներից: Ուրիշ խոսքով, Մսրը հարկ էր վճարում Սասունին:

11. 1172 թվականին դվինցի քուրդ Յուսուֆ բին Էյուբը, քրդական և դուգի թուրքական նոմադական ուժերի վրա հենվելով, պետական հեղաշրջում կատարեց Եգիպտոսում՝ վերջ տալով Ֆաթիմյանների խալիֆայությանը: Նա իրեն հռչակեց Եգիպտոսի թագավոր Մսրա Մելիք՝ կրոնական անունով վերանվանելով իրեն Սալահեդդին: Մսրա Մելիք Սալահեդդինը միաժամանակ ջախջախեց Եգիպտոսի հայ զորքը և կործանեց եգիպտահայ հարուստ գաղութը:

12. Խորտակված եգիպտահայ գաղութի և հատկապես ջախջախված հայ զորքի ողջ մնացած բեկորներն անասելի դժվարություններով, ողիսական արկածներով անցան, մի մասը՝ Հաբեշտան, իսկ մյուս մասը՝ Հայաստան (Թեղ-Բաշիր - Հոռմկլա և Սասուն):

13. Անհանգիստ Օրթոկյանները (1107-1312 թթ.), հաստատվելով ներկայիս Դիարբեքրի ու Խարբեքի վիլայեթներում, շարունակ ձգտում էին տիրանալ կիսանկախ Սասունին, որի լեռներն ամառային հիանալի արտատեղիներ էին Օրթոկյանների հոտերի համար: Օրթոկյաններն իրենց Բուրբադին էմիրի օրոք (1185-1200) դարձել էին Սալահեդդինի վասալները:

14. 1140-1172 թթ. շարունակաբար զորական համալրում տալով Եգիպտոսի հայկական զորքին՝ Սասունում մնացած Պահլավունի իշխանները

թուլացել էին և անկարող էին դիմադրություն ցույց տալու հարավից նրանց ներող Օրթոկյաններին: Այս հողի վրա 1165 թվականին նրանք կամովին ընդունեցին Խլաթի Շահ-ի-Արմենների սյուզերենությունը:

15. 1172 թվականից Եգիպտոսի հայկական գործի վերջնական պարտությունից հետո հյուսիս (Թել-Բաշիր - Հոռմկլա և Սասուն) վերադարձած աշխարհիկ Պահլավունիները մնացել էին անօթևան: Նրանք մերթ գրոհում էին իրենց իսկ տոհմի հոգևորական անդամների վրա՝ ցանկանալով խել նրանց աշխարհիկ չնչին տիրույթները, մերթ գանգատվում էին Սասունում մնացած իրենց մյուս ազգականներից, որոնք, համակերպվելով Շահ-ի-Արմենների վասալի իրենց դրության հետ, կայունացրել էին իրենց տնտեսական կյանքը: Պահլավունի ծագում ունեցող այդ իշխանները երազում էին նաև տիրանալ Շահ-ի-Արմենների գահին, որ հաստատված էր իրենց իսկ բնիկ երկրում:

16. 1185 թվականին՝ Սուրման II Երկարակյաց Շահ-ի-Արմենի մահվան տարին, շատերն էին ուզում տիրանալ անժառանգ շահի գահին: Խլաթի վրա արշավում էին հյուսիսից Փեհլևիները, հարավից՝ Սալահեդդինը, որի բանակում էին Օրթոկյանները՝ Բուրբադին էմիրի գլխավորությամբ: Ակնկալություններ ունեին մեռնող Շահի գորավար Բեկթեմուրը և անհող մնացած սասունցի իշխանները, որոնց հաջողվում է 1172 թվականի պարտության վրեժը լուծել Սասնո լանջերին:

17. Մարա Մելիք Սալահեդդինը Խլաթի վրա արշավելուց քիչ առաջ ապերախտություն էր ցույց տվել Մոսուլի տակ՝ Մոսուլի պաշտպանի մոր նկատմամբ, որը մի ժամանակ նրա տիրուհին էր եղել:

18. Մարա Մելիք Սալահեդդինի հայր Էյուբը Դվինից ամոթահար հեռացել էր սիրային արկածի ժամանակ ներքինացվելուց հետո: Իսլամի հին պատմագիրներն իր կենդանության օրոք իսկ սուրբ հռչակված Մարա Մելիք Սալահեդդինին համարում էին ո՛չ թե դվինցի, այլ իրաքցի: Եթե ճիշտ ընդունենք իսլամի հին պատմագիրների այդ պնդումը, ապա պիտի ընդունենք նաև այն, որ Մարա Մելիքն իրոք իր հոր հարազատ զավակը չէր, այլ ապօրինի ծնունդ:

19. Հայ հին նախարարական տների՝ Բագրատունիների և Արծրունիների ողջ մնացած զարմերը Կապադովկիայից ապաստանել էին Եդեսիա, որտեղ նախ հայկական, իսկ ապա խաչակիրների իշխանություն կար մինչև 1144 թվականը՝ Եդեսիայի եղերական անկումը, որից հետո նրանք ուզեին-չուզեին, պիտի ապաստանեին Սասուն՝ Խլաթի գերիշխանության տակ: «Ազ-

նանց որդիների» միակ ապաստանը Սասունն էր: Ինքնուրույնության հասնելու համար նրանք առաջին հերթին պիտի կարողանային հաղթահարել Խլաթի Շահ-ի-Արմեններին, ավելի ճիշտ՝ նրանց ռազմաշունչ գորավար ու ապա շահ Բեկթեմուրին՝ իշխան երկաթին (այլաբանորեն՝ Ջան-փուլադին):

20. Բեկթեմուրից 1187 թվականին պարտված Հեթում և Շահնշահ եղբայրները, որոնք հայրական գծով Մամիկոնյան էին համարվում, իսկ մայրական գծով՝ Պահլավունի էին, 1189 թվականին անցնում են Կիլիկիա, փեսայանում արքայական տանը, ապա սպանվում Լևոն Մեծի հրամանով: Սա իր ժամանակին դիտվել է որդեսպանություն:

21. Շահ-ի-Արմենների Խլաթի թագավորության տարածքը հնուց անտի կոչվում էր, ըստ հայ պատմագիրների, Հայոց իշխանություն, Հայոց տուն, ըստ արաբ պատմագիրների՝ Հայաստան: Առաջին սելջուկ Սուրմանը, գրավելով այդ տարածքը և հիմնելով իր դինաստիան, պատահաբար չէր իրեն անվանել Շահ-ի-Արմեն (Հայոց թագավոր): Իրենց բանակում ստվար հայ զորք ունեցող Գանձակի Փեհլևիները (1185 թվականին) և վրաց Բագրատունիները (1209 թվականին) պայքարում էին, որ Հայոց տունը չընկնի հարավից եկող քրդական իշխանության տակ: Երկու դեպքում էլ պայքարը վերջանում է հարսանեկան հանդեսով, ինչը չէր կարող ուրախալի չլինել Խլաթի թագավորության հոծ մեծամասնությունը կազմող հայ բնակչության համար:

22. Այդպիսի խնամիական կոմպրոմիսի (փոխհամաձայնության) հետևանքով 1209-1210 թվականներին Խլաթ հարս է գալիս Իվանեի դուստր, Ավագ գորավարի քույր, վրաց Ռուզուդան թագուհու մտերիմ ընկերուհի Թամթան, որին հետագայում վիճակվում է այդ նույն գահի վրա երկու ամուսին փոխել, գերի տարվել մոնղոլների երկիրը, Համադուլա իշխանի ընկերակցությամբ վերադառնալ և ինքնիշխան կառավարել երկիրն ավելի քան մեկուկես տասնամյակ:

23. XIII դարի երրորդ տասնամյակում Մերձավոր Արևելքում և հատկապես Խլաթի թագավորության սահմաններում հայտնվում է մոնղոլներից հալածվող Ջալալեդդինը (Խորեզմի թագավորի որդին), որը մինչ այդ միևնույն մոնղոլների ձեռքից փախել էր Հնդկաստան և ազատվել միմիայն իր ձիու շնորհիվ, որը նրան գահավեժ բարձունքից թոցրել էր հորդառատ մեծ գետը և լողալով անցկացրել մյուս ապահով ափը. այդ առասպելական ձիու անունը (տիրոջ անունով - Ջալլադ) տարածվել էր բովանդակ Առաջավոր ու Մերձավոր Արևելքում:

«Մասունցի Դավիթ» էպոսի պատմականության հարցի շուրջը

24. Երբ պատմությունը դնում է քրիստոնյա թագավորի, թե՛ մահմեդական իշխանավորի նախընտրության հարցը, ապա Հռոմկլայի Պահլավունիների համակրանքն անվերապահորեն քրիստոնյայի կողմն էր: Մակայն Եդեսիայի հայ տիրոջ՝ Վասիլ իշխանի նկատմամբ, որն, ինչպես ասացինք, ապաստան էր տվել Կապադովկիայից ճողոպրած հայ իշխաններին՝ խաչակիրների խաղացած տգեղ խաղը, երբ նրանք հայ իշխանից խլեցին քաղաքը ու ապա ապականության անձնատուր լինելով՝ քաղաքն անտեր թողին (1144 թ.), արդեն հիասթափեցրել էր Պահլավունիներին և սովորեցրել էր լավ ճանաչել խաչով եկած ֆրենկներին: Իսկ երբ Խաչակրաց երրորդ արշավանքից (1189-1192 թթ.) հետո Ռուբինյաններն Անտիոքի խաչակիր դքսին հաճոյանալու համար սպանեցին Պահլավունի երկու իշխաններին և երկու կաթողիկոսներին, ապա Պահլավունիների ողջ մնացած զարմերը չէին կարող ի խորոց սրտի չատել խաչակիրներին, ինչպես նաև չվերհիշել, որ Անտիոք քաղաքը ժամանակին իրենց էր տրվել և նույնպես դավադրական սպանությամբ (Վասակ Պահլավունու) էր խլվել իրենցից:

25. Թե՛ն 1050-1250 թթ. երկու հարյուրամյակում հայ նախարարությունը բնօրրանում կորցրել էր քաղաքական իշխանությունը և ցիրուցան էր եղել, սակայն սելջուկների մասնատումից ու թուլացումից հետո ստեղծված նոր իրադրության մեջ տոգորվել էր հայկական անկախությունը մի օր վերականգնելու հույսով: Այս ուղղությամբ նախարարական բոլոր հին տների մեջ առավել կենսունակը Հռոմկլայի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ այս կամ այն կերպ առնչվող Պահլավունիների զարմերն էին:

26. XIII դարի կեսերին Ասիայի խորքերից եկած մոնղոլներն իրոք կռապաշտ էին և սկզբնական շրջանում ավելի բարեհաճ վերաբերմունք էին ցույց տալիս քրիստոնյաներին, քան թե մահմեդականներին: Այդ շրջանում մոնղոլների արքունիքի հետ խնամիական կապ հաստատելը բացառիկ երևույթ չէր նաև հայերի համար:

Վերոհիշյալ երկու հարյուրամյակի պատմության այս բոլոր դրվագները այս կամ այն կերպ, այս կամ այն չափով իրենց անդրադարձումն են գտել «Մասունցի Դավիթ» էպոսի մեջ:

Ինչպես դժվար չէ նկատել, արձանագրված դրվագների առաջին շղթան, մինչև 1194 թվականի իրադարձությունները, կամ ուղղակի, կամ անուղղակի, կապված է Պահլավունիների տան հետ և կազմել է Պահլավունիների տան պատմությունը, որ գրի է առնվել մեկից ավելի պատմագիրների կողմից: XIII դարի իրադարձությունները հետամուտ են էպոսի մեջ:

5. ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ «ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

«Մասունցի Դավիթ» էպոսը «Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» անունով առաջին անգամ գրի է առնվել շատ ուշ, միայն XIX դարի երկրորդ կեսին՝ 1873 թվականին, այն էլ, դժբախտաբար, ոչ պրոֆեսիոնալ ասացողի պատմումով: Գրի առնողը՝ Գարեգին Սրվանձտյանը առաջաբանում հաղորդում է, որ «...երեք տարի հետամուտ եղա ձեռք բերելու, և ոչ ոք գտա որ ամբողջապես գիտենար. մինչև 1873 թ. հունիս ամսոյն՝ Մշո դաշտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Օհան Վարդապետի միջոցով: Սա կպատմեր թե՛ յուր վարպետը շատ ընդարձակ գիտեր այս պատմությունը, և թե մեջ ընդ մեջ շատ տեղեր ուտանավոր խաղեր կային, որ ձայնով կերգեր: Թե՛ այդ վարպետն երկու վորշիկ աշակերտ ուներ, որոնք շատ կատարյալ սորված էին, և թե ինքն՝ բավական ժամանակ պատմած չլինելով, շատ կտորներ մոռացած էր»:⁸⁷

Տասներեք տարի հետո՝ 1886 թվականին, Մանուկ Աբեղյանը միևնույն էպոսը՝ «Դավիթ և Մհեր» անունով, գրի է առել Էջմիածնում, նույնպես, դժբախտաբար, ոչ պրոֆեսիոնալ ասացողի պատմածով: Գրի առնողը հաղորդում է, որ պատմողը՝ Մոկացի Նախոն, «իր լավ չիմացածը չէր ուզում ամենեվին պատմել, վորովհետև, ինչպես յերեվում էր, մեղք եր համարում այս պատմությունը խառնելը»:⁸⁸

Պրոֆեսիոնալ ասացողի պատմածով առաջին գրառումը պատկանում է Բագրատ Խալաթյանցին: 1898 թվականին Մոկաց Գինեկանց գյուղից Էջմիածին է գալիս նաև Խալաթյանց Զատիկը, որը պրոֆեսիոնալ ասացող էր, վարպետ պատմող: Ճեմարանի ուսուցիչ Բագրատ Խալաթյանցը նույն տարին գրի է առնում Խալաթյանց Զատիկի պատմածը: Այսպիսով, էպոսը

87 Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Ռիանջանյան, Առաջաբան. — Սասնա Ծռեր. խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մելիք-Ռիանջանյանի, Բ հատոր, առաջին մաս, Յերեվան, 1944, էջ 3:

88 Մհեր Աբեղյան, Առաջաբան. — Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 4:

հայտնի դառնալուց միայն 25 տարի հետո է մեզ հաջողվում ձեռքի տակ ունենալ պրոֆեսիոնալ ասացողի պատում: Բայց այնքան, որքան ամբողջ քառորդ դար գրել ու խոսել էինք ոչ այնքան լիարժեք պատումների մասին և հիման վրա, ապա երբ լույս տեսավ Խապոյենց Զատիկի պատումը, մենք արդեն ընտելացել էինք անլիարժեք պատումներին և ի վիճակի չէինք ըստ արժանավույն գնահատելու այդ այնքան լիարժեք պատումը:

Ահա Խապոյենց Չատիկի պատումի խիստ համառոտ բովանդակությունը:

Միերն ու Մարա Մելիքը կաթնեղբայրներ էին: Մարա Մելիքի մեռնելուց հետո նրա կինը իր մոտ է կանչում Միերին:

– Եթե կենակցելու գնաս նրա հետ, ապա քառասուն տարի իմ անկողինը չես մտնի, – ասում է Միհրի հայուհի կինը: Սակայն Միհրը գնում է Մլսր, կենակցում է Մարամելիքի կնոջ հետ, որից ծնվում է Սասունի հերոսի բոլոր բարեմասնություններով օժտված մի նոր, երիտասարդ Մարա Մելիք – «Տաճկի ճրագ»:

Մենք, տեսնելով Մարամեղիքի արագ մեծանալը և զորությունը, մտածմունքի մեջ է ընկնում, թե ինչու «տաճկու ճրագ վառեցի, հայուն ընցրցի»: Մտահոգված նա վերադառնում է Սասուն, որտեղ սակարկություն է սկսում իր հայուհի կնոջ հետ, թե գիշերը մեկ տարի հաշվենք, ցերեկը՝ մեկ և այսպես քառասուն տարին լրացնենք ու հայոց ազգի ճրագը վառենք:

– Բայց որ դու իմ անկողինը մտնես, – առարկում է հայուհի կինը, – մենք, իհարկե, զավակ կունենանք, սակայն ի պատիժ ուխտադրժության, երեխայի ծնվելուց հետո մենք երկուսս էլ կմեռենք, և երեխան անտեր կմնա:

– Երեխային մի պահող կլինի, – հանգստացնում է նրան Մհերը և եղբորը պատվիրում է, որ երեխայի անունը Դավիթ դնի ու տանի Մըսր, որ Մարամեյիքի կինը պահի:

Երբ Դավիթը ծնվում է, հայրն ու մայրը իսկույն մեռնում են, և Ձենով Հովանը երեխային տանում է Միսր:

Արագ մեծացող մանուկ Դավիթը Մարում ուզում է խաղալ մեծ եղբոր ու նրա հասակակիցների հետ: Մարամելիքին այդ բանը դուր չի գալիս, սակայն մայրը պաշտպանում է փոքրիկ տղային: Մանուկ Դավիթը խանգարում է երիտասարդների հոլի խաղը և սպանում երկու հարյուր մարդ: Մարամելիքը կատաղած է, «Թուր քեշեց, իրի, զԴավիթ տը սպանիր», բայց «մարդեր եկին հառաջ, չթողին, ըսըցին. – անիկ տղա ի, բան չգիտը», – այսպիսի պատճառաբանությամբ Դավթին պաշտպանում է նաև մայրը: Ոսկի ու կրակ դնենք

առաջ, թե երեկսա է, թող ձեռքը պարզի կրակին, – ասում է Մարամելիքը: Դավիթը, հրեշտակի ցուցումով, մատը պարզում է կրակին ու տանում բերնին, լեզուն այրվում է, ու Դավիթը դառնում է թըլոր:

Սակայն Սյրամելիքը տեսնում է, որ Դավիթը փորձանք պիտի դառնա իր գլխին, դրա համար էլ նրան Սասուն հետ ուղարկելիս ուղեկից զինվորներին պատվիրում է Բաթմանա կամրջի վրա սպանել և արյունը բերել իրեն, որ խմի ու հովանա: Բայց Դավիթն այնքան ուժեղ է, որ Բաթմանա կամրջի վրա բռնում և պատրաստվում է ջուրը գցել իրեն սպանել ցանկացող ուղեկիցներին: – «Աստծու սիրուն տու զմի գթիլիս ջուր» Սյրամելիքի հրամանն էինք կատարում: Մենք քո հոր զինվորներն ենք եղել, մենք ուժեղ մարդ ենք ուզում, որ նրան ծառայենք: Մենք չգիտեինք, որ «տու ադպես մարդ իս. մենք էսէնք մարդ կուզինք. ավալն էլ (անցյալում էլ) մենք քու խոր ֆերիզներն ինք» (քո հոր զինվորներն էինք):

Հորեղբայր Ձենով Հովանը սիրով ընդունում է Սասուն վերադարձած Դավթին, նրան կարգում է ուլարած, ապա նախրապան, բայց երկու դեպքում էլ Դավիթն ընտանին ու վայրին իրար է խառնում՝ սարսափ տարածելով համագյուղացիների վրա: Ճարահատած Ձենով Հովանը Դավթին դարձնում է որսորդ, իսկ սա ոտնատակ է տալիս աղքատ պառավի կորեկի արտը:

Մարամելիքը Կոզբադնին ուղարկում է հարկը գանձելու Սասունից: Ձենով Հովանը հլու-հնազանդ գլխիկոր հանձնում է Մարամելիքի ուզածը և չափում ոսկին: Պառավը կշտամբում է Դավթին և հայտնում Կոզբադնի մասին: Դավիթը ազատում է Մըսր ուղարկվող կանանց ու աղջիկներին և վռնդում հարկահաններին: Կոզբադնին ձեռնունայն հետ ուղարկելուց հետո Դավիթը նորից գնում է տրորելու պառավի կորեկի արտը: Պառավը, ամոթանք տալով Դավթին, ասում է, որ նրա հայրը ունեցել է իր հարուստ որսատեղը, որ զավթել է Մարամելիքը ու տեր է կանգնել այդ որսատեղին: Իր ուժի վրա վատահ Դավիթը հորեղբորն ստիպում է որսի հավաքել մարդկանց և տանել իր հոր որսասարը: Գիշերը Դավիթը լույս է տեսնում հեռվում: Հորեղբայրը բացատրում է, որ թշնամու կողմից քարուքանդ արված թո հոր վանքի ավերակների վրա է այդպիսի լույս կաթել երկնքից: Որսից հետո երեք ուղտաբեռ ոսկի առած Դավիթը գնում է վերաշինելու իր հոր՝ Մարութա վանքը: Սակայն վանքի վերաշինությունը սթափեցնում է Մարամելիքին, և նա Կոզբադնին ուղարկում է ավերելու վանքը: Թեև խաբեությունը Կոզբադնին հաջողվում է ավերել վանքը, սպանել հոգևորական-

ներին, սակայն մի սարկավագ ազատվում է և բոթը հասցնում հարբած Դավթին: Դավիթը մի ծառ ուսած գնում է ու բռնում ձորի բերանը, ջարդում Կոզբաղնի հինգ հազար զորքը, հանում Կոզբաղնի ատամները ու շարում նրա ճակատին, կտրում շրթունքները և նրան այդպես այլանդակած լրաբեր ուղարկում Մարամեղիքի մոտ: Կանայք ծաղրում են այլանդակված Կոզբաղնին, որն ամոթից թաքնվում է իր տանը և ամբողջ երկու ամիս չի ներկայանում Մարամեղիքին:

Մարամեղիքը մեծ զորահավաք է կատարում ու անհամար զորքով շարժվում է Սասունի վրա: Նա գալիս ու բանակ է դնում Լուռա դաշտում: Իսկ Մարութա վանքի վերաշինությունից հետո Դավիթը նորից մանկական անհոգությամբ նետ ու աղեղ առած որս է անում պառավի կորեկի արտում: Պառավը Դավթին հայտնում է Մարամեղիքի արշավանքի և Լուռա դաշտում բանակ դնելու, ինչպես նաև Դավթի հոր գենք ու զրահի մասին, որոնք անպարտելի էին դարձնում Մհերին: Դավթին հաջողվում է հորեղբորն ահ տալով ստանալ հոր գենքն ու զրահը, որոնք, սակայն, շատ ու շատ մեծ էին նրա համար: Դավիթը հարկադրված մեծ քանակությամբ բամբակ է դնում հոր սաղավարտի մեջ, որ նստի գլխին, քառասուն փաթ ծալում է հոր կապեն, մեջքին քառասուն փաթ դարձնում է հոր քամարը: Թուր կեծակին կախվում ու քարշ է գալիս գետնին: Դավիթը կարողանում է քանդել դուռը և դուրս բերել հոր Քոռկիկ Ջալալին, որը սիրով հպատակվում է նոր տիրոջը, «աստծու հրամանով» էլ «խաչ պատրագին» իջնում է նրա աջ թևին, և Դավիթը հոր գենք ու զրահով գնում է կովի:

– Մեկ հաղթուր կա քու առաջ, – պատվիրում է նրան հորեղբայրը, – քու խոր (հոր) կաթնաղբուրն ի: Ձիուց կիջնիս վար, կը լվացվիս, խաց կուտիս, պառկիս անտեղ, քնիս վիր կելնիս, ձին կխիծնիս, կերթաս, կերթաս դաշտի մեջ, պողվըտն սուն երկնուց իջի գետին, քու թուր կզարկիս, թե կտոհի՝ գնա կոհվ, թե չկտոհի՝ չերթաս կոհվ:

Հորեղբոր կինը ծաղրում է փոքրության համար ձիու քամկին չերևացող Դավթին, թե Մարամեղիքի ձախ ձուն բերես, որ աչքերիս դեղ անես, իսկ հորեղբայրն ամիսսում է խնամքով պահած Մհերի գենքն ու զրահը, որ Դավիթը պիտի տանի ու կորցնի: Սակայն ճանապարհին ձին լեզու առած Դավթին հիշեցնում է հորեղբոր պատվերը, և նա, խմելով կաթնաղբյուրի ջուրը, մեծանում է, դառնում հզոր ու հաջողությամբ կտրում պողվըտն սյունը:

Լուռա դաշտի գլխին կանգնած Դավիթը մի պահ սարսափում է Մարա-

մեղիքի զորքի շատությունից, սակայն ձին նրան պատվիրում է իր մեջքից ամեննին ցած չիջնել, իրենք միասին, թե՛ թրով, թե՛ ոտքով ու անգամ պոչով կջարդեն թշնամու բազմահազար զորքը:

Դավիթը՝ որպես ազնիվ զինվոր, չի ուզում գրոհել քնած զորքի վրա: Վեր կացեք, պատրաստվեցեք, ձիանք հեծեք, չասեք, թե Դավիթը «գող էր, գող իրի, գող գնաց»:

Դավիթն էսքան զորք է ջարդում, որ արյան հեղեղը տանում է դիակները: Ջարդված զորքի միջից դուրս է գալիս մի ալևոր, որի աղերասանքով ու խորհրդով Դավիթը մենամարտի է գնում Մարամեղիքի հետ: Մարամեղիքը վրանի առաջ խոր փոս է փորել, վրան թաղիք փռել և հանգիստ քնել է: – Մարե՛, Մարամեղիք քնուց խան վի, – դիմում է Դավիթն իրեն խնամած մորը: Գութնի կրակած խոփով զարթնած Մարամեղիքը Դավթին հրավիրում է իջնել ձիուց ու հանգստանալ: Դավիթը հրաժարվում է: Բայց մայրն է հանդես գալիս: – Իջի, – ասում է նա, – ճամբախ իկիր իս, նեղացիր իս, իջի, քիչ մըմ ոահաթի, նուրեն իլըցեք, կռիվ էրեք: Ձին խռովում է, բայց Դավիթը չի կարողանում կոտրել մոր խնդիրը, նա ցած է իջնում ձիուց ու ընկնում թակարդ-հորի մեջ:

Ձենով Հովանը երազ է տեսնում, բայց կինը նրան հանգստացնում է, սակայն երազը կրկնվում է, և Ձենով Հովանը վեր է կենում ու օգնության շտապում իր եղբորորդուն: Լուռա դաշտի գլխին Ձենով Հովանն իր բարձր ձայնով փորձանքից ազատվելու խորհուրդ է տալիս հորի մեջ ընկած Դավթին: Մարութա բարձր Աստվածածին վանքի, աջ թևին դրոշմված խաչ պատրագի անունը տալով, Դավիթն իրեն թափ է տալիս և հորից դուրս է գալիս:

Դավիթը նորից ձին հեծած կանգնել է Մարամեղիքի վրանի առաջ: Նորից կրակած խոփով զարթնեցնում են Մարամեղիքին, և սկսվում է նրանց մենամարտը: Առաջին երեք զարկը Մարամեղիքին է: Նրա երեք զարկն էլ փուստ է անցնում: Հերթը Դավթինն է: Մարամեղիքը խոր փոս է փորում ու իրեն ծածկելով թաքնվում է նրա մեջ:

Դավթի առաջին զարկը կոտրում է մայրը, որը հիշեցնում է իր խնամքը: Երկրորդ զարկը կոտրում է քույրը՝ նույնպես հիշեցնելով իր խնամքը: Մայրը փորձում է կոտրել Դավթի նաև երրորդ զարկը, բայց Դավիթն իր վերջին մեկ զարկը ոչ ոքի չի զիջում և սաստիկ հարվածով կոտրելով քառսուն գոմշի կաշին, քառասուն ջաղացքարը, որոնց տակ թաքնված էր Մարամեղիքը, խոր հորի մեջ սպանում է Մարամեղիքին:

Աշուղներից Խանդութ խաթունի գովքը լսելով՝ Դավիթը հրաժարվում է Չմշկիկ Սուլթանից, որի հետ արդեն մատանու փոխանակություն էր կատարել, և գնում է Խանդութ խաթունի հոր քաղաքը։ Սևամորթ և անճոռնի դռնապան Համդուլը սարսափ է ազդում Դավթի վրա, իսկ Դավթին էլ՝ նրա վրա։ Նրանք ահու իրար հետ բարև են փոխանակում։ Բազմաթիվ ուզնկաններ տարիներով սպասում են Խանդութի դռանը, սակայն Խանդութը խնձոր է նետում միայն նոր եկած Դավթին։ Ուզնկան փահլևանները դավադրություն են սարքում Դավթի դեմ, սակայն Դավիթը «սխկրտում է» նրանց թրերը։

Անցնում է Խանդութը, և անհամբեր Դավիթը փորձում է համբուրել նրան, սակայն Խանդութը տալիս է նրա քիթ ու բերնին և արնաշաղախ անում նրան։ Դավիթը երդվում է չմոռանալ այս վիրավորանքը։ Թող վատ օրի ընկնի քո հոր քաղաքը, որովհետև «մընչիվ իս իմ փոխ չենիմ, գքի աստեղեն չտանիմ»։ Եվ իսկապես առավոտյան քաղաքացիք զարթնում, տեսնում են քաղաքը պաշարված։ Նա՛ պետք է կովի, ով արժանացել է Խանդութի խնձորին։ Եվ Դավիթը ձին հեծնում ու գնում է կովի։ Երեք օր ջարդում-կոտորում է թշնամու զորքը, և արյան հեղեղը բռնում է դաշտը։ Անհանգստացած Խանդութը գենք ու զրահ կապած գնում է կովի դաշտ՝ Դավթի դիակը գտնելու համար։ Բայց Դավիթը ողջ է, նա գալիս է, զարկում ու ձիուց վայր է գցում Խանդութին, ապա իջնում է ձիուց ու չոքում Խանդութի վրա։ Խանդութը աղերսում է չզարկել իրեն. ես կին եմ, ասում է նա։ Դավիթը գիտե, որ նա Խանդութն է, բայց իր քիթուքերանն արյունվա անելու փոխը թող լինի սա, և նրանք հաշտ ու հաղթական վերադառնում են քաղաք։

Սասուն տանող ճանապարհը անցնում էր Չմշկիկ Սուլթանի պատուհանի տակով։ Չմշկիկ Սուլթանը մենամարտի է հրավիրում Դավթին։ Դավիթը խոստանում է կնոջը տուն հասցնել և յոթերորդ օրը կովի գալ։ Չմշկիկ Սուլթանի պահանջով նա երդում է տալիս՝ վկայաբերելով աջ թևի խաչ պատրագին։ Սակայն Խանդութի ծոցը պառկելուց հետո նա մոռանում է խոստումը, և յոթ օրը դառնում է յոթ տարի։

Աստված նրանց տղա է տալիս, որի անունը դնում են Մհեր։ Արագ է մեծանում տղան և փորձանք դառնում իր հասակակիցների գլխին. խաղի ժամանակ նա հարյուրավոր երեխաներ է սպանում։ Իշխանների բողոքի վրա Դավիթը ապտակ է հասցնում Մհերի երեսին, և հայր ու որդի կռվում են։ Խանդութը փորձում է բաժանել, օգնության է կանչում սարերին, որ նրանց բաժանեն, սարերը տեղից չեն շարժվում, օգնության է կանչում Գար-

րիել հրեշտակին, որը բաժանում է հորն ու որդուն։ Հոր խնդրանքով Գարրիել հրեշտակը քաշում է Մհերի մեջքի երակը, որ «անու ժառանգ չընկնի տուս», որ Մհերը մինչև Քրիստոսի դատաստանը մահ չունենա։ Նզովված Մհերը գնում է Խլաթ, «առից քառսուն ազապ լաճ ու քառսուն ազապ աղջիկ ու յոթ տարվան նոան գինի» ու հարբում։

Որդու վարմունքը գլխիկոր է դարձնում Դավթին, և գլխիկոր Դավիթը տեսնում է, որ Խաչ Պատրագին սևացել է իր աջ թևին։ «Ասիկ չէր տղի դարբիր, ասիկ Խաչ Պատրագին էր՝ զի կը զարկեր», – ասում է նա, հրաժեշտ տալիս հորեղբայրներին և գնում «դախ (դեպի) Չմշկիկ Սուլթան»։ Չմշկիկ Սուլթանի քաղաքի մոտ Դավիթը մտնում է ավազան ու լողանում։ Չմշկիկ Սուլթանն այդ նկատում է և գութանի տաքացրած խոփը զարկում է Դավթի մեջքին ու սպանում նրան լողանալիս։ Խանդութն էլ չդիմանալով մեռնում է կսկծից։

Հորեղբայրները տագնապի մեջ են։ Չմշկիկ Սուլթանը կարող է գալ ու ավերել Սասունը։ Նրանք գնում են որոնելու Մհերին, որ քեֆ էր անում քառասուն ազապ տղաների և քառասուն ազապ աղջիկների հետ։ Ձենով Հովանի ձայնը լսելով՝ նա թողնում է իր ընկերներին և գնում հորեղբայրների մոտ, որոնց հետ միասին կովի գնում Չմշկիկ Սուլթանի վրա։ Հանապարհին նա սպանում է մի պառավի, որը, Դավթի անկումից քաջալերված, պատրաստվում էր շերեփով սպանել նրա սերնդին՝ Մհերին։

Չմշկիկ Սուլթանի քաղաքին մոտենալիս նա հորեղբայրներին ուղարկում է քաղաքի վրա, իսկ ինքը մի ծառ ուսած գրոհում է զորքի վրա և ոչնչացնում բոլորին, այդ թվում նաև Չմշկիկ Սուլթանին։ Հաղթանակով քաղաք մտնելիս նա տեսնում է, որ հորեղբայրներն էլ քաղաքն են ավերել հիմնովին, մնացել է միայն մի կատու, որ թառել է միևարեի գլխին։ Երկար ծառով կատվին էլ է ցած բերում ու հորեղբայրներին ասում՝ «Խրողբերներ, էրթանք մեր տեղ»։

Սասնա քաղաքում Ցռան Վերգոյի խորհրդով անգավակ Ձենով Հովանը որդեգրում է Մհերին ու տանում իր տուն։ Ձենով Հովանի կինը՝ Սառիան, սիրահարվում է երիտասարդ Մհերին և ջանք է թափում, որ նա գա իր ձեռքի հետ։ «Տու իմ մոր տիղն իս» ասելով Մհերը չի լսում նրան։ Սառիան պատառոտում է իր շորերը, ճանկոտտում իր դեմքը և Հովանին գանգատվում, թե դու ինձ որդի ես բերել, թե ամուսին։ Ձենով Հովանը դուռը փակում ու գիշերը ներս չի առնում Մհերին։ – Հորեղբայր, դու խաբվել ես

քո պոռնիկ կնոջից, ես հիմա կարող եմ քացի տալ ու հիմնահատակ քանդել ձեր տունը, սակայն հորս հետ կովելն ինձ թանկ նստեց, ես հիմա հորեղբորս հետ կռիվ չեմ անի:

Վտարված Մհերը լաց լինելով գնում է հոր և ապա մոր գերեզմանի վրա: Երկուսն էլ Մհերին խորհուրդ են տալիս գնալ Հալաբա քաղաքը, որտեղ «քո խաց թխուկի, քո եմակ եփուկի», որտեղ «քո հողեն ավուկ ի, քո ջլիր պարզուկ ի» (քո հացը թխված է, կերակուրը՝ պատրաստված, քո սենյակը մաքրված է, և կարպետները՝ փռված):

Եվ Մհերը գնում է դեպի Հալաբա քաղաք, որտեղ ոչ ոք չունի և որի որտեղ գտնվելը չգիտե:

Հալաբա ճանապարհին Մհերը ծծերից բռնած արնաքամ է անում մի այլանդակ պառավի: Պարտված պառավը հասկանում է, որ մանուկ փահիկանը Դավթի ցեղիցն է, և իր աղջկան՝ գեղեցկուհի Գոհարին, որի ձեռքը ահա յոթ տարի խնդրում էր Հալաբա թագավորը, անմիջապես կնության է տալիս Մհերին: Բայց պառավը մի երկու տարի անց մեռնում է, և Հալաբա թագավորը զորք կապած գալիս է Գոհարի բերդի վրա: Մհերը ամեն օր բերդից դուրս է գալիս և օրական մի հազար զինվոր ջարդելով՝ նորից վերադառնում է բերդը ու քեֆ անում Գոհարի հետ: Հալաբա թագավորը ճարահատած դիմում է Սասնո տերերին, որ նրանք մի անպարտելի հերոս ուղարկեն Գոհարի ամուսնուն հաղթելու համար: Ցռան Վերգոն⁸⁹ դուրս է հանում Դավթի թևավոր ձին ու թուր կեծակին և իր որդուն՝ Պարոն Աստղին զինավառած ուղարկում Հալաբա քաղաք:

Մհերն զգալով իր ցեղակիցների մասնակցությունը կովին, տխրում է ու հրաժարվում կովի գնալուց: Գոհարը նկատում է այդ, և նրանք, վիճում են: – Եթե մտնես տուն ու պատուհանը պինդ փակես միջև կովի վերջը, ապա ես կերթամ կովի, – պայման է դնում Մհերը: Գոհարը համաձայնում է, սակայն կովի թեժ պահին, երբ պարոն Աստղի բռնած Դավթի Թուր կեծակին կրակ է թափում Մհերի գլխին և «թրի շառավիղը խոտ փանջարին, գնաց միջ տախտին», զարմանալով այն բանի վրա, որ «ասոր ամպ չի, կեծակ կը տա», Գոհարը խախտում է խոստումը և պատուհանը բաց է անում: Սարսափահար Գոհարը հասկանալով, որ Մհերի հարազատների գործն է այդ, բարեկամության հրավերի երգ է երգում: Չայնը հասնում է Մհե-

89 Պատումի մեջ սխալմամբ ասված է Ձենով Դովանը, այնինչ ըստ այս պատումի Ձենով Դովանը անգավակ է, իսկ ըստ այլ պատումների Պարոն Աստղին Ցռան Վերգոյի (կամ Ցռան Վեգիի) որդին է - Զ.Թ.:

րին: Նա ջղայնանում է խոստմնագանց կնոջ վրա և նետի սաստիկ հարվածով ծակում է Աստղի ձիու փորը և սպանում Պարոն Աստղին: Հարվածի ուժգնությունից Պարոն Աստղին հասկանում է, որ դա Մհերի զարկն է: Սասնա ավանդության համաձայն՝ Պարոն Աստղին գլուխը դնում է Մհերի ծնկան վրա ու մեռնում: Մհերը վշտից ուշաթափ է լինում: Թշնամու զորքը շրջապատում է ուշաթափ Մհերին, նրան բռնում, կապկպում, գցում են հորը և սալ դնում հորի բերանը:

Մինչ Գոհարը շարունակում էր մենակ դիմադրություն ցույց տալ, մի պառավ կին հորի սալը վերցնում է ու իր աղջկան իջեցնում հորը, որ «Մհերկեմեն գավակ մ'իկը, մինք էլ անու սադաղեն (շնորհիվ) խաց մ'ուտինք»: Սակայն Մհերը շատ վատ է վարվում թե՛ պառավի աղջկա և թե՛ պառավի հետ, որոնց շնորհիվ ազատվել էր հորից:

Հորից դուրս եկած Մհերը դառնում է Հալաբա թագավորի հպատակ մի տերտերի մշակ, և երբ կովի գնալու հերթը հասնում է տերտերին, ապա կովից հրաժարվող տերտերի փոխարեն ինքն է կռիվ գնում, և Գոհարը ճանաչում է Մհերին, բայց և այնպես նրանք կովում են Մհերի պահանջով, որից հետո Գոհարը գնում է իր բերդը, իսկ Մհերը՝ անվնաս վերադառնում քաղաք:

Տերտերի տղա Մհերը մորթում է մի այծ և կողոսկրերը շարում իր մեջքին: Երեկոյան նրան տանում են թագավորի դիվան և հարց ու փորձ անում, թե ինչպես կովեցիր: Տերտերի տղա Մհերը մեջքից հանում է մի ոսկոր և, զարկելով դիվանում նստած այն մարդկանց, որոնք իրեն կապել ու հորն էին գցել, հերթով սպանում է բոլորին ու ասում, թե ահա այսպես կովեցի: Նրան չեն պատժում, որովհետև հույսը միայն նրա վրա էին դրել, միայն նա կարող էր հաղթել Գոհարին: Առավոտյան կռիվ գնալուց առաջ նա պահանջում է Պարոն Աստղի գենքն ու զրահը: Թուր կեծակին կապած և Քուռկիկ Ջալալին (թեև Պարոն Աստղի հետ կովելիս Մհերը կարծես թե սպանել էր Քուռկիկ Ջալալին - «նիտ դեմ արավ ձիու փուր, էզարկ, ձիու փուր ծակեց, գնաց Պարոն Աստղի գագաթ վի տուս էլավ») հեծած՝ Մհերը կովի է գնում Գոհար խաթունի վրա: Մինչև կեսօր նրանք կովում են, ապա Մհերի հրամանով Գոհարը փախչում է բերդը, Մհերն էլ՝ նրա հետևից: Բերդում նրանք սիրով ուտում-խմում են մինչև երեկո: Երեկոյան Մհերը վերադառնում է Գոհարի հետ պայմանավորված: Գոհարը համաձայնություն կտա այն դեպքում, – ասում է Մհերը Հալաբա թագավորին, – եթե ամբողջ քաղաքը, բոլոր նրանք, որոնք կարող են գդալ վերցնել, հարսանիքի գան:

Թագավորը անմիջապես համաձայնում է, և քաղաքի բնակչությունը գնում է դեպի Գոհարի բերդը: Այդ պահին Մհերը հետևից, իսկ Գոհարը առջևից կոտորում են բոլոր նրանց, ովքեր չեն անցնում Մհերի թրի տակով: Գոհար խաթունը սպանում է Հալաբա թագավորին և Մհերի հետ միասին մինչև իր մահը իշխում Հալաբա քաղաքում:

Գոհարի մահից հետո անմահ Մհերն այնքան է ապրում, որ գետինը ծերանում է նրա ոտքի տակ, և նրա ձին մինչև փորը խրվում է հողի մեջ: Վշտացած Մհերը Աստծուց խնդրում է Գաբրիել հրեշտակին ուղարկել, որ ինձ գցի Վանա քար՝ «մընչիվ Քրիստոս գա դատաստան»:

Մհեր փակված է Վանա քարի մեջ: Մի աղջիկ է անցնում և տեսնում է քարայրի դուռը բաց: Մհերը նրան ասում է, թե խոտ քաղիր ու տուր ձիուս: – Ես խոտը կը քաղիմ, սակայն դու նիզակդ տուր, որ կապեմ ծայրին ու հասցնեմ ձիուդ, շատ բարձր է, իմ ձեռքը չի հասնում:

– Եթե այդպես է, – եզրակացնում է Մհերը, – ապա իմ ձին խոտ չի ուտում, աշխարհը դեռ շատ չար է, ես այդ աշխարհի մեջ չեմ կարող ապրել:

Այս է Խապոյենց Զատիկի պատումի հնարավորինս համառոտ բովանդակությունը: Նրա պատումը բաժանվում է երեք ճյուղի.

1. «Թըլոր Դավիթ» (որ հորել. հրատ. խմբագիրները դարձրել են «Դավթի կոիվը Սարա Մելիքի հետ»), 2. «Թըլոր Դավիթ և Խանդուք խաթուն» (որ նույն խմբագիրները դարձրել են «Դավթի մահը») և 3. «Մհեր»: Յուրաքանչյուր ճյուղ սկսվում է միևնույն ավանդական ողորմիներով: Ուշագրավն այստեղ այն է, որ յուրաքանչյուր ճյուղի սկզբում ողորմու արժանացել են, բացի պատումի մեջ գործող «Սասնա փափկաններից», նաև Մելիքսեթ քահանան, Սանասարն ու Բաղդասարը, որոնք պատումի մեջ ոչ հանդես են գալիս և ոչ էլ հիշատակվում: Պետք է ենթադրել, որ կամ պատմողը լավ չի իմացել առաջին ճյուղը, կամ թե գրի առնողը՝ այնքան, որքան դեռևս ամբողջական պատկերացում չկար բոլոր ճյուղերի մասին, չի հետաքրքրվել առաջին ճյուղով: Հետագա գրառումները նոր լույս սփռեցին էպոսի առաջին ճյուղերի վրա: Այժմ համադրական տեքստը բաղկացած է չորս ճյուղից՝ 1. Սանասար և Բաղդասար, 2. Մեծ (կամ Առյուծաձև) Մհեր, 3. Սասունցի Դավիթ և 4. Պատիկ Մհեր: Ըստ որում, Սանասարի ու Բաղդասարի և Մեծ Մհերի գործունեությունը ծավալվում է ինչպես հայրենի Սասունում, այնպես էլ օտարության մեջ, այլակրոն միապետների մայրաքա-

ղաքներում, Դավթի գործունեությունը ծավալվում է հիմնականում իր հայրենի Սասունում, իսկ Պատիկ Մհերինը՝ մեծ մասամբ օտար հորիզոնների տակ:

Վերադառնալով մեր համառոտակի պատումին՝ անհրաժեշտ է ասել, որ մենք գերադասություն տվինք Խապոյենց Զատիկի պատումին ոչ թե սուկ նրա համար, որ դա ժամանակի տեսակետից առաջին պրոֆեսիոնալ ասացողի պատմած է, այլև անհամեմատ ավելի լիարժեք պատում է, քան մինչ այդ գրի առնված Մշո դաշտի Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոյի (Գաբեգին Սրվանձոյան) և Մոկացի Նախոյի (Մանուկ Աբեղյան) պատումները: Երբ Բագրատ Խալաթյանցը գրի էր առնում Խապոյենց Զատիկի պատումը, Մանուկ Աբեղյանն արդեն գնացել էր Գերմանիա և համապատասխան բանասիրական բարձրագույն կրթություն ստացած պատկառելի պաշարով վերադարձել էր Էջմիածին: Բ. Խալաթյանցը Մ. Աբեղյանին հաղորդում է իր հաջողությունը, բայց վերջինս, դժբախտաբար, չի ուրախանում առաջինի հաջողությամբ և ըստ արժանվույն չի գնահատում առաջին պրոֆեսիոնալ ասացողի պատումը: Վեճն ընթանում է ոչ գիտական մակարդակով: Բ. Խալաթյանցը «նաղըլ ասող» է անվանում Մոկացի Նախոյին, իսկ Մ. Աբեղյանը չակերտավոր վարպետ է անվանում Խապոյենց Զատիկին: Անգամ չորս տասնամյակ անց, երբ Բ. Խալաթյանցը վաղուց վախճանված էր, Մ. Աբեղյանը գրում է. «Գրի առնողն (այսինքն՝ Բագրատ Խալաթյանցը – Հ.Թ.) առաջաբանի մեջ հիշում է, թե՛ «պատմողը – Մոկացի Զատիկը – Աբեղյանի «Նաղըլ ասողի», նույն գյուղի բնակիչ Նախոյի ուսուցիչն է եղել»: Այս առթիվ պիտի նկատել հետևյալը. Զատիկը Էջմիածնում ապրող մոկացիների մեջ, ինչպես գիտենք, համարվում էր «վարպետ» պատմող, որովհետև գիտեր շատ հեքիաթներ ու նաղըլներ և սիրով պատմում էր: Նա իր գիտությամբ և պատմելու արվեստով պարծենում էր, մինչդեռ Նախոն համեստ էր և սակավ էր պատմում:

Նախոն իր պատումը պատանի և երիտասարդ հասակում սովորել է ծերերից, բայց լսել է և Զատիկին: Սրանով են բացատրվում Նախոյի և Զատիկի պատումների նմանությունները և ավելի ևս տարբերությունները»:⁹⁰

Այսօր երկու պատումների ամենաթոռուցիկ համեմատությունը ցույց է տալիս, որ Մանուկ Աբեղյանի գրի առած Նախոյի պատումը նաղըլ է, հեքիաթ, զուրկ ներքին տրամաբանությունից, մինչդեռ Բագրատ Խալաթյանցի գրի առած Խապոյենց Զատիկի պատումը գործողությունների ըն-

90 Սասնա Ծեր, հ. Ա, էջ 58:

91 Եվ Առյուծաձև Մհեր
92 Եվ Առյուծաձև Մհեր

թացքը հիմնավորող ներքին կոտ տրամաբանությամբ օժտված իսկական էպոս է:

Ահա թե Նախտ բեռին ինչպես է սկսում իր պատումը.

«Դավթի խնր կը մեռնի,

Մեր կը գնա զՄարամելիք կաննի,

Դավիթ կը մնա *հեթըն*»:⁹¹

Ամուսինը մեռավ, կինը գնաց ուրիշ մարդ առավ, և տղան մնաց որը: Սա հեքիաթ «նաղը» է, և ուրիշ ոչինչ: Այս նույն տողերի դիմաց Խապոյենց Զատիկի պատումի մեջ կարդում ենք.

«Մհեր, Մարամելիք դաստաբրայ ին [կաթնեղբայր էին]

Մարամելիք մեռավ:

Մարամելիք կնիկ խրկեց հետեվ Մհերին, եսաց.

– Գնա աստեղ, իմ բեռն քո խիտ ինը.

Մհեր եսաց. – Տ'երթամ.

Մհերի կնիկ եսաց. – Մ'երթա...

Ան այլազգ ի. տոն երթաս, տը խառնվիս ըզան:

Մհեր եսաց. – Տ'երթամ:

Կնիկ եսաց. – Տոն երթաս,

Մընչիվ քնոսուն տարի –

Տոն իմ գողվենք [անկողինս] տը չգնա»:⁹²

Ապագա թշնամի հերոսների հայրերն այստեղ կաթնեղբայրներ են, նրանց միջև ինչ-որ սերտ բարեկամություն կա, իսկ հերոսները նույն հոր սերմից են և միևնույն մոր կաթն են կերել: Ապագա իրար թշնամի հերոսների հայրը հայ է, սասունցի, նա գնում է Մըսր և տիրանում Մարա թագավորի իրավունքներին: Սասուն մնացած հայուհի կինը ամուսնու այդ քայլի համար երդվում է քառասուն տարի նրան իր անկողինը չընդունել, իսկ երբ հանուն իր հարազատ ժողովրդի շահերի ընդունում է, ապա երդմնագանցության պատիժն անխուսափելիորեն պիտի թափվի նրա ու նրա ամուսնու վրա:

Սա արդեն հեքիաթ չէ, այլ էպոս, էպոսին յուրահատուկ իրավիճակներով ու պատճառաբանություններով:

Մեկ ուրիշ համեմատություն:

Մանուկ Դավիթը չարաճճիություններ է անում Մարում և անտանելի է

91 Լույս տեղում, էջ 10:

92 Լույս տեղում, էջ 60:

դառնում խորթ եղբոր՝ Մարամելիքի համար: Մ. Աբեղյանի գրի առած պատումի մեջ կարդում ենք.

«Մարամելիք էլ չպախեց զԴավիթ.

Ենու մեր ճամբխեց, եկավ մոտ խրողերը:

Խրողերը մեկ պողվելու տո՛ւ ետու կարել...»:⁹³

Սա նույնպես հեքիաթ է, այն էլ ապաշնորհ ասողի, «նաղըլ ասողի» անհամոզիչ հեքիաթ: Մայրը, որ ստիկ էր տվել ու խնամել էր Դավթին, ոչ մի խոսք չասաց ի պաշտպանություն որը մանուկի և նրան պարզապես ուղարկեց Սասուն, որ հորեղբայրները պահեն: Այնինչ Բ. Խալաթյանցի գրի առած պատումի մեջ այս «նաղըլ»-ի երեք տողի դիմաց կա 66 իսկապես էպիկ տող.

«Մարամելիք սիրտ չտաքացավ վերեն.

Եսաց. – Մարե, Դավիթ տը սպանիմ.

Մեր եսաց. – Վորդի, մը սպանի,

Անու մեղք քու վիզ մի՛ ձգը.

Հորդկը՝ թըղ երթա ուր խոր քնդար:

Մարամելիք հեղավ,

Երկու ֆերըզ իրի անտեղ, եսաց.

– ԶԴավիթ կտանեք Բաթմանա կարմնջի վերեն,

Զինեցնք, կուժ ըմ անու արընեն առեք, բերեք,

Իս խմիմ, իմ սիրտ խովանա»:⁹⁴

Բայց Բաթմանա կամրջի վրա ֆերիզների ուժը չի պատում Մարամելիքի հրամանը կատարելու համար, ընդհակառակը, մանուկ Դավիթն է նրանց հաղթում: Տեսնելով մանուկի գերբնական ուժը՝ պարտված ֆերիզներն ասում են.

«Տոն աղպես մարդ իս, մենք ենենք մարդ կուզինք.

Ավալն էլ մենք քո խոր ֆերըզներն ինք

[Անցյալում էլ մենք քո հոր զինվորներն էինք]»:⁹⁵

Սա նույնպես էպոս է:

Ուրեմն, թեև Դավթի մանկական չարաճճիությունները տազնապ են ներշնչում Մարամելիքին, սակայն մանուկ Դավթի նկատմամբ հենց Մարի արքունիքի բարյացակամության պատճառով նա չի կարող Դավթին ոչնչացնել բուն Մարում, այլ բարվոք է համարում նրան հայրենի Սասուն

93 Լույս տեղում, էջ 11:

94 Լույս տեղում, էջ 64-65:

95 Լույս տեղում, էջ 66:

ուղարկելու պատրվակով հեռացնել Մարից և խաբեությամբ սպանել Մարի սահմաններից դուրս:

Մեկ համեմատություն ևս:

Մարամելիքին և Դավթին կապող օղակը Մարամելիքի մայրն է, որ շահել-պահել է մանուկ Դավթին: Սակայն Մ. Աբեղյանի գրի առած պատումի մեջ հերոսների վճռական ընդհարման ժամանակ մայրն ամենևին հանդես չի գալիս, իսկ Դավթի չիմարության հասնող չիմնավորված, չպատճառաբանված զարմանալի միամտություն է ցուցաբերում:

Մարամելիքը Դավթին տեսնելով ասում է.

«- Դավիթ, արի նստի՛ խաց ուտենք, Խաբար տանք, նուր ելնենք, կռիվ անենք:

Դավիթ երավ ձիուց իջնել՝ ձին կը փախներ: -

Ձին իմաստուն եր, գիտեր՝

Մարամելիք գնդտիկ քառսուն նիտ խուր եր փորի»:⁹⁶

Էպոսների մեջ կա, որ ձին հաճախ ավելի մեծ իմաստություն է հանդես բերում և փրկում է հերոսին, սակայն հերոսի միամտությունն ունենում է իր բացատրությունը: Իրար դեմ կենաց և մահու կռվի դուրս եկած Մարամելիքն ու Դավիթը տարբեր հասակի թշնամիներ են, այլ ոչ թե հասակակից երիտասարդներ, որ կռվից առաջ ասպետական խոսակցության հարկ ունենան («Խաբար տանք»): Ինչու՞ իմաստուն ձին չի կարողանում օգնել հերոսին և կանխել աղետը: Ինչ ավելի զորեղ հանգամանք կա, որ հերոսին թույլ չի տալիս ուշադրություն դարձնել ձիու վերաբերմունքի վրա և ազատվել պատրաստված թակարդից: Մ. Աբեղյանի պատումի մեջ ոչինչ չկա, սակայն Բ. Խալաթյանցի պատումի մեջ այդ վճռական պահին հանդես է գալիս Մարամելիքի հարազատ մայրը, որ Դավթին էլ է շահել-պահել, ծիծ տվել: Այստեղ Դավթին մայրություն արած կնոջ ցուցաբերած թեկուզ կեղծ կարեկցությունն է պատճառը, որ Դավիթը չի կարողանում ուշադրություն դարձնել իմաստուն ձիու նախազգուշացման վրա:

Ահա այդ հատվածը Բ. Խալաթյանցի պատումի մեջ.

«Մարամելիք հեղավ, նստավ,

Եսաց. - Դավիթ, ձիուց իջի տակ:

Ռահաթիսը [հանգստանանք], նորեն կըլնենք, կռիվ ենինք:

Դավիթ եսաց. - Չըմ իջնի:

Մերն ել եսաց. - Իջի՛, ճամբախ իկիր իս,

96 Լույս տեղում, էջ 26:

Նեղացիր իս [հոգնել ես], իջի՛, քիչ ըմ ոահաթի՛,

Նուրեն իլըցեք, կռիվ երեք:

Դավիթ ձիուց իջավ տակ:

Ձին ըռըկավ, գնաց դաշտի մեջ:

Դավիթ նստավ ադ թաղսին,

Գնաց խուրու տակ»:⁹⁷

Կարծում եմ, որ համեմատությունները շարունակելու հարկ չկա:

Անվիճելի է, որ Մ. Աբեղյանի գրի առած պատումը էպոսի պատմականությունը որոշելու տեսակետից լիարժեք պատում չէ, մինչդեռ Բ. Խալաթյանցի գրի առած պատումը այդ տեսակետից արժեքավոր է: Ես այս պարագան ընդգծում եմ նրա համար, որ մեր էպոսի ուսումնասիրության գործում, դժբախտաբար, մեզ չի հաջողվել սկզբից ուղիղ ճանապարհի վրա կանգնել: Ազգագրական, բարբառային և այլ տեսանկյուններով ուսումնասիրությունները, մեր կարծիքով, շատ ավելի սպառիչ և արդյունավետ կլինեն միայն այն դեպքում, երբ նախապես պարզած կլինենք էպոսի պատմականությունը:

Մեզ հետաքրքրում է միմիայն էպոսի պատմականությունը որոշելու հարցը, և մենք պատումների գնահատությանը մոտենում ենք միայն այդ տեսանկյունով: Այդ տեսանկյունով էլ մենք փորձել ենք դասակարգել հորելյանական հրատարակությամբ լույս տեսած 48 պատումները: Պատումների դասակարգումը կատարել ենք՝ ղեկավարվելով այն հաստատ համոզմունքով, որ մեր էպոսը կերտվել է հիմնականում XI-XIII դարերի պատմական իրադարձությունների հիման վրա: Այդ տեսակետից 48 պատումները բաժանել ենք երեք խմբի. 1) XI-XIII դարերի պատմական իրադարձությունների ակնհայտ վերհուշեր պարունակող պատումներ, որոնք Վանի (քաղաքի), Ալաշկերտի և Սևանի ավազանի պատումներն են, ինչպես, օրինակ, «Սասնա տուն» պատումը Վանա գավառաբարբառով, քավառցի Հակոբ Նրզեյանի, ալաշկերտցի Մանուկ Թորոյանի, նորբայագետցի Առաքել Շաքոյանի, քավառցի Դանիել Ղազարյանի և այլ համանման պատումները: 2) Պատմական վերհուշերը էպիկական վերամշակման ենթարկած պատումներ, ինչպես Վանա ծովի արևմուտքի և հարավի լեռնաստանի պատումներն են, որոնց մեջ մտնում են մանավանդ Թադեոս առաքյալի վանքի գյուղի պատումները (որոնց պատմողները նույն լեռնաստանից եկած վերաբնակիչներ կամ վերաբնակիչների սերունդներ են): Այս շարքում առաջինը պետք է դա-

97 Լույս տեղում, էջ 88:

սել Բ. Խալաթյանցի գրի առած Խապոյենց Չատիկի պատումը, այնուհետև Գ. Սրվանձությանի գրի առած Տարոնցի Կրպոյի պատումը, ինչպես նաև Կազարյան Թառոյի, Ալո Դավթյանի, Թոմաս Պետրոսյանի պատումները, Ռաշո Մուրադյանի և Ավո Չադոյանի միացյալ պատումը և ուրիշներ: Այս երկու կարգի պատումներից բացի, կան նաև երրորդ կարգի պատումներ, որոնք առաջին երկու կարգի պատումների աղճատումներն են: Պատմական սխալագործությունները, տաղանդավոր պատմողների շնորհիվ բազմաթիվ ու բազմապիսի փոփոխությունների ենթարկվելով, միշտ անկախ ու կիսանկախ մնացած վերոհիշյալ լեռնաստանում, նրա քաջ ու խիզախ ժողովրդի բերանում վերաճել են էպոսի, իսկ Վան քաղաքում և Ալաշկերտում, անկախության բացակայության պայմաններում էպիկական բնույթ չստանալով, քիչ թե շատ հարազատ են մնացել նախնական պատմավեպին: Սակայն այս երկու կարգի պատումներն էլ, ինչպես մենք այդ տեսանք Նախո քեռու օրինակով, ապաշնորհ ու մոռացկոտ պատմողների կողմից երբեմն աղճատվել ու իջել են հեքիաթի, նաղըլի աստիճանի: Բացի այդ, անտարակույս, խաչաձևումներ են եղել ինչպես միևնույն «Դավթի խեղաթի» տարբեր պատումների, այնպես էլ միանգամայն այլ հեքիաթների հետ:

Ես չեմ համարձակվում վերջնական համարել այս դասակարգումը, այն կարիք ունի բանավեճի ու ճշգրտման, սակայն որոշ ճշմարտության առկայությունն անվիճելի եմ համարում իմ առաջարկած դասակարգման մեջ:

Խապոյենց Չատիկի պատումի մեջ, ինչպես տեսանք համառոտ բովանդակությունից, Մհերն ու Մսրա Մելիքը կաթնեղբայրներ են: Մսրամելիքի մեռնելուց հետո նրա կինը կանչում է Մհերին ու կենակցում նրա հետ: Այդ կենակցությունից ծնվում է մի նոր Մսրա Մելիք, որն այդպիսով էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի խորթ եղբայրն է միևնույն հոր սերմից: Սակայն մոր գծով խորթ լինելով հանդերձ՝ երկուսն էլ մեծացել են միևնույն մոր կաթով: Փոքր հասակում Դավթին խնամել է անգամ Մսրամելիքի քույրը: Մանուկ Դավթին Մսրում պաշտպանում են ոչ միայն Մսրա Մելիքի մայրը, այլև Մսրա մեծամեծները («Մարդիր եկին հառաջ, չթողին»): Մսրամելիքի զինվորները ժամանակին Դավթի հոր՝ Մհերի զինվորներն են եղել («ավալն էլ մենք քու խոր ֆերիզներն ինք»):

Նախքան հեռավոր Մսրից Մսրամելիքը կարշավեր Սասունի վրա, հարկահավաքման համար Սասուն է ուղարկվում Կուզբաղինը: Վերաշինված Մարութա վանքը քարոքանդ անելու համար նույնպես, կանխելով Մսրամելիքին, Սասունի վրա է գալիս միևնույն Կուզբաղինը:

Դավիթը մատանու փոխանակություն էր կատարել Չմշկիկ Սուլթանի հետ, որ մահմեդական էր, սակայն գերադասում է գնալ Խանդութ Խաթունի ձեռքը խնդրել, որի հոր քաղաքը Հյուսիսային Հայաստանում է կամ թե Վրաստանում, իսկ նրա դռնապանը Համդուն է (վրաց արքունիքին, ուրեմն և Չաքարյաններին դաշնակից Համադուլահ իշխանը):

Դավթին սպանում է Չմշկիկ Սուլթանն իր քաղաքի մոտ, որը գտնվում էր Խանդութի հոր քաղաքից Սասուն տանող ճանապարհի վրա, ամենայն հավանականությամբ՝ Շահ-ի-Արմենների Խլաթը:

Էպոսի պատմականությունը որոշելու տեսակետից խիստ արժեքավոր «Վանա գավառաբարբառով» պատումը, դժբախտաբար, գրի է առնված ու հրապարակված շատ անփութ: Հոբելյանական հրատարակության խմբագրությունը պատումին կցած առաջաբանում նկատում է՝ «Տպագրությունը կատարված է շատ անփութ, բազմաթիվ տառասխալներով և հաճախ առանց կետադրության», իսկ տողատակի ծանոթություններում հաճախ ուղղել է անունների շփոթումները: Այնուամենայնիվ, այս թերություններով հանդերձ, պատումն արժանի է առանձին ուշադրության:

Թեև հայ ժողովուրդը կորցրել է քաղաքական անկախությունը՝ թագավորությունը, և ունի միայն կրոնապետ՝ պարոն Տեր-Ներսես, բայց և այնպես քաղաքական իշխանություն չունեցող այդ պարոն Տեր-Ներսեսը շատ ուժեղ և ազդեցիկ է: Երկրին տիրած «Կոապաշտ թագավորը կը տեսնա, որ չի կանա գլոխ էլնի խետ պարոն Տեր-Ներսեսին», ուստի իր երկրի կեսը տալով ուզում է խնամհանալ նրա հետ:

Այս պատումի մեջ արժեքավորն այն է, որ Սասունը որոշակի ունի երկու հակառակորդ՝ հեռավոր ու մոտիկ: Հեռավորը Մլսրն է, որ մեկ հանդես է գալիս որպես բարեկամ, դաշնակից, մեկ էլ՝ ռիսերիմ թշնամի. ճիշտ որոշված է Մսրի աշխարհագրական դիրքը՝ Փրե Բաթմանի կամրջից այն կողմ, այսինքն՝ այն գետից այն կողմ, որը Մսրից վասալական կախում ունեցող Օրթոկյաններին բաժանում էր Սասունից: Մոտիկ թշնամին *համառորեն խաղաղասեր* Խլաթն է, որի տեր Ջանփուլադը «դեվերաց թակավորն եր: Եսա թակավոր յեփ կովի կերթեր, երկթե խալավ կը խայներ (երկաթե հագուստ՝ զրահ կհագներ), խոր խամար սուր-թուր չէր պանի ինոր վերեն: Եսա թակավոր իսկի մեկ տեղե էլ վախ չուներ, ինոր վախ մենակ Սասնա տնեն եր. են տան կտրիճներ մենակ կանին զինքն սպանի»:⁹⁸ Այս

98 Սասնա Ծռեր. խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մ.-Ռհանջանյանի, Բ հատոր, մասն յերկրորդ, Յերեվան, 1951, էջ 396:

ճշմարտությունը հանրահայտ է, պատումի մեջ գիտեն բոլոր իրագույն ան-
ձինք, գիտեն նաև ինքը՝ Խլաթի տեր և դերի հրամանատար Ջանփոլադը,
որն ասում է՝ «Յես ուրիշ վոչ մեկ տեղից վախ չունեմ. իմ վախ մենակ Սաս-
նա կտրճներաց մենն ի, ու իմ մախ յա՛ Ճոչ Մելքոնից, յա՛ Դավիթից, Սանա-
սարից»:⁹⁹

Ջանփոլադը (մարմինը պողպատ) այս պատումի մեջ հանդես է գալիս
մերթ որպես Խլաթի (Շահ-ի-Արմենների) խաղաղասեր Միրան շահը որը
Սասունի Պահլավունիների՝ Եգիպտոս չգնացած իշխաններին առավ իր հո-
վանավորության տակ, մերթ որպես նրան հաջորդած Բեկթեմուր (իշխան-
երկաթ) շահ, որը, շարունակելով սասունցի իշխաններին վասալ պահե-
լու՝ իր նախորդի քաղաքականությունը, միաժամանակ հարկադրված էր
հսկողությունն ուժեղացնել սասունցիների նկատմամբ, որովհետև Մարից
պարտված վերադարձել էին մյուս Պահլավունիները և ոչ միայն հող չունե-
նալու, այլև ամբողջ երկրին վերստին տեր դառնալու ձգտումով հանգիստ
չէին մնում:

Ջանփոլադն ուժեղ է. նա շարունակ պարտության է մատնում սերնդե-
սերունդ իր դեմ ուրբի ելնող կտրիճներին, սակայն պարտվածներին չի
սպանում-ոչնչացնում, այլ միայն պահանջում է, որ նրանք սերնդեսերունդ
վասալ մնան իրեն, իսկ երբ Մարից վերադառնում են մյուս սասունցինե-
րը, «Ջանփոլադ թակավոր ամեն ճանապարհերան մարդ եր դրե, վոր հը-
մեն երթացողից գնացողից խնայար առնեն Սասնա կտրիճներաց յելմուտի
խամար»,¹⁰⁰ «են դեվը Ջանփոլադի կեշո՛ւն եր [լրտեսն էր], որ են տեխ կը
մներ, ընցնող դնցողներ աչքն ընցուցելու խամար»:¹⁰¹ Այսպես ուրեմն,
կային վասալական դրության հետ համակերպված, հանգստացած սա-
սունցի իշխաններ, և կային վասալ չդարձած, անհանգիստ սասունցի իշ-
խաններ: Ջանփոլադը ձգտում է միայն նրանց ևս վասալական կախման
մեջ պահել և այդ բանը ձևակերպել համապատասխան գրությամբ. «Ես
Ջանփոլադ *կախարդ* ելնելու խամար աշխատավ, վոր թուղթ-թանաքով
տա կապս անել Մելքոնին, աման ինչ-կննդար [որքան] որ աշխատավ, են
թուղթ չպոնեց վեր Մելքոնին:

Ջանփոլադ նորեն դարձավ, ասաց Մելքոնին (որին արդեն մի անգամ
պարտության էր մատնել, բայց չէր ոչնչացրել – Հ.Թ.):

99 Լույս տեղում, էջ 399:

100 Լույս տեղում, էջ 396:

101 Լույս տեղում:

– Արի՛ շիտակն ասա. դու ճիշտ Սասնա տան Ճոչ Մելքոն չես. չո՛ւնքի
[որովհետև] յես երազի մեջ խասկցեր եմ, վոր իմ դո՛ւման են տնիցն ի:

– Խա՛, – ասաց Մելքոն, – ճիշտ որ կ'ուզիս, յես Սասնա տան Ճոչ Մել-
քոնն եմ:

Ջանփոլադն ասաց.

– Թե վոր ըսկուն ի [եթե այդ այդպես է]՝ արի ձիկ բախտ տուր, վոր
երթաս Ճոչ Մհեր ձրո՛խկիս, գա՛ վեր ձիկ կոիվ:

– Խա՛, – ասաց Մելքոն, – յես իմ բախտ, որ երթամ, են ձրո՛խկեմ, գա՛
վեր քե կոիվ:

Ջանփոլադն ասաց.

– Քանի որ դու բախտ տվիր եղ աղեկութեն անելու (որ նա էլ իր հեր-
թին ինձնից պարտվի ու դառնա իմ վասալը – Հ.Թ.), յես ել քե աղեկ փեշքեշ
ըմ տամ: Յեփ կ'ելիս ճանապիս, կը խասնես Փրե Բաթմանի մոտ, ենտեղ
պիտի տեսնաս Սիվտակ դեվ ըմ, վոր շատ խորոտ աղջիկ ըմ փախցուցե
ու են աղջիկ ուր մոտ կը պախի: Ես աղջիկ քե փեշքեշ. կ'անես, կը տա-
նես քե խամար, վոր խնայար քո ավ (որս, որ Մելքոնը մինչ այդ, խախտելով
Ջանփոլադի սահմանած կարգը, կատարում էր նրա լեռներում – Հ.Թ.) կա-
ժի»:¹⁰² Այսպիսով, վասալական ենթարկման խոստում առնելով, Ջանփոլա-
դը նրան ուղարկում է Փրե Բաթմանի դեպ վրա, որովհետև «ես դեվերն ել
Ջանփոլադի թշնամիքն ին»:¹⁰³

Ճոչ Մելքոնից հետո Ջանփոլադի դեմ կովի է դուրս գալիս նրա որդին՝
Ճոչ Մհերը, որի զարկերը նույնպես ապարդյուն են անցնում, և նա ճարա-
հատյալ Ջանփոլադին ասում է.

«– Դե՛, մկա սրեն [հիմա հերթը] քոնն ի. ելի՛ դո՛ւն էլ քոն դարբ զարկ:

– Չե՛, – ասաց Ջանփոլադ, – յես քեզ պան չեմ անի, մենակ թե քո խոր
պես բախտ տաս ձիկ, որ երթաս քո ախպեր [տղա] Դավիթին ձրո՛խկես, գա՛
վեր ձիկ կոիվ:

Մհեր անճար մնալով՝ բախտ խտուր Ջանփոլադին, վոր երթա, Դա-
վիթ ձրո՛խկի: Ջանփոլադն ել *խրաման իրոր* ինոր, որ շոտ ըմ ճանապիս
ինկավ»:¹⁰⁴

Փրե Բաթմանն այն սահմանային գետի կամուրջն է, որտեղ շարու-
նակ իրար էին բախվում սասունցիները և Սասունի արտավայրերին աչք

102 Լույս տեղում, էջ 414-415:

103 Լույս տեղում, էջ 399:

104 Լույս տեղում, էջ 438:

տնկած Օրթոկյանները, որոնք գրավել էին Դիարբեքիրը և ընդունել էին Միրիայի տիրակալ Սալահեդդինի, իսկ նրա մահից հետո նրա եղբոր՝ Ադիլի սյուզերենությունը: Իսլաթի Շահ-ի-Արմեններին, որպես Սասունի սյուզերենների, ձեռնադրել էր իրենց հայ վասալների կոիվն այդ խիստ ագրեսիվ արտաքին թշնամու դեմ: Տվյալ պատումի մեջ, այսպիսով, պահպանվել է այդ պատմականորեն ճիշտ փոխհարաբերությունը: Իսլաթի համար հաճելի չէ անկախության ձգտող Սասունը, սակայն Իսլաթի համար ձեռնադրել է իր անհնազանդ վասալին պատերազմի գրգռել ընդհանուր արտաքին թշնամու դեմ, մանավանդ որ այդ անհնազանդ վասալը, որպես տվյալ երկրի վաղեմի տեր, ինչ-որ նկրտումներ էլ ունի:

Բայց այդ «ինչ-որ նկրտումներ ունեցող վասալը», Մատթեոս Ուռ-հայեցու արտահայտությամբ այդ «թեթև, տկար թռչունը, այդ ծիծառը», պատմության ստեղծած անբարենպաստ իրադրության հետևանքով, հարկադրված էր նաև լքել իր հայրենիքը և բախտ որոնել օտար հորիզոնների տակ: Եվ դեռ Ջանփոլադին չհաղթած, Փրե Բաթմանը չնվաճած սասունցին գնում է հեռավոր Նեղոսի ափերը և հաջողության հասնում այնտեղ:

Այս պատումի մեջ Մըսր են գնում Սասունի իշխանների բոլոր սերունդները: Նախ՝ նրանց նախամայր Սանդուխը՝ հայոց կրոնապետ Տեր-Ներսեսի դուստրը, սիրով է հարս գնում կռապաշտ թագավորին, որովհետև «թակավոր խոսք է տվել, որ ուր սարի (պալատի) դիմաց ժամ ըմ շինի, ինոր մեջ էլ տերտեր ըմ դնի քն խամար, որ դու քո ուզածի պես պաշտես քո ասպած, ուր երկրի կեսն էլ մե պիտի տա» (հիշել հայոց Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի և Ֆաթիմյան խալիֆ Էլ Մութանսիրի «հոգնակի խոսակցությունը», որից հետո Պահլավունիները գնացին Մըսր և ստացան երկրի հարավի նահանգապետությունը):

Այնուհետև Ճոչ Մելքոնը մանուկ հասակում ճիշտ այնպես, ինչպես գրեթե բոլոր պատումների մեջ Դավիթը, պատժում, հետ է ուղարկում Մարա հարկահաններին՝ ասելով.

«- Դե՛ կնացեք, ձեր թակավորուն պարել արեք, մեկ էլ ասեք ինոր, թե՛ ուր ուզած վերկու տեղ (հարկի փոխարեն) յես եսկանդար տարվան վերկին կ'ուզեմ ինորմից (այսքան տարիների հարկն եմ ուզում նրանից)»: 105 Այս վերջին պահանջը պատումի մեջ հիմնավորված չէ, որովհետև պատմողը մոռացել ու բաց է թողել այն հատվածը՝ սասունցիների զինվորական ծառայությունը Մարում, որը հիմք տար նման պահանջի:

105 Նույն տեղում, էջ 424:

Առնականացած, արդեն սեփական գավակներ ունեցող «Ճոչ Մելքոն պատրաստվավ, վոր Մարա Մելիքի վերեն երթեր կոիվ: 106 Մեկ էլ շոտ ըմ (շուտով) Ծենով Ովան ինան (և) Դոալ Վերգեն դիմացն ելան ասին, թե.

«- Խայրիկ, պետք ի, վոր մենք երթանք վեր ինոր կոիվ, դու քո տեղ խանգիստ նստի»: 106

Մարա Մելիքը երկու եղբայրների դեմ կոիվ է ուղարկում յոթոտանի ձի ունեցող Կուզպայտինին, որը պարտության է մատնվում և հարկադրված է լինում ընդունելու սասունցի եղբայրների առաջարկը:

«Են երկու ախպերներն էլ ասին.

«- Քանի վոր չեք կանա կովի խետ մե, պետք ի, վոր մե թաքի (հպատակ) ելնեք. Սանասարից վերջ ելած զըմեն վերգիքն (հարկերը) էլ կրկնապատիկ տաք. մեկ էլ Մարութա Պանցր Ասպածածնա ժամ, որ քակեր եք, առջվան պես շինեք ձեր փարով»: 107

Հարկ կամ արդյոք հիշեցնելու, որ Եգիպտոսում հայերի իրավունքները ոտնահարելու և նրանց եկեղեցիները քանդելու չորս փորձ է կատարվել եգիպտահայ գաղութի գոյության ամբողջ ընթացքում (1121, 1131, 1137, 1172 թթ.): Առաջին երեք փորձերն անպատիժ չեն անցել, և հայերի իրավունքները նորից վերականգնվել են: Միայն վերջին՝ 1172 թվականի աղետն անպատիժ մնաց: Այս խոսքերը պարզապես իրական պատմություն են:

Պարտված Կուզպայտինը ներկայանում է Մարա Մելիքին ու պատմում իրերի դրությունը:

«Թակավորն ասաց.

«- Մեր գրյանց մեջ գրուկ ի, վոր Սասնա կտրիճներ մե պիտի նխտեն. քանի վոր ըսկնա յի գրվե մեր ճակատ, ել են գիր չավիրե, կնա, ինչըն կիտես, ըսկուն արա:

Կուզպայտին շոտ ըմ յետ դարձավ են երկու նխապերներաց մոտ, ընդունեց ենոնց խոսքն, եկավ»: 108

Ծնվում է ապագա Ճոչ Մեհերը: Ուրիշ պատումների մեջ Դավիթն վերագրված մանկական չարաճիխությունները կատարելուց հետո մի օր մորն ասում է.

«Յես պիտի երթամ ուրիշ սարեր»: 109

106 Նույն տեղում:

107 Նույն տեղում, էջ 428:

108 Նույն տեղում, էջ 429:

109 Նույն տեղում, էջ 433:

Շուտով նրա «ամեն դժգոհները բաշխեցին [սկսեցին] վախճալ ու կորագլխի եղանակներ առնել... Ըստուց յետ ժողովեց ուր ասքրներ նորեն ու կնաց կռիվ վեր Մարա Մելիքին: Յեփ խառավ ինոր երկիր, խնայար ղորթիկեց են Մելիքին, ասաց:

«Յա են ի, որ բոթուն Մարոն առնեմ ըստրիս [այս անգամ], յա Սասուն ուր ամեն քաղքներով ու գեղերով քե տամ»:

Մարա Մելիք յեփ եսա խոսք լսեց, շատ տարակուսանքի մեջ ինկնով ու մարդ ղորթիկեց Մհերին, ժամանակ ուզեց: Մհերն ել ընդունեց ու քաշվավ ենտեղեն»:¹¹⁰

Բայց Մհերը հարկ է դնում Մարա վրա ու նոր հեռանում, Մարը ուժ չու-
նի Սասնա հարկից ազատվելու համար: Արարները նստակյաց դառնալով
կորցրել էին իրենց վաղեմի ռազմունակությունը. թե՛ Ֆաթիմյանները Գահի-
րեում, թե՛ Արապյանները Բաղդադում, ինչպես արդեն ասել ենք, իրենց գո-
յությունը պահպանում էին միայն վարձկան գորքի օգնությամբ, որին վճա-
րում էին: Հարկավոր էր սեփական գորք ունենալու միջոցը գտնել:

«Մարա Մելիք են ժամանակ ժողովեց ուր ֆերիզ-փայլեվաններ ու
նստավ մանդիս [ժողով, խորհուրդ], ասաց:

– Սասնա վերկին տալու ժամանակ մոտացե. խազեն ել ենկանդար
փարա չկա [Սասնա հարկը տալու ժամանակը մոտեցել է, գանձարանում
էլ այնքան դրամ չկա]: Ենկանդար տվինք, որ կտրավ վեր մե, ել չոր յներ
ինոնց վերկի տանք: Աղեկ ի, վոր մարդ ղորթիկենք, Մհերն ըստեղ կանչենք,
ինորմից իմզն առնենք խափելութով [խաբելով ստորագրություն առնենք],
վոր ել վերկի [հարկ] չի տանք ինոնց, յեփ մեզնից գորավոր մարդ ըմ կովի
ինոնց խեռ ու մխտի»:¹¹¹

Բայց այդ «գորավոր մարդը» կարող է միայն Մհերի սերնդից լինել:
Դրա համար էլ Մարա Մելիքը այդ խոսքի վրա «շոտ ըմ թուղթ ըմ գրիցին,
տվին Քամուն: Են թղթի մեջ գրուկ եր, որ ճոջ Մհեր երկու ամսու չափ
ուրենց խոր ելնի [հյուր լինի]»:¹¹²

Եվ հակառակ Խանդութի (որն այս պատումի մեջ Մհերի կինն է և
Դավթի մայրը) պատվերին. «Ճոջ Մհերն առեց ուր ֆերիզ-փայլեվաններ ու
ինկավ ճանապխ: Խասավ ճամպխի կես, չխասավ, թուղթ ըմ գրեց Մարա
Մելիքին, թե՛ «Յես խասա»: Մարա Մելիք իմանալուն պես ուր ֆերիզ-
փայլեվաններով ինոր դիմաց կնաց:

110 Նույն տեղում, էջ 434:

111 Նույն տեղում, էջ 439:

112 Նույն տեղում:

Մհեր յեփ խառավ, շատ պատվով առին, կնացին թակավորու սարեն
[պալատը]: Կերան, խման, շատ քեֆ արին:

Յեփ իրիկուն ելավ, Մելիքն ասաց Մհերին.

– Եսա կիշեր յես իմ յաթախ քե իբրամ կ'անեմ [անկողինս քեզ կիրամ-
ցնեմ]. կնա, պառկի մոտ իմ կնիկ»:¹¹³

Շուտով մեռնում են թե՛ Մհերը և թե՛ Մարա Մելիքը:

«Դավթի քառսուրք վոր թմրմավ, ինոր մերն ել մեռավ. ինոր խամար
Ծենով Ովան Դավթի կոնտխի մեջ փնթթեց, ղորթիկեց մոտ Մարա Մելիքի
կնիկ, որ շախեր, պախեր չոր ճոճաներ:

Մարա Մելիքի կնիկ Դավթին ել ծիծ իտուր խեռ ուր տղին, քանի որ են
էլ, ուր տղի պես, Մհերի սերմն էր»:¹¹⁴

Դավթը հսկայի նման է մեծանում և վտանգավոր չարաճճիություն-
ներ է անում, ապա վերադառնում է Սասուն, որտեղ, ինչպես պատումնե-
րի մեծ մասում, հայրենի հողի վրա հաղթում է Մարա Մելիքի ուղարկած
Կոզպայտինին, ապա Մարա Մելիքին, որին սպանում է և նրա մորն ասում,
«Ել ուրիշ պան չեմ ասի ձե, մենակ թե իմ խոր կապած [հորս դրած] վերկիք
[հարկերը] կ'ուզեմ ձեզնե»:¹¹⁵

Դավթը Մարա Մելիքին սպանելուց և իր հոր սահմանած հարկերը
նորից Մարա վրա դնելուց հետո գնում է Խլաթ և, վերջապես, սպանում է
Ջանփոլադին: Նա այլևս, Պատկանյանի բառերով ասած, «խիզախ, ան-
միտ պատանի չէ», այլ իր ժողովրդի և նրա կրոնի նախանձախնդիր գիտա-
կից մարտիկ, որը ձգտում է «խասնեմ իմ ազգի սաղութին»: Այս տեսակե-
տից շատ ուշագրավ է Ջանփոլադի վախճանը: Հայտնի է, որ նրա երկիրը
գերազանցապես հայաբնակ էր, մահմեդականներ կային միայն մայրաքա-
ղաքում՝ Խլաթում, մեկ էլ մահմեդական էին նրա զինվորները՝ ըստ պատու-
մի՝ Ջանփոլադի դերը: Ամենայն հավանականությամբ, մահմեդականնե-
րի ավելի քան մեկ դար տևած քաղաքական տիրապետության ժամանակ
կրոնադարձության մասնակի դեպքեր պետք է որ եղած լինեին Խլաթում:
Պատումը հաղորդում է.

«Ջանփոլադի մեռնելու խապարն ինզնով Ախլաթու ժողովրդի մեջ,
ինոր խամար շատ ուրախցան, ելան Աստուծով մեկ, եկան դիմավորեցին
Դավթին և առին տարան քաղաք թե՛ չե, մեկել ենտեղաց դեվեր ելան ինոր
դեմ ու խասան, չին թողնի, որ մտներ քաղաք:

113 Նույն տեղում, էջ 439-440:

114 Նույն տեղում, էջ 440:

115 Նույն տեղում, էջ 476:

Ենտեղ Դավիթ կոչված խեղճ գեղեցիկ, հըմենին էլ ջարդեց ու եկոնց քնդաքն էլ ավիրեց:

Դառցավ են քաղքի ժողովուրդ ժողովեց, քրիստոնեություն սովորեցուց ինոնց...»:¹¹⁶

Բացատրության հարկ չկա. պարզ է, որ հայ բնակիչներն են ուրախացել և դիմավորել Դավթին, և մահմեդական զորքն է, որ դիմադրություն է ցույց տվել սասունցի հերոսին:

Սակայն շատ առեղծվածային է պատումի վերջը: Չգիտես ինչու «Դավիթ յեփ Զանփուլդ սպանեց, էլ թո՛րայի եկավ ու երդումով ասաց, վոր՝ «Յես էլ իմ կյանքի մեջ կռիվ չանեմ»,¹¹⁷ և «հըմեն ժամանակ» «մոմ ու պախսով, աղոթքով ու խսկումով» անցկացնելով, իր «զալըմքար» (կատաղի) որդուն՝ կրտսեր Մհերին հրամայում է Թուր Կեծակին նետել ծովը: Այս երդումն, իհարկե, բարձրացնում է հերոսին՝ նրան պատկերելով որպես խաղաղասեր հայ ժողովրդի իսկական զավակ, սակայն եթե այդ քայլը պատճառաբանվում է իր ժողովրդի բնավորությամբ, որը, պետականությունը կորցնելով, նվիրվել էր միայն աշխատանքային խաղաղ գործունեության և բռնել էր մուսուլմանական օվկիանոսում ազգովին երրորդ դաս դառնալու ուղին, ապա տրամաբանորեն չի բխում պատումի գործողությունների ընթացքից: Առեղծվածային ու անտրամաբանական է նաև որդու գլխին Դավթի թափած ծանր անեծքը, քանի որ որդին անում է համարյա այն նույն բանը, ինչ որ Դավիթը արել էր իր մանկության տարիներին:



Սակայն սկզբնական պատմավեպին (գուցե և պատմավեպերին) շատ ավելի հարազատ է մնացել *քավառցի Նրգեյան Հակոբի պատումը*:

Երբ անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը 1905 թվականին Սևանի ավազանում գրի էր առնում Առաքել Շաքոյանի պատումը, նրան հայտնում են, որ կա մի ուրիշ նշանավոր ասացող. Երվանդ Լալայանը գնում է այդ մարդու՝ Նրգինենց Հակոբի մոտ «վոր ամբողջ գավառում մեծ հռչակ ունի վորպես նշանավոր հեքյաթ ասող», բայց նրա պատումը գրի չի առնում, որովհետև «հիրավի, մի պերճախոս, աշխույժ անձնավորություն է և շատ բան գիտե: Միայն, դժբախտաբար, գրագետ ե, բավական գրքեր կարդացած և զգալի ու *նույնիսկ անհեղեղ* կերպով յուր հայացքներն ու լու-

116 Լույս տեղում, էջ 478:

117 Լույս տեղում, էջ 479:

սաբանությունները մտցնում պատմած վեպի մեջ»:¹¹⁸

Քավառցի Սարգսի (Սաքո) Հակոբյանի պատումը գրի առնողն էլ (1903 թ.) չի հավանել Նրգեյի Հակոբին. «Տիրացու Սաքոյի և Նրգեյի Հակոբի տարբերությունն այն էր, վոր Սաքոն պատմում էր զուտ իր լսածը, իսկ Հակոն՝ իրանից գանազան բաներ էր ավելացնում պատմվածք-հեքյաթների վրա, խախտելով նրա բուն վոգին և եյությունը»:¹¹⁹

Նրգեյան Հակոբի բախտը չի բերել նաև հորեյանական հրատարակության ժամանակ: Արձանագրելով հանդերձ, որ «պատումս գուրկ չե յուրատեսակ գեղարվեստական արժեքից: Ասացողը խոսքի վարպետ է, պատմվածքը հաջորդական, տրամաբանորեն զարգացած, կենդանի և համակող», այնուամենայնիվ, հորեյանական հրատարակության խմբագրությունը հարկ է համարել կրճատել էպոսի պատմականությունը որոշելու տեսակետից այս արժեքավոր պատումը, և ապա հայտարարել, թե «լույս ընծայելով այս պատումը, խմբագրությունս բացի հարուստ բովանդակությունից՝ ունեցել է նաև այն նպատակը, վոր ցույց տա, թե ինչպես աշխատավորական ստեղծագործություն «Սասնա ծռերը» կերպարանափոխվել է և վերամշակվել, ընկնելով սոցիալական տարբեր խավի միջավայրը»: Եվ այդ «տարբեր խավը» սեփական գյուղից դուրս ուսում չստացած «գյուղական տիրացուն» է: Հիրավի, կեցցե ծալվարյան զգաստությունը բանագիտության բնագավառում:

Նրգեյան Հակոբի խիստ ուշագրավ պատումին անցնելուց առաջ ասենք, որ XI և XII դարերի եգիպտահայ գաղութի մասին նոր ժամանակներում, ինչպես գիտենք, առաջին անգամ գրել է Ղ. Ալիշանը, երբ նա ֆրանսերենից ծաղկաբաղ թարգմանությամբ լույս է ընծայել XII-XIII դարերի եգիպտահայ նշանավոր պատմագիր Աբու Սալիհի «Պատմություն վանորեից և եկեղեցյաց Եգիպտոսի» աշխատությունը «Ապուսահլ-հայ» վերնագրով (Վենետիկ, 1895 թ.): Եվ Ալիշանը գրել է միմիայն իր թարգմանած հատվածների հիման վրա, մեկնության կարգով, դժբախտաբար, շատ թյուր պատկերացում ունենալով իր արծարծած հարցերի մասին՝ ամենևին չտալով Սասունի անունը: Այնուհետև Մաղաթիա արք. Օրմանյանի նման պատկառելի գիտնականն իր նշանավոր աշխատության մեջ թեև մի քանի (միայն մի քանի) տող է նվիրել XI դարի եգիպտահայ գաղութին, բայց շատ ավելի քիչ իրազեկություն է հանդես բերել և շատ ավելի թյուր պատկերա-

118 Լույս տեղում, էջ 91:

119 Լույս տեղում, էջ 175:

Եւտեղ Դավիթ կոչւալ խեղ ունեւրաց. հըմենին ել ջարդեց ու եկոնց քնդաքն ել ավիրեց:

Դառցալ են քաղքի ժողովուրդ ժողովեց, քրիստոնէություն սովրեցուց ինոնց...»: ¹¹⁶

Բացատրության հարկ չկա. պարզ է, որ հայ բնակիչներն են ուրախացել և դիմաւորել Դավթին, և մահմեդական զորքն է, որ դիմադրություն է ցույց տվել սասունցի հերոսին:

Սակայն շատ առեղծվածային է պատումի վերջը: Զգիտես ինչու «Դավիթ յեփ Ջանփուլադ սպանեց, ել թոճայի եկալ ու երդումով ասաց, վոր՝ «Յես ել իմ կյանքի մեջ կոիլ չանեմ»», ¹¹⁷ և «հըմեն ժամանակ» «մոմ ու պախսով, աղոթքով ու խսկումով» անցկացնելով, իր «զալըմքար» (կատաղի) որդուն՝ կրտսեր Միհրին հրամայում է Թուր Կեմակին նետել ծովը: Այս երդումն, իհարկե, բարձրացնում է հերոսին՝ նրան պատկերելով որպէս խաղաղասեր հայ ժողովրդի իսկական զավակ, սակայն եթե այդ քայլը պատճառաբանվում է իր ժողովրդի բնավորությամբ, որը, պետականությունը կորցնելով, նվիրվել էր միայն աշխատանքային խաղաղ գործունեության և բռնել էր մուսուլմանական օվկիանոսում ազգովին երրորդ դաս դառնալու ուղին, ապա տրամաբանորեն չի բխում պատումի գործողությունների ընթացքից: Առեղծվածային ու անտրամաբանական է նաև որդու գլխին Դավթի թափած ծանր անեծքը, քանի որ որդին անում է համարյա այն նույն բանը, ինչ որ Դավիթը արել էր իր մանկության տարիներին:



Սակայն սկզբնական պատմավեպին (գուցե և պատմավեպերին) շատ ավելի հարագատ է մնացել *քավառցի Նրգեյան Հակոբի պատումը*:

Երբ անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը 1905 թվականին Սևանի ավազանում գրի էր առնում Առաքել Շաքոյանի պատումը, նրան հայտնում են, որ կա մի ուրիշ նշանավոր ասացող. Երվանդ Լալայանը գնում է այդ մարդու՝ Նրգինենց Հակոբի մոտ «վոր ամբողջ գավառում մեծ հռչակ ունի վորպէս նշանավոր հեքյաթ ասող», բայց նրա պատումը գրի չի առնում, որովհետև «հիրավի, մի պերճախոս, աշխույժ անձնավորություն է և շատ բան գիտե: Միայն, դժբախտաբար, գրագետ ե, բավական գրքեր կարդացած և զգալի ու նույնիսկ անհեղեղ կերպով յուր հայացքներն ու լու-

116 Նույն տեղում, էջ 478:

117 Նույն տեղում, էջ 479:

սաբանությունները մտցնում պատմած վեպի մեջ»: ¹¹⁸

Քավառցի Սարգսի (Սաքո) Հակոբյանի պատումը գրի առնողն էլ (1903 թ.) չի հավանել Նրգեյի Հակոբին. «Տիրացու Սաքոյի և Նրգեյի Հակոբի տարբերությունն այն էր, վոր Սաքոն պատմում էր զուտ իր լսածը, իսկ Հակոն՝ իրանից զանազան բաներ եր ավելացնում պատմվածք-հեքյաթների վրա, խախտելով նրա բուն վոգին և եյությունը»: ¹¹⁹

Նրգեյան Հակոբի բախտը չի բերել նաև հորելյանական հրատարակության ժամանակ: Արձանագրելով հանդերձ, որ «պատումս զուրկ չե յուրատեսակ գեղարվեստական արժեքից: Ասացողը խոսքի վարպետ է, պատմվածքը հաջորդական, տրամաբանորեն զարգացած, կենդանի և համակող», այնուամենայնիվ, հորելյանական հրատարակության խմբագրությունը հարկ է համարել կրճատել էպոսի պատմականությունը որոշելու տեսակետից այս արժեքավոր պատումը, և ապա հայտարարել, թե «լույս տեսակետից այս արժեքավոր պատումը, և ապա հայտարարել, թե «լույս տեսակետից այս արժեքավոր պատումը, խմբագրությունս բացի հարուստ բովանդակությունից՝ ունեցել է նաև այն նպատակը, վոր ցույց տա, թե ինչպես աշխատավորական ստեղծագործություն «Սասնա ծռերը» կերպարանափոխվել է և վերամշակվել, ընկնելով սոցիալական տարբեր խավի միջավայրը»: Եվ այդ «տարբեր խավը» սեփական գյուղից դուրս ուսում չստացած «գյուղական տիրացուն» է: Հիրավի, կեցցե ծապվարյան զգաստությունը բանագիտության բնագավառում:

Նրգեյան Հակոբի խիստ ուշագրավ պատումին անցնելուց առաջ ասենք, որ XI և XII դարերի եգիպտահայ գաղութի մասին նոր ժամանակներում, ինչպես գիտենք, առաջին անգամ գրել է Ղ. Ալիշանը, երբ նա ֆրանսերենից ծաղկաբաղ թարգմանությամբ լույս է ընծայել XII-XIII դարերի եգիպտահայ նշանավոր պատմագիր Աբու Սալիհի «Պատմություն վանորեից և եկեղեցյաց Եգիպտոսի» աշխատությունը «Ապուսահլ-հայ» վերնագրով (Վենետիկ, 1895 թ.): Եվ Ալիշանը գրել է միմիայն իր թարգմանած հատվածների հիման վրա, մեկնության կարգով, դժբախտաբար, շատ թյուր պատկերացում ունենալով իր արծարծած հարցերի մասին՝ ամենևին չտալով Սասունի անունը: Այնուհետև Մաղաքիա արք. Օրմանյանի նման պատկառելի գիտնականն իր նշանավոր աշխատության մեջ թեև մի քանի (միայն մի քանի) տող է նվիրել XI դարի եգիպտահայ գաղութին, բայց շատ ավելի քիչ իրազեկություն է հանդես բերել և շատ ավելի թյուր պատկերա-

118 Նույն տեղում, էջ 91:

119 Նույն տեղում, էջ 175:

ցում է ունեցել այդ գաղութի մասին, քան Ալիշանը: Այդ զարմանալի գաղութի մասին մենք այժմ որոշակի և ճշգրիտ պատկերացում ունենք միմիայն Գ. Մըսրյանի կատարած թարգմանությունների շնորհիվ, որոնք լույս են տեսել 1935 և 1947 թվականներին, այսինքն՝ Նրգեյան Հակոբի մահվանից հետո միայն: Լեոն իր կյանքի վերջին տարիներին իմացել էր այդ գաղութի մասին և խոստացել էր գրել, բայց չի գրել, իսկ Մանանդյանը միայն 1946 թվականին էլ լսել այդ գաղութի մասին: Այս բոլորից հետո «սոցիալական տարբեր խավի» ներկայացուցիչ «գյուղական տիրացուն» ինչպես կարող էր, իր գյուղից դուրս չգալով, էպոսը «կերպարանափոխել և վերամշակել» ու, ինչպես շուտով կտեսնենք, շատ տեղերում դարձնել 800-ամյա հեռավոր անցյալի պատմությանը հար և նման: Պարզ է, որ մեր բանահավաքները, ճիշտ պատկերացում չունենալով էպոսի պատմականության մասին, թերագնահատել են այդ տեսակետից արժեքավոր պատումը և դեռ վիրավորական խոսքեր են ասել պատմողի հասցեին, որն օժտված է եղել «սուր հիշողությամբ», ինչպես գրում է նրա մասին Խաչատուր Ավետիսյանը:¹²⁰

Նրգեյանի պատումն սկսվում է Եգիպտոսի սուլթանի արքունիքում մեծ պաշտոն վարող Հովհաննես իշխանի և նրա որդիների անօգնական վիճակից, որն առաջացել էր դինաստիական փոփոխության հետևանքով: Մենք արդեն գիտենք, որ Ֆաթիմյան խալիֆները, մանավանդ Էլ Մութանսիրը, գրկաբաց էին ընդունում հայերին և ամեն բանում ընդառաջում էին նրանց, իսկ երբ Ֆաթիմյան խալիֆայությունը վերացավ Եգիպտոսում, և այնտեղ հաստատվեց նոմադական ուժերի վրա հենվող Մարա Մելիք Սալահեդդինի Էյուբյան թագավորությունը, ապա բարյացակամ վերաբերմունքը փոխվեց թշնամանքի:

Նրգեյանը ճիշտ այդպես էլ սկսում է.
«Եգիպտոսի սուլթանը, յերբ իմացավ հայերու գաղթվելը իրա քաղաք, գրկաբաց ընդունեց նրանց և նրանց շինության նյութեր ընծայեց:

Հայերը բնակվեցին այդ քաղաքի մեջ: Հայերը կը ծառայեյին քրիստոնեյության, իսկ ամբողջ քաղաքը հեթանոս էր և կռապաշտ:

Անցան մի քանի տասնյակ տարիներ, վոր հայերը բազմացան և առաջադիմեցին թե՛ վաճառականության և թե՛ ուսման մեջ:

Յերբ փոփոխություն եղավ սուլթաններուն, մի նոր անորեն մը (այսինքն՝ Սալահեդդինը – Հ.Թ.) իշխանական գահ բարձրացավ, հավատքի և ազգության նախանձը սկսեց գրգռել:

120 Նույն տեղում, էջ 9:

Այնուհետեվ հեթանոսները սառը աչքով կ'իրիշկեյին [կնայեին] հայերուն՝ նման Մովսեսի ժողովրդին փարավոնի կողմից»:¹²¹

Այստեղ արդեն ոչ թե Աստվածաշնչի նմանությամբ պատմություն է հերյուրված, այլ Աստվածաշնչից բերված պատկերավոր համեմատությամբ հաղորդվում է XI և XII դարերի եգիպտահայ գաղութի իրական պատմությունը:

Եգիպտահայ գաղութի գոյության ժամանակ, երբ սասունցիներից հավաքագրվող մշտական զորք էր պահվում այնտեղ, անտարակույս, սերտ կապ է եղել հայկական բնօրրանի և Եգիպտոսի միջև: Նրգեյանի պատումի մեջ կարդում ենք. «Հայերից մի պառավ կին, բանիմաց, յերկու-յերեք աղջկանց հետ քաղաքի դրաղը բանջար կը հավքեր: Այդ ժամանակ Յեգիպտոսի հայերու Հայաստան գնալ և գալ՝ յերթեվեկություն կար»:¹²²

Անտարակույս, Նրգեյանը անհատական շատ բան է մտցրել իր սուցիչ Հակոբ Տեր Մարտիրոսյանից և ծագումով սասունցի Մովսես Ավդալ Հզորյանից սովորած իր պատումի մեջ: Եվ երբ նա ոգևորված բացականչում է. «Բել, Պահ, Աստարովտ, Աբուշաս, Արտեմիս, Հերակլես և Փրադիդի»,¹²³ ապա դժվար չէ «սոցիալական տարբեր խավի» այդ ներդրումը գանազանել կրտսեր Միերի այն ճշմարտապատում ողիսականից, որ պահպանվել է նրա պատումի մեջ:

Սալահեդդինի դուզի թուրքերն ու քրդերը ջախջախել են Եգիպտոսի հայկական զորքը: Եգիպտոսի հայ գաղութը սարսափի մեջ է: Հայ զորապետներ այլևս չկան Եգիպտոսում: Արհեստավորներն են ղեկավարում որբացած համայնքը: Նրանք օգնություն են կազմակերպել աղետյալներին: Պատումը հաղորդում է, որ հայ զորքի ղեկավար Միերը բռնված ու նետված է հորի մեջ: Մի հայ պառավ օգնության է հասնում նրան.

«– Իմ սիրելի գավակ, – ասում է նա, – յես մի քրիստոնյա պառավ եմ, ազգով հայ. քո բռնությունը [բռնվելը] ամբողջ Յեգիպտոսի հայերու վրա սուգ տարածեց: Իմ տարիքը հարյուր քսան տարի յե (ակնարկում է հայ գաղութի պատմությունը – Հ.Թ.), յես մի խրատ տամ քեզ, լսիր, և գուցե ազատվես»:¹²⁴

Պառավը Միերին հայտնում է, որ այդ հորը ստորերկրյա անցքով միացած է մի ուրիշ հորի հետ, որի բերանի գաղտնիքը թշնամին չգիտե:

121 Նույն տեղում, էջ 13-14:

122 Նույն տեղում, էջ 36:

123 Նույն տեղում, էջ 17:

124 Նույն տեղում, էջ 75:

«Դու այդ անցքով անցիր մյուս հորը. երբ Մարա Մելիքի մարդիկ հանգստանան, ես կգամ քեզ օգնության»:

«Յերբ մի որ թե երկու որ քաղաքը ամայացավ, հայերն էլ այդ սգով իրանց տներն էյին մտած, հիշյալ պառավը մի մեքենա ձեռք բերեց, վերցուց գիշերով մեքենան, բահ, բրիչ և իրա աղջիկ՝ հորու բերանը եկան: Պառավը կը հիշեր հորի բերնի տեղը. իրան աղջկանը ցույց տվավ և սկսեցին բրել, մինչեւ գտան հորի բերանը: Մեքենայի պարանը ներս կախին, և ձայն տվավ պառավը.

– Մհեր, պարանը կապիր:

– Կապեցի, մայրիկ:

Պառավն ու աղջիկը սկսեցին մեքենան մանել, մինչեւ Մհերին դուրս բերեցին հորի բերան: Յերբ ազատեցին իրանց ազգի ճրագը, նորից հորի բերանը ծածկին ենպես, վոր մարդ չեր գիտէ, և Մհերին իրանց տուն բերին»:¹²⁵ Ազատված Մհերը սոված է, ուտելու բան է ուզում, իսկ պառավն ու իր աղջիկը աղքատ մարդիկ են, Մհերին կշտացնելու բան չունեն, սակայն. «Մհեր ջան, – ասում է պառավը, – այստեղ մեզ յերկու հարյուր տնից ավելի հայեր կանք. նորանց միջին մեկը ամենագերապատիվ իշխան Դարբին Մարկոս կ'ասին: Նա իրա գալումը [դահլիճում] ձեզ համար մի աթոռ ե պատրաստել ձեր շորերուց և ձեռք ընկած գենքերուց: Այստեղ դրած ե ձեր անվան համար ի հիշատակ՝ քո մահվան հացը, ջուրն ու գինին: Այնտեղ գալողինը կը կերակրեն, և ամեն մի գալողը, յերբ գինու բաժակը ձեռք կ'առնէ, կ'երթա քո մահվան համար զարդարված աթոռի դեմը կը կանգնէ, յերեք անգամ խոնարհ գլոխ կը տա և հետեւյալ խոսքերը կ'արտասանէ. «Ո՛վ դյուցազներու դյուցազն, հանգիստ քո հավիտենական անմահ հոգուն. քեզանով հանգավ մեր հայոց բոցավառ ճրագը, և վառվեց նոցա ճրագը»...

– Վեր, Մհեր ջան, վեր, յես ցույց կը տամ: Այնտեղ դու քո քաղցդ կը հազեցու:

Վեր եկան պառավն ու Մհերը:

Լուսաբացին մոտ եր: Գնացին հիշյալ տեղը: Պառավը ցույց տվավ հիշյալ բնակարանը: Յերբ Մհերը ներս մտավ՝ կիսահագնված, քաղցած ու այլանդակված, բոլորի գլոխը նստած էր Դարբին Մարկոս՝ սգո սեւ հալճները [հագուստները] հագած»: (Մհերն այդտեղ դյուցազնի պես ու չափ կուշտ ուտում և խմում է – Հ.Թ.) «Դարբին Մարկոսը վոչինչ չխոսեց, բայց

125 Նույն տեղում, էջ 76:

դեմի հարյուրավոր իշխանները քթներու տակից մրթմրթացին» (որ Մհերը շատ ուտելիք էր խժռել նրանց համար այդ նեղ օրերին – Հ.Թ.):

Մհերը նկատում է նրանց դժգոհությունը, դրա համար էլ ուզում է հայտնել իր ով լինելը:

«Մհերը Դարբին Մարկոսին իմաց արեց.

– Դուսը մի պառավ կա, կանչեցնք:

Պառավը ներս եկավ: Մհերը դառավ դեպի Դարբին Մարկոսը.

– Հայրիկ, մերո՞նք են, թե ոտար ազգի կանք:

– Վո՛չ, սիրելի զավակս, վոչ վոք ոտար ազգի չկանք. մենք ենք:

– Առա՛ջ արի, ազատող մայրիկ, ինձի դու վո՞րտեղից ես բերել:

Պառավը խոստովանորեն պատմեց եղելությունը: Հայերու ուրախության չափ ու սահման չկար»:¹²⁶

Ինչպես չհիանալ այսքան ռեալիստական նկարագրության պահպանմամբ: Հեռավոր Եգիպտոսում քրդական և թուրքական սարսափից ահաբեկ հայերն ի մի են հավաքվել. իշխաններն արդեն արհեստավոր մարդիկ են. նրանք ողորում են հայ գործի կորուստը, նրանք պահել են հայ գորավարի շորերն ու իրենց ձեռքն ընկած գենքերը: Դեռևս տնավեր չեղածները կերակրում են անտուն դարձած իրենց ազգակիցներին: Նրանք նեղ օրի են հասել. սովածի շատակերությունը դժգոհություն է պատճառում նրանց: Որքան իրական է հորը ստորերկրյա անցքով ուրիշ հորի միացած լինելը, որքան բնորոշ են գաղտնապահության դատապարտվածների «մերո՞նք են, թե ոտար ազգի կանք» հարցումը և «վոչ վոք ոտար ազգի չկանք, մենք ենք» հանգստացուցիչ պատասխանը:

Այնուհետև պատումը հաղորդում է, որ Եգիպտոսի հայ գործի ջախջախվելու լուրը հասել է Սասուն (որտեղից հավաքագրվում էին նրանք), և Մհերի ազգականները Սասունից դուրս են եկել օգնության հասնելու Մհերին: Հալերում նրանք իմանում են Մհերի մահը և մեռելահաց են կազմակերպում այդ առթիվ: Ազատված Մհերն իր ազգականներին՝ «ազնվանց որդիներին» գտնում է Հալերում, ճաշակում իր մեռելահացը, որից հետո իր ազգականների հետ գնում է Մշար և Մարի հայությանը հանում տանում հասցնում է Սասուն:

«Առան, եկան Հալար:

Յերբ Հալար եկան, Հալարու իշխանությունը հանձնեցին Խոր Մանուկին, և իրանք մեծ գործով գնացին Մար:

126 Նույն տեղում, էջ 77-79:

Ինչպես Մովսես, գերությունից դուրս բերին հայերին մինչև Սասուն քաղաք»:¹²⁷

«Մովսես», «գերություն», «հայերին դուրս բերել»։ միթե սա նմանություն է Աստվածաշնչին։ Վեպի պատմողն ինչո՞վ է մեղավոր, որ Մովսեսի ժողովրդի պատմությունը Նեղոսի ափերին կրկնվել է նաև սասունցի հայ գործի պահպանությունը վայելող եգիպտահայ գաղութի հետ։

Եգիպտահայ գաղութի պատմության տեսության մեջ, ինչպես տեսանք, Գահիրեում մեծ վեգիություն պաշտոնին հասած Վահրամ Պահլավունին 1137 թվականին պարտվում է Ռյուդվան Վալախիին և հարկադրված է լինում միառժամանակ, փաստորեն ուղիղ երեք և կես տարի, մինչև 1140 թվականը, ապավինել Եգիպտոսի հարավ՝ քրիստոնեական Նուբիային սահմանամերձ հայկական Ճերմակ վանքերին։ Ինչպես ցույց են տալիս հետագա դեպքերը, երբ նա ուժեղացած հետ վերադարձավ Ճերմակ վանքերից և նորից գրավեց Գահիրեն, նա այդ վանքերում չէր ճգնում, այլ նորանոր ուժեր էր հավաքում։ Եգիպտահայ գաղութի այդ զարմանալի էջն էլ, երբ հայկական բնօրրանից այդքան հեռավոր վայրում Վահրամ Պահլավունին կարողանում է ուժեղանալ, գրեթե անաղարտ, պահպանվել է Նրգեյանի պատումի մեջ։

«Ինքը [Մհերը] բառնալ տվեց միքանի որվան պարեն՝ միքանի ծառաներու հետ գնաց հեռու մարդկային բնակությունից և այնտեղ չաղըրը [վրան] խփեց և ծառայքը ետ դառուց։

Մհերն օրական քսան թերթ կը գրեր, ճանապարհներու վրա կը ձգեր։ Թերթերը կը գտնեյին, զանազան քաղաքներ կը տանեյին, վորոնց մեջ գրված էր այսպես։

«Յես, Սասունցի Մհերս, գնացի լեռան կողմը՝ վորպես թե վարքս մաքրեմ, բայց հիմա այնպիսի մերձամահ տկարության մեջ եմ, վոր այլևս չկա փրկություն։

Կարդացող-լսողները բոլորը թշնամի եյին Մհերին։

– Ել սրանից լավ որ չի լինի, – ասեցին նրանք, խումբեր կազմեցին հազարից մինչև չորս հազար ու վրա կը գային։

Մհերը վոտքի կը կանգներ, բոլորին կը կոտորեր։

Ամիսներ ու տարիներ Մհերը այդ դերի մեջ էր։ Բայց մի որ հանկարծ, մարդս ինչ վոր ման գա, կը գտնե։ Մհերը այնպիսի ծանր հիվանդութենե բռնվեցավ, վոր առաջինները թե սուտ եյին, իսկ վերջինը՝ ուղիղ։

¹²⁷ Նույն տեղում, էջ 88։

Մհերը թող մնա իրա տեղը, մենք յետ դառնանք Գոհարի վրա։

Շաբաթ-շաբաթ նորա պարենը կ'ուղարկեր»։

Գոհարը, Մհերի քույրը՝ Դեղձունը, և Խոր Մանուկը պղնձյա ճան գցելով իմանում են Մհերի հիվանդությունը և «...ձիերը դուրս հանեցին և հեծան։ Մինչև լուսաբացին տեղը հասան, վորտեղ էր Մհերը։

Հինգ որ մնացին այնտեղ։ Յեվ կատարյալ բժշկություն գտավ։ Բայց Գոհարը նորից գրեց Ազնվանց վորդոց։

Մինչև Մհերը առողջացավ, Ազնվանց վորդիքը եկան։

Քեռի Թորոսը սկսեց.

– Վորդի, այդ ինչ խելք ե, կը բանեցնես. դու մի որ լեռան կողը կը մեռնիս, քո դիակն էլ չի երեվա...

– Ինչ անեմ, Քեռի Թորոս, յերդված եմ։

– Թող քո երդումդ ինձի պատժե։ Դու յոթ տարու վրա յերդված ես։ *Սա յերեք և կես տարի* դու այդտեղ ես. յերեք և կես ցերեկ, յերեք և կես գիշեր, – ահա՛ քո յերդումդ անցավ։ Դե՛, վեր, այդ խելքդ խելք չե՛։

Առան եկան Հալար։

Երբ Հալար եկան, Հալարու իշխանությունը հանձնեցին Խոր Մանուկին և իրանք մեծ զորքով գնացին Մըրը։

Ինչպես Մովսես - գերությունից դուրս բերեցին հայերին մինչև Սասուն»:¹²⁸

Տարակույս չի կարող լինել այս պերճախոս հատվածի վավերականության մասին, երբ արաբ հին պատմագիրներն էլ են միևնույնն ասում։

Վահրամ Պահլավունու հարկադրական նահանջի մասին XII-XIII դարերի արաբախոս զգույշ հայ պատմագիր Աբու Սալիհից ծաղկաբաղ թարգմանությամբ Ալիշանը հաղորդում է, որ Պահլավունին եգիպտահայությանը խորհուրդ է տալիս «իրենք իրենց ստացուածքն առնուն երթան ի Սայիտ (հիմայ Սիւյիտ)։ Ինքն ալ գնաց յ'այն կողմն, ի Թեբայիդ, ուր դեռ հին ճգնաւորաց հետեւող վանքեր ու վանականներ կային և ուր իր եղբայրն Վասակ իշխան էր։ Ռիւտովան [Պահլավունուն Գահիրեում տապալողը] յաջողեցաւ յանկարծ վրայ հասնիլ, բռնել և սպաննել զՎասակ. ուզեց բռնել և զՎահրամ, (և ըստ ոմանց բռնեց)։ Բայց իմանալով որ նա քաշուած ի վանս՝ ճգնաւորի կեանք կ'անցընէ, թողուց ազատ, ու եկաւ մայրաքաղաքին մնացեալ Հայերը հալածեց, և Զուիբեայ [հայոց] վանքը արեց»:¹²⁹

¹²⁸ Նույն տեղում, էջ 87-88։

¹²⁹ Ղեւոնդ Ալիշան, Աբուսահլ հայ, էջ 48։

Այս նույն հարցի մասին ժամանակակից արաբ պատմաբան դոկտոր Հասան Իբրահիմ Հասանը, օգտագործելով հին պատմագիրներ Իբն էլ Գալանիսիի (XII դ.), Իբն Մյուսերի (XIII դ.) և Աբու Սալիհի (XII-XIII դդ.) հաղորդումները, գրում է. «...իր եղբորը սպանութենէն երկու օր յետոյ Գուս հասա Պէիրամ իր ընտանիքով և զինուորներու խումբով մը, եղբորը վրէժը լուծեց, քաղաքը աւարի տուաւ և բնակիչներէն շատերը սպաննեց: Յետոյ գնաց Ասուան և Ճերմակ վանքեր կոչուած ամուր վայրին մէջ բնակութիւն հաստատեց»:¹³⁰

Իր «ճգնության» վայրից ցուցումներ տալով եգիպտահայությանը, օգնական զորք հավաքագրելով ոչ միայն եգիպտահայությունից, այլև հեռավոր Սասունից՝ Վահրամ Պաիլափունին միաժամանակ ամենայն հավանականությամբ օգնական զորք է ստացել նաև Նուբիայի քրիստոնյաներից, այլապես նա չէր նահանջի ու ապավինի Եգիպտոսի հարավը: Էպոսի պատումներից մեկի մէջ կա մի այսպիսի վկայություն. Դավթին հայրենիքի ճանապարհին ոչնչացնելու համար Մարա Մելիքը սևամորթ (գառա) ուղեկից զինվոր է դնում նրա հետ: Ինչպես բոլորին, այս սևամորթին ևս չի հաջողվում սպանել Դավթին, ընդհակառակը, Դավթը «երկըսի քամակ բերեց» այնպես «գարկեց հիրար», «ընդրանց կողրանք մտավ հիրարի մէջ»: Նրանք այլևս չեն կարողանում պոկ գալ իրարից և դիմում են Դավթին.

«Դավթ, բա մեր ախրըը (վերջը) մ'ոնց պտի ըլլի,

Չի պոկվենք իրարից:

Դավթ ասավ. – Չէ,

Չենք պրծնի իրարից չուր (մինչև) ձեր մահվան որը:

Ասին. – Դավթ, արի քաշա՛, քաշա՛,

Մեզ իրարից պրծըցըրա.

Մենք քանի սաղ ու կենդանի յենք, *քեզի ծառայենք*.

Առաջի աստըծուն ուխտ ըլլի:

Դավթ գնաց, քաշեց, իրարից պրծացրեց:

Եկան, ընկան Դավթի հառեջ.

Սալամաթ Դավթին բերին, տարան Սասուն»:¹³¹

Այստեղ կարևորն այնքան «քեզի ծառայենք»-ը չէ, որքան քրիստոնեաբար երդվելը՝ «առաջի աստըծուն ուխտ ըլլի»: Հիշենք, որ մյուս պատումների մէջ ուղեկիցները նեղն ընկնելիս Դավթին հայտնում են, թե մենք քո հոր զինվորներն ենք եղել ժամանակին:

130 Գէորգ Արսրեան, նշվ. աշխ., էջ 72:

131 Սասնա Շոնր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 251-252:

Հակոբ Նրզեյանի պատումի մէջ գրեթե անադարտ պահպանվել են նաև Գրիգոր Տղա կաթողիկոսի՝ Եգիպտոսից վերադարձած և հայրենի Սասունում անհող մնացած և աստանդական կյանքի դատապարտված քույրորդիներ Հեթում և Շահնշահ Պաիլափունի-Մամիկոնյան եղբայրների փոխհարաբերությունները Շահ-ի-Արմեններին վասալ դարձած իրենց մյուս ազգականների հետ (որոնց հոր անունը հայ պատմագրությունը պահպանել է՝ «Վիգեն» և համընկնում է այս պատումի «Վերոյին», ինչպես նաև բոլոր մյուս պատումների «ցոան Վերգոյին»), և նրանց հուսահատաբար հեռանալը Սասունից.

«Շարունակելով իրանց ճանապարհը, եկան, հասան Սասուն քաղաք: Ամեն մարդիկ տեսան Մհերի գալը, չափազանց ուրախացան: Բայց Ցոան Վերոնը պինդ նստել է գահի վրա:

Մի որ, թե մի շաբաթ մնալուց հետո Մհերը հարցուց.

– Քեռի Թորոս:

– Հա՛, վորդի ջան:

– Քեռի, Վերոնը յերբ պիտի մեզի կանչե և իմ պապական գահը ինձ հանձնե:

– Եսօր ե, եգուց ե, վորդիս. նա ել կը պատրաստվի, կը մտածե:

Բայց Քեռի Թորոսը շատ անգամ գնացել է իրա յեղբայր Վերոյի կուշտ:

– Յեղբայր, թագաժառանգը եկել է, նորանը կանչիր և իրա պապի գահը հանձնիր: Դա հորից ավելի քաջ ե, վոր նորա յերկուողը այսոր աշխարհը հասկացան:

Վերոնը, լսելով այս խոսքեր, սաստիկ կը բարկանար և կը հրամայեր դահիճներին.

– Գլխը զարկեք:

Նախարարությունը մեջ կը մտնէր, Քեռի Թորոսինը կ'ազատէր:

Յերբ կը գար իրա տունը, Մհերը կը հարցնէր.

– Քեռի, պալատը չե՞ս գնացել:

– Հիմա՛ յեկի, վորդիս:

– Բայց մեծ քեռինը ի՞նչ կ'ասե:

– Նա ինչ պիտի ասե, վորդիս, ձեր կրակովը կը վառվե, եսօր, եգուց ե, ձեզ կը կանչե և կը նստացնե ձեր պապի գահը:

Բայց Վերոյին ութ տղերք ուներ, ութն էլ վորպես արքայազն՝ վորսի կը գնային, և ամեն յերեկոյան, Մհերը, այդ իմացել էր, կ'երթար ճանապարհի

վրա, հիշյալ տղերքի բերած վորսից իր մի մասը կ'առնեն, կը բերեն Քեռի Թորոսի տունը, կը խորովեն, կ'ուտեն:

– Որերս ձեր վորսերը նվազ կ'երեվա. ինչ բան է, հարցրեց Յոան Վեքոն:

– Հայրիկ, ձեր քեռորդին է, ինչ է, չգիտենք, որ Կապուտ Կողից եկել է: Նա ամեն իրիկուն կը գա ճանապարհի վրա, և մեր բերած վորսերից կես մասը նրանը կը տան:

Վեքոնը բարկացավ տղոց վրա և ասաց:

– Ձեր ութ յեղբայրին ել հորեմ: Նա ո՞վ գիտե՝ ով է կամ ինչ մարդու վորդի յե, վոր գա ձեր վորսերը խե: Կարաք, նորան մեռցուցեք. յեթե վոչ՝ դուք ամենքդ ել մեռեք:

Վեքոն վոր այս խրախուսանք խոսքերը ասեց տղոց, տղերքը զենքերը սրեցին և վորսի գնացին:

– Յերբ յերեկոյան դարձան, Մհեր իրա սովորականի համեմատ՝ ճանապարհի վրա կանգնած եր.

– Եհ, քեռիք ջան, բերեք, տեսնենք՝ այսոր վորսերդ առանտ է:

Հարցի պատասխան լսեց այսպես.

– Կորչիր ճանապարհից, յեթե վոր չես ուզե այս սրերը սիրտդ մխվեն:

– Ինչու՞, քեռիք, դուք իմ պապի փողն ու խազինեն կ'ուտեք, յես ձեր ինչն եմ կերել:

Մհերը տեսավ, որ սրերը մերկ արեցին, իրա վրա կ'արշավեյին, իրա ձեռքը վոչինչ չկար, քամակինը տեսավ մի կոնի կար,¹³² յետ քաշվեց, երկու ձեռքով դժնիկի բողազը բռնեց ու հույս տվավ, դուրս քաշեց: Նորա քոքը յերկու գազ գետնից դուրս յեկավ, և իրա գործիքի պոչիցը բռնեց, ամեն մի տղին մի-մի հատ խփեց, – ձիերուց վար թափվան: Յեվ հետո կոնինը ճելաքեց վորպես ջով, վոր խուրձ կը կապեն, ութ յեղբորն ել վրա դրեց, պինդ կապեց մի խրձի պես և բոլորի բերած վորսերը առավ ու Քեռի Թորոսի տունը գնաց:

Հետո Մհերի սրտի մեջը կը կռվեյին երկու խորհուրդներ, այն է՝ մեկը Վեքոյի և իրան տղերքին պատժելը, իսկ մյուսը՝ Քեռի Թորոսի համոզիչ խոսքերը: Թե տղենը վորին հետեվի, չգիտե. երկու քարի մեջ ալյուրի պես է մնացել: Ապա Մհերը լավ համարեց՝ Սասնա աղն ու հացը իրա հարամ եղնի, վոր նա Սասուն ապրի, իրա աչքով տեսնի այդ սեփականությունը, վոր իր պապից մնացած եր:

132 «Թորքերեն» դարաչիջան». Լարեկացին «դժնիկ» կ'ասե՝ փշի քոլ: Ծանոթ. ասացողի:

Քեռի Թորոսը լաց, թե ծիծղաց, աղերսեց, թե խնդրեց, հնարավորություն չեղավ: Մհերը անիծեց իրա որը, վեր ելավ, ձի նստեց ու յերդվեց, վոր այլևս Սասունա հացը չկիսի: Դոնդի սանձը թորգեց մինչեվ յերեկոյան գնաց»:¹³³

Նրգեյանի հետ նույն ուսուցչից սովորած Սարգիս (Սաքո) Հակոբյանի պատումը միանգամայն անտարակուսելի է դարձնում, որ կրտսեր Մհերի վիճակը հիշեցնում է Գրիգոր Տղա կաթողիկոսի քույրորդիներ Հեթում և Շահնշահ Սասունցիներին: Ինչպես իր տեղում ասացինք, հայրենականից զրկված այս իշխաններին այդ ժամանակ, Խաչակրաց երրորդ արշավանքի նախօրյակին, անձկանոք սպասում էին Կիլիկիայում՝ նրանց Ռուբինյանների փեսա և ապա գահի ժառանգորդ դարձնելու համար: Հակոբյանի պատումի մեջ Մհերը հորից դուրս է եկել, գտնվում է Հալեքում, արդեն հեծել է իր ձին: Միևնույն Հալեքում գտնվող նրա ազգական «սասունցիները, որ տեսան Մհերին, խնդրվան յետ գա՝ նստի ուր հոր թախտին:

Հմա Մհերն չհոժարվեց ու կ'ըսեր.

– Ընձի համար հըմեն մե տեղ լե թագավորական թախտ հագր ա, ու ըսկի չըմ ուզա գա. ընձի ենմալ խայտառակ ենող ազգականներու ձեռից թախտ ստանամ:

Ըստուց հետո Մհերն յետ դարձավ Հալեպ: Ուր աներոջ համաձայնությամբ նստեց Հալեպի թախտն»:¹³⁴

Այս ամենն անվիճելի են դարձնում Նրգեյան Հակոբի պատումի արժեքը՝ էպոսի պատմականությունը որոշելու տեսակետից, և մեզ մնում է ցավել, որ Երվանդ Լալայանը և Առաքել Շակոյանի պատումը գրի առնողը թերագնահատել են այդ զարմանալի հիշողության տեր պրոֆեսիոնալ ասացողին և ժամանակին գրի չեն առել նրա պատումը, երբ պատմողը դեռ կորովի էր, և առավել ևս ցավել, որ հորելյանական հրատարակության խմբագրությունը կրճատել է նրա պատումը:

Գրի է առնված նաև Հակոբ Նրգեյանի ուսուցչի և աներոջ՝ Հակոբ Տեր Մարտիրոսյանի որդու՝ Սարգիս (Սաքո) Հակոբյանի պատումը, որ վերջինս լսել է ինչպես իր հորից, այնպես էլ միևնույն Մովսիս Ավդալ Հզրոյանից: Այս պատումը գրի է առնվել 1903 թվականին, ուրեմն Նրգեյանի պատումից 23 տարի առաջ: Գրի առնողը, ինչպես ասացինք, Նրգեյանի մասին իմացել է, սակայն գերադասությունը տվել է Սարգիս Հակոբյանին, որով-

133 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 66-68:

134 Նույն տեղում, էջ 223:

հետև վերջինս «անգրագետ» է եղել: Չանդրադատնալով այն հարցին, թե ինչպես կարող է XX դարի սեմին անգրագետ լինել սեփական, թեկուզ և տերթոդիկյան դպրոց ունեցող տիրացու հոր հարազատ որդին, ասենք, որ այս պատումն էլ է պահպանել եգիպտահայ ազդեցիկ գաղութի, Եգիպտոսի արքունիքում հայերի գրաված մեծ դիրքի, հայ-արաբական բարեկամության, ապա հայ-մահմեդական թշնամության որոշակի և անառարկելի վերհուշեր: Հայերն ունեին «մի վանք Մըսրա մոտիկ մի կղզու վրա», որտեղ ապաստանում էին նեղ օրերին: Մատաղացու եղբայրները ոչ թե թագավորի գավակներն են հայուհի կնոջից, այլ արքունիքում նախանձի առարկա մեծ պաշտոն ունեցող հայազգի Սուրիասի, որի մասին, հիշեցնելով մեծ վեզիր Վահրամ Պահլավունուն և այլ պաշտոնատար հայերի փափուկ դրությունը, պատումն ասում է. «կը ծառայեր թագավորի պալատի մեջ. ենի անուն ուներ, ընդոր հմար լե, շատ թշնամիք ուներ: Ենոնք ըմեն ջուռա ֆել ու ֆանտ կ'ենեն խանգարեն ընդոր բարձրանալուն ու առաջ եթալուն, կ'աշխատեն ցած գցել ընդոր ուր բարձրութենից»:¹³⁵

Ոչ թե այլ պատումների նման Բաղդադի կամ որևէ ուրիշ վայրի կռապաշտ թագավորին, այլ ուղղակի Մսրա կռապաշտ Մելիքին սպանելուց հետո հալածական եղբայրները մի երեք տարի ապավինում են Հալեբի թագավորին, որը նրանց նկատմամբ շատ բարյացակամ է:

«Եսմալ ընդոնք ապրան մոտ իրեք տարի: Ուրիշները նախանձեցին ըստոնց. մտքի տակ առան՝ թե ինչ տեսակ ցած գցեն ընտոնց»:¹³⁶

Թագավորը նրանց տեղ է տալիս Հալեբի դաշտում, բայց Աստված նրանց թույլ չի տալիս այդտեղ կառուցել իրենց տունը: Նրանք բռնում են արևելքի ճանապարհը և հասնում «հրաշագործ» ջրին, որ «կը կտրա (Մեղրա) գետն երկու մասի ու հետո լե կ'իգա կը միավորվի եղ գետին», «ու շարունակեցին ուրանց ճանապարհ, չորի գտան ընդոր ակունքը», որտեղ արդեն «կեր (կար) մի ավեր քաղաք ու եստեղ լե ընդոնք վորոշեցին շինել ուրանց քաղաքը»:¹³⁷ Նորակառույց քաղաքում ավագ եղբայրը՝ Մենեքերիմն ունենում է Դավիթ անունով որդի:

Մսրա մեծամեծները նոր Մսրամելիքին լարում են Մենեքերիմի դեմ ոչ թե հարկի համար, այլ «ախր, ենի ուր ախպոր Սանասարի հետ մի քանի տարի առաջ սպանեցին քու հորն ու փախան Սասուն: Մկա ենտեղ թագա-

135 Նույն տեղում, էջ 177-178:

136 Նույն տեղում, էջ 180:

137 Նույն տեղում, էջ 182:

վոր են: Բա՛ դու եսի դաբուլ կ'ենիս, թա՛գավոր»:¹³⁸

Մսրա Մելիքը ոտքի է կանգնում, սակայն, ինչպես արդեն հայտնի է, Դիարբեքիի Օրթոկյանները Քուրթադինի (այս պատումի մեջ՝ Խուրբախտինի) գլխավորությամբ նրան կանխում են. «թագավոր, վայել չի՛, որ դու դոշունի (զորքի) գլխավոր եղնիս՝ են ողորմելի, քոչկան Սասունի դեմ կովի դուս գաս. արի դոշունի գլխավորութենն ընձի տուր», – ասում է նրա զորավարներից Խուրբախտի Հազարա-Սուլթանը:¹³⁹

Խուրբախտու արշավանքն անհաջող է անցնում:

Մսրա Մելիքն այդ անգամ ուղարկում է Արդամելիքին: Դավիթը մենամարտում հաղթում է նրան, կոտորում ամբողջ զորքը և որպես լրատար ողջ է թողնում միևնույն Խուրբախտուն, որը շարունակ մասնակցում էր Սասունի դեմ ձեռնարկված բոլոր արշավանքներին:

Մսրամելիք Սալահեդդինը իր մահով մեռել է Դամասկոսում 1193 թվականին: Սասունցի ոչ մի իշխան նրան չի սպանել: Սասունցիները նրանից վրեժխնդիր են եղել 1185 թվականին՝ ջախջախելով նրա վասալ Օրթոկյան Քուրթադինին: Այսպես է պատմությունը, պատմական իրողությունը: Լրիվ էպոս դարձած բոլոր պատումների մեջ Դավիթը (միայն մի պատումի մեջ՝ Մհերը) սպանում է Մսրամելիքին ու տեղ դառնում նրա երկրին: Սակայն միևնույն ուսուցիչներից՝ ծագումով բնիկ սասունցի Մուխսի Ավդալ Հզորյանից և ծագումով ալաշկերտցի Հակոբ Տեր Մարտիրոսյանից սովորած Հակոբ Նրզեցյանի և այս Սարգիս Հակոբյանի պատումների մեջ, պատմական իրողությանը համանման, Դավիթը չի սպանում Մսրամելիքին, այլ միայն նրա զորավարին: Այս երկու պատումների մեջ էլ Դավթին դարանակալ սպանում է Համգա-Փահլևանը:

Ալաշկերտ-Սևանի ավազանի բոլոր պատումների մեջ, իսկ այս պատումի մեջ ավելի շեշտված, Մհերը բացակա է Սասունից և իր խիզախությամբ օգնում է ուրիշ թագավորներին: Սա հեռավոր քաղաքներում ու երկրներում սասունցիների վարձկան զինվորական ծառայություն կատարելու պատմական իրողության անդրադարձումն է: Այս պատումի մեջ կարդում ենք. «– Բա Աստված դաբուլ կ'ենամ, որ մեր թագավորի վորդին ապրի հեռու ուր երկրից ու չիմանա ուր երկրի տեղն. չե՛ որ են լե հոր նման ուր ժողովրդի խերն ու շառը պտի իմանա, ուր ժողովրդին ոգնութեն գա: Եկեք, գտնենք ընդոր ու կանչենք՝ գա ուր պապական թախտին նստի»:¹⁴⁰

138 Նույն տեղում, էջ 187:

139 Նույն տեղում, էջ 190:

140 Նույն տեղում, էջ 205-206:

Օտար հորիզոնների տակ, այս դեպքում Մարում, հայրենիքն անպաշտպան թողած, վարձկան զինվորական ծառայությունից վերադարձած տոհմիկ իշխանները, ինչպես տեսանք, նոր պայմաններում անհող են մնում, որովհետև «Դավթի մահից հետո Յոան Վեկոյի տղերքն տեր դառան ընդորթախտին ու դորով [հերթով] կառավարեցին ընդոր երկիրը»:¹⁴¹ Նոր պայմաններում, «քրիստոնեասեր» Շահ-ի-Արմենների իշխանության տակ հայ հոգևորականների մի մասն էլ համակերպվել էր նոր դրությանը և պատրաստ էր թշնամու ձեռքը մատնելու վերադարձած անհանգիստ տարրերին: Այսպես պետք է հասկանալ Մատղավանքը «մատնավանք» հորջորջելը:

Այս պատումի մեջ պարզ ու որոշակի ասված է, որ «ժողովուրդը ուրախ-գվարթ ունդունեց Մհերին: Հմա Յոան Վեկոյի տղերքն սկսան նախանձել:

Մհերն կը մտածեր, թե մի օր պտի Յոան Վեկոյի տղերքն ուրանց հոր հետ ուրան հանձնեն ուր հերական թախտն:

Ընդոնք չուզեցին թախտն ձեռից տան:

Մհերն ըսեց Թորոսին.

– Ախր, հընչի համար թախտն ընծի չըն իտա:

– Մե սպասա՛, ըսեց Թորոսն, ժամանակն կ'իգա ու կը տենան ընդոնք, որ թախտի իրավունքն ուրանցը չե, ու կ'իտան քըզի:

Մհերն հուսը դրեց էս բանին ու երկար սպասեց: Հմա յեփ տեսավ, որ կակղութենով բան դուս չի գա, սկսեց դիպչել ընդոնց, ձեռներեն ավը կը խլեր: ...Հմա Թորոսն ելի հանգստացուց Մհերին, ըսեց.

– Շուտով հըմեն մե բան լե լավ կ'եղնի:

Մհերն մտածեց.

– Ախր, ինչ մե բան. ես ի, իդա իրեք ամիս ա՛ եղ քեփ Թորոսն մե գլոխ են ա ըսում՝ «Լավ կ'եղնի, հա՛ լավ կ'եղնի», ըբա ու՛ր ա էդ «լավ կ'եղնին»:

Ըստեղ ենի համոզվեց, որ Թորոսն ուժ չունի՝ ընդոնցից գոռով թախտն առնի ու *վոչ լե ուրան կը թողա՛ խլի հորական թախտը*:

Զահլեն գնաց եսմալ բաներուց ու ձին թամբեց, հեծավ, դուս եկավ Սասունից, ինք լե չգիտեր՝ դո՛րն եթա [ուր գնա]»:¹⁴²

Այնուհետև Սարգիս Հակոբյանի պատումի մեջ էլ պառավն է Մհերին ազատում հորից, սակայն ոչ թե որպես ազգասեր հայուհի, այլ շահադիտական նպատակներով: Բայց այստեղ Մհերը շատ վատ է վարվում իրեն

141 Նույն տեղում, էջ 205:

142 Նույն տեղում, էջ 210-211:

ազատող պառավի հետ: Ամենայն հավանականությամբ, «անգրագետ» Սարգիս Հակոբյանն այստեղ տուրք է տվել տարածված հեքիաթային ձևերին, քանի որ շարունակությունը համարյա այնպես է, ինչպես Նրգեյան Հակոբի պատումի մեջ: Հորից ազատվելուց հետո Մհերը սպանում է Ավդալին և հարկադրված է ծալվել նրա շորերով, ապա գնում է *Մխարա հայոց թաղը*: Բայց խոսենք պատումից վերցրած մեջբերումով:

«Յեփ մտավ քաղաքը, գնաց քրիստոնեքի թաղն: Ըստեղ տեսավ՝ որ մե տան մեջ ժողվեր ին քրիստոնյաներն ու ուրան հոգու հացն կ'ուտին, – յանի թե ինքն մեռեր ա: Ուրան լե մե աման կերակուր տվին:

Կերավ կշտացավ, ելավ ու նստեց են տեղն, ինչը որ Մհերի մահվան հիշատակ-նշանակ էր դրված, ու ես նշանակ տեղի վրեն նստած ընդոր մեռելաթասերը կը խմեր, կը դարտըկեր:

Մեռելահաց ուտողներն ես բանն որ տեսան, հերստտան Ավդալի (այսինքն՝ ծալված Մհերի – Հ.Թ.) վրեն ու հասկըցուցին, որ ինքն արժանի չե Մհերի հիշատակ-նշանակ տեղին նստի ու ընդոր հիշատակն անպատվի:

– Արծիվ Մհերի դիմաց, – ըսին ընդոնք, – դու մի քոռ ազոավ իս:

Ես որ լսեց Մհերը, հարցուց.

– Ըստեղ հըմենքդ լե քրիստոնյա՞ իք, մեջներդ ի հո այլազգ չկա՞:

Յեփ հիմացավ [իմացավ], որ ընտեղ այլազգ չկա, ցածր ձենով ըսեց.

– Յես Մհերն իմ...»:¹⁴³

Սարգիս Հակոբյանի պատումի մեջ չկան Դավթի հայր Ճոչ կամ Առյուծաձև Մհեր և Դավթի որդի Պատիկ Մհեր: Այստեղ կա միայն մեկ Մհեր՝ Դավթի որդի Մհեր: Այլ պատումների մեջ դրանք հակոտնյա տիպեր են: Առյուծաձև Մհերը հզոր է ու հաղթական: Նա նվաճում է Մարը: Պատիկ Մհերն անտուն է ու խղական, չար ու անհանգիստ: Այս պատումի մեջ Մհերի կերպարն ամբողջական չէ: Տեղ-տեղ նա հիշեցնում է Առյուծաձև Մհերին, տեղ-տեղ՝ չար ու անհանգիստ Պատիկ Մհերին: Երկու Մհերներին բնորոշ գործողություններն ու գծերը գումարվել են մեկ Մհերի մեջ: Այդ միագումարման կարգով Մհերը մեկ հիշեցնում է Վահրամ Պաիկավունուն, մեկ եգիպտահայ գործի վերջնական պարտության ու նահանջի ժամանակաշրջանի թափառական հերոսի: Վահրամ Պաիկավունուն հիշեցնելու կարգով Մհերն այս պատումի մեջ ևս ապավինում է Նուբիային սահմանակից հայկական Ճերմակ վանքերին: Պատումը որոշակի ասում է. «կ'ապրեր մե դուրանի [դաշտ-հարթավայրի] մաղարի [այրի] մեջ»: Բայց բերենք ամբողջ

143 Նույն տեղում, էջ 219-220:

հատվածը, որ հեքիաթային կարող է թվալ, եթե չվերհիշենք Վահրամ Պահլավունու և Ռյուրվան Վալախշու թշնամությունը հեռավոր Նեղոսի ավելի հեռավոր ափերին:

«Ըստեղից ենի սուտ լուրեր տարածեց՝ թե Մհերը հիվանդ ա՝ ընդոր ջանն սաղ ուռուցք ա:

Ես որ լսեցին ընդոր թշնամիներն, եկան փաթեցին մաղարեն, որ հիվանդ Մհերին բռնին-սպանին:

Ըստեղ Մհերն հըմեն ժամանակ լե ընդոնց կը փճացուցեր ուր յեքա գոյրգով ու թրով:

Ես բանն եղավ մի քանի անգամ, չորի որ ընդոր թշնամիներու քոքն կտրվեց:

Վրա ռխտը տարվան Մհերն դրուստ որ ենմալ մե հիվընդցավ, որ վոչ թե չըր կռնա գոյրգն ձեռ առնի, հլա դըռ մինչի անգամ չըր կռնա վոտի կայնե:

Ես բանն հիմցան ընդոր նոր թշնամիները, հմա չհավատացին, ուրանք-ուրանց ըսին:

– Ընդոր միտքն ելի ծուռն ա, կ'ուգա առաջվա պես սուտ լուր հանի, ուրանց լե խաբի, պաղի քաշի ու բիրադնուն ջարդի:

Ես պատճառով լե չիշխըցան (չհամարձակվեցին) ընդոնք կովու դուս գան:

Յեւի Մհերի դրած ռխտը տարվա պայմանի ժամանակն լրացավ, Գոհարն տեսավ, որ Մհերն ելի չերեվա, ու գլխու ընկավ, որ ընդոր մե փորձանք պատահած կ'եղնի: Ենի Դեղձունին ու Խոր Մանուկին հետն առած, գացին իրեքով ման գան Մհերին:

Դեղձունն ու Խոր Մանուկն չորի ըսոր՝ քանի Մհերն հեռացել էր ուր տնիցն, կը պահեն, կը խնամեն ընդոր տունն:

Մհերին ըստոնք գտան կիսամեռ: Դեղձունն բժշկութեն գիներ, բժշկեց Մհերին ու մե շաքաթվա մեջ սաղոց ընդոր:

Հինգ տարուց հետո կռապաշտ թագավորներուց մեկն ուզեց սպանի Մհերին ու պահանջեց ընդուց՝ ճանչնա ուր իշխանութենը:

Ես որ լսեց Մհերն, բարկացավ ու վճռեց կոտորի աշխրբիս հըմմեն կռապաշտներուն:

Հըմնուց առեց ենի գնաց ուր ես թշնամու դեմ ու մե որվա մեջ վոչնչացուց ընդոր»:¹⁴⁴

Այս երկու պատումների և առհասարակ Ալաշկերտ-Սևանի ավազանի

144 Նույն տեղում, էջ 226-27:

պատումների մեջ Բաղդադն ու իր խալիֆն ամենևին չկան, այլ կան միայն Սասուն ու Մըսր, իսկ Խլաթի բարբառով պատումի մեջ, ընդհակառակը, մատաղացու եղբայրները մոր խորհրդով ապավինում են Մըսր, որովհետև արդեն այնտեղ են նրանց ազգականները. «– Կ'երթաք մըտ Մսրա Մելիք, ձեր քեռիք ենտեղն ա – Ձենով Սարգիս, Ձենով Ովան: Գնցին, խասան Մըրը. իրիկուն գնցին մըտ քեռեցներուն: Ձենով Ովան ասաց. – Սինան Բերիմ, Արդըլ Բերիմ, դու հորին եկաք են երկրեն: Ասին. – Մեր խեր մեզի տաներ, կոքերուն մատաղ պտի եներ. մեր մե ասեց՝ գնցեք մըտ ձեր քեռիք...»:¹⁴⁵ Ուրեմն սասունցի հերոսների տոհմի հիմնադիր նախահայր եղբայրները փախել են Խլաթից, Շահ-ի-Արմենների երկրից և փախել-ապավինել են Մըսր, որտեղ արդեն ծառայում էին նրանց քեռիները: Պատմական իրողությանը շատ հարազատ տարբերակ է սա:

Նորբայազեդցի Առաքել Շակոյանի պատումը, որին Երվանդ Լալայանը գերադասություն է տվել Նրզեյան Հակոբի պատումի համեմատությամբ: Ալաշկերտ-Սևանի ավազանի պատումների մեջ թեն էպոսի բարձրանալու միտումներ ունի, սակայն նույնպես պատմական իրական անցքերի ու հարաբերությունների որոշակի վերհուշեր է պարունակում:

«Վոր տարին թմըմում ա լրանում է],

Մհերը հըլնում եթում ա Մըրը:

Եթում ա Մըրը, չաղըրը գանում ա հեռուն, մեջը նստում ա»:

Մըրըցիները սարսափահար են. «գացեք, տեսեք ինչ ջուռա մարդ ա» հրամայում է նրանց փաշան: Գնում են ու տեսնում և վերադարձին ասում են. «– Ձենք գիտում, շատ բեզ (վիթխարի) մարդ ա. կեսը չաղրի մեջն ա, կեսը դուսն ա»: Մսրա փաշայի հեծյալները չեն կարողանում պարտության մատնել նրան, ընդհակառակը, նա ոտքի է կանգնում:

«Ձինը խեծնում ա, դոշունը բիրդան ջարդում ա,

Տանում ա, խասցնում ա Մսրա մեջ:

Վոր սըպանում ա, պրծնում ա,

Եթում ա, Փաշի գլոխը կտրում ա...:

Հաշկը (աչքը) հընկնում ա Փաշի կնկան...:

Փաշի կնիկը ըստուն ավլամիշ ա անըմ ա (այնպես հրապուրում է],

Թե. – Ես քեզի առնեմ, մացի եստե,

Թագավորությունը քեզի հըլնի»:¹⁴⁶

145 Սասնա Ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 230:

146 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 104-105:

Իսկ երիտասարդ Մարա Մելիքը Սասունի վրա արշավում է ոչ թե հարկի համար, այլ վրեժխնդրության համար, որովհետև խաղընկերները նրան «քնֆրի տղա», «փիճ» են անվանում, և մայրը հարկադրված է լինում որդուն խոստովանել, թե.

«Վորդի՛ ջան, Կապուտկողի Մհերը եկավ, դռնունը ջարդեց, Խորդ գլխը կտրեց, եկավ ընծի սիրեց: Մարամելիք ել ասավ.

– Ջանիս հուխտ հըլնի, որ քանի ջանըս սաղ հըլնի, Հայաստունը բրդեմ, հայիֆս առնեմ»:¹⁴⁷

Երիտասարդ Մարա Մելիքը գալիս է պարտության մատնվում ու սպանվում Դավթի կողմից: Դավթը նրա մորը տանում է Սասուն.

«...Տանեմ Մարամելիքի մորը պախեմ. Տղին սպաներ եմ՝ պախող չկա»:

Բայց շուտով միտքը փոխում է ու տանում-թողնում է Մըսր ու պատրաստվում է վերադառնալու. այստեղ.

«Մարամելիքի մերն ասավ. – Դավիթ, դ՛ր ես եթում.

Մըր նստի, թագավորություն արա... Սասուն ել թո՛ մնա Յոան Վերոյին,

Դավիթը ռազի հեղավ [գոհ մնաց], նստավ թագավոր»:¹⁴⁸

Դավիթը շարունակ օտարության և կռվի մեջ է և հայ-հայրենիքը չի ճանաչում. քեռին է նրան բերում Կապուտկող և ասում.

«– Դավիթ ջան, մեր խին վաթանս ես ա. Լավ տեղ ա, վատ տեղ չի:

– Բա՛ դուք հընչ եք գացե Սասուն: Ասավ. – Մարամելիքի ահուն ենք փախե»:¹⁴⁹

Ալաշկերտ-Սևանի ավազանի շարքի պատումների մեջ են մտնում նաև *պաշկերպիցիներ Մանուկ Թորոսյանի և Կարապետ Թամոյանի պատումները*: Մանուկ Թորոսյանի պատումն այս շարքի մեջ հատկապես աչքի է ընկնում նրանով, որ բարձրացած է էպոսի մակարդակի: Նրա պատումի մեջ Բաղդադ են գնում, որովհետև աղքատ են, որովհետև Մարում նրանց սիրով

147 Նույն տեղում, էջ 106:

148 Նույն տեղում, էջ 141, 142:

149 Նույն տեղում, էջ 129:

են ընդունում: Քաջ Մհերը հայրենի Սասունում ձին հեծնում է առանց թամբի ու սանձի:

«Հու՛ր կա, ըսեց, եղ թամբ ու գամ, Որ յես գանգիմ ձիու վրենն:

Ըսեց. – Լա՛ն, դու եղեր իս խոճա [մեծ] մարդ, խելքի հասած, Հեճի, գնա՛ Մըսր՝ Մարա Մելիքի մող,

Դու լը մարդու ճանչոցի, մարդու հետ շրփվի:...

Ենդընես առ թամբ մի, գամ մի, Չարգ Բուռլի Ջալլադի վրենն, Հեճի՛, հուր գ՛ուզիս, գնա»:¹⁵⁰

«Սաբախտան հեճավ, հիրկուն հասավ Մըսրը:...

Մըսրա Մելիք եղոր դեպքից զարզընդավ, Չկըոցավ շիտակ բարեվ առնելու ուր վախից. ...

Պաղվեց, կերցուց, խըմցուց. միտկ երեց. «Իդոր ջընսեն որ մըր ազկի մեջ չընգնի,

Եդոնք գ՛ելնին, իմ ազկի բոք կը կըդրին»:

Մըսրա Մելիք ուր կընկան ըսեց. – Կնիկ, դու քըզի կը զարդարիս՝

Լուն պադի [ընկնի] քու քթեն, հազար կըդոր եղնի: ... Ըսեց. – Եղ խոնախ որ եզեր ա,

Յոթն որ քըզի բըդի խոնախ եղնի, ... Մըշկըներուն կանչեց, ըսեց.

– Բուռլի Ջալլադին կը քաշեք խըսըներու վրենն: Յոթն որ որ թըմմավ, Մելիք ըսեց.

– Մհեր ջան, յես դու ախպեր ինք. Յես շուղ մեռա, իմ երեխեք դու տանիս, պայիս.

Դու շուտ մեռար, քու երեխեք յես բերիմ, պայիմ, Որ ուրիշներ չըսին՝ ախպեր չունի,

Եթում ա՛ մացած ինոնց ճըժեր: Մաղներ կդրին, արուն արնին խառնեցին»:¹⁵¹

Սրանք եգիպտահայ գաղութի առաջին շրջանի, Բաղրի, Շահնշահի և ապա Վահրամ Պաիլավունու վեգիրության ժամանակաշրջանի բարեկամության վերհուշեր են: Սակայն, ինչպես արդեն գիտենք, եգիպտահայ

150 Սասնա Շներ, հ. Բ, առաջին մաս, էջ 268:

151 Նույն տեղում, էջ 269-270:

գաղութի բարգավաճման և հայ-եգիպտական բարեկամության ժամանակշրջանում ևս կային ինչպես այդ բարեկամությունը բարձր գնահատողներ, այնպես էլ եգիպտահայության թշնամիներ: Գրեթե բոլոր պատումների մեջ գլխավորապես մայրն է պաշտպան կանգնում չարաճճի Դավթին, իսկ այս պատումի մեջ Մարա Մելիքը ժողովի է կանչում «ուր իշխաններուն», հարցնում նրանց կարծիքը:

«Մեզ ըսեց. – Երեխա յին չփա'մին (չեն հասկանում):

Մեզ ըսեց. – Կը փա'մին:

Մեզ լե ըսեց. – Դու չգի'նաս,

Եդոնք հմրի եփ էդնի,

Ձեռ կը թալին քու մուրուք:

Մարդու մեզ լը բարեխիղճ եր, ըսեց.

– Ջանըմ, երեխայ ին, ինչ գի'նան եդոնք: ...

Բերեք, փորձ ենենք, ըսեց»:¹⁵²

Փորձի ժամանակ երբ Դավթի եղբայր Մանուկը ձեռքը կրակին տալով վնասվում է, իշխաններից մեկն ասում է:

«– Ջանըմ, մարդու մեզ տղեն երիք այիրլու (արատավոր)

Արեք, մեզելին (մյուսին) մ'ենեք.

Ճիժ ին, չփա'մին. ինչ գ'ուզիր»:¹⁵³

Սակայն «երթումների» նկատմամբ բարյացակամ Մարա Մելիքի մորից, առանձին վաքիլ-վազիրներից բացի, Մարում կար ստվարաթիվ և հարուստ հայ գաղութ, որի ապահովության երաշխիքը Սասնա գորբն էր: Պատումը գիտե այդ գաղութի մասին.

«Քանի մը տուն ջուլյակ կար Մըսրա մեչ.

Ուրանք լը խաչապաշտ ին.

Հիրկնեց (իրիկունները) կը ժողվին մեզ տուն,

Գողտուկ ուրանց աղոթք կենին:

Եդոնք լսին եդ ձեն, ձուն,

Թե Բեռի Թորոսի ճժեր պղդի սպանին.

Հեղան ուրանք ժողով երեցին,

Թուխտ մի գրեցին Բեռի Թորոսին,

Տվին ջահեղ տղի մի ձեռ, ըսին.

– Կ'երթաս Սասուն, կ'իդաս Բեռի Թորոսին.

Հիրկուն հասնիս, հիրկուն գա,

Լուսնուն հասնիս, լուսուն գա»:¹⁵⁴

Ալաշկերտցի Կարապետ Թամոյանի պատումը նույնպես վկայում է սկզբնական շրջանում Մարի և Սասունի սերտ բարեկամությունը, երբ «Մըսրա Մելիք մարդ կը խըրկա, Մհերին կը կանչա ուր մոտ», որպեսզի «թե Մհերից, թե ուր ձիուց ջինս» վերցնի, ապա նրանց թշնամությունը, երբ Մըսրա Մելիքն արշավում է Սասունի վրա:

Սկզբնական շրջանի հայ-եգիպտական բարեկամության, իսկ այնուհետև հետագա շրջանի թշնամության վերհուշեր պահպանվել են բոլոր պատումների մեջ:

Առաջինը գրի առնված *Տարոնցի Կրպոյի պատումի* մեջ Աբամելիքը նվաճում է Մարը և կենակցում նրա թագավորի կնոջ հետ, որից ունեցած զավակին անվանում է Մարա Մելիք ու կարգում Մարա թագավոր: Սասուն վերադարձին հայուհի կնոջից ունենում է շատ զավակներ. կրտսերագույնը Դավիթն է: Աբամելիքը դաշն է կապում իր անդրանիկ որդու՝ Մարա Մելիքի հետ, թե ով շուտ մեռնի, մյուսը նրա զավակներին տանի պահի: Աբամելիքը շուտ է մեռնում, և Մարա Մելիքը, իր տված խոստման համաձայն, գալիս ու տանում է նրա զավակներին, որոնց թվում նաև Դավթին:

Մարա Մելիքն ու Դավիթը նույն հորից, բայց տարբեր մայրերից ծնված խորթ եղբայրներ են:

Նախտ քեռու պատումի մեջ Դավթի հայրը մեռնում է, և այրիացած մայրն ամուսնանում է Մարա Մելիքի հետ: Դավիթը մեծանում է Մարա Մելիքի տանը:

Մարա Մելիքն ու Դավիթը խորթ հայր ու խորթ որդի են:

Մոկացի Հովանի պատումի մեջ որբնայրի մնացած Իսմիլ Խաթունը իր մոտ՝ Մըսր է հրավիրում սասունցի Մհերին: Երիտասարդ Մարա Մելիքն ու Դավիթը խորթ եղբայրներ են:

Նույն բանը, առանց Իսմիլ անունը տալու, կրկնում է *Մոկացի Հովանի-մենց Ղազարի պատումը*:

Մոկացի Վարդանի պատումն սկսվում է այսպես.

«Մարա Մելիք զինք մեռավ:

Մելիքի կնիկ էլավ, գիր գրից Մհերին,

Ասաց. «Պետք է գաս, ըզի առնիս,

Ասաց. – Մելիք քու սխալներն.

154 Նույն տեղում, էջ 273-274:

152 Նույն տեղում, էջ 272:

153 Նույն տեղում, էջ 273:

Մարն էլ թագավորութիւն ենիս»:¹⁵⁵

Երիտասարդ Մարա Մելիքն ու Դավիթը միևնույն հորից, բայց տարբեր մայրերից ծնված խորթ եղբայրներ են:

Մոկացի Թումաս Պետրոսյանի պատումի մեջ կարդում ենք.

«Մարա Մելքը վոր մեռավ,

Կնիկ թուղթ հնդորկեց Դավթըն.

«Ա՛րի, ըծի ա՛ն.

Են ինչ Սասուն քո՛ւ ձեռն ի.

Մարն էլ թը մնա քո՛ւ ձեռ»:¹⁵⁶

Հայրենակից սասունցիները Դավթին խորհուրդ են տալիս օգտվել հանգամանքից. «Շատիր կռվով կ'առնին, եղա հազըր տեղ ի, շնտ գնա», սակայն կինը հակառակ է: Բայց Դավիթը գնում է և Մարա Մելքի կնոջից զավակ է ունենում, որի անունը նորից դնում է Մելիք: Մտահոգվելով հայրենիքի վիճակով ու ապագայով՝ վերադառնում է Սասուն և երդմնագանցության գնով զավակ է ունենում հայուհի կնոջից, որի անունը նորից դնում է Դավիթ:

Դավիթն ու Մարա Մելիքը նույն հորից, բայց տարբեր մայրերից ծնված խորթ եղբայրներ են:

Մոկացի Վարդան Մուխսի-Բազիկյանի երկու պատումի մեջ էլ Մարա թագավորի այրիացած կինը իր մոտ է հրավիրում Մհերին և նրանից ունենում է զավակ, որի անունը դնում են Մարա Մելիք: Սասուն վերադարձին Մհերը երդմնագանցության գնով զավակ է ունենում իր հայուհի կնոջից, սակայն երդմնագանցության հետևանքով երկուսն էլ մեռնում են, և Դավիթը մնում է «հեթըմ»: Հորեղբայրը *հեթըմին* տանում է Մըսր, որ «ախպոր կնիկը» «խարսեն» [հարսը] պահի: «Ախպոր կնիկը»՝ Եգիպտոսի թագավորամայրը, սիրով վերցնում է *հեթըմին*, որովհետև իր նկատառումներն ունի:

«Հե~յ, մկա նա նոր տը ճոչնա, էրթն Սասուն.

Շախիմ, ետեղ կենա, երկու ախպեր իլնին.

Իրարու ախպերութեն անին,

Մարը, *ամպողն երկիր, զմվթին*, տիրապրդին»:¹⁵⁷

Սելջուկյան արշավանքների դարաշրջանում Մերձավոր Արևելք ներխուժած նոմադական վայրենաբարո ցեղերի դեմ նստակյաց ժողովուրդների դաշինքի և ամբողջ հայությանը Նեղոսի ափերը գաղթեցնելու վերհուշ չէ

արդյոք սա: Ավելին: Սա Ֆաթիմյանների անգորության և այդ պատճառով վարձկան զորքի օգնության դիմելու որոշակի վերհուշ չէ միթե: Առանձին էմիրներ չեն ենթարկվում կենտրոնական կառավարությանը: Մարա Մելիքին ախպեր է հարկավոր, որ կարողանա զավթել, տիրապետել «ամպողն երկիրը»:

Մոկացի Մանուկ Հարությունյանի պատումի մեջ Մարա Մելիքը մեռնում է, կինը լուր է ուղարկում և Մհերին կանչում Մըսր:

Շաքրախիջի Մկրտիչ Հարությունյանի պատումի մեջ Մարա Մելիքի կինը «ճիժ» չունի և ամուսնու համաձայնությամբ իր «գոտիկն ու լաչիկն» ուղարկում է Մհերին, որից նա ժառանգ է ունենում վերջապես: Երիտասարդ Մելիքն ու Դավիթը խորթ եղբայրներ են, որոնք մեծանում են միևնույն Մըսրում, նույն տան մեջ:

Ընդհանուր ձևից շեղվում է *շաքրախիջի Մանուշակ Ջադյանի պատումը*, որի մեջ Մելիքը, Հովանը և Վհաբը եղբայրներ են՝ առաջին երկուսը հարուստ, իսկ վերջինը՝ աղքատ ու անգործ: Անգործը եղբայրանում է ավագակներ Կուզբահդինի և Հասան բեկի հետ, որոնց օգնությամբ սպանում է Մելիքին ու ցանկանում տիրել նրա հարստությանն ու կնոջը: Հովանը տրամադիր է տալու հարստությունը, բայց ոչ հարսին, որը հղի է: Հղի հարսը երդվում է արևալույսի դուրս չգալ, մինչև որ մանչ զավակ ունենա, որը լուծի սպանված հոր վրեժը: Այդպես էլ լինում է: Դավիթը, որ Մելիքի հարազատ որդին է, նախ պարտության է մատնում Կուզբահդինին, ապա Վհաբին, որի գլուխը կտրում է ու բերում մորը:

Այս պատումի մեջ Մըսր չկա:

Շաքրախիջի Գրիգորի պատումի մեջ «Մհեր ուր տեղից գնաց Մըսրա տեղաց վրեն, Վոր առաջ տուրք կը տեր, հետո կտրեցեր», «Վըր Մըսրա տեղաց քաշեց սուր, Մըսրա Մելիքի կին իր համար իբեր»,¹⁵⁸ այդ կինն ունեւ նույնպես Մելիք անունով մի տղա: Մորն ու տղային նա բերում է Սասուն: Այդ նույն կնոջից Մհերն էլ է որդի ունենում, որի անունը դնում է Դավիթ: Մհերի մեռնելուց հետո երիտասարդ Մարա Մելիքը վերադառնում է հայրենիք, ուժեղանում ու արշավանք գործում Սասունի վրա. այստեղ նա տեսնում է իր հարազատ մորը.

«Ասաց. – Մարե՛, արի երթանք:

Մարե՛, ինչ տղայ ե քու գիրկ:

Ասաց. – Մելիք, քու ախպերն ե,

¹⁵⁸ Լույն տեղում, էջ 726:

¹⁵⁵ Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 332:

¹⁵⁶ Լույն տեղում, էջ 383:

¹⁵⁷ Լույն տեղում, էջ 495:

Դավիթ ետոր հետ գնաց, գնաց Մըսրա տեղը»¹⁵⁹ Երիտասարդ Մսրա Մելիքն ու Դավիթը միևնույն մորից, բայց տարբեր հայրերից ծնված խորթ եղբայրներ են:

Ճարտախցիներ Ռաշո Մուրադյանի և Ավո Զադոյանի միացյալ պատումն սկսվում է այսպես.

«Մըսրը կըր Մելք, Սասուն կըր Մհեր:

Մհեր ելավ ուր անկար (գորք) անեց,

Գընաց վըր Մըսրա, զըմեն ճարտեց:

Զանու մեր անեց, իպի գուր խըմար (բերեց իր համար)»¹⁶⁰

Ճարտախցի Ազիզ Մուրադյանի պատումն սկսվում է «Սասնա Մհեր կըր, Մըսրա Մելիք կըր... Մհեր վոր ուր մորից ծնվավ, ելավ երիտասարդ, Մըսրա Մելքի խարջ կտրեց»,¹⁶¹ սակայն երբ Մհեր «ընգնավ մահացավ», Մսրամելիքը արշավեց Սասունի վրա, «Անեց Մհերի ընտանիք ու Տավիթ, Ելավ, յեղսիր (գերի) տարավ Մըսրը»¹⁶²

Սպարկերպի Փառիկի պատումն մեջ.

«Հանեց, հանեց, Դավիթ՝ Մհերկե լան, Սասնա մեծն եր: ...

Մսրամելիքն եր թաքնվոր եր,

Մեծն էր, փաշայ եր:

Դավիթ կ'երթեր անումընե

*Վերգի պիեր, խանրն կտոներ»*¹⁶³

Մսրա Մելիքը խաբեությամբ սպանում է մեծ Դավթին, ազատվում հարկից և գերում ու Մըսր է տանում մեծ Դավթի ընտանիքը՝ երեք տարեկան պստիկ Դավթի հետ: Դավիթը մեծանում է Մսրում՝ վայելելով Մսրա Մելիքի կնոջ պաշտպանությունը:

Այս պատումի մեջ շատ որոշակի է պահպանվել Մսրա կախումը սասունցիներից կազմված վարձկան զորքից:

Գավազցի Եղիազար Հակոբյանի պատումն մեջ Մսրա Մելիքի կինը Մհերի հարցումին պատասխանում է. «- Քե կանչել են, վոր իմ մոտ պառկես, քեզից մեկ զավակ ունենամ, քեզի նման կտրիճ ելի»¹⁶⁴ Այսպիսով, Մըսրն զգում է սասունցի կտրիճների կարիքը: Այս պատումի մեջ թեև ոչ մի

խոսք չկա, որ Դավթի հայր Մհերը եգիպտական զորավար էր կամ թե իշխել էր Մսրում, այնուամենայնիվ, Մսրա Մելիքի կողմից Դավթին ուղեկից կարգված զինվորները, երբ չեն կարողանում սպանել Դավթին ու ընկնում են նեղ դրության մեջ, Դավթին աղերսում են. «- Տավիթ, մենք կը խնթրեյնք մե մը թալի կետ (մեզ մի գցիր գետը): Մե քո խոր մշակներ եյնք: Քո խեր մեռավ, նոր մեյի կնցինք Մըսրա Մելիքի առչեմ»¹⁶⁵

Գավազցի Մարգարիտ Մարգարյանի պատումն մեջ Սասնա Մհերը ժամանակին «Մըսրա Մելիքի կնկա մարդն ա էլեր», նրա հեթըմին՝ Դավթին միայն Մսրա Մելիքի կինը կարող է պահել: Եվ հեթըմին ուղարկում են Մըսր: Մսրա Մելիքն ու Դավիթը նույն հորից, բայց տարբեր մայրերից ծնված եղբայրներ են:

Գավազցի Գրիգոր Փոխան Եղիազարյանի պատումն մեջ «Ինչպես որ Դավիթ խարջ կ'առնեմ մարցոց մուրեն, Ենպես մարցին անեց Մհերի, Ձենով Հովանի մոտեն»,¹⁶⁶ սակայն Մսրա Մելիքը մեռնում է, և նրա կինն իր մոտ է հրավիրում Մհերին աշուղների միջոցով, որոնց Հովանը ծեծում է ու քշում:

Որսից վերադարձող Մհերը հանդիպում է ծեծված աշուղներին և նրանց զանգատն ու հաղորդումը լսելուց հետո ճիշտ այնպես, ինչպես շատ այլ պատումների մեջ հաղթական Դավիթն է լսում Խանդութի ուղարկած աշուղներին, շտապ մեկնում է Մըսր, որտեղ Մսրա Մելիքի այրիացած կինը պատվում, հարբեցնում է նրան ու կենակցում նրա հետ: Միայն յոթ տարի հետո է Մհերը վերադառնում Սասուն և միայն երդմնազանցության գնով է որդի ունենում իր հայուհի կնոջից:

Մսրա Մելիքն ու Դավիթը խորթ եղբայրներ են:

Գավազցի Համբարձում Խապո Գրիգորյանի պատումն մեջ. «Մհեր մեծացավ ու զորեղ մեկն եղավ Ու չուր (մինչև) Մըսր առից ուր ձեռաց տակ: Մըսրա Մելիք, վոր Մըսրա տերն եր, Եղավ Մհերի խարջդար (Մհերին հարկապու)»¹⁶⁷ Մելիքի կնոջ հետ կենակցելու և ապա երդմնազանցության մասին խոսք չկա այս պատումի մեջ, սակայն Մհերն անսպասելիորեն մեռնում է (երևի կնոջ հետ միասին, բայց պատումը կնոջ մասին ոչինչ չի ասում) և որբացած Դավթին պահող չկա, որովհետև «որ կնոջ ծիծ ծըծի, կը մեռցնի»: Զարահատյալ ուղարկում են Մսրա Մելիքի կնոջ մոտ:

159 Լույն տեղում:

160 Լույն տեղում, էջ 759:

161 Լույն տեղում, էջ 789:

162 Լույն տեղում:

163 Լույն տեղում, էջ 819:

164 Լույն տեղում, էջ 861:

165 Լույն տեղում, էջ 862:

166 Լույն տեղում, էջ 946-947:

167 Լույն տեղում, էջ 992:

Մարա Մելիքի ու Դավթի ազգակցության մասին խոսք չկա այս պատումի մեջ, սակայն Մարում ժամանակին հայկական գործի առկայության ավելի ծանրակշիռ վկայություն է պահպանվել այստեղ: Դավթին Մարի սահմաններից դուրս սպանելու համար ուղարկված ուղեկից զինվորները նեղն ընկնելիս ասում են.

«Մինք՝ երկուսն ել քո խոր փայլիվանհիրն ինք: ...»

Մինք չգիտցանք, թե դու չանց քո խեր վոժով եր.

Վոր ընցկոն ա՝ մինք քո մշակ, դու միր աղեն»:¹⁶⁸

Հայոցճորեցի Հազարյան Թառոյի պատումի մեջ ևս, որ լավագույն էպիկական պատումներից մեկն է, պահպանվել են Սասունի և Մարի սերտ կապի վերհուշեր: Այս պատումի մեջ ոչ թե Մարա Մելիքի այրիացած կինն է Մհերին հրավիրում Մըսր, այլ հենց ինքը՝ անզավակ Մելիքն է նրան հրավիրում Մըսր՝ իր կնոջ մոտ, որովհետև.

«Թագավորն ասաց. – Իմ յաշն ընցեր ի [տարիքս անցել է], մահի՜ յոս

Չում [մինչև] ետոր Աստված ձիկ զավակ չտվե.

Յես ջըհել կնիկ մ'ունիմ,

Տոն ես գիշեր պիտի երթաս իմ կոճվենք,

Որ ձիկ տղե մեկնի,

Իմ թագավորութեն պահի,

Իմ դուռնաքտիկաց դեմ կայնի»:¹⁶⁹

Կանեպցի Հովան Զոհրաբյանի պատումի մեջ «Սասնա Մհեր կովու սկսեց. ... Կնաց, խասավ Մըսրա երկիր, Մըսրա թաքավորին պոնեց: ... Մըսրա թաքավորի կին առավ. Ետորմենն տղե՝ մեկնվ»:¹⁷⁰

Այս պատումի մեջ նախ մեռնում է Դավթի մայրը, որից հետո Մհերը հեթիմին ուղարկում է իր Մարա կնոջ մոտ.

«Վորո՞ն տամ, վոր տանի, պախի.

Ելի թը պախի, իմ կնիկ տը պախի»:¹⁷¹

Ապարանցի Մուրադի պատումի մեջ Մհերը Սանասարի որդին է. «Թանգուտեն ընկավ Սասունա մեջ»:¹⁷² Խիզախ Մհերը գնում և սպանում է ճանապարհները փակած և այդ պատճառով թանկություն առաջ բերած առյուծին: Այդ միջոցին նա կենակցում է մի որբնայրի կնոջ հետ, որից

ծնվում է Մարա Մելիքը: Ինքն ամուսնանում է հայուհու հետ և ունենում է երեք զավակ: Երբ հայրը՝ Սանասարը, մեռավ. «Մհերին քնսիրուտեն [աղքատությունը] փակեց: Ելավ, իրեք տղան վերցուց ու գնաց ի Մըսր: Չոր մկա Մըսր Ասլիմելիքն եր նստուկ: Մհերի խորթ տղեն ելավ, Ասլիմելիքին սպանեց ու նստավ Մըսր, եղավ Մարամելիք»:¹⁷³ Մարա Մելիքը, լսելով Մհերի զալստյան լուրը, խորին հպարտությամբ է դիմավորում նրան ու խնդրում վնաս չհասցնել իր քաղաքին:

Ճիշտ ու ճիշտ անդրադարձնելով այն պատմական իրողությունը, որ, ինչպես տեսանք, Եգիպտոսի հայազգի վեզիրներ Բադրն ու Շահնշահը, ապա Վահրամ Պաիլավունին, քաղաքը և երկիրը մաքրելով խոռվարարներից ու ավազակներից և երկրում վերականգնելով կարգը, փորձ չկատարեցին Ֆաթիմյաններին զրկելու խալիֆայական աթոռից, այլ երկրի իշխանությունը փաստորեն գրավելով, այն վերադարձնում էին նախկին տիրոջը, այս պատումի մեջ Մարա Մելիքը հենց որ լսում է իր հոր (այսինքն՝ պաշտպանի)՝ Մհերի Մըսր գալը, ընդառաջում է նրան որպես հավատարիմ հպատակ ու խնդրում է միայն իր քաղաքին վնաս չհասցնել:

«Մարամելիք լե ելավ,

Մեկ թուփ կտավ զարկեց դուրսուղ [թևատակ],

Ու թուր լե թալեց վիզ,

Ու գնաց Մհերի առեչ:

Ըսեց. – Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'եղնի [մի դիպչի]

Իդա իմ թուր, իդա իմ վիզ զարկ, ըսեց.

Իդա թուփ կտավ լե փաթու ընծի:

Մհեր ըսեց. – Չե՛, քո քաղքին դագմիշ չըմ եղնի,

Յես եղ հաշվին չըմ եկեր ի: ...

– Եկեր իմ, ըսեց, իմ իրեք տղեն

Տամ քըզի, պահիս, պահպանիս»:¹⁷⁴

Դասկու Մոնկոնց գյուղացի Ավելիս Մարտիրոսյանի պատումի մեջ Մարա Մելիքն սպանում է Բադրասարին ու գերում նրա հղի կնոջը՝ Խանդութին, որն ազատվում է Մարում, Մարա Մելիքի տանը: Որդին՝ Դավիթը, մեծանում է Մարում:

Մարա Մելիքն ու Դավիթը խորթ հայր ու խորթ որդի են:

173 Նույն տեղում, էջ 62:

174 Նույն տեղում, էջ 62:

168 Նույն տեղում, էջ 997:

169 Նույն տեղում, էջ 1039:

170 Նույն տեղում, էջ 1093:

171 Նույն տեղում, էջ 1094:

172 Սասնա Ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 58:

Կարելի է այլևս չշարունակել: Ոչ միայն Ալաշկերտ-Սևանի ավազանի պատումները, որոնք, ըստ մեզ, ավելի հարազատ են մնացել պատմական իրադարձություններին, այլև, ինչպես տեսանք, էպոս դարձած պատումները, անգամ հեքիաթի իջած պատումները, միաբերան վկայում են, որ «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը XI-XII դարերի եգիպտահայ ստվարաթիվ և բարգավաճ գաղութի ժամանակաշրջանում *Մարում ծառայող հայոց զորքի զորասկզբի որդին է*:

Այս թեզն ապացուցելու համար կարելի է բերել այլ կարգի փաստարկներ ևս: Բավական է հիշել, որ երբ «ազնանցորդի» «ճրժերին» փորձանք է սպառնում Մարում, ապա շատերն են հուզվում: Պատումներ կան, որտեղ տեղի հայերի ահազանգով քեռին կամ հորեղբայրները, որոնք մինչ այդ էլ սերտ կապ ունեին Մարի հետ, շտապ գալիս ու հետ են տանում «ճրժերին»: Մի քանի պատումի մեջ էլ հարազատ մայրն է թողնում իր երկրորդ ամուսնուն և որդու հետ գնում Սասուն: Սակայն պատումների մեծ մասի մեջ մեծամեծները՝ վաքիլ-վազիրները և թագավորամայրն են Դավթին պաշտպանում և զագագած Մարա Մելիքին խորհուրդ են տալիս Դավթին ուղարկել իր հայրենիք: Մարա Մելիքը, այսպիսով, չկարողանալով բուն Մարում ոչնչացնել մանուկ Դավթին, որոշում է ուղեկցողների ձեռքով նրան ոչնչացնել իր երկրի սահմաններից դուրս՝ Փրե Բաթման կամրջի վրա, այսինքն՝ Օրթոկյանների և Շահ-ի-Արմենների երկրամասերի սահմանագլխին: Սակայն մանուկն առասպելական ուժ ունի, և ուղեկից ֆերիզ-փահլևանները ոչ միայն չեն կարողանում կատարել Մարա Մելիքի պատվերը, այլև իրենք են նեղ դրության մեջ ընկնում, և տարբեր ձևերով միևնույն բանն են ասում Դավթին, թե իրենք անցյալում, քանի դեռ նրա հայրը ողջ էր, նրա զինվորներն են եղել, իսկ հիմա, որ նա այդպես ուժեղացել է՝ իրենք այդ չգիտեին, և նրա զինվորները կդառնան:

«Եսաց. – Դավիթ, տո՛ւ քո Աստված,

Քանի որ քո խեր սաղ եր [ողջ էր]՝

Մենք քո խոր ֆերըզ-փահլիվանքտիրն [կտրիճ զինվորներն] ինք.

Վոր քո խեր մեռավ՝

Կանցինք, Մարա Մելքին կուլուղ [ծառայություն] երինք:

Հիմի որ Ասված եղ շնորհք տվի քեզի,

Մենք քեզի՛ կուլուղ կ'ենինք,

Ել չենք երթա Մելքին կուլուղ ենի»:¹⁷⁵

«Եղ երկու դեմ՝ ենու [Դավթի] խոր դեմիրն ին:

Տարը՛ն, որ Սասուն թալիմ ենին [հանձնեն]:...

– Մինք քո բախթ, մեզի մի սպանի, մինք քո խոր դիվքիրն ինք,

Գենե [նորից] քեզի խզմաթ [ծառայություն] կ'ենինք»:¹⁷⁶

«– Մինք քո խոր խին ծառեն ինք [հին ծառաներն ենք]...

Եսքամ ժամանակ մինք Մելքին ծառայություն կ'եննք,

Մկա որ դո՛ւ սկնա գախմ [այդպես զորեղ] իս, մինք չընք գըտի [չգիտեինք]...

Ապա դո՛ւ վոր եդենց կտրըճ իս,

Եդենց գախմ իս, մինք չընք խնդանա.

Մինք՝ ել Մելքի ծառայություն չընք ենի,

Քո՛ւ խոր խաթըճ խամար քի՛ եննք»:¹⁷⁷

«Հանաչ մինք քո՛ւ խոր խուամքտիրն ինք,

Մկա դոր կ'իլինք քո՛ւ խուամքտիր [ծառաները]»:¹⁷⁸

«Մինք հանաչ քո՛ւ խոր խուլըմքիրն ինք.

Քո՛ւ խեր մեռավ. ինչ մեռավ, ալ կտրիճ մարդ չկըեր,

Մինք Մըսրա Մելքին խուլըմքտիրն արինք.

Մըկա ուր դո՛ւ քանց Մըսրա Մելք խուլըտ իս,

Դոր մինք քի խուլըմքտիրն տանինք:

[Եվ հիմա երբ դու թշնամի, խորթ ես Մարա Մելիքի նկատմամբ, այժմ մենք քեզ կծառայենք]»:¹⁷⁹

«– Տավիթ, մենք կը խնթեյնք մե մը թալի կետ [մի գցիր գետ]: Մե քո խոր [հոր] մշակներ եյնք: Քո՛ւ խեր մեռավ, նոր մեյի կանցինք Մըսրա Մելիքի առչեմ]»:¹⁸⁰

«Մինք չըխմ [չէ որ մենք] քո՛ւ խոր Կական, Ասլան ինք:

Ինք՝ քո՛ւ խեր մեռավ, Մըսրա Մելք ըզմի տարավ յեխսիր [գերի].

Մինք դորսեն [նորից, այսուհետև] կ'իլինք քո՛ւ Կական, Ասլան, քո՛ւ խուլըմ»:¹⁸¹

«Են մեկ եսաց. – Իս վոր կամ,

175 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 258:

176 Նույն տեղում, էջ 337-338:

177 Նույն տեղում, էջ 395:

178 Նույն տեղում, էջ 500:

179 Նույն տեղում, էջ 555:

180 Նույն տեղում, էջ 862:

181 Նույն տեղում, էջ 898:

Քնի խոր դաստախանը՝ [սփռոց] վերայ իմ ճուղացը՝ [մեծացել],

Քնի խոր խացն իմ կիրի»¹⁸²

«- Աստղծու սիրուն, տո՛ւ գմի չթիս ջո՛ւր...»

Տո՛ւ աղպես մարդ իս, մենք ենենք, մարդ կ'ուզինք.

Ավալն [առաջներում] էլ մենք քնի խոր ֆերդներն ինք»¹⁸³

Այսպիսով, էպոսի գլխավոր հերոսը ծնվել է Սասունում, բայց նրա մանկությունն անց է կացել Մարում, պատանի հասակում վերադարձել է Սասուն և իր հերոսական սխրագործությունները հիմնականում կատարել է հայրենի երկրում: Իսկ նրա հայրը, ապա և որդին, որոնք պատումների մեծ մասում հանդես են գալիս միևնույն Մհեր անունով, իրենց սխրագործությունների մեծ մասը հիմնականում կատարել են հայրենի երկրի սահմաններից դուրս: Եզիպտահայ գաղութի պատմության մեր տեսությունից հետո դժվար չէ կռահել, որ գլխավոր հերոսի հոր՝ Առյուծաձև (ձևող, պատառող) կամ Ճոչ Մհերի նախատիպը Վահրամ Պահլավունին է: Թեև պատումների որոշ մասի մեջ Մհերը «շատ գոռեղ թագավոր էլավ, գնաց չուր Մըսր», սակայն մեծ մասի մեջ նրան հրավիրում են Մըսր, որ կենսակցի Մելիքի կնոջ հետ, և թագավորական տունը գորեղ սերունդ ունենա: Բայց կան պատումներ էլ, որտեղ, ինչպես տեսանք, պարզապես ասված է, թե՛ «քնսիրտուն փակեց Մհերին և նա էլավ վերցուց ճրժերին ու գնաց Մըսր»: Բայց քանի որ Մհերի բախտը բերում է Նեղոսի ափերին, և նա առժամանակ իսկապես որ տեր է դառնում այդ զարմանալի երկրին, ապա դժվար չէ վեպի մեջ նրան ի սկզբանե պատկերել որպես շատ գորեղ թագավոր: Եզիպտոսի հայ գաղութի մեր տեսությունից մենք արդեն գիտենք, որ Պահլավունիները իսկապես որ լավ օրի չէին, երբ հարկադրված էին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ցուցումով մեկնել Եզիպտոս: Սելջուկները նրանց զրկել էին հայկական բնօրրանում ունեցած ընդարձակ հողերից և իշխանությունից: Նրանց տան հետ խնամիացած Ապիրատները Կիլիկիայի սահմանագլխին և Չորտուանեղները Սասունում, վասալական կախման մեջ ընկնելով, հազիվ էին պահում իրենց գլուխը: Այսպիսով, Պահլավունիների դրությունը մխիթարական չէր թե՛ Սասունում և թե՛ Հռոմկլայում ու նրա շուրջը: Եվ Հաֆիզ խալիֆն իրավացի է, երբ ասում է. «իր հայրենիքը արտաքսած և իր երկիրը դուրս նետած էր զինքը, երբ ոչ դրամ ուներ և ոչ կարողություն, ոչ ազգական և ոչ էլ մարդ... ան կանչել տուա իր ընտանիքն ու ազգականները, իր ազ-

182 Լույն տեղում, էջ 171-172:

183 Լույն տեղում, էջ 66:

գակիցներն ու ցեղակիցները: Ասոնք կուգային հետզհետե՛, մինչև որ ձիաոր և հետևակ 20 հազար հոգի հաւաքուեցան...Դուք մեր երկրում հարստացաք...»: Հարստանալով և ուժեղանալով Նեղոսի ափերին՝ Պահլավունիները միառժամանակ հայկական գերութություն ստեղծեցին Եզիպտոսի քաղաքական կյանքում, սակայն, նկատի ունենալով իրենց հենակետային բազայի թուլությունը, նրանք, հետևելով իմաստուն Բադրի օրինակին, քաղաքական իշխանությունն ամբողջովին խլելու փորձ չկատարեցին: Նրանք Բադրի նման ամրապնդեցին Ֆաթիմյան խալիֆների իշխանությունը: Ինչպես Բադրն էր պատժել Ֆաթիմյան Էլ Մուսթանսիր խալիֆի թշնամիներին և նրան վերականգնել իր գահի վրա, այնպես էլ Վահրամ Պահլավունին պատժում է Ռյուդվան Վալախիին և հայկական մնայուն զորք ստեղծելով ոչ միայն ապահովում է երկրի տնտեսական վերելքը, այլև Ֆաթիմյան Հաֆիզ խալիֆին ամրապնդում է իր գահի վրա: Նման փոխհարաբերության վերհուշեր, երբ Պահլավունիներն իշխանությունը գրավում են, բայց իրենց ձեռքը չեն վերցնում, պահպանվել են առանձին պատումների մեջ. Մարա թագավորը կամ նրա կինը Մհերին հրավիրում են Մըսր, Մարա թագավորն ու Մհերը դաստաբրա (կաթնեղբայր) էին, Մարա թագավորի մայրը և Մհերը «քուր ու աղբեր» էին¹⁸⁴ և այլն:

Այսպիսով, Դավթի ճյուղը պարունակող բոլոր պատումները վկայում են Դավթի, նրա հոր, հորեղբայրների և քեռու բարեկամությունը և ապա թշնամությունը Մարի հետ:

Դավթի անունն անփոփոխ է բոլոր պատումների մեջ, անփոփոխ է նաև քեռու անունը (Թևադորոս - Թորոս), Հոր (Աբամելիք, Ճոչ Դավիթ, Մհեր) և հորեղբայրների ու հորեղբորորդիների անունները (Յոան Վերգո, Ծենով Օվան, Պարոն Աստղի, Չընջիլ Խոան, Մուխսի Ջնջգուկ և այլն) ընդհակառակը, շարունակ փոփոխվում են և հաճախ խառնվում եղբայրների անուններին (Խոր Մանուկ, Խոր Գուսան, Ճնճղափոքրիկ, Յոան Վեգի, Ձենով Օհան և այլն): Սակայն պատումների մեծ մասի մեջ Դավիթը միամորիկ է, եղբայր չունի, իսկ երբ ունի, ապա ինքը կրտսերագույնն է («ու հըմնու պստկի անուն լն՝ Դավիթ»¹⁸⁵):

184 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 567:

185 Սասնա Շոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 17:

6. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐ ՈՒ ՍԱՆԱՍԱՐ

Հրապարակված 48 պատումներից 12-ը Սանասարի և Բաղդասարի ճյուղը չեն պարունակում: Ութ պատում էլ Սանասարի և Բաղդասարի անունները հիշում են միայն նախերգանք հանդիսացող «ողորմիների» մեջ: Մնացած 24 պատումները, ոմանք շատ ընդարձակ, ոմանք էլ շատ համառոտ, պարունակում են Սանասարի և Բաղդասարի ճյուղը՝ երբեմն փոփոխելով վերջինիս անունը:

Մինևույն ուսուցիչներից՝ Մուխսի Ավդալ Հզրոյանից և Հակոբ Տեր Մարտիրոսյանից սովորած Նրգեյան Հակոբի ու Սարգիս Հակոբյանի պատումների մեջ երկու եղբայրները Մարում մեծ դիրքի հասած խաչապաշտ հոր և մոր զավակներ են, որոնք տանջվում են Մարա կռապաշտ թագավորի ձեռքին: Մանուկ Թորոյանի պատումի մեջ ոչ թե Բաղդադի, այլ Մարա կռապաշտ թագավորն է ցանկանում նրանց մատաղ անել իր կուռքերին: Մնացած բոլոր պատումների մեջ երկու եղբայրները կռապաշտ թագավորի կին գնացած խաչապաշտ մոր զավակներ են: Այդ կռապաշտ թագավորներն ունեն իրենց անունները՝ Չինմաչինի, Պոնձե քաղաքի, Աջմո, Քաջանց, Հնդա-Մելիք, Համդա-Մհեր, Գավաշու Փոսի, Կաղ Գոգեն, Տեղտիսի կռապաշտ թագավորներ, Քուրդ բեգ և Մենեքերիմ կամ Սինամբար կռապաշտ թագավոր (Ասորեստանի և Երուսաղեմի մոտակա ինչ-որ վայրի): Այնքան, որքան երկու եղբայրներն իրենց խաչապաշտ հայուհի մոր հետ փախչում են իրենց կռապաշտ հորից և հիմնում Սասունը, հայ ժողովուրդը չի կարողացել հաշտվել այն մտքի հետ, որ նրանք կռապաշտ հոր զավակներ լինեն: Նրանց մայրը թեև հարկադրաբար հարս է գնացել կռապաշտ թագավորի տուն, բայց չի կենակցել նրա հետ, այլ հղիացել է ջրից (ծովից, աղբյուրից, անգամ ձիու սմբակից առաջացած փոսիկի մեջ կուտակված ջրից): Այս դեպքում, ամենայն հավանականությամբ, ջրի պաշտամունքի հետ կապված շատ հնուց եկող առասպել է միահյուսվել էպոսի այդ ճյուղին:

Սասունի հիմնադիր եղբայրները միայն երկու պատումի մեջ են Բաղդադի Մենեքերիմ կռապաշտ թագավորի և Բաղդադի խալիֆի որդիներ: Սակայն այնքան, որքան XI և XII դարերի եգիպտահայ բարգավաճ ու մեծ գաղութի պատմությունը մեզ անհայտ է եղել, իսկ մյուս կողմից, Գարեգին Սրվանձտյանի գրի առած (1873 թ.) և հրապարակած (1874 թ.) առաջին պատումի մեջ երկու եղբայրները՝ Աբամելիքն ու Սանասարը, «Բաղդդու խալիֆի» որդիներն են «հեսիր» (զերի) տարված գեղեցկուհի հայուհուց, ապա առաջին հետազոտողների վրիպումն արմատացել է ու դարձել ավանդական: Այդ ավանդական սխալը չի ուղղվել անգամ, երբ գրի են առնվել ու հրապարակվել Ալաշկերտ-Սևանի ավազանի շարքի ավելի իրապատում տարբերակները, որտեղ երեք պատումի մեջ, սկզբից մինչև վերջը, խոսքը դառնում է միայն կռապաշտ Մարա և խաչապաշտ Սասունի շուրջը, իսկ երկու պատումի մեջ էլ, ինչպես ասացինք, երկու եղբայրները Մարում ծառայող ու ապրող խաչապաշտ հոր և մոր որդիներ են: Ի միջի այլոց, մնացած պատումների մեծ մասի մեջ էլ նրանց կռապաշտ հայրը (ինչպիսի անուն էլ որ նա ունենա՝ Մենեքերիմ, թե Սինամբար) սերտ հարևանության մեջ է գտնվում Երուսաղեմի հետ, իսկ Երուսաղեմի հարևանը, ինչպես գիտենք, Մլըսն է: Սակայն նույն Ալաշկերտ-Սևանի ավազանի շարքի մեջ կա նաև նորբայազետցի Առաքել Շակոյանի պատումը, որ շատ է շեղվում ինչպես բոլոր մյուս, այնպես էլ նույն շարքի պատումներից: Բայց շատ շեղվելով, հեքիաթային տարբեր պարունակելով հանդերձ՝ այս պատումի մեջ կա մի շատ ուշագրավ դրվագ: Մարամելիքից հալածական Աբամելիքն ու Սանասարը, «երկու հեթումը», «աղբացեր» են և քեռի Թորոսից խնդրում են թույլ տալ.

«Եթանք մե տեղի վրա, աշխատանք անենք:

Են ել ասավ. – Վորդի՛ ջան,

Վոր գացիք, – խորոտատես տղերք եք, –

Վիր կուշտն հընկաք, չեք դառնա յետ,

Ընձի կը մոռնաք, չեք գա յետ»:¹⁸⁶

Եղբայրները երդվում են չմոռանալ քեռուն և գնում են ու «տենում են մե հախպուր կա, մե ջոջ չայ [զետ] կտրում հընցնում ա»։ այստեղ իրենց նոր բնակավայրն են հիմնում, բայց աշխատանքը ծանր է, տեղն՝ ամալի. եղբայրներից մեկը մյուսին ասում է. «Սանասար, մենք շորեն հեղանք [հագուստներս մաշվեցին], եթանք մե յանի վրա, շոր բերենք»։ «Հելան հընկան

186 Սասնա Ծոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 107:

ճամբախ, գացին. Բաղդղղու դուրս հեկան»: Քաղաքը հարուստ է ու հյուրընկալ, «Հեկան մե վեց որ, օխտ որ մացին: Աբամելիք Սանասարին ասավ. – լավ բան ա, մենք վոր մացինք եստեղ. մե վախտ կը մնանք, թե վոր լավ հեկավ, կեթանք, մեր Քեռի Թորոսին կը բերենք եստե»: Նրանց բախտը բանում է. խալիֆն անձամբ ծառայության է ընդունում նրանց իր արքունիքում:

«Ես տղերք խալիֆին շատ դուր էկան: Մե հիրեք տարի ծառայություն արին»: Խալիֆն իմանում է, որ սրանք քեռի ունեն, այն էլ «անմահական ա հինքը, մահ չունի», բայց չի թողնում, որ եղբայրները գոնե ժամանակավորապես այցի գնան իրենց Քեռուն: «Ասավ. – Ձեզի չեմ հըղդկի՝ եթաք, դուր գացիք, չեք գար. մարդ ճամբեմ, Քեռի Թորոսին բերել կը տամ»: Եվ եղբայրները նամակով կանչում են իրենց Քեռուն: Նամակատարը հասնում է Քեռուն.

«– Շատ բարև քեզի, – ասավ, – Քեռի Թորոս, Աբամելիք ու Սանասարն են գրած:

«*Լավ տեղն ենք հընկե,* Բաղդղղու խալիֆու ձեռն ենք հընկե:

Խնդրում ենք, վոր դու մեզի սիրես, *գաս եստե* Բաղդադ»:

Յեռսուն տուն Կապուտկողա մեջն ա մացե:

Քեռի Թորոս ետ մախուխին [ժողովրդին] դանչեց,

Խեռներ խալալամիշ եղավ [հաշիվներն արդարությամբ փակեց և հրաժեշտ տվեց],

Թե. – Յես եթում եմ, մացեք բարով:

Ետոնք ասին, թե. – Քեռի Թորոս,

Դու որ գացիր, մեր հալը [վիճակը] իմա՛մ գ'ընի [ինչպես կլինի]:

Վոր գացի ենտե, *լավ հեկավ, ձեզի կը տանեն*:¹⁸⁷

Ընդգծված մասերը պերճախոս վկայությունն են, որ Բաղդադի խալիֆը Եգիպտոսի Էլ Մուսթանսիր Ֆաթիմյան խալիֆն է, երկու եղբայրները՝ Բաղրն ու Շահնշահը, որ սա արագորեն ստվարացող ու բարգավաճող եգիպտահայ գաղութի անդրադարձումն է էպոսի մեջ:

Հապա ինչո՞ւ Մսրի խալիֆը դարձել է Բաղդադի խալիֆ:

Արաբները, արշավանքներ սկսելով, ստեղծեցին կրոնապետություն, որի գլուխ կանգնած էր խալիֆը (Մարգարեի հաջորդ, տեղապահ): Առաջին ընտրովի խալիֆներից հետո Մերձավոր Արևելքում ստեղծվեց խալիֆայա-

187 Նույն տեղում, էջ 112:

կան երեք դինաստիա: Դամասկոսում հիմնված Օմայան դինաստիան 750 թվականին պարտության մատնվեց Աբասյանների կողմից, որոնց նստավայրը՝ Բաղդադն իր ճոխությամբ առասպելական հռչակ ձեռք բերեց, *Բաղդադի խալիֆաթն ամենից ավելի երկարատևը եղավ* (750-1258 թթ.): Նրա գոյության ընթացքում Լիբիայի Կայրուան քաղաքից եկան և Եգիպտոսը գրավեցին (969 թ.) Ֆաթիմյան խալիֆները, որոնք Եգիպտոսում իրենց գոյությունը պահպանեցին 202 տարի: 1171 թվականին մեռավ Ֆաթիմյան վերջին խալիֆը՝ Ադիդը, մեկ տարի հետո (1172 թ.) Սալահեդդինը պետական հեղաշրջում կատարեց և իրեն Մսրա մելիք հռչակեց: Մսրում խալիֆաթը դրանով վերացավ, սակայն նրանից հետո Բաղդադի ավելի հին և ավելի հռչակավոր խալիֆաթն իր գոյությունը դեռևս պահպանում էր 96 տարի և վերացավ միայն 1258 թվականին մոնղոլների ձեռքով, որոնք այդ ժամանակ դեռևս իսլամ չէին ընդունել: Այդ ժամանակ Էյուբյան դինաստիան էլ էր վերացել (1250 թ.), և Եգիպտոսն անցել էր մամլուկների ձեռքը, որոնք Ջալալեդդինի անհաջող փորձերից հետո գլխավորում էին Մերձավոր Արևելքի մուսուլմանների պայքարը մոնղոլների դեմ: Այդ պայքարի ընթացքում Եգիպտոսի մամլուկները, մոնղոլների դեմ մղած իրենց պայքարին համամուսուլմանական բնույթ տալու համար, գտնում են Բաղդադից ճողոպրած մի Աբասյանի և նրան Գահիրեում խալիֆ են հռչակում, բայց աշխարհիկ ոչ մի իրավունք չեն տալիս նրան: 1258-1517 թվականներին Գահիրեում նստող խալիֆն այլևս մի անգոր մարդ էր, մամլուկների արքունիքին շուր տվող մի հասարակ պաշտոնյա:

Այնքան, որքան Պահլավունիների տան կործանման պատմությունները գրվել են 1194-1198 թվականներին և պատմվել են XIII դարի սկզբին, երբ Մսրում արդեն վաղուց խալիֆ չէր նստում, իսկ Բաղդադում դեռևս խալիֆ կար, որը թեպետև անգոր էր, բայց վայելում էր 400-ամյա դինաստիայի հնության և երբեմնի հզորության ու հեքիաթային հարստության տիրոջ համբավը, երբ Մսրը, հանձին Մելիքի, դաժան թշնամություն էր ցույց տվել ինչպես եգիպտահայ գաղութին, այնպես էլ Եգիպտոսի սասունցի հայ գորքին և շարունակում էր թշնամի մնալ, ապա հասարակ ասացողներն այլևս չեն կարողացել միևնույն թշնամի երկրում տեղադրել թե՛ արևախումբ թշնամի Մսրա Մելիքին և թե՛ բարեկամ Ֆաթիմյան խալիֆին: Այսպիսով, ամեն անգամ խալիֆ անվան հանդիպելիս նրանք երբեմն ինքնաբերաբար ավելացրել են՝ Բաղդադ: Հայոց պատմությունից գիտենք, որ Մսրի Ֆաթիմյան խալիֆները բովանդակ Հայաստանի և հայ ժողովրդի հետ ամենևին գործ

117-118 թթ. կործանվում է

չեն ունեցել, նրանք միայն պատմական կարճ ժամանակամիջոցում հայագ-
գի կրոնափոխ վեգիրներ են ունեցել, ապա հյուրընկալել են Պաղատունի-
ներին և վարձկան գործ են պահել սասունցիներից, իսկ Բաղդադի խա-
լիֆներն իրենց գոյության ամբողջ ընթացքում իշխել և գերիշխել են գրեթե
բովանդակ Հայաստանի վրա և իրենց դաժան քաղաքականությամբ երբեք
չէին կարող բարի համբավի հիշատակ թողնել հայ ժողովրդի հիշողության
մեջ, որ նա իր ժողովրդական վեպերում Բաղդադի խալիֆի համար ասեր՝
«խալիֆա՛, գլխիդ դուրբան հընիմ», իսկ խալիֆան «հիրա աղջկան, – անու-
նը Նազլու խանում եր, – տվեց Աբամելիքին: Պսակեց»:¹⁸⁸ Սասունցին իր
վեպի մեջ այսպես կարող էր ասել միայն Եգիպտոսի Էլ Մուսթանսիր Ֆա-
թիմյան խալիֆի մասին:

Այս կարծիքն ավելի է հաստատում Մոկացի Հովանի պատումը, որ-
տեղ «Մհերի Բաղդատ գնալը, նրա գրույցը Բաղդատի խալիֆի թոռան
հետ. յերկրպագությունը Բաղդասարի գերեզմանին» ենթագլխում կարդում
ենք.

«Քննությունով ելան կնիցին,
Բաղդատա քնդաք խասան. ...
Ասաց. – Իս թագավոր չըմ ճանչնա,
Ամա կ'ասին թագավոր խալիֆի թոռնիրն ին:
Եսաց. – Տո՛ւ Բաղդասարը գերեզման ընծը շանք տաա:
Եսաց. – Իս չըմ կերի շանք տա,
Թագավորուո թախսը դեմն ի:
Եդիկ ելավ, կաստ երավ թագավորը թախսին.
Կինաց, տեսավ՝ են յանեն
Թագավոր զինք թախսեն եջավ տակ.
Եջավ տակ, կանգնավ, իրիշկից եդա՛ մարդուն,
Շատ վախացավ, կանչից, եսաց.
– Տո՛ւ ինչ մարդ իս՝ իմ թախսը հեռջիվ կան կը կնա:
– Տո՛ւ չըս գիտը՝ իս ինչ մարդ իմ.
Մհերն իմ, Սասմա տնեն իմ:
Եսաց. – Հո՛... – Միտք երավ զինք, եսաց.
– Մի թըվականը՛ մեչ կա՛
Սասմա տնեն մեկ մարդ տը կնա եստեղ,
Եսա՛ քնդաք մի ձեռնեն առնը՛:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 112-113:

Չինք որ լսավ եդա՛ խոսքիր, ահդ երավ, եսաց.
– Քնդաք քո՛ւ ձեռնեն չըմ խըլը.
Բաղդասար մի ազգեն ի, Սասմա տնեն ի,
Ենու գերեզման ընծը՛ շանք կը տաա: ...
Թագավոր եսաց. – Ես քնդաք նստիր իմ,
Ամա դադարանք չունիմ,
Շատ կռիվ կը կնա վերես:
Եսաց. – Վո՛վն ի՛ կռիվ կը կնա քո՛ւ վերես:
Եսաց. – Մեկ դի՛վ ը, զինքն ել չուլախ ի, մեկ ձեռնեն,
Քննություն մարդ ել խիտ [հետը]:»
Իր քրիստոնեական Աստծուն օգնության կանչելով՝ Մհերն սպանում է
դևին ու հաղթական ներկայանում թագավորին՝ ազատած բերելով դևի գե-
րած քառասուն աղջիկներին:
«– Քո՛ւ դո՛ւ շման սպանըցը՛,
Արխային թագավորութիւն երա:
Եսաց. – Վոր տո՛ւ սպանիցըր,
Թագավորութիւն քո՛ւն ը, քի վայել ի:
Եսաց. – Չե՛, իս Դավթի տղեն Մհերն իմ,
Իս չիմ կերի եստեղ նստը.
Նա՛ ժառանգ կա ընծը՛, նա՛ մախ ունիմ:
– Աբա, ինչ կ'ուզիս, ասա՛ տաա:
Եսաց. – Ընծը՛ ունիմ քննություն ախպեր,
Եդա՛ քննություն աղջիկ,
Քննություն տերտեր պտի բիրիս եստեղ,
Մեկ եկեղեցի շինիս, կարգիս վիրենքտիր:
Բաղդասարը գերեզմանի վերա
Քննություն խորան ժամ շինիցին,
Անուն դրին սըփ Սարգիս. –
Մկա ել անուն սըփ Սարգիս ը. –
Քննություն տերտեր քննություն աղջիկ
Փսակիցին Մհերը՛ ախպիրնիրու վերա»:¹⁸⁹

¹⁸⁹ Սասնա Շոեր, հ. Ա, էջ 236-238:

Սա, իհարկե, Բաղդադը չէ, այլ Գահիրեն, որտեղ Էլ Մուսթանսիրի թոռ Հաֆիզ խալիֆի և Վահրամ Պահլավունու միջև նման փոխհարաբերություն իսկապես որ ստեղծվել է 1135-1137 և ապա 1140 թվականներին:

Բանն այն է, որ Բաղդը եգիպտական ծառայության մտավ և ապա միահեծան վեզիր դարձավ որպես մահմեդականություն ընդունած հայ զորավար: Հանգամանքների բերումով էր նա առերևույթ մահմեդականություն ընդունել, թե՛ կամովին, անկեղծորեն էր գերադասություն տվել այդ կրոնին, թե՛ ոչ. այս հարցն այժմ այնքան էլ կարևոր չէ: Փաստն այն է, որ Բաղդը օր ծերության (նա մեռավ 1094 թվականին 80 տարեկան հասակում) վերհիշում է իր մանկության տարիների կրոնը և ցանկանում է թաղվել հայոց եկեղեցում: Բայց զգույշ ու քաղաքագետ մարդ լինելով՝ նա դիմում է մի այսպիսի քայլի: Նա հայկական եկեղեցի է կառուցել տալիս Գահիրեում, բայց թույլ չի տալիս այն օծել և այնտեղ պաշտամունք կատարել: Երբ ինքը մեռնում է, կտակում է իրեն թաղել այդ չօծված եկեղեցու բակում: Նա լավ էր ճանաչում իր մոլեռանդ շրջապատը և գիտեր, թե այդ շրջապատն ինչեր կարող էր անել, երբ նրան ասեին, թե իր կենդանության օրոք մահմեդական դադիների պետի պաշտոնին հասած, գլխավոր մզկիթում խալիֆի վրա մշտական վարագույր քաշած նախկին գլավուրն ինչպես էր խաբել իրենց և մեռնելուց հետո իր հոգու փրկության համար գերադասել էր թաղվել հայոց եկեղեցում: Այս պատճառով էր, որ նա թույլ չէր տվել օծել հիշյալ եկեղեցին և պաշտամունք կատարել այնտեղ: Այնքան, որքան Բաղդի մահվանից հետո 21 տարի միահեծան իշխել էր նրա որդի Շահնշահն իր նույնպես հայկական զորքով, Բաղդի գերեզմանի հետ ոչինչ չէր կարող պատահել: Ընդհակառակը, հայերն այդ եկեղեցին ոչ միայն օգտագործում էին որպես մի հասարակ եկեղեցի, այլև հարստացրել, գեղեցկացրել ու ընդարձակել էին, և այնտեղ էր նստում եգիպտահայության կաթողիկոս-պատրիարքը: Բայց Շահնշահի սպանությունից հետո՝ 1121 թվականին, ապա 1130-1131 թվականներին, երբ Հաֆիզը, այսինքն՝ Մուսթանսիրի այն թոռը, որի հորը Շահնշահը հալածել էր և չէր թողել խալիֆ դառնալ, պայքարում էր իր պապի գահի վրա նստելու համար, ինչպես նաև 1134 թվականին, երբ Հաֆիզի հաղթանակից թև առած մոլեռանդ մահմեդականները հայահալած քաղաքականության դրոշ էին բարձրացրել, հայկական այլ տուժած եկեղեցիների հետ չէր կարող տուժած չլինել նաև այն եկեղեցին, որտեղ թաղվել էր Բաղդը: Ինչպես իր տեղում տեսանք, հայահալած քաղաքականությանը վերջ տալու համար 1135 թվականին Եգիպտոսի հարավից՝ քրիստոնեական

Նուբիային սահմանակից Գուս նահանգից իր հայկական զորքով եկավ Վահրամ Պահլավունին, գրավեց Գահիրեն և դարձավ մեծ վեզիր: «Թագ պետության» (Սայիդ ադ Դովլա) կոչված Վահրամ Պահլավունին ոչ միայն վերականգնեց հայոց ոտնահարված իրավունքները, այլև մոտ երեք տարով Եգիպտոսում հաստատեց հայոց գերությունյան շրջան:

Իր ժամանակի հայ պատմագիր Աբու Սալիհը երկու վկայություն ունի, որոնք ցույց են տալիս, որ Բաղդի գերեզման-եկեղեցու հետ էլ փորձանք էր պատահել այդ հայահալած պոռթկումների ժամանակ, և Վահրամ Պահլավունին իրոք պահանջել էր ցույց տալ իրեն Բաղդի գերեզմանը և վերականգնել այդ գերեզմանի անարգված պատիվը:

Բաղդի մասին Աբու Սալիհը գրում է. «Անարտեղ գնորդություն (ուրիշ մօտիկ) եկեղեցույ մի, բայց օծել չտուալ, և ոչ պաշտօն կատարել հոն: Երբ վախճանեցաւ ինքն՝ թաղուեցաւ այս եկեղեցույ մէջ: Հիմայ այս վանացս չորս կողմն են պարտէզք, բանջարանոցք և արտորայք ցորենոյ. զքօսանքի տեղեաց ամենէն նշանատրներէն մէկն է: – Երբոր Ղուզք (ցեղակիցք Թուրքաց) և Քուրդք տիրեցին Եգիպտոսի երկրին հիճր. 564 (1168-9 Փրկչին), ամենուն ծանօթ տագնապք եկան այն ատեն յԵգիպտոս բնակվող Հայոց վրայ. իրենց պատրիարքն և կրօնատրք՝ մեր յիշեալ վանքէն վորնտուեցան, դոներն պատեցան զոցուեցան, և ոչ ոք համարձակէր մօտենալու ամայացեալ եկեղեցիներուն»:¹⁹⁰

Ինչպես վերը նշվեց, պահպանվել է Աբու Սալիհի նաև մի այլ վկայություն, որից մենք իմանում ենք, որ եգիպտահայ գաղութը աղետի էր ենթարկվել ոչ միայն Վահրամ Պահլավունուց հետո, այլև նրանից առաջ էլ, բայց Վահրամ Պահլավունուն հաջողվել էր կարգավորել հայության իրավունքների վերականգնման կնճոռոտ հարցը:

«Հայոց՝ Այգեստանի և Զուհրեայ մէջ եղած եկեղեցեաց՝ յետոյ ինչ ըլլալն: – Երբ և ոչ մէկ գլխատր Հայու մի թողուցին մնալ յԵգիպտոս, Ղփտիք ստացան այս ընդարձակ և հին եկեղեցին, մեր տիրոջ սուլտանի վճռով, և միջնորդութեամբ Շէյխ ար-Ռայիս Սաֆի ատ-տալա իպն ապու՝ Մաալի դայրի (կամ գրագրի), որ և իպն Շարաֆի կոչուէր: Յետոյ Հայոց (համբարապետն կամ պաշտպանն) Վահրամ Սայիտ ատ-տալա նորոգեց այս իրաց յարմարութիւնը»:¹⁹¹

Ինչպես տեսանք, Վահրամ Պահլավունին Նուբիայի սահմանակից հայկական ճերմակ վանքերում իբրև թե ճգնելու ժամանակ վերստին

190 Ղեւոնդ Ալիշան, Արուսիկ հայ, էջ 18:

191 Նույն տեղում, էջ 29-30:

հզորանում ու 1140 թվականին նորից գալիս ու գրավում է Գահիրեն, բայց 1135-1137 թվականների դառը փորձից խրատված, այլևս մեծ վեզիր չի դառնում, այլ բավականանում է խալիֆի գլխավոր խորհրդականի պաշտոնով և Եգիպտոսում հայկական մշտական զորք ստեղծելով: Էպոսը հենց այդ է ասում Մհերի մասին. «քաղաքը քու ձեռնեն չեմ խըլը», «քու դուշման սպանըցը, արխային թագավորություն արա», միայն թե «Բաղդասարը գերեզմանի վերա» «մեկ եկեղեցի շինիս»:

Վահրամ Պահլավունի-Մհերը, կրկնում եմ, սեփական հենակետային հուսալի բազա չունենալու պատճառով ի վիճակի չէր քաղաքական իշխանություն նվաճելու օտար երկրներում, դրա համար էլ տարած հաղթանակից հետո հայտարարում է.

«- Իս ձենե բան չըմ ուզի,

Վոչ թագավոր կ'ըլնիմ,

Վոչ քնդքի տեր կ'ըլնիմ.

Ամա ձենե կ'ուզիմ՝

Մեկն թագավոր նստը՝ եստեղ»:¹⁹²

Այս ամենը վերաբերում է միայն և միայն Մարին, որտեղ հանգրվանել էր հայ ժողովրդի մի հատված, որը մեծ նկրտումներ չուներ, այլ միայն ուզում էր, որ «մեկն թագավոր նստը», այսինքն՝ որ կարգ ու կանոն լինի իր նոր երկրում, և ինքը կարողանա ծավալել իր խաղաղ գործունեությունը: Եվ Ֆաթիմյանների օրոք, մանավանդ էլ Մուսթանսիրի օրոք, նա իր ուզած այդ ապահովությունը գտել էր Նեղոսի ափերին: Այս բանը գիտե այդ ապահովությունը վերացնող Մարա Մելիքը, որն էպոսի մեջ Դավթին գրում է.

«Չուր հաստր տու իմ ախպերն իր,

[մինչև այսօր դու իմ եղբայրն էիր],

Ես որ ձի տու դուշման դարձար»:¹⁹³

Այս բոլորից հետո մնում է եզրակացնել, որ բարյացակամ խալիֆի համար «Բաղդադի» որակումը հետամուտ թյուրիմացություն է, որ թե՛ բարեկամը և թե՛ թշնամին Մըսրն է միայն: Եվ այս եզրակացությանը մենք հանգում ենք ոչ միայն Ալաշկերտ-Սևանի ավազանի շարքի պատումների հիման վրա (հիշենք, որ Ալաշկերտ-Սևանի ավազանի պատումների ակունքը Սասուն գավառի Իշխանաձոր գյուղից եկած Մուխսի Ավդալ Հզրոյանն է, որը եղել է 115 տարեկան և իր պատումը լսել է իր հորից կամ պապից, ուրեմն պատումի հնությունը հասնում է XVIII դարին), այլև բոլոր

192 Սասնա Շռեր, հ. Ա, էջ 235:

193 Նույն տեղում, էջ 189:

մյուս պատումների հիման վրա, որոնց մեջ հիմնական գործողությունները կատարվում են Մարում ու Սասունում, և հիմնական գործող անձերը մի կողմից մարցիներ ու նրանց վասալներն են, իսկ, մյուս կողմից, միայն սասունցիներ, իսկ եթե հանդիպում ենք Բաղդադի հիշատակության (այն էլ քառասունութից ընդամենը միայն երեք պատումի մեջ), ապա Բաղդադն ու նրա խալիֆը հանդես են գալիս ոչ որպես վճռական կողմ ու գլխավոր գործող անձ:

Պատումները, էպոսի հիմնական գործողությունները կապելով միայն Մարի ու Սասունի հետ, միաժամանակ հիմնականում հաղորդում են ոչ միայն երեք սերնդի գործողություններ, այլև պահպանել են պատմականորեն ու ազգակցորեն իրար հետ առնչվող, այլ ոչ թե անջրպետվող երեք հաջորդական սերնդի գոյության վկայություններ:

Մոկացի Մանուկ Հարությունյանի պատումի մեջ պարզ ու որոշակի ասված է. «Տնվթի խեր՝ Միծ Մհեր Սանասարի տղեն ի»:¹⁹⁴

Այսինքն՝ Դավթի հայր Մեծ Մհերը Սանասարի որդին է:

Այրարացի Մուրադ Հակոբյանի պատումը, խոսելով Մարա Մելիքի ու Դավթի հոր՝ Մհերի մասին, ասում է.

«Սաղասարից, Բաղդասարից հետո Մհեր ելավ թագավոր.

Աշխարքը բիրադի ալթ արավ, զավթեց:

Չոռեղ թագավոր եղավ, գնաց չուր Մարր.

Մարա Մելիքի մորը հետ նստավ, կայնավ»:¹⁹⁵

Տարոնցի Կրպոյի պատումի մեջ Բաղդասար չկա, այլ կա Աբամելիք, որն ավագ եղբայրն է. սա պատմականորեն ճիշտ է՝ Աբամելիք (Բադր) ու Սանասար (Շահնշահ) և ոչ թե Սանասար (Շահնշահ) ու Բաղդասար (Բադր): Բայց Տարոնցի Կրպոյի պատումից որոշ է նաև Աբամելիքի ժամանակը: Դավթին սպանող աղջկա ծագման մասին հիշյալ պատումի մեջ կարդում ենք.

«Ըդ վախտին որ Աբամելիք սաղ եր,

Աբամելիք եկեր եր Իբրահիմ ադի տուն,

Ու զորով գացեր եր եդ ադի կնկա մոտ...

Ու ըդուր մոտեն եղեր եր աղջիկ մի...»:¹⁹⁶

Դեպքը տեղի է ունեցել Խլաթում: Խլաթի տեր Իբրահիմ աղայի (լրիվ անունով՝ Չահիր-ադ-դին Իբրահիմ Շահ-Արմեն) պատմականության մա-

194 Նույն տեղում, էջ 607:

195 Սասնա Շռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 247:

196 Սասնա Շռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 40:

սին երկու կարծիք չի եղել («Այս Իբրահիմ Շահն է, անշուշտ, պահված մեր վեպի մեջ, իբրև Խլաթի տեր Իբրահիմ աղա, որի մոտ է գնում Աբամելիքը»¹⁹⁷) և չի էլ կարող լինել: Նրա թագավորության տարիները հայտնի են՝ 1112-1128 թթ., հայտնի են նաև Բաղրի ու Շահնշահի վեզիրության տարիները՝ 1074-1121 թթ.: Այսպիսով, անվիճելի է նրանց ժամանակակից լինելը, որ խախտված չէ մեզ հասած այս պատումի մեջ: Անվիճելի է այն, որ Աբամելիքն ու Սանասարը Դավթից ու Դավթի սերնդից անջրպետված չեն աստվածաշնչյան հնությանը ու հեռավորությանը, այլ էպոսի հիմնական սասունցի գործող անձանց՝ Դավթի, Ձենով Օվանի, Խոր Գուսանի, Քեռի Թորոսի, Ճնճղափորիկի ու Յոան Վերգոյի միևնույն տոհմի առաջին սերունդն են միայն:

Եգիպտոսի հետ Սասունի առնչության ժամանակաշրջանն (1063-1172 թթ.) իսկապես որ բաժանվում է երեք սերնդի:

Առաջին սերունդը Բաղրն ու Շահնշահն են (1063-1121 թթ.): Սրանք երկուսն էլ առերևույթ իսլամ ընդունած վեզիրներ են, որոնք, սակայն, հենվում են քրիստոնեությանը հավատարիմ մնացած հայկական զորքի և հարաճուն եգիպտահայ գաղութի վրա: Բաղրը հաշտ ապրեց Էլ Մուսթանսիր խալիֆի հետ, և նրանք երկուսն էլ մեռան գրեթե միաժամանակ: Բաղրի աջակից որդի Շահնշահը թեև խալիֆի աթոռին նստեցրեց իր թեկնածուներին, սակայն դինաստիական փոփոխություն չկատարեց ու հաստատուն պահեց Ֆաթիմյան գահը:

Սանասարի և Բաղդասարի վեպը հյուսվել է Բաղրի և նրա որդու՝ Շահնշահի գործունեության շուրջը, բայց ժամանակի ընթացքում միահյուսվել է ինչպես խոր հնությունից սկսող աստվածաշնչյան Սանասարի վեպի, այնպես էլ դրանից հետո հյուսված հայոց թագավորի աղջկա և կռապաշտ թագավորի ամուսնության վեպի հետ, որոնց մասին կխոսենք ստորև: Այնքան, որքան հնուց եկող աստվածաշնչյան հին և ազդեցիկ վեպի մեջ Սանասարն ավագն է, ապա հետագա դարերի ընթացքում Բաղրը (Բաղդասարը), որ Շահնշահի հայրն է, դարձել է նրա կրտսեր եղբայրը, իսկ Շահնշահը դարձել է ավագ եղբայրը և աստվածաշնչյան անունով կոչվել է Սանասար: Այս տեսակետից բնորոշ է, որ աստվածաշնչյան ավանդության գործը և անառարկելի ազդեցության տակ Սանասար անունը ամենուրեք մնում է Սանասար, մինչդեռ Բաղդասար անունը հաճախ փոփոխվում է: Եվ ուշագրավն այստեղ այն է, որ որոշ պատումների մեջ Բաղդասարը ոչ

միայն դառնում է Աբամելիք, Ադնա Մելիք կամ աստվածաշնչյան ձևով Ադրամելիք, այլև այն, որ այդպիսի պատումների մեջ Աբամելիք-Ադնամելիքը ավագ եղբայրն է, իսկ Սանասարը՝ կրտսեր:

«Մեզ տղի անուն Ադնամելիք դրեր եր, Պզտիկ տղի անուն՝ Սանասար»:¹⁹⁸

Բիրլիական Սանասարն այստեղ անդրանիկությունը դեռ չի խլել իրական, պատմական Բաղդասարից:

Ինչպես տեսանք, երկու եղբայրները միայն երկու պատումի մեջ են ծնված ոչ միայն հայուհի մորից, այլև Մարի արքունիքում մեծ կշիռ ունեցող հայ հորից, մնացած բոլոր պատումների մեջ նրանք նույնիսկ այն դեպքերում, երբ նրանց ջրային ծագում է վերագրվում, այնուամենայնիվ, կռապաշտ թագավորի հարս գնացած հայուհու զավակներ են, կիսով չափ խաչապաշտ, կիսով չափ կռապաշտ: Արդյոք սա Բաղրի ու Շահնշահի առերևույթ մահմեդականություն ընդունելու վերհուշ չէ: Արդյոք այդ հայագգի վեզիրների առերևույթ մահմեդականության վերհուշեր չեն Բաղդասարի և Սանասարի ընդվզումները քրիստոնեական կրոնի դեմ, որոնք պահպանվել են պատումների մեջ. «Բաղդասարը զայրանում է, ժամ չի գնում»¹⁹⁹ կամ թե «Սանասարը զայրանում է ու ժամ չի գնում»²⁰⁰ ենթավերնագրերը, որտեղ «Վարդապիտ եսաց. – Բաղդասար, վորտի, Հու՞ր ի քո ավապեր, չիր ժամ: Բաղդասար դժարացավ, ըսաց. – Հայր սուրբ, իմ ավապեր ըռկիր ի [խոռվել է], չիկն ժամ, տո՛ն [դու] գնա՛»:²⁰¹

Խաչապաշտ թագավորի կամ քահանայի աղջկա և կռապաշտ թագավորի ամուսնության տարածված մեծ մասամբ իրական պատմությունները շատ են ազդել «Սանասարի և Բաղդասարի» վեպի մեզ հասած պատումների վրա և այդ փոխազդեցության կամ միահյուսման դարավոր պրոցեսում (գործընթացում) շատ է տուժել Եգիպտոսի հայագգի վեզիրների գործունեությունը պատմող իրական պատմավեպը: Բայց և այնպես մնացել են որոշ անդրադարձումներ, ինչպես, օրինակ, փառլանտներին, անգամ սովորական քաղաքացիներին անխնա կոտորելու մանրամասնությունները, որոնք համընկնում են Բաղրի և նրա աջակից որդի Շահնշահի նմանօրինակ գործողություններին, որոնք ուղղված են եղել Եգիպտոսի վարձկան զորքերի էմիրների ու առհասարակ կենտրոնախույս տարրերի դեմ:

198 Սանա Ծոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 255:

199 Սանա Ծոեր, հ. Ա, էջ 483:

200 Նույն տեղում, էջ 144:

201 Նույն տեղում, էջ 145:

197 Մ. Արեղյան, Կ. Մելիք-Ռիանցանյան, Ներածություն. – Սանա Ծոեր, հ. Ա, էջ 22:

Երկրորդ սերունդը Վահրամ Պահլավունին է և նրա «չվանը բռնողները» (1095-1140 թթ.):

Երրորդ սերունդը Վահրամ Պահլավունու հիմնադրած Եգիպտոսի հայկական գործի գորապետի որդիներն են, որոնք 1172 թվականին պարտություն կրեցին Մսրում, 1185 թվականին վրեժխնդիր եղան Սասնո լանջերին, ապա պարտության մատնվեցին Բեկթեմուրի կողմից, որից հետո ուխտադրժորեն ոչնչացվեցին հայկական Կիլիկիայում:

Այժմ դժվար չէ համոզվել, որ էպոսի պատմական կորիզը հիմնականում Սասունի և Մսրի այս հարաբերություններն են, որոնք ծավալվել են հայության առաջին մեծ տարագրության դարաշրջանից մինչև մոնղոլների երևան գալը Հայաստանի տարածքում՝ XI դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի կեսերը, և այդ հարաբերությունների ժամանակ գործող հայ և թշնամի պատմական անձինք: Անվիճելի պիտի համարել, որ էպոսի Մսրը Եգիպտոսն է՝ Նեղոսի նախ հյուրընկալ, ապա թշնամի հովիտը, որ խալիֆը (Բաղդադի, թե մի այլ տեղի) Եգիպտոսի Ֆաթիմյան Էլ Մուսթանսիր խալիֆն էլ հայության մեծ բարեկամը՝ հայ ժողովրդի դառն օրերին, որ Մսրա Մելիքը դվինցի բուրդ Յուսուֆ բին Էյուբն է՝ նշանավոր Սալահեդդինը և Մսրա թագավորը, որի խոժաղուժ գործը և այդ գործին սանձ չդնելու նրա քաղաքականությունը կործանարար եղան եգիպտահայ հարուստ ու զարմանալի գաղութի համար, որ Կուզբադինը (Կուզբադինը, Կուզբադինը, Խուրբախտինը) Սասունին միշտ թշնամի Օրթոկյանների իշխանապետ Բուդբադինն է, որ Ջանիդլադը (մարմինը պողպատ, այսինքն՝ զրահ հագած) Սասունի սյուզերեն Խլաթի թագավոր Բեկթեմուրն է, որ թշնամի ֆրենկները (Պապը ֆրենկին և ֆոնտա Բուեքը) Խաչակրաց երրորդ արշավանքի (1189-1192 թթ.) ժամանակաշրջանի խաչակիր իշխանապետներն են, որ Բաղդասարը (Աբամելիքը) Բադրն է, Սանասարը՝ Շահնշահը, որ Առյուծաձև Մհերը Վահրամ Պահլավունին է, որ Դավիթն ու Մհերը Եգիպտոսի հայոց գործի գոհված գորապետի որբացած, «հեթում» դարձած որդիներն են, որոնցից առաջինը, ինչպես ստորև կտեսնենք, միահյուսվել է աստվածաշնչյան մարգարե Դավթին, իսկ երկրորդը՝ Կիլիկիայի Մլեհ իշխանին, որ, վերջապես, Խանդութը Թամթան է՝ Իվանեի դուստրը, որ հայ-վրացական հյուսիսի ու Խլաթին տիրացած Էյուբյանների քաղաքական հաշտության շրջանում հարս եկավ Խլաթ՝ քրիստոնյա ազգաբնակչությանը հովանավորելու համար:

Այսպիսով, էպոսի հիմնական իրադարձություններն սկսվում են XI դարի երկրորդ կեսից և վերջանում են XIII դարում, իսկ հիմնական գոր-

ծող անձինք են Ֆաթիմյան խալիֆ Էլ Մուսթանսիրը (+1094 թ.), Բադրը (+1094 թ.), Շահնշահը (+1121 թ.), Վահրամ Պահլավունին (+1140 թ.), Սալահեդդինը (+1193 թ.), Քուրբադինը (+1200 թ.), Բեկթեմուրը (+1198 թ.), Հեթում-Վասիլ և Շահնշահ Սասունցիները (+1194 թ.), Մլեհը (+1176 թ.), իշխան Վիգենը (հավանաբար +1165 թ.), Թամթան (հավանաբար +1260 թ.):

Այս տեսակետը հաստատում են նաև ինչպես էպոսի բոլոր պատումների մեջ տարբեր երանգներով կրկնվող առանձին դրվագները, այնպես էլ առանձին արտահայտություններ, անուններ ու երկույթներ, որոնց մենք կանդրադառնանք ստորև:

Բ. ՄՍՐԱ ՄԵԼԻՔ

Էպոսի պատումների մեջ կա երկու Մսրամելիք՝ հայր և որդի:

Մեկը նա է, որ եղբայրացել է Մհերի հետ, անգոր է ու անգավակ և իր կնոջ անկողինը հրամցնում է Մհերին, որպեսզի նրա սերմից զավակ ունենա, որը կարողանա բարձրացնել տերության հզորությունը և հեղինակությունը, նա, որ հարկ է վճարում սասունցիներին և միջոցներ է որոնում այդ հարկից ազատվելու համար, իսկ մյուսը՝ նա՝ որդին, որին խաղընկերներն այսպանում են «փիճ» մականունով, որը տանել չի կարող Դավթին, ուզում է ոչնչացնել նրան, նրա հայրենի Սասունը և բոլոր սասունցիներին, նա, որ արշավանք է գործում Սասնո վրա և պարտության մատնվում ու սպանվում Դավթի ձեռքով:

Առաջինը Ֆաթիմյան ժամանակաշրջանի հայ-արաբական բարեկամության, երկրորդը՝ Սալահեդդինի ժամանակաշրջանի հայ-քրդական թշնամության մարմնավորումն է:

Որդի Մսրամելիքն անվիճելիորեն Սալահեդդինն է, որի հանրածանոթ կենսագրությունը համառոտակի պահպանվել է էպոսի գրեթե բոլոր պատումների մեջ, իսկ իր մանրամասնություններով՝ էպոսի առանձին պատումների մեջ: Ամենից առաջ շեշտված ու ընդգծված է նրա ազգությունը: Ասացողները գիտեն, որ Սասունի և սասունցիների թշնամին թեև կոչվում է Մսրա Մելիք (Եգիպտոսի թագավոր), բայց նա արար չէ, այլ բուրդ է:

«Մսրա Մելիք սատկավ,

Կսիկ թուրթ ճամպխեց Սասնա Մհերին, -

Մհեր Սասնա թագավոր եր, - ասաց.

«Կան, կլիս իմ խեղ մեկ ենիս»...
Կնիկն ասաց. – Մըհեր,

Տնու վոր երթաս, քողուն խառնվիս՝

Չոր քնտուն տարի իմ տուն չես իկն»։²⁰²

Ա հատորի XVI պատումի մեջ կարդում ենք.

«Մեր եթն ուր ծըծերու առեչ,

Տնվիք ըզծիծ չալընեց.

Լաճ ըսեց. – Ան խայ անորա [Անօրեն, անհավատ հայ է],

տոն քնորտ իս,

Անորա, քնորտ մե-մեկու ել չալընի»։²⁰³

Առաջին հատորի XXIV պատումի մեջ Մարա Մելիքի զինվորները

քողեր են. «քողեր գնացին տեսան, Վոր վանքի տոտ չեն բանա», քողերը

խաբեությանը մտան, «վանք թախեցին» և այլն։²⁰⁴ Բնորոշ է նաև այն, որ

երբ Սասունից սպառնալիք են ուղարկում Մըսր, ապա սպառնալիքը քողե-

րեն են ուղարկում։²⁰⁵

Պատումների մեջ պահպանվել են Մարա Մելիքի հոր՝ Էյուրի սեռական

անզորության մասին ոչ միայն ակնարկումներ, այլև մանրամասնություններ։

Ինչպես ասացինք, Սալահեդդինի հայրը սիրային անհաջող արկածի

հետևանքով էր հեռացել Դվինից ու գնացել Իրաք։ Ներկայիս արաբագետ-

ներից ոմանք, անքննադատաբար ընկալելով մահմեդական հին պատմա-

գիրների հաղորդումները, Սալահեդդինին համարում են իրաքցի։

Բայց այդպես չեն վարվում ոչ Ֆիլիպ Հիթթին, ոչ էլ Ավգուստ Մյուլլե-

րը։ Սալահեդդինը ծնվել է Դվինում (կամ նրա մոտակա քրդական գյուղում),

և նրա մանկությունը, համենայն դեպս, մինչև 9 տարեկան հասակը, անցել

է Դվինում։ Դվինի բերդապահ էմիրը Յուսուֆ-Սալահեդդինի հորը՝ Էյու-

րին, բռնում է իր կնոջ հետ։ Ըստ քրդական «թասիբի» և «բենամուսության»

սովորության, որը դեռևս XX դարի սկզբին չէր վերացել Վասպուրականի

հարավային մասի քրդերի մեջ, նա պետք է սպաներ Էյուրին, այդ սպանու-

թյան որևէ անատարկելի ապացույց բերեր դներ «մեյդան», ապա սպաներ

իր անհավատարիմ կնոջը, իսկ վերջում հանդիսավոր իրադրության մեջ,

ինքնասպանություն գործեր։ Այդպես պետք է վարվեր նա, եթե իրոք ճշմա-

րիտ ազնվական քուրդ լիներ։ Սակայն բերդապահ էմիրը որոշում է մեծ աղ-

202 Սասնա Շոեր, հ. Ա, էջ 252:

203 Նույն տեղում, էջ 759-760:

204 Սասնա Շոեր, հ. Ա, էջ 1049-1050:

205 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 676:

մուկ չբարձրացնել և ճիշտ է համարում տեղնուտեղը ներքինացնել Էյուրին
ու բաց թողնել։ Այդ ներքինացումը խիստ բացասաբար է անդրադառնում
Էյուրի տրամադրության ու բնավորության վրա։ Շուտով զաղտնիքը բաց-
վում է, և մյուս բերդապահներն սկսում են ծաղրել ներքինացված ընկերոջը։
Այստեղ է, որ Էյուրը հարկադրված է լինում իր Շիրքուի եղբոր հետ թողնել
Դվինը և գնալ Իրաք։ Վարդան պատմագրին հայտնի է այս իրողությունը,
բայց նա՝ որպես բարեպաշտ ժուժկալ հոգևորական, առանց մանրամաս-
նությունների մեջ մտնելու, բավարարվում է Սալահեդդինի հոր՝ Էյուրի մա-
սին ասելով՝ «առն *յասուպեղոյ* Դնացոյ»։²⁰⁶

Բայց աշխարհիկ վեպ հորինողը պարտադրված չէ հոգևորական
պատմագրի բարեպաշտություն և փափկանկատություն հանդես բերելու.
նա ուղղակի ասում է.

«Միեր թագավորին երկու կնիկ կըրեր [կար].

Շատ ռահմով [խղճով] ու գոռա թագավոր եր:

Մե ժամանակ մնաց, գնաց ջոջ կնկա մոտ.

Մտավ սենյակը իշկաց [նայեց], տեսավ՝

Մե մարդ մտել է կնկա ծոցին:

Ասաց. «Յես Միեր թագավորն եմ,

Ագան [եթե որ] մեկ թափնով զարնեմ, քառսուն գանգ երթա գետին,

Առավտուն ելնան, լսան, լավ, չեն ասե՝

Կնկան վերան ինչ կեղծ տեսավ,

Որ մե թափով զարկեց, քառսուն գանգ գնաց գետին»:

Ենտուց հետո հանեց ուրան [իր] պալտոն, ձգեց վրեներ,

Ասաց, քի. «Բն՝ ի, կնիկ քի անգար ասլզադա լինի,

[Գուցե, եթե որ կնիկս ազնվազարմ լինի]

Ելի իսա գործ չի գործածի»:

Ետի թողեց, դարձավ:

Կնիկն ակխավ [զարթնեց], են [նրան] հանեց վեր,

Քի. – Յն վեր, յա կտուրն է մեր վրեներ փլել,

Յա պառը, չենք կանա տիրար գա [շարժվել]:

Ըտտուց հետո ասաց,

Քի. – Ել թորա կ'անեմ առաջի աստըծուն,

Ել եսա բան չեմ գործածե քո խեղ:

Հետո որ թողեց գնաց,

206 Հաաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 131:

Թագավորն եկավ, ուրան տեղ հանդարտ նստավ:
 Կնկա որ ժամանակը լրացավ, պառկավ,
 Բերեց մե խատ տղա...
 Ասաց. – Վոր ինձի կը խարցնեք,
 Իմ տղի անուն Շուն Մելիք տի դնեմ»:²⁰⁷
 Այս միևնույն պատումի մեջ Դավթի մայրը Մելիքի մասին ասում է.
 «– Յես գինամ՝ են բիճ իմ տղան կը սպաննե»:²⁰⁸
 Նման նկարագրություն մենք գտնում ենք նաև երկրորդ հատորի XIV
 պատումի մեջ.
 «Մարա Մհեր թաքսավեր
 Շատ զոռբա թաքսավեր կ'ըլնի,
 Ըտոր երկու կնիկ կ'ըլնի:
 Որերեն մեկ որ կ'երթա տենա՝
 Պատի կնկան մոտ մե մարդ մ'է քընե:
 Կ'ասի. «Հայ-հայ, յես Մհեր թաքսավեր ըլնեմ, ցամախ մասնաւոր մ'Ս
 Իմ կնիկ եսա բանի տերն ըլնի:
 Հակմր [երես որ] մկա [հիմա] մե թափիկ զարկեմ,
 Երկուսն էլ քնռասուն գնա կ'երթան գետնի տակ,
 Եսիկ իմ անվան լավ չի.
 Վաքիլ-վազիր կ'ասեն թե՝ Պատի կնիկ ինչիս ելավ,
 Չըլնի մե բան տեսավ, Պատի կնկան զայ արավ [ռչնացրեց],
 Քուրքը հանավ, թալավ վրեներ, ընցավ, գնաց:
 Մնաց. կնիկ ոյանմիշ ելավ [զարթնեց].
 Ոյանմիշ ելավ, տեսավ, որ իրար չեն գալի [չեն շարժվում],
 Ասավ. «Վայ, տանիսն ա փլե, թե ինչ ա ելե».
 Եդա կնիկ մարդ իրար տվեց [սիրեկանին շարժեց, արթնացրեց],
 Գլոխ հանեց տեղից, տեսավ թաքսավերի քուրք:
 Ասավ. – Քո տունը չավրի,
 Ել մեզի պրծում չկա:
 Ասավ. – Չէ, ել մի վախի,
 Վոր զայ ըներ մեզի, մե թափուկ կը զարկեր.
 Համա զայ ըներու չեղեր:
 Կինը փոշմնեց, թողկեց, եկավ,

207 Սասնա ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 355-356:

208 Նույն տեղում, էջ 363:

Թե՝ «Ել եսնց բան չեմ բռնե»:
 Միրողն էլ փախավ, գնաց:
 Կնիկը երեխով մնաց...
 Ժողովրդական վաքիլ-վազիր, թե. – Թաքսավերն ապրած կենա,
 Բե, տենանք՝ տղայի անուն ինչ պտի դնենք:
 Ասավ. – Շուն Մելիք:
 – Թաքսավերն ապրած կենա, –
 Ասին, – Շուն Մելիք անուն կ'ըլնի:
 – Վազիր-վաքիլ, իմ տղեն չէ: Անունն են ա:
 Չունքի թաքսավեր խորխուրդ գիտեր.
 Վաքիլ-վազիր չեր գիտելին»:²⁰⁹
 Շատախցի Մկրտիչ Հարությունյանի պատումի մեջ, որ 900-ական
 թվականներին գրի է առել բանահավաք Սարգիս Հայկունին, կարդում ենք.
 «Մհեր Սասուն կը նստեր թագավոր.
 Մըսրա Մելիք Մըսրը կը նստեր թագավոր:
 Մըսրա Մելիքի կնիկ ճիժ չուներ.
 Մըսրա Մելիքի կնիկ իրան մեջ կը մտածի,
 Մելիքից իրավունք կ'առնի, կ'ըսի.
 – Ձի ճիժ չունեմ, վոր Մըսրը թագավոր ըլնը.
 Մերմս փոխեմ՝ տղե՛մընը,
 Ըլնը Մըսրա Մելիք,
 Մըսրա թագավորություն կանգնի:
 Մըսրա Մելիքի կնիկ կ'ելնի, ի՞նչ կ'ասի. –
 Ուր գողիկ, լաչիկ, կ'ողորկի
 Մհեր թագավորի խամար»:²¹⁰
 Շատ այլ պատումների մեջ այս իրողությունը, որ շատ մոտ է պատմա-
 կան ճշմարտությանը, հեքիաթային երանգ է ստացել: Տեղ-տեղ Մարա Մե-
 լիքն ինքն է Մհերին հրավիրում իր կնոջ անկողինը, որպեսզի զորեղ սե-
 րունդ ունենա, տեղ-տեղ էլ Մարա Մելիքը մեռել է, և նրա կինն է Մհերին
 Սասունից կանչում, որ Մարա թագավորությունը ժառանգող հարմար սե-
 րունդ ունենա մի հզոր հորից:
 Հայոցձորեցի Թառո Կազարյանի պատումի մեջ, որ գրի է առել ան-
 հայտ ոմն, կարդում ենք.

209 Նույն տեղում, էջ 323-324:

210 Սասնա ծռեր, հ. Ա, էջ 654:

«Ժամանակ անցիր եր,
Մարա թագավորուն տղա ծնած չեր.

Որոխկեց Սասնա քաղաք,

Կտրիճ Մհերն կանչեց ուր մաջլիս, ասաց.

– Մհեր, գիտես, քե ինչ ապով [համար, պատճառով] եմ կանչե:

– Չե՛, ասաց, թագավոր ապրած կենա, չեմ գիտե:

Թագավորն ասաց. – Իմ յաշն ընցեր ի,

Չում ետոր Աստված ձիկ զավակ չտվե.

Յես ջըհեղ կնիկ մ'ունիմ,

Տո՛ւ ես գիշեր պիտի երթաս իմ կոճվենք,

Վոր ձիկ տղե մ'ելնի,

Իմ թագավորութեն պահի,

Իմ դո՛ւ շմանքտիկաց դեմ կայնի»:²¹¹

«Յեկի իրիկուն ելավ, – կարդում ենք երկրորդ հատորի XVI պատումի մեջ, – Մելիքն ասաց Մհերին.

– Եսա կիշեր յես իմ յաթախ քե իքրամ կ'անեմ [անկողինս քեզ կիրամ-ցնեմ]. կնն, պառկի մոտ իմ կնիկ:

Չո՛ւնքի [որովհետև] ինոր միտքն էր, որ ճո՛չ Մհերի սերմն ուր ցեղին ընցուցի, են կերպով ինոր զորութեն պայսի:

Մհերն ընդունեց ինոր խոսք. են կիշեր ինոր յաթաղ [նրա անկողին] կննց. քառսուն որ եսպես արաց: Ենդո՛ւց յետ ուր մարդեկով մեյտեղ ինկավ ճանապիս, նորեն Սասուն դնոցավ»:²¹²

Պատումներից մեկի մեջ կարդում ենք.

«Շատ սիրով ընդունեց Մհերին՝

Պաղվեց, կերցուց, խըմցուց, միտկ երեց.

«Իդոր ջընսեն որ մըր ազկի մեջ չընգնի,

Եդոնք գ'ելնին, իմ ազկի քոք կը կըդրին»:

Մըսրա Մելիք ուր կնկան ըսեց.

«Եդ խոնախ որ եզեր ւն,

Յոթն որ քըզի բըղի խոնախ եղնի,

Յոթն որ քու ոթախ բըղի պառկի:

Մհեր ճամպեց կնկա մող, պառկավ»:²¹³

211 Նույն տեղում, էջ 1039:

212 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 440:

213 Սասնա Ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 269:

Մի ուրիշ պատումի մեջ Մարա Մելիքը նույնպես սիրով ու պատվով է ընդունում Մհերին.

«Ետտեղ կերան-խըմեցին չուր [մինչև] հիրիկուն:

Ասաց. – Կընն՝ իմ կընգան նըվին [առագաստը]:

Ելավ ու կըննց: Կըննց Մըսրամելքի կընգն նըվին. կընիկն ել եղավ տըղով»:²¹⁴

Բացառությամբ միայն երեք պատումի, Մարա Մելիքը բոլոր պատում-ների մեջ ապօրինի ծնունդ է:

Մարա Մելիքի հոր սեռական անգորությունը վկայող այս ակնարկում-ները, ինչպես տեսնում ենք, հետագայում միաձուլվել են այլ մանրամաս-նությունների հետ, որոնք սերտաճել են ինչպես հայազգի վեպիների տի-րապետության հետ Եգիպտոսում, այնպես էլ այնտեղ հայկական գորքի ու նրա գորապետների գործունեության հետ, որոնք առավելապես սասունցի-ներ են եղել՝ Պահլավունիների գլխավորությամբ:

Վեպի մեջ պահպանվել են նաև Շահ-ի-Արմենների երկրի ու նրա-նից վասալական կախման մեջ գտնվող Սասունի վրա Մարա Մելիքի՝ 1185 թվականի արշավանքի անդրադարձումներ, երբ մեռնում էր Սուքման II-ը, և նրա վարձկան գորավար Բեկթեմուրը հարկադրական խոստում էր անում Մարա Մելիքին: Ինչպես արդեն ասացինք, Շահ-ի-Արմենների երկրի հա-մար սպառնագին այդ օրերին Գանձակի փեղիկներն իրենց աղջկան կնու-թյան են տալիս Բեկթեմուրին և խնամիական կապերով ամրապնդում Բեկ-թեմուրի դիրքը, և վերջինս հետ է կանգնում մինչև այդ Մարա Մելիք Սալա-հեդդինին տված խոստումից:

Սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանի պատումի մեջ, որ 1946 թվակա-նին գրի է առել Վարդ Բդոյանը, Համդա-Մհերը Քեռի Թորոսի քրիստո-նյա քրոջ հետ ամուսնացած կռապաշտ թագավոր է, որի երկիրը շատ ավե-լի մոտ է Սասունին, քան Մարը: Սխալ գործած չենք լինի, եթե ասենք, որ դա Խլաթն է: Սակայն լսենք պատումը.

«Համդա-Մհերն ու Մարա Մելիք

Իրար խեղ կապացկություն են երած՝

Թե որ Մարա Մելիք վերջանա,

Ընդրա ունեցած խասնի Համդա-Մհերին,

Թե որ Համդա-Մհեր վերջանա,

Ընդրա ունեցած խասնի Մարա Մելիքին:

214 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 539:

Մարա Մելիք իմացեր ա,
Որ Համդա-Մհեր վերչացեր ա.

Ելավ, եկավ Համդա-Մհերի երկիր:

Պահման բերեց, դրեց քաղքի սինոթի առեչ,

Թե. – Ետ մարթն վերչացե,

Ընդրա ունեցած ընծի կը խասնի:

Ընդոք ել պատասխանին,

Թե. – Համդա-Մհերին ըստեղ բան չկա:

Համդա-Մհերն որ չորցեր ա,

Ըդրա կնիկն ու ճծեր գացած Սասուն:

Մարա Մելիք ըտուց կ'ելնի,

Կ'իգա Սասուն, Քեռի Թորոսի տուն:

Բարեւ կ'իտա, բարեւ կ'առնի,

Խանա պահման, կը դնա Քեռի Թորոսի առեչ...

Թորոսը՝

Կ'ըսա. – Մարա Մելիք,

Իմ քուր Համդա-Մհերի տնեն

Բնչ ա բերած ա, որ յես տամ քեզի:

Կ'ըսա. – Ինչ որ կա, են տուր...

Մացեր ա ետ երկու յեթում տղեն՝ Դավիթ ու Վեգոն:

Կ'ըսա. – Ետ ա մացե, ետ տուր:

Կ'ըսա. – Թե կը տանես, տա՛ր»:²¹⁵

Ուրեմն Մարա Մելիքը «պահմանը», այսինքն՝ Շահ-ի-Արմենների ճարպիկ «մամլուկի» խոստումը ձեռքին եկել է Խլաթ, բայց մերժում է ստացել արդեն հզոր Փեհլիների փեսա դարձած իշխանի կողմից: Նա այդ մերժումից հետո է միայն արշավել Սասունի վրա: Նման տարբերակը համընկնում է պատմական իրողությանը:

«Ոսիաթի» [կտակի, խոստման] հիշատակությունը տարբեր ձևերով գտնում ենք պատումների մեծ մասի մեջ: Ճիշտ է, «ոսիաթը» վերաբերում է որբ մնացած երեխային խնամելուն, բայց կան նաև Բեկթեմուրի խոստումը հիշեցնող այսպիսի տողեր.

«Սասնա Մհեր մահացավ:

Մհեր որ ընգնավ, մահացավ,

215 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 659:

Ջուաբ տվիցին Մըսրա Մելքին,

Թի. «Սասնա Մհեր մահացեր ի,

Սասուն անտեր մնացեր ի»:

Մըսրա Մելիք ասքնի առավ,

Գընաց, գարկից Սասնա վերեն...»:²¹⁶

Կամ թե.

«Ես ժամանակ Մարա մեջ Մելիք ըմ կընե, վոր ենդեղ թակավոր եր: Ես մարդ յեմ իմցավ, վոր Սասունի թակավոր Սանասար մեռել ի ու մենակ պստիկ տղե մ'մնացեր ի տան մեջ, շուտ ըմ ելնվ քնշեց ուր ասքնի ու եկավ Խանդութ խաթունի վերեն»:²¹⁷

Էպոսի մեջ անգամ պահպանվել է Սալահեդդինի բնավորության հատկանշական գծերից մեկը՝ նրա անշահասիրությունը, այն, որ նա շատ ուրիշ զորապետների, ասենք, հենց իր Շիրքուի հորեղբոր նման, չէր ձգտում անձնական հարստության: Նա ամբողջ թալանը թողնում էր իր զորքին. Եգիպտոսում Շիրքուի կուտակած ամբողջ հարստությունը նա բաժանել էր զորքին: Այդ անշահասիրության համար էին զինվորները սիրում նրան: Նա նույնիսկ, հակառակ արված նախազգուշացումներին, լրջորեն չմտածեց իր նվաճած երկրներն իր իսկ որդիներին ժառանգություն թողնելու մասին:

Այս իրողությունները պարզ ու մեկին իրենց անդրադարձումն են գտել վեպի մեջ:

«Կանչեց, քսան ձիավոր բերեց Մելիք,

Ըրըղկեց Սասուն, թե. – Գնացե՛ք, քսան բեռ փող բերեք.

Յվրեմ ղոշունի [զորքի] վրեն, խարջիս ըլլի իրանց,

Ուրեն, խմեն, ըլլենք թալենք քաղաքի վրեն»:²¹⁸

Ինչպես գիտենք, Մարա Մելիք Յուսուֆ-Սալահեդդինի հայրն ու հորեղբայրը ժառանգության էին մտել Դամասկոսի ու Հալեբի տեր Չանգյան Նուրեդդինի մոտ: Սալահեդդինը մեծացել էր Նուրեդդինի պալատում: Մարա Մելիք դառնալուց հետո՝ 1174 թվականին Մարից գալիս է Սիրիա և գրավում է արդեն մեռած Նուրեդդինի հողերը՝ զրկելով նրա ժառանգներին: Նուրեդդինի ժառանգներից մեկն ապաստանում է Մոսուլ քաղաքում և, Փեհլիների պյուզերենությունն ընդունելով, երկարատև ու համառ դիմադրություն է ցույց տալիս Սալահեդդինին: Մոսուլի պաշարումը տարիներ է տևում և կրկնվում է մի քանի անգամ, բայց Սալահեդդինի համար ապարդյուն: Հա-

216 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 789:

217 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 407:

218 Նույն տեղում, էջ 267:

մառ կոիվներից մեկի ժամանակավոր դադարի պահին, ինչպես ասացինք վերևում, Մոսուլի տիրոջ մայրը՝ Դամասկոսի նախկին տիրուհին, որի պալատում էր առաջ քաշվել ու մարդ դարձել Սալահեդդինը, ազնվական կանաց մի խմբի գլուխ անցած, հետիոտն ու հերարձակ գալիս է Սալահեդդինի բանակը և ծնկաչոք աղաչում է զորքը հետ քաշել Մոսուլից և խնայել իր որդուն։ Սալահեդդինը ապերախություն է հանդես բերում ու ձեռնունայն հետ է ուղարկում ազնվական կնոջը։ Այդ մերժումից և ապերախությունից հետո ավելի եռանդուն են կովում Մոսուլի պաշտպանները, և Սալահեդդինին չի հաջողվում կովով գրավել հիշյալ քաղաքը։ Այս դեպքը շատ վատ տպավորություն է թողնում նաև Սալահեդդինի անմիջական շրջապատի վրա, որովհետև նրա շրջապատում քիչ թիվ չէին կազմում դեռ երեկ Նուրեդդինի շնորհը վայելող բարձրաստիճան անձինք։ Հետագայում, ինչպես հաղորդում են արաբ պատմագիրները, Սալահեդդինը շատ է զղջում իր կատարած այդ քայլի համար, բայց արդեն ուշ էր. սև բիծ էր գոյացել ինչպես նրա անվան ու հեղինակության վրա, այնպես էլ անձամբ նրա հիշողության մեջ։

Ամենայն հավանականությամբ սկզբնական պատմավեպի մեջ դիպուկ ու տեղին օգտագործված այս մանրամասնությունը պահպանվել է էպոսի գրեթե բոլոր պատումների մեջ։ Իր հերոսին Մսրա Մելիք Սալահեդդինից անհամեմատ բարձր դասելու համար պատմավեպը Մսրա Մելիքի մորն էլ է ուղղադիմաց թերել, որտեղ նա վճռական ժամին հանդես է գալիս ի պաշտպանություն իր զավակի։ Սակայն վեպի հայ հերոսը, ի հակադրություն տմարդի Սալահեդդինի, ամենևին չի մերժում Մսրա Մելիքի մոր խնդիրը և, հրաժարվելով առաջին, տեղ-տեղ անգամ երկրորդ զարկից, վեհանձնորեն ասում է. «- Մարե, էտա մեկ դառք տվիմ քո խաթըր, վուր [որ] դու ընդ պախիր իս [խնամել ես]»։

Պատումների մեջ պահպանվել են Մսրա Մելիքի մահից (1193 թ.) հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Ձենով Հոփան ելավ,
Թուրթ ճամբխից դալս [դեպի] Մհեր, եսաց. «Մհեր,
Կուրբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած
Եկած Սասնա քնդքի դալին [դատը] կ'ենին.

Իս չիմ կերի, իմ կըվաթ [ուժը] չի հաղթը.

Կ'ընիս, կու կմս, խասնիս»։²¹⁹

Մհերը հեռուներից ծպտված օգնության է հասնում հորեղբորը.

«Խրոխալեր վազից, կինաց,
Մհերի գլոխ պագնից. ...

Եսաց. - Կուրբադնի թոռնիրն ին, եսաց.

Չուրս թոռ ին, չուրսն էլ նման կը տան գազան»։²²⁰

Մհերը կոտորում է երկուսին։ (Արդեն միայն երկուսն էին եկել-տիրացել Խլաթին - Հ.Թ.)։

«Եսաց. - Խրոխալեր, ել կան, թի չկան:

Եսաց. - Երկու տղայ ել կա,

Քանց ես երկուս՝ շատ գազան ին երկուս,

Եսունք չոկ կնկնից ին, երկուս՝ չոկ:

Մսրա քնդաթ դեն ին են երկուս.

Եսունք դես ին զավթած,

Եսունք դեն ին զավթած»։²²¹

Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իրական պատմությունն է, Ադիլի երկու որդիներն իշխում էին հարավում՝ Եգիպտոսում և Հեջազ Եմենում, մյուս երկու որդիներն իշխում էին Սիրիայում և Արևմտյան Միջագետքում։

Ահա մի ուրիշ, թեև նորից փոփոխված ու աղճատված, բայց և այնպես էլ ավելի սպառնիչ վկայություն.

«Մսրա Մելիքի մահից հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Ձենով Հոփան ելավ,
Թուրթ ճամբխից դալս [դեպի] Մհեր, եսաց. «Մհեր,
Կուրբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած
Եկած Սասնա քնդքի դալին [դատը] կ'ենին.

Իս չիմ կերի, իմ կըվաթ [ուժը] չի հաղթը.

Կ'ընիս, կու կմս, խասնիս»։²¹⁹

Մհերը հեռուներից ծպտված օգնության է հասնում հորեղբորը.

«Խրոխալեր վազից, կինաց,
Մհերի գլոխ պագնից. ...

Եսաց. - Կուրբադնի թոռնիրն ին, եսաց.

Չուրս թոռ ին, չուրսն էլ նման կը տան գազան»։²²⁰

Մհերը կոտորում է երկուսին։ (Արդեն միայն երկուսն էին եկել-տիրացել Խլաթին - Հ.Թ.)։

«Եսաց. - Խրոխալեր, ել կան, թի չկան:

Եսաց. - Երկու տղայ ել կա,

Քանց ես երկուս՝ շատ գազան ին երկուս,

Եսունք չոկ կնկնից ին, երկուս՝ չոկ:

Մսրա քնդաթ դեն ին են երկուս.

Եսունք դես ին զավթած,

Եսունք դեն ին զավթած»։²²¹

Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իրական պատմությունն է, Ադիլի երկու որդիներն իշխում էին հարավում՝ Եգիպտոսում և Հեջազ Եմենում, մյուս երկու որդիներն իշխում էին Սիրիայում և Արևմտյան Միջագետքում։

Ահա մի ուրիշ, թեև նորից փոփոխված ու աղճատված, բայց և այնպես էլ ավելի սպառնիչ վկայություն.

«Մսրա Մելիքի մահից հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Ձենով Հոփան ելավ,
Թուրթ ճամբխից դալս [դեպի] Մհեր, եսաց. «Մհեր,
Կուրբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած
Եկած Սասնա քնդքի դալին [դատը] կ'ենին.

Իս չիմ կերի, իմ կըվաթ [ուժը] չի հաղթը.

Կ'ընիս, կու կմս, խասնիս»։²¹⁹

Մհերը հեռուներից ծպտված օգնության է հասնում հորեղբորը.

«Խրոխալեր վազից, կինաց,
Մհերի գլոխ պագնից. ...

Եսաց. - Կուրբադնի թոռնիրն ին, եսաց.

Չուրս թոռ ին, չուրսն էլ նման կը տան գազան»։²²⁰

Մհերը կոտորում է երկուսին։ (Արդեն միայն երկուսն էին եկել-տիրացել Խլաթին - Հ.Թ.)։

«Եսաց. - Խրոխալեր, ել կան, թի չկան:

Եսաց. - Երկու տղայ ել կա,

Քանց ես երկուս՝ շատ գազան ին երկուս,

Եսունք չոկ կնկնից ին, երկուս՝ չոկ:

Մսրա քնդաթ դեն ին են երկուս.

Եսունք դես ին զավթած,

Եսունք դեն ին զավթած»։²²¹

Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իրական պատմությունն է, Ադիլի երկու որդիներն իշխում էին հարավում՝ Եգիպտոսում և Հեջազ Եմենում, մյուս երկու որդիներն իշխում էին Սիրիայում և Արևմտյան Միջագետքում։

Ահա մի ուրիշ, թեև նորից փոփոխված ու աղճատված, բայց և այնպես էլ ավելի սպառնիչ վկայություն.

«Մսրա Մելիքի մահից հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Ձենով Հոփան ելավ,
Թուրթ ճամբխից դալս [դեպի] Մհեր, եսաց. «Մհեր,
Կուրբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած
Եկած Սասնա քնդքի դալին [դատը] կ'ենին.

Իս չիմ կերի, իմ կըվաթ [ուժը] չի հաղթը.

Կ'ընիս, կու կմս, խասնիս»։²¹⁹

Մհերը հեռուներից ծպտված օգնության է հասնում հորեղբորը.

«Խրոխալեր վազից, կինաց,
Մհերի գլոխ պագնից. ...

Եսաց. - Կուրբադնի թոռնիրն ին, եսաց.

Չուրս թոռ ին, չուրսն էլ նման կը տան գազան»։²²⁰

Մհերը կոտորում է երկուսին։ (Արդեն միայն երկուսն էին եկել-տիրացել Խլաթին - Հ.Թ.)։

«Եսաց. - Խրոխալեր, ել կան, թի չկան:

Եսաց. - Երկու տղայ ել կա,

Քանց ես երկուս՝ շատ գազան ին երկուս,

Եսունք չոկ կնկնից ին, երկուս՝ չոկ:

Մսրա քնդաթ դեն ին են երկուս.

Եսունք դես ին զավթած,

Եսունք դեն ին զավթած»։²²¹

Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իրական պատմությունն է, Ադիլի երկու որդիներն իշխում էին հարավում՝ Եգիպտոսում և Հեջազ Եմենում, մյուս երկու որդիներն իշխում էին Սիրիայում և Արևմտյան Միջագետքում։

Ահա մի ուրիշ, թեև նորից փոփոխված ու աղճատված, բայց և այնպես էլ ավելի սպառնիչ վկայություն.

«Մսրա Մելիքի մահից հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Ձենով Հոփան ելավ,
Թուրթ ճամբխից դալս [դեպի] Մհեր, եսաց. «Մհեր,
Կուրբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած
Եկած Սասնա քնդքի դալին [դատը] կ'ենին.

Իս չիմ կերի, իմ կըվաթ [ուժը] չի հաղթը.

Կ'ընիս, կու կմս, խասնիս»։²¹⁹

Մհերը հեռուներից ծպտված օգնության է հասնում հորեղբորը.

«Խրոխալեր վազից, կինաց,
Մհերի գլոխ պագնից. ...

Եսաց. - Կուրբադնի թոռնիրն ին, եսաց.

Չուրս թոռ ին, չուրսն էլ նման կը տան գազան»։²²⁰

Մհերը կոտորում է երկուսին։ (Արդեն միայն երկուսն էին եկել-տիրացել Խլաթին - Հ.Թ.)։

«Եսաց. - Խրոխալեր, ել կան, թի չկան:

Եսաց. - Երկու տղայ ել կա,

Քանց ես երկուս՝ շատ գազան ին երկուս,

Եսունք չոկ կնկնից ին, երկուս՝ չոկ:

Մսրա քնդաթ դեն ին են երկուս.

Եսունք դես ին զավթած,

Եսունք դեն ին զավթած»։²²¹

Ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իրական պատմությունն է, Ադիլի երկու որդիներն իշխում էին հարավում՝ Եգիպտոսում և Հեջազ Եմենում, մյուս երկու որդիներն իշխում էին Սիրիայում և Արևմտյան Միջագետքում։

Ահա մի ուրիշ, թեև նորից փոփոխված ու աղճատված, բայց և այնպես էլ ավելի սպառնիչ վկայություն.

«Մսրա Մելիքի մահից հետո նրա ժառանգների անհող մնալու վիճակի անդրադարձումներ։ Մսրա Մելիք Սալահեդդինի մահից (1193 թ.) գրեթե անմիջապես հետո (1196 թ.) նրա ընդարձակ թագավորությանը (բացի Հալեք քաղաքից) տեղ դարձավ նրա եղբայրը՝ Ադիլը, որը խլեց Սալահեդդինի որդիների հողերը։ Ադիլն իր հողերը բաժանեց իր չորս զավակների վրա։ Ավհադն ու Աշրաֆը, ստանալով Հյուսիսային Սիրիան և Արևմտյան Միջագետքը, 1207 թվականին գրավեցին նաև Խլաթը։

Ավհադ-Աշրաֆի բանակում էին նաև Դիարբեքի Օրթոկյանները, որոնք Քուրբադին իշխանի գլխավորությամբ որպես առաջապահ զորք մասնակցել և մասնակցում էին հարավից Սասունի վրա կատարվող ամեն մի արշավանքի։ Դրա համար էլ սասունցին կարող էր նրանց նշանավոր Քուրբադինին (Կուրբադինին) առաջին դեմքը համարել արշավողների մեջ, մանավանդ որ Մսրամելիքն արդեն մեռել էր։

Երկրորդ, 1207 թվականի ավելի մեծ արշավանքի մասին պատումների մեջ կարդում ենք.

«Մարա Մելիքի վնագիր Կուզ Պայտին Մելիքի մախից վերջ ինոր կնկան ել տիրեց, արաց ուր յար: Ինոր խամար թագավորութեն ինչ կանդար [որքան] վոր կնկան ձեռն եր, աման զըմեն [բայց ամբողջ] իշխանութեն են Կուզ Պայտինի ձեռն եր, ինչ վոր ուզեր՝ են կ'աներ»:²²²

Իսլամի պատմագիրներն աստվածացրել են Երուսաղեմը մահմեդականության համար վերագրված (1187 թ.) Սալահեդդինին և սքողել են նրա բոլոր սայթաքումները: Նա չկարողացավ տևական և կայուն թագավորություն ստեղծել: Ղուզի թուրք և բուրդ նմադ զինվորներն այնպես հիմնովին ավերեցին հարուստ ու բարգավաճ Եգիպտոսը, որ Եգիպտոսը 70 տարով կորցրեց իր առաջատարությունը Մերձավոր Արևելքում: Նրա հաջողության հիմնական գաղտնիքը զորքի սիրելին դառնալն էր, իսկ այդ բանին նա հասնում էր թալանի լիակատար ազատություն տալով իր խուժադուժ զորքին:

XVIII և XIX դարերի Եվրոպան, հանձին Լեսսինգի ու Վալտեր Սկոտի, հալած յուրի տեղ ընդունեց Սալահեդդինի մասին իսլամի աչառու պատմագիրների հերյուրած սուտը և փորձեց Սալահեդդինին օժտել իմաստուն փիլիսոփայի և իդեալական ասպետի բոլոր առաքինություններով: Հայ ժողովուրդն ու պատմագրությունը չէին կարող դրական կարծիք ունենալ սանձազերծ զորքի ղեկավար Սալահեդդինի մասին, որովհետև Լեսսինգի և Վալտեր Սկոտի նման հարյուրավոր տարիներով և հազարավոր կիլոմետրերով հեռու չէին Սալահեդդինից, այլ նրա խուժադուժ զորքի առաջին զոհերն էին:

«Յառաջ, – ասում է նրա մասին բարեպաշտ Վարդան պատմիչը, – Յուսուֆ էր անուն նորա, որդի Էուրին, առն տառապելոյ Դնացոյ, որ և ՚ի մեծանալն կոչեցաւ Սալահադին»,²²³ իսկ աշխարհն ավելի շատ տեսած և ավելի լավ ճանաչող Կիրակոս Գանձակեցին գրում է. «Ի ող թուականին յարեալ բոնակալ ոմն՝ Քուրդ ազգավ, Սալահատին անուն, ՚ի Մասեաց ոտնէ»:²²⁴

Սկզբնական պատմավեպի հեղինակը, ինչպես ցույց են տալիս պատումները, ընդհակառակը, ոչ մի փափկանկատություն հանդես չի բերել: Սալահեդդինը նրա համար հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամին է, դրա համար էլ նա նախ ծաղրել է նրա ազգությունը, ծնունդը, ապա ցույց է տվել ինչպես նրա վախկոտությունն ու նենգությունը, այնպես էլ նրա չարությունն ու գազանությունը:

222 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 442:

223 Հաաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 131:

224 Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 143:

Պատումների կրտսեր Մարա Մելիքը դվինցի Յուսուֆ Բին Էլուր Սալահեդդինն է:

Գ. ԿՈՒՋԲԱԴԻՆ

Մարամելիքից հետո հայ ժողովրդի երկրորդ ռևերիմ թշնամին էպոսի մեջ Կուզբադինն է: Էպոսի պատումների մեջ այդ թշնամու անունը տրված է ամենից ավելի Կուզբադին և Կոզբադին ձևերով, սակայն առանձին պատումների մեջ պատահում են նաև Կոզբահդին, Կոզբադին, Կուզբայդին, Կուզբարդին, Կուզբահդին, Կուզիկ Բադիկը, Ուզբադին, Կուզբախտին, Կուզ Պատին, ինչպես նաև Խոզբադին, Ղոզբեկ, Խորբախտին, Խոզբադի և Խուրաշի ձևերով:

Կուզբադինի կերպարի մեջ բնորոշը այն չէ, որ նա խարդախ է ու դաժան, մեծաբերան ու երկչոտ, այլանդակ աժդահա, բայց զուրկ հսկային վայել ուժից: Հերոսի թշնամին այդպես էլ պետք է լինի էպոսի մեջ: Պատմականությունը որոշելու տեսակետից բնորոշն այստեղ ուրիշ է: Դավիթն ու Մհերը թշնամիներ ունեն նաև իրենց տոհմի մեջ (մեկ՝ քեռին ու քեռու տղաները, մեկ էլ՝ հորեղբայրն ու նրա տղաները), բայց նրանք անձնական թշնամիներ են, իսկ Կուզբադինն անձնական թշնամի չէ, նա հայ ժողովրդի թշնամին է, և Դավիթը նրա դեմ կռվում է հայ ժողովրդին պաշտպանելու համար:

Այնուհետև Կուզբադինը թշնամի զորքով գալիս է օտար հողից («ուր թարաֆից»), բայց նրա հողն այնքան հեռու չէ, ինչպես Մարը: Մարա Մելիքը նախքան Սասունի վրա արշավելը Կուզբադինին է ուղարկում յոթ տարվա հարկը հավաքելու և վերաշինած վանքն ավերելու համար: Եվ ինքը Սասունի վրա արշավում է միայն այն բանից հետո, երբ ապարդյուն են անցնում Կուզբադինի ջանքերը, երբ սասունցիները պարտության են մատնում Կուզբադինին ու ջարդում նրա զորքը:

Կուզբադինի պատմականությունը որոշելու տեսակետից այնուհետև բնորոշ է այն, որ պատումների մեծ մասի մեջ Կուզբադինի «թարաֆը» ոչ միայն ավելի մոտ է Սասունին, այլև այն, որ Կուզբադինը ենթակա է Մարա Մելիքին: Բայց երբ խոսքը վերաբերում է հատկապես Սասունն ավերելուն, ապա Կուզբադինը հանդես չի գալիս որպես սոսկ Մարա Մելիքի վասալ, որը պատրաստ է կատարելու սյուզերենի կամքը, այլև խորապես

225 Կուզբադին, էջ 482:

շահագրգռված է Մասունի վրա արշավանք կատարելու՝ պուգերենի առաջադրանքով: Ավելին, ինքն է նախաձեռնող ու նախահարձակ լինում:

«Մեկն են մարդիրաց գլխավորն,

Եղա Կուզ Բատին ի, կըսը.

– Մելըք, դու ընդ իրավունք տաս՝

Իս կ'երթամ Մասուն, կը բիրիմ թալան»:²²⁵

Կամ թե՛

«[Մարա] Թագավոր ասաց.

– Ելնեմ, խեծել առնեմ, երթամ,

Վանքն Մարութին թալնեմ, բիրեմ [բերեմ],

Վոր ինոնց թագավորութեն չբազմանա:

Են կողմը մեկ քնորդու ել մ'կընր [քրդական մի ցեղ կար],

Ասաց թագավորուն.

– Թագավոր ապրած կենա,

Տոյ խեծել մի՛ անե [դու հեծելագոր մի՛ հավաքիր],

Մենք վեց խազար խոգի յենք.

Կ'երթանք ենտեղ զոզան [ամառանոց], վրան կը զարնենք,

Են վանք կը թալնենք, կը բիրենք»:²²⁶



Երբ Սիրիայում հաստատված սելջուկների (1078-1117 թթ.) սուլթան Թուրուշը գրավում է Երուսաղեմը, նա քաղաքի կառավարիչ է նշանակում դուգի թուրքերի ցեղապետներից Օրթուկին: Ֆաթիմյանների ամենագոր վեզիր հայազգի Շահնշահը 1096 (ըստ ոմանց՝ 1098) թվականին ջարդում է Երուսաղեմ մտած սելջուկներին և հետ գրավում քաղաքը: Օրթուկի պարտված որդիներից մեկը կորչում է Անդրհորդանանի անապատներում, երկուսը՝ Սուրմանն ու Իլ-Գազին, չնչին ուժերով անցնում են հյուսիս և բերդեր ստանում Միջագետքում: Թուրուշի մահվանից հետո թե՛ Իլ-Գազի և թե՛ Սուրման Օրթուկյանները երկդիմի խաղ խաղալով Թուրուշի հաջորդների դինաստիական անվերջ կռիվների ժամանակ, կարողանում են 1107 թվականին ընդլայնել իրենց հողերը ու իրենց ազդեցությունը տարածել դեռ մի տասնամյակ առաջ Մրվանյան քրդերին պատկանող տարածքի (Մծբին, Ամիդ, Դիարբեքիր, Կայֆա, Մարդին, Մայաֆարկին քաղաքների) վրա՝

225 Սասնա Շուեր, հ. Ա., էջ 406:

226 Նույն տեղում, էջ 1049:

պահպանելով իրենց վասալական կախումը Սիրիայի սելջուկներից, ապա նրանց տեղը բռնած քրդական Զանգյան դինաստիայից: Երբ Սարա Մելիք Սալահեդդինը 1174 թվականին գրավում է Զանգյան Նուրեդդինի հիմնական նստավայրերը՝ Դամասկոսն ու Հալեքը, Օրթուկյան թուրքերն անմիջապես ընդունում են Սալահեդդինի գերիշխանությունը և դառնում քրդական Էյուբյան դինաստիայի վասալներ: Այս Օրթուկյանները, որոնց հայ պատմագիրներն անվանում են Արթուխյաններ կամ Արթուխիներ, իշխելով մինչ այդ Մրվանյաններին պատկանող հողերի վրա, որտեղ մեծ էր խաշնարած քրդերի տոկոսը, հենց միայն խաշնարածության զբաղմունքի բերումով, եթե չլինեին անգամ այլ շարժառիթներ, շարունակական ընդհարման մեջ էին գտնվում հարևան սասունցիների հետ, որոնց լեռնաշխարհը հիանալի ամառային արոտավայր էր Օրթուկյանների և նրանց քուրդ հպատակների հոտերի համար:

Այս հողի վրա Օրթուկյանները հարավից Խլաթի Շահ-ի-Արմենների վրա արշավող ամեն մի մեծ բանակի մեջ կազմում էին նրա առաջապահ գնդերը: Հիշյալ Օրթուկյանների մեջ, մանավանդ Խաչակրաց արշավանքների այդ դարաշրջանում, շատ էր տարածված Քուրթ-ադ-դին մականունը, որ բառացի նշանակում է «հավատի սուր»:

Խլաթի Սուրման II Երկարակյացի օրոք (1128-1185 թթ.), որին ժամանակի բոլոր քրիստոնյա պատմագիրները «քրիստոնեասեր» են անվանում և կոչում հայացրած «Միրան» (Միհրան) անունով, Մասունի հայ իշխանները, շատ նեղվելով Օրթուկյաններից, ինչպես հաղորդում է Միխայել Ասորին, կամովին իրենց հողերը հանձնում են Խլաթի Շահ-ի-Արմենին՝ նրա գերիշխանությունը գերադասելով Օրթուկյանների ասպատակություններից: «Եւ 'ի սոյն ամի (1164 – Հ.Թ.) բերդեր զոր ունէին Հայք յերկիրն Սասնոյ, նեղեալ 'ի Մուփարկնայ [Մայաֆարկինի] ամիրայէն, տուին 'ի Շահի Արմէնն յամիրայն Խլաթայ, զայն որ ունէին 'ի հին ժամանակաց»:²²⁷

«Թուրքմանքը, – շարունակում է Միխայել Ասորին, – որ խորանօք և բացօթեայք շրջին, և զձմեռնային յեղանակն գային խորանօք իրեանց 'ի կողմն հարաւոյ սակս կակղութեան օդոյն, և զամառնային ժամանակն ելանէին 'ի կողմն հիւսիսոյ վասն բարեխառն և անխորշակ օդոյն...»:²²⁸

227 Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի, էջ 476:

228 Նույն տեղում, էջ 492:

«Եւ ՚ի նոյն ամի (1185 թ. – Հ.Թ.), – գրում է Մ. Ասորին, – մեռան Նորադինն և Խուդբադինն տէրն Ամթայ և Մերտնայ, որ էին ազգականք միմեանց յԱրթուխեաց անտի. զի բազում եկեղեցիս քակեաց Նորադինն ՚ի յԱմիթ, վասն որոյ և հարաւ բարկութեամբ ՚ի Տեանէ, և էառ զիշխանութիւնն հարճորդին իր Խուդբադինն... Եւ յայսմ ժամանակի մեռաւ ամիր Միրանն տէրն Խլաթայ, որ էր այր բարեմիտ և ողորմած առ աղքատս և կարօտեալս, և բազում դիւրութիւնս առնէր եկեղեցեաց և քրիստոնէից. և յետ մահուան սորա էառ զտեղի նորա Բակտամուր (Պէք-Թիմուր) ծառայն իր»:²²⁹

1185 թվականին, ինչպես ավելի մանրամասն խոսեցինք վերևում, երբ Մարա Մելիք Սալահէդդինը շարժվում էր Խլաթի վրա, վասալ Օրթոկյանները չէին կարող Սալահէդդինի առաջապահ զորքի մեջ չլինել, ավելի շուտ՝ նրա առաջապահ գնդերը չկազմել։ Այդ ժամանակ (1185-1200 թթ.) Օրթոկյանների ղեկավարն իր նախորդի նման նորից Քուրթ-ադ-դին մականունն ուներ։²³⁰

Ինչպես գիտենք, Սալահէդդինի այդ արշավանքն անհաջող անցավ։ Նրա զորքը նահանջեց։ Այնուհետև Էյուբյանները Խլաթի վրա արշավեցին միայն 22 տարի հետո՝ 1207 թվականին, երբ Մարա Մելիք Սալահէդդինը մեռել էր (1193 թ.)։ Երկրորդ արշավանքը ղեկավարում էին Սալահէդդինի եղբոր՝ Ադիլի երկու որդիները՝ Ավհադը և Աշրաֆը։ Պարզ է, որ Սասունի արտավայրերով խիստ շահագրգռված Օրթոկյանները նորից Ավհադի ու Աշրաֆի առաջապահ զորքի մեջ կլինեին կամ, ավելի շուտ, նրա առաջապահ զորքը կկազմեին։

Ինչպես Օրթոկ կամ Օրթոկյանները մեր պատմագրության մեջ դարձել են Արթուխյաններ, նույն ձևով էլ Քուրթ կամ Քուրթ-ադ-դինը մեր էպոսի մեջ դարձել է Կոզբադին, Կուզբադին, Խուզբադին, իսկ տեղ-տեղ էլ՝ Դոզբեկ, որ նշանակում է դուզի կամ դոզի թուրքերի բեկ։ Իսկ Օրթոկյանները դուզի կամ դոզի թուրքեր էին։

229 Նույն տեղում, էջ 491։

230 Stanley Lane-Poole. The Mohammadan Dynasties. Chronological and Genealogical Tables with Historical Introductions. Frederik Ungar Publishing Co., New York, 1965, p. 168. Զ. Թուրքյանն օգտվել է առաջին անգամ XIX դարի վերջին լույս տեսած այս աշխատության ռուսերեն թարգմանությունից, որը մեզ հասանելի չէ – Զ.Մ.

Դ. «ՊՈՂՎԸՏԵ ՍՈՒՆ»

Մոկացի Թումաս Պետրոսյանի պատումի մեջ հորեղբայր Ձենով Հովանը Դավթին կովի ճամփու դնելիս փորձառու չափահաս մարդու խրատներ է տալիս պատանի հերոսին։ Ձենով Հովանը.

«Եսաց. – Դավիթ, Աստված քո բան հաջողի։

Դավիթ, եսաց, վոր կ'երթաս,

Երկրթն սուն կա ճամբխու մեջ.

Քո թուր էն Երկրթն սուն զար.

Վոր Երկրթն սուն չկտոհց,

Մ'երթար, քո բան հաջող չի»:²³¹

Այս պատվերը հորեղբայրը Դավթի ճյուղը պարունակող գրեթե բոլոր պատումների մեջ տալիս է Մարա Մելիքի վրա կովի գնացող Դավթին։ Այդ «երկրթն» կամ «պողվրտե» սունը, որ մի քանի պատումի մեջ էլ թուրքերեն անվանվում է «դիրագն դամուր» [սյունն երկաթ] գտնվում է ազնանցորդների աղբյուրի մոտ։ Հերոսը նախ խմում է այդ ջրից, հզորանում, վիթխարիությամբ և ուժով գերազանցում հորը, ապա գնում է «երկրթն սան» վրա։ Անհայտ ասացողի «Վանա գավառաբարբառով» պատումի մեջ միևնույն Ձենով Օվանը հերոսին խրատում է.

«Տուն ել կը լվացվես աղեկ մ'ու են ջրից կը խմես։

Կիդցած ելիս, վոր են կայնած տեղ

Պողպտե սուն ըմ կա,

Պետք է, վոր քնշես քո Կեծակի սուր,

Մեկ տիր [անգամ] զանիս են սուն.

Թե մեկեն կառցար կտրել են սուն,

Աղեկ ի, կնա, թե չե, յետ տառցի»:²³²

Փորձված հորեղբոր կողմից այս «թե չե, յետ տառցի» խրատը ցույց է տալիս, որ անցյալում տոհմի ներկայացուցիչները սխրագործության գնալիս անհաջողության են հանդիպել, երբ չեն կարողացել կտրել վերոհիշյալ սյունը։ Տոհմի պատմության մեջ այս «պողվրտե» կամ «երկրթն» սունը փորձաքարի նման մի բան է։ Հերոսն էլ ամեն դեպքում, երբ կտրում է այդ սյունը, ապա նրան մի պահ թվում է, թե չի կտրել, որովհետև «կտրած սուն ելի նորեն իրար վերա եկավ ու սուն չինգամ գետին»։ Դավիթ յեփ տեսավ եսա

231 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 425։

232 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 467-468։

233 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 425։

234 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 467-468։

պան, շոտ ըմ մոթավ ու պառկավ են ախարի գլոխ, քնավ: Աստծու խրամանքով՝ անկարծ մեկ թափով քնմի մ'ելավ, իզարկ էն սան ու գետին շոջեց»:²³³ Մյուս պատումների մեջ էլ զարկն այնպես ուժգին է, որ կտրված այրուն անշարժ մնում է իր տեղը, և Դավիթն ստիպված անիծում է իր ծնողներին, իր թևը, որն անմիջապես թուլանում է, սակայն հրաշքով, Աստծու օգնությամբ կտրված այրուն էլ է վայր ընկնում, թևն էլ է լավանում:

Էպոսի մեջ, իհարկե, նման երևույթի պատճառաբանությունը հերոսի զարկի ուժգնությունն է: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Սակայն այսն չկտրվելու դեպքեր, անտարակույս, եղել են տոհմի պատմության մեջ, այլապես տոհմի ավագն այդպիսի կատեգորիկ (կտրական) պատվեր չէր տա առասպելական ուժ ունեցող պատանուն՝ «թե չե, յետ տառցի»:

Մշեցի Հարություն Դավթյանի պատումի մեջ այս բանն ավելի ակնհայտ է: Այս պատումի մեջ Ձենով Օվանը Դավթին խրատում է. «Դավիթ, – ըսեց, – քո հայր կ'երթեր պատերազմի, ճամբին Կաթնով գունով աղբյուր կար, կ'երթեր ենտեղ, կ'իջներ Քոռիկ Ջալալիկից, կը քաշեր վըր աղբյուրին. լվաներ գ-Քոռիկ Ջալալիկին, ինքն էլ Կաթնով գունով աղբյուրի վրա կը լվացվեր, ջուր խմեր, հաց կ'ուտեր ենտեղ, հետո իրան տեղ շիքեր [պատրաստեր] Քոռիկ Ջալալիկի չորս վոտաց մեջ, հանգստություն կ'առներ, նորեն կ'երթեր կովու: Մեկ ոսիաթն լե, քո հայր Սասունա սահմանին հասներ, մի Պողպտե սուն կար, կը խաներ Կայծակե Թուր, զարներ. թե կտրեր, կ'անցներ, կ'երթեր: Տեր Աստված քո հետ էլնի»:²³⁴

Այստեղ հարցն ավելի որոշակի է: Հերոսի հայրը «թե կտրեր, կ'անցներ, կ'երթեր»: Ուրեմն հերոսի հոր հետ որոշակի պատահել են դեպքեր, երբ նա չի կարողացել կտրել: «Տեր Աստված քո հետ էլնի», որ դու կարողանաս կտրել:

«Վանա գավառաբարբառով» պատումի մեջ թեև այս էպոսային «Պողպտե սունը» կա, բայց այնտեղ կա նաև սասունցիների տոհմի հարատև թշնամին, որը կոչվում է Ջանփոլաղ (Մարմինը պողպատ), և որի դեմ սերնդեսերունդ կռվի են դուրս գալիս Սասնո իշխանները, բայց շարունակ պարտության են մատնվում, բախտ են տալիս, այսինքն՝ ընդունում են նրա այրվածությունը և համակերպվում են իրենց վասալական դրության հետ: Այդ պատումի մեջ Սասնո միևնույն իշխանը թեև մի անգամ արդեն պարտվել է և խոստացել է գնալ և որդուն էլ կռվի ուղարկել, որ նա էլ պարտվի

233 Լույս տեղում, էջ 468:

234 Լույս տեղում, էջ 591:

ու իր վասալական կախման հետ համակերպվի, բայց որովհետև ճրժեր դեռ ճրժեր են կամ թե «հլա դեռ չեն ծնվել», ապա հայրը, խախտելով իր խոստումը, նորից գնում է Ջանփոլաղի վրա և նորից պարտվում է: Սասունցի իշխանների դրությունն ուղղակի հուսահատական է: Նրանք գնում են Մըսր, գրավում, իշխում այնտեղ, սակայն երբ փորձում են Ջանփոլաղի վրա գնալ, շարունակ պարտության են մատնվում:

«Քանի որ ճոճ Մհեր չկա, պետք ի, վոր յես երթամ վեր ինոր կռիվ. քանի որ իմ տղեյներն ել հալա տղա յեն», – ասում է ճոճ Մելքոն, գնում Ջանփոլաղի վրա ու պարտված ետ դառնում»:²³⁵

Մարում հեքիաթային հաղթանակներ տանելուց հետո էլ ճոճ Մհերը նորից պարտություն է կրում Ջանփոլաղից և եղբորն ասում է.

«– Հե, ախպերիկ, ինչ ասեմ. պան պանից ելեր ի. կնացի վեր Ջանփոլաղին կռիվ, զարկի իրեք գորգ. աման էն գորգեր պարապ գնացին: Ու յես ակամա ինոր բնխտ տվի, որ Դավիթն ըրո՞ղկեմ վեր ինոր կռիվ: Ես կերպով կորագլոխ ելմ աշխրի առջեմ: Յես որ չկարցա վեր ինոր, ինչըխ պիտի կռվի ու անխտի Դավիթ, վոր մորից չեղե հնալն»:²³⁶

«Մհեր անճար մնալով՝ բնխտ իտուր Ջանփոլաղին, վոր երթա, Դավիթ ըրո՞ղկեմ... Ճանալիս վերեն շատ մտածման մեջ ինկավ, ասաց. «Յես որ չկարցա անխտել Ջանփոլաղին, Դավիթ ինչպես պիտի անխտի ինոր»:²³⁷

Թե՛ Մարում և թե՛ Սասնո լանջերին Մարի դեմ սասունցիների տարած հաղթանակը թեև շատ է փառաբանված և չափազանցված պատումների մեջ (էպոսի մեջ ուրիշ կերպ չի կարող լինել), սակայն ոչ միայն մենք, պատմության հիման վրա, այլև էպոսի առանձին պատումներն էլ գիտեն, որ սասունցիների կողմից Մարը նվաճելը և հարկատու դարձնելը վերջին հաշվով ոչ այլ ինչ է եղել, քան աղքատ սասունցիների կողմից հարուստ Մարում լավ վարձատրությամբ զինվորական ծառայություն կատարելը: Հերոսի հայրը Սասնո լեռներում ձին հեծնում էր առանց թամբի ու գյամի. նա գաղափար անգամ չուներ այդ հարմարանքների մասին, իսկ երբ քեռու խորհրդով իմանում է, որ այդ ամենը կա Մարում, որ Մարա Մելիքը կտա այդ ամենը, ապա նա «թամբն ու գյամը» Մարա Մելիքից ստանալուց հետո ներկայանում է քեռուն, վերջինս բարեն առնելով.

«Ըսեց. – Մհեր, լա՛ն, իմա՛մ ան:

Ըսեց. – Քեռի, ողորթ ան.

235 Լույս տեղում, էջ 418:

236 Լույս տեղում, էջ 438:

237 Լույս տեղում:

Իդա թամբի մեջ իման ըռհաթ (հանգիստ) կը նստի, Ըսկի մարդու վոռ չցանկցու»։ Միերի համար։

«Շադ աղեկ մարդ ւն Մըսրա Մելիք, Խարջ հըմեն բաշխեր ւն ընծի։ ...

Յես Մըսրա Մելիքի հետ ախպեր իմ եղի»։²³⁸ (Փակագծերի մեջ ասենք, որ այստեղ խոսքը վերաբերում է բարեկամության ժամանակաշրջանին և Մսրա Մելիքի փոխարեն պետք է հասկանալ Ֆաթիմյան խալիֆին)։

Որ սասունցին աղքատ էր, ապա այս բանն ասում են շատ պատումներ։ Թամբի և գյամի մասին գաղափար չունեցող ջահելն առավել ևս գաղափար պիտի չունենար նաև զրահի մասին, իսկ Շահ-ի-Արմենները Խլաթ էին եկել միայն զորագնդով, առանց քաղաքացիական բնակչության։ Նրանք եկել էին, ինչպես երևում է նաև էպոսի պատումներից, զրահավորված զորքով, և սասունցին զարմանքով էր տեսնում, որ Ջանփոլադը «յեփ կովի կ'երթեր, երկթե խալավ կը խայներ (երկաթյա հագուստ կհագներ), խոր խամար սուր-թուր չեր պանի ինոր վերեն»։²³⁹ Ուրեմն նրա մարմինը (ջանը) պատած էր պողպատով (փոլադ)՝ Ջանփոլադ անունն արդեն պատրաստ էր։ Սակայն իրական պատմության մեջ էլ Շահ-ի-Արմենների թագավորն այդ ժամանակ անունով արդեն Բեկ (իշխան) Թեմուր (երկաթ) էր։

Սասունը, կամովին թե բռնությամբ, 1165 թվականին կորցնում է իր վաղեմի անկախությունը և վասալական կախման մեջ ընկնում Խլաթի Շահ-ի-Արմեններից։ Այդ ակտի կատարման ժամանակ Խլաթի թագավորն էր Սուրման II Երկարակյացը, որին, հակառակ այդ ակտի ճակատագրականությանը, հայ պատմագրությունը հորջորջում է «քրիստոնեաւեր»։ Սակայն 1185 թվականին այդ գահն անցնում է նրա զորավարին՝ Բեկթեմուրին, որին արար պատմագիրներն անվանում են Սուրմանի մամուկը (ճորտը, ստրուկը)։

Եթե Միրան Շահի քաղաքականության մասին ինչպես հայ պատմագրությունը, այնպես էլ Միխայել Աստրին միայն դրական խոսք են ասում, ապա նրան հաջորդած Բեկթեմուրի մասին պարզ ու որոշակի ասում են «ստյաց ուխտին»։ Պարզ է, որ հզոր Փեհլևիներին փեսայացած Բեկթեմուրն իր նախորդի նման մեղմ քաղաքականություն չի վարել իր հպատակ-

ների նկատմամբ, որոնք գերազանցապես հայեր էին։ Հայտնի է, որ նա իր երկրից արտաքսեց Հերում և Շահնշահ Սասունցիներին՝ զրկելով նրանց իրենց հայրենական կալվածքներից։

Միոված իշխաններին արտաքսելով հայրենի երկրից՝ այս Բեկթեմուրը բարի հիշատակ չի թողել ժողովրդի հիշողության մեջ։

Բայց ճիշտ այնպես, ինչպես ժողովուրդը և ասացողները Ֆաթիմյան խալիֆների բարեկամական Եգիպտոսը խառնել-միացրել են Եգիպտոսի հայկական զորքը ջախջախող և եգիպտահայ բարգավաճ գաղութին վերջ տվող Մսրա Մելիքի հետ, ճիշտ այդպես էլ ժողովուրդը և ասացողները Սուրման «քրիստոնեաւերին» խառնել-միացրել են խորամանկ ու նենգ Բեկթեմուր-Ջանփոլադի հետ։ Բեկթեմուր-Ջանփոլադը մարմնավորել է թե՛ Սուրման Երկրորդին և թե՛ իրեն։

Բայց բանի որ Մսրա Մելիքը էպոսի բոլոր պատումների մեջ անվանվում է միայն Մսրա Մելիք, և նրա բնութագիրը տալիս ոչ մի պատումի մեջ չենք նկատում որևէ կաշկանդում (նա փիճ է, ազգով քուրդ, նենգ, նամարդ, ռխակալ, վախկոտ, խարդախ ու խաբեբա), իսկ Բեկթեմուրը ոչ միայն ամենևին հանդես չի եկել իր Բեկթեմուր անունով, այլև միայն երկու պատումի մեջ Ջանփոլադ անունով, մյուս կողմից՝ անորոշության մեջ են թողնվել նրա բնութագիրն ու կենսագրությունը, ապա այս հանգամանքը մեզ լիակատար իրավունք է տալիս ենթադրելու, որ սկզբնական պատմավեպի հեղինակը Բեկթեմուրի մասին խոսելիս իրեն այնպես ազատ չի զգացել, ինչպես հետավոր ու արդեն մեռած Մսրա Մելիքի մասին խոսելիս, որ նա հարկադրված է եղել Բեկթեմուրի մասին խոսելիս դիմելու այլաբանության։ Նման անհրաժեշտության դեպքում Բեկ (իշխան) Թեմուրը (երկաթը) սկզբում հեշտությամբ կարող էր անվանվել Ջան (մարմինը) փոլադ (պողպատ), իսկ այնուհետև լիակատար այլաբանորեն՝ դիրագն (սյունն) դամուր (երկաթ)։ Իսկ Դիրագն Դամուրը թարգմանաբար կդառնար «Պողվրտե սուն» և «Էրկըթե սուն»։

Սակայն Բեկթեմուրի հարցում այլաբանության դիմելու անհրաժեշտությունը տրամաբանորեն մեզ հանգեցնում է երկու եզրակացության։ Առաջին. ասացողներն այլաբանության չեն դիմում, այլաբանության դիմում է հեղինակը։ Երկրորդ. այդ հեղինակն ապրել ու գրել է Բեկթեմուրի և կամ նրա որդու կենդանության օրոք և Բեկթեմուրին կամ նրա որդուն ենթակա տարածքում՝ Մշո Ս. Ղազարի անվան Առաքելոց վանքում։

238 Սասնա Շոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 270-271։

239 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

240 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

241 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

242 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

243 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

244 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

245 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396։

Ե. ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԶՄՇԿԻԿ ՍՈՒԼԹ-ԱՆԸ»

Լրիվ էպոս դարձած պատումների մեջ Դավիթը չի սպանվում: Խանդութի սերը նվաճելուց հետո.

«Ուրախութեն արեցին:

Ելան վերցրին, Սարը գնացին.

Մարդում ռիստն որ, ռիստ գիշեր խարսնիք արեցին»:²⁴⁰

Կամ թե.

«Եկան միասին նստան,

Կերան, խման, իրիկուն պառկան, քնան:

Առավոտուն ելան ձիանք քնշին դուս,

Երկսով ել խեծան, գացին Մարը:

Գնաց, նստավ թաղթ:

Յոթ որ գիշեր-ցերեկ չրաղվան [իրավառություն] արին,

Ուրախութեն արին,

Նաղարա-գուռնա զարկին:

Ընոնք կերան-խման, *միասին ծերացան*»:²⁴¹

Պատումներից երկուսի մեջ Դավթին սպանում է ոմն Համգա, որ փահլևան է և հավանաբար Մարա Մելիքի վասալներից մեկը, որովհետև այդ նույն Համգան հետագայում Մհերին էլ է բռնում, բայց չի սպանում, այլ հանձնում է Մարա Մելիքի որդուն: Պատումների մեծ մասի մեջ Դավթին սպանում է ինչ-որ մի կին: Գարեգին Սրվանձտյանի գրի առած առաջին պատումի մեջ թեև «խլաթցիք զըղի (Դավթին) նեղ լծեցին», բայց նրան դավադրաբար թաքստոցից նետահար է անում Շըմշըմ խանըմի աղջիկը, որի մասին պատումն ասում է.

«Ըղ վախտին որ Աբամելիք սաղ եր,

Աբամելիք եկեր եր Իբրահիմ աղի տուն,

Ու զորով գացեր եր եղ աղի կնկա մոտ.

Ու եղ կնկա անուն լե՛ Շըմշըմ խանըմ եր.

Ու ըղուր մոտեն եղեր եր աղջիկ մի,

Որ են լե ըղունց ազգեն եր.

Եղ լե շատ հունարով եր»:²⁴²

240 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 350:

241 Նույն տեղում, էջ 386:

242 Սասնա Շոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 40:

Ապարանցի Մուրադի պատումի մեջ Դավթին նույնպես դավադրաբար սպանում է Չմշկիկը սուլթանի աղջիկը. «Դավիթ որ իմացավ՝ Չմշկիկը սուլթանի ախչիկն եր, Ըսեց. – Եղ իմ սերմն եր, որ ինձ սպանեց»:²⁴³ Դատկու Մոճկանց գյուղացի Ավետիս Մարտիրոսյանի պատումի մեջ Դավթին սպանում են «Ախլաթցիները»: Սասունցի Թամո Դավթյանի պատումի մեջ Դավթին սպանում է «Չմշկիկ Սուլթանի ախճիգ, ըր Տավթից եր... «Ա՛խ, մտ ըմ ջնսի դարբն եր», – մսից Տավթի»,²⁴⁴ երբ այդ աղջիկն անվրեպ արձակում է իր նետը: Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումի մեջ Դավթին սպանում է Ջիմջիմի սուլթանը: Ալաշկերտցի Կարապետ Թամոյանի պատումի մեջ Դավթին սպանում է Ճիմճիմի սուլթան անունով մի մարդ: Քավաղցի Հակոբ Նրգեյանի պատումի մեջ Դավթին սպանում է Համգա փահլևանը. մինևույն աղբյուրից սովորած քավաղցի Սարգիս Հակոբյանի պատումի մեջ՝ նույնպես ինչ-որ Համգա, որը, «փոթորկի նման ուր վրա բշող Դավթին» տեսնելով, սարսափահար է լինում ու դիմում «Ֆանդ ու ֆելի»: «Դավթին որ մոտեցավ, էնի պահ մտավ Մեղրի գետի դամիշների մեջ» ու այդ թաքստոցից նետահար է անում Դավթին: Նորբայազետցի Առաքել Շակոյանի պատումի մեջ «Դավիթը մահացու վերք է ստանում *իր և Շմշիկ* խաթունի աղջկանից», որ թաքսվել էր եղեգնուտի մեջ: Արարատցի Մուրադ Հովսեփյանի պատումի մեջ Դավթին սպանում են խլաթցիները, որոնք «Իրեք օր կռվան, տեհան՝ չեն հաղթում», իսկ չորրորդ օրը շիկացնում են գութանի խոփը ու դավադրաբար զարկում նրան, երբ նա միամիտ լողանում էր գետում: Ապարանցի Բարսեղ Սահակյանի պատումի մեջ Դավիթը խլաթցիներից «փախավ... մի ջրած արտի մեջ ընկավ, շորեր դառավ ցելս: Գնաց աղբրի վրեն, որ շորերն ու ձին լվանա... են կմճեն [թրքուհին], – որ ծներ էր Դավթից ու Խլաթի քեհու [իշխանի] կնկա մոտեն, – Նետ ու անեղով զարկեց, Դավթին ըսպանեց»:²⁴⁵ Մշեցի Հարություն Դավթյանի պատումի մեջ Դավթին սպանում է ոմն Բանա խանում: Սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանի պատումի մեջ Դավթին սպանում են ինչ-որ Ուզար, Ճուղար, Ճնճղեկ ու Ֆարման: Մանուկ Աբեղյանի գրի առած Նախտ քեռու պատումի մեջ Դավթին սպանում է Չմշկիկ Սուլթանը, որի հետ նշանվել, բայց Խանդութի գովքը լսելուց հետո չէր ամուսնացել Դավիթը:

Նախտ քեռու հետ նույն ուսուցչից սովորած Մոկացի Խապոյենց Զատիկի պատումի մեջ Դավթին նույնպես սպանում է նույն Չմշկիկ Սուլթա-

243 Նույն տեղում, էջ 91:

244 Նույն տեղում, էջ 194:

245 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 520:

նը, որ կին է: Մոկացի Հովանի պատումի մեջ Դավթին սպանում է Բանախանը: Մոկացի Հովակիմենց Դազարի պատումի մեջ Դավթին սպանողը Չմուշկի սուլթանն է, որը կին է: Մոկացի Վարդանի պատումի մեջ Դավթին սպանում է մի պառավ կին: Մոկացի Թումաս Պետրոսյանի պատումի մեջ Միերն է սպանում Դավթին: Մոկացի Վարդան Մուխսի-Բազիկյանի երկու պատումի մեջ էլ Դավթին սպանում է Չըմըշիկ Սըլտանը, որի սեռի մասին ոչ մի խոսք կամ ակնարկ չկա: Մոկացի Մանուկ Հարությունյանի պատումի մեջ Դավթին սպանում է Չըմըշուկ Սուլթանը, որի սեռը նույնպես որոշ չէ: Շատախցի Մկրտիչ Հարությունյանի պատումի մեջ հորեղբայրն ուզում է Դավթին ամուսնացնել Սըլթան Չմուշի աղջկա հետ, սակայն Դավթը կտրուկ առարկում է. «Խրոդընր, յես Սըլթան Չմուշի աղջիկ չըմ անի»:²⁴⁶ Այդ մերժված աղջկա ծնողն այս պատումի մեջ սպանում է Դավթին դավադրաբար, թաքստոցից, կնոջ պես: Մոռանալով այն հանգամանքը, որ անվանի հերոսին ոչ ոք սիրտ չէր անի հաղթել բաց կովում, ենթադրում են, թե այդպես կովողը կին պետք է լինի, այլ ոչ թե տղամարդ: Շատախցի Գրիգորի, շատախցի Ռաշո Մուրադյանի և Ավո Զադոյանի միացյալ, շատախցի Ազիզ Դարիբյանի, սպարկերտցի Փառիկի, գավազցի Գրիգոր Փոխան Եղիազարյանի պատումների մեջ Դավթը չի սպանվում. պատումները վերջանում են հաղթանակի տոնական տրամադրությամբ. «Տնվիթ գավթից Մըսրա երկիր, Տնրցավ, Սասնա քնդնք նստավ»,²⁴⁷ կամ թե «հանտեղ զՄըսրա Մելիթ կը վերճացըցի: Կ'ելնի, Մըսրա երկիր զըմեն կ'ավիրի, Կ'առնի, կը տանի, լցի Սասնա երկիր»:²⁴⁸ Գավազցի Եղիազար Հակոբյանի պատումի մեջ Դավթին սպանում է Մշու Սուլթանը: Գավազցի Մարգարիտ Մարգարյանի պատումի մեջ Դավթին սպանում է մի սուլթան, որն սկզբում կոչվում էր Շըմըշկե, ապա Շըմշիկ սուլթան: Գավազցի Համբարձում (Խամբո) Գրիգորյանի պատումի մեջ Դավթին սպանողը կոչվում է Չմըշկե սուլթան, որը որոշակիորեն տղամարդ է և ոչ թե կին, որովհետև առաջին հանդիպման և մարտահրավերի ժամանակ Դավթը հրաժարվում է կովից՝ պատճառաբանելով, թե. «Եսոր ոլուշաղ [կին] կա խիտ ձիկ. Թող մնա, երթամ տուն, քանի որեն գնմ քո կռիվ»:²⁴⁹ Այս «Չմըշկե սուլթանը» Դավթին սպանելուց հետո «իր մասքնը [գորքը] կը ժողվի, Կը գն ըզՄիերն ել սպա-

246 Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 679:

247 Նույն տեղում, էջ 784:

248 Նույն տեղում, էջ 814:

249 Նույն տեղում, էջ 1019:

նի»:²⁵⁰ Կազարյան Թառոյի պատումի մեջ «Խլաթա Սուլթան Չըմուս աղջիկ Ուր մգրախ աղույոտեց [սիզակը թունավորեց], մտավ կարմնճի տակ, ... Կարմնճի տկեն մգրախ մեց Տավթի կռնեն»:²⁵¹

Ինչպես տեսնում ենք, Դավթին սպանողների թվում կան թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք: Կարևորը այդ չէ: Կարևորն այն է, որ նրան մեծ մասամբ սպանում են խլաթցիներ, և ընդգծվում է սպանողի հայ չլինելը:

«Չմշկիկ»-ը հնչուն անուն է, որոշ չափով հարազատ, դրա համար էլ ուսումնասիրողները մոռացության են տվել այն հանգամանքը, որ այդ ակտը (գործողությունը) կատարող սուլթանը պատումների մեջ նաև այլ անուններ ունի՝ Չմուսի, Ջիմջիմ, Չըմըշկե, Շըմըշկե, Շըմշիկ և այլն, և կանգ են առել «Չմշկիկ»-ի վրա ու զարմացել, թե ինչու է Բյուզանդիոնի այդ հայազգի կայսրը սուլթան ու կին դարձել և եկել ու դավադրաբար սպանել մեր ազգային էպոսի ամենահերոսական դեմքին:

«Չմշկիկ Սուլթանի անունն, – գրում է Մ. Արեղյանը, – ամեն ընթերցողի իսկույն հիշեցնում է Հովհաննես Չմշկիկ կայսրի անունը. բայց վոչոք չէր խիզախել այդ յերկուսին նույնացնելու: Բ. Խալաթյանն այդ անուն է. «Այստեղ հետաքրքիրն այն է, – գրում է նա, – որ Հունաց Հովհաննես Չմիշիկ կայսրն (969-976) իբրև կինարմատ է հանդես գալիս՝ շարունակելով պահել իր «սուլթան» տիտղոսը»: – Խալաթյանը կարծում է, թե «սուլթան» միայն թագավոր է նշանակում. «սուլթան» նշանակում է նաև՝ թագուհի, դշխո, արքայուհի: Չմշկիկ կայսրն ունեցել է մի ժամանակ մի սիրուհի, որ Ամիթ քաղաքի տերն էր, նույնպես Չմշկածագեցի, ինչպես և կայսրը: «Ժողովուրդն անգիտակցաբար փոխադրել է վերոհիշյալ ավանդությունն Դավթի վերա, կայսեր անունը տալով նրա սիրուհուն». բայց թե ինչու յե եղել այդ փոխադրումը, ինչու «Չմշկիկ սուլթանը», այսինքն՝ «Չմշկիկ թագավորը» դարձյալ դարձել է Դավթի նշանածը, այդ չի պարզվում, և յերբեք չի պարզվիլ»:²⁵²

1172 թվականին Եգիպտոսում Սալահեդդինի հիմնած դինաստիան պատմության մեջ մտել է Սալահեդդինի հոր՝ Էյուբի անունով՝ Էյուբյան դինաստիա: Երկու տարի հետո՝ 1174 թվականին, այդ դինաստիայի կենտրոնավայրը դարձավ Դամասկոսը, և այդ դինաստիայի թագավորները կոչվեցին Դամասկոսի սուլթաններ, որոնց զարմերը 1207 թվականին եկան ու

250 Նույն տեղում, էջ 1021:

251 Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 1081:

252 Անուն Արեղյան, Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին, էջ 38-39:

գրավեցին Շահ-ի-Արմենների ամբողջ թագավորությունը և Էյուբյան հարստության քաղաքական գերիշխանությունը հաստատեցին պատմական Հայաստանի գրեթե կեսի, այդ թվում նաև Սասունի վրա: Խլաթի նոր տերերը՝ Ավհադն ու ապա Աշրաֆը, պատմության մեջ մտել են որպես Խլաթի թագավորության Էյուբյան շահեր: Սակայն հայ պատմագրությունը նրանց համառորեն անվանում է «էտուլեանք»: Ինչու: Որովհետև Սալահեդդինի կրտսեր եղբայր Սայֆադինը Սալահեդդինի մահից (1193) հետո 1196 թվականին զավթել էր Սալահեդդինի ամբողջ թագավորությունը, բացառությամբ միայն ասորաշատ և հայաշատ Հալեբի, որը մնացել էր Սալահեդդինի բանաստեղծ որդուն՝ Ջաֆիրին, և այն բաժանել էր իր որդիներին: Ավհադն ու Աշրաֆը Սայֆադինի որդիներն էին: Իսկ հայ պատմագրությանը հայտնի էր Սայֆադինի սկզբնական անունը՝ Ադիլ-էդիլ: Այնքան, որքան Ադիլ-Սայֆադինը հալածեց ու զրկեց Սալահեդդինի որդիներին, ապա հայ պատմագրության համար այլևս գոյություն չունեին Սալահեդդինի Էյուբյան դինաստիան: Խլաթի թագավորությունը, որ Հայաստանի գրեթե կեսն էր կազմում, գրավել էին Ադիլ-էդիլի որդիները, ուրեմն «էտուլեանք», այլ ոչ թե Էյուբյաններ:

Եթե, ըստ էպոսի, Դավթի մահով վերանում է Սասնո անկախությունը (հասկանալ՝ կիսանկախությունը), ապա վերացնողները Դամասկոսի Սուլթանն ու նրա որդիներն էին: Ուրեմն փաստորեն Դավթին սպանել է Դամասկոսի Սուլթանը կամ թե նրա զարմը: Իսկ Դամասկոս անունն իր այբուբենի մեջ «շ» տառ ու հնչյուն չունեցող հունական ձևն է: Այդ հինավուրց քաղաքի սեմական անունը «Շըմ ի դըմշըկ» է, որ կրճատ ձևով դառնում է Շըմըշկ: Հայ մատենագիրները չեն գրում Դամասկոս, այլ՝ Դըմըկ-Դըմըշկ: Այսպիսով, Դավթին սպանել է Շըմըշկի Սուլթանը, որ արդեն եկել ու նստել էր Խլաթում: Պատումների մեծ մասի մեջ էլ Դավթին սպանում են խլաթցիները Զիմջիմ-Չըմուսի-Շըմըշկե սուլթանի կամ թե նրա աղջկա ձեռքով: Աղջկա կամ առհասարակ կինարմատի պարագան հավանաբար հետամուտ է, որ պատմավեպի էպոս դառնալուն զուգընթաց ամրապնդվել է՝ ելնելով առհասարակ էպոսի ներքին տրամաբանությունից. Դավթի նման առասպելական ուժի տեր հերոսին, ինչքան էլ նա մոռացած լինեի իր աղոթքը, ինչքան էլ սևացած լինեի նրա թևի մսե խաչը, չէր կարելի սպանել բաց կռվում: Նրան սպանել են դարանակալ եղանակով, որ տղամարդու համար անվայել է, կանանց է պատշաճ:

Այսպիսով, եթե Դավթը Սասնո կիսանկախության վերջին մոհիկանն է, ապա պատմականորեն ճիշտ է, որ նրա կյանքին վերջ են տվել Խլաթին տիրացած Շըմըշկե սուլթանները: Ինձ թվում է, որ էպոսը գրի առնողները ավելորդ եռանդ և գիտնականություն են ցուցաբերել ու անտեղի սրբագրել են պատմողների առոգանությունը և Շըմըշկն ու Շըմեկը մեկ հարվածով դարձրել են Չմշկիկ:

2. «ՀԱԼԱԲԱ ՔԱՂԱՔ»

Այրարատցի Մուրադ Հովսեփյանի պատումի մեջ «անտեր» և «անճար» մնացած Մեերը, նախքան «Վանա այրի մեջ փակվելը» հոր ու մոր գերեզմանի վրա դառնագին աղերսում է.

«Հերիկ, վեր ելի, հետք վեր ելի,

Քու տղեն անտեր մնացե, անտեր մնացե.

Քու տղեն դոներ անճար մնացե:

Հետք վեր ելի, Մարդ Կու, ծառայեմ.

Հետք դոներ անտեր յեթըմ եմ մնացե»:

«Մերիկ, վեր ելի, հետք վեր ելի,

Քու կաթնակեր բալեն անտեր մնացե:

Ելի, Թեհրան տուր, եթամ, ծառայեմ.

Ետք յեթըմ եմ մնացե,

Դոներ անտեր եմ մնացե»:

Հայրն ու մայրը գերեզմանի խորքից պատասխանում են.

«Վորդի, յես եմ մեծացեր,

Թափեր ա գլխիս մազեր.

Մալը Մըսրա Մելիքին ա:

Են օր, դու ինչ ծնար,

Քու գլխի Հալաբն ա գրվեր»:

«Վորդի, ետք յես եմ մեծացեր,

Թափեր ա գլխիս ծամեր.

Թեհրան Աջմու շահին ա:

Քու գլոխ Հալաբն ա գրված,

Իմ կաթնակեր բալեն»:²⁵³

Այստեղ մեր ընդհանուր թեզի տեսակետից շատ նշանակալից են «Մարդ տու, ծառայեմ» խնդրանքը և «Մըսր Մըսրա Մելիքին ա» պատասխանը: Բայց, կարծում եմ, որ այլևս հարկ չկա դրա վրա ծանրանալու: Պարզ է, որ սասունցիները ծառայության էին գնում Մըսր: Բայց չենք կարող չասել, որ որբացած Միերը ճիշտ այսպիսի խոսակցություն է ունենում նաև ուրիշ պատումների մեջ, որտեղ Մըսրն ու Աջմու երկիրն անհետանում են, սակայն Հալաբը միշտ մատնացույց է արվում որպես վերջին հանգրվան, որտեղ նրա «հացը թխուկ ի», «եմագը եփուկ ի», որտեղ նրա համար «հոդեն [սենյակը] ավուկ ի», «ջրեր պարզուկ ի»:

Բաշկալեցի Վարդան Դարդանյանի պատումի մեջ որդու խնդիրքին մայրը պատասխանում է.

«Վորթի ջան,

Ծամերս խառվե խետ խողին.

Յես քեզ չեմ կանա պախե,

Կան Հնլաբա քնդաք՝ մո քո մորքոր,

Քո մորքոր քե կը պախե»:

Նույն խորհուրդն է տալիս նաև հայրը.

«Վորթի ջան,

Յըմ մորուս խառվե խետ խողին.

Յես քե չեմ կանա պախե.

Կըն Հնլաբա քնդաք՝

Մո քո մորքոր.

Քո մորքոր քե կը պախի»:²⁵⁴

Հայոցճորեցի Կազարյան Թառոյի պատումի մեջ հայրը գերեզմանից ասում է.

«Վորտի, բարով ես իկե, խազար բարով.

Ամա իմ ճար իմ ձեռքն գնացեր ի:

Կո քըռ խաց թխուկ ի,

Քըռ կերն իփուկ ի [եփված է] ի Հալապա քնդաք»:²⁵⁵

Մոկացի Խապոյենց Զատիկի պատումի մեջ.

«Աստղծու հրամանով ձեն ընկնվ խոր գերեզման.

253 Սասնա Ծռեր, Խ. Բ, մասն յերկրորդ, էջ 305-306:

254 Նույն տեղում, էջ 625-626:

255 Սասնա Ծռեր, Խ. Ա, էջ 1085:

Եսաց. –

«Վորդի, գացի մըջալն ը ձեռնիս [անգոր եմ դարձել],

Թափի մագիրն իրիսիս,

Գնա Հալաբա քնդաք՝

Քո խաց թխուկ ի,

Քո յեմակ [կերակուրը] եփուկ ի»:

Իսկ «Մեր կանչից.

«Վորդի, գացի դավրանը ձեռնես [անուժ եմ դարձել],

Թափի մագիրն ի գլխես,

Գնա Հալաբա քնդաք՝

Քո հոդեն ավուկ ի [սենյակդ մաքրված է],

Քո ջրի պարզուկ ի [կարպետները փոված են]»:²⁵⁶

Մոկացի Հովանի պատումի մեջ Միերը Հալեբում տարօրինակ սխալ գործություններից ու անբացատրելի սպանություններ կատարելուց հետո է միայն հոր գերեզմանի վրա գնում և, ի պատասխան հոր խրատի, թե «կինա Հալաբա քնդաք, Քո խաց թխուկ ը, Քո եմագ իփուկ ը» ասում է.

«Հալաբա քնդաք փայ չունիմ,

Իմ բար ու փայ ծախիր իմ,

Իմ խուսք ու խաբար տվիր իմ

Հալաբա քնդաք չիմ երթա»:²⁵⁷

Միերի այս պատասխանից հետո է միայն հայրը նրան ուղարկում Վան:

Այն բոլոր պատումների մեջ, որտեղ Պատիկ Միերի ճյուղը բերված է քիչ թե շատ ընդարձակ, Հալեբ քաղաքը միշտ հանդես է գալիս, և Միերն այնտեղ գործում է, ամուսնանում, կովում, իսկ Վանա քարի մեջ միայն փակվում է: Վանում նա ոչ մի գործունեություն չի կատարում: Կան պատումներ, որտեղ Միերի մանկությունն անցնում է Խանդութի հայրենիքում: Դավթի մահից հետո քեռին կամ հորեղբայրներն են գնում ու նրան հետ բերում, սակայն բուն Սասնում թախտին տեղ դարձած մյուս հորեղբայրը կամ մյուս քեռին իրենց տղաների հետ միասին թշնամի են Միերին ու թախտը, ինչպես տեսանք, չեն տալիս նրան: Միերը գնում է Հալեբ ու նրա գործունեության մեծ մասն անցնում է Հալեբում ու նրա շուրջը:

Բայց ինչպես է պատահել, որ մուսուլմանական տիրապետության տակ գտնվող Սիրիայի մայրաքաղաքներից մեկը՝ Դամասկոսը (հայ պատ-

256 Նույն տեղում, էջ 108:

257 Նույն տեղում, էջ 241:

գրավեցին Շահ-ի-Արմենների ամբողջ թագավորությունը և Էյուբյան հարստության քաղաքական գերիշխանությունը հաստատեցին պատմական Հայաստանի գրեթե կեսի, այդ թվում նաև Սասունի վրա: Խլաթի նոր տերերը՝ Ավհադն ու ապա Աշրաֆը, պատմության մեջ մտել են որպես Խլաթի թագավորության Էյուբյան շահեր: Սակայն հայ պատմագրությունը նրանց համառորեն անվանում է «էտտլեանք»: Ինչու: Որովհետև Սալահեդդինի կրտսեր եղբայր Սայֆադինը Սալահեդդինի մահից (1193) հետո 1196 թվականին զավթել էր Սալահեդդինի ամբողջ թագավորությունը, բացառությամբ միայն ասորաշատ և հայաշատ Հալեբի, որը մնացել էր Սալահեդդինի բանաստեղծ որդուն՝ Զաֆիրին, և այն բաժանել էր իր որդիներին: Ավհադն ու Աշրաֆը Սայֆադինի որդիներն էին: Իսկ հայ պատմագրությանը հայտնի էր Սայֆադինի սկզբնական անունը՝ Ադիլ-էդիլ: Այնքան, որքան Ադիլ-Սայֆադինը հալածեց ու զրկեց Սալահեդդինի որդիներին, ապա հայ պատմագրության համար այլևս գոյություն չունեին Սալահեդդինի Էյուբյան դինաստիան: Խլաթի թագավորությունը, որ Հայաստանի գրեթե կեսն էր կազմում, գրավել էին Ադիլ-էդիլի որդիները, ուրեմն «էտտլեանք», այլ ոչ թե Էյուբյաններ:

Եթե, ըստ էպոսի, Դավթի մահով վերանում է Սասնո անկախությունը (հասկանալ՝ կիսանկախությունը), ապա վերացնողները Դամասկոսի Սուլթանն ու նրա որդիներն էին: Ուրեմն փաստորեն Դավթին սպանել է Դամասկոսի Սուլթանը կամ թե նրա զարմը: Իսկ Դամասկոս անունն իր այբուբենի մեջ «շ» տառ ու հնչյուն չունեցող հունական ձևն է: Այդ հինավուրց քաղաքի սեմական անունը «Շըմ ի դըմշըկ» է, որ կրճատ ձևով դառնում է Շըմըշկ: Հայ մատենագիրները չեն գրում Դամասկոս, այլ՝ Դըմըկ-Դըմըշկ: Այսպիսով, Դավթին սպանել է Շըմըշկի Սուլթանը, որ արդեն եկել ու նստել էր Խլաթում: Պատումների մեծ մասի մեջ էլ Դավթին սպանում են խլաթցիները Զիմջիմ-Չըմուսի-Շըմըշկե սուլթանի կամ թե նրա աղջկա ձեռքով: Աղջկա կամ առհասարակ կինարմատի պարագան հավանաբար հետամուտ է, որ պատմավեպի էպոս դառնալուն զուգընթաց ամրապնդվել է՝ ելնելով առհասարակ էպոսի ներքին տրամաբանությունից: Դավթի նման առասպելական ուժի տեր հերոսին, ինչքան էլ նա մոռացած լինեի իր աղոթքը, ինչքան էլ սևացած լինեի նրա թևի մսե խաչը, չէր կարելի սպանել բաց կռվում: Նրան սպանել են դարանակալ եղանակով, որ տղամարդու համար անվայել է, կանանց է պատշաճ:

Այսպիսով, եթե Դավթը Սասնո կիսանկախության վերջին մոհիկանն է, ապա պատմականորեն ճիշտ է, որ նրա կյանքին վերջ են տվել Խլաթին տիրացած Շըմըշկե սուլթանները: Ինձ թվում է, որ էպոսը գրի առնողները ավելորդ եռանդ և գիտնականություն են ցուցաբերել ու անտեղի սրբագրել են պատմողների առոգանությունը և Շըմըշկն ու Շըմշեկը մեկ հարվածով դարձրել են Չմշկիկ:

2. «ՀԱԼԱԲԱ ՔԱՂԱՔ»

Այրարացի Սուրադ Հովսեփյանի պատումի մեջ «անտեր» և «անճար» մնացած Մհերը, նախքան «Վանա այրի մեջ փակվելը» հոր ու մոր գերեզմանի վրա դառնազին աղերսում է.

«Հերիկ, վեր ելի, հետք վեր ելի,

Քու տղեն անտեր մնացե, անտեր մնացե.

Քու տղեն դոներ անճար մնացե:

Հետք վեր ելի, Մարդ Կու, ծառայեմ.

Հետք դոներ անտեր յեթըմ եմ մնացե»:

«Մերիկ, վեր ելի, հետք վեր ելի,

Քու կաթնակեր բալեն անտեր մնացե:

Ելի, Թեհրան տուր, եթամ, ծառայեմ.

Ետք յեթըմ եմ մնացե,

Դոներ անտեր եմ մնացե»:

Հայրն ու մայրը գերեզմանի խորքից պատասխանում են.

«Վորդի՛, յես եմ մեծացեր,

Թափեր ա գլխիս մազեր.

Մըր Մըսրա Մելիքին ա:

Են օր, դու ինչ ծնար,

Քու գլխի Հալաբն ա գրվեր»:

«Վորդի՛, ետք յես եմ մեծացեր,

Թափեր ա գլխիս ծամեր.

Թեհրան Աջմու շահին ա:

Քու զոխ Հալաբն ա գրված,
Իմ կաթնակեր բալեն»:²⁵³

Այստեղ մեր ընդհանուր թեզի տեսակետից շատ նշանակալից են «Մարդ տու, ծառայեմ» խնդրանքը և «Մըսր Մըսրա Մելիքին ա» պատասխանը: Բայց, կարծում են, որ այլևս հարկ չկա դրա վրա ծանրանալու: Պարզ է, որ սասունցիները ծառայության էին գնում Մըսր: Բայց չենք կարող չասել, որ որքացած Միերը ճիշտ այսպիսի խոսակցություն է ունենում նաև ուրիշ պատումների մեջ, որտեղ Մըսրն ու Աջմու երկիրն անհետանում են, սակայն Հալաբը միշտ մատնացույց է արվում որպես վերջին հանգրվան, որտեղ նրա «հացը թխուկ ի», «եմագը եփուկ ի», որտեղ նրա համար «հոդեն (սենյակը) ավուկ ի», «ջըլեր պարզուկ ի»:

Բաշկալեցի Վարդան Դարդանյանի պատումի մեջ որդու խնդիրքին մայրը պատասխանում է.

«Վորթի ջան,
Ծամերս խառվե խետ խողին.

Յես քեզ չեմ կանա պախե,

Կան Հալաբա քաղաք՝ մո քու մորքոր,

Քու մորքոր քե կը պախե»:

Նույն խորհուրդն է տալիս նաև հայրը.

«Վորթի ջան,

Յըմ մորուս խառվե խետ խողին.

Յես քե չեմ կանա պախե.

Կըն Հալաբա քաղաք՝

Մո քու մորքոր.

Քու մորքոր քե կը պախի»:²⁵⁴

Հայոցձորեցի Կազարյան Թառոյի պատումի մեջ հայրը գերեզմանից ասում է.

«Վորտի, բարո՛վ ես իկե, խազա՛ր բարով.

Ամա իմ ճար իմ ձեռքեն գնացեր ի:

Կո՛ քըռ խաց թխուկ ի,

Քըռ կերն իփուկ ի (եփված է) ի Հալապա քաղաք»:²⁵⁵

Մոկացի Խապոյենց Ջատիկի պատումի մեջ.

«Աստըծու հրամանով ձեն ընկնւ խոր գերեզման.

253 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 305-306:

254 Նույն տեղում, էջ 625-626:

255 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 1085:

Եսաց. –

«Վորդի, գացի մըջալն ը ձեռնիս [անգոր եմ դարձել],

Թափի մազիրն իրիսիս,

Գնա Հալաբա քաղաք՝

Քու խաց թխուկ ի,

Քու յեմակ [կերակուրը] եփուկ ի»:

Իսկ «Մեր կանչից.

«Վորդի, գացի դավրանը ձեռնես [անուժ եմ դարձել],

Թափի մազիրն ի գլխես,

Գնա Հալաբա քաղաք՝

Քու հողեն ավուկ ի [սենյակը մաքրված է],

Քու ջըլիր պարզուկ ի [կարպետները փռված են]»:²⁵⁶

Մոկացի Հովանի պատումի մեջ Միերը Հալեբում տարօրինակ սխրագործություններից ու անբացատրելի սպանություններ կատարելուց հետո է միայն հոր գերեզմանի վրա գնում և, ի պատասխան հոր խրատի, թե «կի-նա Հալաբա քաղաք, Քու խաց թխուկ ը, Քու եմագ իփուկ ը» ասում է.

«Հալաբա քաղաք փայ չունիմ,

Իմ բար ու փայ ծախիր իմ,

Իմ խուսք ու խաբար տվիր իմ

Հալաբա քաղաք չիմ երթա»:²⁵⁷

Միերի այս պատասխանից հետո է միայն հայրը նրան ուղարկում Վան:

Այն բոլոր պատումների մեջ, որտեղ Պատիկ Միերի ճյուղը բերված է քիչ թե շատ ընդարձակ, Հալեբ քաղաքը միշտ հանդես է գալիս, և Միերն այնտեղ գործում է, ամուսնանում, կովում, իսկ Վանա քարի մեջ միայն փակվում է: Վանում նա ոչ մի գործունեություն չի կատարում: Կան պատումներ, որտեղ Միերի մանկությունն անցնում է Խանդութի հայրենիքում: Դավթի մահից հետո քեռին կամ հորեղբայրներն են գնում ու նրան հետ բերում, սակայն բուն Սասունում թախտին տեր դարձած մյուս հորեղբայրը կամ մյուս քեռին իրենց տղաների հետ միասին թշնամի են Միերին ու թախտը, ինչպես տեսանք, չեն տալիս նրան: Միերը գնում է Հալեբ ու նրա գործունեության մեծ մասն անցնում է Հալեբում ու նրա շուրջը:

Բայց ինչպես է պատահել, որ մուսուլմանական տիրապետության տակ գտնվող Սիրիայի մայրաքաղաքներից մեկը՝ Դամասկոսը (հայ պատ-

256 Նույն տեղում, էջ 108:

257 Նույն տեղում, էջ 241:

մագիրների Դըմըշխը), էպոսի մեջ տարբեր անուններով (Շըմըշկ, Շըմշեկ և այլն) շարունակ հանդես է գալիս որպես թշնամի քաղաք ու թագավորություն, իսկ մյուս մայրաքաղաքը՝ Հալեբը՝ որպես բարեկամ, հյուրընկալ քաղաք ու թագավորություն:

Դա էլ ունի իր պատմական բացատրությունը: 1049 թվականին Հալեբ այցելած մի արաբ այդ քաղաքի մասին գրել է. «Քաղաքը կը պարունակէ մզկիթ մը, 6 եկեղեցի կամ տաճար»:²⁵⁸

Այս նշանակում է, որ դեռևս XI դարում՝ մուսուլմանների քաղաքական տիրապետության վեցերորդ դարում, Հալեբի բնակչությունը մնում էր գերազանցապես քրիստոնեական: Այնտեղ ապրում էին ասորիներ, հույներ, սեմական ցեղին պատկանող այլ քրիստոնյաներ, սակայն հայերի տոկոսը, մանավանդ XI և XII դարերում հետզհետե ավելի ու ավելի շոշափելի էր դառնում:

«Ներկայիս [այսինքն XII դարի վերջին տասնամյակին և XIII դարի առաջին տասնամյակներին] այս երկրին իշխանն է... Զահիրը, որուն գործավարը՝ Շեհապետին Թուրքուլ՝ ազգով յոյն (րումի) է: Իշխանը խիստ ուղղամիտ և բարեպաշտ մարդ մըն է և արդարութեամբ կը վարուի իր հայաբնակներուն հետ: (Մեր կողմից ընդգծված այս նախադասությունը բավական է ապացուցելու համար, որ քաղաքի բնակչությունը գերազանցապես քրիստոնեական է եղել, իսկ իշխող մահմեդականները՝ ռազմական օկուպանտներ – Հ.Թ.):

...Հալեպի շրջանը կ'արտադրէ բամպակ, կնճիթ, ձմերուկ, վարունկ, կորեակ, խաղող, եգիպտացորեն, ծիրան, թուզ և խնձոր: Դաշտերն ու այգեստանները կ'ոռոգուին անձրևի ջուրով եւ առատ բերք կ'արտադրեն... Բնակչութիւնը հակամէտ է... իր հարստութիւնը շահագործելու: Երկրասարդները առհասարակ կ'իրացնեն իրենց հայրերուն նկարագիրը և այս պատճառով բազմաթիւ ընտանիքներ կան, որոնք ժառանգած և պահած են պապենական հարստութիւնը: ...[Զահիրը] պահ մը մեծ ճիգ ըրաւ քաղաքը բարեգարդելու, խրամներ փորել տուաւ, սրբատաշ քարերով սալայատակել տուաւ մայրերը, շէնքեր շինեց... Սուլթանին վեզիրը և տոմարակալը՝ Ճէմալէտտին Ապուլ Հասան պատմեց ինծի (արաբական «Աշխարհագրական բառարանի»՝ «Մորջամ էլ Պիլտան»ի հեղինակ Յակուտիին – Հ.Թ.), թէ այս գիւղերուն եկամուտը 5000 ձիատր կը պահէ և թէ կարելի է այս թիւը 7000ի բարձրացնել, եթէ խնայողութիւն կատարուի կարգ մը անելորդ ծախքերու մէջ»:²⁵⁹

258 Իսկն հալլիքան, Վէֆայաթ էլ Աւեսան, էջ 130:

259 Նույն տեղում, էջ 130-132:

Այս վերջին տեղեկությունները վերաբերում են Էյուբյան դինաստիայի որոշակի ասած՝ Սալահէդդինի Զահիր որդու տիրապետության շրջանին: Զահիրը Հալեբն ինքնիշխան կառավարում էր 1193 թվականից սկսած, իսկ մինչ այդ՝ հոր վերահսկողությամբ: Սակայն Սալահէդդինից առաջ Հալեբը նույնպես Քուրդ Ջենգյան Նուրէդդինի (1127-1174 թթ.) մայրաքաղաքներից մեկն էր, իսկ Նուրէդդինը թեև Եդեսիան կործանողն է (1144 թ.), բայց նա արևմուտքում վարում էր ամեն կերպ Ռուբինյաններին պաշտպանելու քաղաքականություն: Ինչու՞: Նա չէր ուզում, որ անառիկ Կիլիկիան դառնար Բյուզանդիոնի արևելյան ֆորպոստը, և դրա համար էլ ինչպես ինքն անձամբ, այնպես էլ իր փեսայի՝ Իկոնիայի Դլիշ Արսլան սուլթանի միջոցով ամեն կերպ սատարում էր հույների գերած Լևոնի որդիներին, որ նրանք կարողանային Կիլիկիան ազատել Բյուզանդիոնի ձեռքից: Այդ ժամանակաշրջանում՝ հայկական Կիլիկիայի համար ճակատագրական 1138 թվականից հետո, Նուրէդդինը սիրով հյուրընկալում է գերված Լևոնի Հալեբում ապաստանած Ստեփան և Մլեհ որդիներին, որոնց օգնում է ազատագրելու Կիլիկիան և այն հանձնելու իրենց ավագ եղբորը՝ Թորոսին: Սակայն Թորոսը շատ ապերախտ գտնվեց իր կրտսեր եղբոր՝ Մլեհի նկատմամբ, որ Ռուբինյան շրջանի խոշորագույն քաղաքական դեմքն է և անտեղի է ամբաստանված հայ հին (ու մինչև անգամ նոր) պատմագրության կողմից: 1169 թվականին գրկված և արտաքսված Մլեհը նորից ապաստանում է Հալեբ և Նուրէդդինից ստացած օգնական զորքով տիրանում Կիլիկիային: Մլեհի կողմից երկրորդ անգամ Հալեբ ապավինելու տարիները զուգահիշում են Եգիպտոսի հայկական զորքի պարտության և Հալեբի վրայով Սասուն նահանջելու ժամանակաշրջանին: (Փակագծերի մեջ ասենք, որ 1172 թվականը Եգիպտոսի հայկական զորքի վերջնական պարտության և վերացման տարին է, սակայն նրա պարտությունն սկսվել էր 1164 թվականից, երբ Ֆաթիմյանների ինքնիշխան վեզիր Շավարն ապստամբել էր անգոր Ֆաթիմյանների դեմ և քանիցս տիրացել Գահիրեին ու ապա արտաքսվել: 1168 թվականից սկսվում է Նուրէդդինի միջամտությունը Գահիրեի ներքին խռովություններին: Պետք է ենթադրել, որ Նուրէդդինի միջամտության տարուց՝ 1168 թվականից, հայկական հատուկ զորքն այլևս անելիք չունեւ Եգիպտոսում և պետք է հետ քաշվեր Հալեբի վրայով): Անհավանական չի լինի ենթադրել, որ Մլեհը 1169 թվականին և հետո դիմել է նաև Հալեբ ապավինած սասունցի զորքի օգտագործման քայլին, մանավանդ, եթե նկատի ունենանք հայ հին պատմագրության կողմից միտումնավոր լռու-

259-101 Գլ. Նուրբու մյուլ 1305

թյան մատնված և միայն Միխայել Ասորու կողմից հիշատակված այն փաստը, որ Մեհր Պառլամունիների փեսան էր²⁶⁰ և վարում էր համահայկական քաղաքականություն:

Էպոսի առանձին պատումների վկայությունները, թե Մեհրի համար բարեկեցիկ կյանքի հարմարությունները պատրաստ են Հալեբում, թե նրա մորաքույրն ապրում է այնտեղ, թե Հալեբում պատահական հայ ծերունին ճանաչում է Մեհրին, գիտե նրա պատմությունը, գիտե, որ նա ազգականներ ունի Հալեբում, նեղության մեջ ընկած Մեհրին Սասունից օգնության շտապող ազնանցորդիների ժամանումը Հալեբ, ինչպես նաև խոր հորից ազատվելուց հետո Մեհրի ապավինումը նույն քաղաքին. այս ամենը գումարած արաբական այն տեղեկության վրա, որ Հալեբում քրիստոնեական եկեղեցիների թիվը 6 անգամ ավելի է եղել մզկիթների թվից, մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ XII դարում հայաշատ է եղել նաև Հալեբի հայ գաղութը:

Էպոսի մեջ Հալեբը հանդես է գալիս թե՛ առաջին և թե՛ Պատիկ Մեհրի ցիկլում: Քավառցի Սարգիս Հակոբյանի պատումի մեջ Սանասար ու Սենեքերիմ «յեղբայրները փախչում են Հալեբ յեվ ծառայության մտնում Հալեբի թագավորի մոտ. նրանք մի տեղ են ստանում իրենց համար քաղաք շինելու»:²⁶¹ «Ընդունք շնորհակալ եղան թագավորից ու վերցրին ուրենց հետ իրենք ուստա-քարտաշ ու քսան բանվոր՝ դուս եկան Հալեպի դուզն ու ենտեղ ուրանց համար քաղքի հիմքը քցին:

Չորի արեվմտոց աշխատեցին ու հիրիկվան հացը կերան, քնան:

Առավոտը, յեփ վեր կացան, տեսան, որ սաղ շենքերն աստու հրամանով քար ու քանդ են եղած: Են ժամանակ Սենեքերիմն ըսեց.

– Ա՛խպեր Սանասար, կ'երեվա, աստու համար ունդունելի չե, որ մենք եստեղ քաղաք շինինք. լավն ա, եթանք ենտեղ շինինք մեր քաղաքը, ուր աստվածն մըզի նշանց կ'իտա»:²⁶²

Այրարատցի Մուրադ Հովսեփյանի պատումի մեջ Հալեբ քաղաքը հանդես է գալիս Պատիկ Մեհրի ցիկլում: Աստանդական կյանքի դատապարտված Մեհրը իր «բոյ ու բուսաթով» դուր է գալիս Քուլընկի դևի քրո-

ջը, որը նրան հյուրասիրում է, սակայն երեկոյան վերադառնում է Քուլընկի դևը, որի «սինոռի մեջ» «դուշն իր թեվով, ոճն իր պորտով» «չը կարա» երևալ նրա «հախու»: «Դու ինչպես սիրտ արիր. թո՛ղ զիմ սինոռը, գնա՛», – ասում է նրան դևը, «– Դե՛վ ախպեր, – պատասխանում է Մեհրը, – աստըծու շնորքը շատ ըլլի. Աստըծուց սավայ մենք, մեր ազգը մարդից չենք վախենա: Դեն ասավ. – Դո՛նախ ես, բիրդան բիր չեմ զարկի»: Ընթրում են միասին, հանգիստ քնում, որ առավոտյան «գուլաշ» կպնեն, թե դևը հաղթի, ապա սպանի, թե դևը պարտվի, իր քրոջը կնության տա Մեհրին: «Մեհր վերցրեց դեվին, տվեց գետին: Ասավ. – Վոր ուխտ եմ արե, իմ քուրը պտի տամ քեզի, յես էլ քեզի ախպեր ըլլեմ: Մեհր ասավ. – Յես չեմ պսակվի. յես պտի եթամ Հալաբ»: Դեն արդեն այնքան էր սիրել Մեհրին, որ նրան չի թողնում մենակ գնալ:

Եվ Մեհրն ու Քուլընկի դևը եղբայրացած գնում են Հալեբ, բայց Հալեբում դևի անունն այլևս չկա, և Մեհրը մենակ իջևանում է մի պառավի մոտ: Սա շատ նշանակալից պարագա է: Քաղաքից դուրս նա դևի ընկերակցության կարիքն զգում էր, իսկ քաղաքում արդեն այդ կարիքն այլևս չկա:

Հալեբում Մեհրը լսում է, որ թագավորն ամեն շաբաթ քաղաքացիների ժողով է գումարում: Մեհրն էլ է ուզում գնալ թագավորական ժողովի, սակայն պառավն ասում է. «Վորդի՛, իրան վիճակի մարդն ա կանչըմ» ժողովի: «Նանե՛, – ասում է Մեհրը, – յես յեղ թագավորի վորդի յեմ...»: Ու թագավորի որդին գնում ներկայանում է Հալեբի թագավորին:

«...Թագավորին գլոխ տվեց ոխտն անգամ, վրա ութին ձեռ կապեց, կայնավ: Թագավորն իրիշկաց, տեհավ ըտրան, սիրուն տղամարդ ա, լիքն ա, բոյով-բուսաթով ա, ասավ. «Եսի կ'ասես թագավորի ցեղ ըլլի»:

– Ա՛յ տղա, – ասավ, – դու հու՛ստ ես. ինչ ես ուզում:

Ասավ. – Տերությունը հաստատ ըլլի, յես Սասմա եմ:

– Սասմա ումանից ես դու:

– Դավթի տղեն:

Ասավ. – Են Դավթի Մաըր քարութանդ արավ.

Ընդրա ազգական *եկան, գնացին,*

Խլաթ քարութանդ արին.

Մե նաղինջ [անհանգիստ] մարդ եք դուք:

Քու անուն ինչ ա: – Մեհր:

– Դավթի տղեն Մեհր դու՛ յես:

Թե էկիր ես էս քաղաք,

260 «Եւ յորժամ լուաւ զայն աւագն, եկն ի կլայն կաթողիկոսութեան, և ոչ թողին զնա ՚ի բերդն. և նա զնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Աբեհն. և Աբեհն էառ զնա և տարաւ առ Նորադիւն, և նորին օգնութեամբն եմոյծ զնա ՚ի Հռոմկլայն. և նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբորն՝ Գրիգոր անուն». Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորոց պատրիարքի, էջ 472:

261 Սասնա Շներ, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 180:

262 Նույն տեղում, էջ 181-182:

Խելո՞ք նստես, կայնես: Ասավ. – Դե՛, դարի՞ք մարդ եմ, Ինչ գործ ունիմ խալխի խետ»:²⁶³

Հալերն, ինչպես դժվար չէ կռահել, ունեցել է իր ունևոր և ավանդապահ այլազգի, առավելապես քրիստոնյա բուրժուազիան, որը չի մասնակցել երկրի քաղաքական կյանքին, բայց ճգնել է ամեն մի նոր սուլթանի հետ լեզու գտնել և պահպանել իր ապահով և կայուն վիճակը: Քաղաքական կյանքն այդ տարիներին բովանդակ Մերձավոր Արևելքում տնօրինում էին նոմադական ռազմաշունչ թարմ ուժերը և նրանց զորապետները, որոնք, վաչկատուն ցեղերի գլուխ անցած, հեշտությամբ նվաճում էին ավելի բարձր մշակույթի և ունևոր կյանքի հասած բարեբեր երկրներն ու հարուստ քաղաքները, բայց գրավելուց հետո արդեն ճգնում էին ազատվել նոմադական անհանգիստ ու անհնազանդ ցեղախումբ-զորքից և *հենվել վարձկան զորքի վրա* ու վարել քաղաքային նստակյաց կյանք: Արդեն ընդհանրական դարձած այս երևույթի հետևանքով թեև Մերձավոր Արևելքում կազմակերպվել էին տասնյակ առանձին սուլթանություններ և էմիրություններ (ինչպես նաև խաչակիրների թագավորություններ ու դքսություններ), սակայն դրանց քաղաքական ազդեցության ոլորտից դուրս էին մնացել թուրքական բազմաթիվ վաչկատուն ցեղախմբեր, որոնք, իրենց նոմադական կյանքի և զբաղմունքի բերումով պահպանելով անկախությունը, դեռ ընդհանուր ազգային գիտակցության չբարձրացած, հաճախ ամբողջ ցեղախմբով վարձվում էին ու կռվում այս կամ այն իշխանի համար: Հարուստ քաղաքների տեր դարձած արդեն նստակյաց սուլթանները հաճախ էին օգտագործում այդ վաչկատուն ցեղախմբերի զորական ուժը: Քուրդ Նուրեդդինի և ապա քուրդ Սալահեդդինի բանակում ստվար թիվ էին կազմում վարձկան ղուզի-թուրքերը: Հայ իշխաններից թուրքմաններին վարձելու հիշատակություններ պահպանվել են միայն Մլեհի և Շահնշահ Սասունցու մասին: Բյուզանդիոնի դեմ մղած իր ազատագրական պայքարում 1145 թվականին, իսկ Թորոսի մանկահասակ որդուց և նրա խնամակալ Թումաս իշխանից իշխանությունը վերցնելու համար 1169 թվականին Մլեհը վարձում է նաև թուրքմանների, իսկ Շահնշահ Սասունցին, ինչպես իր տեղում տեսանք Միխայել Ասորու վկայությունից, 1184 թվականին Հռոմկլան գավթելու համար դիմում է թուրքմաններին օգտագործելու քայլին: Հայ կղերական պատմագրությունը քաղաքական տհասություն ցուցաբերելով, չի ըմբռնել այլակրոն մասսա-

263 Նույն տեղում, էջ 310:

ներին օգտագործելու այդ քայլի պատմական անհրաժեշտությունը և «այր չարաբարոյ» ու «չարամետ» է հռչակել Մլեհին ու նզովել նրան: Մլեհը մեր պատմագրության մեջ այդպիսով անտեղի ամբաստանված է Արշակ II-ի, Պապի և Վասակի նման, իսկ Շահնշահ Սասունցու մասին, հավանաբար նկատի ունենալով նրա եղերական վախճանը, հայ պատմագրությունը լռություն է պահպանել և չի արձանագրել թուրքմաններին օգտագործելու նրա էպիզոդիկ (դիպվածային) քայլը: Սակայն հայ պատմագրության փոխարեն այդ բանն արել է էպոսը: Մհերը մեր էպոսի ամենաառեղծվածային դեմքն է: Դավթի մահից հետո, երբ Կուզբայդնի որդիները հարձակվում են Սասնո վրա, Ձենով Օվանը դիմում է Մհերին, և խիզախ ու ազնիվ Մհերը գալիս ու փրկում է Սասունը: Դավթի մահից հետո Մհերը, հակառակ հոր կողմից իր գլխին թափված անլուր անեծքին, կռապաշտներից առնում է հոր՝ Դավթի սպանության վրեժը: Հորեղբոր կանայք զրպարտում են պատանի Մհերին, սակայն նա պատումների մեծ մասի մեջ զարմանալի սառնասրտություն է պահպանում ու չի խայտառակում նրանց: Մհերը շինարարական հանրօգուտ աշխատանքներ է կատարում: Սակայն, այնուամենայնիվ, բոլոր պատումներն էլ ճգնում են սևացնել նրան և ներկայացնել որպես չարության մարմնացում:

Դավիթը և օտարության մեջ առնականացած Մհերը իրար չճանաչելով մենամարտում են, և երբ հայրն իմանում է, որ իր հետ մենամարտող քաջն իր հարազատ որդին է, նզովում է նրան: Ինչու՞: Այս հարցը չի տալիս և ոչ մի պատում: Չէ՞ որ հայրն ավելի շուտ պիտի ճանաչեր իր որդուն, քան թե որդին՝ հորը: Եվ ոչ մի պատում չի բողոքում նզովքի անհրավացիության դեմ: Ընդհակառակն, էպիկական հանգստությամբ Մհերն արժանի է համարվում հայրական անեծքին: Ավելին: Պատումներ կան, որտեղ Մհերին ավելի չար պատկերելու համար նրան վերագրված է անգամ որդեսպանություն: Այս մեծագույն չարագործությունը Մհերին վերագրելու համար Մանուկ Թորոսյանի պատումի մեջ մոռացության է տրվել պատումների մեծ մասի մեջ համառորեն ընդգծված հոր անեծքը:

«Գա՛րբրե՛լ հրիշտակ, տո՛ւ Մհերի քնմկի երակ քեշիս՝
Անու ժառանգ չընկնի տո՛ւս»:²⁶⁴

Որդեսպան լինելու համար պետք է որդի ունենալ, և Մհերն այս պատումի մեջ որդի ունի: Սակայն Մհերին վերագրված որդեսպանության վայրը և մանրամասնությունները վկայում են, որ այդ չարագործության վե-

264 Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 101:

բագրումը Մհերին հետամուտ է, որ սկզբնական պատմավեպի հեղինակը նկատի է ունեցել Սասունցի իշխանների գլխին Կիլիկիայում կատարված անլուր չարագործությունը:

Այսպես, Մհերի տղան՝ Հոհանեսը, 14 տարեկան դարձած գնում է հորն օգնելու, որը կռվի էր գնացել «արևմտյան թագավորներու դեմ»: Մհերը, անտառում տեսնելով քնած պատանուն, «Մոտեցավ ընդոր, իրիշկեց ու սարսափեց: Ուր ձին շատ պզտիկ էր ընդոր ձիուց. ուր նետն շատ կարճ էր ընդոր նետից. ուր գոլը շատ թեթև էր ընդոր գոլից. մե խոսքով, ես անձանթն հրմեն կողմով բանձր էր ուրնից: (Կիլիկիայում ապաստանած Սասունցի եղբայրները տոհմի հնությանը և անունով բարձր էին նորելուկ Ռուբինյաններից – Հ.Թ.):

Դողաց Մհերն ու ըսեց.

– Տե՛ր աստված, յես կը հավատամ, որ յեփ քնից ելնի, պտի մեռնիմ ես ջիւղի ձեռով: Ըտոր համար լե լավ ա՛ որ յես ուրան սպանիմ քանի քնած:

– Ես ըսեց ու նետն խրեց ընդոր սիրտն: Ջիւղն վեր թռավ քնած տեղից, դուս քաշեց նետն ուր սրտից, ուզեց հարձակվի ուր խարդախ թշնամու վրեն՝ ընդոր կտոր-կտոր ենի, հմա ուժից ընկել էր, չկոցավ, մեռնելու վրա յեր: Շունչը փչելու հրոպեյին ըսեց.

– Ա՛խ, դու նամարդ մարդ, սպանեցիր ընձի, հմա հիմցիր, որ քու արժանի պատիճդ կը ստանաս իմ հորից:

– Քու հերն վո՛րն ա, – հարցուց Մհերն:

– Իմ հերն Սասունցի Մհերն ա. յես եկա, որ ընդոր ոգնիմ ուր կռվու մեջ»:²⁶⁵

Որդեսպանության հատվածը շատ ավելի իրական գույներով և քնական մտորումներով պահպանվել է երկրորդ հատորի 8-րդ պատումի մեջ: Այստեղ որդուն սխալմամբ սպանելուց հետո.

«Մհեր հընգեր էր մտածմունքի.

Կը մտածեր, թե. «Յես մեղավորցա՛:

Մարթ մ'ուր տղեն իմա՛լ պըղի սպանա,

Որ հինք չմեղավորնա»:

Մհեր միտք ենելով գ'իկեր:

Եզավ, հասավ սարի մի տագ:

Մեզ սեվ քար ըմ ռաստ եզավ եղոր:

Ըսեց. «Կանի՛, իմ գոլը թալիմ իդա քարին:

265 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 229:

Թա՛ւ կտրեց, յես չմեղավորցեր իմ.

Թա՛ւ չը կտրեց, զարթի մեղավորցեր իմ»:

Գոլը ուր գոլը քարին,

Քար երգու դիւ փեղկավ,

Հինք, ուր ձին գացին քարի մեջ.

Քար եզավ, իրար կպավ:

Մհեր պըրձավ, ազաղավ...

Մհերի ջինս վերջացավ...

Քեռի Թորոս կսկըձու մեռավ,

Որ լսեց Մհերի մեռնել:

Մնացողներու հըմընու ջինս հըլա կա:

Մըկա որ Սասունցոց մեջ կտրիճ գ'ելին,

Կ'ըսեն՝ Ձինով Ոհանի, Խոր Մանուկի ջընսեն ին,

Ազնանցորդիք Մհերի ցեղեն ին.

Եղունք գացին, վերջացան»:²⁶⁶

Հեքիաթային վախճանը, երբ բավականաչափ հստակ հիմնավորված չէ հանցանքի մեծությունը, բանաստեղծական գանազան հրապուրիչ մեկնությունների առիթ է տալիս, բայց որքան ավելի սպառնիչ է այս իրական նկարագրությունը, այս դառն վերջակետը: Մենք կարող ենք հաստատասել, որ այստեղ էպոսի մեջ պահպանվել է «խարդախ թշնամու» կողմից երկու հերոս սասունցի եղբայրների՝ Հեթում և Շահնշահ Մամիկոնյան-Պահլավունիների «նամարդ» սպանությունը, որն, ինչպես տեսանք, տեղի է ունեցել 1193-1194 թվականներին Կիլիկիայում՝ Լևոնի ձեռքով, որը նրանց համար, որպես ապագա թագավորի, հայր կարող էր համարվել, բայց որը նախանձում էր Պահլավունի-Մամիկոնյանների անվան տոհմի մեծ հեղինակությանը: Մենք չգիտենք, թե վեպն սկզբում ինչպես է տվել Ռուբինյանների և թուլացող Պահլավունիների այդ հակամարտությունը, բայց հաստատ գիտենք, որ այդ հակամարտությունը՝ Պահլավունիների համար իր եղերական վախճանով, խորապես խոցել է Պահլավունիներին և Պահլավունիների տան կործանման պատմությունը գրելու հիմնական շարժառիթն է: Այն հանգամանքը, որ այդ ոճից հետո Լևոնը շուտով թագավոր դարձավ, մեր հին պատմագիրներին հարկադրել է լուրջամբ անցնել այդ և նման սպանությունների կողքով, որոնք պատմական անխուսափելիություն են եղել թագի ձգտող ամեն մի խոշոր ֆեոդալի ճանապարհին: Գուցե այդ հանգամանքն էլ պատմագիրներին հաշտեցրել է կատարվածի հետ և նրանք

266 Սասնա Շոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 351:

իրենց հիմնական շեշտը դրել են արտաքին թշնամու դեմ մղվող պայքարի վրա: Ինչպես էլ որ լինի, այս դրվագը հիշյալ երկու (կամ՝ երեք) տների հա- կամարտության անդրադարձումն է:

Բայց Մհերին պատած այս ազնիվ մտատանջությունը, էպիկորեն հա- սարակ ու միամտորեն վսեմ այս տողերը, թե՛ «կանի իմ գուրգ թալեմ իդա քարին, թա կտրեց, ես չմեղավորցիր իմ, թա չկտրեց, զաթի մեղավորցիր իմ», կնճռոտ հարցի այս պարզունակ գերիմաստության և հարազատորեն ժողովրդական լուծումը վկայում է, որ այս եզրափակումը *հեղինակային, անհատական չէ*, այսինքն՝ սկզբնական չէ, այլ էպոսային, սերնդե-սերունդ դարավոր խմբագրման արգասիք, աշխատավոր ժողովրդի մտորումների դարավոր խտացում:

Սակայն այն հատվածում անգամ, որդեսպանության մեղադրանքից հետո էլ, Մհերն այնպես չար չէ, ինչպես անփութորեն ճգնում են մեզ ներ- կայացնել Պստիկ Մհերի ցիկլը պարունակող գրեթե բոլոր պատումները: Ինձ թվում է, որ Մհերն իզուր ամբաստանված է այն քայլի համար, որի պատճառով ամբաստանվել է նաև Մլեհը՝ թուրքման ցեղախմբերի հետ ժա- մանակավոր դաշնակցության համար: Պատումների մեջ Մհերը մեծ մա- սամբ օտարության մեջ, այլակրոն միջավայրում է գործում, նա օտարության մեջ է ծնվել. հաճախ ընկերակցում է ինչ-որ դևերի, ապա ծառայում այլա- կրոն թագավորի, բայց կան պատումներ, որտեղ պարզորոշ պահպանվել է «ցեղախումբ», այն էլ թուրքման ցեղախումբ անունը (էլ, էլիկ, էլ-աղասի): Այսպես, պառավը, որ գերծ է հայ կղերական պատմագրության փափ- կանկատություններից, Մհերին կշտամբում է այն բանի համար, որ նա չի կարողանում իր նախահայրերի նման օգտագործել թուրքման ցեղերի գո- րական ուժը:

«Վոր դոչադ տղամարդ ես, Ջոջ Մհերի թոռն ես, Աբամելիքի տղեն ես.

Ջոջ Մհերը գնաց Թուրքման ավերեց, ելը բերեց,

Մկա դու իշտա՞մ դոչադություն ես անում.

Մարամելիքն անիծեց քու խերիկ, մերիկը,

Տարավ Թուրքման ելը, տարավ մամիկդ,

Տարավ խազինեն, տարավ Քուռկե Ջալաթը:

Ղոզբեկն եկավ, ձեր վեց ախպորը տարավ յեսիր,

Տարավ քեռուդ տված ելը,

Տարավ դրեց Արաբստունը...»:²⁶⁷

267 Սասնա Շոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 127:

Կամ թե, երբ Դավիթը (Մհերն այստեղ դարձել է Դավիթ) գնում ու գտնում է իր էլը.

«Ետ Ել-աղասին մարդ դրկեց, դանչեց ելիկին.

– Ելիկ, – ասավ, – եսի Դավիթն ա,

Մեր թագավորի տղեն ա:

Մարամելիք եկավ, էստոնց յեսիր արավ, տարավ.

Մկա քնսրբցե, եկե մեր կուշտը.

Անմենքս մե գատ ընծա տանք,

Վոր տանա, լիանա:

Հելան անմենքը տավար տվին,

Քեչա տվին, վոչխար տվին,

Բերին Ել-աղասու դռան դեմը կոլոնին...»:²⁶⁸

Սակայն Դավիթը հրաժարվում է նվերներից, նրան հարկավոր է ոչ թե նվեր, այլ իր էլիկը.

«Դավիթ կ'ասա, – Բարցնք,

Յես եկեր եմ՝ ձեզի տանեմ»:²⁶⁹

Պատմությունն ասում է, որ երկու դեպքում էլ, երբ հայ իշխաններ Մլեհ Ռուբինյանը և ապա Շահնշահ Սասունցին իրենց հետապնդած նպատակ- ների համար օգտագործում են թուրքման ցեղերի զորական ուժը, ապա այդ ակտերը կատարվում են Հալեբի թագավորության տարածքում, որտեղ խաչակրաց ընդհանուր թուլության, իսկ Բյուզանդիոնի ժամանակավոր գե- րութության այդ շրջանում՝ XII դարի երկրորդ կեսին, որոշ հայասիրական տրամադրություն էր ստեղծվել: Սակայն հայ եկեղեցու՝ որպես գաղափա- րախոսական կազմակերպության համակրանքը արևմտյան խաչապաշտ- ների կողմն էր: Էպոսը, չբաժանելով հանդերձ Արևմուտքի նկատմամբ տածված այդ կույր ու կործանարար պաշտամունքը, խաչակիրներին դիտե- լով որպես իր ազգային հերոսի թշնամիներ, այնուամենայնիվ, իր տուրքն է տվել արդեն կարծես թե ազգային դարձած այն ամբաստանությանը, որ հայ կղերամիտ պատմագրությունը բարդել է հայ քաղաքական կյանքի բո- լոր քաղաքագետ գործիչների վրա, սկսած Արշակ II-ից մինչև Մլեհ:

Անհավանական չի լինի ենթադրել, որ գուցե գոյություն է ունեցել նաև Մլեհի առանձին վեպ, որը հետագայում միահյուսվել է Պահլավունիների տան պատմավեպին՝ Շահնշահ Սասունցու անունը դարձնելով Մհեր:

268 Լույս տեղում, էջ 131:

269 Լույս տեղում:

Է. «ԽԱՀ ՊԱՏՐԱՍԻՆ»

Հոբելյանական հրատարակության երկրորդ հատորի երկրորդ մասի ծանոթագրությունների մեջ այս արտահայտության համար իբրև բացատրություն գրված է. «Այս խաչը կոչվում է զանազան անուններով, ինչպես, որինակ՝ *Խաչ Պատրաժին, Խաչ Պատրազին, Խաչ Պատրաստի, Խաչ Պատրազմին, Ման Խաչ, Սուրբ Նշան*: Պատրազին կամ պատարազին բառի ստուգաբանությունը պարզ չէ: Դա ընդհանուր փոքր-ասիական և կովկասյան բնույթ է կրում (հմմտ. Ոսական (=ալանական) ժողովրդական վեպի հերոս Բատրազ, Պատրազ կամ Պատարազ անվան հետ, վոր սխալ ստուգաբանում են Բատր-աս, այսինքն՝ ոսական փահլեվան. կա նաև խետտական Պատարազ անուն և այլն): Սա պատկերացվում է իբրև հերոսի թեմին կապած կամ թեմին դրոշմված մի խաչ, վոր համայնի (հմայելի, թալիսմանի) դեր է կատարում և կոչվում է հենց նաև «համայնի սուրբ խաչ»: Դրա մեջ միացված են քրիստոնեական ու հեթանոսականը: Այդ խաչը հերոսին տալիս է մեծ ուժ և պաշտպանում է նրան հարվածներից, – մի նախնական հավատալիք, վոր շատ տարածված է և յերեվան և գալիս շատ ազգերի վեպերի մեջ, որինակ՝ ռուսական բլիսններում Մուրոմցի Իլյայի “Обереч чужден крест”-ը: «Համայնի սուրբ խաչը» Սանասարը ձեռք է բերում ծովի տակին: Դա ժառանգական է և պահվում է Սասնա տանը, ինչպես և Թուր Կեծակին, Բուռլիկ Զալալին և հերոսական [զ]գեստերը»:²⁷⁰

Կարծում եմ, որ հարկ չկար անհանգստացնելու ո՛չ հեթիթներին և ո՛չ էլ օսերին, ինչպես նաև վկայաբերելու Իլյա Մուրոմցին կամ թե «ընդհանուր փոքր-ասիական և կովկասյան բնույթ» տեսնելու այստեղ, երբ հեղինակները գիտեն, և իրենք են գրել, թե «մեր ժողովրդական վեպը հիմնականում կազմվել է մինչև XIII դարի կեսերը», իսկ դա Խաչակրաց արշավանքների ալեծուփ դարաշրջանն էր, երբ մուսուլմանական Մարում, ինչպես նաև Հալեբում վարձկան զինվորական ծառայության գնացող խաչապաշտ սասունցին Սասունից Մըսր տանող ճանապարհին չէր կարող չտեսնել հեռավոր արևմուտքից եկող Ֆռնտա-Բուեթի և Պապը ֆրենկի զորքերին, շարունակ չլսել նրանց մասին, որոնց թնին, կրծքին կամ մեջքին խաչ կար նկարված: Իրենք չէին կարող խաչ կրել, թեև ավելի լավ խաչապաշտներ էին, քան այդ արկածախնդիրները, որոնք ըստ էության, ըստ սասունցու ըմբռնողության, օրինակելի խաչապաշտներ էլ չէին, սակայն ցուցադրական ջերմեռանդու-

թյամբ արտաբուստ խաչ էին կրում իրենց հագուստի վրա: Ըստ սասունցու ըմբռնողության՝ նրանց խաչն արտաբուստ էր, ցուցադրական և միայն այդքան, իսկ իր խաչը ներքուստ էր, հագուստի տակ, մարմնի վրա՝ մտն:

Այս եզրակացությունը մեր կողմից ոչ թե մի համարձակ ենթադրություն է, այլ ինչպես էպոսի բազմաթիվ պատումների վկայությունների, այնպես էլ «պատրազին» բառի ստուգաբանության վրա հիմնված հետևություն:

Նախ և առաջ դիմենք հենց այն պատումին, որից բերված է ծանոթագրություններում նշված Սանասարի օրինակը: Հերոսին խրատ տալուց առաջ, թե շարունակ հիշիր «պարոն Տեր Ներսեսի» հետևյալ «աղոթքը».

«Հիշի խացն ու կինին, Տեր կենդանին,
Մարութա Պանցր Ասպածածին,
Վոր խաչ Պատրաստին
Խաչվի Սանասարի աչ թիվին»:²⁷¹

Հերոսի նկատմամբ բարյացակամ կինն ասում է՝ «խոր խամար քեկ՝ասեմ, որ ինորից պատրաստ կենաս միշտ, որ չխապվես ու անդվես»:²⁷² Այստեղ «պատրաստ» բառի գործածության իմաստը պարզ է ու անվիճելի: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ միայն կազմ-պատրաստ փճակի մեջ գտնվելուն, այլև զգուշավոր և ուշադիր լինելուն, որ հերոսը չխաբվի ու պարտության չմատնվի:

Այս իմաստով էլ պետք է հասկանալ.
«Կ'իշեմ խացն ու գինին, Տեր կենդանին,
Որ Խաչ Պատրաստին
Խաչվի Սանասարի աչ թեմին
Ու պախապան կենա Սանասարին,
Յա՛ Մարութա Պանցր Ասպածածին»:²⁷³

Արթնության, զգաստության, կազմ ու պատրաստ լինելու կոչող այս «խաչ պատրաստին» «պատրազ»-ի է դարձել Մոկաց բարբառով գրի առնված պատումների մեջ, որոնց կենդանի բարբառի մեջ «պատրաստ» բառը փոխարինված է օտար «հազըր» կամ «հազիր» բառով: «Պատրաստ» բառը նրանք կարող էին լսել միայն հոգևորականներից ժամերգության կամ որևէ այլ ծիսակատարության ժամանակ: Եվ այդ բառի վերջին «ստ»-ն նրանք կարող էին «զ» ընկալել մեր լեզվի ներքին, չգրված, բայց ուժեղ և

271 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 400:

272 Նույն տեղում:

273 Նույն տեղում, էջ 397:

270 Նույն տեղում, էջ 843:

մինչև օրս դեռևս կենդանի ու գործող այն օրենքով, որով օտարահնչյուն բառերի վերջին «զ»-ն ու «ս»-ն դառնում են «ստ»: Հունական «ալմազ»-ը մեր ժողովուրդն ու մեր լեզուն ընկալել են «ալմաստ»: Անգամ մեր օրերում մեր լեզվի ներքին օրենքներից դեռևս չհրաժարված լեռնցիները օտարահնչյուն «կոլբասա» բառի վերջին ձայնավորը զեղչել են և բառն արտասանում են «կալբաստ»: Գուցե այս օրենքը միայն «զ»-ին ու «ս»-ին չի վերաբերում. ծորակ բառի օտար «կրան» ձևը համառոտ են արտասանում են «կրանթ»: Սա բանասերների գործն է: Ես միայն կարող եմ ասել, որ պատանի հասակում ես ինքս անձամբ Վանի հարավային լեռնաստանի գյուղացիներից «պատրաստ» բառը, երբ նրանք ճգնել են նոր ազդեցությունների տակ հայերենը գործածել՝ լսել եմ մոտավորապես «մեյնք բադրաս(զ) եյնք» ձևով, առոգանությամբ:

Կան, իհարկե, պատումներ, որտեղ այդ արտահայտությունը մենք հանդիպում ենք նաև «պատերազմին», «պատարագին» և անգամ «պատարագին» ձևերով: Վերջին ձևը, անտարակույս, «պատրագ»-ի «պատարագ»-ին դարձած ձևի իմաստաբանական վերախմբագրման արգասիք է, որ կարող են կատարած լինել ինչպես հենց պատմողները, այնպես էլ, մասնավոր, գրի առնողները:

Վեպի հերոսներն աշխարհիկ, զինվորական մարդիկ են: Նրանք կարող են սերած լինել պարոն տեր Ներսեսից կամ մի այլ հոգևորականի դուստրից, սակայն, ինչպես տեսնում ենք պատումների մեջ, նրանք վանք են շինում, նորոգում, բայց վանքը կառուցում են հեռավոր սարի գլխին ու թողնում-գալիս են գյուղ և, կերուխումով տարված, մոռանում են վանքն ու նրա կարիքները: Չկա մի վկայություն, որ նրանք եկեղեցի կառուցած լինեն իրենց տանը մոտիկ վայրում և այնտեղ ջերմեռանդությամբ կատարեն աստվածապաշտության կարգը: Ընդհակառակը, առանձին պատումների մեջ կշտամբանքներ կան Սանասարի ու Բաղդասարի հասցեին, որ նրանք խռովել են... ժամ չեն գնում: Դավիթն էլ հաճախ շատ անփույթ է վարվում իր ծոցում պահվող սուրբ նշանի հետ: Բոլոր պատումների մեջ էլ գլխավոր հերոսի հայրը, հակառակ կատեգորիկ (վճռական) նախազգուշացումներին, կենակցում է «քուրդ անօրենի» հետ:

Ոչ թե էպոսն ու նրա մեզ հասած պատումները, այլ այդ դարերի իրական պատմությունը մեզ ասում է, որ եթե սելջուկների արշավանքների նախընթաց դարերում հայ ժողովուրդը, անգամ Բաղդադի խալիֆայության իրավական ու փաստական գերիշխանության ժամանակաշրջանում, կարո-

ղանում էր հայացնել ու մինչև իսկ խաչապաշտ դարձնել իր միջավայրում ապրող այլակրոններին, անգամ իշխանավորներին, իսկ նրա առանձին գավակները հազվադեպ էին հավատափոխ լինում, ապա սելջուկյան արշավանքների և հետագա դարերում, ընդհակառակը, մեծ ծավալ էր ստացել կրոնափոխությունը մասնավոր հայ ազնվականության մեջ: Մենք գիտենք Փիլառոսի օրինակը, գիտենք Բադրին ու Շահնշահին, Դանիշմենդներին և շատ ուրիշների, որոնց անունը պատմությունը չի պահել: Այդ դարերում էր, որ մինչ այդ քրդությունից հրաժարված ու հայացած Զաքարյանները, վրացական ծառայության անցնելով, ընդունեցին նաև լուսավորչականությունից հեռացած վրացական դավանանքը: Փիլառոսն ու Բադրը կարող էին առերևույթ, հարկադրաբար դավանափոխ լինել, սակայն անկախ այդ ակտի աստատից, նրանց սերունդն արդեն լիովին կհեռանար հայությունից: Այդ դարաշրջանում թե՛ պաշտոնի և թե՛ դեպքերի բերումով հայ եկեղեցուն անդավաճանորեն հավատարիմ էին մնում Պաիվալունիները և նրանց հետ խնամիացած ու սերտաճած Ապիրատներն ու Մամիկոնյանները: Նոր իրադրությունն այնպես էր, որ նրանց տոհմի աշխարհիկ անդամների մեջ ևս կարող էին լինել և արդեն կային ավանդական կրոնն անտեսող անձինք:

Այս տեսակետից խիստ բնորոշ են հետևյալ հատվածները, որտեղ «Խաչ պատրաստին» անմիջականորեն կապվում է «ազգի սաղութնի» հետ, որովհետև նա է միայն, որ կա «հընդամ» (օգնական) Հայվոց ասկին»:

«Խա՛ -

Ասաց Դավիթ, -

Կ'իշամ խացն ու գինին, Տեր կենդանին,

Կը կանչեմ Մարութա Պանցր Աստվածածին.

Վոր Խաչ Պատրաստին խաչվի իմ թեվին.

Յես խասնիմ իմ ազգի սաղութնին.

Երթամ, կոխեմ վեր դուռնընին,

Դառցուցեմ մալերն Աստվածածնին,

Վոր ինոնք չմասն գերի անորենին.

Նորեն շինեմ են եկեղեցին».²⁷⁴

Մի ուրիշ պատումի մեջ.

«Մարութա սուրփ Պանցր Աստվածածին,

Մըսե խաչ վըր յեմ աչ թեվին,

Տո՛ւ կնս հընդամ Հայվոց ասկին,

274 Նույն տեղում, էջ 461:

275 Գլ. 2-րդում մյուս էջ 275
276 Գլ. 2-րդում մյուս էջ 275

Նոր Տավիթին»:²⁷⁵

Ես կարծում եմ, որ այս «Խաչ պատրաստին» իր «Մսե խաչ» սրամիտ ձևով և գործածության դաստիարակչական պահով նույնպես որոշակի վկայում է, որ մենք գործ ունենք ոչ միայն տաղանդավոր, իրազեկ, այլև ազգության պահպանման գաղափարով տոգորված հեղինակի հետ:

Բայց մեր այս թեզի տեսակետից շատ ավելի բնորոշ և պերճախոս է «Վաքիլ» բառի գործածությունը էպոսի մեջ:

Ը. «ՎԱՔԻԼ»

Հորեղյանական հրատարակությանը կցված բառարանում այս բառի դիմաց կարդում ենք՝ «*վաքիլ* - փոխանորդ, վերակացու, հավատարմատար, կառավարիչ, փոխանորդ»:²⁷⁶ Այս բացատրությունները ճիշտ են: Բայց այդ բառը էպոսի պատումների մեջ մենակ «վաքիլ» ձևով չի գործածված: Միայն մեկ պատումի մեջ ենք հանդիպում այդ բառի միայնակ գործածությանը՝ այն էլ «վոքիլ» ձևով: Մնացած բոլոր դեպքերում այդ բառը գործածված է «վազիր» բառի առջևից՝ «վաքիլ-վազիր կայան», «վաքիլ-վազիր ասին» ձևերով և բոլոր դեպքերում էլ ի պաշտպանություն մանուկ Դավթի, իսկ որոշ, նմանօրինակ դեպքերում, երբ «վաքիլ-վազիրը» բառերը չկան, կա «Մսրա մեծամենծները» որակումը:

«Վաքիլ-վազիր ասին»՝ ուրեմն «վաքիլն» այստեղ գերադաս է վազիրից:

Եզիպտոսի պատմությունն ասում է, որ Օմայան խալիֆները Դամասկոսից, իսկ այնուհետև Աբասյան խալիֆները Բաղդադից Եզիպտոսը կառավարում էին իրենց տեղապահների միջոցով, որոնք կոչվում էին վաքիլներ: Հեռավորությունը, երկրի հարստությունն ու ֆեոդալիզմը օգնում էին, որ մանավանդ հեռավոր Բաղդադից նշանակված և ուղարկված «վաքիլները» ապստամբեին և իրենց անկախ հոչակեին, սակայն ամեն անգամ Աբասյանները մի նոր վաքիլ էին ուղարկում և տապալում ինքնիշխան դարձած նախորդ վաքիլին: Դրությունը Եզիպտոսում այսպես է եղել մինչև 969 թվականը, երբ Կայրուանից եկան Ֆաթիմյան խալիֆները և, Բաղդադի վաքիլին վտարելով, իրենց դինաստիան հաստատեցին Գահիրե նոր քաղաքում:

275 Նույն տեղում, էջ 543:

276 Նույն տեղում, էջ 802:

Ֆաթիմյանների օրոք երկրի գործադիր իշխանության գլուխ կարգվում էր վազիր: Մուսուլմանական Արևելքի պատմության մեջ Եզիպտոսից բացի ուրիշ ոչ մի տեղ «վաքիլ» տիտղոսով ավելի բարձրադիր պաշտոնյա չի եղել, քան վազիրը: Եվ «վաքիլ» բառի գործածությունը «վաքիլ-վազիր» ձևով հաստատում է այն, որ սկզբնական պատմավեպի հեղինակը շատ իրազեկ մարդ է եղել, որ կարողացել է այդ բառը գործածել «վազիրից» ավելի բարձր կանգնած աստիճանավորի համար:

Թ. ՔԵՌԻՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Պատմական են անգամ այնպիսի հեքիաթային դարձած դրվագներ, ինչպես քառասուն դևերի սպանությունը և քեռիների կոտորածը: Այնքան, որքան Դավիթը դրական հերոս է՝ օժտված ժողովրդին ծառայելու բոլոր դրական հատկանիշներով, ապա պատումների մեծ մասի մեջ դևերի ոչնչացումը, որոնք վնաս էին հասցնում ժողովրդին, վերագրվել է Դավթին: Իսկ այնքան, որքան Մհերը էպոսի պատումների մեջ դարձել է խղիկ և չարագործություններ կատարող բացասական դեմք, ապա պատումների մեծ մասի մեջ քեռիների կոտորածը վերագրվել է Մհերին: Սակայն կան պատումներ, որտեղ Դավիթն էլ է կոտորում քեռիներին, ինչպես նաև կան պատումներ, որտեղ Մհերն էլ է մեկ կոտորում, մեկ եղբայրանում քառասուն դևերի հետ: Պատում էլ կա, որտեղ Մհերը ոչ միայն չի սպանում իր քեռիներին, այլև նրանց ընկերակցությամբ և աջակցությամբ լուծում է հոր սպանության վրեժը: Քեռիների սպանության և դևերի կոտորածի դրվագները դարերի ընթացքում այնպիսի հեքիաթային գունագեղ երանգավորում են ստացել, որ շատ դժվար է գտնել այդ դրվագների պատմականության կորիզը, բայց և այնպես առանձին պատումների մեջ պահպանվել են ուշագրավ մանրամասնություններ, որոնք հիմք են տալիս համարձակ կռահումների:

Նորբայազետցի Առաքել Շաքոյանի պատումի մեջ Խանդուրը Կաղզվանի Աբաս Միրզայի դուստրն է, որն ունի վեց եղբայր: Մհերը իր վեց քեռիներին ընկերակցելով, շարունակ որսի էր գնում, բայց տունը որս չէր բերում, որովհետև քեռիները նրա ձեռքից առնում էին որսը: Մի անգամ հայրը՝ Դավիթը, որդուն ասում է. «Մհեր ջան, մեկ ավ [որս] ել բե, յեն ուտեմ»:²⁷⁷ Մհերը չի գանգատվել, թե որսը ես եմ անում, բայց նրանք են

277 Նույն տեղում, էջ 159:

տուն տանում, դրա համար էլ «Մեքերը ինստ ա, անում ա» և երբ հետևյալ օրը քեռիները սովորականի նման որսը առնում են նրա ձեռքից, ջղայնանում է ու խփում-սպանում բոլոր վեց քեռիներին էլ: Դավիթն ամոթահար է լինում և Խանդութ խանումին ասում է. «Իմ հերեսը չբռնա, վոր աների հերեսին առնի. Մեքերն էլ թո մնա են վեցի բաղալը [փոխարեն], հելի եթանք մեր յերկիրը»:²⁷⁸ Անցնում է որոշ ժամանակ. Մեքերն առնականանում է, անճանաչելի է դառնում և այդ հողի վրա մենամարտի է բռնվում հոր հետ ու անիծվում նրա կողմից: Այնուհետև Դավիթը մահացու վերք է ստանում Շըմշիկ խաթունի աղջկանից ու մեռնում: Խանդութն էլ ինքնասպանություն է գործում: Սասունը մնում է անտեր: «Քեռի Թորոսը ասում ա. – Մեր խարսից ու մեր տղից թե տղա հելեր ա, աշխարհք կը բրդա»:²⁷⁹

Քեռի Թորոսն ու Ձենով Օհանը գնում են Կաղզվան՝ Մեքերին բերելու: «Աբաս միրզեն կայնավ, չը տվեց: Ասավ. – սուտ չեմ ասում, մեռիր ա»: «Էս էլիկի [ժողովրդի] մեղքը մի բաշա», այնպիսի բարձր ձայն ունեմ, որ գոռալուց հղի կանայքն ու կենդանիները կվիժեն, արի ու մեր տղին տու տանենք: Վերջիվերջո Ձենով Օհանն իր ձայնի ուժը ցույց է տալիս, և Մեքերը թաքստոցից, որտեղ զուռնա էին փչում ու նաղարա զարկում, որ հորեղբոր ձայնը նրա ականջին չընկներ, դուրս է գալիս ու գրկում քեռի Թորոսին, բայց այնպես գրկում, որ «քեռի Թորոսի կողրանք կալավ հիրար, լիզուն լավկավ, ջուր զանին հերեսը, պորտն ոլորին, ոյամիշ հեղավ [ուշքի եկավ], ասավ, – Վոչ ու փուչ մեռնի քու պեստ տղեն: Վերցրին ասին. – Հընչի: Ասավ. – Իմ կողրանքը ճխտեց, ջարդեց: Աբաս միրզեն ասավ. –

– Բա՛, յես իմա՛լ ի, վեց տղիս սըպանեց:

Ասավ. – Յես ինչ անեմ, քու թոռն ա:

Ասավ. – Իտերը [հայրը] վեցի փոխնակ՝

Ետի տըվե ընձի, եկար դու, տանում ես»:²⁸⁰

Ուրեմն, այս պատումի մեջ, որ Ալաշկերտ-Սևանի ավազանի շարքին է պատկանում, առաջին՝ Խանդութը մահմեդականի դուստր է, քեռիները մահմեդականներ են: Երկրորդ, Խանդութի մահմեդական հայրը ոչ միայն հանդուրժում է իր վեց որդիներին սպանողի անպատիժ ներկայությունը, այլև չի ուզում գրկվել իր վեց որդիներին սպանողից, որին հայրը վեցի փոխարեն էր թողել պապի մոտ: Մոկացի Թումաս Պետրոսյանի պատումը պարզում է ամեն ինչ: Այս պատումի մեջ ոչ թե Մեքերը, այլ Դավիթն է սպա-

նում քեռիներին, այն էլ ոչ թե իր հարազատ քեռիներին, այլ Իսմիլ խաթունի եղբայրներին, այսինքն՝ Մարա Մելիքի հարազատ քեռիներին: Սպանությունն էլ կատարվում է ոչ թե Կաղզվանում, Կապուտկողում կամ իր հայրենի Սասունում, այլ Մարում: Եզիպտոսի հայ վեզիրները, ինչպես տեսանք, երկրում խաղաղություն ու կարգ ապահովելու համար անհնազանդ շատ էմիրներ ու այլ բարձրաստիճան անձինք են կոտորել: Սկզբնական պատմավեպը, անտարակույս, խոսել է այդ պատիժների մասին, սակայն հետագայում աղավաղվել են ինչպես տեղն ու ժամանակը, այնպես էլ սպանվողների իրական փոխհարաբերություններն սպանողի հետ:

Ահա այդ գործողության նկարագրությունը: Մարա Մելիքը.

«Թուրն քեշից, վոր Դավթըն տը զաներ,

Մեր կայնավ հառաջ, եսաց.

– Մելը՛ք, եդ ինչ տ'ենիս: ...

– Մերս, ես տվըմ քի խաթըր:

Մերն էլ շատ ուրախցավ, եսաց. – Մելը՛ք,

Վոր դո՛ւ իմ խուսք կ'ենիս, իս շատ կ'ուրախանամ.

Ապա վոր չանիս, զքիզի տղա չըմ ճանչնա:

Մերը [Իսմիլ խաթուն] Դավիթն քան Մելը՛ք շատ կ'ուզի [կսիրեր],

Համա լաճուն բավարաթ չենը [բայց տղային հավատ չէր ընծայում], կ'ըսի.

– Իմ լաճ սարթ ի. իս վախենամ՝ Դավթին սպանի:

Կ'ըլնը, կ'երթա խոր տուն, կ'ըսը.

– Ա՛խպերնիր, դո՛ւ գիտե՛ք՝ ընչի խամար իմ իկիր. –

Մելքի մոր յոթ ախպեր ուներ. –

Մելը՛ք Դավթը՛ մոտեն ըռըկիր ի.

Իս կ'ուզիմ՝ դո՛ւ ամեն որ

Դավիթ տանիք սար, ծի խիտ ավ ենը:

Մեկել որ քեռիքն կը գան,

ԶԴավիթ կը վերցըն, կը տանըն սար»:²⁸¹ Դավիթը շարունակ հաջող որս էր կատարում, սակայն քեռիները յուրացնում էին որսը և նրան ձեռնունայն ուղարկում էին տուն: Մի անգամ էլ իր արած որսն իրենց տուն տանելու համար Դավիթն սպանում է հակառակող քեռիներին:

«Մերն ըլավ գինաց Մելքի մոտ, եսաց.

– Մելը՛ք, դո՛ւ Դավթըն չըր խավըն, արը՛, տիս՛

Դավիթ ինչ վիրու ոխչար ի բիրիր:

278 Նույն տեղում, էջ 161:

279 Նույն տեղում, էջ 166:

280 Նույն տեղում, էջ 169:

Մելըք եկավ եկավ, տըսավ մե ջուջ վիրու ռիսար:

Եսաց. – Դավիթ, դու եկար,

Ապա քեռիք դու՞ր գինացըն:

– Մելիք, եսաց Դավիթ,

Եկանք քնողք՝ քնմակ,

Իմ քեռիք իմ մոտեն կը խին վիրու ռիսար.

Իս իմ քեռիք շարտիմ դեն...

– Մարե՛, եսաց, քո ախպերքի սպանիր ի:

Մեր չավատաց, համա Մելըք հեկավ վագից, գինաց. ...

Մելըք վոր խասավ, տըսավ՝ քեռիք չուրցած ի,

Հեկավ հընդոց, դարձավ, եկավ տուն, եսաց.

– Մարե՛, Աստված քո տուն ավիրա,

Քո ախպերքի սպանիր ի:

Խաբար տվըց, գինացըն, քեռիք բիրըն, խուրըն [հորեցին, թաղեցին]:²⁸¹

Մահմեդական երկրներում սասունցիներից հավաքագրված զորքը սովորական վարձկան զորք չէր, որ խաղալիք դառնար առանձին էմիրների ձեռքին, այլ կանոնավոր բանակ, ամբողջ երկրի, այդ թվում՝ նաև եգիպտահայ հզոր գաղութի տնտեսական ու մշակութային կյանքն ապահովող բանակ: Հայկական զորքով Մըսր մտած Բաղրի մասին իրենք՝ արաբ պատմաբաններն են գրում. «Մըսրցի մեծամեծներէն, գատիներէն և վեզիրներէն շատերը մեռցուց... Տամիթի, Աղեքսանդրիոյ, Ղարաիյէի, Շարգիյէի, Վերին Եգիպտոսի քաղաքներուն, Ասուանի, Գահիրէի և Մըսրի մէջ սպանուածներէն դուրս, ան Պուհերայի ժողովուրդէն մօտաւորապէս 20 հազար հոգի մահացուց: Այսուհանդերձ, շէնցուց և բարեկարգեց երկիրը, որ արուած և քանդուած էր տեղացի չարագործներուն աւերումին երեսէն»:²⁸²

Անհնազանդ, կենտրոնախույս, կարգը խանգարող տարրերի հետ Բաղրի նման խիստ վարվեց նաև Վահրամ Պահլավունին: Հաֆիզ խալիֆի բերված սամակները վկայում են, որ Վահրամ Պահլավունու գործադրած խիստ միջոցառումներից երկիրը շահում էր ու հարստանում, իսկ Սալահեդդինի դուգի թուրքերի և քրդերի խժոժություններից Եգիպտոսն այնպես տուժեց, որ 80 տարով կորցրեց իր առաջատարությունը արաբական երկրների թվում ու դարձավ Դամասկոսի հպատակ:

281 Սասնա Շներ, հ. Ա, էջ 388-392:

282 Գէորգ Արսրլեան, նշվ. աշխ., էջ 25-26:

Ես կարծում եմ, որ այսպիսի քեռիների՝ Իսմիլ խաթունի եղբայրների ոչնչացումն է, որ հետագայում հեքիաթի է վերածվել պատումների մեջ: Միևնույն ենթադրությունն ունենք նաև դերի ոչնչացման մասին: Տեղը, ժամանակը, երանգն ու պատճառաբանությունը միշտ էլ կարող են փոխվել և փոխվել են, սակայն պատմական ճշմարտության կորիզը պահպանվել է: Դերի աշխարհագրական տեղադրումը համընկնում է Դիարբեքի Օրթոկյանների հողերին՝ Բաթմանա կամրջի մոտ:

Ժ. ԱՉՆԱՆՑՈՐԴԻՆԵՐԸ

Կռապաշտ թագավորի տուն հարս գնացած պարոն Տեր-Ներսեսի դուստրը՝ Սանդուխը, հղիանում է ո՛չ թե ծովից, այլ ավերի մատնացույց արած «անմախական աղպուրից»: Սակայն ոչ միայն նա ու նրա ձին են հղիանում այդ աղբյուրից, ոչ միայն այդ աղբյուրի մոտ են կառուցում «Մարութա պանցր Ասպածածին վանքը», այլև հետագայում Մասնո տան բոլոր սերունդներն էլ, որոնք հանդես են գալիս էպոսում, հսկայի ուժ են ստանում միայն այդ անմահական աղբյուրի ջուրը խմելով: «Շատ մի գմբմանա, – ասում է տառը, – մի գիրք ըմ կա. ինոր մեջ գրուկ ի գաթի [արդեն], թե վով վոր են ախպրի ջրից խմի՝ շնոխք ու գորություն կ'առնի»:²⁸³

Մի քանի այլ պատումների մեջ աղբյուրը դարձել է ծով, ծովի հատակ, հերոսուհին՝ Ծովինար: Ազգագրական վերհուշեր որոնողները ջրային աստվածության ուժն են տեսնում այստեղ՝ նրա պաշտամունքի անհրաժեշտությունը ռոռգման ջրի կարոտ Հայաստանում: Ինչ խոսք, որ բազում դարեր շարունակ սերնդեսերունդ և բերնեբերան պատմվող վեպին կարող էին միահյուսվել ջրային աստվածության շուրջը հյուսված շատ հնագույն առասպելներ: Մենք ամենևին միտք չունենք նսեմացնելու մեր էպոսը, որ ազգագրական ուշագրավ արժեքների անսպառ շտեմարան է: Բայց այնքան, որքան մեզ հետաքրքրում է միմիայն էպոսի պատմականության հարցը, ապա չենք կարող չարձանագրել, որ պատումների մեծ մասում հանդես է գալիս ոչ թե ծով ու Ծովինար, այլ մի գարմանալի բարակ, բայց շատ ուժեղ ջուր, որ բարձր սարերից է գալիս ու թափվում մեծ ջրի մեջ, սակայն երկար ժամանակ չի խառնվում այդ մեծ ջրին:

«Տեսան որ՝ գետ մի կ'իգեր, կ'ընցեր.

283 Սասնա Շներ, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 406:

Առու մի ընդին կ'իգեր,

Կը զարկեր մըջ ըդ գետին

Կը կտրեր զըդ գետ ու կը շերտեր չոր ի մեջտեղ,

Ու հըպա մ'լե կը խառնվեր մեջ ըդ գետին ու կ'երթեր»:²⁸⁴

Պատումների մեծ մասի մեջ «ըդ աղբրի ջուր՝ լույն մի ջուր է. կ'իգա, կը կտրե թըմամ զուր տկու առուն»: Պատումների մեծ մասը վկայում է «թը. – որն որ զդա ջրի ակն գտնե ու զուր տուն լե սուկի [կառուցի] վըր իդա ջրին, ընդրա ավադ լե [սերունդն էլ] որ էղնի՝ հըմլա զորեղ կ'էղնի»: Հեղինակը (կամ թե հեղինակները) կարիք է ունեցել դիմելու այլաբանության, որն առհասարակ գրական ամենատարածված եղանակներից մեկն էր այդ դարերում, մանավանդ Հայաստան երկրում, որը կորցրել էր իր քաղաքական անկախությունը: Շատ պատումների մեջ ինչ-որ առանձնահատուկ խորհրդավորությամբ ու ակնածությամբ հիշատակվում են ազնանցորդիները, որոնք շարունակ օգնության են հասնում հերոսին, որը նույնպես ազնանցորդի է: Տարակույս չի կարող լինել, որ պատմավեպն այդ տերմինի գործածությամբ նկատի ունի հայ թագավորական տների ու Պահլավունիների՝ Սասուն ապաստանած վերջին զարմերին: Այաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումը, որ լավագույն պատումներից մեկն է, մեծ լույս է սփռում այս առեղծվածի վրա: Մանուկ հերոսը հարցնում է.

«– Քեռի, յես մի բան տեսեր իմ,

Զարմացեր իմ եղոր վըրեն.

...Քեռի՛, բարակ ջուր մի գ'իկա,

Հըրեն են սարու գլխեն գ'իկա.

Գ'իկա, կը զարնու գետին, կը կդրե,

Նոր կ'երթա էն գետի հետ:

Եդ իմալ ջուր ա:

Քեռի Թորոս վերցուց, ըսեց.

– Լա՛ն, եդ ջուր Ազնանցորդու ջուր ա,

Վորնոր եդ ջրեն խմա,

Ընդըրեն Ազնանցորդի գ'ելնի.

Ընդոր մեճկ գետին դնող չեղնի»:

Եվ ապագա հերոսը մանուկ հասակից երդվում է.

«– Հացն ու գինին, Տեր կենդանին,

Եդ ջրի ակ որտե՛ս եղավ,

Մըր տուն հոնի կը շինիս»:²⁸⁵

Հարկ կա՛ն արդյոք վերստին հիշեցնելու արաբ պատմագրի վկայությունը, թե «Այդ գերդաստանին պատկանող անհատներ կան Խլաթի կողմերը միայն»:

«Շատ կ'սնց, քիչ կ'սնց, խասավ Մարութա պանցր սարի մոտ, նստավ են (երագում ավտորի մատնացույց արած – Հ.Թ.) մղբրի մոտ, լվնցվավ, խմավ ինոր ճրից, ուր ծիուն ել խմըցուց, ինք նստավ կերավ ու խմավ, ծին ել չնայիրի մեջ թողեց արածալու»:²⁸⁶

Այստեղ անհրաժեշտ է հիշեցնել, ինչպես արդեն հարևանցի ասել ենք, որ Կապադովկիայում հույների ձեռքով ջախջախված Բագրատունիների և Արծրունիների բեկորները, Հռոմկլայի Պահլավունի կաթողիկոսների ընդհանուր հովանավորությամբ, XI դարի վերջին տասնամյակներին ապավինում են Բարսեղ (Վասիլ) հայ իշխանին պատկանող Եդեսիան: Մերձավոր Արևելքի հայ, ասորի և այլ քրիստոնյաների մեջ Խաչակրաց առաջին արշավանքի առաջ բերած ոգևորության ընդհանուր շրջանում, կուրորեն հավատ ընծայելով խաչակիրների դրոշների վրա գրված վսեմ նպատակներին, 1098 թվականին Եդեսիան գրեթե կամովին հանձնվեց ֆրանսիացի խաչակիրներին: Այդտեղ ապավինած հայ իշխանների զարմերը շուտով իրենց կաշվի վրա զգացին, որ ֆրենկներն ավելի լավ չէին հույներից. ֆրենկները թեն չէին կոտորում հայ իշխաններին, բայց նրանցից խլում, բռնաբարում էին նրանց կանանց ու խրախճանքներ կազմակերպում օղասուն վայրերում՝ անպաշտպան թողնելով քաղաքը: 1144 թվականին Զանդյաններն օգտվեցին առիթից և հանկարծակի գրոհով գրավեցին Եդեսիան՝ կոտորելով նրա քրիստոնյա բնակչությանը:

Եդեսիայի անկումը ողբացող Շուրհալին, որը հույժ իրագեկ էր այդ բոլոր իրադարձություններին, դառնորեն հարցնում է.

«Արդ՝ ու՛ր գահոյք՝ թագաւորի,

Վաղարշապատ՝ քոյ քաղաքի.

Կամ նախարարք ըն արքայի,

Արարատեան ըդ գաւառի.

Ու՛ր են իշխանք՝ որք առաջին,

Կամ զինակիրք որք են վերջին...»:²⁸⁷

285 Նույն տեղում, էջ 261:

286 Սասնա Շռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 393:

287 Ողբ Եդեսիոյ յօրինեալ Տեառն Ներսիսի Կլայեցոյ երանաշնորհ հայրապետի Յայոց, Տփլիս, 1829, էջ 13:

284 Սասնա Շռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 9:

Սա սովորական բարառություն չէ, ինչպես սխալմամբ հասկացել են ոմանք. հայ նախարարական պետականության վերջին մոհիկաններն իրոք որ գտնվում էին Եդեսիայում:

Եդեսիայի նախկին տեր Բարսեղի (Վասիլի) մասին, վերջինիս մահվան (1112 թ.) առիթով, Մատթեոս Ուռհայեցին, որն ապրում էր այդ նույն քաղաքում (Եդեսիա-Ուռհա), գրում է. «...և եղև սուգ սաստիկ ամենայն տանն Հայոց, վասն զի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պահլավունեացն և որդիք թագաւորացն Հայոց, և ամենայն ազգն Պահլավունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն Հայոց առ նա կային հանգուցեալ մեծաւ փառաւորութեամբ. և արոռ հայրապետութեանն Հայոց առ նա եղաւ»:²⁸⁸

Հույներից արդեն վաղուց, իսկ խաչակիրներից հենց նոր հուսախար ու զգված հայ հին նախարարական տների զարմերի՝ «զինակիրք որք են» «վերջին»-ի համար Եդեսիայի անկումից հետո ապաստանի միակ վայրը մնում էր Խլաթի թագավորությունը, որովհետև այդ թագավորությունը թշնամի էր Սիրիայում ուժեղացող քրդական դինաստիաներին և նրանց հետ սերտաճած դուզի-թուրքերին: Բնականաբար նրանք պիտի անցնեին Սասուն: Հիշենք, որ երկու տասնամյակ հետո՝ 1164 կամ 1165 թվականին, կամովին (թե այլ կերպ) Խլաթի վասալներ էին դարձել նաև Վասպուրականում (Ամյուկում) դեռևս մնացած և նույնիսկ «արքաուն» կոչվող Արծրունիների վերջին մոհիկանները և Սասունում դեռևս կիսանկախ մնացած Չորտուանեյները, որոնք Մամիկոնյանների հետնորդներ էին համարվում և սերտաճել էին Պահլավունիների հետ: Ինչպես տեսանք, հայ պատմագրությունը տալիս է միայն Խեղենեկի (Արծրունու) և Վիգենի (Չորտուանեյի որդու) անունները: Միխայել Ասորին առանց անունները տալու խոսում է դեռևս կիսանկախ մնացած հայ իշխանների կամովին Խլաթի վասալ դառնալու մասին: Վասալի այդ վիճակը չէին կարող չբաժանել նաև Սասունին հարակից Ռշտունյաց աշխարհի տերերը: Այսպիսով, XII դարի երկրորդ կեսին, սկսած 1144 թվականից մինչև 1165 թվականը, այսինքն՝ Եգիպտոսում հայկական զորքի հիմնադրման ու գոյության երեսնամյակի շրջանում (1140-1172 թթ.), Սասունն ի վիճակի էր գորական շարունակական համալրում տալու Պահլավունիների եգիպտական ձեռնարկությանը: Անշուշտ, Սասունում կենտրոնացած հայ ոչ բոլոր իշխաններն ու նրանց ազատները հանձն կառնեին արձագանքելու Պահլավունիների այդ ձեռնարկությանը՝ ինչպի-

288 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 323-324:

սի վճար էլ նրանց խոստացվեր: Հեռավոր, անհույս ու անհեռանկար զինվորական ծառայությունից հրաժարվող հայ իշխանները լծվում են խաղաղ մշակութային շինարարության, և նրանց կենտրոնավայրը դառնում է Ս. Առաքելոց (Ղազարի) վանքը, որը հայ լուսավորության՝ այդ ժամանակվա գլխավոր օջախն էր: Հենց այդ ժամանակ՝ XII դարի վերջերին և XIII դարի սկզբներին, Մեծ տիտղոս ստացավ այդ վանքի վանահայր «հռետոր հայոց Պողոսը», որի աշակերտները դպրոցներ էին բացում հայ բնօրրանի գանազան մասերում՝ օգտվելով ամենաչնչին հնարավորություններից: Ներսես Մշեցին (1284) Առաքելոց վանքից գնաց Վայոց ձորի Գլաձորի վանքը, որը նշանավոր դարձավ Ներսես Մշեցու աշակերտի՝ Եսայի Նչեցու (Սասունի Նիչ գյուղից) ուսուցչության օրոք: Այս երեքն էլ լուսավորության նշանավոր գործիչներ են, որոնք բարձր էին գնահատում հունական նախաքրիստոնեական փիլիսոփայությունը: Առաքելոց վանքը բնականաբար նաև հայ գրչության կենտրոնն էր այդ ժամանակաշրջանում: Գարեգին Սրվանձտյանը գրում է, որ «Բաւական թուով Աւետարան կը գտնուի, զորս կ'անուանեն «Սասունցի Աւետարան»... Ի Սասուն գրեալ լինելուն կամ Սասունցի աւետարանէ մը գաղափարելուն համար: Ամէնքն ալ հրաշագործ հռչակեալ: Իմ տեսածներէն ամենէն շքեղն է Ապուշեկի եկեղեցոյն «Սասունցին»»:²⁸⁹

Ալիշանը անդրադառնալով այդ վանքն անմիջականորեն հովանավորող Չորտուանեյների զարմերին, XII դարի վերջին տասնամյակների Սասունի մասին գրում է. «...զարմանալի իմն է՝ այն խորտուրորտ անհարթ անձանթ, քրդաբոյն երկրի մէջ՝ այսպիսի ազնիւ արեամբ, սրտիւ և հոգով անձանց գտնուիլն այնպիսի ատեն, նման այն պայծառ գունագոյն ծաղկանց, որ թէ և քարանց մէջ բուսնին, բայց պարտիզաց ծաղիկներէն թերեւս ատելի ակնախտիդ երեւին: Նկատելի է եւս այդպիսի կէս վայրենի խորշերում՝ ոչ միայն Հայոց հին ազնուականաց սերունդներ գտնել, այլ և այնքան իշխող և տէր, մինչեւ իրենց կանանց այլ կոչուիլ Թագուհի՝ հայ և արաբ լեզուաւ: Ո՛րքան պէսպէս թաքուն գանձք կան եղեր այնպիսի հայրենեաց մէջ»:²⁹⁰

Բազմաժանր Ալիշանն այստեղ մի վրիպում է թույլ տալիս: Խլաթի թագավորությունը սելջուկ Սուլթանների տիրապետության ժամանակաշրջանում (1100-1208 թթ.) մաքրված էր քրդերից, որոնք թշվառ-հեռացվել էին այդ թագավորության տարածքից: Հիշյալ ժամանակաշրջանում այդ երկրամասը դեռևս «քրտաբոյն» չէր: Ընդհակառակը, այդ երկիրը դարձել

289 Գ. Վ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, մասն Բ, 1884, էջ 308:

290 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 391:

էր «Ազնանց տուն», այնտեղ էին հավաքվել «Ազնանց որդիները»: Չենք կարող չենթադրել, որ «Ազնանց որդիներ» ընդհանուր անվան տակ ի սկզբանե հասկացվել են հայ հին նախարարական տների՝ Սասուն ապավինած զարմերը:

Պարտված, մահվան դատապարտված, բայց վրացական գերիշխանության տակ արթնացող Հյուսիսային Հայաստանը կամ թե նորելուկ Ռուբինյանների վերելք ապրող Կիլիկիան համառորեն մերժող հայ հին նախարարական տների՝ Խլաթի թագավորության սահմաններին ապավինած այդ զարմերը, աղքատանալու հետևանքով, բնականաբար, իջնում ու հավասարվում էին հասարակ ժողովրդին, որն օտար տիրապետության պայմաններում բռնել էր ազգովին երրորդ դաս դառնալու ուղին: Այդպիսով, բարենպաստ հող էր ստեղծվում Վերածննդի վերելքի համար, որ պայմանավորված էր ոչ թե քաղաքական անկախության առկայությամբ, այլ դրա բացակայությամբ: Հայ ժողովրդի համար նորից վերականգնվում էր ազգի հոգևոր ուժերի բուռն զարգացմամբ օտար լծին հակադրվելով սեփական գոյությունը պահպանելու միակ հնարավոր պատմական ուղին: Սակայն այս անգամ միանգամայն նոր պայմաններում, երբ հայ ժողովուրդը քաղաքական խիստ անբարենպաստ իրադրության բերումով, կրկնում են, կանգնել էր ազգովին երրորդ դաս դառնալու ճանապարհին: Նոր իրադրությունն ու նոր վիճակը ստեղծում էին նոր մտայնություն, ոչ թե առանձին ֆեոդալական տների իրարամերժ ու ապակենտրոնացնող, այլ ժողովրդի ընդհանրական, այսինքն՝ ազգային շահերն արտահայտող ու արտացոլող մտայնություն, համազգային տրամադրություններով տոգորվելու մտայնություն: Դրանից էր բխում նոր հայրենասիրությունը, առողջ, ինքնաբնականապես տող հայրենասիրությունը, որի առաջին մեծատաղանդ երգիչը Շնորհալին է, և որով տոգորված է «Սասունցի Դավիթ» էպոսը:

Իր հայրենի հողում հայ ժողովուրդը բազում դարերի ընթացքում կերտում է իր խաղաղ բարեկեցությունը: Գալիս են վաչկատուն հորդաները, ասպատակում, ավերում են նրա երկիրը, սպանում ու կողոպտում նրա խաղաղ ու խաղաղասեր բնակիչներին: Այդ անիրավությունն այնքան աղաղակող է ու անմիտ, որ բողբոջում են անգամ ասպատակողների բանակին պատկանող առանձին հազվագյուտ ողջախոհները:

«Վաքիլ-վազիր ասին.

– Թաքավերն ապրած կենա,

Ենիկ քո խազինեն, դափինեն [գանձը] չի տարե,

288 Անտոնյան Խաչատրյան, մատենադարան, էջ 322-324: 188-97, նախաբաժնի, ձեռնյակ F 995

Քեզիկ մե վնաս չի տվե,

Գացեր է իր քեռիքի քով.

Քեզիկ ինչ ա արել, վոր գլուխը զարկես»:²⁹¹

Այդ անիրավությունների պատճառով խաղաղ ժողովուրդը լքում է իր հայրենիքը.

«Գացին, հասան Կապուտկողը, ասավ [քեռի Թորոսը].

– Դավիթ ջան, մեր խին վաթանն [հին հայրենիքը] ես ա,

Լավ տեղ ա, վատ տեղ չի:

– Բա դուք հընչ եք գացե Սասուն:

Ասավ. – Մարամելիքի ահուն ենք փախե»:²⁹²

Ուժերի անհավասարությունը կռվի դաշտում, որ պարտություն էր բերում հայ ժողովրդին, արդյունք էր ոչ այնքան թշնամու թվական գերազանցության, որքան այն բանի, որ վաչկատուն թշնամին իր հիմնական զբաղմունքի՝ խաշնարածության և իր բռնի կենցաղի բերումով կռվի դաշտ էր դուրս գալիս իր բովանդակ ուժերով, այսինչ դարավոր նստակեցությունը, հողագործությունն ու արհեստները հային կապել էին իր տուն ու տեղի հետ և դարձրել խաղաղասեր նստակյաց: Դեռ Փավստոս Բուզանդն է դառնությամբ արձանագրել, որ «անբնակ», «վաչկատուն», «խառնիճաղանճ» ցեղերը հրաժարվում էին Հայաստանից հնչող խաղաղասիրության կոչերը լսելուց, բանի որ եթե չհափշտակենք, ավար չառնենք, ուրիշների ունեցածը չթալանենք, հապա ինչով պիտի ապրի մեր զորքերի բազմությունը, – առարկում էին նրանք: Բուզանդը նկատել է նաև այն, որ ի դիմաց այդ «անբնակ» ժողովուրդների, հայ զորքը ձանձրանում էր մեծ անցումներ կատարելուց, որովհետև «հայ մարդու բնական սովորությամբ կարոտում էր իր տուն ու տեղին»:

Այս տխուր կողմը սկզբնական պատմավեպից մնացել է նաև էպոսի առանձին պատումների մեջ:

«Յես սասունցիներու սովորութենն լավ գինամ [գիտեմ], – ասում է հերոսը, – ուրանցից մեկն ու մեկն որ կռվու դաշտն կը սպանվի, կը թողան կռիվն ու տուն կ'երթան»:²⁹³

Սա նշանակում է, որ հայը նահանջի տեղ ունի՝ իր խաղաղ, բարեկեցիկ տունը, այսինչ վաչկատունի տունը իր վաչն է, իր շարժական բանակ-հորդան. նա նահանջելու տեղ չունի:

291 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 335:

292 Նույն տեղում, էջ 129:

293 Նույն տեղում, էջ 222:

Նման պայմաններում հայ հերոսը պետք է մենակ կռվի գնա:

«– Երթալն աղեկ, – ասում է նա, – աման վճի պիտի ելնի ձիկ ինկեր:

Սանդուխն ասաց.

– Սասնա կտրիճներ ինկերի պետք չունեն. ուրենց ինկեր ուրենք մենակ ելնելու յեն»:²⁹⁴

Ջատագովության հետ միասին որքան դառնություն ու կշտամբանք կա այս խոսքերի մեջ: Սրանք հետամուտ մտքեր չեն, այլ դառնացած հեղինակի փորձի, դառը փորձով կերտած աշխարհայացքի խոստովանություն: Ֆեռդալական մասնատվածության արգասիք անմիաբանության անդրադարձում ենք մենք տեսնում այստեղ: Տնտեսաքաղաքական միավորող կենտրոնի բացակայության հետևանքով, որ մեր պատմության ամենատխուր կողմն է եղել միշտ, կերտված դարավոր կենտրոնախուսության մի վկայություն է սա, որը շատ տեղերում ծնել է միայնակության բնորոշ գիծը՝ ընդհանուր կարգապահության անտեսում, նաև յուրօրինակ համառություն: Թշնամիները, ըստ երևույթին, ավելի լավ են տեսնում այդ պակասությունը:

«– Եսաց [Մարա Մելիքը]. – Մարե, ան կառամաժի [իր ասածի] ազգն յի.

Խոսք մտիկ չննի. հոլ դպնի, սպանի...»:²⁹⁵

«– Մերիկ, կ'ըսը, են ազգ չուրակուղ ին.

Չըմ կարնա տանը խիտ [չեմ կարող տանել ինձ հետ]»:²⁹⁶

«Եսաց. – Մարե, եղա ազգ,

Եսաց, խաստակուղ [հաստակող] ազգ ի,

Մի [մեր] գլխուն բալա [փորձանք] տ'ըլնը, եսաց,

Ել վըջ չկըտըրը [ապարդյուն է], ինկիր ինք [ընկել ենք] մեջ»:²⁹⁷

«Եսաց. – Մարե, խատ ձի [ինձ հետ] կը տանիմ,

Ամա զինք խաստակուղ ազգ ի,

Վախսանամ, մեկ պատիճ բիրի միր գլոխ»:²⁹⁸

Այս բացասական գծերն են, որոնք հայ ժողովրդին զրկել են քաղաքական իշխանության գլուխ կանգնելու ընդունակությունից:

294 Նույն տեղում, էջ 412:

295 Սասնա Շոեր, հ. Ա, էջ 63:

296 Նույն տեղում, էջ 386:

297 Նույն տեղում, էջ 166:

298 Նույն տեղում, էջ 169:

Հայ հերոսը գնում է և ուրիշի համար մեծ սխրագործություններ է կատարում, ինչպես Բադրը՝ Եգիպտոսում, օտարի օրինական թագավորին ազատում է նրան սպառնացող բոլոր դևերից և ասում է.

«– Քնի դո՛ւման սպանըցը,

Արխային թագավորութին երա:

Եսաց. – Վոր տո՛ւ սպանիցըր,

Թագավորութին քո՛ւն ը, քի վայել ի:

Եսաց. – Չե՛, իս Դավթի տղեն Մհերն իմ,

Իս չիմ կերի [կարող] եստեղ նստը.

Նա ժառանգ կա ընձը, նա մախ ունիմ»:²⁹⁹

Պատմավեպը, այսպիսով, տեսնում է իր ժողովրդի պոտենցիալ թաքուն ուժերը, որոնք թշնամուն սարսափ են ազդում: Թշնամի թագավորը, տեսնելով իր վեզիրի անզգույշ սխալը, ասում է.

«– Վաճիր, քու տուն ավիրի,

Իմալ [ինչպես] որ դու իմ տուն ավիրիր.

Աստված քու տուն ավիրա, ըսեց.

Չուր մկա եղոնք գինեն [մինչև հիմա նրանք գիտեին]՝ մեր մեջ որց մարդ կա,

Մկա իդոնք մարդ ին, մենք կնիկ ինք»:³⁰⁰

Թեև այդ «կնիկներն» առայժմ իշխում են «որցերին», սակայն կգա այն օրը, երբ կծնվի մի նոր Դավիթ, հայ ժողովրդի Դավիթը, որը հաղթանակ և ցնծություն կբերի իր ժողովրդին:

ԺԱ. ՔԵՌԻՆ

Մի քանի խոսք ազնանցորդիներին սերնդեսերունդ հովանավորող ու դաստիարակող քեռու մասին, որի «անունը Թորոս ա, անմահական է, հինքը մահ չունի»: Այս հանգամանքը ոմանց առիթ է տվել մայրիշխանության վերհուշեր տեսնելու էպոսի մեջ՝ օրինակ բերելով ոչ թե հոր կամ հորեղբոր, այլ հատկապես մորեղբոր հեղինակավոր գերիշխանությունն ու հոգատարությունը «ազնանցորդիների» նկատմամբ: Կարող ենք այսպես կարծողներին հիշեցնել նաև հորեղբայրների և հորեղբոր որդիների շարունակական

299 Նույն տեղում, էջ 238:

300 Սասնա Շոեր, հ. Բ, առաջին մաս, էջ 54:

թշնամությունը պատումների մեծ մասում, թեև առանձին պատումների մեջ կա քեռորդու ավելի կատաղի թշնամությունը քեռիների ու նրանց որդիների նկատմամբ: Ինչ խոսք, որ հազարամյակների հնությունից եկող տարրեր կան էպոսի մեջ, որ շատ ու շատ հին վեպերի ու հեքիաթների առանձին կտորներ են միահյուսվել հիմնականում XII-XIII դարերում հյուսված ազգային-ազատագրական էպոսին: Ամենին նպատակ չունենալով հերքելու մայրիշխանության վերնուշերի առկայության թեզը մեր էպոսում՝ չենք կարող չհիշեցնել, որ թե՛ Սասունում մնացած և Խլաթի թագավորի այուզերությունը կամովին կամ հարկադրաբար ընդունած սասունցի իշխանների և թե՛ օտար հորիզոնների տակ, այս դեպքում Մարում, զինվորական ծառայության մեջ բախտ որոնող սասունցի իշխանների քեռիները միևնույն Հռոմկլայում նստող Պահլավունի կաթողիկոսներն էին, տվյալ դեպքում որոշակիորեն Գրիգոր Գ և Գրիգոր Դ Տղա Պահլավունի կաթողիկոսները, որոնք թե՛ իրենց դիրքի բերումով, թե՛ իրենց մշակութային անվիճելի բարձրությամբ և թե՛ այդ ժամանակ իրենց փայփայած ազգային անկախության վերականգնման երազներով չէին կարող իրենց սասունցի քեռորդիների ուսուցիչները չլինել բոլոր կողմերով և բոլոր հարցերում:

Պահլավունիների տան պատմավեպը գրողն այս դեպքում էլ, երբ խոսքը վերաբերել է իրենց տոհմի գերագույն պետին, դիմել է այլաբանության և օգտագործել այն լեռների անունը, որտեղ թառել էր նրանց զարմանալի Հռոմկլան՝ Տավրոսյան-Թորոսյան լեռները: Ազգի ընդհանուր վիճակի մասին փիլիսոփայական մտորումներ կարող էին ունենալ միայն Հռոմկլայում նստող Պահլավունի կաթողիկոսները: Բավական է հիշել միայն Ներսես Շնորհալուն:

Այս տեսակետից միայն, կարծում ենք, պետք է մոտենալ նորբայագետի Առաքել Շակոյանի պատումի մեջ պահպանված հետևյալ վերին աստիճանի ուշագրավ հատվածին: Ոչ միայն օտար հորիզոնների տակ ծառայող, այլև անգամ օտար հորիզոնների տակ ծնված երեխաների թշվառությունը, անհեռանկար կյանքը տեսնելով՝ Քեռին մտածմունքի մեջ է ընկել: Արամելիքը նրան հարցնում է.

«Թե. – Հընչ ես ետտա միտք անում:

Քեռի Թորոսն ասավ.

– Միտք եմ անում, թե աշխրթի նզն ա շատ, թե՛ վորձը:

Արամելիք վեկալեց ասավ,

Թե. – Հընչ բան ունես ետ բանի հետ:

Վեկալեց ասավ, թե. – Ձեր մտքին վոր մեկն ա շատ:

Վեկալում ասում են երկու ախարով,

Թե. – Կարելի ա վորձը շատ հըլնի եզի վրա:

Վեկալում ասում ա, թե. – Մենք եզ ենք, վորձ չենք:

Արամելիքն ասում ա. – Հընչ ենք եզ:

Ասում ա, թե. – Հիրեք թոռ ունենք,

Հիրեք ել մենք ենք, արավ վեցը:

Մենք հեղեր ենք, կնկա կնիկ:

Արամելիքն ասում ա.

– Հընչ ենք հեղե կնկա կնիկ:

– Ընդու համար ենք հեղե,

Վոր մեր դուշման թողեր ենք Կապուտկող

Մենք եկե, խալիֆին դուլլող ենք անում:

Ես ջուրը գորեղ չի

Ձեր երեխեն դոչաղ չհըլնի»:³⁰¹

Այստեղ շատ խոր միտք և ճշմարտություն կա: Հայ ժողովուրդը կորցրել է անկախությունը և բռնել տարագրության ուղին: Անկախության բեկորներ մնացել են միայն անառիկ ու աղքատիկ Սասունում, որի բնակչությունը եթե տարագրության չի դիմում, ապա իր երիտասարդներին վարձկան ծառայության է ուղարկում հեռավոր, անգամ ոչ խաչապաշտ երկրներ: Հռոմկլայի Պահլավունիները Եգիպտոսի դառը փորձից ու դասից հետո չէին կարող չհանգել համազգային փրկություն որոնելու վերոհիշյալ մտքին: Այս ուշագրավ հատվածը միաժամանակ մի պերճախոս ապացույց է մեր թեզի, որ մենք որոշակի գործ ունենք անհատ հեղինակի հետ, որ սկզբնական պատմավեպը հյուսվել է Սասունի և Մարի բարեկամական և ապա թշնամական հարաբերությունների ատաղձի վրա:

ԺԲ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

«Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին նվիրված ՍՍՈՄ Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի հոբելյանական նիստում տված իր հիմնական գեկուցման մեջ պրոֆեսոր Շավա Նուցուրիձեն ասել է. «...նախառենեսանսը Հայաստանում սկսվում է հատկա-

301 Սասնա Ծոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 114:

պես X դարում, հերետիկոսական ժողովրդական շարժման ամենից ավելի ուժեղանալու ժամանակ: Նրա առաջին դրոշակակիրն է հայ գրող Գրիգոր Նարեկացին:

Քաղաքական և պատմական բախարի պատճառով Հայաստանն անկարող եղավ այլևս զարգացնելու նախառենեսանսը և ռենեսանսը: Զարգացման մեջ մտան Ադրբեջանը և Տաջիկստանը, որոնք թե՛ գաղափարական գծով և թե՛ գրականության ուղիով առաջ մղեցին օպոզիցիոն մտքի և ստեղծագործության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Իբն-Սինան, Օմար Խայամը, Նիզամին և այլն: Ռենեսանսի զարգացման հետևյալ աստիճանը ներկայացնում է Վրաստանը՝ Շավթելիից մինչև Ռուսթավելի:

Հարվածներից ոտի կանգնած Հայաստանը XII դարում նորից մտավ ռենեսանսի զարգացման մեջ այն նպատակով, որ XIII և XIV դարերում ստեղծագործորեն ընդունի այն ամենը, ինչ նվաճել էր արևելյան ռենեսանսը (ուզում էր ասել՝ ադրբեջանականը, տաջիկականը և վրացականը – Հ.Թ.):

Այս ժամանակաշրջանի հայ գրականության լավագույն ներկայացուցիչներն են Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացին, Առաքել Բաղիշեցին»:³⁰²

Հարգելի գիտնականի այսպես ասած էտապային հաջորդականության այս թեզը համոզիչ է: Մի կողմ թողնելով հեռավոր Տաջիկստանը՝ հիշենք, որ Նիզամին ծնվել է մոտավորապես 1141 թվականին և, ապրելով 62 տարի, մահացել է 1203 թվականին: Իսկ ինչ վերաբերում է Ռուսթավելուն, ապա վրաց գիտնականներին դեռևս չի հաջողվել ստույգ որոշել նրա ծննդյան ու մահվան տարեթվերը: Այնքան, որքան Ռուսթավելին ապրել ու գրել է Թամար թագուհու (ծնվել է մոտավորապես 1165 թ., թագավորել է 1184-1213 թթ.) օրոք, ընդունված է Ռուսթավելուն համարել XII դարի երկրորդ կեսի և XIII դարի սկզբի գրական մեծ գործիչ (ըստ մասնագետների՝ «Վազրենավորը» գրվել է 1190 թվականից ոչ առաջ և 1213 թվականից ոչ ուշ): Սակայն Ներսես Շնորհալու ծննդյան և մահվան տարեթվերը հայտնի են: Շնորհալին ծնվել է 1101 թվականին և վախճանվել 1173 թվականին: Ուրեմն Շնորհալին ոչ թե հանդես է եկել «երրորդ» էտապում, այլ ամենից անդրանիկն է այս պանծալի եռյակի մեջ: Ավելին, այդ նույն զեկուցման մեջ հարգելի գիտնականի կողմից այնքան դրվատված Շնորհալու «Ողբ Եդե-

սիոն» գրվել է Եդեսիայի հանրահայտ անկման (1144 թ.) թարմ տպավորության տակ, այսինքն՝ Նիզամիի «Իսքենդեր Նամեից» և Ռուսթավելու «Վազրենավորից» առնվազն կես դար առաջ: Սա անհերքելի փաստ է:

Չի կարելի համաձայնել նաև այն բացատրության հետ, որը վերաբերում է հայ նախավերածննդի և Վերածննդի միջև նկատվող ընդհատման քաղաքական և պատմական պատճառին, որովհետև Շնորհալին գրում էր ոչ թե «հարվածներից ոտի կանգնած «Հայաստանում», այլ տարագրության մեջ, հեռավոր ու մենավոր և անպաշտպան Հոռմկլայում, իր իսկ բառերով ասած, «դառն և դժնեայ և անբարի ժամանակում», երբ նա.

«Այլ եմ նրման բեկեալ նախն
Տարաբերեալ միջածովին,
Կամ հողմահար խրոփ խոտին
Ի ժամանակս աշնանային»:³⁰³

Հայ հին գրականությունը միշտ էլ վերելք է ապրել միայն քաղաքական և պատմական դառը ժամանակաշրջաններում:

Որքան այդ առաջին հայացքից զարմանալի թվա և անընդունելի լինի, հայ նախավերածննդի և Վերածննդի միջև նկատվող ընդհատումը, այսինքն՝ գրական ամլության շրջանը, դժբախտաբար, համընկնում է հենց քաղաքական չակերտավոր բարենպաստ իրադրության ժամանակաշրջանին, երբ Բագրատունիներն ու Արծրունիները քաղաքական որոշ անկախության էին հասել: Ընդհակառակը, նրանց օրոք ընկավ բանաստեղծությունը, որը մինչ այդ աննախընթաց բարձունքի էր հասել, ընկավ պատմագրությունը՝ վերածվելով ժամանակագրության, «անհոտ ու անհամ» թարգմանական դարձավ երբեմնի ճոխ լեզուն: Ինչու՞: Որովհետև օտար, այլակրոն Բաղդադի (ինչպես մինչ այդ Տիգրոնի) լծի տակ գրականությունը, լայն առումով, քաղաքական անկախության բացակայության պայմաններում, զարգանում էր որպես օտար, *թշնամական մշակույթին ազգովին հակադրվելու դարավոր պոպոնեցիալ կարողությունների արտահայտման միակ հնարավոր բնագավառ:* Բագրատունիների և Արծրունիների թագավորությունների գոյացման դարաշրջանում, երբ լայնորեն բացվեցին հունական անհամեմատ ավելի բարձր մշակույթի տարածման դռները, ազգային մշակույթի զարգացման եղած տենդենցները (միտումները), մի կողմից, հուսալիսար վիճակի մեջ ընկած, որովհետև այդ փոքրիկ հակամարտ թագավորություն-

302 Հ. Նուցրիժե, Հայաստանը և արևելյան ռենեսանսը. – «Սովետական գրականություն», 1941, թիվ 12, էջ 98:

303 Տեառն Ներսեսի Շնորհալու Ողբերգություն վիպասանական ի տառից սրբոց. Գիրք առաջին. – Տն. Ներսեսի Շնորհալու Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, էջ 22-23:

ները չէին ապահովում միասնական մշակութային ուրույն աշխարհի զարգացումը, մյուս կողմից, պարսության ենթարկվեցին՝ անկարող ընդդիմադրելու հունական ուժացնող զորեղ մշակույթին:

Այդ տեսակետից բացասական դեր խաղաց նաև Բյուզանդիոնի այսպես կոչված «հայկական» դինաստիան (867-1025 թթ.), որի առանձին ներկայացուցիչներ վերացնում էին միջնորմները և իրենց դուռը ծեծողների առաջ գործունեության լայն ասպարեզ էին բացում իրենց անհամեմատ ավելի ընդարձակ և մշակույթով անհամեմատ ավելի բարձր երկրում: Ազնվականները, անգամ իշխող նախարարական տներից, սիրով մտնում էին հունական ծառայության և կորցնում ազգային դեմքը: «Այն ժամանակույցի գինուրական բարձր պաշտօնեաները, – ինչպես արձանագրել է Բյուզանդիոնի պատմաբանը, – համարեա միշտ հայերից էին և վրացիներից»:³⁰⁴ Հայ վաճառականներն էլ թե՛ մինչ այդ և թե՛ մանավանդ այդ դարաշրջանում կոսմոպոլիտական (աշխարհաքաղաքացիական) գծեր հանդես բերելով՝ քայքայում էին ազգային ճակատը, որը չէր գոյանում, թեև *յուրե-սական հարաբերությունների զարգացման սարիճանը* պետք է որ օրակարգի հարց դարձներ այդ ճակատի գոյացումը: Հայ եկեղեցին անգամ, եթե ոչ ամբողջությամբ վերցրած, ապա հանձին իր առանձին ղեկավարների, տեղի տվեց հունական գերուժության առաջ: Ոմանք մեղադրում են Արծրունիներին ու Բագրատունիներին, որ նրանք այդպես շուտ լքեցին իրենց թագավորությունները և դրանք գրեթե հոժարությամբ փոխանակեցին փոքրասիական հողերի հետ: Այդ հետագա հայ կղերաբորժուական պատմագիտությունն է ճգնել հայկական ազգային թագավորներ պսակել նրանց, իսկ նրանք, տուրք վճարելով հանդերձ Բաղդադին, իրենց դիտել ու համարել են Բյուզանդական մեծ կայսրության սովորական ծայրամասերի տերեր, որովհետև այնքան մեծ էր բյուզանդական բարձր մշակույթի ուժացնող ազդեցությունը: Բնական է, որ այդպիսի պայմաններում գրականությունը, անգամ լայն առումով, այսինքն՝ կրոնականն էլ, պիտի ընկներ՝ կորցրած լինելով *օրսար, այլակրոն մշակույթին ու պերականությանը հակադրվելու իր նախկին առաջնորդ ոգին*: Այս տեսակետից, սելջուկյան արշավանքներից հետո սկսված իրադրությունը, *երբ չկար այլևս հունական կլանող մշակույթի ազդեցությունը, բարենպաստ պիտի լիներ ազգային գրականության զարգացման համար*: Սելջուկները, խորտակելով Բյուզանդիոնի քաղաքական

ուժը և վերացնելով նրա նաև մշակութային գերուժությունը, փոխարեն ոչինչ չտվին: Մշակութային մակարդակի տեսակետից նրանք ցածր էին կանգնած նվաճված քրիստոնյա ժողովուրդներից: Նրանք հաստատեցին միայն քաղաքական գերիշխանություն: Այդպիսով, վերականգնվեց նախկին դրությունը, այն տարբերությամբ միայն, որ եթե անցյալում պարսիկն ու արաբը իշխում էին հեռվից, ապա նոր տիրողներն իրենց մահմեդական ֆեոդալական տները հաստատել էին նաև բուն Հայաստանում՝ հայ ժողովրդի ստվար զանգվածներին՝ ամբողջ հին ազնվականության հետ միասին, դատապարտելով տարագրության: Սակայն սելջուկների առաջին զարկից դեռևս կես դար չանցած, տիրող ֆեոդալական հասարակարգի ստեղծած փոխհարաբերությունների հետևանքով բովանդակ Մերձավոր Արևելքը, այդ թվում՝ նաև Հայաստանը, մասնատվեց քաղաքական անհամեմատ ավելի թույլ միավորների՝ հնարավորություն ստեղծելով նոր ազնվականության առաջացման համար բնիկ հայ բնակչությունից: Հայաստանի տարածքում կազմակերպվեցին Երզնկայի, Կարնո, Կարսի ամիրայությունները, Շահ-ի-Արմենների թագավորությունը Տարոն-Տուրուբերանում, Գանձակում հիմնվեց Փեհլիկների աթաբեկությունը, որից վասալական կախում ունեցող Շեդադյան քրդերը նստեցին Դվինում և Անիի համար շարունակ մրցակցում էին ուժեղացող վրաց Բագրատունիների հետ: Հայաստանի լեռնային մասերում՝ Գեղամա լեռներում, Սյունիքում, Լոռում, Վասպուրականի հարավում, Մասունում գոյացավ նոր հայ ազնվականություն, որն իրեն դիտում էր երկրի բնիկ տերը և իրեն մեծարում մեծադղորդ տիտղոսներով: Հայաստան ու Փոքր Ասիա ներխուժած թուրքական ցեղերը, դեռ չխաղաղված, ավելոժեցին տեղական նոմադները՝ քրդերը, որոնք ավելի քան մեկ դար՝ մինչև մոնղոլների երևալը, քաղաքական մեծ ուժի հասան բովանդակ Մերձավոր Արևելքում և հարուստ քաղաքների տեր դարձած թուրքերի միակ լուրջ մրցակիցներն էին: Նույն կրոնի դրոշով հանդես եկող այդ երկու վայրենաբարո ցեղախմբերի հակամարտության ժամանակ բարձրացավ տեղական նորաստեղծ հայ ազնվականության կշիռը քաղաքական փոքրիկ միավորների փոխհարաբերությունների մեջ: Եվ *քանի ավելի էին մասնատվում ու մանրանում Հայաստանում իշխող մահմեդական ֆեոդալական տները, այնքան ավելի էին հուսալիստվում հայ ազնվականները և փոգորվում անկախության հասնելու ձգտումներով*: Հայ եկեղեցին, վերապրելով ճգնաժամը, ավելի ուժեղացավ և հին նախարարական տների իսպառ բացակայության պայմաններում իրավունք ստացավ խոսելու ամբողջ ազգի անունից: Սակայն

304 Դ. Գեյցեր, Համառոտություն Բիզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 233:

տարագրության հետևանքով հայ ժողովրդի նորանոր հենակետեր գոյացան ինչպես բնօրրանից շատ հեռու (Եգիպտոսում), այնպես էլ Եդեսիայում, Հռոմկլայում և Կիլիկիայում:

Սելջուկներից և քրդերի կարճատև ուժեղացումից հետո եկան մոնղոլները, որոնք դեռևս մահմեդականություն չէին ընդունել, և նրանց առաջին զարկը որքան շնչեցուցիչ եղավ Մերձավոր Արևելքի քրիստոնյաների (այդ թվում նաև հայ ժողովրդի) համար, բայց կրկնակի չափով խորտակիչ եղավ քաղաքական իշխանության տեր դարձած մահմեդականների համար: Ավելի քան կես դար թոթափվեց մահմեդականների լուծը: XIII դարի քառասնական թվականներից մինչև մոնղոլների՝ մահմեդականություն ընդունելը (1304 թ.) համեմատաբար ավելի աշխուժացավ հայ կյանքը հայ ժողովրդի բնօրրանում: Հայոց պատմության լավագույն գիտականներից մեկը՝ Գարեգին արք. Հովսեփյանը, իր «Խաղբակյանք կամ Պոռոջյանք Հայոց պատմության մեջ» խիստ արժեքավոր ուսումնասիրության մեջ այդ ժամանակաշրջանի մասին գրում է. «Վորքան և ծանր եր թաթարների տիրապետությունը իրենց հարկապահանջությամբ, կեղերումներով և կամայական կառավարությամբ, բայց և այնպես քառասնական թվականներից արդեն մի modus vivendi եր կազմված նրանց և հայ իշխանների մեջ և հետզհետե կյանքը տանելի դարձել»:³⁰⁵

Բերենք ևս մի հատված ականավոր գիտնականի վերոհիշյալ աշխատությունից՝ հիմնավորելու համար մեր այն թեզը, որ սելջուկները երկիրն ավերելու հետ միասին նաև վերացրին բյուզանդական ուժացնող մշակույթի գերուժությունը հայ կյանքի վրա: Նրանց ստեղծած դժնդակ պայմաններում հայ ժողովրդին մնում էր այլակրոն քաղաքական տիրապետությանը հակադրվելով զարգացնել սեփական գրականությունն ու մշակույթը: Այդպես էին ստեղծվել մեր գիրն ու գրականությունը, այս անգամ էլ անբարենպաստ պայմանները միայն պետք է զարկ տային հայ հոգևոր ու մշակութային կյանքի վերելքին:

«ԺԲ դարու ութսունական թվականներից սկսած, – գրում է Գարեգին արք. Հովսեփյանը, – վիմական և գրական հիշատակարանները շինարարական և հոգևոր կյանքի մի նոր արշալույս են ավետում... մի ազնիվ մրցակցություն է սկսվում իշխանական տոհմերի մեջ, գերազանցելու միմյանցից շինարարական և հոգևոր կյանքի նպաստավորության գործում:

305 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոջյանք Հայոց պատմության մեջ. պատմագիտական ուսումնասիրություն, մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 91:

Հոգևոր դասի ներկայացուցիչները յետ չեն մնում իշխանական տոհմերի ներկայացուցիչներից իրենց շինարարությամբ, արվեստի և գիտության հովանավորությամբ: Գրական և շինարարական կյանքի առաջին յերևույթներն սկսվում են հյուսիսարևելյան գավառներից. Հաղբատն ու Սանահինը, Գետկա և Խորանաշատի վանքերը գլխավոր կեդրոններն են այս շրջանների. Հովհաննես Տավուշեցի, Մխիթար Գոշ, Գրիգոր Գանձակեցի, Վանական, ինչպես և սորա աշակերտները՝ Վարդան, Կիրակոս, Մաղաքիա և Մխիթար Այրիվանեցի պատմիչները, Գրիգոր Տուտեռոդի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր վորդի Աբասա, Դավիթ Ալավկա վորդի, Վարդան Մեկնիչ, Հովհաննես Ա. և Բ., Համազասպ և Հովհաննես Գ. Հաղբատի յեպիսկոպոսները, սորա բոլորը իբրև մատենագիրներ կամ շինարարներ, այս յերկու շրջանի մարդիկ են:

Կենդանարար շարժումը յերևում է հատկապես արվեստի մեջ. ճարտարապետությունն ուրույն կերպարանք է ստանում այս դարում... Հոհաննա վանքը... Գանձասարը... Նորավանքը... Դսեղի բարձրաքաշը... Գեղարդը... կենդանի և խոսուն վկաներ են մի աննման, եռանդուն շինարարության, վորի նմանը քիչ է կրկնվում պատմության մեջ:

Քանդակագործությունը (նաև փայտի վերա), հատկապես խաչքարի արվեստը կատարելագույն նրբության է հասնում... Հայ իշխանական տներն իրենց ընտանեկան, նոր գրած ավետարաններն ունին... Բազմաթիվ նկարագարող ավետարաններ, Մշո Առաքելոց նշանավոր տ[Տ]ոնականը և այլ ձեռագիրներ, ԺԳ դարու առաջին քառորդի կամ առաջին կիսի գրչության թանգարժեք մնացորդներ են, ուր պահված են հին, արևելյան արվեստի ավանդները, առանց զգալի չափով յենթարկվելու բյուզանդական կամ յեվրոպական ազդեցության, վոր նկարելի յե Կիլիկիայում:

Կարևոր յերևույթ է վարդապետարանների կամ դպրոցների (գիտության և մանրանկարչական արվեստի) հաստատությունը այս դարում, վոր թեն ծագումով հին է, բայց հարատև և հաջորդական բնույթ է ստանում ԺԲ դարի վերջերից սկսած:

Ծաղկել է սկսում կրոնականի հետ և հետզհետե աշխարհիկ բնույթ ստացող բանաստեղծությունը Կեչառեցու, Ստ. Որբելյանի, Ֆրիկի և Հովհ. Յերզնկացու ստեղծագործությունների մեջ, ԺԳ դարու կեսերից սկսած»:³⁰⁶

Սելջուկներից հետո հայկական նախարարական անկախությունը վե-

306 Նույն տեղում, էջ 22-26:

րացավ: Նոր բարձրացած հայ ֆեոդալները ոչ նախկին նախարարական տներից էին իրենց ծագումով, ոչ էլ նրանց քաղաքական կշիռն ունեին հայ կյանքում: Լավագույն դեպքում նրանք հարգված գորապետներ էին օտար քաղաքական իշխանության դռներին: Կորցնելով քաղաքական անկախությունը՝ հայ բնակչությունը գրեթե ազգովին բռնեց զարգացման նոր ուղի, մահմեդական մանր ու մեծ պետությունների օվկիանոսում նա սկսեց դառնալ, եթե կարելի է այսպես ասել, երրորդ դաս՝ իրավագուրկ, բայց հույժ կարևոր և իր անգործության մեջ գորավոր: Այսպիսով, որպես երրորդ դաս, շարունակաբար ծնունդ տալով համազգային միասնության նոր գաղափարների, նա կարողանում էր դրանցով տոգորել ինչպես նորաստեղծ թույլ ազնվականությանը, այնպես էլ հին նախարարական տների բեկորներին, որոնք միավորվել էին Հռոմկլայում հեղինակավոր դարձած Պահլավունի կաթողիկոսների շուրջը: Եվ Հռոմկլան, հակառակ կաթողիկոսանիստ մի փոքրիկ բերդ լինելուն, դարձավ հայ մշակույթի ավանդապահը օտարության մեջ, հայ նոր զարթոնքի զարմանալի օջախը, և Պահլավունի կաթողիկոսները, մասնավորապես Շնորհալի անունով ավելի հայտնի Ապիրատ և Պահլավունի Ներսես Կլայեցին, դարձան հայկական նոր զարթոնքի ամենակարկառուն դեմքերը:

Ներսես Շնորհալուն, դժբախտաբար, դեռևս լավ չէնք ուսումնասիրել: Անտարակույս, Նարեկացին հայ միջնադարյան գրականության ամենատաղանդավոր ներկայացուցիչն է: Նրանով է սկսվում հայ նախավերածնունդը, որը նորանոր հարվածների տակ զարգացման հնարավորություն չունեցավ: Եթե նրա քնարի մեջ հնչում են աշխարհիկ նոտաներ, ապա դրանք դեռևս պարտրված են միստիկ շղարշով, որովհետև նա միստիցիզմի դարաշրջանի ծնունդ է, և ինքն էլ՝ միստիկ: Այդ կրոնաշունչ գաղափարախոսությունը պատմականորեն վերապրելուց և հաղթահարելուց հետո միայն հայ գրականությունը կարող էր անցնել աշխարհիկ հարցերի արծարծմանը: Նա ավելի հիմնավոր կրթություն, ավելի լայն մտահորիզոն ուներ և հայ տաղաչափությունը հասցրեց միջին դարերում չգերազանցված բարձրության, իսկ հայ լեզուն՝ չգերազանցված ճկունության: Իհարկե, նա գրել է նաև կրոնաշունչ եկեղեցական երգեր, նրա հոչակն այնքան մեծ է եղել, որ նրա մահից հետո ճարպիկ կիլիկեցիները նրան են վերագրել ինչ-որ շրջաբերական թուղթ և այն գենք են դարձրել իրենց ձեռ-

քին: Սակայն Շնորհալու ստեղծագործության մեջ գլխավորը պոեմներն են և հիշատակարանները, որոնցից, դժբախտաբար, դրվատվել է միայն ամենից ավելի թույլը՝ «Ողբ Եդեսիոյ» «բարբառությունը»: XI դարի մեծ տարագրության և տեղահանությունների դարաշրջանում Եդեսիան դարձել էր հայկական իշխանություն: Արևմուտքի նկատմամբ տածած կույր և կործանարար հավատի հետևանքով Բարսեղ իշխանը քաղաքը 1098 թ. հանձնեց խաչակիրներին՝ փորձելով դրանով ավելի հուսալի դարձնել Եդեսիայի պաշտպանությունը մուսուլմանական հեղհեղուկ օվկիանոսում: Սակայն խաչակիրներն իրենց անհոգ ու շվայտ կյանքով հենց սկզբից հուսախարսիս քաղաքի քրիստոնյաներին, իսկ վճռական պահին անտեր թողեցին նրանց: Եդեսիայի անկումը (1144 թ.) ծանր հարված էր թե՛ քաղաքի քրիստոնյաների համար, որոնք կոտորվեցին, թալանվեցին ու փախուստի մատնվեցին, թե՛ խաչակիրների ամբողջ շարժման համար, որոնց հեղինակությունը դրանով շատ ընկավ: Այսպիսով, թեմայի կարևորությունը շատ է արժևորել Շնորհալու այդ համեմատաբար թույլ գործը: Եվ եթե այդ թույլ գործը մինչև այսօր էլ հիացմունք է պատճառում հայ և օտար ուսումնասիրողներին, եթե ճարպիկ Ռուբինյան-Հեթումյաններն իրենց համար ձեռնադրել են ինչ-որ շրջաբերական վերագրում էին հատկապես Շնորհալուն և ոչ մի ուրիշ կաթողիկոսի (ասենք, որ Շնորհալին որպես աթոռակալ շատ ավելի թույլ է եղել Մայր աթոռին իրենից առաջ ու հետո նստած մյուս Պահլավունի կաթողիկոսներից), ապա դժվար չի լինի պատկերացնել այն մեծ հեղինակությունը, որ Շնորհալին վայելում էր իր մահից հետո էլ: Իսկ այդ մեծ հեղինակության համար նա պարտական էր իր քնարին և ոչ թե իր կրոնավարչական գործունեությանը, որ չէր կարող համեստ չլինել հեռավոր ու մենավոր Հռոմկլայում 1166-1173 թվականներին:

Ներսես Շնորհալին մեծ է և իր ժամանակին մեծ հմայք է ունեցել իր «Յիշատակարաններով», որոնք հասկացվել են, և հատկապես իր «Ողբերգութիւն» պոեմով, որ բոլոր կողմերով, թե՛ լեզվի ճոխության ու գունագեղության, թե՛ տաղաչափական արվեստի բարձրության և թե՛ ոգեշնչման անկեղծության և ուժի տեսակետից նրա գլուխգործոցն է, հայկական նոր զարթոնքի ամենաուշագրավ կոթողը:

Աստվածաշնչից բերված զուգադրություններն իրենց երկարապատում շարադրմամբ սքողել են այդ զուգադրություններին դիմելու դրդապատճառը: Մեր օրերի համար սա, անտարակույս, էական թերություն է: Եվ առաջադեմ թվալու ճիգ գործադրող մասնագետները, չկարողանալով պատմա-

կանորեն մոտենալ հարցին, Աստվածաշնչի առանձին ավանդությունների դիդակտիկական չափածո վերապատում են համարել այն և զլացել են խոսել «Ողբերգություն» պոեմի մասին, որ չլինի թե պակաս առաջադեմ թվան ընթերցողի աչքին:

Այստեղ նորից հառնում է Աստվածաշնչի ազդեցության հարցը: Աստվածաշունչը գիրք էր քրիստոնյա հայ ժողովրդի և նրա հոգևոր ու ոչ հոգևոր պետերի համար: Աստվածաշունչը նրանց համար բոլոր կողմերով և բոլոր հարցերում սնող գիրք էր և գաղափարախոսություն: Սա անվիճելի է: Սակայն անվիճելի է նաև այն, որ դրության և ճակատագրի համանմանություն կար Աստվածաշունչը կերտող ժողովրդի և այդ ժամանակ այն մեծարող ժողովրդի միջև: Եվ եթե այս համանմանության պատճառով օգտագործվում էին Աստվածաշնչի առանձին ավանդություններն ու նրանց գործող անձինք, ապա ամեն դեպքում չպետք է որոնել սոսկ միայն ազդեցության կամ թե ինչ-որ դիդակտիկական նկատառումների պարագան, այլ հատկապես օգտագործման անհրաժեշտության պարագան: Ներսես Շնորհալին՝ հայ նոր գարթոնքի մեծագույն դեմքը, բազմակողմանի զարգացած մի բացառիկ բանաստեղծական տաղանդ, «ամբարձեալ իբր ըզկըզի» մենավոր Հռոմկլայում կաթողիկոս է ընտրվում (1166 թ.) «դառըն և դըմնեայ և անբարի» ժամանակում:

«Յորում նեղիմք յանօրինաց,
Ի յարտաքին չար գազանաց,
Եւ ոչ նըրագ ի դրոժանաց,
Ի սուտանուն քրիստոնէաց»:³⁰⁷
Թեև «յանառիկս ամրոց» Հռոմկլան «յալեաց ծովուց ոչ երկընչի», սակայն «ի բարկութեան ժամանակի» շատ համեստ է անցնում նրա ընտրությունը «ի գետապատ քարանձաի»:

Եվ այդպիսի դառը ժամանակում ցիրուցան հոտի կաթողիկոս ընտրվելով հեռավոր ու մենավոր Հռոմկլայում՝ Ներսես Շնորհալին որպես ջերմ հավատացյալ դիմում է ...Հիսուս-Քրիստոսին և աղաչում է օգնել իրեն. թեև արժանի չեմ քո որդին կոչվելու, բայց «Վերջին մաքրագուն» ծառայիդ արժանացրու «հորդ բարոյ սուրբ ողջունին», թող նա վերցնի ինձ իր հովանու տակ և «գիս վերըստին» տանի հայ բնօրրանը, որտեղ ես կարողանամ գտնել իմ նախկին շուքն ու փայլը և հայ թագավորից ստանամ

307 ՏՆ. Ներսեսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, էջ 241-242: Հմմտ. *Ղեւոնդ Ալիշան*, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 228-229:

հայրապետական մատանին:

«Եւ զպատմունճանըն զառաջին
Հոր առագակքը մերկացին,
Արկցես զինեւ դարձեալ կըրկին
Որպէս ըզգարդ պըճնեալ հարսին:
Հարքունական ըզմատանին
Ըզնըշանակ տիրականին,
Տացես ունել յաջոյ ձեռին,
Ոչ խոտորել այլ յահեկին»:³⁰⁸

Այլևս չեն կրկնվի հին սխալները, միայն թե ով «հովիւրդ քաջ և երկնային, Ել ի խընդիր փոքրու հօտին»:³⁰⁹ Աստվածաշնչի նահապետների, օրինակ՝ Հայր Աբրահամի նման ինձ փորձության մի՞ ենթարկիր, ես դեռ բարին չեմ տեսել, միայն չարն եմ ճաշակել և սարսափում եմ փորձից, որովհետև ես ո՛չ արծաթ եմ, ո՛չ էլ ոսկի:

«Այլ եմ անագ ընդ կապարին,
Որ ի պարզելըն կորընչին:
Եւ ոչ եմ վէմ յեզըր ծովին,
Որ ի յալեացն անշարժ պահին.
Եւ ոչ արմատ ծառոց խորին,
Որ ի հողմոց ոչ տապալին:
Այլ եմ նըման բեկեալ նաին
Տարաբերեալ միջածովին,
Կամ հողմահար խըռիվ խոտին
Ի ժամանակս աշնանային:
Արդ մի՛ տանիր ի փորձութիւն,
Որ ոչ փորձեալ զոք երկրածին»:³¹⁰

Այսինքն՝ ինձ մի՞ ենթարկիր այնպիսի փորձության, որին դեռևս ոչ մի երկրածին մարդ չի ենթարկվել: Սա հայ ժողովրդի դառը ճակատագրի առաջին մեծատաղանդ արձանագրումն է և բողոք այդ դառնության դեմ, այլ ոչ թե Աստվածաշնչի ավանդությունների «դիդակտիկական» վերապատում:

Ինձ փորձության մի՞ ենթարկիր, ընդհակառակը, շտապիր օգնելու, երբ

308 Տեառն Ներսեսի Շնորհալոյ Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց. Գիրք առաջին. – ՏՆ. Ներսեսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, էջ 12-13:

309 Նույն տեղում, էջ 14:

310 Նույն տեղում, էջ 22-23:

թշնամին ինձ փորձության ենթարկի, և այնպես «խորտակեա՛ւ զիմ թշնամին», որ նա այլևս չկարողանա ոտքի վրա կանգնել («զի մի՛ կացցէ այլ ի յոտին»):³¹¹

Նահատակ ժողովրդիս և համբերող ճգնավորիս աղերսանքով:

«Առ քեզ կարդամ և պաղատիմ,
Հեղում զարտոսրը ցաւագին. ...»,³¹²

թույլ չտաս, որ թշնամին կոկով փորձության ենթարկի ինձ,

«Մի՛ տար ի ձեռս աւագակին,

Մի՛ մատնեցես կամաց նորին:

Զի ես տըկար լուծեալ մարմին,

Հոգիս յօժար բայց ոչ շարժին...

Բայց դու ընդ իմ տարտամն անձին

Մարտիր ընդդէմ ախոյանին»:³¹³

Ճիշտ այնպես, ինչպես Աստված լսեց ամուլ Աննայի ձայնը և նրան տվեց Սամուել որդուն, որին վիճակվեց Եսսեի որդուն՝ մանուկ Դավթին, օծել հրեից թագավոր և փրկել հրեից ժողովրդին ու խորտակել նրա թշնամիներին, այնպես էլ ես, որպես կաթողիկոս, որպես ամուլ անձ:

«Հեծեմ հոգովրս վըշտագին, ...

Շնորհեա որդիս երեսերեկին»:³¹⁴

(այսինքն՝ այս և ոչ թե հանդերձյալ աշխարհի համար – Հ.Թ.) և թող

«Մեոցին անդամք իմ երկրային,

Կեցցէ հոգիս իմ վերջստին.

Իջցէ ի գուր չար թըշնամին,

Եւ զիս հանցես յերկին վերին:

Որ ըզԴավիթ յեսսեւածին

(այսինքն՝ Եսսեից ծնված Դավթի նման – Հ.Թ.)

Յորդիսն եղեալ ծընունդ վերջին,

Մանուկ խարտէշ գեղեցկածին,

Հովիւ խաշանց անբան հօտին, ...

Մերժէր զգազանսն երեւելի,

Զարջ և զառեւծ ի միասին.

Եւ ի խըմբել պատերազմին

311 Նույն տեղում, էջ 25:

312 Նույն տեղում, էջ 29:

313 Նույն տեղում, էջ 29-30:

314 Նույն տեղում, էջ 41:

Ճակատ ընդդէմ Իսրայէլին,

Վանէր նովաւ դու ըզնոսին

(Որ դու նրա ձեռքով վանէիր նրանց – Հ.Թ.)

Առանց զինու պատերազմին.

Քանզի պարսիս հովուականին

Դոյզըն քարի հեղեղատին

Հարեր զճակատ Գողիադին,

Բարձեր զնախատ յԻսրայէլին»:³¹⁵

Դրությունն այնքան անմխիթարական էր, հայ ժողովուրդն այնքան բզկտված ու անգոր, թշնամին այնքան անագորույն ու ահավոր, որ մնում էր միայն աղերսել, որ մի նոր Դավիթ, հայ Դավիթ գա հայության Գողիաթին տապալելու համար:

Շնորհալին այստեղ, այս «Ողբերգության» մեջ, ինչպես տեսնում ենք, ոչ թե վերապատմում է Հին Կտակարանի առանձին դրվագներ, այլ «զնոսին վանելու» համար «աղաչանօք ընտրեալ հօտին» աղերսում է մի նոր Դավթի, հայ ժողովրդի Դավթի ծնունդը:

Եթե մեր դարում անգամ սխալ է հասկացվել այս այնքան բովանդակալից ու խորիմաստ «Ողբերգությունը», ապա զարմանալի չպիտի համարել արաբ պատմագրի հաղորդած՝ Պահլավունիների՝ Դավիթ մարգարեի սերնդից սերվելու և երկայնաբազուկ կոչվելու առասպելի տարածումն այն ժամանակներում: Հիշենք, որ այդ նույն ժամանակ իրենց երկայնաբազուկ էին հորջորջում նաև Զաքարյանները, որոնք ծագումով քուրդ էին, բայց հայացան, ապա դարձան վրացի: Ժամանակակիցների մտայնությունը տրամադիր էր անատարկելիորեն ընկալելու այդպիսի առասպելը: Ռուսներն ու մյուս հպատակ քրիստոնյաներն էլ ունեն իրենց երկայնաբազուկները: Պահլավունիների շրջապատը, հավանաբար, չի պայքարել այդ առասպելի տարածման դեմ. ընդհակառակը, նրանց ձեռնառու է եղել սրբագործել այդ առասպելը, որովհետև դա հանգստություն էր ապահովում մուսուլմանական «միջածովի» մեջ «տարաբերեալ» փոքրիկ և անգոր Հոռմկլային: Այս տեսակետից ամենևին էլ զարմանալի չէ, որ պարտության մատնված Պահլավունիներից մեկն իր տոհմի հեքիաթային վերելքի և տխուր վայրէջքի պատմավեպը հորինելիս որպես փրկության փարոսի, որպես փրկության մեհիայի ապավինել է երկայնաբազուկ Դավթի զաւարյան հույսին և կանխագուշակել ու գովերգել է նրա ցանկալի ծնունդն ու ապառնի սխրագոր-

315 Նույն տեղում, էջ 41-42:

ծառայությունները: Դժվար է հաստատել խոսք ասել: Սակայն, ինչպես էլ որ եղած լինի, պարզ է, որ Շնորհալին առաջինն է, որ երազել է հայ Դավթի ծնունդը: Եվ եթե երազ-Դավթը իրականության մեջ չի ծնվել, ապա այն ծնվել է էպոսում: Ժողովուրդը՝ էպոսի կոլեկտիվ հեղինակը, ռեալիստ (իրականացող) է. նա չի կարող կերակրվել ինչ-որ բաղձալի երազով: Նրան հարկավոր է իրական դեմք: Եվ նա կերտել է այդ դեմքը: Եվ որքան ավելի անմխիթարական, հուսակտուր և անհեռանկար է եղել ներկան, նա այնքան ավելի հզոր ու գերբնական է դարձրել իր հերոսին՝ նրա մեջ խտացնելով պատմության խաչողիներում տառապած և տառապող ժողովրդի ոչ միայն բոլոր լավագույն հատկությունները, այլև իղձերը:

ԺԳ. ՀԵԹՈՒՄ

Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի «Անձնանունների բառարանում» «Հեթում» անվան դիմաց կարդում ենք. «Հեթում, ար. ծագումն անհայտ. անշուշտ օտար է, որովհետև հայերենով անբացատրելի է: Օտար լեզուներից ունինք արաբ. ...*Hatim* կամ ...*Hatim* անձնանունները, որոնց բուն նշանակությունն է «առջևի ատամները կոտրած» արմատը - ... *hatm* «առջևի ատամները կոտրել», Կամուս, Գ. 578). հայտնի է օրինակ Հեթմ Բուդայի թուրք զորավարներից մին... (Արծր. Գ. Ե): Կա նաև արաբերեն ...*Hatem* անունը, որ բուն նշանակում է «դատավոր» (Կամուս, Գ. 422): Այս անունով հայտնի է Հաթմ-ի Տալի՝ իր առատաձեռնությամբ առածի կարգ անցած: Բայց ավելի հարմար են կարծում եվրոպական *Othon* անունը: Մեր Հեթում անունը տառադարձված է արաբ. Հաթիմ, եվր. Հայթոն: - Այս անունը գործածվել է մեր մեջ սկսած ԺԲ դարից...»³¹⁶

Այնուհետև անցնելով Հեթումների թվարկմանը՝ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանն առաջին Հեթումի մասին գրում է. «- 1. Հեթում Ա. սերաստոս, որդի Օշինի և թոռն Հալկամի, տեր Լամբրոն բերդի. հունաց Ալեքս կայսրից ստացավ սերաստոս տիտղոսը: Երբ ֆոանգները եկան և գրավեցին Երուսաղեմը (1098), Հեթումը շատ նեղություն կրեց նրանցից... մեռել է 1143 թվից հետո»³¹⁷

Նախ՝ ինչու՞ «սկսած ԺԲ դարից», երբ այս Հեթումի մասին հիշա-

տակություն կա 1080 թվականից, իսկ 1098 թվականին նա արդեն հայտնի զորավար էր: Այնուհետև, Սամուել Անեցու Հալկամը Օշինի ոչ թե հայրն է եղել, այլ եղբայրը («ի բռնութենէն Տաճկաց ել Օշին իշխանս ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր գեղքայրն իւր զՀալկամ»³¹⁸):

Համոզիչ չէ, որ հայկական Հեթումը տառադարձված լինի եվրոպական *Othon*-ից, որովհետև Հեթում անվան առաջին գործածությունը մեզ մոտ Խաչակրաց արշավանքներից առաջ է տեղի ունեցել:

Հեթում անվան վերծանման համար կարևոր է ընդունել, որ այս Հեթումը ոչ թե Հալկամի թոռն է, այլ որդին և Օշինի որդեգիրը: Այս տեսակետից ուշագրավ է, որ այս Հեթումն անվանվել է նաև Շահան Հեթում: Հիշենք նաև, որ Գրիգոր Տղա կաթողիկոսի քրոջորդին՝ Հեթում Սասունցին, որի մասին մենք երկար խոսեցինք, նույնպես բաղադրյալ անուն ուներ՝ Վասիլ-Հեթում: Գուցե առեղծվածի վերծանմանն օգնի մեր այն կոահումը, որ «հեթում» պարզապես նշանակում է «որը, որդեգիր»: Թուրքերեն այդ այդպես էլ նշանակում է: Հալկամի որդի որբացած Շահանը հորեղբոր՝ Օշինի թևի տակ կդառնար Շահան-Հեթում: Հեթում և Շահնշահ Սասունցիների հոր մասին որոշակի ոչինչ չգիտենք, գիտենք միայն, որ նա որդիների՝ մեր նկարագրած սխրագործությունների ժամանակ արդեն վախճանված էր:

«Հեթումի» առեղծվածը պարզելու համար պետք է նկատի ունենալ նաև այն պատմական իրողությունը, որ ինչպես սելջուկներից, այնպես էլ մոնղոլներից հետո, որոնց ընդարձակ թագավորությունները տնտեսաքաղաքական միավորող գործոնների բացակայության պատճառով շատ շուտ փուլ եկան ու բաժանվեցին հաճախ միմյանց թշնամացած առանձին իշխանությունների կամ թագավորությունների՝ ձեռներեց ու խորատես զորավետների կամ տեղական առանձին իշխանների հաջողվում էր այս կամ այն երկրամասի փաստական իշխանությունը կենտրոնացնել իրենց ձեռքում՝ սելջուկ Էլը-Արսլանի և Մելիքշահի և մոնղոլ Չինգիզ խանի զարմերի ձեռքին թողնելով միայն նոմինալը (անվանականը): Ահարկու աշխարհակալների թռուներն ու ծոռները մեղկանում էին պալատական գելս կյանքի և հարեմների շվայտության մեջ, նրանք բոլորն էլ, իբրև կանոն, պարսկերեն սիրային ոտանավորներ են գրոտում, իսկ զորական ուժի տեր ուժեղ զորավետները կառավարում էին երկրամասը և իրենց իշխանությունը տևական դարձնելու և իրենց որդիներին ժառանգություն թողնելու համար իրենց

316 Հրաչյա Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 65-66:

317 Նույն տեղում, էջ 66:

318 Սամուելի քահանայի Անեցույ հաաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 117:

հոչակում էին աթաբեկներ («իշխանների հայրեր»): Հայտնի է, որ աշխարհակալ Լենկթեմուրն անգամ, թեև մոնղոլներին էլ էր հաղթել ու նրանց դարձրել հարկատու, այնուամենայնիվ, մինչև իր կյանքի վերջը մնաց աթաբեկ: XII դարում Գանձակում ուժեղացավ Եղկուզ անունով մի գորավար, ըստ պատմագիրների՝ նախկին մի գերի, որի իշխանությունը տարածվեց մինչև Թավրիզ, և նրա քաղաքական ազդեցության տակ ընկան միառժամանակ Խլաթն ու Մոսուլը: Այդ Եղկուզը յուրացրեց անգամ Փեհլևի տոհմանունը (որի ծագումը մեր Պահլավունիների նման գալիս է Բահլի Արշակունիներից), բայց և այնպես մնաց Աթաբեկ, Մելիք շահի անանուն Եթըմ – հեթըմ – հեթում զարմի հայրը (բեգի աթան): Հայ մատենագրությունը «որդիացեալ» է անվանում աթաբեկների հովանավորությանը կարոտ այս «եթըմ» «հեթումներին»: Եվ այս «որդիացեալ» տերմինը (եզրը) մեզ ասում է, որ նորանոր արշավանքների ու տեղահանումների այդ դարերում, երբ հասարակական ֆորմացիան մնում էր միևնույն ավատականը, «հեթումներին» որդիացնելու երևույթը տեղի էր ունենում ոչ միայն Էլը-Արսլանի ու Մելիքշահի զարմերի հետ, այլև տեղական գավառային շատ ավելի փոքր մասշտաբով:

Մելջուկյան արշավանքների դարաշրջանում՝ թուրքական ցեղերի ներխուժման, խժոժությունների, զանգվածային կոտորածների և զանգվածային տեղահանությունների օրերին ամենայն հավանականությամբ թուրքերեն Եթիմ-եթըմ-որբ մականունը գործածության մեջ է մտել նախ իբրև հատկապես մականուն, ապա որպես անուն: Եթըմ-ը հայկական ուրույն տառադարձությամբ դարձել է Հեթըմ, իսկ ըն-ն՝ ում, և ստացվել է «Հեթում» անունը:

Կարծում եմ, որ էպոսը հաստատում է մեր այս ենթադրությունը: Էպոսի մեջ Դավիթը որբ է, անպաշտպան մանուկ հասակից: Նրան պահում են նախ Մսրա Մելիքի մայրը, ապա իր քեռին կամ հորեղբայրը: Եվ որբ Դավիթը հաճախ է «եթիմ» անվանվում պատումների մեջ: Պատումներ կան, որտեղ Մսրա Մելիքը Դավթին շարունակ «հեթիմ» է անվանում («են շան հեթիմ տը սըպանիմ», «...հեթիմի գըլոխ տը կտրիմ», որովհետև «են շան հեթիմ ճող տի տա»՝ ճյուղ պիտի արձակի):³¹⁹ Սակայն Դավթին «հեթիմ» է անվանում ոչ միայն թշնամին՝ Մսրա Մելիքը, նրան «հեթիմ» են անվանում նաև հայրը, քեռին, հորեղբայրը: Կաճեացի Հովան Զոհրաբյանի պատումի մեջ Դավթի միայն մայրն է մեռել, և հայրը՝ Մհերը, ասում է. «Տնվթի մեր մեռավ. Տնվթի մնաց հեթիմ»: «– Ինչ անեմ, եսա հեթիմ վոր պախեմ,

319 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 617:

– Մտածեց ինքն ուր մեչ Մհեր»:³²⁰ Ապարանցի Մուրադի պատումի մեջ Սասունում կերուխումի պահին քեռի Թորոսը մոայլվում է՝ «իմ եթըմներ չուրի չերթամ, բերեմ [Մըսրից], Իդա բաժակ իմ բերան չառնիմ», – երդվում է նա:³²¹ Ալաշկերտցի Մանուկ Թորոսյանի պատումի մեջ Մսրա Մելիքի հայրը և Մհերը եղբայրացել են և պայման կապել՝ ով ուշ մեռնի, մյուսի երեխաներին տանի «պահի», «որ ուրիշները չըսին՝ մացած ին եթում»:³²² Այրարացի Մուրադ Հովսեփյանի պատումի մեջ՝ «Մհեր-հինքն ընկավ, մեռավ. Դավիթ մնաց հեթիմ հորից. Մերն էլ ընկավ մեռավ. մորից էլ հեթիմ մնաց»:³²³ Սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանի պատումի մեջ հայրն ու հորեղբայրը մեռնում են, «ուրանց կնկտիքն էլ մեռան: Ետ երկու տղեն մնացին յեթում: Մնացին Քեռի Թորոսի ձեռքի տակ»:³²⁴

Հագագային «հ» հնչյունի հավելումը բառի սկզբում օրինաչափ երևույթ պետք է համարել մեր լեզվի մեջ. ֆրանսերենում «Անրի» արտասանվող անունը հայերենում դառնում է «Հանրի». կարող են առարկել, թե «Անրի» անվան մեջ անձայն «հ» կա բառի սկզբում»: Վեճի չբռնվենք. սա լեզվաբանությանը վերաբերող հարց է, սակայն ասենք, որ հենց էպոսի մեջ հայերեն «երդում» բառը դարձել է «հերդում» («հերտումակոտոր»), «ինքը»՝ «հինքն», Ամիր քաղաքը՝ «Համիր»:³²⁵ Իմացիր բայը՝ հիմացիր, ըռպեն՝ հրոպե, էրտիկը՝ հերտիկը և այլն: Այս օրենքի ուժով գավառացի Եղիազար Հակոբյանի պատումի մեջ «եթիմ»ը դարձել է «հեթում» («Տավիթ մնաց հեթում»):³²⁶

Այս ամենից հետո համարձակվում ենք ենթադրել, որ հեռավոր ու մենավոր Հռոմկլայում Պահլավունիների մշակութային ու հայրենաբաղձ միջավայրում սպասված, Ներսես Շնորհալու աղերսած երազ Դավիթն էպոսի մեջ միահյուսվել է Եգիպտոսի հայկական գործի սպանված հրամանատարի «հեթում» մնացած որդու հետ, որն անօրինակ սխրագործություններով կարողացել էր իր հորը ծառայող գործի մի հատվածի հետ հասնել Սասուն, Սասնո լանջերին վրեժխնդիր լինել Մսրա Մելիքից՝ պարտության մատնելով նրա զորավար Քութբադին:

320 Լույս տեղում, էջ 1094:

321 Սասնա Ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 63:

322 Լույս տեղում, էջ 271:

323 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 247:

324 Լույս տեղում, էջ 659:

325 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 1093:

326 Լույս տեղում, էջ 861:

Էպոսի նյութ և առարկա կարող են դառնալ միայն հերոսական իրադարձությունները և հերոսական դեմքերը, որոնք հուզեն ու խանդավառեն ժողովրդին: Եգիպտահայ գաղութի զարմանալի վերելքի ու կործանման, Պահլավունիների և նրանց «չվանը բռնողների» անօրինակ սխրագործությունների պատմության մեր տեսությունից հետո անկասկածելի է դառնում, որ էպոսը հիմնականում հյուսվել է Պահլավունիների ճյուղավորված տան պատմությունների կամ պատմավեպերի ժողովրդական վերամշակման միջոցով:

Անհայտ պատմողի պատումի մեջ սասունցի ազնանցորդիների տարբեր սերունդներ գնացել են Մարը գրավել, այնտեղ իշխել, ապա նահանջել և Սասնո լանջերին պարտության են մատնել Մարա Մելիքի զորավարին, – ճիշտ այնպես, ինչպես իրական պատմության մեջ, – սակայն Սասունին շարունակ սպառնացող, շարունակ կախման մեջ դնող դևերի պետին՝ Ջանփուլադին, հակառակ իրենց կատարած բոլոր փորձերին, պարտության չեն կարողացել մատնել: Ջանփուլադին (ուրեմն՝ Բեկթեմուրին, այսինքն՝ Խլաթի Շահ-ի-Արմենին) հաղթելու հերթական անհաջող փորձից հետո հերոսն իր եղբորն ասում է.

«– Հե՛, ախպերիկ, ինչ ասեմ. պան պանից ելեր ի, կնացի վեր Ջանփուլադին կռիվ, զարկի իրեք գորգ. աման են գորգեր պարապ կնացին: Ու յեն ակամա ինոր բախտ տվի, վոր Դավիթն ըրոյսկեմ վեր ինոր կռիվ: Ես կերպով կորագլոյս եմ աշխրի առջեմ: Յես վոր չկարցա վեր ինոր, ինչըխ պիտի կռվի ու անտի Դավիթ, վոր *մորից չեղե* հալա»:³²⁷

Մեր կատարած այս պրպտումները մեզ հիմք են տալիս ասելու, որ իր զարմանալի սխրագործություններով և ողբերգական վախճանով էպոսի նյութ է ծառայել հատկապես Հեթում (Վասիլ) Սասունցին, որի անգործածական Վասիլ անունը հեշտությամբ մոռացության է մատնվել, բայց Շնորհալու աղերսած ու երագած բաղձալի Դավիթը միահյուսվել է Հեթումին՝ ավելի գունագեղ դարձնելով նրա կենսագրությունը:

ԺԴ. «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼԻՆ»

Դավթի ձին պատումների մեծ մասի մեջ կոչվում է Քուրկիկ Ջալալին: Այս բաղադրյալ անվան առաջին անունը տեղ-տեղ դառնում է Քուրկիկ, Քուրդկ, Քուրիկ, Քուրկի, Քուրկի և Քըրկու, իսկ երկրորդ անունը տեղ-

տեղ դառնում է Ջալադին, Ջալին, Ջալաթ, Ջալալիկ: Այն պատումների մեջ, որտեղ Դավթի ձին անուն չունի, այն պարզապես կոչվում է Քուրակ: Պատումների մեծ մասի մեջ ձիու արտաքինը շատ հասարակ է. դա մի սովորական փոքրիկ քուրակ է, որի ուժը երևան է գալիս միայն Դավթի զարկից հետո:

Պատումների մեծ մասի մեջ դա Դավթի հոր ձին է, որ հերոսի հորեղբայրները կամ թե քեռին պահել են քաջ Մեերի մահվանից հետո, և Դավթը ոչինչ չգիտե ինչպես իր հոր զենք ու զրահի, այնպես էլ այդ ձիու մասին:

Ուշագրավն այստեղ այն է, որ հերոսի հայրը վաղուց է մեռել, բայց և այնպես նրա ձին մնացել է քուրակ (իրեք մինազ = իրեք տարեկան) և կոչվում է, ինչպես ասացինք, Քուրկիկ, Քուրիկ, Քուրդկ, Քուրկե և այլն: Ուրեմն Քուրկիկ անունը այստեղ չի նշանակում, որ ձին դեռ շատ փոքր է, քուրակ է, այլ այն, որ դա Ջալալի-Ջալալիկ-Ջալաթ անունով հայտնի ձիու, կամ թե այդ անունով հայտնի մարդու պատկանող ձիու քուրակն է: Պատումներից մեկի մեջ ճիշտ այդպես էլ ասված է՝ «Քուրկու Ջալալին»:³²⁸

Այնուհետև այդ ձին ոչ միայն Դավթի հոր ձին է, այլև ազնանցորդիների տոհմի ձին է և ջրային ծագում ունի՝ Սանասարը նրան ծովի տակից է դուրս բերել.

«Գնացին ծովի կրաղ [եզրը]:

Սանասար մեծ աղբերն եր,

Բաղդասար՝ պստի աղբեր:

Սանասար Բաղդասարին ասաց.

– Մինք մե թալինք ջոր՝ աղեկ ե, քան երթանք.

Կռապաշտ թագավոր մե կը մատղի կուռքերու հառաջ:

Բաղդասար սիրտ չարեց.

Սանասար ինք քցից ծով: ...

Տեսավ՝ մե ձի ենդի զինած,

Կեծական Թուր վրեն կախ տված:

Սիրտ երավ, վոր ձին խեծներ, ձին ասաց.

– Խոնդածին, ինչ կ'ենես, քո միտ ինչի:

Ասաց. – Քե կը խեծես...»:

Բայց երբ ձին տեսնում է, որ Սանասարն իրեն արժանի հեծնող է.

«Ասաց. – Յես քո ձին, դու իմ տեր»:³²⁹

327 Սասնա Ծոեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 438:

328 Լույն տեղում, էջ 465:

329 Սասնա Ծոեր, հ. Ա, էջ 130-131:

Կա Շատախի Ազիզ (Ազո) Դարիբյանի խիստ ուշագրավ պատումը, որ 1933 թվականին գրի է առել Կ. Մելիք-Օհանջանյանը: Այս պատումի մեջ Մհերի մայրը՝ Մամիկը, որդու մահից հետո ուխտ էր արել դուրս չգալ իր սենյակից «Չորս [մինչև] մեր Նորամանուկ չըլնի, իմ Մհերի տեղ կարի»:³³⁰ Մեկ էլ՝ սենյակի մեջ փակված նա լսում է Մհերի սազի ձայնը: Սպասուհին նրան հայտնում է, որ.

«Տավիթ իլիր, ուր խոր [հոր] շորեր խնգիր,

Ուր խոր գենքեր կապիր վրը ուր,

Ուր խոր Քուռկե Ջալադին խեծիր»:³³¹

Եվ հոր սազը զարկելով կռվի է գնում Մելիքի վրա:

Երբ Դավիթն անցնում է Մամիկի պատուհանի տակով, Մամիկը պատուհանը բաց է անում Դավթին օրհնելու և ձիու հետ խոսելու համար, որովհետև.

«Ծիու անուն մարթ չըր գիտի,

Մինակ հինք գըտեր, վոր անուն Մուրատ եր:

Փանջարից [պատուհանից] կանչից. – Մորանտ, Մորանտ:

Ծին փանջարի առեչ կայնավ:

Ըսաց.

«Տո՛ Մորանտ, մեռնիմ քի, Մորանտ,

Տավիթ խեր չունի, անես խերութեն.

Տավիթ մեր չունի, անես մերութեն.

Տավիթ ախպեր չունի, անես ախպերութեն»:³³²

Շատախի Գրիգորի պատումի մեջ ևս ձին թեն հայտնի է Քուռկիկ Ջալալին անունով, սակայն Մամիկը նրան կանչում է Մուրադ: Այս պատումի մեջ, երբ մանուկ Դավիթը փորձում է հեծնել Քուռկիկ Ջալալին, ապա «ձին ասաց. – Բի կը թալեմ անտակ ծովեր, կորսըցըցեմ: Դավիթ ըսաց. – Տի մտնեմ քո քիթ: Ձին ասաց. – Դավիթ, դե՛, դու՛ ձի տեր, իս ել քե՛ ձի»:³³³ Մամիկը.

«Գըլնիս փանջարին վի կախից տակ,

Տեսավ՝ Դավիթ ձիու վերեն,

Փանջրի հիրջեվեն կ'անցնի:

Կանչից. – Մուրանտ:

330 Լույս տեղում, էջ 806-807:

331 Լույս տեղում, էջ 807:

332 Լույս տեղում:

333 Լույս տեղում, էջ 743:

Դավիթ զարմացավ, ձին կայնավ,
Ըսաց. – Մուրանտ, քեզնից կը խնդրվեմ»:³³⁴

Այսպիսով, ըստ այս պատումի, հերոսի ձիու անունը Մուրատ է, իսկ «Քուռկե Ջալադին» ոչ թե անուն է, այլ պարզապես բացատրություն, որ դա Ջալադի քուռակն է, իսկ Ջալադը, ինչպես ենթադրեցինք, կարող է լինել ինչպես մարդ, այնպես էլ ձի, որովհետև երկուսն էլ՝ ինչպես Ջալադ անունով հայտնի ձին, այնպես էլ Ջալադ անունով մարդու ձին կարող են քուռակ ունենալ:



Մոնղոլները դեպի արևմուտք շարժվելիս իրենց առաջին հարվածը հասցրին Խորեզմի Մահմուդ Շահին, որը փախավ և ապավինեց Կասախականի հարավային կղզիներից մեկին և այնտեղ մեռավ բորոտների մեջ: Նրա կրտսեր որդին փախավ Մազանդարանի անտառները և հետագայում կարողացավ միառժամանակ սեփական կարճատև թագավորություն կազմակերպել պարսկական Ատրպատականի հողերում: Ավագ որդին՝ Ջալալ-էդ-դինը, Աֆղանստանում մեծ զորք կազմեց և փորձեց հետ գրավել Խորեզմը, սակայն պարտվեց ու նահանջեց դեպի Հնդկաստան: «618 թվականի շավալի 22-ին (122 թվականի դեկտեմբերի 9-ին), – գրում է Ավգուստ Մյուլլերը, – Հինդուսի ափին թաթարները հասան նրա զորքին, որը գնալով նոսրացել էր: Ոչ մի տեղից հնարավոր չէր անցնել գետը, որի գահավեժ ափն այդտեղ 20-30 ոտնաչափ բարձրություն ունի: Ջալալ-էդ-դինը հարկադրված էր վճռական ճակատամարտ տալ այդտեղ... Նա ինքը քաջության հրաշքներ գործեց, բայց չէր կարող երկար դիմադրել գերակշիռ թիվ ունեցող թշնամուն: Պաշտպանվող խմբերը մեկը մյուսի հետևից ընկնում էին մոնղոլների նետերից ու թրերից. երբ ամեն ինչ տանուլ էր տրված, ապա խիզախ ուղիղ գետափի բարձր ծայրից իրեն նետեց արագահոս գետը: Դեռ ողջ մնացած նրա վերջին հետևորդները հետևեցին նրա օրինակին: Նրանց մեծ մասը զոհվեց ալիքների մեջ կամ թե թշնամու նետերից, բայց Ջալալ-էդ-դինի ուժեղ ձին նրան անվնաս դուրս բերեց մյուս ափը»:³³⁵

Չինգիզ խանը հրամայել էր նետահար չանել և չապանել, այլ ողջ-ողջ բռնել իրեն այնքան զլխացավանք պատճառած անհանգիստ Ջալալ-էդ-դինին. իսկ վերջինս, երբ ամեն ինչ վերջացած է համարում, իջնում է մարտա-

334 Լույս տեղում, էջ 743-744:

335 А. Мюллер. История ислама с основания до новейших времен. Том III, 1896, с. 235.

կան նծույգից և հեծնում է մի մատակ ձի, որ իր փախուստն անկանգ լինի: Այդ մատակ ձին էլ, գահավեժ բարձունքից գետը նետվելով, իր տիրոջն անվնաս դուրս է բերում մյուս ափը:

Ջալալ-էդ-դինը որոշ ժամանակ Հնդկաստանում թափառելուց հետո Հարավային Պարսկաստանի վրայով անցնում է Ատրպատական, մոնղոլների դեմ համատեղ պայքարելու դաշինք է առաջարկում Ատրպատականի ու Հայաստանի մահմեդական աթաբեկներին ու սուլթաններին և Վրաստանի քրիստոնյա թագավորին: Մերժում ստանալով՝ նա մոլեգնած ասպատակում է Վրաստանը, իջնում Շահ-ի-Արմենների երկիրը, գրավում Խլաթը (1229 թ.), բռնությամբ տիրանում նրա գերված կնոջը՝ Թամթային, որը, ինչպես գիտենք, Իվանե աթաբեկի դուստրն էր, հայ-վրացական զորքի հրամանատար Ավագի քույրը և վրաց Ռուզուդան թագուհու մտերիմ ընկերուհին: Իկոնիային ապավինած Աշրաֆի ջանքերով Իկոնիայի սուլթանի և Էրզրումի էմիրի միացյալ զորքը, դեռ մոնղոլները երկրորդ անգամ արևմուտք չեկած, պարտության է մատնում Ջալալ-էդ-դինին, որը փախչում է Մուղան, իսկ Մուղանում հանդիպելով մոնղոլական զորքի՝ հալածական հետ է փախչում, պարտվում Ամիրի մոտ ու ապավինում Սասնո լեռներին:

«Ջալալ-էդ-դինը, – շարունակում է նրա մասին Ավգուստ Մյուլլերը, – մեկն էր այն մարդկանցից, որոնց կենսառատ եռանդը չի ընկճվում և ոչ մի պարագայում. ցերեկները շարունակ ձիով վրա նստած, իսկ գիշերները հարբեցողությամբ և կանանց հետ անցկացնելով՝ նա դեռ որոշ ժամանակ արկածներով հարուստ կյանք վարեց քրդական-հայկական լեռներում»:³³⁶

Խլաթի թագավորության լեռնաստանը XIII դարում, մանավանդ նրա առաջին կեսին, դեռ չէր կարելի քրդական-հայկական անվանել, այն դեռ լրիվ հայկական էր: Ինչպես գիտենք, Շահ-ի-Արմենները բյուզանդացիների նման քրդերին դեպի հարավ էին քշել Տարոն-Տուրուբերանից: Էյուբյան Շահ-ի-Արմենները, Ջաքարյանների հետ խնամիանալով, նույնպես վարեցին նախկին Շահ-ի-Արմենների քաղաքականությունը: Սասունը դեռ շատ երկար ժամանակ մնաց հայկական, հետևաբար Ջալալ-էդ-դինը իր մահը գտավ հայկական լեռներում: Պատմությունն ասում է, որ լեռներում մի հասարակ մարդ է սպանել նրան 1231 թվականի օգոստոսի 16-ին: Այնքան, որքան դեռ XIII դարի Սասունն անվանվել է «քրդական-հայկական լեռներ», հնարվել է նաև հետագայում արդեն ավանդական ուժ ստացած այն տարբերակը, թե այդ հասարակ մարդը մի քուրդ է եղել, որն այդ ակտով առել

336 Լույս տեղում, էջ 244:

է իր եղբոր սպանության վրեժը, որ կատարվել էր Ջալալ-էդ-դինի ձեռքով: Բայց Սասունը XIII դարում դեռևս «քրդական-հայկական» չլինելու, այլ միմիայն հայկական լինելու հիման վրա անհավանական չափի համարել, որ Ջալալ-էդ-դինին սպանող հասարակ մարդը մի սասունցի հայ է եղել, և Ջալալի կամ Ջալադի քուռակը բաժին է հասել այդ հային:

Երբ այդքան նշանավոր գորավարն իր վախճանը գտել է Սասնո լեռներում, ապա սասունցուն չէր կարող անհայտ լինել նրա արտաքուստ հասարակ ձիու առասպելական սխրագործությունը, և նա իր հերոսին հեծցրել է այդ ձիու՝ Ջալալի քուռակին: Այնքան, որքան Ջալալ-էդ-դինի ձին նրան անվնաս դուրս էր բերել փրփրադեզ գետից, սասունցին իրավունք ուներ ջրային ծագում վերագրելու նրան:

Բայց սասունցին այդ ձիուն կամ նրա քուռակին տիրացել է իր հայրենի Սասնո լեռներում, որտեղ աստանդական կյանք էր վարում նրա տերը: Անհավանական չէ, որ ծպտված, փախստական Ջալալ-էդ-դինը իր սիրած ձին կապեր որևէ այրում: Պատումներ կան, որտեղ Քուռակ-Ջալալին ոչ թե ջրային ծագում ունի, այլ շատ իրական ձևով է բաժին հասել հերոսին: Դեռ մի քանի տասնյակ հետևորդներով հաստատվել էր Սասնո լեռներում և վնաս էր տալիս խաղաղ շինականին ու խաշնարածին: Դավիթն սպանում է դներին և նրանց Գանձարան-քարայրից դուրս է բերում քուռակը:

Գարեգին Սրվանձտյանի գրի առած առաջին (Տարոնցի Կրպոյի) պատումի մեջ կարդում ենք.

«Ասեց տղեն. – Դավիթ,

... Քառսուն հարամի դեմ,

Ջարկեցին, զմըր հորթեր տարան, ու գացին:

Դավիթն ասեց. – Դու հողա կեցի,

Իդա տեղու հորթերուն իշե.

Յես կ'երթամ զմըլըլտոնք կը դարձում:

... Գնաց երի [քարայրի] մի դուռ ու կայնավ:

Դավիթ հողի մեկ ձենով բոռաց.

Սարսափ թափավ վըր ըդ դեվերուն. ...

Եդ հրամիներու մեծ հերթը լսեց, ասեց.

– Գիդի՛, ըդի Դավիթ՝ Աբամելիքի տղեն ե,

Ելեք, խզմաթ [ծառայություն] երեք, որ չսպանե զմըլդի:

Մեկ-մեկ դուրս ելան,

Ու Դավիթ մեկ-մեկ կոպալ զարկեց,

Ու քառասունի գլուխ լե գնաց, ու ջանդակ [մարմինը] մնաց...
 Դավիթ զկոպալ ոգմըցուց ի դուռ, ու մտավ երի մեջ:
 Տեսավ, որ գոլոն [շեղջ] մի ոսկի յե, մեկ՝ արծաթ:
 Աշխրորքի մալ ու դովաթ:
 Քանի ուր պապ մեռեր ե,
 Ընդունք ավերութեն երած են, ու լցած եղ եր:
 Դուռ մի բացեց, որ ձիու քուռակ մի կապուկ էր հինք:
 Ինք ու հինք դուշուրմիշ եղավ [միտք արավ], ու ասեց.
 «Քեռի, իդա մալ ըմեն քրզի,
 Ու իդա ջանավար [գազանը = ձին] ընծի»:³³⁷
 Գարեգին եպս. Հովսեփյանի գրի առած Ապարանցի Մուրադի պա-
 տումի մեջ կարդում ենք.
 «Դու որ իդա տեղեն գացիր մեր գեղ,
 Քառսուն դեմ եկան,
 Քառսուն կոլ իմ նախրի միջեն ջոկեցին ու տարան...
 – Դե, անպեր, ըսեց, ելի, հրիսա կի, յես կ'երթամ: ...
 Դեմեր տեսան, որ Դավիթն եկավ,
 Փախան, մտան հերի մեջ
 Ու ջաղչի քար տվին դեմ ուրանց: ...
 Դավիթ գնաց... կայնավ երի դուռ,
 Քար քաշեց, թալեց մեկ դեն,
 Ու – Դեմեր, ըսեց, մեկ-մեկ դու'ս արեք:
 Դեմեր մեկ-մեկ դուռ եկան.
 Մեկ-մեկ կոպալ զարկեց ու շրջեց:
 Քառսուն լե սպանեց ու մտավ մըչ երին.
 Գնաց, տեսավ, որ ըդոնց գոմ
 Քառսուն հատ ձի յեր կապուկ:
 Որ մեկի քամկի վրեն ձեռ կը ճխտեր,
 Կը տղգեր ձեռաց տակ:
 Գնաց վերեմ, մեկ քուռակ մ'եր կապուկ իրեք մինազ [երեք տարեկան],
 Ձեռ ճխտեց, ձեռաց հետ բանձրըցավ:
 – Ըհա, ըսեց, իդա իմ ձին ե:
 Եկավ, տեսավ, որ ուրանց նստվածք՝

337 Սասնա ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 22-23:

Դունյի մալ-խազինեն [աշխարհի ապրանքն ու գանձը] բերած են, լը-
 ցած.

Դարձավ ու դուռ ելավ,
 Ջաղչի քար տվեց դռան դեմ ու դարձավ:
 [Որ գա գյուղ և քեռի Թորոսի հետ գա ավարի հետևից]
 Քեռի Թորոսիկ ըսեց. – Դե քեղե, տեսիմ:
 Ու Դավիթ ընկավ առեչ,
 Քեռի Թորոսիկ լե հեղեմ,
 Գացին, ելան սար, հասան դեմերու հերին [այրին].
 Մտան հերի մեջ, քառսուն ձի կար հոնի: ...
 Ու Դավիթ Քեռի Թորոսիկն ըսեց.
 – Իդա մեկ ձին կ'իտաս ընծի:
 Ձիու անուն լե Քուռկե Ջալին»:³³⁸

Այս հատվածում Գարեգին եպս. Հովսեփյանը *բանձրըցավ* բառի վրա
 աստղանիշ է դրել և տողատակի ծանոթության մեջ բացատրել, թե «Ա. վա-
 րիանտում Դավիթն ինքն իրան խոսում է. «Քեռի Թորոս, բիրադի [ամբող-
 ջը] քրզի, Քուռկե Ջալաթին տաս ընծի»:

Ի դեպ, էպոսի պատումի մեջ երեք տեսակ դևեր կան: Կան դևեր,
 որոնք նստում են «ճանախապերաններին», և հսկում «ընցնող-դարձողնե-
 րին»: Դրանք Խլաթի տեր (ուրեմն և սասունցիների սյուզերենի) Բեկթե-
 մուրի (Ջանփուլադի) դևերն են: Նրանց թագավոր «Ջանփուլադ... երկթե
 խալավ կը խայներ» [երկաթե հագուստ կհագներ]. «Են դեմը Ջանփուլադի
 կեշնշն [լրտեսն] էր»:³³⁹

Կան նաև այլ դևեր, որոնք ապրում են Ջանփուլադի թագավորության
 սահմաններից դուրս և նրա թշնամիներն են: Ջանփուլադի համար շահա-
 վետ է, որ սասունցիները կոմի գնան նրանց վրա: «Կը խասնես Փրե Բաթ-
 մանի մոտ, – խորհուրդ է տալիս Ջանփուլադը սասունցի հերոսին, – ենտեղ
 պիտի տեսնաս Սիվտակ դեմ ըմ, վոր շատ խորոտ աղջիկ ըմ փախցուցե...
 են աղջիկ քե փեշքեշ»:³⁴⁰ Փրե Բաթմանի «դեմերն ել Ջանփուլադի թշնա-
 միքն ին»:³⁴¹

Սակայն կան դևեր, որոնք «ճանախապերաններին» հսկող «կեշոշ-
 ներ» չեն, ոչ էլ նստում են Սասնո ու Դիարբեքի սահմանաբաժան Բաթ-

338 Նույն տեղում, էջ 66-69:

339 Սասնա ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 396:

340 Նույն տեղում, էջ 415:

341 Նույն տեղում, էջ 399:

մանա սու գետի Փրե Բաթման կամրջի վրա, այլ ապրում են հենց Սասնո լեռներում, թաքնվում են քարայրների մեջ և հանկարծակի հարձակումներով փախցնում են սասունցիների տավարը: Էպոսի հերոսներն ամենից ավելի հենց այս դևերի դեմ են պայքարում՝ հետ բերելով նրանց թալանած և քարայրներում պահած գանձը: Պետք է ենթադրել, որ երրորդ դեպքում մենք գործ ունենք Ջալալ-էդ-դիսի և նրա սակավաթիվ հետևորդների հետ, որոնք ապաստանել էին Սասնո լեռներում և ներդրություն էին պատճառում սասունցիներին:



Այս ամենը մեզ ասում է, որ թերևս սասունցին իր հերոսին հեծցրել է Ջալալ-էդ-դիսի առասպելական ուժի տեր ձիու քուռակին՝ «Քուռակի Ջալալուն»:

7. «ԿՌԱՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԿՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՑԱԾ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂԶԿԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Էպոսի բաղկացուցիչ վեպերից մեկը՝ «Կռապաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությունը», հորինվել է մոնղոլական արշավանքների դարաշրջանում՝ XIII դարի վերջին տասնամյակում՝ Ղազան խանի (1295-1304 թթ.) օրոք, երբ մոնղոլները դեռևս մահմեդականություն չէին ընդունել և կռապաշտ էին:

Մելչուկյան թուրքերի տարածած սարսափն այնքան ահավոր էր ու մեծ, որ բովանդակ քրիստոնեական աշխարհն սկզբում ուրախացավ, երբ լսեց, որ Արևելքից գալիս են մահմեդական թուրքերին թշնամի նոր ժողովուրդներ: Մերձավոր Արևելքից Եվրոպա վերադարձող առանձին կրոնավորներ այնտեղ պատմում էին, թե Արևելքից եկող այդ նոր ժողովուրդները քրիստոնյաներ են, առասպելական Հովհան Երեցի հիմնած թագավորության ժառանգները: Այդպես Եվրոպայում վերակենդանացավ ու վիպային ձև ընդունեց Հովհան Երեցի առասպելը: Այնուհետև, երբ մոնղոլները եկան ու հասան Մերձավոր Արևելք ու Արևելյան Եվրոպա, և պարզվեց նրանց կռապաշտ լինելը, թուրքերից սարսափահար քրիստոնեական Եվրոպան և Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում՝ նաև հայերը, դեռ շարունակում էին հուսախար չլինել: Նրանք ամեն ճիգ ու ջանք գործադրում էին, որ Բաղդադը գրաված մոնղոլները քրիստոնեություն ընդունեն: Կրոնական առաքելությունները և խնամիական կապերը սովորական երևույթ էին այդ ժամանակ: Հայտնի է Ռուբինյանների առաքելությունը մոնղոլների մոտ և նրանց գերիշխանությունն ընդունելը: Հայտնի են Հյուսիսային Հայաստանի հայ նախարարների խնամիական կապերը մոնղոլների հետ: Մոնղոլների արքունիքում ազդեցիկ դարձած քրիստոնյա կանայք շարունակ քարոզում էին քրիստոնեության օգտին: Այդ շրջանում հյուսվում է կռա-

պաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա վեպը, որ Ֆլորենցիայի եպիսկոպոս Անտոնինոսը Եվրոպա էր տարել դեռևս միջին դարերում: Միքայել Չամչյանն իր «Հայոց պատմության» երրորդ հատորում³⁴² գետեղել է այդ վեպը, որի իսկությունը և թարգմանության ճշտությունը 1931 թվականին ստուգել է բանասեր Տիգրան Չիթունին:³⁴³ Այս վեպը կամ պատմությունը, որ Եվրոպա է տարվել դեռևս XIV դարում, կաթոլիկ կրոնավորի սեղմ շարադրանքով անվթար հասել է մեզ:

Ահա այդ պատմությունն աշխարհաբար թարգմանությամբ, որ մենք կատարել ենք Միք. Չամչյանի գրաբար թարգմանությունից.

«Պատմում է նաև Հեթում երկրորդ թագավորի մասին, որն իր աղջկան կնության տվեց Ղազան խանին: Եւ Սքանչելիք տեղի ունեցավ՝ Ղազան խանը դարձավ քրիստոնյա: Իսկ թե ինչպէս, այդ մասին այսպես է պատմում Ֆլորենցիայի սուրբ եպիսկոպոս Անտոնինոսը. –

«Թաթարների թագավոր Ղազան խանը թեև մարմնով փոքրահասակ էր, սակայն հոգով մեծ էր, թեև անարգատեսիլ էր, բայց զգոնամիտ էր, առաքինությամբ ճոխացյալ, պատերազմական գործերին հմուտ, առատասիրտ և քրիստոնյաներին բարեկամ:

Երբ նա թագավոր դարձավ, ապա կամեցավ ամուսնանալ. այդ առթիվ նա խնդրակներ ուղարկեց ամենուրեք, որ մի գեղեցիկ աղջիկ գտնեն իր համար. թեկուզ անարգ ազգից լինեք աղջիկը կամ նույնիսկ ոչ ազնվական – այդ միևնույն էր խանի համար:

Եվ որովհետև հայոց թագավորի աղջիկն ամենագեղեցիկն էր, Ղազան խանը խնդրեց նրա ձեռքը: Թագավորը չառարկեց, միայն թե իր դուստրը դեմ չլինեք:

Իսկ թագավորի դուստրը՝ այդ իմաստուն ու պարկեշտ օրիորդը, խոնարհելով հոր խոսքին, նրան ասաց.

– Պատրաստ եմ հնազանդվելու քո հրամանին, եթե խանը թույլ տա, որ ես մնամ քրիստոնյա և ազատ պաշտեմ իմ Աստծուն:

Ղազան խանը հավանություն տվեց այդ պայմանին և խոստացավ կատարել օրիորդի ցանկությունը:

Այդ ժամանակ հայոց թագավորն իր աղջկան ուղարկեց խանի արքունիքը. հարսի հետ միասին գնացին նաև բազմաթիվ երևելի անձինք, որոնց

թվում նաև հայոց թագավորի կրոնավոր եղբայրը և մի քանի այլ կրոնավորներ:

Երբ Ղազան խանը տեսավ գեղեցիկ օրիորդին, շատ սիրեց նրան և, մեծ հարսանիք կազմակերպելով, ամուսնացավ նրա հետ:

Բայց հայոց թագավորի դուստրը ծնեց մի բոլորովին զարշատեսիլ հրեշ երեխա, որ շատ քիչ նմանություն ուներ մարդու հետ:

Ղազան խանը տխրեց և իր մոտ խորհրդի կանչեց թաթարների իշխաններին ու նրանց իմաստուններին:

Թաթարների իշխաններն ու իմաստունները պատասխան տվին նրա հարցումին ու ասացին. – այդ զավակը քո, դյուցազնիդ ծնունդը չէ, այլ պոռնկության արգասիք: Դրա համար պետք է կրակի մատնել նրա մորն, իր պտղի հետ միասին:

Ղազան խանը տխրեց այդ խորհրդի վրա, որովհետև շատ էր սիրում թագուհուն, բայց որովհետև զգվել էր նրանից ծնված զավակից, հրամայեց երկուսին էլ միասին այրել:

Երբ պատրաստում էին խարույկը, թագուհին աղաչեց մի քահանա բերել իր մոտ: Նա խոստովանություն արավ, հաղորդություն առավ և մկրտել տվեց իր զավակին:

Եվ հենց որ տղան մկրտվեց, նրա կերպարանքը միանգամից փոխվեց և այնպես հույժ գեղեցկացավ, որ նրա նմանը չէիր կարող գտնել աշխարհիս երեսին:

Այս բանի վրա ուրախացավ Ղազան խանը և, սքանչելիքի վրա զարմացած, մեծ փառքի արժանացրեց թագուհուն:

Եվ ինքը, թաթարների մեծ բազմության հետ, ընդունեց քրիստոնեական հավատը, մկրտվեց ու դարձավ քրիստոնյա:

Եվ լատինական ծագումով մի ֆլորենցիացու շուտափույթ դեսպան ուղարկեց Բոնիֆացիոս պապի մոտ, որ այս եղելությունները պատմի նրան»:

Այստեղ մեզ չի հետաքրքրում այն հարցը, որ Ղազան խանը պատմական անձնավորություն է, որ նա համեմատաբար բարեհաճ էր քրիստոնյաների հանդեպ, որ Կիլիկյան թագավորությունն ընդունել էր մոնղոլների խնամակալությունը և այլն, մեզ այստեղ հետաքրքրում է միմիայն այն, որ «Սասունցի Դավիթ» էպոսի ընդարձակ պատումների առաջին ցիկլի մեջ, որոշ տարբերակներում, նկատելի են այս պատմության որոշակի անդրադարձումներ, որն, անտարակույս, շատ ավելի ընդարձակ է եղել, քան Անտոնինոս Ֆլորենցիացու սեղմ շարադրանքը:

342 Միքայել վրդ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հատոր Գ, Վենետիկ, 1786, էջ 379-380:

343 Տիգրան Չիթունի, Բիւր ակ..., հազար ակ, Փարիզ, 1941, էջ 90-92:

345 Stanley Lane-Poole. The Mamelukian Dynasty, p. 172.

8. ԽԱՆԴՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սելջուկյան արշավանքները շրջադարձային երևույթ էին հայոց պատմության մեջ: Նոմադական ցեղերը Հայաստանի մանավանդ կենտրոնական սահմաններում համարյա ամբողջովին ոչնչացրին հայկական նախարարական կիսանկախությունը: Նրանք տեղ-տեղ զանգվածաբար նստեցին հայոց երկրում:

Բաղդադի Աբասյանների տիրապետության վերջին շրջանում բուլվոր քրդերն էլ հարավից նկրտում էին մտնել Հայկական լեռնաշխարհ, բայց Բյուզանդիոնը նրանց հետ էր մղում Տարոն-Տուրուբերանից («Հայոց Տնից»): Սելջուկների առաջ բերած վայրիվերումների շրջանում հարավից եկող մրվանյան քրդերին հաջողվում է միառժամանակ գրավել Տարոն-Տուրուբերանը և հաստատվել Վանա լճի արևմուտքում և հյուսիսում: Բայց Թավրիզից եկած սելջուկների մի զորաբանակ նորից հարավ է շարժվում մրվանյան քրդերին (1100 թ.) և հաստատվում Խլաթում՝ կազմակերպելով «Հայոց թագավորություն» («Շահ-ի-Արմեն»):

Հարավ շարժված Մրվանյան քրդերը Դիարբեքի շրջանում բարեկամացան ու դաշնակցեցին Մերձավոր Արևելքը հեղեղած թուրք ցեղերից ամենավայրագների՝ ղուզերի հետ, որոնց հետ միասին մի ամբողջ հարյուրամյակ (մինչև 1207 թ.) շարունակ անհաջող հարձակումներ էին գործում Շահ-ի-Արմենների երկրի վրա՝ առաջին հերթին վնաս հասցնելով նրա հարավային սահմաններին՝ Սասունին, որտեղ դեռևս պահպանվել էր հայկական կիսանկախությունը:

Սելջուկների զարկից հետո շուրջ երկու և կես դար Հայաստանում ու նրա շրջակա երկրներում գրեթե ամբողջովին վերականգնվեցին Բաղդադի խալիֆայության վերջին շրջանի ֆեոդալական փոխհարաբերությունները միայն այն տարբերությամբ, որ բացակայում էին հայ խոշոր ֆեոդալական տները, որոնց տեղը հյուսիսում բռնել էին վրաց Բագրատունիները, իսկ մնացած մասերում՝ մահմեդական ֆեոդալները: Հայաստանի մեծ մասում թեև քաղաքական տիրապետությունն անցել էր մահմեդական ֆեոդալներ

րի ձեռքը, սակայն հայ բնակչության գերակշիռ թիվը,³⁴⁴ ընդհանուր հայկական միջավայրը և հայկական ավելի բարձր մշակույթը հաճախ ազդում էին նրանց վրա: Նոմադական ցեղերի վրա հենվող մահմեդական ֆեոդալները, երկրին տեղ դառնալուց հետո, ինչպես այդ արդեն արձանագրել է անգամ ժամանակի հայ պատմագրությունը, ճգնում էին վարել «քրիստոնեաներ» և նույնիսկ «աշխարհաշեն» քաղաքականություն:

1100 թվականին, ինչպես ասացինք, Ատրպատականից եկավ մամլուկներից կազմված վարձկան զորք ունեցող մի պարսկացած սելջուկ զորավար, ոմն Սուքման, պարտության մատնեց Մրվանյան քրդերին, գրավեց նրանց մայրաքաղաք Խլաթը Վանա ծովի հյուսիս-արևմտյան ափին ու այնտեղ հիմնեց իր ուրույն թագավորությունը և իրեն կոչեց «Հայոց թագավոր» (պարսկերեն՝ Շահ-ի-Արմեն):

Շահ-ի-Արմենների դինաստիայի մասին պատմագրությունը դեռևս բավարարվում է այն ժլատ տեղեկություններով, որ Ստենլի Լեն-Պուլը հաղորդում է իր «Մուսուլմանական դինաստիաները» գրքում, թեև կասկածում է դրանց ճշտության վրա:

«Սուքման Ադ Կուբին, – գրում է Լեն-Պուլը, – որն այդ անունն ստացել էր ժամանակին Իսմայիլ Կուբ-Ադ-Դինի ստրուկը լինելուն համար, 1100 (493) թվականին բուրդ Մրվանյաններից գրավեց Խլաթ քաղաքը Հայաստանում: Նրա հետնորդները և մամլուկները շարունակեցին կառավարել այդ մարզը մի հարյուրամյակ, մինչև որ Էյուբյաններն այն նվաճեցին 1207 թվականին:

Սուքման Կուբին իշխել է	1100-1112 թթ.
Չահիր Ալ-դին Իբրահիմ Շահ-Արմանը	1112-1127 թթ.
Ահմադը	1127-1128 թթ.
Նասիր Ալ-դին Սուքման II	
(Միրան-շահը, երկարակյացը – Հ.Թ.)	1128-1183 թթ.
Սեյֆ Ալ-դին Բեկ-Թեմուրը	1183-1193 թթ.
Բադր Ալ-դին Աբ-Սունքուրը	1193-1198 թթ.
Մանսուր Մուհամադը	1198-1206 թթ.
Իչ Ալ-դին Բալբանը	1206-1207 թթ.» ³⁴⁵

344 Մերձավոր Արևելքում կազմակերպված առավել կայուն սելջուկյան դինաստիան Իկոնիայի սուլթանությունն էր, սակայն Ռուբրուկը (1220-1293) 1253 թվականին անցնելով այդ երկրով, գրում է, որ Իկոնիայի բնակչության տասից մեկն է թուրք, իսկ տասից ինը հայեր են ու հույներ: Տե՛ս Դովի. Գալոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Յերեվան, 1932, էջ 30: Եթե այդպես էր Իկոնիայում, ապա պարզ է, թե ժողովուրդների թվական փոխհարաբերությունն ինչպիսին կլինեին Շահ-ի-Արմենների երկրում:

345 Stanley Lane-Poole. The Mohammadan Dynasties, p. 170.

Հայ հին պատմագրությունը էպիգոդիկ տեղեկություններ է հաղորդում վերոհիշյալ շահերից Նասիր ադ-դին Սուքման II-ի (Երկարակյացի) և Սեյֆ ադ-դին Բեկթեմուրի մասին:

Խոսելով 588 թվականի անցքերի մասին՝ Վարդան պատմագիրն անդրադառնում է, որ «Եօթն ամօք նախ քան զայս Շահի Արմենն տիրեաց երկրին Խլաթայ և այլ բազում քաղաքաց, որ էր թոռն Սուքմանայ. և սպան զհանիկն իւր, որոյ սպանեալ էր զորդիսն և կալա զիշխանութիւնս: Եւ իբրն զարգացաւ սա, կամեցան և զսա հեղձուցանել, որ և զերծեալ Աստուծոյ յաջողելովն և տիրեալ երկուտասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց. որ է Շահի Արմեն՝ ըստ իւրեանց լեզուին: Որ և փեսայացոյց ինքեան զՍալդուխն (Կարնո Էմիրը – Հ.Թ.) և խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի: Յորում ժամանակի էր և Ելտկուզ Աթաբակն նովին բարի կամօք, յԱստուծոյ եղեալ երեքեան սոքա քրիստոնէասէր և աշխարհաշէն...»:³⁴⁶

Շահ-ի-Արմեն Սուքման II-ի, նրա փեսա Կարնո Էմիր Սալդուխի և Գանձակում նստող Ելդկուզ Աթաբեկի հասցեին «քրիստոնէասէր» և «աշխարհաշէն» ածականները, գրեթե նույնությամբ, կրկնվում են նաև XIII դարի հիշատակարաններից մեկում:³⁴⁷

Վարդան պատմագիրը բերում է նաև առանձին էպիգոդներ (դրվագներ), որոնք աներկբա են դարձնում եթե ոչ բոլոր Շահ-ի-Արմենների, ապա իր երկիրը խոր խաղաղության մեջ պահող այս Սուքման II Երկարակյացի (Միրան-շահի) քրիստոնէասէր քաղաքականությունը:

Սովի տարին որբերին և այրիներին օգնող միջագետքցի մի հայ քահանա, երկրեերկիր շրջելով և քարոզ կարդալով, ժամանում է նաև Շահ-ի-Արմենների երկիրը: «Եւ ել ընդ առաջ նորա, – հաղորդում է պատմագիրը, – Շահի Արմենն մեծաւ հանդիսիւ և խնդրեաց 'ի նմանէ աղօթս և եմոյծ պատուով 'ի քաղաքս: Եւ զի յանդիմանէր զպոռնիկ քահանայսն՝ քսեցին զնա առ շահն, թէ լրտես է Հոռոմ թագաւորին, և ետուն զնա քարկոծել. յորոյ վերայ տեսին լոյս երկնային զերիս տիւս և զերիս գիշերս: Չոր տեսեալ շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն, և ետ հրաման պատուել զոսկերս նորա»:³⁴⁸

Կիրակոս Գանձակեցին բերում է մի ուրիշ էլ ավելի ուշագրավ և պերճախոս դրվագ: Աստվածատուր անունով մի մարդ, «զոր Աղբըրկայ կոչէին, յԱրճէշ քաղաքէ» հորենական ամբողջ կարողությունը բաժանում է աղքատ-

ներին, «Եւ տեսեալ զբարեգործութիւն նորա բազումք 'ի Տաճկաց՝ գային առ նա, և մկրտեալ 'ի նմանէ՝ լինէին քրիստոնէայք: Եւ տեսեալ անհաւատիցն, եթէ նա է պատճառք այնմ ամենայնի՝ կամէին սպանանել զնա, և յայտնի ո՛չ իշխէին վասն բազմութեան ժողովրդոցն»:³⁴⁹ Ուրեմն, ուզում էին սպանել վտանգավոր դարձած հայ սուրբին, կարող էին սպանել, բայց այդ բանը բացահայտ անել չէին կարող, «վասն բազմութեան ժողովրդոց», որ հայություն էր:

Մեր տեղեկությունները աղքատիկ են Խլաթի Շահ-ի-Արմենների մասին, սակայն կան այնպիսի անվիճելի վկայություններ, ինչպես, օրինակ՝ հարուստ ու նշանավոր հայկական վանքերի առկայությունը Շահ-ի-Արմենների տիրապետության ենթակա հողերում: Այնտեղ էր գտնվում միջնադարյան հայ աշխարհիկ կյանքի գլխավոր հավաքավայր, ժողովրդական խաղերի դպրոց Ս. Կարապետի վանքը, որ դարեր շարունակ ժողովրդի կողմից անվանվել է «Մշո սուլթան Սուրբ Կարապետ»: Այնտեղ էին գտնվում նշանավոր Ս. Առաքելոց վանքը, այդ վանքի մշակութային գործունեությունը շարունակող Մեծոբա վանքը (հյուսիսում): Մեծոբա վանքի հետ սերտորեն կապված Խառաբաստա կամ Սուխառայի վանքը, որոնք միասին այնքան եռանդուն գործունեություն ծավալեցին կաթողիկոսությունը Սսից Էջմիածին վերադարձնելու և Ամենայն հայոց դարձնելու գործում:

Խլաթի Շահ-ի-Արմենները, մասնավոր Սուքման II-ի օրով, կարողացան գրավել Վասպուրականը, վասալական կախման մեջ դնել անառիկ Սասունը, իսկ հյուսիսում հասան մինչև Կաղզվան՝ իրենց ազդեցությունը միառժամանակ տարածելով անգամ Կարսի, Կարնո և Երզնկայի էմիրությունների վրա: Եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ Խլաթի հարաբերությունները բարեկամական չեն եղել հարավ-արևմուտքում՝ Սիրիայում ուժեղացող Զանգյանների (1127-1174 թթ.) ու ապա նրանց տեղը բռնած Էյուբյանների (Էալեանք) (1172-1254 թթ.) քրդական դինաստիաների, մասնավոր այդ երկուսից հաջորդաբար վասալական կախման մեջ գտնվող սելջուկ Օրթոկյանների (Արթուկյանների) հետ, որոնք հաստատվել էին Սասունի անմիջական հարևան Դիարբեքի (Դիարբեքի-Ամիթ-Մերդին) հարթավայրում և շարունակ աչք տնկել Սասունի լեռնային արոտավայրերին: Ընդհակառակը, հյուսիսի ֆեոդալական տների հետ Շահ-ի-Արմենների հարաբերությունները համեմատաբար շատ ավելի բարեկամական էին, խնամիական կապերը շարունակ վերանորոգվում էին Երզնկայի, Կար-

349 Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 172-173:

346 Հաաբումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 123-124:

347 Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2 (կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան), Երևան, 1956, էջ 134:

348 Հաաբումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 124-125:

նո, Կաղզվանի էմիրությունների և Գանձակի Փեիլիկների աթաբեկության ու վրաց Բագրատունիների հետ: Այնքան, որքան առաջին Շահ-ի-Արմենը Ատրպատականի սելջուկներից էր եղել, ապա Գանձակի աթաբեկ Փեիլիկները (1136-1225 թթ.), տեր դառնալով Հարավային Ատրպատականի (Թավրիզի) սելջուկների հողերին, Շահ-ի-Արմենների թագավորությունը համարում էին իրենց ենթակա վասալական իշխանություն և ձգտում էին իրենց հովանու տակ պահել այդ երկիրը: Այս փոխհարաբերությունների մեջ, անտարակույս, վճռական դեր է խաղացել Շահ-ի-Արմենների երկրի բնակչության ճնշող մեծամասնության հայության հոգևոր-մշակութային կապը գերազանցապես հայաբնակ հյուսիսային շրջանների հետ, որոնց «քրիստոնեաւեր» հորջորջված մահմեդական տերերը չէին կարող հաշվի չառնել այդ հանգամանքը: Շահ-ի-Արմենները երկրում գտնվող Ս. Առաքելոց և Ս. Կարապետի վանքերը Արարատյան դաշտի ու Սյունիքի, Արցախի, Վանանդի ու Շիրակի և հարակից շրջանների հայությանը սերտորեն կապել են իրենց հետ ու կազմել հոգևոր ու աշխարհիկ մեկ-միասնական մշակութային աշխարհ:

Գանձակի Փեիլիկներին շուտով հաջորդեցին Հայաստանի հյուսիսում ուժեղացող վրաց Բագրատունիները: Այս երկուսն էլ հաջորդաբար (մեկը XII դարի երկրորդ կեսում, մյուսը XIII դարի առաջին տասնամյակում) ամեն ջանք գործադրում էին, որ Խլաթը չհեռանա իրենցից և չընկնի Սիրիայում ուժեղացող քրդական դինաստիաների քաղաքական ազդեցության տակ: Հայ բնակչությունը, որ գորական ուժ էր տալիս ինչպես վրաց Բագրատունիներին, այնպես էլ, ամենայն հավանականությամբ, Գանձակի Փեիլիկներին, չէր համակրում հարավ-արևմուտքից եկող օտար ուժերին, իսկ հայվրացական զորքի հաջողությունները դիտում էր որպես հայկական հողերի ազատագրություն:

Վարդան Արևելցին հաղորդում է, որ Սուրման II Երկարակյացը (Միրան Շահը) մի անգամ գնում է Սասնո գով լեռներում քեֆ անելու, և որ այդպիսի մի ուղևորության ժամանակ Սասնո իշխան Վիգենը շրջապատում է այն տունը, որտեղ գտնվում էր Սուրմանը: Սակայն Վիգենը թեև բռնում է Խլաթի թագավորին, բայց ուխտ կապելով նրա հետ՝ սիրով բաց է թողնում. («Այս Շահի Արմեն գնացեալ ի Սասունս՝ յօրանայր ՚ի գեօղի միում. և լուեալ Վիգենայ տեառն երկրին՝ երթեալ ՚ի գիշերի միում պատեր գտունն յորում կայր, և յասելն ումենն ՚ի կատակս. Ա՛յ Վիգեն, ու՛ր ես. ետ պատասխանի ընդ երդն և ասէ. Կամ աւասիկ շնորհօքն Աստուծոյ: Եւ կա-

լեալ տանի զնա յամուրս իւր. և զկնի աւուրց արձակէ ուխտի և երդմամբ սիրոյ»):³⁵⁰

Ինչպես տեսնում ենք, խաղաղասեր Սուրմանի (Միրանի) և Վիգենի հարաբերություններն այնքան էլ թշնամական չեն եղել: Այսպիսի փոխհարաբերությունների պայմաններում միանգամայն անտարակուսելի է դառնում Միխայել Ասորու այն հաղորդումը, որ Սասունի հայ իշխանները հնուց անտի իրենց ձեռքում պահած բերդերը կամովին հանձնում են Շահ-ի-Արմեններին՝ հարավից ճնշում գործ դնող Օրթոկյանների դեմ վստահելի և զորեղ պաշտպան ունենալու համար:

Եթե, ինչպես հաղորդում է Վարդան Արևելցին, Խլաթում թագավորող Շահ-ի-Արմենները հաճախ իրար կոտորում էին («և սպան զհանիկն իւր, որոյ սպանեալ էր զորդիսն...»³⁵¹)՝ գահին տիրանալու համար, ապա արտաքին հարաբերությունների մեջ նրանք ճգնում էին հաշտ քաղաքականություն վարել և այդ նպատակով հաճախ էին դիմում խնամիական կապերի հաստատմամբ հարևանների հետ հաշտություն ամրապնդելու միջոցին: Այսպես, Սուրման II-ն իր աղջկան կնության է տալիս Կարնո Էմիր Սալդուխին: 1164-1165 թվականներին, երբ Սուրմանը գրավում կամ իր հովանավորության տակ էր վերցնում Վասպուրականում և Սասունում մնացած հայ կիսանկախ իշխաններին, հարևան Բիթլիսի էմիրը խիստ դժգոհում է Խլաթի այդ ուժեղացումից, և նրանց հարաբերությունները լարվում են: Սուրման II-ը այստեղ էլ դիմում է խնամիական հարաբերությունների հաստատմամբ գործը հաշտ վերջացնելու քաղաքականությանը: Սակայն Դիարբեքի միշտ անհանգիստ ու ագրեսիվ Օրթոկյաններն էլ մեջտեղ են գալիս և խնդրում Բիթլիսի էմիրի միևնույն աղջկա ձեռքը: Հարաբերություններն ավելի են լարվում, բայց Սուրմանը կարողանում է պատերազմի սպառնալիքը վերացնել հարսանեկան հանդեսով:

1185 թվականին անժառանգ մեռնում է Խլաթի թագավոր Սուրման II-ը: Հանգամանքից օգտվելով՝ Խլաթի գահին տիրանալ են ուզում հարավից Մարա մելիք Սալահեդդինը և նրա վասալ Օրթոկյանները՝ Քուրբադինի գլխավորությամբ. հյուսիսից՝ Գանձակից, շարժվում են զորեղ Փեիլիկները, Սասունում եռանդուն գործունեություն են ծավալում Գրիգոր Տղա կաթողիկոսի քրոջ որդիներ Հեթում և Շահնշահ եղբայրները, սակայն Սուրմանի զորավար Բեկթեմուրը, հետևելով Շահ-ի-Արմենների վաղեմի քաղաքակա-

350 Հաաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 124:

351 Նույն տեղում, էջ 123:

նությանը, կարողանում է, փեսայնալով Փեհլիներին, կասեցնել արդեն սկսված պատերազմական գործողությունները:

Բեկթեմուրը Խլաթի թագավորության գահն ապահովում է իր որդու համար, որն այդ գահի վրա նստում է մինչև 1198 թվականը: Այդ ժամանակ նախկին Սուրմանների տնից ոմն Մանսուր Մոհամեդի հաջողվում է տիրել շուրջ մեկ դար իրենց տոհմին պատկանած գահին: 1206 թվականին այս Մանսուր Մոհամեդն էլ է մեռնում անժառանգ, և 22 տարի հետո գրեթե ճիշտ ու ճիշտ կրկնվում է Սուրման II Երկարակյացի մահվան (1185 թ.) տարվա պատմությունը: Գահը անցնում է նրա ստրուկ-գորավարին՝ իզ-ադ-դին Բալբանին (1206-1207 թթ.), որի միամյա թագավորության ժամանակ Խլաթը մրցակցության առարկա է դառնում երեք հակոտնյա ուժերի համար: Դամասկոսից նրան սպառնում էին Էյուբյանները, Իկոնիայի սուլթանը Էրզրումի Էմիրի հետ Բալբանին օգնության հասնելուց հետո չէր ուզում հեռանալ Խլաթից: Այդ ժամանակ ուժեղացած Վրաստանը ճգնում էր Խլաթը պահել իր ազդեցության ոլորտի մեջ:

1207 թվականին նշանավոր Սալահեդդինի եղբոր՝ Ադիլ-Սայֆադինի որդի Նաջմադին Ավհադը արշավում է Խլաթի վրա: Բալբանը օգնության է կանչում Իկոնիայի սուլթանին և Էրզրումի Էմիրին: Միացյալ ուժերով նրանք թեև ետ են շարտում Ավհադին, սակայն Իկոնիայի սուլթանը, ցանկանալով իր երկրին միացնել Խլաթի թագավորությունը, սպանում է Բալբանին ու փորձում մտնել նրա մայրաքաղաքը: «Բայց Խլաթի բնակիչները, – ասում է ժամանակակից արաբ պատմագիր Իբն-ալ-Ասիրը, – նրանց ետ շարտեցին: Այն ժամանակ նա գնաց Մանազկերտի վրա, բայց Մանազկերտի բնակիչներն էլ չհնազանդվեցին նրան ու հեռու քշեցին: Այդ ժամանակ Խլաթի բնակիչները իրենց մոտ են հրավիրում Նաջմադին Ավհադին, որը ետ է գալիս ու տիրանում Խլաթին և նրա շրջանին, բացառությամբ նրա մի փոքր մասի (Սասունին – Հ.Թ.): Սակայն հարևան թագավորները չէին ցանկանում (նրա հոր³⁵² պատճառով), որ նա տիրեր Խլաթի շրջանին: Ճիշտ այդպես էլ նրանից վախենում էին և նրան չէին սիրում վրացիները և այդ պատճառով էլ հաճախակի հարձակումներ էին գործում Խլաթի շրջանի և նրա քաղաքների վրա...

352 Նաջմադին Ավհադի հայրը՝ Ադիլ-Սայֆադինը, իր ավագ եղբոր՝ Էյուբյան դինաստիայի հիմնադիր նշանավոր Սալահեդդինի մահվանից (1193 թ.) հետո կարողացել էր Սալահեդդինի որդիներից խել բոլոր երկրները (բացի Զալեբ քաղաքից) և իր ուժեղ թագավորությունն ստեղծել Դամասկոս քաղաքում:

Խլաթն ու նրա շրջանը գրավելուց հետո սուլթան-ալ-Ադիլի որդի սուլթան ալ-Ավհադ Նաջմադինը գնաց Մանազկերտի վրա, որպեսզի այնտեղ էլ կարգ հաստատեր: Բայց հենց որ նա հեռացավ Խլաթից, քաղաքի բնակիչները հարձակվեցին քաղաքում մնացած նրա զորքի վրա և դուրս քշեցին: Բնակիչներն ապստամբություն բարձրացրին և պաշարեցին միջնաբերդը, որտեղ ապաստանել էին ալ-Ավհադի կողմնակիցները, և հռչակեցին Շահ-ի-Արմենի նշանաբանը, թեև նա արդեն մեռել էր, դրանով ցանկանալով ասել, որ իշխանությունը վերադարձվի նրա կողմնակիցներին և մամլուկներին: Երբ ապստամբության լուրը հասավ սուլթան ալ-Ավհադին, նա ետ դարձավ: (Միաժամանակ) զորք եկավ ալ-Ջեզիրայից, որով նա ուժեղացավ և պաշարեց Խլաթը, որի բնակիչների մեջ տարածայնություններ առաջ եկան: Իրար նախանձելով՝ ոմանք անցան Ավհադի կողմը: Սուլթանը գրավեց քաղաքը և շատ մարդ կոտորեց ու գերի վերցրեց նրա *նեղկայացուցիչներից* շատերին, որոնց ուղարկեց Մայաֆարկին: Նա ամեն օր կոտորում էր բնակիչներին, այնպես որ շատ քերը փրկվեցին: Դրանից հետո Խլաթի բնակիչները ստրկացվեցին, և տարածայնություններն սկսվեցին *պարսնիների* (ճժերի – Հ. Թ.), մեջ, որոնց ձեռքին էր մինչ այդ գտնվում իշխանությունը»³⁵³:

Արաբ պատմագրի հաղորդումների մեջ սուկ միայն իմ ընդգծումները բավական են ցույց տալու համար, որ Խլաթի բնակչությունը տեսնում էր, որ Էյուբյանների հաղթանակով Խլաթի թագավորությունն անջատվում էր Հյուսիսային Հայաստանից, որի հետ մշակութային մեկ ամբողջություն էր կազմում: Այս դրությունը չէր կարող հաճելի լինել Հյուսիսային Հայաստանի տերերին: Գանձակի Փեհլիներն այդ ժամանակ թուլացել էին, սակայն նրանց փոխարեն ուժեղացել էին վրաց Բագրատունիները, որոնց տրամադրության տակ կար հայ-վրացական ուժեղ զորք: Զաքարե սպասալարը և Իվանե արաբեկը 1208 թվականին, մեկ տարով ուշացած, հայտնվում են Խլաթի պարիսպների տակ՝ նախկին դրությունը վերականգնելու համար: Այդ արշավանքն անհաջող է անցնում: Սակայն 1209-10 թվականներին նրանք նորից են արշավում Խլաթի վրա: Ուժերի գերակշռությունը բացահայտորեն Զաքարեի և Իվանեի կողմն էր: Ավհադը հետ է քաշվում ու ապավինում է Խլաթի պարիսպների պաշտպանությանը: Սակայն Իվանեն անզգուշորեն թակարդ է ընկնում ու գերվում-տարվում է Խլաթ: Զաքարեն,

353 Материалы по истории Азербайджана. Из "Тарих-аль-Камиль" (Полного свода истории) Ибн-аль-Асира. Баку, 1940, стр. 132-133.

տեսնելով իր եղբոր կյանքին սպառնացող վտանգը, դադարեցնում է մարտական գործողությունները և սպառնագին նամակով դիմում է ոչ թե Ավհադին, այլ Խլաթի բնակչությանը, որը, ինչպես տեսանք, գերագանցապես հայկական կազմ ուներ: Սպառնալիքն ազդեցություն է գործում, և պատերազմը վերածվում է հարսանյաց հանդեսի:

Այս առթիվ հայ պատմագիրը հաղորդում է. «Ապա արարեալ սէր ընդ միմիանս, խնդրեցին զդուստր Իվանէի 'ի կնութիւն. եղև որպէս խնդրեցին. առին պատանդս և արձակեցին զԻւանէ: Եւ նորա երթեալ 'ի տուն իւր, առաքեաց զդուստր իւր, որ եղև կին Կզոյն, և յետ նորա Աշրաֆին: Բազում օգուտ եղև զալ կնոջն 'ի տուն Սուլտանացն, զի դիւրեցին քրիստոնէիցն, որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, ևս առաւել երկրին Տարօնոյ. զի վանորայքն՝ որ անդ էին, ընդ հարկիւ էին, թեթևացուցին զսակ հարկին, և կիսոց զամէնս իսկ թողին... Էր անուն կնոջն Թամթայ: Եւ այսպէս եղև սէր և միաբանութիւն ընդ թագաւորութիւնս Վրաց և ընդ իշխանութիւն Սուլտանաց»:³⁵⁴

Այսպիսով, գերի ընկած Իվանէն իր դստերը՝ Թամթային կնության է տալիս Ավհադին, և նրանք բարեկամանում են՝ ապահովելով քրիստոնյա բնակչության շահերը: 1212 թվականին Ավհադը մեռնում է, և Խլաթի գահն անցնում է նրա եղբորը՝ Աշրաֆին, որն իր ժամանակի սովորությամբ և հայ-վրացական ու էյուբյանների բարեկամությունն ամրապնդելու նպատակով ամուսնանում է իր եղբոր այրու՝ Իվանէի քրիստոնյա դստեր՝ Թամթայի հետ: Այսպիսով, երկրորդ անգամ ապահովվում է «քրիստոնէասէր» և «աշխարհաշէն» քաղաքականության հաղթանակը Խլաթի թագավորության սահմաններում:

Թամթան Խլաթ հարս էր եկել աղախիներին և ծառաների մեծ խմբով: Նրա հարսանյաց հանդեսը չէր կարող ցնծություն չպատճառել Խլաթի թագավորության հայությանը, որովհետև նա, արդեն որպես քրիստոնեուհի, շարունակելու էր նախկին Շահ-ի-Արմենների «աշխարհաշէն» և «քրիստոնէասէր» քաղաքականությունը:

1218 թվականին Աշրաֆի հայր Ադիլ-Սայֆադինը մեռնում է Դամասկոսում: Աշրաֆը մեկնում է Դամասկոս և նստում հոր գահին: Թամթան մնում է Խլաթում: Նույն՝ 1218 թվականին Աշրաֆը Խլաթի կառավարիչ է կարգում իր կրտսեր եղբորը՝ Գազիին, որը 1224-1225 թվականներին փորձում է ապստամբել ավագ եղբոր դեմ և ինքնուրույն դառնալ Խլաթում: Աշրաֆը

1225 թվին վերագրավում է Խլաթը, պատժում եղբորը և, նորից Դամասկոս վերադառնալով, Խլաթը հանձնում է Թամթային՝ Ալի անունով մի զորակա-նի օգնական-հեջուր կարգելով նրան:

Մոնղոլներից պարտված և Հնդկաստանի վրայով Հյուսիսային Պարսկաստանին ապավինած Խորեզմի սուլթան Ջալալ-էդ-դինը Փեիլիներին, վրաց Բագրատունիներին և Հայաստանի ու Փոքր Ասիայի էմիրներին ու սուլթաններին կոչ է անում միանալ ու համատեղ դիմադրություն ցույց տալ մոնղոլներին: Անպատասխան մնալով՝ նա սկսում է ասպատակել ու ավերել իր կոչին չարձագանքող ֆեոդալական մեծ ու փոքր դինաստիաների երկրները: 1228 թվականին Գառնիի մոտ նա ջախջախում է հայ-վրացական բանակը, ապա նույն տարին մտնում է Թիֆլիս, հիմնահատակ ավերում է քաղաքը և կոտորում ու կրոնադարձ անում քաղաքի քրիստոնյա բնակչությանը, տաս օրով ասպատակում է Աբխազիան և ձմեռնամուտին մոտենում է Խլաթին: Թամթան քաղաքի (հավանաբար նաև շրջանի) բնակչության օժանդակությամբ եռանդուն դիմադրություն է ցույց տալիս Ջալալ-էդ-դինին:

Արաբ ժամանակակից պատմագիր Իբն-ալ-Ասիրը Խլաթի վրա Ջալալ-էդ-դինի արշավանքի մասին գրում է. «Նա մոտեցավ քաղաքին և սաստիկ կռիվ սկսեց նրա բնակիչների հետ: Նրա զորքերը մոտեցան քաղաքի պարիսպներին, բայց շատ սպանվածներ տալով ետ նահանջեցին:

Նա երկրորդ անգամ գրոհեց քաղաքի վրա և արյունալի կռիվ սկսեց նրա բնակիչների հետ: Նրա զորքը մեծ կորուստ պատճառեց Խլաթի բնակիչներին, ընդհուպ մոտեցավ քաղաքի պարիսպներին, մտավ նրա արվարձանը և սկսեց անխնա թալանել ու գերի վերցնել կանանց: Այդ տեսնելով՝ Խլաթի բնակիչները զայրացան և սկսեցին սիրտ տալ միմյանց: Նրանք նորից գոտեմարտի բռնվեցին զորքի հետ, կռվեցին ու խորեզմցիներին դուրս բշեցին քաղաքից...

Մի քանի օր հանգստանալուց հետո Ջալալ-էդ-դինը նորից գրոհեց քաղաքի վրա, ինչպես արել էր առաջին օրը: Խլաթի բնակիչները կռվեցին, մինչև որ քաղաքից հեռու բշեցին նրա զորքը: Բնակիչներն արիաբար էին կռվում և քաջաբար պաշտպանվում, որովհետև նրանք տեսել էին, թե ինչպես իրենց վատ էին պահում Խորեզմի զորքերը, երբ կողոպտում էին երկիրը, թե ինչպիսի այլասերվածներ էին նրանք: Խլաթի բնակիչները կռվում էին այնպես, ինչպես կռվում են իրենց, իրենց ընտանիքը և իրենց ինչքը պաշտպանող մարդիկ»:³⁵⁵

354 Պատմութիւն Յայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 156-157:

355 Ибн-аль-Асир, указ. соч., с. 163.

Խլաթը գրավելու այս երկու անհաջող փորձից հետո Ջալալ-էդ-դի-նը զորքը հետ է տանում Գանձակի շրջան, որտեղ ճշելով իվայիտների ապստամբությունը և հետ մղելով թաթարական հետախույզներին՝ ամրապնդում է իր թիկունքը և ավելի հզոր բանակով 1228-29 թվականների ձմռանը նորից հայտնվում է Խլաթի պարիսպների տակ։ Աշրաֆը նորից բացակա էր քաղաքից, նա նստած էր Դամասկոսում։ Թամթան նորից է եռանդուն դիմադրություն ցույց տալիս Խորեզմի սուլթանի զորքերին. բնակչությունը նրա կողմն էր։ Քանի կռիվը երկարում է, բնակչությունն այնքան ավելի եռանդուն մասնակցություն է ցուցաբերում կռվին, որը վերածվում է քաղաքի քրիստոնյա բնակչության ինքնապաշտպանության գրոհող մահմեդական զորքի դեմ։ Երբ կռիվը այս կողմ է ստանում, քաղաքի պաշտպանության համար Աշրաֆի թողած մահմեդական զորքի որոշ զորավետներ դավաճանում-անցնում են Ջալալ-էդ-դինի կողմը, և խորեզմցիները ներխուժում են քաղաք։

Իբն-ալ-Ասիրը Ջալալ-էդ-դինի երրորդ արշավանքի մասին գրում է. «Այդ, 626 (1228-29) թվականին Ջալալ-էդ-դինը պաշարեց սուլթան Աշրաֆին ենթակա Խլաթ քաղաքը, որտեղ կային վերջինիս զորքերը։ Նրանք պաշտպանվում էին, և քաղաքի բնակիչներն օգնում էին նրանց՝ վախենալով Ջալալ-էդ-դինից, որին ատում էին նրա վատ վարվեցողության համար...

Այդ պաշարման ժամանակ Ջալալ-էդ-դինը մեծ եռանդ և զարմանալի համբերություն ցուցաբերեց։ Նա բաբաններ մոտեցրեց քաղաքի պարիսպներին և շարունակ քար էր նետում, մինչև որ ավերեց պարսպի մի մասը, որը, սակայն, վերականգնվեց բնակիչների ջանքերով...

Քաղաքը դավաճանորեն նրան հանձնվեց մի քանի էմիրների կողմից (1229 թվականի մարտ ամսին)։ Քաղաքի անկման ժամանակ էմիրներից մի քանիսն ամրացան միջնաբերդում, բայց Ջալալ-էդ-դինը շարունակեց կռվել նրանց հետ, իսկ քաղաքի բնակիչներին անխնա կոտորեց։ Նա կոտորում էր բոլոր նրանց, որոնց գտնում էր քաղաքում, բայց քաղաքում քիչ մարդ էր մնացել, մի մասը սարսափից հեռացել էր քաղաքից, մի մասն էլ հեռացել էր՝ նեղվելով սաստիկ սովից, իսկ մի մասն էլ մեռել էր ուտելիք չճարելու պատճառով, որովհետև Խլաթի բնակիչները նախ կերել էին մանր անասունները (ոչխարները), հետո աստիճանաբար կովերը, գոմեշները, ձիերը, ջորիները, էշերը, շներն ու կատուները։ Լսել եմ, որ նրանք մուկ էին բռնում և ուտում։ Նրանք ցուցաբերեցին մինչ այդ չտեսնված տոկունություն»։³⁵⁶

356 Նույն տեղում, էջ 168:

Կիրակոս Գանձակեցին գրում է. «Գնաց նա ի քաղաքն Խլաթոր աշխարհին Բզնունեաց. և էր նա ընդ իշխանութեամբ Աշրաֆ Սուլտանին. և ետ պատերազմ ընդ նմա, և առ զնա։ Էր անդ և կին Սուլտանին, դուստր Իանեի, Թամթա անուն, զոր վերագոյն յիշեցաք. առ զնա իւր ի կնութիւն...»։³⁵⁷

Մահմեդական սուլթանները մեծ հարեմներ ունեին, և մեծ հանդեսով կատարած նրանց ամուսնությունները գերազանցապես քաղաքական դաշնագրություններ էին նրանց համար։ Նրանց պաշտոնական կանայք համարներ ունեին՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն։ Հարեմում փակվում էին հարճերը, իսկ պաշտոնական կանայք ունեին իրենց տունը, տնտեսությունը, կալվածքները, անգամ բերդերն ու զորքը։ Քրիստոնյա Թամթան Խլաթի մահմեդական տերերի տուն հարս էր եկել դաշնագրության կարգով։ «Ըստ այդ դաշնագրության, – գրում է ակադ. Հ. Մանանդյանը, – Ջաբարեն և Իվանեն պարտավորվել էին, ինչպես վկայում է աշխարհագիր Աբուլ-Ֆիդան, վերադարձնել բազմաթիվ ամրություններ ու 5000 մահմեդական զերի, վճարել որոշ գումար, զինադադար անել 30 տարի ժամանակով»։³⁵⁸ Թամթայի առաջին ամուսինը՝ Նաջմադին Ավհադը, ինչպես գիտենք, 1212 թվականին մահացավ։ Ավհադի ավագ եղբայր Աշրաֆը դարձավ Խլաթի տերը և Ջաբարեն սպասալարի ու Իվան Աթաբեկի հետ կնքած դաշինքը շարունակելու համար ամուսնացավ Թամթայի հետ։ Սակայն Աշրաֆի հիմնական նստավայրը Մայաֆարկինն էր։ Թե նրանք ինչպիսի ամուսիններ էին, մեզ որոշակի տեղեկություն չի հասել։ Բայց գիտենք, որ երբ 1218 թվականին Աշրաֆի հայր Ադիլ-Մայֆադինը մահացավ, ապա Աշրաֆն անմիջապես թողեց Մայաֆարկինը և գնաց Դամասկոս ու նստեց հոր գահին։ Հոր գահն իր համար ապահովելու նպատակով նա կարող էր 1218 թվականից առաջ էլ մեկնած լինել Դամասկոս։ Այսպիսով, բացակայելով Խլաթից, նա Թամթային իր հետ չտարավ ոչ Մայաֆարկին, ոչ էլ Դամասկոս։ Հայտնի է, ինչպես ասացինք, որ Աշրաֆը 1218 թվականին որպես փոխանորդ (վաքիլ) Խլաթ է ուղարկում իր կրտսեր եղբորը՝ Գազիին։ Կիրակոս Գանձակեցին Թամթայի մասին խոսելիս ասում է «որ եղև կին Կզոյն, և յետ նորա Աշրափին»։³⁵⁹ Ստույգ հայտնի է, որ Թամթան Գազիի կինը չի եղել։ Նա եղել է, ինչպես արդեն ասել ենք, Ավհադի, ապա Աշրաֆի կինը։ Կիրակոս Գանձակեցու այս շփոթմունքը վկայում է այն, որ Թամթան շարունակ մնում էր

357 Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 215:

358 Հակոբ Մանանդյան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III (XI դարից մինչև XV դարի սկիզբը), Երևան, 1952, էջ 141:

359 Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 156:

Խլաթում, որ Գագիի փոխանորդության վեց-յոթ տարիներին (1218-1225) նա Գագիի հետ գտնվում էր նույն քաղաքում: Հայտնի է, որ Գագիի ապստամբության փորձը ճնշելուց (1225) հետո Աշրաֆը նորից գնաց Դամասկոս, նա չէր կարող ինչ-որ մի Խլաթի համար կտրված մնալ Էյուբյանների ընդարձակ տերության գլխավոր մայրաքաղաքից, որ Դամասկոսն էր (սեմական անունով Շըմ ի Դըմշըկ կամ կրճատ ձևով Շըմշկ): Գագիին պատժելուց և Խլաթից վտարելուց հետո Աշրաֆը, ինչպես ասացինք, Խլաթը թողնում է Թամթային՝ Ալի անունով մի օգնական-հեջուր տալով նրան ոչ Էյուբյանների տոհմից:

Այս ամենը մենք ասում ենք հայ, արաբ և ասորի ժամանակագիրների ու աշխարհագիրների տված տեղեկությունների հիման վրա: Սակայն վրացական աղբյուրը (Անանուն պատմիչը), մանրամասնությունների մեջ չմտնելով, ուրիշ բան է ասում. Թամթայի Խլաթ հարս գնալը նա համարում է վրաց քաղաքականության հաղթանակ: «Ջաքարիան [Ջաքարեն], – գրում է նա, – ստիպեց Խլաթեցուն [Խլաթի սուլթանին] [խոնարհվել] և հաղթությամբ զարդարված առաջարկեց վերջինին հաշտության հիմունքները»:³⁶⁰ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը գրում է. «Իրն ալ-Ասիրը և ասորական ժամանակագիր Աբուլ Ֆարաջը հաղորդում են, որ Հեջիրի 605 թ. (16 հուլ. 1208 – 5 հուլիսի 1209) վրացական զորքերը մտան Խլաթի ամիրայության շրջանները, գրավեցին Արճեշը և վերցրին մեծ ավար ու գերիներ: Նրանք դիմադրության չէին հանդիպել, որովհետև Նեջմադդին Էյուբ Աուլսադը, որը նոր էր նվաճել Խլաթի ամիրայությունը, դեռևս իր իշխանությունը չէր համարում կայուն և հաստատուն:

Այնուհետև հետևյալ տարին (1209/1210) նրանք նորից վերադարձան այստեղ և պաշարեցին Խլաթ քաղաքը: Ջաքարեն և Իվանեն, ըստ երևույթին, իրենց նպատակ էին դրել ազատագրել պատմական Հայաստանի նաև հարավային երկրները»:³⁶¹

Այս ամենից հետո եթե հիշենք, որ 1210 թվականից մինչև Ջալալ-էդդինի կողմից գերվելը (1229 թ.), այսինքն՝ ամբողջ 19 տարի, քանի Խլաթը պատկանում էր Էյուբյաններին, Թամթան մնաց միմիայն Խլաթում, ապա պետք է ենթադրել, որ այդ տասնամյակներին հզորացած ու հաղթական Ջաքարյանների դուստրը մի հասարակ փրկագին չէր, այլ «պատմական

360 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին. քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, Յերեվան, Խ. Բ (ԺԳ - ԺԸ դար), 1936, էջ 44:

361 Հակոբ Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Խ. III, էջ 140-141:

Հայաստանի նաև հարավային երկրները» ազատագրելու նպատակը հետապնդող քաղաքականության ներկայացուցչուհին, և որպես այդպիսին նա Խլաթում ուներ իր ապարանքը, իր տնտեսությունը, իր կավածքները, իր դղյակները և իր զորքը, որ չէր կարող հավաքագրված չլինել քաջ սասունցիներից: Ջալալ-էդ-դինի հրոսակախմբերի դեմ Խլաթի բնակչության մղած համառ ու հերոսական կռիվների մահմեդական պատմագրի ժլատ նկարագրության ամեն մի տող այդ է վկայում:

Ջալալ-էդ-դինի քարտուղար և պատմագիր Ալ-Նիսավին, որը Խլաթի գրավման ժամանակ իր տիրոջ մոտ չէր գտնվում, խոսելով այդ դեպքերի մասին, ասում է, որ Ջալալ-էդ-դինը «տիրացավ» Աշրաֆի կնոջը: Կիրակոս Գանձակեցին թեև առաջին անգամ ասում է «առ զնա իւր 'ի կնութիւն»³⁶², սակայն կրկին անդրադառնալով այդ դեպքերին՝ ուղղում է իրեն և գրում է. «և գերեցաւ 'ի Խորագմեցի Սուլտանէն Ջալալադնէն»:³⁶³ Պարսկական Ատրպատականում հավաքելով խորտակված Խորեզմի թագավորության պարտված զորքի մնացորդներին և մոնղոլների սարսափից դեպի արևմուտք փախչող թուրքական այլ ցեղերից համալրելով իր զորքը՝ Ջալալ-էդ-դինը պարտված փախստականի դաժանությամբ ասպատակում էր Հյուսիսային Ատրպատականը, Վրաստանը, Հայաստանը: 1226 թվականին Ջալալ-էդ-դինը Գառնիի մոտ ջախջախել էր Թամթայի հոր՝ Իվանեի և եղբոր՝ Ավագի հայ-վրացական զորքը: Իվանեն և Ավագը փախուստի դիմելով հագիվ էին փրկել իրենց կյանքը: Նույն տարին Ջալալ-էդ-դինը գրավել էր Թիֆլիսը և կոտորել խաղաղ բնակչությանը: Նրա վայրագ զորքի հարվածների տակ խորտակվել էր ծաղկուն Վրաստանը: Գառնիի կովից և Թիֆլիսի անկումից հետո Ջալալ-էդ-դինը առանց դիմադրության անպատիժ ասպատակում էր ամբողջ Վրաստանը, հասնում Աբխազիա, ապա վերադառնալով գրավում Կարսը, Կաղզվանը՝ ամենուրեք սրի մատնելով խաղաղ բնակչությանը: Ամբողջ երեք տարի Թամթայի հայրն ու եղբայրը հալածական թաքնվում էին անհայտ ու անառիկ ամրոցներում: Բայց Թամթան կարողացավ ամբողջ երեք տարի Խլաթի պարիսպների վրա համառ դիմադրություն ցույց տալ Ջալալ-էդ-դինին: Այսպիսով, Թամթան իր ժամանակի հայոց պատմության ամենահերոսական դեմքն է: Պարտությունից հետո նա կարող էր գերվել Ջալալ-էդ-դինի կողմից, վերջինս կարող էր բռնությամբ տիրանալ նրան, բայց Թամթան չէր կարող կամովին դառնալ իր հոր և

362 Լույս տեղում, էջ 217:

362 Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 215:

363 Նույն տեղում, էջ 277:

եղբոր ռիսկերիմ թշնամու, ծաղկող Վրաստանը և Զաքարյանների ուժեղացող տունը խորտակող Խորեզմի սուլթանի կինը: Գերության մեջ Թամթան հանգիստ նստել չէր կարող. նա պետք է օգնության կանչեր ինչպես իր պաշտոնական ամուսնուն՝ Աշրաֆին, որ նստում էր Դամասկոսում, այնպես էլ իր եղբորը՝ Ավագին: Ջալալ-էդ-դինը նեղում ու կոտորում էր, Գանձակեցու վկայությամբ, «նչ միայն զքրիստոնեայսն, այլ և զՊարսիկս»:³⁶⁴ Եվ Մերձավոր Արևելքի բոլոր պետությունները ոտքի ելան՝ միասնական ուժերով նրան պարտության մատնելու համար:

«Ապա, – գրում է Գանձակեցին, – միաբանեալք Սուլտան Աշրաֆն և Քէմլ եղբայր իւր, որ իշխէր 'ի կողմանս Եգիպտոսի, և Ալադին, կոչեցին և իւրեանց օգնական 'ի զօրացն Հայոց, որ յաշխարհին Կիւիկեցոց, և 'ի Փռանգացն ծովեզերեայց, և եկին տալ պատերազմ ընդ խորագնեցոյն Ջալալադին»:³⁶⁵ Միացյալ ուժերի կոիվը Ջալալ-էդ-դինի դեմ տեղի է ունենում 1230 թվականին, Սասունից հարավ, ներկայիս Դիարբեքիր (Ամիթ) քաղաքի մոտ: Պարտված Ջալալ-էդ-դինը փախչում է Հյուսիսային Ատրպատական՝ Մուղանի դաշտը, որտեղ նա փորձում է նոր զորք հավաքել: Ի վանեն ու Ավագն այդ ժամանակ հալածական թաքնվել էին անառիկ ամրոցներում: Նրանք զորք չունեին Ջալալ-էդ-դինի դեմ մղվող մեծ ճակատամարտին մասնակցելու համար: Սակայն Ավագը կարողանում է, մինչ Ջալալ-էդ-դինն զբաղված էր Ամիթի ճակատամարտով, գալ դեպի Խլաթ և ազատելով Վրաստան տանել իր քրոջը՝ Թամթային: Հիշենք, որ Ամիթի մոտ չարաչար պարտություն կրելուց հետո Ջալալ-էդ-դինը նահանջում է դեպի Մուղան՝ այնտեղ նոր զորք հավաքելու համար, սակայն հանդիպելով թաթարների մի զորամասի, որը հատկապես ուղարկված էր նրան բռնելու համար, հետ է դառնում և Բասենի վրայով նորից հասնում Ամիթ քաղաքի շրջանը, որտեղ թաթարները վերջնական պարտության են մատնում նրան: Վերջին կողմնակիցները լքում են նրան, և մենակ մնացած Ջալալ-էդ-դինը սպանվում է Սասնո լեռներում: Քանի որ վերջին պահին նրա հետ ոչ ոք չի եղել, ժամանակի պատմագիրները տարբեր ձևերով են նկարագրում նրա վախճանը: Կիրակոս Գանձակեցին գրում է.

«Իսկ Ջալալատին Սուլտանն դարձաւ մեծաւ ամօթով յաշխարհն Աղուանից 'ի բերրի և յարգաւանդ դաշտն, որ կոչի Մողան. և անդ զետեղեալ՝ կամէր զօր ժողովել. ապա Թաթարն՝ որ եհան զնա յերկրէն իւրմէ

364 Նույն տեղում, էջ 214:

365 Նույն տեղում, էջ 215:

փախստական, զհետ մտեալ 'նորա՝ տաբեալ վարեաց զնա մինչև յԱմիթ. և անդ եհար զզօրս 'նորա սաստկապէս. կորեաւ և անօրէն իշխանն, թէ 'ի նմին պատերազմի, և թէ՛ որպէս ոմանք ասեն՝ երթայր հետիոտս փախստական, դիմեալ նմա առն միոջ, և զիտացեալ՝ թէ նա է, սպան զնա փոխանակ արեան մերձաւորի իւրոյ, զոր սպանեալ էր նա յայլում ատուր»:³⁶⁶

Ջալալ-էդ-դինի մահը տեղի ունեցավ 1231 թվականին:

Մ. Բրոսեն վրաց պատմության թարգմանության մեջ տողատակի ծանոթագրություններում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Թամթայի մասին: «1230-ին Ջալալի կինը դառնալուց հետո, – գրում է Բրոսեն, – նա փախավ Վրաստան, որտեղ մեկ տարի հետո մեռավ նրա հայրը՝ Իվանեն»:³⁶⁷

Մոնղոլները Մերձավոր Արևելքում երևացին 1220-1221 թթ., երբ հարված հասցրին Շիրվանին, Վրաստանի արևելյան սահմաններին, ապա հետ դարձան ու Դերբենդով գնացին Ռուսաստան: Երկրորդ անգամ նրանք երևացին 1231 թ., երբ նրանց մի պատժիչ զորամաս Մուղանից մինչև Ամիթ հետապնդեց Ջալալ-էդ-դինին, Ամիթի մոտ վերջնականապես ջախջախեց նրան ու հետ դարձավ: Ատրպատականի, Վրաստանի, Հայաստանի ու Փոքր Ասիայի նվաճմանը կամ հպատակեցմանը մոնղոլները ձեռնամուխ եղան 1234 թվականից և ավարտեցին 1244 թվականին: Հյուսիսային Հայաստանի ու Վրաստանի նվաճումը և հպատակեցումը տեղի ունեցան 1236-1239 թվականներին: Ջալալ-էդ-դինի հասցրած հարվածից հետո Վրաստանն անգոր էր որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու մոնղոլներին: Թագուհին փախավ Աբխազիայի լեռները, Զաքարեն ու Իվանեն վաղուց էին մեռել. նրանց որդիները՝ Շահնշահն ու Ավագը, ապաստանում էին այս ու այն բերդում՝ ի վիճակի չլինելով ճակատելու մոնղոլների դեմ:

«Դարձյալ նույն (1239) տարին, – գրում է Բրոսեն, – Ավագն իր քրոջ՝ Թամթայի հետ ապաստանեց խիստ ամուր Կայան բերդը: Երկար ժամանակ առանց հաջողության բերող պաշարելուց հետո Դուղադան նրան առաջարկեց անձնատուր լինել: Ավագը իր աղջկան՝ Խոշակին, նվերներով ուղարկեց Դուղադայի մոտ, սակայն հրաժարվեց անձամբ ներկայանալ: Այդ ժամանակ պաշարվածների ջուրն սկսում էր սպառվել, դրա համար էլ շատերն իրենց ընտանիքներով գնացին թաթարների ճամբարը, որոնք սպանեցին տղամարդկանց և նրանց դիակները ցուցադրեցին քաղաքի

366 Նույն տեղում, էջ 217:

367 Histoire de la Géorgie depuis l'Antiquité jusqu' au XIXe siècle, par M. Brosset. 1re partie, Histoire Ancienne, jusqu' en 1469 de J.-C. S.-Petersbourg, 1849, p. 505.

պարիսպների վրա: Այդ տեսնելով՝ Ավագն իր որդեգիր տղային ուղարկեց իր հպատակությունը հայտնելու Չարմաղանին, որը գտնվում էր Գեղամա լճի շրջանում: Չարմաղանը Դուդաղային հրամայեց ընդունել Ավագի կապիտուլյացիան՝ հարկ վճարելու և միաժամանակ մոնղոլներին թշնամի քրիստոնյաների դեմ կռվելու պայմանով»:³⁶⁸

«Մենք միայն այն գիտենք, – ասում է Բրոսեն, – որ Ջալալից հետ խլվելուց հետո... Մոնղոլները Թամթային ուղարկեցին Օգադայի մոտ, որ Թամթան երկար ժամանակ մնաց Թաթարստանում և վերադարձավ միայն Ռուզուդանի ծպտյալ պատվիրակ Համադուլի ուղեկցությամբ, որ մոնղոլական զորավարները հրաման ստացան Թամթային վերադարձնելու այն ամենը, ինչ նա ունեցել էր որպես Աշրաֆի կին, այսինքն՝ Խլաթն ու նրա հողերը, երբ մոնղոլները 1244 թվականին գրավեցին այդ հողերը»:³⁶⁹

Թամթայի մասին այս նույն տեղեկությունը հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, որի «Պատմության» մեջ կարդում ենք. «Դարձեալ 'ի մտանել ամին երկրորդի փախուցանելոյ զԴիադատինն Սուլտան, խաղացին գնացին ընդ կողմանս Բզնունեաց 'ի քաղաքն Խլաթ, և առեալ զնա՝ տան 'ի ձեռս Թամթայ քուեր Աւագին, որ էր յառաջ տէր լեալ քաղաքին, մինչ կին էր նա Աշրաֆի Մելիքին, և գերեցաւ 'ի Խորագմեցի Սուլտանէն Ջալալադնէն. և 'ի նոցունց դարձեալ առաւ գերի և առաքեցաւ առ Ղանն. և եկաց անդ զյուրով ամս: Եւ իբրեւ առաքեաց թագուհին Վրաց Ռուզուդան զիշխանն Համադուլայ դեսպան առ Ղանն, և 'ի դարձին իւրում Համադուլայն խնդրեաց 'ի Ղանէն զԹամթի, և եբեր ընդ իւր հրովարտակօք ի Ղանէն. զի զոր ինչ լեալ իցէ նորա, մինչ կին էր Մելիք Աշրաֆին, տայցեն 'ի նա. և նոքա արարեալ զհրամանս արքային իրեանց, տան 'ի ձեռս նորա զԽլաթ և զգաւառսն որ շուրջ զնովա»:³⁷⁰

Այսպիսով, Ջալալ-էդ-դինը սպանվեց 1231 թվականին, նրան վերջնական պարտության հասցնող մոնղոլական զորաբանակը նույն 1231 թվականին հետ դարձավ Ամիրի շրջանից թե՛ փոքրաթիվության և թե՛ մանավանդ տոթի պատճառով: Թամթայի ամուսին Աշրաֆը մեռավ 1232 թվականին, հաջորդ տարին Իկոնիայի սուլթան Քայքոբաթ իբն Քայխուսրովը գրավեց Խլաթը, իր ազդեցության տակ առավ շրջակա էմիրությունները և իր որդուն ամուսնացրեց վրաց Ռուզուդան թագուհու աղջկա հետ. Խլաթը մնաց Իկոնիայի իշխանության տակ մինչև 1244 թվականը, երբ մոնղոլներն այն գրա-

վեցին՝ պարտության մատնելով Սուլթան Դիադ-էդ-դինին և հարկատու դարձնելով Իկոնիային: Խլաթը վերադարձնելով Թամթային՝ մոնղոլներն այդ քայլով ոչ միայն թուլացնում էին հեռավոր Իկոնիային, դեպի ուր փախել էին Դիարբեքի շրջանի Օրթուկյան (Արթուկյան) դուզիները, որոնց թվում նաև ներկայիս օսմանյան թուրքերի առաջացման կորիզը հանդիսացած փոքրաթիվ «Կայա» ցեղախումբը, այլև սիրաշահում էին Ավագին, որն արդեն հինգ տարի հայ-վրացական միացյալ զորքով գործակցում էր մոնղոլներին՝ սկիզբ դնելով մոնղոլների հովանավորությամբ՝ հայկական կիսանկախության վերականգնմանը պատմական Հայաստանի հյուսիսում և արևելքում (Խաղբակյանները, Օրբելյանները): Մոնղոլները մահմեդականություն ընդունեցին Ավագի գործակցությունից ուղիղ երեք քառորդ դար հետո:

Այդ երեք քառորդ դարի ընթացքում, ինչպես վերը նշեցինք, «Վորքան և ծանր եր թաթարների տիրապետությունը իրենց հարկապահանջությամբ, – գրում է անվանի հայագետ Գար. արք. Հովսեփյանը, – կեղեքումներով և կամայական կառավարությամբ, բայց և այնպես քառասունական թվականներից արդեն մի *modus vivendi* եր կազմված նրանց և հայ իշխանների մեջ և հետզհետե կյանքը տանելի էր դարձել»:³⁷¹ Չաքարյանների օրոք, XII դարի 80-ական թվականներից սկսված, բայց Ջալալ-էդ-դինի ավերածությունների ու մոնղոլների առաջին զարկի տասնամյակում (1226-1267) ընդհատված, Հյուսիսային և Արևելյան Հայաստանի շինարարական ու հողկոր նոր զարթոնքը XIII դարի քառասունական թվականներից ոչ միայն վերանորոգվեց, այլև տարածվեց նաև Հայաստանի հարավում ու արևմուտքում: Թամթան մոնղոլական խանի հովանավորությամբ Խլաթ վերադարձավ և առանց մահմեդական ամուսնու շուրջ քսան տարի (մինչև 60-ական թվականների սկիզբը) Տարոն-Տուրուբերանը կառավարեց, երբ արդեն հայության այս զարթոնքն սկսված էր ու տարածվում և խորանում էր: Սասունցիների համար, որ այս նոր պայմաններում նրա զինական ուժը պիտի կազմեին, նա Խանդութ էր, թե՛ նրա համար, որ խանը իրոք բռնել էր (դուրմաբ)³⁷² և գերի էր տարել նրան, և թե՛ նրա համար, որ խանը նրան բռնում-հովանավորում էր իր գահի վրա: Եվ սասունցին սիրով, հպարտ գոհունակությամբ իր թագուհուն կանվանեւ Խան-դութ ու մոռացության կտար իրեն անսովոր նրա Թամթա-Թամիթա անունը:

Այսպիսով, Թամթան Իվանե Աթաբեկի դուստրն էր, ծնված Թամար

368 Նույն տեղում, էջ 515:

369 Նույն տեղում, էջ 506:

370 Պատմության Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 276-277:

371 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռչյանք Հայոց պատմության մեջ, էջ 91:

372 «Դուրմաբ» թուրքերեն նշանակում է «բռնել»:

թագուհու թագավորության օրոք և մեծացած վրաց արքունիքում, մանկուց թագուհու դստեր և ապա թագուհի Ռուզուդանի մտերիմ ընկերուհին, մոնղոլական շրջանում հռչակված Ավագ գորավարի քույրը: 1210 թվականին նա հարս է գնում Խլաթ՝ քաղաքը նոր գրաված Էյուբյանների տուն՝ դառնալով Նաջմադին Ավհադի կինը: Ուժեղացած Վրաստանն այդ ժամանակ խնամիական կապեր էր հաստատում Փոքր Ասիայի մահմեդական դինաստիաների հետ: Թամթան Խլաթ հարս գնալով ապահովեց «Հայոց տան» հայ բնակչության մշակութային-կրոնական անխախտ կապը Հյուսիսարևելյան Հայաստանի հայ բնակչության հետ: Ավհադը, որ նստում էր Խլաթում, երկու տարի հետո մեռավ: Նույն՝ 1212 թվականին Մայաֆարկինում նստող նրա ավագ եղբայր Աշրաֆն ընդունված կարգով ամուսնացավ եղբոր այրու հետ և նրա հողերը միացրեց իր երկրին, սակայն Թամթային թողնելով Խլաթում՝ նորից վերադարձավ Մայաֆարկին: 1218 թվականին նա գնաց Դամասկոս և նստեց հոր գահին՝ նորից Թամթային թողնելով Խլաթում: Նույն՝ 1218 թվականին Աշրաֆն իր կրտսեր եղբորը՝ Գագիին որպես վաքիլ ուղարկեց Խլաթ, սակայն 1224-ին, ինքնուրույն դառնալու փորձ կատարելու համար, նրան քշեց Խլաթից՝ քաղաքը նորից թողնելով Թամթայի վերահսկողությանը: Երկու տարի հետո Թամթան քաղաքի հայ բնակչության հետ միասին եռամյա (1226-1229 թթ.) համառ դիմադրություն ցույց տվեց Ջալալ-էդ-դինին: Այդ դիմադրության մեծությունը հասկանալու համար բավական է ասել, որ մոնղոլների հարվածների տակ արևմուտք շարտված Ջալալ-էդ-դինն իր գազազած զորքով հեշտությամբ գրավել էր Հարավային և Հյուսիսային Ատրպատականը, Գառնիի մոտ մեկ օրում ջախջախել էր հայ-վրացական միացյալ բանակը, որից հետո ոչ մի տեղ դիմադրության չհանդիպելով հեշտությամբ գրավել էր Թիֆլիսը, ասպատակել Վրաստանն ու Աբխազիան և առաջին անգամ լուրջ ու համառ դիմադրության էր հանդիպում միայն Խլաթի պարիսպների տակ:

1229 թվականի գարնանը Ջալալ-էդ-դինը գրավում է Խլաթը և գերում Թամթային: Սակայն Թամթայի ահազանգով Միջագետքի ու Փոքր Ասիայի մահմեդական ու քրիստոնյա երկրները միանալով 1230 թվականին Ամիթի մոտ պարտության են մատնում Ջալալ-էդ-դինին, իսկ Ավագ գորավարը հյուսիսից գալով ազատում է իր քրոջը և տանում Վրաստան: 1231 թվականին սպանվում է Ջալալ-էդ-դինը, 1232 թվականին մեռնում են Թամթայի հայր Իվանե Աթաբեկը և Թամթայի պաշտոնական ամուսին Աշրաֆը: Թամթան մնում է իր եղբոր՝ Ավագի մոտ: 1236-1239 թվականներին մոնղոլական զորքը

մտնում է Վրաստան: Ավագը ապավինում է անառիկ Կայան բերդին: Դուղադայը չի կարողանում այն գրավել, սակայն երբ բերդի պաշտպանությունը դառնում է անհույս, Ավագը հպատակություն է հայտնում Չարմադանին: Մոնղոլները, Ավագին դարձնելով հանդերձ իրենց գործակիցը, նրա քրոջը գերի են տանում իրենց խանի մոտ: Ի դեպ, Աշրաֆի մահից հետո Խլաթն անցել էր Իկոնիայի սուլթաններին. մոնղոլների համար անհրաժեշտ էր Խլաթի գահի օրինական հավակնորդին՝ Թամթային պահել իրենց մոտ: 1244 թվականին մոնղոլները գրավում են նաև Խլաթը և վրաց Ռուզուդան թագուհու Համադոլա դեսպանի ուղեկցությամբ Թամթային ուղարկում են Խլաթ՝ վերականգնելով նրա բոլոր իրավունքները: Խլաթի գահի վրա Թամթան մեռնում է 1260-ական թվականների սկզբին՝ վերապրելով Ռուզուդան թագուհուն (+1246) և իր եղբոր Ավագին (+1250):

Թամթա-Խանդուրի բազմերանգ ու հարուստ արկածալի կյանքն առանց որևէ գունազարդման էլ մի գունագեղ վեպ է, որը բերնբերան պատմվել է ազատասեր սասունցու կողմից՝ հետագայում միահյուսվելով Պահլավունիների տան կործանման պատմությանը:



Խանդուրի վեպի մասին առաջին ժառ տեղեկությունը մեզ հաղորդում է Ղ. Իսմիհյանը: «*Խանդուրի ձոր, և Խանդուրի բերդ, – կարդում ենք Ղ. Իսմիհյանի մոտ, – է բերդ 'ի համանուն ձորավայրի, զոր այսպես կոչեցեալ ասեն յանուն քեռ թագավորի ուրուք 'ի մերոց' որ բնակեցաւ աստէն. զորոյ զպատմութիւն նման պատմութեան տ[Տ]իգրանուհոյ յօդեն*»:³⁷³

Այս ժառ, խիստ ժառ տեղեկությունից, որ վերաբերում է XIX դարի հենց սկզբին, իմանում ենք, որ Կաղզվանի շրջանում, որի մոտ են Խանդուրի ձորն ու բերդը, պատմել են մեր ինչ-որ թագավորի քրոջ՝ Խանդուրի պատմությունը, որ հար և նման է եղել Տիգրանուհու պատմությանը: Իսկ մենք գիտենք, որ Տիգրանուհին հայոց թագավորի այն քույրն էր, որն իր այլազգի ամուսնու և իր հարազատ եղբոր թշնամության պահին բռնել էր իր եղբոր կողմը:³⁷⁴

373 Ղուկաս Ինժիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամէրիկոյ, Մասն առաջին, Ասիա, Խատոր Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1806, էջ 121:

374 Սակայն ավելի զարմանալի է, որ այս միակ տեղեկության հիման վրա և այս միակ աղբյուրը մատնացույց անելով՝ Մ. Արեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանը գրում են. «Այս վերջին [Տիգրանուհու] վեպին ել, ինչպես վկայում է Ղ. Ինժիճյանը, շատ նման է յեղել Խանդուրի և Դավթի պատմությունը, վոր ասվելիս է յեղել XIX դարի սկզբներին Հայաստանում»: Տես Մ. Արեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ներածություն. – Սասնա Շներ, հ. Ա, էջ ԺԲ-12: Նախ, ինչպես տեսանք,

Խորենացին պատմում է, որ Հայոց Տիգրան թագավորը համաձայնում է իր քրոջը՝ Տիգրանուհուն, կնության տալ հարևան թշնամի թագավորին՝ Ածդահակին, որովհետև «սիրելիների բազմությունը» մի ուժ է, որը կանխում է կամ իսկույն ընկճում է ամեն տեսակ խռովությունները, միայն թե այդ «սիրելիները» վարեն «իմաստուն» քաղաքականություն: «Տեսնելով բարեկամությունից առաջ եկող այդ օգուտը», Ածդահակը հավաստիացնում է խնամիրությանը «ավելի հաստատուն դարձնել ու խորացնել մեր մեջ եղած սերը, որպեսզի... ամբողջ և հաստատ պահենք մեր տերությունները»: Իսկ այնուհետև, «երբ Ածդահակը Տիգրանուհուն տիկնության մեջ հաստատեց, իր թագավորության մեջ ոչինչ չէր գործում առանց նրա հավանության, այլ ամեն բան կարգադրում էր նրա ասածի պես և հրամայում էր, որ բոլորը նրա հրամանին հնազանդին»: Այսպիսի մեծարումից հետո Ածդահակն ուզում էր իր կնոջ՝ Տիգրանուհու բարեկամությունը շահելով դավ սարքել նրա եղբոր՝ Տիգրանի կյանքի դեմ: «Իսկ խորագետ գեղեցկուհին այս դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով է պատասխանում Ածդահակին և մտերիմների միջոցով շտապով եղբորը հայտնում է (Ածդահակի) նենգությունը»: Հայոց թագավոր Տիգրանն արդեն ամեն բան գիտե, նա կազմ ու պատրաստ է և կարող է խորտակիչ հարված հասցնել իր նենգ փեսային՝ Ածդահակին, սակայն հաշվեհարդարը ձգձգում է, «որովհետև արագ և առողջ գործը հիվանդանում էր՝ քանի որ Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ (Տիգրանուհու) մասին: Նա աշխատում էր այնպիսի մի հնար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի: Երբ այս հաջողվում է, մոտենում է և կովի ժամը»:³⁷⁵

Մոտավորապես այսպես է եղել, ինչպես տեսանք, նաև Թամթա-Խանդութի պատմությունը:

Խլաթի թագավորության և Թամթայի մասին իմ այս շարադրանքից հետո կարծում եմ, դժվար չէ Ինճիճյանի հիշատակած *Խանդութին* նույնացնել պատմական Թամթայի հետ. դրամաներով հարուստ Թամթայի կյանքն է հրամայաբար մեզ թելադրում այդ:

Սակայն, պատմական այդ տեղեկություններից բացի, որ մեզ հաջողվեց ի մի հավաքել, այդ նույնացման համար տվյալներ են պահպանվել նաև «Սասունցի Դավիթ» էպոսի տարբեր պատումների մեջ:

Ինճիճյանի մոտ Դավթի անունը չկա: Երկրորդ, էպոսի մեջ Խանդութն ու Դավիթը հավատարիմ ամուսիններ չեն, այլ թշնամիներ են իրար: Որտեղ է նմանությունը:

375 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն: Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 50-52:

Էպոսի մեջ Թամթայի հոր քաղաքը գտնվում է Սասունից հյուսիս, իսկ բազմաթիվ պատումների մեջ որոշակի մատնացույց է արված Կաղզվան քաղաքը: Սակայն «Կայեն» բերդը ընդունված է տեղադրել Կաղզվանից էլ ավելի հյուսիս՝ Աղստև գետի վրա: Կիրակոս Գանձակեցին և մյուս պատմագիրները որոշակի ցուցումներ ունեն այդ առթիվ, որոնք անտարակուսելի են դարձնում «Կայենը» Աղստև գետի վրա որոնելը: Բայց, նախ, պարտադիր չէ, որ «Կայեն» անունով միայն մեկ բերդ եղած լինի Հայաստանում: Այնուհետև, Բրոսեն Ավագի ու Թամթայի ապաստանած բերդը կոչում է ոչ թե «Կայեն», այլ «Կայան»: Կիրակոս Գանձակեցին էլ, երբ խոսում է Գետիկ վանքի մասին, գրում է «Կայեն» բերդ, «Կայենի» գավառ կամ աշխարհ, իսկ երբ խոսում է Ավագի ու Թամթայի ապաստանի մասին, ապա բերդն անվանում է «Կայան»: («Իսկ իշխանն մեծ՝ որդին Իսանէի, գոր Աւագն կոչէին... ամրացաւ և նա 'ի բերդն ամուր, որ կոչի «Կայան», եկին և ամենայն բնակիչք գաւառին, ամրացան և նոքա շուրջ զբերդան»³⁷⁶): Չգիտես ինչու Ղուկասյան մատենադարանի խմբագրությունը անվանացանկի մեջ «Կայանը» նույնացրել է «Կայենի» հետ: Հայտնի է, որ մոնղոլները 1234-ին արդեն գրավել էին Գանձակը և 1236-ին վրացական թագավորության սահմանները մտան Գանձակի կողմից: Պատերազմական նման իրադրության մեջ Ավագը, երբ ճակատելու համար բավականաչափ զորք չունեւ, ինչու՞ պիտի գերադասեր ապաստանել Գանձակին այնքան մոտակա բերդում: Տրամաբանական է, որ նա անցած լինել ավելի հեռավոր Կարսի ու Կաղզվանի շրջանը: Ստեփանոս Օրբելյանն ունի գավառների մի այսպիսի թվարկում. «և այլ բազում գիւղս ի Վայոց ձոր, ի Գեղաքունի, ի Կոտայսն և ի Կայեն»,³⁷⁷ որից հետևում է, որ «Կայեն» (կամ «կայեններից» մեկը, այսինքն՝ «Կայանը») պետք է որոնել Կոտայքից դեպի արևմուտք:

Ապարանցի Մուրադի պատումի մեջ, որ գրի է առել Գարեգին արք. Հովսեփյանը, Խանդութը Կապուտկողի թագավորի դուստրն է: Անվանի հայագետն այս պատումին կցել է մի շատ ուշագրավ ծանոթություն. «Մի պանդուխտ սպարկերտցու ասելով, – գրում է նա, – Խանդութի հայրենիքը «բերդ Կապուտին» էր կոչվում»: «Կապույտ անունով մի բերդ, – ավելացնում է Գ. Հովսեփյանը, – գտնվում է Կաղզվանի մոտերքը»:³⁷⁸ Բերդը կոչվում է Կայան, թե՛ Կապուտին, այդ չէ կարևորը, այլ այն, որ Թամթան երկրորդ անգամ գերվել է Կաղզվանի մոտակայքում:

376 Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ, էջ 241:

377 Պատմություն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1910, էջ 360:

378 Սասնա Շուր, հ. Բ, առաջին մաս, էջ 79:

«Կայան» բերդում Ավագին ու Թամթային պաշարող զորավարի անունը Դուդադայ է:³⁷⁹ Այս անունը Գանձակեցին մեզ հաղորդում է *Իպոուդարայ* ձևով,³⁸⁰ իսկ Հ. Մանանդյանը՝ Դուդադայ Նոյին ձևով:³⁸¹ Եթե նկատի ունենանք այն ծանրակշիռ իրողությունը, որ Գանձակի կողմից Վրաստան էր մտել Չաղատայ-Նոյինը, իսկ «Կայանը» պաշարող Դուդադայ-Նոյինը ենթակա էր Չարմաղանին, որը եկել էր Նախիջևանի վրայով և տոթի պատճառով,³⁸² Արարատյան դաշտը դեռևս չնվաճած, բարձրացել էր Գեղամա լճի ավիլը, բավական է ասել միայն այն, որ Խանդութի հոր քաղաքը պաշարած զորքի «թագավորի» անունը էպոսի շատ պատումների մեջ պահպանվել է «Ողան Տոդան»³⁸³ ձևով, որ եկել էր Պարսկաստանի կողմից («Աջմու էն յանեն ին»³⁸⁴): Պատումները պահպանել են նաև այն պատմական իրողությունը, որ Խանդութի հոր քաղաքը պաշարող թագավորը թեև եկել էր Պարսկաստանի կողմից, բայց դա Պարսկաստանի թագավոր չէր, այլ.

«Չինաստանա թաքավոր ըմ եկավ կռիվ:

– Վայ, Խանդուտ խանըմին...

Թաքավորը մասկար եկավ, քաղքի պոլոթը պոնից,

Չաղըր տրից, կովու տաշտ պոնից:

Թաքավոր ջրհար հոթոթկից Խանդուտի խոր,

Ըսից. – Յան տը գաս կռիվ, յան Խանդուտ տը տաս ձի»:³⁸⁵

Մոկացի Հովակիմենց Ղազարի պատումի մեջ Խանդութի կողմից մերժված ուզնկանները կովի գնալուց հրաժարվելով ասում են.

«Թըղ Դավիթն երթա, Ողան, Տոդանի խետ կըռիվ ենի»:³⁸⁶

Այրարատցի Մուրադ Հովսեփյանի պատումի մեջ Խանդութի հոր թշնամին, որի դեմ կովի է գնում Դավիթը, նույնպես «Ողան-Տոդան» է:³⁸⁷ Շատախցի Մկրտիչ Հարությունյանի պատումի մեջ նույնպես պահպանվել է Օղան-Տոդան անունը, բայց նա դարձել է Խանդութի հայրը, իսկ նրա վրա

379 Histoire de la Géorgie, p. 505.

380 Պատմություն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, էջ 242:

381 Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, էջ 203-204:

382 Մոնղոլները շատ էին վախենում տոթից: Նրանք քանիցս մոտեցել ու մտել էին Սիրիա, բայց հետ էին դարձել՝ տոթից առաջացած հիվանդություններից կորցնելով բանակի մեծ մասը:

383 Հիշեցնենք, որ Գանձակի կողմից Վրաստանի վրա հարձակվող Չաղատայի առաջապահ զորամասի հրամանատարն էր Օղոդայը (Օղան), իսկ Նախիջևանի կողմից Վրաստանի հայկական հողերի վրա հարձակվող Չարմաղանի առաջապահ զորամասի հրամանատարն էր Դուդադայը (Դուդադայ = Դոդանը):

384 Սասնա Շներ, հ. Ա, էջ 212:

385 Նույն տեղում, էջ 643:

386 Նույն տեղում, էջ 288:

387 Սասնա Շներ, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 292:

կովի եկողը Սև թագավորն է:³⁸⁸ Այսպիսի բաներ լինում են էպոսների պատումների մեջ:

Որ Խանդութը Թամթան է, ապա դրա անվիճելի ապացույցներից մեկն էլ այն է, որ Թամթայի հետ սերտորեն կապված Համադուլա անունը էպոսի մեջ դարձել է Համդոլ՝ առանց այդ երկուսի փոխհարաբերության էական փոփոխության. վրաց Ռուզուդան թագուհին, ինչպես գիտենք, Համադուլա իշխանին ուղարկել էր խանի մոտ իր մտերիմ ընկերուհուն՝ Թամթային հետ բերելու խնդիրքով: Համադուլան կարողացել էր Թամթային հետ բերել, այն էլ առոք-փառոք, խանի հրովարտակով և վերահաստատել իր գահի վրա: Էպոսի մեջ Համդոլը Խանդութի պահապանն է, դոնապանը: Անկախ Համադուլա իշխանի դիրքից, էպոս կերտող սասունցու համար նա իրենց սիրելի թագուհու սուկ դոնապանն էր:

Որ Խանդութը Թամթան է, կան նաև այլ ապացույցներ: Պատմությունն արձանագրել է, որ Թամթան Խլաթ հարս էր եկել պայքարող կողմերի քաղաքական հաշտության ուժով, եկել էր աղախինների ու ծառաների մեծ բազմությամբ և ճոխ տոնակատարությամբ: Վրացի աշուղներն իրենց ազգային երաժշտական գործիքներով «ծաղկացրել էին» այդ շքերթ-հարսանիքը: Եվ մինչև այժմ էլ էպոսի առանձին պատումների մեջ պահպանվել են սասունցուն միանգամայն անծանոթ այդ երաժշտական գործիքների վրացական անունները: Եվ բնորոշն այստեղ այն է, որ այդ գործիքների անունները Կովկաս այցելած պատմողների նոր սովորած և ականա գործածած բառեր չեն, ինչպես, օրինակ՝ «գալը» (դահլիճ), «բութիլկա», «բութուլ» (շիշ) և այլն, այլ օրգանապես շաղկապված են հնագույն պատումների հետ: Խանդութի գովքն անող աշուղների գործիքը պատումների մեծ մասում սասունցուն ծանոթ սազն է, բայց նույնիսկ այն դեպքում, երբ մշեցի Հարություն Դավթյանն է պատում «Աշղներ առան իրանց սազեր իրանց ձեռք», ապա հենց նույն պատումի մեջ երբ ծեծված աշուղներն են գանգատվում, ապա նրանք ասում են «մըզի ծեծեց, վոնդեց, մեր դամբուրեք լե կուրեց»:³⁸⁹

Դամբուր (նաև՝ տամբուր), չընգըռ (նաև՝ չունգուր) անունները պահպանվել են շատ պատումների մեջ, իսկ երբեմն էլ շեշտված է Սասունի համար դրանց անծանոթ գործիք լինելը.

«Աշղ կ'երթա շատ, քիչ, Աստված գինա:

Որերուց մեզ որ կը հասնի Սասուն:

Սասունա ճժեր հեղան տեսան՝

388 Սասնա Շներ, հ. Ա, էջ 684:

389 Սասնա Շներ, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 601:

Մարդ մի եգավ բեղերով,
Բան մի կա փիջից [ուսից] կախուկ,
Ըսկսեցին քարով գնորդել»:³⁹⁰
«Աշըղ հեղավ, գնաց,
Գնաց դեմի Սասուն:...
Ճըծեր որ մողիգցան աշըղին,
Տեսան՝ փեղ մի կա եղոր թեվ թալուկ,
Եղ փեղի վըրեն հանգաճ կա:
Հասան ճըծեր, ձեռ թալեցին,
Եղ աշըղի սագ պոնեցին,
Ըսին, թե. – Եղ իմալ փեղ ա,
Ձեռ քիսավ սագի թելին,
Եղ սագի միչեն ձեն հեղավ: ...
Ճըծեր մեզ մեզի կ'ըսեն.
– Տըղա՛, եղ փեղի միչեն ձեն գ'ելեն,
Հըլա՛ արի՛, աշենք, տեսնենք՝ եղ ինչ ա»:³⁹¹
Պարզ է, որ այս հատվածում իմ ընդգծած «աշենք» բառը կարող է նոր
բառ լինել, ուրիշ բարբառների ազդեցության տակ մտած բառ, բայց աշըղի
գործիքի՝ սասունցուն անծանոթ լինելն ամենևին հետամուտ չէ:
Բերենք մի ուրիշ օրինակ, որի վրա ժամանակին կանգ է առել Հ. Ժամ-
կոչյանը, բայց տուրք տալով տիրող ընդհանուր կարծիքին, դժբախտաբար,
շեղվել է իր սկզբնական ճիշտ թեզից.
Աշուղը գալիս է Դավթի մոտ և բարևում նրան.
«– Աստու բարին քի, ասաց Դավիթ.
Են ինչ իս կախիր քո թիվեն:
Ասաց. – Ենի դամբոր ի:
Ասաց. – Դամբոր ինչ ի:
Ասաց. – Դամբոր ի, ձեն կ'ելը մոտեն, անու՛շ-անուշ:
Ասաց. – Մեկ խան, տըսնանք՝ ենու ձեն ինչպես ի»:³⁹²
Կազարյան Թառոյի պատումի մեջ աշուղների գործիքը «դամբոր» չի
կոչվում, այլ «չընկոտ»: Այնտեղ աշուղները գանգատվում են.
«Մեկ ճոճագլուխ հայ մը մեր չընկոտներ
Առեց, զարկավ մեր գլխուն, ճամխեց:

390 Սասնա ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 395:

391 Նույն տեղում, էջ 306-307:

392 Սասնա ծռեր, հ. Ա, էջ 360:

Տավիթ խանեց, քանի մ' վոսկի տվեց ինոնց,
Վոր թագա չընկոտ առնեն»:³⁹³

Տարոնցի Կրպոյի պատումի մեջ³⁹⁴ աշուղների գործիքը նորից դառնում
է «դամբոր»: Այդ պատումի մեջ էլ Դավթի մոտիկ ազգականները կոտորում
են աշուղի գործիքը, բայց Սասունում դրամով նորն («թագա») առնելը հնա-
րավոր չէ, ուստի.

«Հոտըղներ գոմեցին զուր դամբորի կոտորտանք»:

Անտարակույս, վրացական երաժշտական գործիքների անվան հի-
շատակությունները Թամթայի՝ Վրաստանից հանդիսավորությամբ Խլաթ
հարս գալու հիշողություններն են, որ անվթար պահպանվել են որոշ պա-
տումների մեջ:

Էպոսի պատումների մեջ Խանդութը մեկ բոլորովին իջել-հավասար-
վել է աղքատ սասունցիների մակարդակին և հաց է թխում ու տնտեսություն
վարում, մեկ մնացել է քաջ-գեղեցկուհի, որին յուրահատուկ են միայն տղա-
մարդկային գործեր: Ուրեմն, հետագա շատ պատմողներ բարձր իշխանա-
կան տան դուստր Խանդութին դարձրել են Դավթի գեղջկական շրջապա-
տին հավասար մի կին, բայց էպոսի առանձին պատումների մեջ, այնուամե-
նայնիվ, մնացել են Դավթի ու նրա շրջապատի նկատմամբ Խանդութի ան-
համեմատ բարձրությունը վկայող տողեր ու տեղեր: Դավիթն անգրագետ է,
Խանդութը՝ ոչ միայն գրագետ, այլև դիվանագիտական գրություններ գրելու
կարող (Խանդութի նամակը խաչակիրներին): Սակայն պահպանվել են նաև
Դավթի նկատմամբ Խանդութի այլ բարեմասնություններ վկայող կտորներ.

«Ինչպես որ Դավիթ քաջ ու հաղթ մարդ էր,

Դիմ ավելի Խանդութ համ խորոտ էր, համ քաջ էր,

Խանդութի սիրունութեն ամբողջ աշխարհ բռնել էր:

Շապուհ արքա լսել էր Խանդութի սիրունութեն.

Շապուհ արքա մարդ խրկեց, Խանդութին ուզեց:

Ուրիշ քաջ մարդիկ ուրանց դվաթին գոհամիշ լիրենց ուժի վրա
վստահ],

Քառսուն քաջ մարդիկ՝ եկած են Խանդութին ուզելու»:³⁹⁵

Խանդութի մասին խիստ ուշագրավ մանրամասնություններ են պահ-
պանվել շատախցի Գրիգորի պատումի մեջ: Երբ Դավիթն ու Խանդութն
իրար հանդիպում են, Խանդութն արդեն կին էր, բայց ամուսնու անգորու-

393 Նույն տեղում, էջ 1069:

394 Սասնա ծռեր, հ. Բ, առաջին մաս, էջ 31:

395 Նույն տեղում, էջ 394:

թյան հետևանքով կույս մնացած կին: Պատումի մեջ Խանդութն Արավայել [արևելքի] թագավորի դուստրն է, որ հարս է գնում Արավամուտի [արևմուտքի] թագավորի տունը: Այս թագավորի որդին պակասավոր էր, և քաջ Խանդութը ամուսնության առաջին օրն իսկ կատակ-խաղով հեշտությամբ քաշում-պոկում է նրա թևերը, ապա ոտքերը, սակայն բավարարվում է թև ու ոտք չունեցող ամուսնով, որովհետև, ինչպես նա պատմում է Դավթին.

«Ասըցի՛ թանգավորի տղայ ի, թագավոր դուք միջմեծ դմբուցում»
 Չերթա վար-ցանք անի, բիրի ձի խամար.

Անթիվ ել ձի բավական ի: ...

Յես հերդում արըցի, ասըցի՛
 Յես ել մարդ չըմ անի. ...

Յես ել ելմ, թղի [թողի], իկի ես բերդի մեջ:

Ես տասը տարի կա, յես ըստեղն եմ»:³⁹⁶

Թամթայի ամուսին Աշրաֆը միշտ բացակա էր Խլաթից, նրանց ամուսնությունը անվանական էր, այլ ոչ փաստական: Չի կարելի արդյոք այս հատվածի մեջ տեսնել այդ ակամա կամ քաղաքական ամուսնության վերհուշը: Չի կարելի արդյոք ենթադրել, որ Խլաթն այնպես հերոսաբար պաշտպանող պատանիների (ճժերի) ղեկավարներից մեկի անունը Դավթի է եղել:

Անհայտ պատմողի՝ Վանա գավառաբարբառով պատումի մեջ Խանդութը Դավթի կինը չէ, այլ տատը կամ մայրը (պատմողը խառնել է անունները – Հ.Թ.), որ «Սանասարի մախից վերչ... ելավ թակավոր, վոր չուր ուր տղեն ճոճաներ»:³⁹⁷

Այս պատումի մեջ Խանդութը նկարագրված է ճիշտ այնպես, ինչպես վայել է Զաքարյանների աղջկան: Նա առանց ամուսնու երկար ժամանակ կառավարում էր Խլաթը:

«Ավուր մեկ Խանդութ խաթուն խեծավ ուր Քուռկու Ջալմալին, կնաց սարեր (Սասուն – Հ.Թ.) ֆռալու [գրոսնելու]. չոնքի [որովհետև] շատոնց եր, վոր դուս չեր ելի ուր տնից: Մարդ պիտեր են գնիս [ժամանակ], վոր թամաշա աներ զինք ինան ուր ձին: Չոնքի դրեր եր սնդրֆե մյնր [սաղաֆե համետ] են ձիու վերեն, ոսկի գամն [սանձ] ել ինոր պիրան: Ինքն ել խագեր եր երկթե խալավ [հագուստ], պողպըտե սղեր, ձեռ պոներ էր Սանասարի թոփուզ [գուրգ], կալխան [վահան] ել քամակ կապած: Ելավ քեց չուր [մինչև] սարեր մեկ»:³⁹⁸

396 Սասնա Ծռեր, հ. Ա, էջ 752:

397 Սասնա Ծռեր, հ. Բ, մասն յերկրորդ, էջ 405:

398 Նույն տեղում:

Թամթա-Խանդութի արկածներով հարուստ խոռվահույզ կյանքում, ինչպես տեսանք, իրոք կրկնվել է Տիգրանուհու և Աժդահակի պատմությանը հանգունակ դրամա, որ կարող էր էպոսի վերածվել միայն 1260-ական թվականներից, այսինքն՝ Թամթայի մահվանից հետո: «Կռապաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությունը» հյուսվել է նույն՝ XIII դարի վերջին տասնամյակում, համենայն դեպս 1304 թվականից առաջ, որովհետև Ղազան խանի հաջորդը 1304 թվականին մահմեդականություն ընդունեց: Այս երկու վեպերն էլ, ուրեմն, հյուսվել են այն ժամանակ, երբ Պահլավունիների տան կործանման պատմություններն արդեն վաղուց այլևս գրավոր ձևով չկային: Երեք պատմությունների միահյուսումն ու էպոսի վերածումն, այսպիսով, տեղի է ունեցել XIV դարի սկզբից և հետագայում: Եվ եթե «Կռապաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությունը» միահյուսվել է գերագանցապես էպոսի առաջին ցիկլին, ապա «Խանդութի վեպը» հիմնականում միահյուսվել է էպոսի գլխավոր ցիկլին՝ Դավթի վեպին:

Սակայն մեր այս թեզն ամենևին չի ժխտում, որ «Սասունցի Դավիթ» էպոսին միահյուսվել են նաև շատ հնուց եկած, բայց ամբողջությամբ մեզ չհասած այլ վեպերի առանձին պատառիկներ, որոնց պատմականությունը որոշելու փորձ չենք հանդգնում անել:



Ոչ մի տարակույս չի կարող լինել, որ հայ դարավոր մշակույթի ավանդապահ Մշո Ս. Ղազարի անվան Առաքելոց վանքում հորինված, բայց հազարամյակներ շարունակ հայոց միշտ դառը պատմության բոլոր արհավիրքներին անսկունորեն դիմանալով միշտ հայաշունչ մնացած Սասունում, հայ ժողովրդի դարավոր աշխարհիկ ավանդությունների անմար օջախում՝ Մշո սուլթան Սուրբ Կարապետի վանքի ժողովրդական, տոնահանդեսներում երգված, անեղծ մնացած ժողովրդի դարավոր իմաստությամբ խմբագրված էպոսում, որն արդեն դարձել է ազգային-ժողովրդական՝ հայ ժողովրդի մանկության տարիներին վերաբերող շատ հարստություններ կան, որոնց հասակն ամենևին չի չափվում մեկ հազարամյակով: Մեր «էպոսի պատմական մեկնաբանությանն» առարկող հետազոտողներն արդեն մատնացույց են արել բազմաթիվ պարագաներ, որոնք ապացուցում են անգամ նախաֆեոդալական դարաշրջանի հարաբերությունների ու երևույթների վերհուշերի առկայությունը մեզ հասած պատումների մեջ: Սա ակնբախ ճշմարտություն է և դրան առարկելն անհարմար դրության մեջ կդնեք նոր

հետագոտողին: Սակայն այդ բոլորով հանդերձ՝ Էպոսի պատմականությունը որոշակի է, և այնքան, որքան Էպոսին ծնունդ տվող պատմական իրադարձությունների ժամանակվա փոխհարաբերությունները Էական փոփոխության չեն ենթարկվել Էպոսի բնօրրանը հանդիսացող երկրամասում, ապա Էպոսը հետագա պատմողների բերանում այնպիսի վճռական փոփոխությունների չի ենթարկվել, որ անճանաչելի դառնար նրա պատմական կորիզը: Պահլավունիների տան կործանման պատմավեպը կամ պատմությունները գրվել կամ հորինվել են XII դարի վերջերին՝ 1194-1198 թվականներին, երբ թուրքական խոժադուժ ցեղերը վերացրել ու ոչնչացրել էին հայ ժողովրդի քաղաքական անկախությունը և հեղեղել նրա բնիկ երկիրը՝ նստելով նրա բարեբեր հովիտներում, իսկ Հայաստան երկրում բնիկ նստակյաց ժողովրդի պարտության ու թուլության այդ ժամանակաշրջանում քրդերը հարավից ճգնում էին տիրանալ մեր երկրին՝ անասնապահության տեսակետից բարենպաստ լեռնաստանին: Վերոհիշյալ պատմավեպի հյուսման ժամանակ ներկայիս օսմանյան թուրքերի նախակարապետները՝ դուզի թուրքերը (և սրանց «կայա» փոքրիկ ցեղախումբը) հաստատվել էին Դիարբեքրի շրջանում և, Մսրա մելիք Սալահեդդինի անառարկելի սյուզերենությունն ընդունելով հանդերձ, իրենցից յուրատեսակ վասալական կախման մեջ էին պահում ու հովանավորում շուրջ երկու հարյուր տարի Սասնո արոտավայրերին աչք տնկած Մրվանյան քրդերին, որոնք, ինչպես արդեն ասել ենք, երկու անգամ՝ Բյուզանդիոնի և ապա Շահ-ի-Արմենների կողմից հետ էին շարտվել Տարոն-Տուրուբերանից: Այսպիսով, պատմավեպի մեջ իր անդրադարձումն է գտել դուզի-թուրքերի և քրդերի միացյալ թշնամությունը հայ երկրի բնիկ տերերի դեմ: Այս փոխհարաբերությունը հետագա բոլոր դարերում, երբ պատմավեպը բերնեբերան պատմվելով վերածվել է Էպոսի, հիմնականում չի փոփոխվել. միակ փոփոխությունը կողմերից մեկի՝ հայ ժողովրդի ուժերի թուլացումն է, և կողմերից մյուս երկուսի՝ թուրքերի ու քրդերի ուժեղացումը:

Ուրեմն պատմավեպն էպոս է դարձել հայ ժողովրդի դարավոր աստիճանական (այդ լեռնաստանում) պարտության պայմաններում: Այս պարբերական պարտությունն իր կնիքն է դրել էպոսի վրա՝ այն դարձնելով ազգային-ազատագրական պայքարի հուսավատ մարտակոչ՝ փառաբանելով հայ ժողովրդի բարեմասնությունները, չափազանցնելով նրա ուժն ու սխալագործությունները, էլ ավելի գունազարդելով նրա անցյալը, բայց և չմոռանալով երբեմն սրտի մորմոքով, երբեմն էլ կծու ծաղրով նշավակելու նրա թերությունները:

Հայաստանի գրողների միության համագումարն արձանագրեց, որ բարձիթողի է մեր ազգային էպոսի ուսումնասիրությունը: «Գրական թերթում» այդ առթիվ կարդում ենք. «Ցավոք, մեր էպոսը... դեռևս չի արժանացել գրականագետի, պատմաբանի, աշխարհագրագետի, փիլիսոփայի, արվեստաբանի, բանահավաքի ու լեզվաբանի գիտական սևեռուն ուշադրությանը»:¹

Ահա արդեն շուրջ քսան տարի պատրաստ է մեր ազգային էպոսի պատմականության պրոբլեմին (հիմնահարցին) նվիրված իմ աշխատությունը, սակայն հակառակ ամեն տեսակ բարենպաստ կարծիքներին՝ նրա տպագրության գործը տեղից չի շարժվում: Թեև այն կարդացել են հմուտ գիտնականներ (պատմաբաններ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Հայկազ Ժամկոչյանը, Ջոն Կիրակոսյանը, Սերոբ Պողոսյանը, Վարդան Պարսամյանը, գրականագետներ Մկրտիչ Մկրյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Արամ Ինճիկյանը, Լևոն Հախվերդյանը, փիլիսոփաներ Վազգեն Չալոյանը, Ադո Ադոյանը, գրողներ Նաիրի Զարյանը, Գարեգին Սևունցը, Ստեփան Ալաջաջյանը), որոնք իրենց գրավոր կարծիքների մեջ շեշտել և ընդգծել են, որ մեծ հետաքրքրությամբ են կարդացել ընկ. Թուրշանի ուշագրավ պրպտումները, որոնք մեծ լույս են սփռում մեր էպոսի բազմաշերտ և բազմապիսի ծալքերի ուսումնասիրության վրա: Սակայն մի կողմ թողնենք նրբանկատությունը: Մի քանի անբարեխիղճ մարդիկ, որոնք առանց որևէ լուրջ վաստակի իրենց էպոսագետ են հայտարարել, խանգարում են իմ աշխատության տպագրության գործը: Այդ մարդիկ, ճիշտ կլինի ասել, որ սոսկ ուշացած բանահավաքներ են և շատ են կաղում ընդհանուր զարգացածության տեսակետից, որպեսզի կարողանան ըմբռնել էպոսի նաև պատմագիտական, գրականագիտական, փիլիսոփայական, արվեստաբանական, աշխարհագրական և այլ կողմերի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Նրանք, կրկնում եմ, ուշացած բանահավաքներ են միայն, որոնք առանց որևէ շոշափելի վաստակ ունենալու, իրենց անվանում են բանագետներ, իմա՝ էպոսագետներ:

Երբ կային Սասունն ու Մուշը, երբ կար Մոկաց ընդարձակ աշխարհը, երբ Տաճկաստանից թե՛ որպես ուխտավորներ և թե՛ որպես արհեստավորներ (գզրարներ) հաճախակի Էջմիածին էին գալիս Մոկաց աշխարհի բնակիչները, ակադ. Մ. Արեղյանը գրում է.

¹ Մոքերի փոխանակություն համագումարում տրված զեկուցումների շուրջ. — «Գրական թերթ», 7 մայիսի, 1976 թ., էջ 3:

«Այսպես, տեսնում ենք, բարբառներով պատումներ տպված են, կիսատներն էլ հաշված. 1874-ին 1 պատում, 1889-1895 թթ. 6 պատում, 1898-1902 թթ. 8 պատում, 1906-1913 թթ. 7 պատում: Ընդամենը 22 պատում, 1 պատում էլ գրական լեզվի վերածած:

1913 թվից հետո մինչև 1936 թ., ամբողջ 22 տարվա ընթացքում չի հրատարակվում ոչ մի նոր պատում [ընդգծումն Արեղյանինն է — Հ.Մ.]»:²

Այսպես, երբ, կրկնում եմ, Սասունն ու Մուշը, Մոկսն ու Շատախը իրենց տեղում էին, և Արևմտահայաստանը գոյություն ուներ, երբ, ավելին, ապրում էին մեր հմուտ բանահավաքները, ինչպես Գարեգին Սրվանձտյանը, Մանուկ Արեղյանը, Երվանդ Լալայանը, Սարգիս Հայկունին, Գարեգին Հովսեփյանը և մյուսները, գրի է առնվել ընդամենը 22 պատում: Իսկ մեր օրերում, երբ չկան Մուշն ու Սասունը, Մոկսն ու Շատախը, երբ չկա Արևմտահայաստանը, և ի չիք է դարձել ու դառնում արևմտահայությունը՝ որպես ազգագրական միջավայր, գրի է առնվել ոչ պակաս, քան 80+10=90 պատում: Քսաներկուսի դիմաց՝ իննսուն պատում:

Կոմունարների այգով անցնելիս մի սովերախիտ ծառի տակ ուշադիր լսում էին մեկին: Մոտեցա և տեսա, որ այդ մեկը՝ «Գևորգ Մարգալետունի» էր պատմում, իսկ մյուսները հափշտակված լսում էին... Մնում է ասել՝ կեցցեն մեր նորելուկ բանահավաքները:

Բանահավաքից այսքան հեշտությամբ բանագետ դարձաները գոնե ուշադիր կարդային այն, ինչ նրանց պաշտոնապես հանձնարարվում է կարդալ: Իմ աշխատության մեջ քանիցս համեստորեն ասում եմ, որ ես միայն պատմաբան եմ, որ «...ընթերցողի ուշադրությանը ներկայացված այս աշխատությամբ ես փորձել եմ զբաղվել միմիայն «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականությունը որոշելու դժվարին հարցով, և եթե մեր այս պրպտումները գեթ որոշ չափով հեշտացնեն մեր մյուս հետազոտողների աշխատանքը, ապա մենք մեզ լիովի բավարարված կհամարենք»:

Ավելին:

Մեր էպոսն իր հանրագիտարանային արժանիքներով անսպառ նյութ է տալիս և դեռ կտա հումանիտար գիտություններով զբաղվողներին: «Մեր կարծիքով «Սասունցի Դավիթ» բազմաբովանդակ էպոսի բոլոր արժանիքների ուսումնասիրությունը ոչ միայն վեր է մեկ մարդու ուժից, այլև խորապես սխալ կլիներ այդպիսի բազմակողմանի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելու համարձակությունը մեկ մարդու կողմից»:

² Մանուկ Արեղյան, Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին. — Մանուկ Արեղյան, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 549:

Սակայն, կրկնում եմ, երբ շատ ավելի ակնհայտորեն դեմքեր, սոսկ միայն գիտական հետաքրքրությունից ելնելով, ուշիուշով կարդացել են իմ աշխատությունը, ապա ինչ ասել Արուսյակ Սահակյանին, որին թեև պաշտոնապես հանձնարարվել է կարդալ իմ աշխատությունը, սակայն նա բարեխղճորեն չի կարդացել այն և իր գրավոր կարծիքի մեջ այնպիսի բաներ է գրել՝ սպառնալով դատի տալ ինձ:

«Առնվազն բանագիտական դատի է արժանի հեղինակի այն ճիգ ու ջանքը, այնքան նպատակամղված պրպտումները, որ նա թափել է ապացուցելու միայն մի բան՝ «Սասնա Ծռերը» ոչ մի կապ չունի բուն Սասունի և սասունցիների հետ, և որ «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը 11-12-րդ դարերի եգիպտահայ ստվարաթիվ և բարգավաճ գաղութի ժամանակաշրջանում *Մարում ծառայող հայ զորքի զորապետի որդին է*» (էջ 182, ընդգծումը հեղինակին է):

Ճիշտ է, այդպիսի եզրակացություն կա իմ գրածի մեջ, բայց ոչ որպես իմ վերջնական տեսակետ, այլ որպես քննարկված մի քանի պատումներից հանված եզրակացություն: Բայց ինչպես է, որ Արուսյակ Սահակյանը, եթե իմ ամբողջ աշխատությունը իսկապես կարդացել է, չի նկատել, որ ես այն առաջին հեղինակն եմ, որն առաջին անգամ ասում է՝ «Դավիթ հըլա մորե չելեր»: Չէ՞ որ ես առաջին հեղինակն եմ, որն ասում է, որ էպոսները կերտում են (ստեղծագործում են) առանձին մեծատաղանդ և հնին ու նորին հույժ իրազեկ հեղինակները, որոնք կարողանում են իրար հյուսել ժողովրդի մեջ պահպանված վերհուշերը և վերարտադրել հոյակապ գեղարվեստական երկ: Միթե պաշտոնապես ընթերցանության հրավիրված Ա. Սահակյանը չի նկատել, որ Թուրքիայի առաջինն է ասում, որ հայ թագավորական և անվանի նախարարական տների վերջին մոհիկանները Եդեսիայի անկումից (1144 թ.) հետո ապավինել էին Սասնո Առաքելոց վանքին, որ մտնում էր մահմեդական Շահ-ի-Արմենների թագավորության տերիտորիայի (տարածքի) մեջ, որ 1194 թվականից հետո էլ, այս անգամ արդեն Ռուբինյանների կազմակերպած «որդեսպանությունից» (Ռուբինյաններին փեսայացած Վասիլ և Շահնշահ սասունցի Մամիկոնյան-Պաիլավունի եղբայրների և նրանց քեռիներ Գրիգոր Տղա և Գրիգոր Քարավեժ կաթողիկոսների քստմնելի սպանությունից) հետո հատկապես Պաիլավունիների վերջին մոհիկաններն էին ապաստան գտել Սասնո միևնույն Առաքելոց վանքում, որտեղ արդեն մահմեդական ռեժիմի տակ հարկադրաբար պիտի դիմեն նաև այլաբանության: Ահա այդտեղ նրանք Ներսես Շնորհալու

«Յիսուս որդի» ողբերգության ոգով պիտի գրեն (և գրել են) իրենց տոհմի պատմությունը (պատմությունները)՝ անկասկած մոռացության չտալով իրենց տոհմակիցների զարմանալի վերելքը և եղերական վախճանը Եգիպտոսում: Բայց ժամանակի ընթացքում, երբ մի կողմից, հեռավոր Կիլիկիայի իրադարձությունները նսեմացել էին սասունցու հիշողության մեջ, իսկ, մյուս կողմից, երբ սասունցու համար ավելի ու ավելի էր սրվել ամառային արոտավայրերը կորցնելու հարցը, և շատ ավելի անհավասար էր դարձել դրանք իրենց ձեռքին պահելու կռիվը, Սասնո Շատախ գավառակից հարկադրաբար Մոկաց աշխարհ անցած և Սիվուկա գետի ափին իր նոր Շատախը հիմնադրած մի մեծ գերդաստան իր հետ է տարել իրենց «հեքիաթը», որտեղ արդեն հավանաբար շատ էին նսեմացել կիլիկյան որդեսպանության մանրամասնությունները, իսկ մորեն հըլա չելած Դավիթը ոչ միայն ծնվել, հասակ առել, հրեից Դավթի նման քաջագործություններ կատարել, այլև ազգային պարծանքի առարկա էր դարձել: Ինչպես Շնորհալու, այնպես էլ նրա հետևորդների մոտ Դավիթը *երազ է, բաղձանք, ցանկություն*: Ժողովուրդը չէր կարող հաշտվել և չի հաշտվել անիրական ցանկության հետ. նա իր անիրական հերոսին հագցրել է պապենական հաղթական զրահը, ձեռքին տվել Թուր Կեծակին և նստեցրել Արևելքում առասպելական դարձած Ջալալեդդինի ձիու քուռակին:

Այդպես են իրարից տարբերվում հեղինակն ու ասացողը: Իմ հիվանդության ժամանակ, հարգելով իմ տարիքը և մտնելով իմ առողջական ծանր վիճակի մեջ, Ա. Սահակյանը համեստորեն այցելության էր եկել ինձ: Երբ ես ցանկացա նրան ցույց տալ հայ առաջին մեծանուն մարքսիստ պատմաբանի՝ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կարծիքը իմ աշխատության մասին, ապա իր տարիքին և իր իրազեկությանը ոչ վայելուչ անհամեստությամբ նա հրաժարվեց ակադեմիկոսի կարծիքին ծանոթանալուց, ասելով, թե նա «բանագետ» չէ: Բայց նա, – առարկեցի ես, – հատկապես զբաղվել է մեր էպոսով և իր նշանավոր «Դրվագներում» գրել է մեր էպոսի մասին, երբ, իհարկե, կարդացած չի եղել իմ աշխատությունը: Այս կարծիքը, իհարկե, գրված է իմ աշխատությունը կարդալուց հետո միայն:

Ես համառոտ կարդացի ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կարծիքը, իսկ նա լսեց, թե ոչ, չեմ կարող ասել: Ահա Աշ. Հովհաննիսյանի կարծիքը:

«Իմ կարծիքով համոզիչ է «Սասունցի Դավիթ» էպոսը 11-12-րդ դարերի հայ-եգիպտական հարաբերությունների հետ հանգուցավորելու և դրանց

հետագա խզման հետ լծորդելու ուղղությամբ հեղինակի կատարած փորձը: Էական ուղղումներ մտցնելով Մ. Աբեղյանի տեսության մեջ՝ հեղինակը մատնանշում է էպոսի ծագման ժամանակագրական և աշխարհագրական միջավայրը, այն պոկելով Բաղդադի խալիֆայությունից և փոխադրելով Մասունի և Մսրի քաղաքական կապերի զարգացման ընդհանուր պատմական մթնոլորտը»:

«Սակայն, – շարունակում է ակադ. Աշոտ Հովհաննիսյանը, – հեղինակը չի համոզում, երբ ժամանակագրական և աշխարհագրական ճշտումներից անցնում է էպոսի կազմավորման սոցիալական միջավայրին...»: Ակադեմիկոսը գտնում է, որ «պետք է խորհուրդ տալ հեղինակին՝ դուրս ձգել իր շարադրանքից այն, ինչ սխալ է և անհամոզիչ և ընդհակառակը, տպագրության համար վերամշակել աշխատության այն մասը, որ գիտականորեն հիմնավորված է և համոզիչ»:

Ես, իհարկե, լրջորեն վերաբերվելով մեծ գիտնականի խորհուրդներին, հիմնական վերամշակման եմ ենթարկել իմ աշխատության *միայն ստանձին* գլուխներ, սակայն շատ բան էլ անփոփոխ եմ թողել, որովհետև ես թվաբանության դասագիրք չեմ, որ գրել եմ, այլ շատ ուշ գրի առնված էպոսի պատմականության դժվարին որոշումը: Ակադեմիկոսը գրել է. «Չպետք է թույլ տալ, որ հեղինակի թափած աշխատանքը կորստյան մատնվի: Նրա աշխատանքի դրական մասը խիստ արժեքավոր է և պետք է դառնա մեր պատմաբանասիրության սեփականությունը»: Մանավանդ որ իր կարծիքի հենց սկզբում նա գրել էր. «Հ. Թուրջյանի աշխատությունը կարդացի մեծ հետաքրքրությամբ: Հեղինակը համարձակ ու ակտիվ մտածողություն ունի և օժտված է հետազոտողի և վերլուծողի անժխտելի տվյալներով»:

Գրախոս Արուսյակ Սահակյանը գործ չունի ոչ բանագետ – պատմաբանի կարծիքի հետ. նա իր սեփական կարծիքն ունի, որտեղ թվարկված են իր կողմից ընդունելի մի քանի դրույթ միայն:

«3. Թուրջյանի է Խանդութ-Թամթա առնչակցության հարցը բարձրացնել, բայց ոչ որպես հիմնական նախատիպ այդ կերպարի և ոչ էլ այդչափ մանրամասն ու ծանրաբեռնված պատմական տեղեկություններով:

4. «Կուսակաշտ թագավորին կնության գնացած հայոց թագավորի աղջկա պատմությունը» ոչ թե պետք է բերել որպես միակ հիմք պատմումների առաջին ճյուղի համար, այլ հարակից և համանման պատմություններից մեկը միայն: Այսքանով այս հատվածը նույնպես կարելի է ընդունելի համարել:

5. Մսրա Մելիք – Սալահեդդին կապը կարելի է ինչ-որ ձևով բարձրացնել, առանց կատեգորիկ պնդումների:

6. Ընդունելի է Կոզբադնի պատմական նախատիպի նման բացահայտումը՝ որպես մի նոր վարկած:

7. Ընդունելի է Չմշկիկ Սուլթանի նոր մեկնությունը:

8. Ընդունելի ենք համարում նաև ինչ-որ կապ տեսնել Դավթի և Խանդութի՝ Փոքր Մհերին տրված պատգամ-պատվիրանի՝ Հալեբ գնալու մասին և Հալեբի այդ շրջանի դերի վերհանման մեջ:

9. Բացարձակապես անընդունելի են «Սանասար և Բաղդասար», «Պողվըտե սուն», «Խաչ պատարագին», «Ազնանցորդիներ»³, «Քեռին», «Հեթում» հատվածները:

Չհուսադրելու համար ինձ, որ այսքան ընդունելի դրույթները բավական են, որ ճանապարհ հարթվի ամբողջ աշխատության տպագրության համար, Արուսյակ Սահակյանը նախապես սաստ է տալիս ինձ՝ իմ հասցեին գրելով.

«Թող ներվի մեր կծու տոնը, բայց այն թելադրված է միայն և միայն հեղինակի նույնքան կծու վերաբերմունքով նախորդող ողջ վիպագիտության և նրա երախտավորների հանդեպ, ինչպես նաև՝ հեղինակի անվերապահ, առարկություն չվերցնող եզրահանգումներով: ... Եթե հեղինակն ինքը իր համար աննպաստ է համարում նշել Աբեղյանի ուղղություն, մտքին դրդում տվող պատմական քննությունները, ապա տեղյակ ընթերցողը կարող է ենթադրել, որ հենց Աբեղյանն է մատնացույց անում այն ողջ գիտական զինանոցը, որից օգտվում է հեղինակն իր ընդլայնված ուսումնասիրությունների մեջ և հենց այդ գենքերով էլ հարձակվում Աբեղյանի վրա»:

Որպեսզի ապագայում «տեղյակ ընթերցողը» հարկադրված չլինի ավելորդ ճիգ ու ջանք գործադրելու արդեն մեկ անգամ բացված դուռը կրկին բաց անելու համար, ասենք, որ Թեոդորոս Ռշտունուց մինչև Էյուբյան Մսրա մելիքների մասին Մ. Աբեղյանի շարադրանքի բուն հայոց պատմությանը վերաբերող բոլոր տեղեկություններն այն ժամանակ արդեն լիովին հայտնի էին հայոց պատմությամբ բոլոր զբաղվողներին, Մ. Աբեղյանը ոչ մի նոր խոսք չի ասում: Իսկ Մասունին տիրող և շրջապատի մուսուլմանական իշխանությունների մասին հատվածը վերցված է անգլիացի նումիզմատիկ Ստենլի Լեն-Պուլի «Մուսուլմանական դինաստիաները» միակ

3 Հենց ազնանցորդիներն են Առաքելոց վանքում գրել Պահլավունիների տան վերելքի և վայրէջքի պատմությունը (պատմությունները), որոնք հետագայում վերածել են էպոսի:

հանրածանոթ, բայց շատ համառոտ աղբյուրից: Թո՛ւյլ տվեք անհամեստ գտնվել և ասել, որ Ստենլի Լեն-Պուլի գործը շարունակել է միայն Հարություն Թորոյանը, որի «Շահ-ի-Արմենները» տպվել է մեր «Պատմաբանասիրական հանդեսում» (1964, N 4): Թո՛ւյլ տվեք ավելի անհամեստ գտնվելու և ասելու, որ ֆրանսիական Ակադեմիան մատը դրել է իմ այդ աշխատության վրա և պահանջել թարգմանել ֆրանսերեն և տպագրել Փարիզում: Այնքան, որ «Պատմաբանասիրական հանդեսում» հոդվածները չպիտի ավելի լինեն 24 մեքենագիր էջից, իսկ իմ նյութը կազմել է 31 էջ, ապա Փարիզում նկատել են, որ անտրամաբանական կրճատումներ են արված իմ նյութի մեջ, և քանի որ ես անծանոթ հեղինակ եմ նրանց համար, հարկ էին համարել դիմել մեր Մատենադարանի համապատասխան բաժնի աշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Աբգարյանին, որ նա կապվեր ինձ հետ և վերականգներ բռնազրոսիկ կրճատումները: Ես, իհարկե, չկարողացա բավարարել նրանց խնդիրը: Ուրեմն ապագա «տեղյակ ընթերցողը» թող ինձ վրա հենվելով հերքի ինձ:



Մի քանի խոսք «կծու» արտահայտության մասին: Մանուկ Աբեղյանը գրաբարի իմ ուսուցիչն է եղել Ներսիսյան դպրոցում: Դպրոցական ուսուցչի մասին միայն լավ հուշեր են մնում: Արուսյակ Սահակյանին «կծու» թվացող արտահայտությունն իմ կողմից բերված է սոսկ նրա համար, որ նոր ընթերցողը տեսնի, թե ինչպես էին բանավիճում այն ժամանակ, որ բանավեճի այդ ձևը գիտական չէր կարող համարվել: Արուսյակ Սահակյանը համակարծիք է ինձ հետ՝ գտնելով, որ «ընդունելի է Չմշկիկ Սուլթանի նոր մեկնությունը» (տես նրա կարծիքի 8-րդ էջը): Այնինչ, հակաճառելով Բագրատ Խալաթյանին, Մ. Աբեղյանն ասում է. «Խալաթյանը կարծում է, թե «սուլթան» միայն թագավոր է նշանակում. «սուլթան» նշանակում է նաև թագուհի, դշխո, արքայուհի: ... բայց թե ինչու... «Չմշկիկ սուլթանը... դարձել է Դավթի նշանածը, այդ չի պարզվում. և երբեք չի պարզվի»:⁴ Ուրեմն, իմ բացատրությունից հետո ոչ միայն պարզվել է, այլև անգամ ընդունելի է դարձել Ա. Սահակյանի համար:

Բանն այն է, որ Ա. Սահակյանը ոչ միայն ուշադիր չի կարդացել իմ գրածը, այլև ուշադիր չի կարդացել նաև Մ. Աբեղյանին, որին պաշտամունքի առարկա է դարձրել: Նա գրում է. «առանց ստանձնելու Աբեղյանի դա-

տի պաշտպանությունը (Աբեղյանը երբեք դրա կարիքը չի ունեցել)» (էջ 7-8): Իսկ եթե նա ուշադիր կարդար Մ. Աբեղյանի երկերի առաջին հատորը (էջ 402), որտեղ ենթավերնագրված է «Ազնանց տոհմ և մարդ», ապա նա արհամարհանքով չէր խոսի իմ «Ազնանցորդիները» գլխի մասին:

Կարծես շատ երկարացրի, կարճ կապեմ: «Երեսունհինգ տարի առաջ, – եզրափակում է իր խոսքը Մանուկ Աբեղյանը, – ես այսպես եմ վերջացրել իմ հիշված ուսումնասիրությունը, այժմ էլ ասում եմ նույնը. «Միրելի պիտի լինի մեզ համար մեր Վեպը, որ մերն է, մեր սեփականը, մեր ժողովրդի դարավոր պատկերը... Ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով, և մենք կգտնենք նրա մեջ մեր ժողովրդի հոգու խորքերը: Իսկ երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նյութը նույն ժողովրդական ոգով մշակե գեղարվեստորեն, դա կլինի մեր ազգային բանաստեղծության մարգարիտը:

Այդ հանճարը խմելով հայրենի կենդանի աղբյուրից... մի անգամից պիտի աճի, հսկայական դառնա, և մեր գրականությունը այդ ուժով ու զորությամբ պատռի ու ճանապարհ բանա ընդհանուր ազգերի գրականության ծովի մեջ, ինչպես Սասնա փոքրիկ գետը («Ազնանցորդիներ ջուրը» – Հ.Թ.), որ լեռներից իջնելով՝ գալիս զարկում էր ահագին գետի մեջ, «ու կը կտրեր գեղ գետ, ու կը շերտեր չորի մեջտեղ. ու հըպամ լե կխառնվեր մեջ էդ գետին ու կ'երթեր»:⁵

Երբ Մ. Աբեղյանը 20-րդ դարի 30-ական թվականներին կրկին գրում է այս տողերը, ապա Հովհ. Թումանյանի վերամշակումը քաջ հայտնի էր նրան: Նա նաև մասնակցել էր համահավաք տեքստին: Ուրեմն, հանճարեղ Թումանյանի վերամշակումը վերջնական չէր համարում նա: Կոչ անելով «ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով», Մանուկ Աբեղյանը ուզում էր ասել, որ այլևս չենվենք «ըստ հիսուն տարի առաջվա իշխող առասպելաբանական տեսության վրա»,⁶ այլ ճգնենք պարզել մեր ազգային էպոսի պատմականության բոլոր ծալքերը, որ հայ նոր բանաստեղծը կարողանա, օգտագործելով մեր զարմանալի պատմության բոլոր զարմանքները, կերտել մեր գոյատևող ժողովրդի փյունիկ գոյության պատմությունը: Միայն հայ պատմաբանի պրպտումները կարող են օգնել Աբեղյանի երազած հայ մեծատաղանդ բանաստեղծին, իսկ Արուսյակ Սահակյանը գործի է դնում իր բոլոր, բարեբախտաբար առայժմ շատ թույլ ուժերը՝ մեր պրպտումնե-

5 Նույն տեղում, էջ 553-554:

6 Նույն տեղում, էջ 530:

4 Մանուկ Աբեղյան, նշվ. աշխ., էջ 543-544:

Եվ քանի որ Ա. Սահակյանը ճգնում է կանգնած մնալ «ըստ հիսուն տարի առաջվա իշխող առասպելաբանական տեսության» վրա, նա, բնականաբար, ճգնում է չընդունել իմ շատ բացահայտումները, իսկ ընդունածներն էլ կրճատել՝ անհամոզիչ դարձնելու համար: Դժբախտությունն այն է, որ նա դրանով միայն վնաս է հասցնում մեր էպոսագիտությանը:

Հարություն Թորշյան
[թերևս 1976 թ.]

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

ՀԵՏԱԵԼՁՈՒԿՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԸ

Հրատ. խմբագիր՝ Ա. Լ. Սահակյան

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am

Ծնվել է Վանում 1900 թ.: 1915 թ. հուլիսին Թուրջյանների ընտանիքը գաղթել է Արևելյան Հայաստան, ապա՝ Թիֆլիս: Այստեղ նա ուսումը շարունակել է Ներսիսյան դպրոցում: Սարդարապատի հերոսամարտի օրերին աշխատել է շտաբում՝ որպես գրագիր: 1931-1954 թթ. աշխատել է «Խորհրդային/Սովետական Հայաստան» օրաթերթում՝ որպես ոճաբան և թարգմանիչ: 1940-1960-ական թթ. Հ. Թուրջյանը ձեռնարկել է ռուս դասական մի քանի հեղինակների երկերի թարգմանությունը (Վ. Բելինսկի, Ա. Գերցեն, Մ. Գորկի):

Երկար տարիներ ջանասիրությամբ զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ: 1947 թ. «Հայ-հաբեշական առնչությունները VII դարից մինչև XX դարը» թեմայով ատենախոսություն է պաշտպանել, ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող հետազոտությունը հեղինակն ավարտել է դեռևս 1958 թ.: Մենագրության ներածությունում նա գրում է. «Այս աշխատությամբ ես փորձել եմ զբաղվել միմիայն «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականությունը որոշելու դժվարին հարցով, և եթե մեր այս պրպտումները զեթ որոշ չափով հեշտացնեն մյուս հետազոտողների աշխատանքը, ապա մենք մեզ լիովին բավարարված կհամարենք»:

«Էպոսները սովորաբար հյուսվում են ժողովրդի կյանքում տեղի ունեցած վիպային, այսինքն՝ տվյալ ժողովրդի համար վեպի նյութ ծառայող, վիպային երանգ ունեցող որևէ կոնկրետ իրադարձության կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձությունների շղթայի շուրջը, և սկզբում լինում են սոսկ այդ մեկ իրադարձությունը կամ իրադարձությունների շաղկապված շղթան պատմող վեպ: Բայց, այնուհետև, դարեր շարունակ բերնեբերան պատմվելով և սերնդեսերունդ ավանդվելով, հաճախ միահյուսվելով հնուց եկող կամ նոր կազմվող այլ վեպերի հետ, երբեմն էլ բաժանվելով ու ձյուղավորվելով, հաճախ շատ հեռանալով սկզբնական վեպից, դառնում են էպոս: Այլ վեպերի հետ չմիահյուսվելու դեպքում անգամ, սոսկ միայն դարեր շարունակ ավանդվելու հետևանքով, դրանք անընդհատ փոփոխվում են, լրացվում, այսպես ասած «խմբագրվում են» ժողովրդի ծոցից ելած և բոլոր կողմերով ժողովրդի հետ հարազատորեն կապված հազարավոր տաղանդավոր ու անտաղանդ պատմողների կողմից, որոնք իրենց ժամանակի ոգուն և տրամադրություններին համապատասխան նորանոր տարրեր են մտցնում ավանդականի մեջ: Այսպես, դարեր շարունակ պատմվելով, վեպերը հեռանում են սոսկ մեկ իրադարձություն կամ իրար հետ սերտորեն շաղկապված իրադարձություններ պատմող սկզբնական ձևից և, շարունակական ընկալումների շնորհիվ հարստանալով, արտահայտում են ժողովրդի մտածողությունը, հոգեբանությունը, աշխարհայացքը, բարոյական հասկացությունները, ակնկալությունները երկար ժամանակամիջոցի ընթացքում ու համար, և դառնում են նրա ազգային բնավորությունը կամ այդ բնավորության որոշ գծերը դրսևորող ժողովրդական էպոս»:

Հարություն Թուրջյան,
«Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և
«Սասունցի Դավիթ» էպոսը», 1958/2013

